

9(47.925)

L-47

ԱՆԻ



ԲՐԵՏԵԼ

1907



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԼՍԱՐԱՆԻ
ՆՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1963


9(47.925)
2-47

ԼԵՈ

ԱՆԻ

ՏՊԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԻՇԱՏԱԿՆԵՐ
ԱՆՉԱԾՆ
ՈՒ
ԱՆԱՉԱԾԸ

160



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ

Մեծանուն հայագետ Լեոն «Աճի»-ն գրել է 1903 թվականի ամռանը, մի խումբ հայ մտավորականների հետ Աճիի ավերակները այցելելուց հետո: Նրա նպատակն է եղել Աճիի մասին ընթերցողներին հանձնել «տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը»: Ստացվել է միայն Լեոյին հատուկ գույնի և պատկերավոր լեզվով ու ոճով մի հոյակապ գրական-պատմական բերրված:

«Աճի»-ի ձեռագիրը հրատարակության պատրաստ էր դեռևս 1904 թվականին, և հեղինակը փափագ է ունեցել, որ «Աճի»-ն ղինի, որքան հնարավոր է, մի շքեղ հրատարակություն, սեղանի զարդ: Սակայն աշխատությունը այն ժամանակ չհրատարակվեց:

Նախահոկտեմբերյան տարիներին «Աճի»-ն այդ պես էլ մնաց անտիպ: Նրանից մի հատված ժամանակին հրատարակվել է «Սովետական գրականություն» ամսագրում, իսկ 1946 թվականին աշխատությունը, զգալի կրճատումներով, լույս է բնծայվել: Հայպետհրատի կողմից: Ներկա հրատարակությամբ «Աճի»-ն լույս է տեսնում ամբողջությամբ: Կատարված են միայն խմբագրական բնույթի աննշան շրջումներ:

Л Е О
А Н И

Издательство
Ереванского государственного университета
(На армянском языке)
Ереван © 1963



450

Ա Ն Ի

Որպանքս Պարսկ. — Յիշատակս —
 Պարսկ. ու Իսլամը:—

1904.

Էնդի «ԱՆԻ» աշխատության ձեռագրի անվանաբերը

Մաադիր էի ընդարձակել այս աշխատությունը, տալ
Անիի ամբողջ պատմությունը և բոլոր այն ուսումնասիրու-
թյունների արդյունքը, որոնք եղել են մինչև այսօր: Պիտի
ստացվել մի սովոր հաճար և նա պիտի հրատարակվել մեծ
շեփարյամբ: Մնաց... Չկարողացա: Այս դրության մեջ աշ-
խատությունս ավելի բուցիկ նամվորդական հիշատակա-
րան է:

Լ Ե Ո

1914 թ. օգոստոսի 28-ին



Անի բաղարի գլխունշանը

Առաջաբանի տեղ

I

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ...

Մեր թարգմանիչների ամառնային տոնը 1903 թվականին գալիս էր հունիսի 26-ի օրը: «Մշակի» խմբագրության մեջ աշխատողներս այնպես կարգավորեցինք մեր գործը, որ բացի այդ տոնից, երկու-երեք օր ազատ ժամանակ ունեինք: Մտածեցինք այդ ժամանակը գործ զնել մի թեթև ճանապարհորդական պտույտի վրա: Վճռեցինք այցելել Անին և այցելեցինք:

Ահա ինչից առաջ եկավ իմ այս աշխատությունը:

Նս այժմ էլ մի տեսակ զարմանքով եմ արձանագրում մեր տեսած իրողությունը. Անի գնալը—ճանապարհորդական մի թեթև պտույտ: Բայց դա ճիշտ իրողություն է, նոր իրողություն: Մենք գնացինք առանց ծանր ու բարակ պատրաստությունների, առանց մեծ-մեծ հոգսերի. մեզանից շատերի համար գնալը մի կես ժամի ընթացքում կայացրած վճիռ էր. կային և այնպիսիները, որոնք հարկավոր չհամարեցին նույնիսկ փոխել ամառվա թեթև, քաղաքային հագուստը:

Իմ զարմանքը հասկանալի կլինի ընթերցողին, եթե նա ինձ պես շատ է կարդացել այնպիսի գրվածքներ, որոնց մեջ դանազան տեսակի, զանազան ժամանակների մարդիկ նկարագրել են իրենց ճանապարհորդությունը դեպի Անի: Այդ գրվածքներից երբեք չի կարելի հետևցնել, թե Անին տեսնելը մեծագործության պես մի բան չէ: Անիի ուխտավոր դառնալու համար, ամենաքիչը, հարկավոր է, որ ուղևորը շատ ազատ օրեր ունենա, բավական համբերատար, դիմացկուն, նույնիսկ շարքաշության սովորած մեկը լինի:

Թողնենք այն երկար ժամանակները, երբ Ախուրյան գետի աջ ափը պատկանում էր Օսմանյան պետության, և ավագակ բրդերի սարսափն էր տարածված Շիրակի դաշտերի վրա: Այդ ժամանակներում հատուկտոր անհատներ միայն, օտար թե հայ, այնքան ուժ ու հարմարություն ձեռք ձգեցին, որ հեռու տեղերից, անմշակ ճանապարհներով, զնացին տեսան ու նկարագրեցին Անին: Վայրենի հասկացողությունները, վայրենի վարչությունը սանձարձակ են մանավանդ ավերակ, անտեր տեղերում: Անին նման էր հեթիաթների կախարդական ամրոցներին, որոնց մեջ հրաշքներ կան, բայց որոնք վիշապների և այլ հրեշների ձեռքին են գտնվում:

Վաղուց են անցել այդ ժամանակները: Ահա 25 տարուց ավելի է, ինչ Շիրակի արևմտյան մասը անցել է Ռուսաստանին: Առաջվա դժվարությունները, իհարկե, այլևս չէին կարող լինել, և ռուսաց տիրապետության հենց առաջին օրերից լայն րացվեց Անիի ճանապարհը այցելուների համար: Շատերը զնացին, բայց անհամեմատ շատ-շատերը չկարողացան գնալ. ճանապարհը, այնուամենայնիվ, դեռ հանրամատչելի չէր: Իմ խոսքը, իհարկե, Ալեքսանդրապոլի, Կարսի և այլ մոտիկ հարևանների մասին չէ: Հեռու ապրողները չէին կարողանում գնալ: Հինգ-վեց տարի առաջ հարյուր փափագողներից մեկին էր հաջողվում հաղթել տարակուսանքները, արհամարհել դժվարությունները...

Այժմ այդպես չէ: Հինգ-վեց տարին էլ բավական է, որ հիմնովին հեղափոխվեն մի երկրի պայմանները: Հանկարծ անհրաժեշտություն դարձավ Ալեքսանդրապոլի և Կարսի հետ արագ հաղորդակցություն ունենալը. միլիոնների կույտեր թափվեցին մի ըմբոստ բնություն նվաճելու համար, երկաթուղի շինվեց: Ալեքսանդրապոլից հետո հերթը հասավ Երեվանին: Եվ ահա երևանյան գիծը տարվեց այնպիսի տեղերով, որոնք Անիի ավերակներից 6—7 վերստ հեռավորություն ունեն: Կա այդ գծի վրա մի փոքրիկ կայարան, որ Անի էլ կոչվում է: Վագոնի միջից հեռատեսը հեշտ կարող է նշմարել հորիզոնի վրա կանգուն շինությունների ուրվագծերը:

Անի կայարանում իջնողը այժմ հարմարություններ չի գտնի իր ճանապարհը դեպի Ախուրյանի բարձր ափը, դեպի մեռած մայրաքաղաքը շարունակելու համար: Շատ-շատ երան հաջողի մի հասարակ սալ վարձել մերձակա հայ գյուղում: Բայց այդքանն էլ բավական է. մնացածը լրացնում է մոտիկությունը: Գնում են ոտով, գնում են ամբողջ խմբերով, ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք:

Առաջիմ շատ բանով չէ այդ ամենակարճ ճանապարհը: Պետք է տեղափոխական փոքրիկ հարմարություններ ստեղծել: Իսկ ո՞վ պիտի ստեղծե: Գոնե կայարանի մոտ եղած հայ գյուղերը հասկանան իրանց օգուտը և կառքեր պահեն...

Ճանապարհորդների մեծ մասը դեռ շարունակում է գնալ Ալեքսանդրապոլի վրայով: Թեև այս ուղղությամբ ճանապարհը երկարանում է, քանի որ դեռ 50 և ավել վերստ տարածություն կա կառքով, բայց գլխավոր բանը արված վերջացած է: Թիֆլիսում դիշերվա տասներկու և կես ժամին զնացք նստողը մյուս օրը իրիկնապահին Բագրատունյաց գոված, ինչպես ասում են՝ նաև անիծված մայրաքաղաքը ներկայացնող քարակույտերի մեջ է, ինչ ճանապարհով էլ գնա:

Գիշերը նա կարող է մնալ Անիի վանահոր զարմանալի հյուրընկալ հարկի տակ, վաղ առավոտից ման գալ, տեսնել ամեն ինչ, և երեկոյան նա դարձյալ Ալեքսանդրապոլի երկաթուղու վրա է:

Օրը, իհարկե, ամառնային պիտի լինի:

ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Այդպես էլ արինք մենք՝ զնացիներ, վերադարձանք:

Թեթև ճանապարհորդական պտույտ,—մենք ճիշտ էինք ձևակերպել մեր ուղևորությունը: Նա, այդ պտույտը, կարելի է, հարմար ու մատչելի է ամենքի համար: Մի ամառվա ընթացքում հազարավոր մարդիկ կարող են գնալ, տեսնել, և եթե այցելուների քանակությունը դեռ մի այդպիսի թվի

չի հասել, այդտեղ մեղավորը ո՛չ ճանապարհներն են, ո՛չ մանավանդ ինքը, ավերակ քաղաքը: Ճանապարհները լավ են, իսկ Անին երբեք չէ դադարել հրաշալի, գլուխի լինելուց: Բարի կամք, ցանկություն է հարկավոր:

Մեռած գեղեցկության տեսարաններ տեսնելու, տպավորություններ ստանալու, սիրտը առօրյա գծուծ հաշիվներից մաքրելու և սուրբ զգացմունքներով լցնելու համար բավական է այդ փոքրիկ պտույտը: Սովորական հասարակ այցելուները կարիք էլ չունեն դրանից ավել ժամանակ գործ դնելու: Ուրիշ է ոչ-սովորական այցելուների բանը: Սրանք գնում են ուսումնասիրելու, ավերանքի մեջ նոր մանրամասնություններ որոնելու: Այդպիսիների համար արդեն օրերով, շաբաթներով, նույնիսկ ամիսներով նստելն ու ման գալն էլ քիչ է:

Ես դրանցից չէի, ես չկարողացա գոնե մի քանի օր մնալ Անիում: Մի քանի ժամերի հյուր էի ես ավերակների քաղաքում: Եվ, սակայն, ուզում եմ գրել իմ տպավորությունները: Ի՞նչ իրավունքով: Այս հարցը բնական է, քանի որ խոսքը Անիին է վերաբերվում:

Ի՞նչ իրավունքով: Կարող էի արդարանալ նրանով, որ ամեն մի ճանապարհորդ-տուրիստ ազատ է իր թոուցիկ տպավորություններն անգամ նկարագրելու: Բայց որքան ճիշտ է այս, այնքան, դուցե և էլ ավելի, ճիշտ կլինի և այն, եթե ընթերցողը հարցնե—իսկ ի՞նչ նոր բան պիտի կարողանա ասել տուրիստը:

Իրավ, Անիի մասին նոր խոսք չկա առայժմ: Նրան տեսել, նկարագրել են ամեն տեսակ ընդունակություններ,—այլեր թե օտարներ: Տեսել է հնագետը, տեսել է բանաստեղծը, նկարիչը, տեսել է ճարտարապետը, տեսել է թե՛ լուրջ, ծանրախոհ գիտնականը և թե՛ վառվռուն, ոգևորվող երիտասարդը. տեսել է երկրաբանը, ինժեները, լուսանկարիչը, աշարհի չորս կողմերում թափառած ճանապարհորդը: Եվ անտարբերներ համարյա չեն եղել: Ամեն մեկն իր իմացածն ու զգացածը արտահայտել է իրան տված եղանակով՝ տառերով, գծերով, ներկերով, լուսանկարչական գործիքով:

Խոսելու, գրելու, մի բանով իր եսը հայտնելու մի զար-

մանալի տրամադրություն է տիրում մահվան քաղաքում: Անիի ներսում դուք պատ ու ծեփ չեք գտնի, որ ծածկված շինի անուններով և ազգանուններով: Շատ տգեղ, վրդովեցուցիչ բաներ են դրանք: Բայց երբ մի րոպե մտածում եք, տեսնում եք, որ վայրենի վարմունքը մասամբ հասկանալի է: Մարդը ուզեցել է մի օրեւէ կերպով արտահայտել իր զգացմունքը: Իսկ թե զգացմունքը ո՛ր տստիճան կարող է գերել, հափշտակել մարդուն,—այդ կարելի է իմանալ միայն Անիում: Վանահոր սենյակում կա այցելուների մի հին, բրբրված մատյան: Այդտեղ էլ դուք կկարդաք բազմաթիվ գրություններ հայերեն և այլ լեզուներով: Եվ տեսնում եք, որ ոչ ոք անտարբեր այցելու չէ եղել: Հիացել է ամեն մեկը...

Ի՞նչ նոր բան կարելի է ասել:

Այնուամենայնիվ, ես էլ գրում եմ իմ տպավորությունները: Ի՞նչ իրավունքով:

Պատասխանի տեղ ես էլ հարցնում եմ ձեզ. ի՞նչ իրավունքով ամեն մեկը կարող է գրել արշալույսի, դարնանային պատկերների, կանաչ սարերի, բնության վեհ երևույթների մասին, թեև հարյուրավոր ու հազարավոր մարդիկ գրել էլ են, երգել էլ: Ինչո՞ւ գեղեցկությունը մինչև այժմ չէ սպառվել ոչ գրականության, ոչ արվեստի, ոչ պաշտամունքի մեջ: Ինչո՞ւ սրբությունը այսօր էլ երգվում, մեծարվում է, ինչպես հարյուրավոր և հազարավոր տարիների ընթացքում:

Ահա իմ իրավունքը: Բնության մեջ կան հավիտենական գրություններ, որոնք միշտ մնում են, միշտ կենդանի են: Նորությունը նրանց մեջ չպետք է որոնել, այլ մարդկանց մեջ, որոնք կանգնում են նրանց առջև, հասկանում են նրանց այնպես, ինչպես կարողանում են: Ճիշտ է, նրանց հասկացածի մեջ միշտ կրկնվում է հավիտենականը, անփոփոխելին, բայց անկարելի է, որ անհատականությունը այս կամ այն նոր հնչյունը, նոր շեշտը չմտցնե այդ կրկնությունների մեջ: Լուսնի տակ, ասում են, նորություն չկա, ամեն ինչ կրկնություն է: Այսպես պիտի լինի մանավանդ զգացմունքների աշխարհում: Բայց և այնպես, մենք միշտ գտնում ենք թարմ նորություն, թեև գիտենք, որ կրկնություն է ամեն ինչ:

Անին կարելի է նկարագրել անթիվ անգամ, ինչպես

նկարագրում են արշալույսը, լուսինը, ծովը, զեփյուռը։ Որովհետև նա էլ այդպիսի մի երևույթ է մեր մարդկային աշխարհում...

III

ՎԿԱՆԵՐԸ

Արդյոք չափազանցություն չէ՞ այս համեմատությունը։ Շատ հետաքրքրական մի հարց է սա, և եթե նրա հետևից բնկենք, մեզ անթիվ վկաներ կներկայանան, որոնք կասեն, թե ինչ է մեր Անին։ Տեսնենք, ընթերցող, եթե ոչ բուրբ, գոնե մի մասը։

Անիի Մայր եկեղեցու արձանագրություններից առաջինը թող մեր ուշադրությունը գրավի մեկը։ Երիտասարդ մի հույն. պաշտոնյա, անունը Առոն, աստիճանով մագիստրոս, եկել է Անի և այդտեղ դանազան բարեկարգություններ է մտցրել։ Իր մասին նա ասում է, թե բյուզանդական մեծափառ թագավորներից մեծարված մեկն է։ Բայց առանց այդ վկայության էլ մենք պիտի հասկանանք, որ Անիի կառավարիչը շատ կարևոր մի անձնավորություն պիտի լիներ։ Դեռ էոր էր Բագրատունյաց թագավորությունը մի ստոր մատնություն զոհ դարձել, դեռ վերջին Գագիկը կենդանի էր և տառապում էր իր հայրենիքից հեռու։ Անեցիները չէին մոռանում այդ հունական դավադրությունը և իրանց խորին ափսոսանքով դեպի հույները ցույց էին տվել բուն դիմադրություններով։ Ընկճելով այդ դիմադրությունը մեծ դժվարությամբ և ծանր կորուստներով, բյուզանդական կառավարությունը աշխատում էր շահել հայերի սիրտը, մի կերպ մոռացնել եղածը, քաղցրացնել իր լուծը։ Ուստի Անի էր ուղարկում իր բնդունակ, պատվավոր պաշտոնյաներին, որոնք պիտի կարողանային շոյել, աշխարհաշինություններով սիրաշահել բնակիչներին։

Ահա այդ պաշտոնյան, բյուզանդական արքունիքի առասպելական շքեղությունների մեջ մեծացած այդ պալատականը իր արձանագրության մեջ Անին անվանում է «գեղեց

կաշեն բերդ»։ Այսպիսի մի հնդինակավոր վկայությունից հետո այլևս զարմանալի չպիտի լինի այն բարձր հիացմունքը, որով մեր պատմագիրները՝ Ասողիկ, Արիստակես Լաստիվերտցի և ուրիշներ, նկարագրում են Անիի շքեղությունը։ Իր գեղեցիկ շենքերով, իր բազմամարդությամբ և հարստություններով նա մի առասպելական հուշակ էր ստացել։ Ժողովուրդն ասում էր, թե նրա մեջ հազար ու մի եկեղեցի կա, իսկ սա ապացույց է, թե որքան սաստիկ էր նա ազդում երևակայության վրա։

Որ մի քաղաք, մի երկիր իր բարգավաճման գագաթնակետին հասնելով հիացնում, կախարդում է մարդկանց, այս դեռ հասկանալի է, բնական է։ Առոն մագիստրոսի ժամանակ Անին թեև իր ամենագլխավոր դարդից էր զրկվել՝ գահից, բայց արտաքին ամբողջ գեղեցկությունը դեռ պահում էր. բարբարոսության ավերիչ շունչը դեռ նրան չէր հասել։ Եկավ այդ ժամանակի էլ, ավերանք ու կոտորած մտավ Անիի մեջ, բայց նրան խնայում էին մահմեդական տիրողները. գեղեցկությունը, հարստությունը կախարդում էին և նրանց, կոտորելուց ու քանդելուց հետո նրանք շինում ու զարդարում էլ էին իրանց օգտի համար։

Սակայն կանգուն, շին ու վաճառաշահ Անին այլևս այն չէր կարող լինել հայի համար, ինչ էր Բագրատունիների ժամանակ։ Փառավոր քաղաքը սուգի տրամադրություն էր բերում—ահա Անիի ճակատագիրը XI դարի երկրորդ կեսից սկսած։ Ողբում է նրան Արիստակես Լաստիվերտցին, որովհետև տեսել էր նրան այն ժամանակ, երբ «թագավորը առավոտները քաղաքից դուրս գալիս նմանվում էր փեսայի, որ դուրս է գալիս առագաստից կամ արեգակի պես էր, որ բարձրանալով արարածների զլխի վրա, ամեն տեսանելի բան դեպի իրան է ձգում»¹։

Այդ փառքը չէր տեսել Ներսես Շնորհալին, բայց սրա համար էլ ողբալի էր Անին։ Բագրատունյաց թագավորության վերջանալուց հարյուր տարի հիտո մահմեդականները

¹ Արիստակես Լաստիվերտցի. «Պատմություն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 57 (առաջատակը խմբ.)

վերցրին Միջագետքի Եդեսիա քաղաքը, իհարկե, կոտորեցին ու քանդեցին: Այդ աղետը ողբաց ներսես Շնորհալին իր մի ոտանավոր գրվածքի մեջ, որ այդ շնորհալի բանաստեղծի լավագույն գործերից մեկն է համարվում (1155 թ.): Քանդված Եդեսիան Շնորհալու բերանով դիմում է աշխարհի շուրս կողմը, որ ամենքը ողբան իր սոսկալի դժբախտությունը: Գալով Հայոց աշխարհին, նա հատկապես Անի քաղաքին է դիմում: Հարյուր տարիների ընթացքում Անին արդեն շատ աղետներ էր տեսել. նրան ձեռքից-ձեռք էին խլում, նրան վաճառում էին այս կամ այն իշխանավորին, նրան քանդել էին մարդիկ, քանդել էր և գետնաշարժը: Բայց նա դեռ շունչ ուներ, դեռ ապրում էր: Եդեսիան նրան ասում է. դու էլ ողբալի ես, դու էլ ինձ վիճակակից ես: Դու էլ ձայնակցիր ինձ, որովհետև մի ժամանակ դու էլ էիր վայելուչ, ինչպես քողով ծածկված հարս, մերձավորներին շատ ցանկալի էիր, իսկ հեռավորները քեզ փափագում էին տեսնել: Այդ ժամանակ դու ուրախ էիր, ցնծում էիր: Քո մանուկները նման էին նոր բուրաստանի, քո պաճուճված, զարդարված աղջիկները միշտ երգում էին, քնար էին ածում, խաղում, իսկ քո թագավորները պանծալի էին, գլխին թագ դրած նստում էին աթոռի վրա, և զորքերը այս ու այն կողմից գալիս էին նրանց հրամանը լսելու: Քո Կաթողիկե եկեղեցին երկնքին նման և հավասար էր. հայրապետներ, եպիսկոպոսներ, քահանաներ կանգնում էին այդ տաճարի մեջ պատշաճավոր կարգով: Բայց այդ բոլորը անցավ երազի պես, ինչպես ամառնային ծաղիկ: Անօրենի անողորմ սուրբ, որ մեր արյան սոված է, որ չէ կշտացել և չէ կշտանում մինչև որ վերջ կգա մեզ համար, այդ սուրբ հասավ քեզ, ինչպես այժմ ինձ է հասել. հնձեց անդաստանի բույսերը կանաչ հասակում, արմատից քանդեց այգին, անհաշիվ դիակներ փռեց, որոնք անթաղ մնացին, գազանների կերակուր: Քեզ գերի արին, Երուսաղեմից էլ ավելի գերի: Այդ քո աղետով

¹ Եդեսիա քաղաքի գրավումը և ավերումը Հալեպի Զանգի ամիրայի կողմից տեղի է ունեցել 1144 թ.: Ներսես Շնորհալին իր «Ողբ Եդեսիայի» պոեմը գրել է 1145—1146 թթ.: Մանդրաբյուր խմբագրի:

ճանաչիր և իմը: Հավաքիր քո աղջիկներին, ինձ վրա լացեք, սուգ նստած: Ողբի ձայնով կանչի՛ր, ամեն հոգի լացացրո՛ւ:

Այդ ժամանակ Անին կենդանի էր, լսում էր Շնորհալու ողբը: Դրանից հետո էլ նա երկար ապրեց, բարեկարգությամբ, խաղաղության օրեր տեսավ, բայց ավելի շատ էին դառնություն, արտասուքների, փախուստի օրերը, որոնք վիճակվեցան նրան: Նա հռչակված էր իբրև գեղեցկություն, և նրան իր գիրկն էր առնում ամեն մի բռնակալ: Բազրատունյաց ժամանակից հարուստ ու ճոխ քաղաքի անուն էր նա վայելում և այդ պատճառով նվաճողների ձեռքին խաղալիք էր և այն ժամանակ, երբ աղքատացել էր, նվազել: Նրա ժողովրդի մեծ մասը փախել էր հեռավոր երկրներ, բայց մնացած փոքրիկ մասն էլ բավական էր, որ քաղաքը նախանձելի կտոր դառնար տիրողների համար: Բռնավորները աղատություններ էին տալիս հռչակավոր քաղաքին, վերացնում էին հարկերի մեծ մասը, որպեսզի նա չզրկվի իր շքեղությունից: Ախուրյանի ժայռոտ ափին ցցված այդ գեղեցկությունը քանդվում էր, կոտորվում էր, նորից կանգնում, փայփայլում: Շարունակ ծիծաղն ու արյուն-արտասուքն էին իրար հաջորդում նրա սիրուն գլխի վրա: Որովհետև նա գեղեցկություն էր Ասիայի այս անկյունում: Գեղեցկությունը Ասիայի մեջ կրքեր է կրակում. նրանով վառված գազանը կամ հարձակվում է նրա վրա, ծվատում, կամ սեղմվում է նրա ոտների մոտ և նրա ստրուկը դառնում...

Այսպիսի երկրպագուների զրկում գեղեցիկ Անին դանդաղ կերպով հալվեց, մաշվեց: Հոգեվարքը երկար տևեց և հոգեվարքի մեջ նա ոչինչ չունեց մխիթարվելու, բացի այն փառավոր ժառանգության բեկորներից, որոնք մնացել էին նրա պատմության արքայական շրջանից, Բազրատունիներից: Դրանք հրաշալի եկեղեցիներն ու պալատներն էին, քաղաքի հսկայական, նուրբ ու անմահ պատերը և այլ շինություններ: Այդ պատերի մեջ էլ, այդ հույակապ շինությունների շուրջն էլ նա արձակեց իր վերջին շունչը, դարձավ ավերակների կույտ: Նա կորած էր խորին անհայտության մեջ. հայոց ամբողջ աշխարհում չգտնվեցին մարդիկ, որոնք

հիշեին հին սրբութիւնը և գոնե մի քանի խոսք ասեին նրա մասին: Ով ծանոթ է այն ժամանակներին, երբ թաթարական սուրբ, լենկ-թեմուրները մի խավար ու անշարժ գերեզման էին դարձրել մեր ամբողջ աշխարհը, նա չի դարձանա այդ լուսնային վրա: Խոսող շեղավ, որովհետև գերեզմանը չէ խոսում: Լուսնային կլանեց ոչ միայն Անիի ճակատագիրը. այլև այն ամենը, ինչ վերաբերվում էր ամբողջ երկրին:

Դարերի մի սև, անթափանցելի բիծ դրոշմվեց հայութիւն մարմնի վրա, իսկ երբ այդ բիծը սկսեց կամաց-կամաց տեղի տալ լույսին, մեր իրականութիւն մեջ հանդես եկած դրութիւններից մեկն էլ Անին էր, բուերի և կարիճների բույն դարձած, քանդված պատերի, քարակույտների մի տարածութիւն, ուր այլևս ոչ մի ձայն, ոչ մի ծպտուն չկար: Ո՞վ վերջին անգամ փակեց մեռնողի աչքերը...

Հայտնի չէ: Ավերակները սարսափ, սնտուի երկյուղ էին պատճառում. մնացել էր ավանդութիւն, որ գեղեցիկ քաղաքը մի հոգևորականի անեծքով է այդ վիճակին հասել: Աստուծու բարկութիւնն էր այդտեղ թափվել, իսկ ուր կա այդպիսի նախապաշարմունք, այնտեղ մութ ամբոխը մի փրկարար երկյուղի մեջ է: Փրկարար այն կողմից, որ ավերակները նոր ավերողներ չունեցան: Նրանք մնացին մարդկանցից հեռու, միատիկական մշուշով պատված, և պահեցին այդ հանգամանքի շնորհիվ: Նրանք մոռացութիւն էին դատապարտված, իսկ մոռացութիւնն այն պատն էր, որի ետևում նրանք պատասպարվեցին երկար դարեր:

Անին մոռացված էր, բայց անեցին չէր մոռացվում: Պարծանք էր անեցի լինելը, որովհետև Անին մի բարձր կուլտուրական, բնորոյալ, ազնիվ և դարձանաւի բնորոնակ ժողովրդի անուն էր: Հայերի մեջ դեռ այդպիսի բարձր, ազնվական տիտղոս ոչ մի նահանգ, ոչ մի քաղաք չէր ստեղծել: Անեցի լինելը մեծ պարծանք էր, թեև իրապես անեցի լինելը նշանակում էր լինել հայրենիքից դուրկ, թափառական, օտար երկնքի տակ զգեցրող: Դառն ճակատագիրը բշում էր անեցուն ամեն տեղ, դրա պես գաղթական չէ եղել նույնիսկ հայերի նման մի ազգի մեջ, որ, հրեաներից հետո, առաջին համաշխարհային թա-

փառականն էր: Անեցին տեղափոխվում էր Հայաստանի զանազան կողմերը, նա նույնիսկ պատուեց Ասիայի սահմանները և ահագին քանակութեամբ ցրվեց այնպիսի հեռատաններում, ինչպես են Ղրիմ, Լեհաստան, Հունգարիա: Բայց ամեն տեղ նա տանում էր իր պարծանքը, այն, որ նա անեցի է: Եվ այն ժամանակ, երբ Ախուրջանի ափին կարճներ էին միայն սողում պալատների, եկեղեցիների, պարիսպների հոյակապ ընկերների մեջ, գաղթական անեցու երրորդ կամ չորրորդ սերունդը, նստած Ղրիմի ափերում, հիշատակարան էր գծադրում, որի մեջ, նկարագրելով իր տարաբախտ, ողբալի ներկան, մխիթարվում էր իր հեռավոր անցյալը հիշելով, այն, որ Ղրիմի հայ գաղթականութիւնը Անիից է դուրս եկել: «Մենք,—սրտառուչ հպարտութեամբ պատմում է հիշատակարանը,—Պահլավունիների սերունդից ենք, Անի մեծ, թագավորանիստ քաղաքից: Մեր Անի քաղաքը իշխանների և ազնվականների բնակութեան տեղ էր և չենք կարող սահմանի մեջ գցել ու պատմել այն անսահման և անհուն հարստութիւնները, որ ուներ ժողովուրդը՝ ազնվական իշխաններից սկսած մինչև գոհհիկները. բացի յուրաքանչյուրիս ոսկեղօծ, դանազան պալատներից, ունեինք նրա մեջ և հազար ու մի եկեղեցի»¹:

Դարերի ընթացքում անեցի գաղթականը ամեն ինչ մոռացավ Եվրոպայի հողի վրա՝ և իր լեզուն, և իր ազգային ավանդութիւնները, բայց երբեք չմոռացավ և նույնիսկ այժմ էլ չէ մոռացել մի բան՝ որ նա Անի քաղաքից է:

Անին պարծանք էր, բայց կա՞ր նրան տեսնելու տենչանք: Մեր մատենագրութեան մեջ ոչինչ հիշատակութիւն չկա ավերակների քաղաքի դրութեան մասին: Միայն XVII դարի հեղինակ Երեմիա Չելեպին իր մի գրվածքի մեջ հիշում է, որ տեսել է Անին ավերակ դրութեան մեջ, ինչպես ավերակ էին և նրա շրջականները: Օտարազգի ճանապարհորդներից էլ նույն այդ դարում մի երկու հոգի անցողա-

¹ Կափայի (Թեոդոսիայի) Յայտմաւորքի հիշատակարանը, տե՛ս Մ. Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», Վիեննայի, 1830, էջ 337:

կի հիշում են Անին իբրև հեռվից տեսած: XVIII դարում և ոչ մի հիշատակություն...

Բայց չէ կարելի ասել, թե ավերակները միանգամայն մոռացված էին հայերի մեջ: Նկարագրող այցելուներ չկային, բայց հայտնի էր, որ կա Անին. հայը ուներ իր Անի քաղաքը: Նշանակելու արժանի է, որ այս երկու բառերը միշտ անբաժան էին գործածվում: Իտալացի ճանապարհորդ Ջեմելին XVII դարում այդպես էլ անվանում է ավերակները՝ «Ani-Kagac»: XVIII դարի վերջին քառորդում, ինչպես հայտնի է, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը բանակցություններ էր վարում ռուսաց կառավարության հետ՝ հայկական մի անկախ պետություն կազմելու մասին: Հայտնի են և այն պայմանները, որոնք այդ քաղաքական կազմակերպության հիմքը պիտի կազմեին, դրանցից մեկն էր մայրաքաղաքի հարցը: Եվ Արղությանը առաջարկում էր, որ մայրաքաղաք լինի կամ Անին կամ Վաղարշապատը¹:

Անունը կար, բայց ինքը անհայտության մեջ էր, նախապաշարված մտքին ահա զգող ավերակի, այն էլ անեծքի տակ ճնշված ավերակի մթության մեջ խորասուզված...

IV

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԴԱՐ

Ուղիղ հարյուր տարի առաջ, 1804 թվականի մայիսի 17-ին, Անիի դռներով ներս մտան երկու հայ քահանաներ, Տեր-Խաչատուր և Տեր-Հովհան: Երկուսն էլ էջմիածնից էին, ճանապարհորդում էին հին շինությունների արձանագրությունները արտագրելու համար: Անիի մեջ այդպիսի մի գործ կատարելը հեշտ չէր. օրեր էին հարկավոր մանրամասն կերպով ավերակները հետազոտելու համար, իսկ Անին մի անբնակ տեղ էր, ավազակ ազգաբնակչությամբ շրջապատված, ապրուստի ոչ մի հարմարություն չուներ: Այդ պատճառով երկու քահանաները միայն կարողացան մի պտույտ անել ավերակ քաղաքում և, որքան հայտնի է, երկու հատ արձա-

նագրություն. արտագրել: Նրանց ուշագրությունը ամենից շատ գրավեցին երկու եկեղեցիներ—Մայր եկեղեցին և նրա կողքին գտնվող ս. Փրկիչը: Ամեն մեկից մի մի հատ արձանագրություն վերցրին նրանք, իսկ մյուս եկեղեցիների վերաբերմամբ բավականացան մի թուղթիկ հաշվով: Եթե հավատանք նրանց, այդ ժամանակ Անիում կարելի էր համբել մինչև քառասուն եկեղեցի¹:

Խաչատուր և Հովհան քահանաները առաջինն էին, կարապետները: Նրանց է պատկանում մեռած քաղաքի պատերի վրա խոսող գրությունները արտագրելու առաջին փորձի պատիվը: Կարող էին այդ համետ, ոչինչ պատրաստություն չունեցող հնասերները երեակայել, թե իրանց առաջին քայլերով բաց են անում լուրջ հետազոտությունների մի երկար շարք, որ տևում է մինչև այսօր և ոչ միայն դեռ չէ վերջացել, այլ, ընդհակառակն, այն է ցույց տվել, թե իսկական ուսումնասիրությունները դեռ այսուհետև պիտի սկսվեն:

Բայց քահանաների գործը անհայտ մնաց և մեռած Անին ապրող աշխարհի հետ ծանոթացնելու տեսակետից ոչ մի նշանակություն չուներ: Ավելի իրական էր այն ծառայությունը, որ Անիին մատուցեց Ռոբերտ Կեր-Պորտըր անգլիացին: 1817 թվականին նա ճանապարհորդում էր Ախուրյանի շրջականներում և իր ունեցած ժամանակից մի օր էլ Անին տեսնելու համար նշանակեց: Նոյեմբերի կարճ օրը (15-ին) բավական չէր, որ նա լիակատար հասկացողություն կազմեր ավերակների մասին, իսկ գիշերելու մասին չէր էլ կարելի մտածել: Իր ճանապարհորդական նկարագրության մեջ Կեր-Պորտըրը երկու-երեք երես միայն նվիրեց Անիին: Բայց ի՞նչ երեսներ:

Հպարտ բրիտանացին, Եվրոպայի քաղաքակիրթ և առաջավոր ազգի զավակը, որ շատ տեղեր, շատ պատմական վայրեր էր տեսել, միանգամայն հիացած էր մեր անտեր Անիի վրա: Այնքան խիստ, այնքան վեհապալորություն գործեցին նրա վրա Բագրատունիների շենքերը, որ նա,

¹ Երկու քահանաների ճանապարհորդությունը, որքան զիտենք, ոչ մի տեղ չէ հրատարակված: Նրանց հիշում է միայն Մ. Բժշկյանը իր «Անիի պատմության» մեջ:

¹ Потто, Кавказская война, т. III, СПб, 1888, стр. 719.

հափշտակված, ասում էր, թե այսքան հիանալի նրբություն, ճոխ գեղեցկություն ճարտարապետական արվեստի մեջ չէ կարելի գտնել և՛ Եվրոպայում, նույնիսկ Անգլիայի եկեղեցիների վրա: Մի կարճ օրվա տպավորություն, բայց նա այնքան հափշտակիչ էր, որ Կեր-Պորտըրը չափազանցությունների մեջ էր քննում:

«Քաղաքը մտնելուդ պես,—գրում է նա,—առջևդ մի տիպոր տեսարան ես տեսնում՝ խոշոր քարերով, սյուների գլուխներով և եկեղեցիների բազմաքանդակ շքեղությանց ուրիշ մնացորդների ավերակներով լցված, բայց երբ քիչ առաջ ես գնում, պատահում են մի քանի եկեղեցիներ, որոնք դեռ անխախտ են մնացել և նրանց ավերակ անվանելը համարյա թե անտեղի է»:

Կեր-Պորտըրին հիացրեց մանավանդ թագավորական պալատը: «Մի շինություն է դա, որ արժանի է այս հին մայրաքաղաքի համբավին: Երկայնացած ձգված է նա քաղաքի պարիսպներից մինչև խոր ձորը և ինքը մի առանձին քաղաք է թվում: Այնպիսի ճոխություններով է զարդարված ներսից և դրսից, որ անկարելի է նկարագրության և ոչ մի խոսքով արտահայտել ամբողջ շինության երեսը ծածկող ճարտար քանդակների զանազանությունն ու հարստությունը և նրա անթիվ սենյակների հատակները զարդարող նուրբ մոզաիկի նմանությունը»:

Այս նկարագրությունը լույս տեսավ 1820-ին: Եվրոպական հռչակի առաջին քարը դրված էր և Անին կարող էր հույս ունենալ, որ իր շքեղությունները միայն քրդերին ու կարիճներին չեն մնա: Մի քանի տարուց հետո (1828-ին) սկսվեց առաջին ռուս-թուրքական պատերազմը: Կարսը, իբրև նշանավոր բերդ, թե այդ և թե հետագա պատերազմների մեջ այն ռազմական կարևոր կետն էր, որի շուրջը կենտրոնանում էին ռուս զորքի գործողությունները: Անին հեռու չէ Կարսից, նույն պատերազմական բեմի մի մասն է կազմում: Եվ ահա ծանոթանալու մի նոր միջոց: Քաջության, ավերակների ոգով վառված զինվորականները տեսնում են հին, ուժասպառ բերդը, որ ռազմական ժխորի մեջ հիացնում է նրանց իր քարուքանդ գեղեցկություններով: Ռուս օֆիցեր-

ները գրում են իրանց հիշողությունները, որոնց մեջ տեղ է քոնում և Անին: Այս առաջին ռուս-թուրքական պատերազմի կիսապաշտոնական նկարագրության մեջ կարդում ենք Անիի գեղեցկությունները դրվատող տողեր:

«Կարսի փաշալըգում,—ասված է այդտեղ,—ուշագրության արժանի են Հայաստանի հին մայրաքաղաք Անիի ավերակները: Նրանց կարելի է տեսնել նույն անունը կրող մի փոքրիկ գյուղի մոտ, Արփաչայի այն ափին, ուր խառնվում է Զայա-սու գետակը: Հայկական թագավորների ինքնակալ իշխանության այս կենտրոնատեղիի անցյալ փառահեղության և հարստության մասին մինչև այժմ էլ պահվել են ժողովրդական բազմաթիվ ավանդություններ: Այս քաղաքը, սկսելով ժողկել VII դարից, հետզհետե շատացնում էր իր բազմամարդությունը և համբավը մինչև պարսիկների և թաթարների արշավանքի ժամանակը: XIV դարի սարսափելի երկրաշարժը լրացրեց Անիի գեղեցիկ մնացորդների վերջնական ոչնչացումը, մնացորդների, որոնք դեռ պահվում էին քարքարոսների այստեղ եղած ժամանակից»:

1830 թվականին լույս տեսավ առաջին հայերեն գրվածքը Անիի մասին: Այստեղ էլ, ինչպես և շատ ուրիշ դեպքերում, նախաձեռնությունը պատկանում էր Վենետիկի Մխիթարյաններին: Բայց դա դեռ Անիի ժամանակակից դրության նկարագրությունը չէր, այլ նրա անցյալի պատմությունը: Մինաս Բժշկյանը, Ղրիմի հայ-կաթոլիկ համայնքի առաջնորդը, մտադրված լինելով տալ թե Ղրիմի թերակղզու և թե Լեհաստանի, Հունգարիայի, Վալախիայի և այլ տեղերի հայ գաղթականությունների նկարագրությունը, ճանապարհորդեց ամեն տեղ, նյութեր հավաքեց: Գրելով իր այդ ճանապարհորդությունը, նա աչքի առաջ բերեց, որ իր տեսած բոլոր գաղութները Անիից են դուրս եկել, ուստի և ուզեց նախ տալ մայրաքաղաքի պատմությունը, ապա նկարագրել նրա արձակած ճյուղերի աժմյան խեղճ դրությունը: Այսպես կազմվեց Մ. Բժշկյանի «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գործը:

Բայց ի՞նչ պատմություն կարելի էր գրել, երբ Անիի ավերակները դեռ չէին հետազոտված: Բժշկյանը միտք էլ չէ

ունեցել նոր հետազոտություններով նոր լուսաբանություններ մտցնել սուգի քաղաքի անցյալի մեջ: Նա պարզապես արտագրել, դասավորել է այն ամենը, ինչ կա մեր մատենագրության մեջ Անիի մասին: Դա հետաքրքրական մի գործ կլիներ հայ ընթերցողների համար, որոնք միջոց չունեն կարդալ հին մատենագրությունը:

Սակայն Բժշկյանի գործը ուներ և մի աչքի ընկնող նութություն: Նրա մեջ դրված էին վերոհիշյալ Խաչատուր և Հովհան քահանաների արտագրած երկու արձանագրությունները, որոնք դալիս էին ցույց տալու, թե Անին ամենևին լուռումունջ մի սֆինքս չէ, այլ ունի լեզու, խոսում է իր փլատակներից և կարող է շատ հետաքրքրական տեղեկություններ հաղորդել: Ահա Մ. Բժշկյանի գրքի միջոցով ինչ էին իմանում հայ և օտար բանասերները:

«Պատմական գիտությունների սիրողները,— գրում է ակադեմիկոս Բրոսսեն¹,— ենթադրում էին, որ հայերի մշտական սովորությանը նայելով, այդքան հասարակական շինությունների պատերի վրա պետք է պահպանված լինեն հնության հետաքրքրական հիշատակարաններ, խնայված ամեն ինչ ջնջող ժամանակի և մարդկային քանդող ձեռքի կողմից: Եվ, իրավ, երկու հայ քահանաներ, տեսնելով Անիի ավերակները 1804 թվականին, մեզ թողին այդ ավերակների համառոտ նկարագրության հետ և մի արձանագրության պատճենը... Եվ, բացի դրանից, նրանք ցույց տվին, որ ուրիշ շատ արձանագրություններ էլ կան»:

Մենք տեսանք, որ երկու համեստ քահանաների գործը դեռ բավական չէր Բագրատունիների մայրաքաղաքը լուսավոր աշխարհին ներկայացնելու համար. հարկավոր էր, որ դեռ ուրիշ եվրոպացի ճանապարհորդներ էլ գային, հանձնարարեն ավերակ քաղաքը եվրոպայի ուշադրության: Եկողը մենակ Կեր-Պորտըրը չէր: Երեսնական թվականների երկրորդ կեսը Անիի համար բախտավորության մի հազվագյուտ շրջան էր: Այդ ժամանակ նրան միմյանց հոռից այցելեցին մի շարք եվրոպացի ճանապարհորդներ, որոնցից երեքը անգլիացի, մեկը գերմանացի, երկուսը ֆրանսիացի:

Անգլիացիներից առաջինն էր Հեմիլտոնը, որ տեսավ Անին 1836-ի հունիսի 13-ին և գրեց հետևյալ տողերը. «Ներքին դռնից ներս մտնելով, տեսանք ամբողջ քաղաքը, որ իր պարիսպներով տարածված էր մեր շուրջը ամեն կողմ. և թեև շինությունների ավերակները մեր կարծածի պես բազմաթիվ չէին, բայց ազդու և համարյա թե ահարկու էր քրիստոնյա քաղաքի տեսքը, մի քաղաքի, որ շինված է մի ինչ-որ ինքնուրույն, այժմյան եվրոպայում անծանոթ ձևով և որ մնացել է համարյա նույն այն վիճակում, որի մեջ թողին նրա ավերակները ութ դար առաջ: Քաղաքի ամբողջ երեսը ծածկված էր փոքր շինությունների և առանձին բնակարանների փլվածքներով, որոնց մեջ նշմարվում էին մոտ քսան հատ հասարակական մեծ շինություններ»:

Մյուս տարին, 1837-ի մայիսին, Անի մտավ գերմանացի բուսաբան Կոխը: Նրան հետաքրքրողը ավելի Շիրակի դաշտի բուսականությունն էր, բայց և այնպես, նա էլ հիացավ այդ բույսերով ծածկված, այդ բույսերի մեջ բարձրացած ավերակների վրա:

Երկու շարաթից հետո հկավ էբրոտ անգլիացին, իսկ նույն տարվա ձմեռնամուտին՝ նրա հայրենակից Ուիլքինսոնը: Վերջինս այսպես էր ձևակերպում իր ստացած տպավորությունը.

«Սրտիս շատ մեղամաղձիկ զգացմունք է ազդում այս անապատացած քաղաքի տեսարանը. նրա լքված եկեղեցիները հիշեցնում են, որ այստեղ մի հզոր քրիստոնյա ազգ է ընկած Ասիայի ամենաանգութ բարբարոսների և քրիստոնեության անհաշտ թշնամիների բազմաթիվ անգամ կրկնված հարվածների տակ: Շինությունները ամբողջ են մնացել, և այս հանգամանքը անհասկանալի է դարձնում այստեղի միայնությունը. ակամա կերպով աչքը թափառում է շուրս կողմում, որոնելով կենդանության նշաններ: Այսպիսի զգացմունք չէ հարուցանում հին ժամանակներից մնացած ավերակների տեսքը: Բաբելոնի անկերպարան հողաբլուրները մեռելների կմախքի պես են երևում. իսկ այս ամայացած և դեռ կանգուն քաղաքը թվում է թե նմանվում է

¹ „Кавказ“ լրագիր, 1852, № 18:

նոր անշնչացած մի դիակի, որի մեջ գեռ երևում են կենդանության նշույլները»։

Մինչև այստեղ մասնավոր ճանապարհորդների տպավորություններ, հիացմունք, խանդաղատանք, բանաստեղծական նմանություններ։ Անգլիացի ճանապարհորդների այս և սրա նման ուրիշ նկարագրական գեղեցիկ կտորներից զրգված ֆրանսիական կառավարությունը 1838-ին Անի ուղարկեց մի հմուտ լեզվագետի, որի անունն էր Էոժեն Բոբե, հանձնարարելով նրան քննել այդպիսի հիացմունք պատճառող ավերակները գիտնական տեսակետից։ Բոբեն առաջին լուրջ ուսումնասիրողն էր Անիում։ Յոթն օր (օգոստոսին) մնաց ավերակների մեջ, մանրամասն քննեց և արտագրեց արձանագրությունները։ Ֆրանսիացի գիտնականը Անիի ճարտարապետության մեջ գտնում էր բյուզանդական և արևելյան ոճերը, որոնց մեջ նկատում էր և բուն հայկականը։ Հայ ճարտարապետները ստրկորեն նմանվողներ չէին, այլ այդ երեք ոճերն ինքնուրույն կերպով գործադրողներ, և նրանց ձեռքի գործը այնպիսի նրբություններ ունի, որ դրանց տեսնողը չի նախանձի հունական ճարտարագործներին։ Բայց մեր գիտնականը միշտ այսպես սառնդատող չէ։ Նրան էլ վարակում է ավերակների ազդած հափշտակությունը, և նրա գրիչը գծագրում է այսպիսի տողեր.

«Մեծ բաղձանքով մտանք Անիի հյուսիսային ավագ դռնով, որ բացված էր կարծես մի տոնական օրի համար, որպեսզի ուրախ բաղաբացիների բաղմունքները դուրս գա. նրա ներքին մասը մեր աչքին թափուր երևաց ինչպես կողոպտված գերեզման... Պատերի վրա երևում են բալխտրների և պարսաքարերի հետքերը, նրանք հարվածել են, քանդել են, բայց և այդ բոլորից հետո քանդակներն ու արձանագրությունները, ամեն ինչ միացած պարզ և ցամաք երկնքի հետ մի շտեմնված նորություն և թարմության երևույթ են ներկայացնում. կարծես թե գեռ երեկ էր, որ հարձակվեցին քաղաքի վրա և հաղթողը նոր է վերցրել ու տանում է կողոպուտները։ Հասակ քաշած և արևից խորշակահար եղած խոտերը ծածկում էին գետնի երեսին փռված ավերակները։ Հովիվը իր հօտը այստեղ արոտ չէ բերում. քաղաքի մեջ

ամեն ինչ թվում է անիծված։ Արևմտյան կողմում ծածկված, ծայրերը կոտրտած թագավորական ապարանքը կորացած կռացած է Մաղկաձորի վրա, որ այժմ ցամաքած է և ամալի. հարավից Միջնաբերդը քայքայված պատերով ցցված է բարձրավանդակի վրա, իսկ արևելքից Ախուրյանի ձայնը, մոնչալով հատակի քարքարոտներում, հնչում է որպես բնության ողբ համաշխարհային սգի մեջ։ Եկվոր պանդուխտը մենակ թափառելով այս ավերակների մեջ և ամեն մի քարից հարցուփորձ անելով այդ տեղի և նրանում մի ժամանակ ապրած ազգի հիշատակներն իմանալու համար, տխրությանմբ է համակվում, երբ տեսնում է, թե մարդը ինչ ավերածություններ և անգթություն է գործադրել իր եղբայր-մարդու վրա, որի հետ պարտավոր և արժանի էր, որ ապրեր խաղաղության ու հանգստության մեջ»։

Ֆրանսիական կառավարությունը չբավականացավ հմուտ լեզվագետի ուսումնասիրությանմբ. նրա գործը լրացնելու համար հետևյալ, 1839 թվականին Անի ուղարկվեց ճարտարապետ Տեքսին։ Սրան հանձնարարված էր ընդօրինակել, թղթի վրա գծագրել Անիի շինությունները։ Բայց այդ բարդ ու ծանր գործին Տեքսինն շատ քիչ ժամանակ նվիրեց, չորս օրից ոչ ավել։ Հասկանալի է, որ որքան էլ հմուտ ճարտարապետ լիներ նա, դարձյալ չէր կարող այդքան կարճ միջոցում ամենայն ճշտությամբ ներկայացնել թղթի վրա Անիի զարդերը, թեև իր հետ ուներ երկու օգնականներ էլ։ Բայց երկար ժամանակ նրա նկարած տեսարաններն էին Անին ներկայացնող միակ պատկերները. և բոլոր պատկերազարդ նկարագրությունների մեջ, մինչև նույնիսկ վերջին ժամանակներս, Տեքսինի նկարներն են երևում, թեև լուսանկարչությունը վաղուց է, ինչ սկսել է տալ ավերակների հիշտ պատկերները։

Ինչ ասել կուզե, որ Տեքսինն բացառություն չկազմեց իր նախորդների մեջ։ Նա էլ հիացած նկարագրություններ է տալիս և փառահեղ ավերակների տեսարանի մեջ զետեղում է բնության երրեք շմաշվող, ավերականալու ոչ մի երկյուղ չունեցող ահավոր կոթողը, Մասիսը...

Բայց սխալ կլինի կարծել, թե Անին միայն անցյալ էր

հիշեցնում և ներկայի վերաբերմամբ ոչ մի պաշտոն չունեի կատարելու, թե նա միայն բանաստեղծական ղեղումներ և հիացական տրամադրություն էր ներշնչում, առանց որևէ կապ ունենալու իրականության հետ: Այդպես չէր: Չնայած իր քայքայված դրության, նա անցյալից պահած իր խղճալի ցնցոտիներով բավական ուժ և կարողություն ուներ՝ ներկա հայությանն էլ ծառայություններ մատուցանելու: Անին շարունակում էր պաշտպանել հային: Պաշտպանում էր ոչ թե իբրև բերդ, ոչ թե վայրենիների հարձակումներից ու կեղծքումներից: Ո՛չ, այդ կողմից նա միանգամայն անգոր էր: Նա պաշտպանում էր իրեն կառուցանող ժողովրդի աշխատանքների պատիվը, բարեխոսում էր նրանց համար:

Եվ սա փոքր ծառայություն չէր: Ինչո՞վ փոքրիկ ու խեղճ Հունաստանը 1820-ական թվականներին արժանացավ եվրոպական ազգերի ջերմ համակրության, ինչո՞վ նա մի տեսակ պաշտամունք, սրբազան հասկացողություն դարձավ կաննինդի պես երևելի պետական մարդկանց և Բայրնի պես բանաստեղծական հանճարների համար.— իր հին անցյալով միայն: Ծերերը իրանց դարավոր անհիշելի գերեզմաններից՝ Հոմերոսները, Յիդիսաները, Սոկրատեսները բարեխոսում էին ներկայի թշվառության, անկման մասին: Եվ լուսավոր աշխարհը լսեց նրանց, այդ մեծ երախտավորների:

Մեր Անին էլ, թեև անհամեմատ փոքր չափերով, նույն բարեխոսի, նույն պերճախոս վկայի դերն էր կատարում: Նրան տեսնում էին, հիանում: Բայց դա բավական չէր: Անիի շրջականներում, Ալաջա սարի ստորոտներին, Շիրակի լայնատարած դաշտերում այժմ էլ ապրում է հայ ժողովուրդը: Ըանապարհորդը տեսնում է նրան, խղճում: Դա մի տափակած, խեղճ, անկարող ազգաբնակիցն է: Նրա տները ստորերկրյա որջեր են, նրա շինությունները կիկլոպյան կույտեր են ներկայացնում, հազիվ տաշած ահագին քարերի հին, նախապատմական շարաններ: Կեղտի, մթության, ցնցոտիների մեջ է անցնում նրա ամբողջ կյանքը, կարծես թե այդ ժողովրդին դարերի ընթացքում չէ դիպել առաջա-

դիմության շունչը, կարծես նա երբեք չէ եղել կուլտուրական ազգերի թվում:

Այսպես տրամադրված ուղևորը գնում, տեսնում է Անին, և քարակույտերը, սյուների բեկորները, հրաշալի քանդակները, կրակոտ լեզու ստանալով, նրան հասկացնում են, որ շրջակա ժողովուրդը այդ աստիճանին հասել է բարբարոսության մի շարք դարերի ընթացքում, որ նա անշարժություն չէ ներկայացնում իր գոյության սկզբից, այլ այժմ անկման մեջ է, մի անկում, որ երկար ստրկության հետևանք է: Այդ ժողովուրդը ունեցել է իր կուլտուրան, իր դարգացած, նուրբ ճաշակը, ստեղծագործական տաղանդը: Ապացույց—ինքը, Անին: Բայց բարբարոսության սարսափելի ձեռքը իջավ նրա վրա, սևացրեց նրա օրը, հիմնահատակ քարուքանդ արեց նախկին կուլտուրական ընդունակությունները, ավերակ դարձնելով նրա սիրտն ու միտքը, կարիճներ և խեղճետիներ բնակեցնելով նրա մտավոր տաճարների մեջ: Ապացույց—դարձյալ ինքը, Անին:

Տեքսիեն, ավերակների վրա ընդհանուր ակնարկ գցելով, ասում է. «Այս բոլորը փոքրագիր է, եթե դատելու լինենք քանակության կողմից. բայց այնքան խնամքով դարդարած և ծածկված այնքան ճշմարիտ նմանություն բերող քանդակներով, այնքան ինքնուրույն ոճով, որ հազիվ կարելի է այս հիշատակարանների մեջ,—որոնք հունական ճաշակ և փափկություն են արտահայտում,—ճանաչել այն ազգի մտքի ծնունդը, որ մեր օրերում կորցրել է արվեստի ամեն մի զգացմունք և նույնիսկ բոլորովին չէ հիշում, թե ինչպիսի մարդիկ էին իր նախնիքները»:

Նույնը, Տեքսիեից 38 տարի հետո, 1877-ի ռուս-թուրքական պատերազմի ժամանակ գրում էր ռուս օֆիցերներից մեկը, որին վիճակված էր իր զորաբաժնով ապրել Անիի ավերակների մեջ: Նա ասում է իր բանակատեղիի հմայքները նկարագրելուց հետո. «Մի երկրում, ուր ներկա ժամանակ միակ բնակարաններն են հողի մեջ փորած խրճիթները, որոնց մեջ միայն փայտե գերանն է բաժանում տանտերերին իրանց անասուններից, մի տեսակ օտարոտի բան է թվում տեսնել փառահեղ պալատների մնացորդները, գե-

ղեցիկ կերպով պահված արձանագրություններով, որոնք արտիստիքական կերպով քանդակված են ինն, տասը դար առաջ կառուցված շինությունների պատերի վրա»¹:

Այո, պետք է օտարոտի թվա: Նախնիքների և ժամանակակից սերունդների մեջ մեծ վիճ էր կազմվել, լցված նախապաշարմունքներով, տգիտությամբ, բարբարոսություն լուծի տակ դարգացած ստրկական հասկացողություններով: Ժողովրդի վերաբերմունքը դեպի Անին նկարագրել է հաշատուր Արովյանցը իր «Վերք Հայաստանի»-ի մեջ, որ, ինչպես հայտնի է, գրված է 1840—1842 թվականներին:

Այդ վեպի մեջ Անին բավական մեծ տեղ ունի բռնած: Բայց, ինչպես երևում է, Արովյանցը չէր տեսել ավերակ մայրաքաղաքը, և մենք իզուր պիտի որոնենք «Վերք Հայաստանի»-ի էջերում նրա ճիշտ և մանրամասն նկարագրությունը: Դրա փոխարեն Արովյանցը տալիս է մեզ լիակատար հասկացողություն, թե ինչ համբավ ուներ Անին հայ ժողովրդի մեջ: Դուք գիտեք, որ Աղասին հաստատվել էր Անիում և այդտեղ էլ ազատեց հարյուրավոր հայերի, որոնց երևանի խանը գերի էր տանում Կարսի կողմերից: Ինքը, հերոսը, կարգալ չգիտեր, և գերիների թվում եղած հայ քահանան է պատմում նրան, թե ինչ է եղել Անին, ինչո՞ւ այսպիսի դրություն մեջ է ընկել: Աղասին լսում է, որ Հովհան Ծղզնկացի անունով մի վարդապետ անիծել է Անին և իր բնական խելքով հասկանում է, որ այդպիսի բան չէր կարող լինել, որ անեծքով այդպիսի մի ահագին քաղաք չէր կործանվի: Եվ նա վճռում է շենացնել Անին, բնակեցնել այնտեղ բոլոր ազատված գերիներին:

Դուք, անշուշտ, հիշում եք, թե ինչ դժվարությունների հանդիպեց նա: Անիծված տեղում ապրելու միտքը սարսափ է պատճառում ստրուկ ամբոխին, որ նոր էր ազատվել գերության շղթաներից: Հիշո՞ւմ եք, թե ինչ դառն գանգատներ է դուրս բերում հերոսի բերանից ամբոխի այդ քարային համառությունը:

«Ասենք թե տգետ խալիսը էսպես բանը լսել, ասում ա:

¹ Сборник военных рассказов кн. В. Мешерского, т. V, СПб, 1879, стр. 137.

կարգավորին ի՞նչ ա էլել, որ նա էլ ա հաստատություն տալիս, թե էսպես հրաշալի քաղաքը անեծքով ա կործանվել: Առաջինը սուրբ մարդի բերնից անեծք բառը խոսք չի պետք է դուս գա, դուս էլ էկավ, Արարիչ, երեսս ոտիդ տակը, դու պետք է մեկ մալդի խաթեր միլիոն հոգի՝ կորցնես: Թե պետք է կորցնեիր, ընչի՞ ստեղծեցիր»:


Սակայն այս պարզ ու հասկանալի դատողությունը ամբոխի համար չէր: «Մնապաշտությունն ու սուրբ Հովհան Ծղզնկացվո անեծքի սուրը էնպես էին նրանց սրտումը զցվել, որ հազար քարոզ ու քյալփաթին ըլէր՝ չէր կարող հանիլ»:

Արովյանցը բերում է և այդ ամբոխի իսկական խոսքերը.

«Իմա՞լ կեղնի, անիծած խողում վո՞վ կմնա: Յայսմալուրքն սուտ իմա՞լ կխոսի: Մեր վիզը դարկես, մեր ջանը խանես, վալլախայ էս շօլում կեցող հմլայ մեկն էլ ա չեղնի, չեղնի: Խաղար տարի խա ասա՛, խա գլուխդ ի քարին դարկի: Մենք չընք կենա, չընք կենա»:

Ջարմանալի չէր, որ Անին մի տարօրինակ երևույթ էր թվում այս տեսակ ժողովրդի մեջ: Անին անիծված տեղ չէր միայն քուրդ ավազակների, թունավոր կարիճների և խեղճետիկների համար: Իսկ նրա աննման գեղեցկությունները հասկանալի էին հեռու տեղերից եկած ճանապարհորդներին: Հայ ամբոխը վախենում էր նրանից, փախչում էր: Եվ նա չգիտեր մինչև անգամ, որ Անին բարեխոսում է նրա համար, հասկացնում է իր այցելուներին, որ այդ ամբոխը այդքան զժբախտ է իր տգիտության և գերության պատճառով:

Քառասնական թվականներին էլ Անին առանձին ուշադրության, բազմաթիվ այցելությունների առարկա էր: Գիտնական աշխարհը հետաքրքրվել էր հուշակավոր ավերակներով, և այցելուներից շատերի համար գլխավոր գործն էր արձանագրություններն ընդօրինակելը: Պե՞տք է ասել, որ օտար այցելուները անձեռնհաս պիտի լինեին այդ գործի մեջ: Նրանք չգիտեին հայերեն լեզուն և կարող էին միայն մեքենաբար արտանկարել քարերի վրա փորված տառերը, մինչդեռ, նախ պետք էր կարգալ արձանագրությունները և,



Լեւոն (ձախից՝ առաջինը), Ա. Յերվանյանը (երրորդը) և Ք. Քոթաճանյանը
(աջից՝ առաջինը) Անիում:



Լեւոն (աջից՝ երրորդը), Ն. Մառք (երկրորդը) և Ա. Յերվանյանը (ձախից՝ առաջինը) Անիում:

ապա մտածել արտագրելու մասին: Հարկավոր էր, որ հա-
յերը աշխատեին այդ ուղղությամբ. փոքրիշատե անթերի
գործ գլուխ բերելու պարտականությունը նրանց վրա էր
ընկնում: Եվ ահա Քառասնական թվականներին Անին ա-
յցելող հայերից մեկը ամենայն բարեխղճությամբ կատարում
է այդ պարտականությունը:

1842 թվականին Քիֆլիսում հրատարակվեց Սարգիս-
վարդապետ Զալալյանցի ճանապարհորդության առաջին
հատորը, որի վերջում հեղինակը, հասնելով Ախուրյան գե-
տին, հայտնում էր, թե այդ գետի մյուս (թուրքական) ափում
գտնվող հնությունների մասին ինքը պիտի խոսե երկրորդ
հատորի մեջ: Այդ հատորը հրատարակվեց շատ ուշ,
1858-ին, և սկսվում էր Անիի նկարագրությամբ, որ պարզ
ցույց է տալիս, թե Զալալյանը Անիում չէ եղել կամ տեսել
է նրան շատ հեռվից: Իսկ նրա բերած արձանագրություն-
ները շատ պակասավոր են և, մեր կարծիքով, արտագրված
են ուրիշ տեղից...

Իսկ արտագրելը դժվար չէր, քանի որ այդ ժամանակ
ներում մեր գրականության մեջ երևաց Անիի և նրա շրջա-
կանների մանրամասն տեղագրությունը՝ բազմաթիվ արձա-
նագրություններով: Առաջին հայը, որին վիճակված էր կա-
տարել այդ գործը, Գևորգ վարդապետն էր, որ այցելեց Անի
1841 թվականի ամառը: Նրա ճանապարհորդությունը մաս
մաս տպագրվեց Կ. Պոլսի «Հայաստան» լրագրի մեջ,
1849-ին, և այսօր էլ, չնայած բազմաթիվ ուրիշ ուսումնա-
սիրություններին, ներկայացնում է մի լուրջ, բարեխիղճ աշ-
խատություն: Անիի և Հոռոմոսի վանքի հարյուրավոր մեծ ու
փոքր արձանագրությունները Գևորգ վարդապետը արտա-
գրել է հնար եղածին չափ խնամքով և ուշադրությամբ:

Բայց Գևորգ վարդապետից ավելի լավ կատարեց նույն
գործը Վենետիկի Մխիթարյան վարդապետներից մեկը,
Ներսես Սարգիսյան: Միայն Անին չէր՝ Ներսեսի ուշա-
դրության առարկան. իր ճանապարհորդությունների ժամա-

¹ Ահա, մեր կարծիքով, այստեղից է Զալալյանցի եպիսկոպոսը
արտաքին Անիի արձանագրությունները: Մի թիվ համեմատությու-
ն կարող է ամեն մեկին համոզել, որ մեր կարծիքը հիմնավոր է:

նակ, որոնք մոտ տասը տարի տեղեցին, այդ եռանդուն հնա-
սերը նպատակ էր դրել ընդօրինակել Հայաստանի և Փոքր
Ասիայի զանազան կողմերում գտնվող հին արձանագրու-
թյունները, ինչպես նրանք կան, առանց իրանից մի տառ,
մի գիծ ավելացնելու կամ պակասեցնելու: Դա մի դաժան
գործ էր, բայց Սարգիսյանը կատարեց այդ գործը մեծ
համբերատարությամբ, ձեռքից չտալով ոչ մի հնարավոր
զգուշություն:

Անի հասավ նա 1845 թվականի հոկտեմբերին: Հույս
չգնելով իր սուր աչքերի վրա, նա ուներ հետը դիտակ և,
բացի դրանից, Հոռոմոսի վանքից բերեց սանդուղքներ, որ-
պեսզի բարձր տեղերի արձանագրություններն էլ կարողանար
կարդալ: Յոթն օր մնաց Անիի մեջ և թղթի վրա անցկացրեց
այն ամենը, ինչ գրված էր պարիսպների, եկեղեցիների երե-
սին: Արտագրությունը կատարված է այնպիսի հմտությամբ
և բարեխղճությամբ, որ մինչև այսօր լավագույնը չկա մեր
գրականության մեջ, և վստահության արժանին միայն
Ներսեսի գործն է: Բայց նրա ճանապարհորդությունը լույս
տեսավ Վենետիկում միայն 1864 թվականին:

Սարգիսյանի հետ միաժամանակ Անին ուսումնասի-
րելու գնաց Գորպատի համալսարանի պրոֆեսոր և Կով-
կասում կատարած իր հետազոտություններով մեծ անուն
ստացած Վիտնական գեոլոգ Աբիխը: Այդ հանձնարարու-
թյունը նա ստացել էր ողջաց կառավարությունից: Գիտնա-
կան պրոֆեսորը հնարավոր ճշտությամբ գծեց հինգ վերստ
շրջապատ ունեցող Անիի տեղագրական հատակագիծը, նկա-
րեց գլխավոր շինությունները և բացի դրանից, վերցրեց
տասը հատ կարևոր արձանագրությունների ճիշտ նմանա-
հանությունը բնական մեծությամբ: Իր հետ նա տարավ և
մի քար, որի վրա փորագրված էր մի արձանագրություն
1207 թվականից և այդ բոլորը ներկայացրեց գիտություն-
ների Ակադեմիային, Պետերբուրգում: Աբիխի այդ աշխա-
տությունների մասին ակադեմիկոս Բրոսսեն ֆրանսերեն
լեզվով մի զեկուցում կազմեց, որ տպվեց Պետերբուրգում:

Հետևյալ տարին, 1846-ին, պաղարյունությամբ հետա-
զոտություններ կատարողների շարքը ընդհատվում է:

Անիի մեջ է մի ճանապարհորդ. որ, բացի պատմական և հնագիտական հմտությունից, ունի տպավորվող, գեղագրող ոգի: Դա սուս ճանապարհորդ Ա. Մուրավյովն էր, որի «Гру-зия и Армения» («Վրաստան և Հայաստան») աշխատու-թյունը (երեք փոքրադիր հատոր) այսօր էլ կարդացվում է հետաքրքրությամբ:

Մուրավյովը Անիին մոտեցավ Ախուրյանի ձախ ափից: Մինչև վերջին պատերազմը սահմանապահ կազակների պահականոցներից մեկը գտնվում էր Անիի դիմաց, բարձ-րության վրա: Այդտեղից սուս ճանապարհորդը առաջին անգամ տեսավ Բաղրատունյաց փշրանքները: Հոկտեմբեր էր, բայց անժամանակ ձյունը ծածկել էր ամեն տեղ:

«Մեր առջև իր ամբողջ գեղեցկության մեջ կանգնած էր հայոց հին մայրաքաղաքը,—ասում է Մուրավյովը,— փառահեղ Մայր եկեղեցին, քաղաքի միջից, տիրապետում է բոլոր շինությունների վրա. նրա կողքերին երկու մինարեներ կան: Բայց ահա նորից եկեղեցիներ, որոնք ցրված են Մայր եկեղեցու աջ կողմին, և դրանցից մեկը կարմիր է, աշտա-րակի ձևով, իսկ նրա ետևում ձգվում է հսկայական ամրու-թյունների մի ամբողջ շրջապատ, ամբողջովին կարմիր քա-րերից, կարծես թե արյունով ողողված, թեև այլևս ոչ պա-շարողներ կան, ոչ պաշարվածներ: Այն ի՞նչ ամայի բլուր է քարձրանում Մայր եկեղեցու ձախ կողմից, կիսատ սյունե-րով և կիսատ կամարներով, որոնց կա՛մ մարդիկ չեն կարո-ղացել շինել-վերջացնել կա՛մ ժամանակն է քանդել: Մայ-րաքաղաքի Միջնաբերդն է, Բաղրատունիների նախկին պա-լատնե՛րն են: Միջնաբերդը մերկացնում է Անիի մեռածու-թյունը, Թագավորական պալատներից սկսվեց մահվան սար-սափելի հունձը, բայց դեռ ամեն ինչ չէ քանդված այդ քարե արտի վրա: Տաճարները զուր են այդպես կանգնել ամեն տեղ. նրանց մեջ այլևս աղոթող չկա: Եթե դեռ կան ամայի եկեղեցիներ շրջակա սարերի վրա կամ շրջապարիսպից դուրս, այն դաշտային տաքածություն վրա, որ մի ժամանակ քաղաք էր, դրանք միայն անցած փառքի հիշատակարաններ են. Անի՛ չկա այլևս: Նրա բոլոր պատուհաններից մահն է նա-լում, միայն մահն է այդքան բնակարանների մշտական

հյուրը. նա է գիմավորում ուղևորին բոլոր գոներում, տա-ճարներում և ապարանքներում»:

Եվ ամեն տեղ այսպիսի հիացմունք, ոգևորությու-ն, թաղկած անցյալի և ավերակ ներկայի համեմատությու-ն: Շատ տեղեր էր տեսել Մուրավյովը, շատ գեղեցիկ, տպա-վորիչ տեսարաններ է նկարագրում, բայց Անիի ներշնչած տոգերն ամենից շատ ազդու են, խորը թափանցող:

Այս վառվուռն բանաստեղծ-ճանապարհորդից երկու տա-րի հետո, 1848-ին, արհամարհելով ձմեռվա սաստիկ ցուր-տը, որ առհասարակ դաժան է լինում Շիրակի դաշտերի վրա, Անիին տեսության գնաց մի ուրիշ ուս գիտնական, Խանիկովը: Նրա ճանապարհորդության բուն նպատակն էր նորից համեմատել և արտագրել Անիի մեջ եղած պարսկա-կան արձանագրությունները: Դեկտեմբերի կեսն էր, ցուրտը հասնում էր 23—24 աստիճանի, Խանիկովը Ղոշավանքի մոտ անցավ Ախուրյանը և կազակների մի օֆիցերի՝ ուղեկ-ցությամբ գնաց, կատարեց իր գործը, արտագրելով 5 պարս-կերեն և արաբատառ արձանագրություններ: Նույն 1848-ին Անի էր գնացել և Կարապետ վարդապետ Շահնազարյանը, որ հետո Փարիզում մի շարք հայերեն հրատարակություններ սկսեց:

Խանիկովի հետազոտությունն էլ նախորդ ճանապար-հորդների վկայությունները հաստատելով, հասկացնել էր տալիս, որ Անին հետաքրքրական նյութերի մի մեծ գանձա-րան է: Կովկասյան այն ժամանակվա փոխարքան, իշխան Վորոնցովը շէր կարող առանց ուշադրության թողնել այդ հանգամանքը: Բրոսսեն գրում է, որ իշխանը, «տեսնելով Անիի՝ այսպես ասած՝ պատմական հանքի այդպիսի հարս-տությունը և, համոզվելով, որ օգտակար կլինի շարունակել նրա հետազոտությունը», 1849 թվականին ուղարկեց ճար-տար գծագրիչ Կեստեներին, որ ամբողջ վեց շաբաթ ապրեց Անիի ավերակների մեջ ու մի շատ հարուստ ալբոմ կազմեց, որ բաղկացած էր թե՛ շինությունների պատկերներից և թե՛ արձանագրությունների ընդօրինակություններից: Կարծես ոչ ոք մինչև այդ չէր տվել այդքան հարուստ մի ժողովածու՝ վեց շաբաթը բավական մեծ ժամանակ էր ամեն ինչ լավ

ուսումնասիրելու և տեղնուտեղը թղթի վրա անցկացնելու համար: Կեստները վերադարձավ Թիֆլիս, հետը բերելով 65 նկարներ և մոտ 42 արձանագրություններ: Այդ ալբոմը հիացմունք էր պատճառում այն ժամանակվա մարդկանց:

Արձանագրությունները իշխան Վորոնցովի հրամանով հանձնվեցին Բրոսսերին, որ այդ առիթով մի ուսումնասիրություն տպագրեց «Кавказ» լրագրում (1852, №№ 18—21): Սակայն այդքանը չէր հանգուցյալ հայագետի գործը: Իր ուրիշ հնագիտական աշխատությունների մեջ էլ նա խոսել է Անիի մասին, իսկ 1860 թվականին Պետերբուրգում հրատարակեց Ֆրանսերեն լեզվով մի ընդարձակ և մանրամասն հետազոտություն՝ «Leis ruines d'Ani, Capitale de l'Arménie sous les rois Bagratides» վերնագրով: Նա բաղկացած է երկու հատորից և երկու ատլասից, որոնց մեջ 45 թերթ պատկերներ կան, Կեստների կատարած գործը: Բրոսսերի այդ աշխատությունը այնքան մանրամասն է ու լիակատար, որ նույնիսկ հայ հետազոտողների համար էլ նա եղել է առաջնորդ և ղեկավար:

Ինչպես հայտնի է, իշխան Վորոնցովի մոտիկ բարեկամն էր Ներսես կաթողիկոսը: Անշուշտ, Կեստների ճանապարհորդությունը Ներսեսին այն միանգամայն ուղիղ մտածությունը պատճառած պիտի լիներ, որ հռչակավոր հույժյունների վերաբերմամբ հայոց կաթողիկոսին ամենից քիչ ներելի է անտարբեր մնալ: Ուստի Ներսեսն էլ հաջորդ 1850 թվականին Անիի նկարագրությունը հանձնեց Արեւ վարդապետ Մխիթարյանին, որ զնաց, մի անգամ էլ արտագրեց արձանագրությունները: Այս այցելության նկարագրությունը տպագրվեց Կ. Պոլսում, 1855-ին՝ «Ճանապարհորդութիւն յԱնի» վերնագրով:

Բայց այն ժամանակ, երբ տպագրվում էր Արեւ վարդապետի գիրքը, Անիի շրջականներում դարձյալ որոտում էին թնդանոթները: 1853—1856 թվականների արեւելյան պատերազմը դարձյալ Շիրակի դաշտերի վրա հավաքեց ահագին բազմություններ: Անիի այցելուների թիվը շատացավ: Մեռած քաղաքը հիացմունք էր պատճառում ոչ միայն ռուս օֆիցերներին, այլև հասարակ զինվորներին: Դեռ 1877-ի պա-

տերազմի ժամանակ կարելի էր Անիի պատերի վրա կարդալ 1853—1856 թվականներից մնացած շատ գրվածքներ: Հաշիվ գրագետ կազակը մի կերպ իր անունն էր ճանկոտել քարերի վրա, իսկ նրա կողքին երևում էր գվարդիայի մի արիստոկրատ օֆիցերի ստորագրությունը: Գեղեցիկի զգացմունքը չէ խլանում նույնիսկ պատերազմական փոթորիկների մեջ և խոսեցնել է տալիս ամեն մեկին, լինի նա նույնիսկ գյուղացի, զինվորական կոշտ կյանքի ամենաբնորոշ ներկայացուցիչ կազակ...

Հիսունական թվականներից հետո Անիի անունը սկսում է արագ ժողովրդականանալ հայերի մեջ: Կովկասում էլ հաջոց պարբերական մամուլ ծնվեց, գրողների թիվը ավելացավ: Տիրապետում էր ճառական, վերամբարձ ոճը: Ժամանակակից կյանքը դեռ պատշաճավոր տեղ չէր գրավել հրապարակախոսության մեջ, գրողների և կարդացողների մեծամասնությունը հասկանալի էր միայն ազգասիրական ուղղությունը, այն, ինչ փառաբանում է հույժյունը, անցած-զնացածը մեծացնում, ուռցնում է, հաճելի կերպով շոյելով ազգային զգացմունքը: Ճառական-ներբողական ազգասիրությունը ամեն տեղ էր՝ դպրոցի մեջ, բեմի վրա, լրագրի, բանաստեղծության մեջ: Անին, իբրև վեհագույնը Հայաստանի ավերակների մեջ, բնականաբար, պիտի այդ համատարած ազգասիրության կենտրոնական զլխավոր առարկաներից մեկը դառնար: Եվ նա երգվում էր ամեն տեղ:

Բայց այդ բազմաթիվ երգերը ոչ մի ուշադրության արժանի չեն: Բանաստեղծություններ չէին դրանք, այլ ոտանավոր գրելու մի համաճարակ ցավ: Եվ եթե անհամ տափակ ազգասիրական ողբերն ու հառաչանքները տեղ էին գտնում պարբերական մամուլի մեջ, պատճառն այն էր, որ չկար ճաշակի հասկացողություն, որ ազգասիրությունը խրախուսել, փայփայել ամեն մի գրողի, ամեն մի խմբագրի պարտքն էր: Թիֆլիսի երկու պարբերական հրատարակությունները՝ «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը և «Կռունկ Հայոց Աշխարհին» ամսագիրը, շարունակ յուր էին ածում ազգասիրական կրակի վրա և, մանավանդ առաջինը լցնում

էր իր էջերը ոտանավորի ձև ունեցող ամեն տեսակ ազգասիրական անհամություններով:

Անին տեսնող, նկարագրող այլևս չկար. բայց քանի տեղերից և որքան մարդիկ մի-մի ազգասիրական ողբ էին թիում ոչ հրապարակում ի լուր աշխարհի: Գնալ-տեսնելը թե՛ դժվար էր, թե՛ ավելորդ: Գնացող-տեսնողը գրում էր այն, ինչ գրում էր իր սենյակում նստած, Անին երևակայող ազգասերը¹: Մշակվել էր և միանման բեցեպտ ազգասիրական զեղումների համար: Լացն էր բոլոր բանաստեղծությունների բովանդակությունը, լացողը կամ Անին էր. կամ ինքը, ազգասերը: Մի քանի նմուշներ, կարծում ենք. ավելորդ չեն լինի մեր ընթերցողների համար:

1859 թվականի «Մեղուի» մեջ ժամանակի ազգասեր գրողներից մեկը, Առաքել Արարատյանց, ասում էր.

Թե ո՛չ մարմնով, դո՛ւնե մտքով
Գնանք յԱնին մեր մորմուքով.
Ամպենք, թխպենք մտածմունքով,
Հոգն անձրենք արտասունքով:

Այս դեռ ոչինչ: Ալեքսանդրապոլից մեկը, Սիմեոն Չմբշկիկ անունով, ազգասիրական բուռն հափշտակությունց մեջ նմանեցնում է Անին մի որբ երեխայի: Ահա ինչ է գրում նա նույն «Մեղուի» մեջ.

«Մեկ երեխա երեսի վրա վեր ընկած, նախ չճանաչեցի. բայց երբ որ երեսը դարձրի, ի՛նչ տեսնեմ, իմ սիրելի Անին է. երբ որ ինձ տեսավ, արտասովաթոր աչքերը ձգեց ինձ վերա, կարծես թե մեկ բան էր ուզում ինձ ասելու,—բայց լեզուն սովածությունիցը չէր դառնում, աղլուխս հանեցի սրբեցի աչքերի արտասուքը. գրկախառն և կաթոգին սրտով համբույր մատուցի Անիիս, մեկ կերպով աշխատեցա, որ սովածությունը կշտացնեմ, բայց ճար չէլավ. վասնզի երեխեն բացի կաթից ուրիշ բան չի կարող ուտել, վստն որո սկսա

արտասովալի աչօք այն օրորն ասել Անիիս վերա, բալքա քնելով սովածությունը շղգա, Աստված մեծ լույս անի, մինչև որ մայրը գա.

Օրոր ըսեմ, անուշ քնով քնանիս,
Հայկազունեաց դառնուկ, սիրուն իմ Անիս,
Հերի՛ք օրոցքեղ ճիտդ ծուռ թայկաթիս,
Հերի՛ք մայր մեռած որբ աղոց նմանիս,
Հերի՛ք այդպես դօր ու գիշեր օղբալով...»

Հետաքրքրական է, որ այս միամիտ մարդու միամիտ արևակայությունը դուր չեկավ այն ժամանակվա ազգասերներին: Ոմն Երեմիա Արովյանց պատասխանում էր սրան, թե չպետք է այդպես գրել: «Շատերը ըստ մեծի մասին Անի մայրաքաղաքի անունովն են շարժում գրիչները» — գրում էր նա, բայց Անին չպետք է քնացնել, այլ զարթեցնել: Իր կողմից գանգատավորը առաջարկում էր այսպիսի մի գոհար.

Վա՛յ իմ գլխիս, վա՛յ քեզ Անի,
Վարոր դեսը թո՛ղ ինձ տանի.
Մարմինս կտոր-կտոր անի
Ու էսպեսով հոգիս հանի¹:

Ոչնչով պակաս չէր «Թորոս վարժապետ Արթիկ գեղը» իր բանաստեղծության մեջ, որ սկսվում էր այսպես.

Կորուցեր ես առյուծ արքայը, իմ Անի,
Հաճաքել ես գլխույդ շար պայք՝ իմ ջանի,
Կորուսեր ես ազնիվ տիկնայք՝ Անի ջան.
Ժողովել ես գլխույդ նհայդ, նանի ջան...²:

Այս բոլորը գրվում էր իսկույն մոռացվելու համար: Բայց և այնպես, մենք այդ ողբերի մեջ պիտի տեսնենք ժամանակի տրամադրությունը, ընդհանուր զգացմունքը: Ապացույց կարող է լինել Ալեքսանդր վարդապետ Արարատյանի «Անի քաղաք նստեր կուլա» ողբը, որ այդ տրամադրության փոքրիշատե հաջող արտահայտությունն էր և այդ պատճառով էլ խիստ տարածված ժողովրդական երգ դարձավ, որ ամեն մեկի բերանում հնչում էր իրրե պաշտամունքի, ոգե-

¹ «Մեղու», 1860, № 26:

² «Մեղու», 1861, № 27:

¹ «Կուռնի» ամսագրի մեջ (1862, № 3) տպված է Հակոբ Կարենյանցի ճանապարհորդությունը, որի մի գլուխը նվիրված է Անիի այցելության. բայց իսկական Անին այդտեղ երկու-երեք խոսք ունի, մնացածը ազգասիրական խոհեր են, չէ մոռացված և անխուսափելի ոտանավոր ողբը:

վորութեան անկեղծ շեշտ: Մեզանից ո՞վ չէ հիշում այդ երգը իր եղանակով, որ մի քանի տասնյակ տարիներ տիրապետում էր ամեն տեղ, ժողովրդական բոլոր խավերի մեջ...

1877 թվականի ապրիլի 12-ին հայտարարված ռուս-թուրքական պատերազմը, երրորդը XIX դարում, Անիի մեռելային կյանքի մեջ էլ այնքան ահագին նշանակություն ունեցավ, որքան դարերով տանջված արևելյան քրիստոնյաների պատմական ճակատագրի վերաբերմամբ հեղափոխիչ էր:

Ինչպես և նախընթաց պատերազմում, ռուսաց զորքի գլխավոր և մեծ մասը կենտրոնացած էր Ալեքսանդրապոլում և նպատակ ունի գործել Կարսի դեմ: Սահմանն անցնելուց հետո այդ գլխավոր բանակը, համարյա ոչ մի դիմադրության չհանդիպելով թուրքերի կողմից, անարգել մոտեցավ Կարսին և շուտով պաշարից նրան ու ռմբակոծության ենթարկեց: Պատերազմական բեմը Շիրակի դաշտի հյուսիսային կողմերն էին, և եթե Կարսը շուտով ընկներ, Անիի շրջականների անապատական լուսթյունը խանդաված չէր լինի:

Բայց հունիսի 13-ին ռուսները Զիվինի ճակատամարտում անհաջողության հանդիպեցին, և պատերազմական բեմի կերպարանքը միանգամայն փոխվեց: Ռուսները ըստիպված եղան հեռանալ իրանց գրաված տեղերից, վերացնել Կարսի պաշարումը և հետ քաշվել դեպի իրանց սահմանները: Շիրակում երեան եկավ Թուրքաց ահեղ բանակը: Մուխթար փաշան գրավեց այն լեռնային շղթան, որ Կարսի մոտերքից ձգվում է մինչև Ախուրյան գետը: Նրա բռնած գծի համապատասխան ռուսներն էլ դիրքեր գրավեցին Շիրակի դաշտում բարձրացած բլուրների և լեռնադագաթների վրա: Անին մտավ պատերազմական գործողությունների շրջանը:

Ուղիղ նրա դիմաց, արևմտյան կողմում, բաժանված նրանից մի նեղ դաշտով, բարձրանում է Ալաջա սարը, որի վրա վերջանում էր Թուրքաց բանակի աջ թևը: Իսկ դեպի հյուսիս-արևմուտք, մի ժամ ճանապարհ հեռու Անիից, Շիրակի դաշտի հարթության վրա բարձրանում են իրար կող-

քի երեք մեծ բլուրներ, որոնք կոչվում են Ուլթափա: Այդտեղի վրա էր հենվում ռուսաց բանակի ձախ թևը: Ամբողջ երեք ամիս, հուլիսի սկզբից մինչև հոկտեմբերի սկիզբը, երկու թշնամի բանակները այդպես կանգնած էին իրար դեմ: Մուխթարը հանձնարարություն ուներ պատերազմը անցկացնել ռուսաց հողը: Թուրքաց կառավարությունը ահագին հաջողություն էր սպասում այդ բանից: Ռուսների ուժը շատ թույլ էր մի այդպիսի արշավանքի առաջն առնելու համար. բռնելով պաշտպանողական դրություն Ալաջայի ահավոր ամրությունների դիմաց, Լորիս-Մելիքովը աշխատում էր փոքրիկ պատերազմական գործողություններով և զորքերի շարժումներով զբաղեցնել Մուխթարին և ժամանակ վատապահել, մինչև որ տեղ կհասնեն Ռուսաստանից ուժարկված օգնական զորքերը:

Անին կողմնակի հանդիսատես չէր, այլ մտնում էր պատերազմական գործողությունների շրջանի մեջ: Շուտով ռուսները ուշադրություն դարձրին ավերակների գրաված շատ կարևոր դիրքի վրա: Մուխթար փաշան անդադար ստանում էր Կ. Պոլսից հրամաններ, որ շուտ սկսե արշավանքը դեպի ռուսաց հողը: Մի այդպիսի շարժողություն կատարելու համար նրան մնում էր իջնել Ալաջայի արևելյան ստորոտները և անցնել Ախուրյանը Ղեղաճի կամ Ղըզըլ-բիլիսայի մոտ: Գետի այն ափում, որ պատկանում էր ռուսներին, զորքեր չկային: Եվ Մուխթարը, ինչպես տեղեկացան ռուսները լրատեսների միջոցով, որոշել էր գրավել Ուլթափան ու զորքերը անցկացնել Ախուրյանի մյուս ափը:

Այդ ձեռնարկությունը մեծ վտանգ էր սպառնում: Թուրք հրամանատարի առաջը կտրելու համար Լորիս-Մելիքովը հրամայեց մի առանձին զորաբաժնով գրավել Անին. առանց այդ տեղը առնելու թուրքերը չէին կարող գլուխ բերել իրանց մտադրությունը: Հուլիսի 18-ին զորաբաժինը, բաղկացած հետևակ զորքերից և թնդանոթներից, գրավեց Անին: Թուրքերը տեսան Ալաջայի գլխից և կարծելով թե ռուսները պատրաստվում են հարձակվել իրանց վրա, մի ուժեղ զորաբաժին իջեցրին՝ Անիի դեմ գործելու համար: Քաբուրանդ

մայրաքաղաքը ամեն ժամ կարող էր ահավոր ճակատամարտի բնմ դառնալ, և այն ժամանակ կարող էին նրա ճաքճքած, փլված պատերը դիմանալ թուրքաց թնդանոթների հարվածներին: Բարերախտաբար, ավերակներն էլ բախտ ունեն: Թուրքաց բանակի մեջ հռանդոտ, վճռական, հրամանատարներ չկային. ընդհարումներ չպատահեցին, իսկ ուսաց զորաբաժինը մի քանի օրից հետո ուղարկվեց ուրիշ տեղ:

Հուլիսի 23-ին Մուխթարը վճռեց, վերջապես, կատարել սուլթանի կամքը: Լուսաբացին Անիից դեպի հարավ գտնվող Ալլամ գյուղի մոտ հավաքված էր երկու հազար ձիավոր, որոնք պիտի անցնեին Ախուրյանը: Դա առաջապահ գունդն էր, որ գետի մյուս ափից պիտի սրբնթաց արշավանք սկսե՝ դեպի Ալեքսանդրապոլի կողմերը, իսկ այդ միջոցին ինքը, Մուխթարը պիտի զբաղեցներ ռուսներին Անիի մոտ պատերազմ տալով և ապա իր ամբողջ բանակով պիտի գրոհ տար դեպի Ուլ-թափա և նույնպես անցներ ռուսաց հողը:

Բայց այդ ծրագիրը քանդվեց ինքն իրան, առանք ռուսների կողմից միջոցներ ձեռք առնելու: Ալլամում հավաքված ձիավոր զորքը առավոտյան տեսավ, որ Ախուրյանի մյուս ափով դեպի հարավ է գնում ռուսաց մի մեծ զորաբաժին: Դա նույն զորաբաժինն էր, որ գրավել էր Անին, բայց այժմ ուղարկվում էր Իգդիր՝ Երևանյան զորաբանակը ուժեղացնելու համար: Թուրքերը կարծեցին, թե այդ զորքը գնում է դեպի Դիգորի կողմը, որպեսզի այդտեղից հարձակվի Ալաջայի վրա, ուստի թողեցին Ախուրյանն անցնելու միտքը: Հետևակ զորքը հետ դարձվեց Ալաջան պաշտպանելու համար, իսկ Ալլամի հեծելազորքը Ախուրյանի ափով դեպի հյուսիս գնալով, տեսավ, որ ռուսները թողել են Անին և ինքը գրավեց ավերակները: Անիի այս գրավումը այս անգամ էլ ռուսներին անհանգստություն պատճառեց. Իսկույն կարգադրություններ եղան, որ գետի անցքերը պաշտպանվեն, իսկ մոտակա զորաբաժիններին հրաման ուղարկվեց պատրաստ լինել: Սակայն թուրքերը երկար չմնացին Անիում և խաղաղ բնակիչներին ոչինչ վնաս չտվին: Հեծելազորքի հրամանատարը նույնիսկ առանձին պահակա-

խումբ դրեց Հոռոմոսի վանքում, որպեսզի ոչ ոք չհամարձակվի վնասել սրբավայրը:

Այդ օրը երկու ռուս օֆիցերներ քիչ էր մնում փորձանքի հնթարկվեին Անիի պատճառով: Գվարդիայից էին դրանք, երկուսն էլ բարոն: Չիմանալով, որ ռուսները արդեն հեռացել են Անիից, նրանք գնացին ավերակները տեսնելու: Բայց հազիվ էին մոտեցել քաղաքին, հանկարծ հրացանաձգություն սկսվեց նրա կողմից: Նոր միայն հնասերները հասկացան, թե ինչ է դա նշանակում, և միայն իրանց լավ ձիաների շնորհիվ էր, որ կարողացան հտ փախչել, ազատվել:

Միայն այդ երկուսը չէին հուշակավոր ավերակներով հետաքրքրվողները: Այս կողմերում եղած օֆիցերներից շատերը իրանց հիշողությունների մեջ առանձնապես նկարագրել են ավերակները և նրանց թողած տպավորությունը: Մենք ձեռքի տակ ունենք մի քանի այդպիսի հիշողություններ, բայց կանգ կառնենք մեկի վրա: Կազակների հրամանատար մայոր Ռեժուսկին երկար ժամանակ ապրել է Անիի մոտ: Մինչև Անին զորաբաժնով գրավելը, նա Ախուրյանի ձախ ափին էր, պաշտպանում էր այնտեղի ռուսաց սահմանապահ պահակը, որ կոչվում էր Անի. իսկ ավերակները գրավելուց հետո նա հրաման ստացավ անցնել Ախուրյանը և միանալ այն զորաբաժնին, որ ապրում էր ավերակ քաղաքում:

Թե ինչ անջնջելի տպավորություն է թողնում Անին մարդու վրա ամեն տեսակ հանգամանքների մեջ, կարելի է խմանալ, կարդալով այդ օֆիցերի հիշողությունները²: Ամբողջ ժամանակ նա զբաղված է, իհարկե, պատերազմական կյանքով, նկարագրում է ամեն մի պատահար, նկարագրում է արյունահեղությունները, հարձակումները, վտանգները: Բայց հանկարծ, մեռած քաղաքի մեջ, նա դեն է դնում իր արյունոտ արհեստի մանրամասնությունները, դառնում է խաղաղ, կրթված մարդ, որ գեղեցկություններ է որոնում, հիանում է

¹ Այս բոլոր տեղեկությունները մենք վերցնում ենք գեներալ Քիշմիշևի «Война в Турецкой Армении» աշխատությունից (1884, էջ 246—254, 268—272 և այլն):

² Сборник военных рассказов кн. Мещерского, СПб, 1879, стр. 114—234.

նրանց վրա: Հրաշքի պես մի բան է երևում այդ հիացմունքը այն բազմաթիվ էջերի մեջ, որոնք կոտորածի, վառողի, թրնդանոթների մասին են ճառում: Անին գիտեր հիացնել և այսպիսի հանգամանքների մեջ: Կաղակների օֆիցերը ոչ միայն նկարագրում է եկեղեցիները, պատերը, ապարանքները, այլև բերում է Անիի համառոտ պատմությունը: Ավերակ մայրաքաղաքի ընկճող, հպատակեցնող ուժն է դա—հարկադրել ամեն մեկին զբաղվել իր անցյալով, իր փառքի և անկման ժամանակներով:

Ռազմագիտական նկատումները հարկադրեցին ուսնել ինն նորից գրավել Անին հուլիսի վերջերում: Թուրքերը լայն նկատում էին, որ բանի որ Անին ուսնների ձեռքին է, ոչինչ վճռական գործողություն չէ կարելի սկսել նրանց դեմ: Ուստի Մուխթար փաշան նորից փորձեց հարձակվել Անիի ուսաց բանակի վրա: Օգոստոսի 1-ի գիշերը Զալա գյուղի մոտ հավաքած թուրքաց մի բավական մեծ զորաբաժին լուսարացին պիտի արշավեր դեպի Անի: Բայց ուսները ժամանակին նկատեցին այդ շարժողությունը և թույլ չտվեցին, որ թուրքերը առաջ գան: Զալայի մոտ էլ տեղի ունեցավ մի թեթև ընդհարում, որից հետո թուրքերը ետ դարձան դեպի Ալաջա: Մուխթարի անվճռականությունը, ծուլությունը այս անգամ էլ արգելք դարձան, որ օսմանյան ահագին բանակը չկարողացավ անցնել այն մի բանի քաջ տարածությունը, որ կար Ալաջայի ստորոտների և ուսաց սահմանի մեջ: Եվ այդ վախկոտությունը Անիի համար բախտ էր, այս անգամ էլ նա պատերազմի դաշտ չդարձավ և կարող էր իր ուժասպառ ավերակները պահել:

Ռուսների կողմից սպանվեց մի զինվոր: Մայրո Ռեկուտկին պատմում է, որ ուսաց բանակը մեծ պատիվներով թաղեց այդ սպանվածին Մայր եկեղեցու պատերի մոտ, բայց թաղեց այնպես, որ գերեզմանի տեղը անհայտ մնա, որպեսզի թուրքերը հետո չբանդեն գերեզմանը և չաղծեն քրիստոնյայի դիակը: Զինվորական մուզիկան թաղման մարշն էր հնչեցնում պատմական ավերակների մեջ, որոնք տխուր և սարսափելի արձագանքներ էին տալիս:

Օգոստոսի 6-ին ուսները դարձյալ հեռացան Անիից և

այնուհետև այլևս ուշադրություն չդարձրին նրա վրա: Թուրքերն էլ հանգիստ թողին նրան և միայն բաշխողականներն էին թաքնվում ավերակների մեջ՝ Ախուրյանի մյուս ափին գտնվող ուս սահմանապահների վրա հարձակվելու համար: Բայց Անին ականատես եղավ պատերազմական մի բանի փառավոր գործողությունների: Իր Միջնաբերդի բարձրությունից նա տեսնում էր, թե ինչպես սեպտեմբերի 19-ին ուսաց մի թեթև զորաբաժին, երիտասարդ, տաղանդավոր զինեռավ Շելկովնիկովի առաջնորդությամբ բարձրանում էր դեպի Ալաջայի գագաթներից մեկը, ինչպես այդ զորաբաժինը հետևյալ օրը հանկարծակիի բերեց թուրքերին, հերոսաբար կռվեց, բայց մենակ մնալով, հարկադրված եղավ հետ քաշվել իր ճանապարհի յուրաքանչյուր թիզը կռվով խելելով թուրքերի ձեռքից: Առջուծի պես նահանջող Շելկովնիկովը Անիի մոտով անցավ և հասավ Ախուրյանին:

Իսկ մի 10—11 օրից հետո Անին տեսավ մի մեծ ուսական բանակ, որ Ախուրյանի ձախ ափով շարժվում էր դեպի հարավ: Այս բանակի հրամանատարն էր Լազարևը, որ անցավ Դիգորի վրայով դեպի արևմուտք. Ալաջայի թուրքաց բանակը թակարդի մեջ ընկավ, հաղթվեց, ցիրուցան դարձավ: Երեք ամիս դեպի Թիֆլիս տանող ճանապարհների մասին մտածող Մուխթարը փախավ Կարս, այնտեղից էլ դեպի էրզրում...

Եվ այնուհետև Անիի շրջականներում հրազեն չէր պաշտում...

Վերջացավ 1877 թվականը, վերջացավ պատերազմը: Հաջորդ տարվա գարնանը Անին արդեն նոր վիճակի տեր էր,— ուսաց հող էր դարձել: Եվ ահա Ախուրյանի ձախ ափից, գլխավորապես Ալեքսանդրապոլից, բացվում է այցելուների ճանապարհը: Առաջին ճանապարհորդների առաջին տպավորությունը այն է, որ երկիրը հանդարտ է: Որպիսի՞ դարմանալի կերպարանափոխություն Անիի ճակատագրի մեջ:

—Այժմ գայլը գառ է դարձել,—ասում է Ղոշավանքի տիրացուն¹,—անիվժած քրդերը վանքը քանդեցին, ամեն ինչ հափշտակում էին. անցյալ տարի Մուխթարի այս կողմերը

¹ «Մեղու Հայաստանի», 1878, № 27:

ճշգրտած ժամանակ վարդապետի հետ շոր հացով էինք կերակրվում, որ երթևեկ գործին ոչխարի միս, մածուն ուտեցնելու հարողանանք:

—Այն սոսկալի անցյալը հիշելու հարկ չկա, ընդհատում է Ղոջավանքի վանահայրը.—այն օրեն, երբ ռուսը հաղթությամբ Կարս մտավ, ես քրդաց վրա իշխել սկսա, այն ամեն վանքապատկան հողեր, որ անօրենք բռնությամբ սեփականել էր այժմ վերադարձնելու ստիպված է. վանքին շրջապատող ամեն կենդանությունը, հող, քար և այլն գյուղերից իրեն բեկյար հավաքած քուրդ մշակների միջոցով մաքրել եմ: Քուրդը այժմ իսպառ զենք վայր դրած է, այս կողմից, որ իրեն երկու տերութանց սահմանադուխտ, ավազակաց և փախստականաց բնակարան էր, ուր երբեմն 5—10 ձիավորով Անին մտնել երկյուղալի էր, այսօր փոքրիկ մանուկներ ջրջելու կելեն և պատահմամբ ավերակաց մեջ կը գիշերեն:

Մավրակ գյուղի քահանան Անիի ճանապարհը հաղցնող ճանապարհորդներին ասում է.

—Ի՞նչ նեղություն, որդիք, սա էլ նեղություն է, Աստված մեզ որ այն անօրեններից (թուրքերից) ազատեց, մենք ամեն օր փառք կտանք իրան: Քանի՜-քանի անգամ այս անօրենները մեր գյուղը կողոպտել են, էլ ի՞նչ անզղամտություն ստեղծեց որ շին արել. հիմա ի՞նչ. մենք մի օտար հային որ տեսնում ենք, ուզում ենք աղի պես լիզել:

Արևմտյան Շիրակը, իբրև հանդարտված մի երկիր, բաց էր արել իր կուրծքը ամեն մի այցելուի համար: Կարսի զինվորական նահանգապետ գեներալ Պոպկոն Անին առաջին այցելողներից մեկն էր: Ավերակները խոր տպավորություն թողեցին նրա վրա: Ղոջավանքի վանահայր Շիրակունի վարդապետը խնդրեց նրան թույլ տալ ավերակ եկեղեցիները խնամել, վերանորոգել: Գեներալը մեծ ուրախությամբ կատարեց այդ խնդիրը և, ստանալով Կովկասյան Փոխարքայի հավանությունը, Անիի ավերակները հանձնեց հայ հոգևորականությանը: Իր պաշտոնական գրության մեջ գեներալ Պոպկոն ասում էր, որ այդպիսի գեղեցիկ, հուշակավոր սրբավայրերը, որոնք դարերով պղծվել են մահմեդականների ձեռքով,

պետք է մաքրել, վերանորոգել և նորից ծառայեցնել իրանց նպատակին: Թույլատրված էր Ալեքսանդրապոլում, Կարսում և այլ շրջակա տեղերում նվիրատվություններ հավաքել Անիի ավերակների համար: Գործը Գևորգ կաթողիկոսի կարգադրությամբ հանձնվեց Կարսի հայոց առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյանցին: Շուտով կազմվեց Ալեքսանդրապոլում Անիի ավերակների խնամատար հոգաբարձություն, որի գործունեության մասին մենք տեղեկություններ կտանք քիչ հետո:

Եվ այսպես, պատերազմի անմիջական հետևանքներից մեկն էլ այն եղավ, որ Անին իր դարավոր անտերությունից դուրս բերվեց, խնամքի և հոգացողության առարկա դարձավ: Ի՞նչ նա առաջներում մի մշուշապատ, վտանգներով շրջապատված պաշտամունք էր հայերի համար, այժմ դարձավ ամենքին մատչելի, ռեալական: Եվ հիմնական ու վախճանական թվականներին ազգասիրական ողբերից ավելի արժանավոր գործերով էր այժմ արտահայտվում Անիի պաշտամունքը:

1879 թվականի ամառը Անի գնացողները տեսնում էին մի հայի, որ լուսանկարչական գործիքներով աշխատում էր ավերակների մեջ: Դա Հ. Քյուրքչյանն էր, որ անցյալ տարի վախճանվեց Ճավա կղզում: Քյուրքչյանը, որ լուսանկարչական արվեստը սովորել էր արտասահմանում, դեռ պատերազմի ժամանակ գտնվում էր ռուսաց բանակում իբրև լուսանկարիչ: Այդ ժամանակ նա տեսավ Անին և միանգամից հասկացավ, թե հմուտ լուսանկարիչը որքան գործեր ունի ավերակների մեջ: Նա մի քանի տեսարաններ վերցրեց, բայց չբավականացավ դրանով: 1879-ին ամբողջ հինգ ամիս բնակվեց Անիի մեջ, ահագին ծախսեր արավ, ահագին շարժարաններ կրեց և զլուխ բերեց մի գործ, որ հուշակեց նրա անունը:

Անիի մեջ ապրելու դեռ ոչ մի հարմարություն չկար. առաջվա պես միայն Մայր եկեղեցու մեջ կարող էր պատրաստվել այցելուն: Այդ դեռ ոչինչ. Քյուրքչյանին և նրա ծառաներին ավելի նեղում էր պաշարի պակասությունը: Շրջակա գյուղերում դժվար էր մի բան գտնել: 1879-ի ամառը

չոր ու անպտուղ էր և սկիզբ դրեց հանրածանոթ սովին։ Այս բոլոր նեղությունները տարավ Քյուրքչյանը, և նրա շարքաշույթյան, համբերատարության, արվեստի մեջ ձեռք բերած հմտության պտուղները բազմաթիվ լուսանկարներն էին, որոնք պատկերացնում էին Անիի մասերը մի ճշտությամբ և զարմանալի նրբությամբ, որ լուսանկարչական գործիքից կարելի է սպասել։ Լուսանկարները փոքրիկ էին, ստերեոսկոպի հարմարեցրած, բայց չափազանց պարզ էին արտահայտում յուրաքանչյուր գիծ, յուրաքանչյուր դիրք։ Նրանք ցույց տվին, թե որքան հեռու էին իսկականից Տեքսիեի և Կեստների գործերը։

Քյուրքչյանը կենդանացրեց Անին, ժամանակի խորտակող ժանիքներից ազատեց հուշակավոր ավերակները։ Իր ժողովածուի միայն առաջին հատորը նա կարողացավ հրատարակել, որ բաղկացած էր 40 նկարներից։ Չնայած իր թանկությանը, ժողովածուն տարածվեց, արժանի գնահատություն գտավ, և այնուհետև Անիի ավերակները հայ հարուստ ընդունիքների մեջ էին հիացմունք տարածում։ Մինչև այդ Քյուրքչյանի պես ոչ ոք չէր կարողացել ժողովրդականացնել մեռած քաղաքը։ Միևնույն ժամանակ, Քյուրքչյանի ժողովածուն ուներ և գիտական նշանակություն։ Հանգուցյալ պրոֆեսոր Պատկանյանը մի փոքրիկ բրոշյուրով ծանոթացրեց ռուս հասարակությանը այդ ժողովածուի հնագիտական արժեքի հետ։

Այցելուների թվի աճման հետ բազմանում են և նկարագրությունները, որոնք զանազան ժամանակ տպագրվեցին մեր պարբերական հրատարակությունների մեջ։ Ավելորդ և անհնարին է այստեղ հիշատակել այն բոլոր գրվածքները, որոնք վերաբերվում են Անիին։ Կասենք, որ դրանք մեծ մասամբ ճանապարհորդական թեթև նկարագրություններ են, որ այցելուի տրամադրությունն ու զգացմունքներն են նկարագրվում։ Բայց պարտավոր ենք այդ բազմաթիվ գրվածքների մեջ հիշել մեկը, Ե. Գեղամյանցի «Ախալցխայից մինչև Անի», որ տպվեց «Փորձ» ամսագրի մեջ 1880-ին։ Գեղամյանցը եղել է Անիում այն ժամանակ, երբ այնտեղ աշխատում էր Քյուրքչյանը, այսինքն 1879-ի ամառը, նա տալիս է ման-

րամասն նկարագրություններ և առհասարակ դիտող ու հետաքրքրվող այցելու է եղել, այնպես որ կարող է մի լավատեղյակ ուղեցույց դառնալ ավերակների կույտերի մեջ։

Բայց հայ գրողներից ոչ ոք այնքան բան չէ արել Անիի համար, ինչպես արել է Ղ. Ալիշանը։ Դեռ 1858-ին հրատարակած իր «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխարհագրության մեջ նա բավական ընդարձակ տեղ էր նվիրել Անիին։ Հետո, «Նշմարք Հայկականք» անունով պատկերադարձ հրատարակության երեք հատորներից մեկը ամբողջապես հատկացրեց Անիին։ Այդ աշխատությունը գրված է աշխարհաբար լեզվով, և Ղ. Ալիշանը շատ գողտրիկ ոճով և իրան հատուկ հնագիտական հմտությամբ նկարագրել է նշանավոր ավերակները և նկարագրել է ոչ թե մասնագետների, այլ առավելապես սովորական ընթերցողների համար։

Զբավականալով այդքանով, Ղ. Ալիշանը 1881-ին լույս հանեց «Շիրակ» անունով իր աշխատությունը, որ շատ լավ հայտնի է մեզանում։ Դա ամբողջ Շիրակ գավառի նկարագրությունն էր, որի մեջ ամենամեծ տեղը, բնականաբար, գրավում է Անին։ Ալիշանը, ինչպես հայտնի է, անձամբ չճանապարհորդեց Հայաստանում, այնպես որ Շիրակի նկարագրությունը տալով, նա, ինչպես ինքն է ասում, նման է կույրի, որ նկարում է լույսը։ Սակայն մեր նշանավոր հայրենագետին տված էր մի զարմանալի շնորհ։ Նստած իր խուցում, նա հավաքում էր այն բոլոր տեղեկությունները, որոնք կային թե մեր և թե օտար գրականությունների մեջ։ Այս կամ այն գավառի, քաղաքի, գյուղի մասին և, այդ բոլորը ուսումնասիրելով, տալիս էր այնպիսի նկարագրություններ, որոնք շատ քիչ սխալներ ունեին իրանց մեջ։ Այդպես գրել է նա ոչ միայն «Շիրակը», որ համեմատաբար փոքր աշխատություն է, այլև այնպիսի վիթխարի հատորներ, ինչպես են «Սիսուան», «Ալարատ», «Սիւնիք»։ Աշխարհագրական նկարագրությունը Ղ. Ալիշանը հասկանում էր շատ լայն մտքով. յուրաքանչյուր տեղի ներկա դրության հետ նա տալիս էր և նրա պատմությունը, հնագրությունը, թանկագին են մասնավոր նրա բացատրությունները։

Անիի վերաբերմամբ էլ Ղ. Ալիշանը կարողացավ նոր-

խոսքեր շատ ասել: Այսպես, եւ բացատրեց արձանագրութ-
յուններն մեջ եղած շատ անհասկանալի բառեր, որոնց հի-
ման վրա բաց արեց Անիի գլխավոր փողոցների անունները,
փոքրիշատե լուսաբանեց, թե ինչ տեսակ հարկերի էր են-
թարկված անեցի ժողովուրդը և այլն:

Տարաբախտաբար, «Շիրակի» տպագրվում էր այնպիսի
ժամանակ, երբ Քյուրքչյանի լուսանկարները նոր էին լույս
տեսնում, և երբ նրանք հասան Վենետիկ, գրքի տպագրու-
թյան բոլոր պատրաստութուններն արդեն տեսնված էին:
Այս պատճառով «Շիրակի» մեջ գրված են հին պատկերները,
որոնք համարյա ոչինչ հասկացողութուն չեն տալիս ավե-
րակների ներկա դրության մասին: Կան, անշուշտ, և ուրիշ
պակասութուններ: Ղ. Ալիշան կարող էր տալ, իհարկե,
այն միայն, ինչ տեսել, նկարագրել ևն ուրիշները: Եվ որով-
հետև թե նկարագրութունները և թե արձանագրութունները
թերի ու անկատար էին, ուստի այդ պակասութունները կա-
մա-ակամա պիտի մտնեին և «Շիրակի» մեջ: Բայց շնայած
այս բոլորին, մինչև այժմ հայոց գրականության մեջ չկա մի
գործ, որ կարողանար «Շիրակի» տեղը բռնել: Եվ «Շիրակը»,
թեև այսքան հեռու տեղ գրված, այսօր էլ մնում է միակ
վստահելի, տեղեկութուններով հարուստ ուղեցույցը:

Մի կարճ միջոցում Անին որքա՞ն բարերարութուններ
էր ստանում իր դաժան բախտից: Ազատվել էր քրդերից,
գարձել էր մի խաղաղ մեռելութուն, հարստացել էր Քյուրք-
չյանի նկարների և «Շիրակի» պես գեղեցիկ գործերով: Բայց
տեսնող և կարդացող հասարակութունը ի՞նչ էր անում նրա
հռչակավոր քարակույտերը պահպանելու համար: Խոսք շատ
էր եղել նրա մասին, գեղեցիկ, սրտառու խոսք: Բոլոր այցե-
լուները նկատում էին, որ ավերակները շարունակում են
ավերվել ոչ միայն մարդկանց, այլև ժամանակի ձեռքով:
Տարիների ընթացքում մաշվում հալվում էր և այն, ինչ
ազատվել էր դարերի անողորմ ճանկերից: Զէ եղել և չէ կա-
րող լինել այնպիսի ճանապարհորդ, որ Անիի մեջ մտածած
չլինի վերանորոգութունների մասին: Եվ այնուամենայնիվ
ի՞նչ ստացավ Անին:

Վերևում հիշեցինք Անիի հոգաբարձութունը: Այժմ տես-
նենք նրա գործունեությունը:

Գեորգ կաթողիկոսի հրամանով ավերակների պահա-
նությունը էջմիածնի Սինոդը հանձնեց Կարսի առաջնորդ
Աղվանյան եպիսկոպոսին: Իր հրահանգի մեջ Սինոդը կար-
գադրում էր. «Առաջնորդն հետամուտ լիցի կարգել ընկերու-
թիւն մի ի 5 կամ ի 6 անդամոց յԱղեքսանդրապոլէ և ի շր-
ջակայիցն Անույ, որ ընդ Վանահօրն գործեսցեն ամենայն
աշարջութեամբ ի շինութիւն Մայր եկեղեցւոյն Անույ, առ ի
հաստատել ի նմա վանական միաբանութիւն, և յայսմ գոր-
ծառնութեան խորհրդակցեսցի ընկերութիւնն միշտ ընդ
ևռաջնորդին Կարուց»:

Հոգաբարձութունը կազմվեց 6 անձերից, որոնցից չորսը
Աղեքսանդրապոլից էին և երկուսը Անիի շրջակա գյուղերից:
Հարկավոր էր փող, և եթե ի նկատի ունենանք, թե ինչ հա-
սարակական եռանդուն շարժում ու ոգևորութուն սկսվեց մեր
երկրում պատերազմից հետո անմիջապես, պիտի կարծենք,
որ հոգաբարձության համար փող գտնելը ոչինչ դժվարու-
թյուն չպիտի ներկայացներ: Բայց մեր ձեռքի տակ եղած տե-
ղեկութունները ցույց են տալիս, որ Անիի ավերակների հա-
մար սկզբում գլխավորապես Աղեքսանդրապոլի մեջ հավաք-
վեց մոտավորապես 800 ուրբի: Հոգաբարձութունը գործի
կապվ, և ծախսելով 1500—1600 ուրբի, մի քանի բաներ
արավ. 1) Մայր եկեղեցու գմբեթը քանդված էր, և եկեղեցու
ներսը լցվել էր նրա բեկորներով. այդ քարակույտը մաքրվեց,
եկեղեցու հատակը բացվեց. 2) Մայր եկեղեցու մոտ կա-
ռուցվեց մի շինություն, բաղկացած հինգ սենյակներից, ա-
պագա միաբանության համար. և 3) Ախուրյանի ափին
գտնվող Լուսավորիչ եկեղեցին կարգի բերվեց՝ այնտեղ ժա-
մասացություն սկսելու համար:

Սրանք առաջին քայլերն էին, բայց և վերջինը գարձան:
Մինչև այսօր, քսանհինգ տարվա ընթացքում, Անիի հողի
վրա այդ երեք թեթև բաներից ավելի ոչ մի գործ չէ կա-
տարվել: Նույնիսկ միաբանություն հաստատելու միտքն էլ
չհաջողվեց. միայն մի վանահայր նշանակվեց, նա էլ փա-

¹ «Փարոս Հայաստանի», 1880, № 2:

ձուլմ էր գուտը և դնում մոտիկ գլուղները: Եվ փառավոր կերպով ապացուցվեց այն վերին աստիճանի տխուր հանգամանքը, որ հայերի մեջ Անին միայն խոսք է, միայն դատարկ ազգասիրության առարկա: Այնքան բառեր, այնքան ողբ ու արտասուք, և ոչինչ իրական աջակցություն: Մարդ մինչև սրտի խորքը վրդովվում է, տեսնելով մի ավերակ քաղաք, որ օր-օրի վրա քանդվում է, տեսնելով հրաշալի եկեղեցիներ, որոնց օրերը համրված են և այս բոլորը մի այնպիսի ժամանակ, երբ հայր հարստություն էլ ունի, կրթություն է ստանում, զարգացնում է իր ճաշակը: Մի պարտաճանաչ, իսկապես լուսավորված ազգի մեջ Անիի Մայր եկեղեցու նման հրաշալի պատմական հիշատակարանի պահպանության համար ոչ մի ջանք, ո՛չ մի ծախս չէին խնայի: Իսկ մեղանո՞ւմ... Ահազին մի պատուվածք Մայր եկեղեցու կտուրից մինչև համարյա գետինը. մի գիշեր կգա, մի ժամ կլինի, երբ նա էլ կդառնա քարեղեն մի տձև, անճոռնի կույտ...

Եվ սակայն հոգաբարձությունը դեռ ի՞նչ դիտողություններ ուներ: Բերում ենք այն ծրագիրը, որ նա հրատարակեց լրագրության մեջ.

«1) Շինություն բնակարանի՝ միաբանության համար Կաթողիկե և Լուսավորիչ եկեղեցեաց տարածության մեջ, այժմ ունեցած շինությունն ուխտավորների և ճանապարհորդների համար թողնելով, 2) Վերանորոգություն Կաթողիկե Մայր եկեղեցվո, 3) Ընդարձակել այցելուների համար նշանակված շինությունը, որ կարելի լինի ցանկացողներին հարկավոր եղած ժամանակ ավելի երկար մնալ, 4) Ավերակների զլխավոր տեղերի մեջ կանոնավոր ճանապարհներ հարթել, 5) Դաշտից ջուրը բերելով շինությանց մոտ ծառուղիներ և պարտեզիկներ տնկել, 6) Զորերում այգիներ տնկել, 7) Աշխատել մի կենտրոնական ուսումնարան հիմնել՝ դրացի հայաբնակ գլուղների համար, 8) Ամեն կերպով աշխատել ավերակները պահպանել, 9) Աշխատել կարևոր գյուտերի մասին հայ ազգին և լուսավորյալ հասարակության ծանոթացնել, նպաստելով թե՛ ազգային հնագիտության և թե՛ պատմության, 10) Աշխատել հետզհետե նորոգել կարելին,

11) Աշխատել հաստատ աղբյուրներ գտնել միաբանության և ուսումնարանի համար և այլն»¹:

Այս բոլորը մնաց միտք միայն, մնաց թղթի վրա միայն: Հոգաբարձությունը հրավեր էր կարդում, որ փող ու ջարկեն իրան: Բայց ի՞նչ եղավ: Անցավ ժամանակ, ոչ միայն փող չուղարկեցին, այլև ինքը, հոգաբարձությունն էլ իր մտքերի ու թղթերի հետ կորավ, անհայտացավ: Հայերը իրանց ձեռքին լավ ժամանակ և միջոցներ ունեին իրանց նախնիքների գեղարվեստական ճաշակը գրոշանոց աղբերից ավելի իրական ձեռով պահել-պահպանելու համար, բայց չափին, անընդունակ հանդիսացան: Եվ երբ կիսիե ավերակների վերջին ժամը, երբ ամենքին հիացնող շենքերը այլևս չկարողանալով կանգնել իրանց հիմքերի վրա, որոնք օրեց-օր մաշվում, բարակում են, կտարածվին գետնի վրա, այն ժամանակ պատմությունը, անաչառ դատավորը, կասե, որ այդ անհետացման պատճառը հայերն են և ուրիշ ոչ ոք...

Եվ դեռ մեծ հարց է, թե նույնիսկ խոսքով Անին մեծաբելու, բարձրացնելու մեջ հա՞յն է շատ բան արել, թե օտարը: Մեղանում, ինչպես շատ անգամ տեսանք, միամիտ կամ ավելի հաճախ՝ անմիտ բացականչություններ, ավաղներ, գոյություն չունեցող արտասուքների կաթիլներ, միաձև և միալար նախադասություններ: Օտարների մոտ այսպիսի էժանագին արտահայտություններ չկան: Օտարները ավելի լավ են կարողանում խոսել Անիի մասին:

Կովկասյան պատերազմների հայտնի պատմագիր գեներալ Պոտտոն, մանրամասն խոսելով հին Հայաստանի և հայերի մասին, կանգ է առնում Անիի վրա, որ ամենից գեղեցիկ կերպով է ներկայացնում Հայաստանը: Հիացած նկարագրելով այդ հիշատակարանի գեղեցկությունները, զինվորական գրողն այսպես է պատմում Անիի պարիսպներից դուրս գտնվող Զորան-քիլիսեի լեզենդը.

«Անիի ծաղկած ժամանակները ապրում էր սարերում մի աղքատ հովիվ, որ միայն տարին մի անգամ, Քրիստոսի Հարության օրը, գալիս էր քաղաք աղոթելու և Աստծո տաճարի մեջ մոմ վառելու: Մերացավ անապատական հովիվը, և հոգ-

¹ «Փարոս Հայաստանի», 1881, № 3:

նած ոտները վատ էին ծառայում նրան: Մի զատիկ երեկո
նա սովորականի պես ճանապարհվեց դեպի փառահեղ Անին
և ամբողջ գիշերը գնում էր լեռնային խուլ կածաններով:
Գարնանային գիշերը մութ էր, լեռնային կածանները շուտ
շուտ իջնում էին անդունդների վրա: Բազմաթիվ դեեր, որոնք
այս անգամ հեռացել էին Անիից, կպան ծերուկին և աշխա-
տում էին թույլ շտալ, որ նա հասնե առավոտյան ժամասա-
ջության սկզբին: Կամ քարեր էին գցում նրա ոտների տակ,
կամ դուրս էին բերում նրան ճանապարհից և հրում էին դե-
պի մի որևիցէ անդունդ: Իր ամեն մի քայլը զոռով խլելով
անապատականը քաղաք եկավ ուշ, երբ եկեղեցիներում ար-
դեն երգել էին «Քրիստոս յարեաւ»: Բոլոր եկեղեցիները, ո-
րոնք հաստակից մինչև գմբեթները ողողված էին ճրագների և
կանթեղների լույսերով, արդեն լեփ-լեցուն էին մարդկանցով:
Անապատականը այս եկեղեցին ուզեց ներս խցկվել, այն
եկեղեցին ուզեց մտնել, փորձեց մյուսը, երրորդը, տասնե-
րորդը—ոչ մի տեղ ճանապարհ չեն տալիս նրան. ամեն տեղ
սարսափելի նեղվածքություն է, իսկ ծերունին այնքան ուժ
չունի, որ ամբողջ դեսուդեն հրե, զոռով անցք ճղե իր հա-
մար: Գնաց Աստծո բոլոր տաճարները և ամեն տեղ՝ իզուր:
Նա չլսեց զատկական արևագալի ժամերգությունը, մոմ, ինչ-
պես ուխտել էր, չվառեց: Իսկ Աստծուն մի բան խոստանալ
ապագայում—արդեն մեղք է, չգիտես թե ինչ կբերե վաղվա
օրը: Սաստիկ տրտմեց ծերունին. կանգնած է ճանապարհ-
ների մեջտեղը և լաց է լինում: Ժողովուրդը դուրս է թափվում
եկեղեցիներից. որը կառքով է գնում, որը ձիով, մեծամաս-
նությունը ոտով է. երիտասարդները ոսկեթել բանվածքով
շորեր ունեն, սիրուն աղջիկները դիպակ են հագել և վզնոց-
ներ ունեն: Ամենքը տեսնում են աղքատ հովվին, տեսնում
են նրա քրձերը, նախտակ մաղերը, արտասուքները—և անց-
նում են: Արտասուքները, ալիքները, քրձերը ոչ մի սիրտ
չշարժեցին: Գալիս է, վերջապես, եպիսկոպոսը իր եկեղեցա-
կաններով և տեսնելով ողբացող ծերունուն, հարցնում է
նրան քաղցրությամբ. «Ինչո՞ւ ես լալիս, ծերուկ, այս ուրախ
առավոտյան»: Պատասխանում է ծերունին. «Դառն օրերի եմ
հասել, հայր. ժողովուրդը չթողեց ինձ մտնել Աստծո եկեղե-

ցին»: Գավազանը շարժելով, ասաց հոգևոր հայրը. «Ծերու-
կներին պետք է ծուլությամբ չվերկենալ գիշերային քնարա-
նից և երիտասարդներից առաջ շտապել տաճարը աղոթե-
լու»: Եվ աղաղակեց ծերունին. «Ես բոլորովին չեմ ծուլացել,
հայր. ամբողջ գիշերը շարքերի հետ էի կուլում և ոտով ճա-
նապարհ էի կտրում: Բայց վաղ ինձ, անապատական ծերու-
նուս, նվազել վերջացել է առյուծի մկանունքներիս պնդությու-
նը և եղնիկի ոտների արագավազությունը: Իսկ ժողովուրդը
այժմ շատ խստասիրտ է դարձել, և նորաբողբոջ պատանի-
ների մեջ այլևս խնամք չկա դեպի անկարող ծերունիները:
Թող նրանք աղոթեն իրանց եկեղեցիներում, իսկ դու, տեր,
շինիր ինձ, աղքատ ծերունուս համար առանձին եկեղեցի»: Հո-
գևոր տերը բարեհոգությամբ ժպտաց և մոմից կակուղ խոս-
քով ասաց. «Ո՞վ մարդ, շատ ու շատ ոսկի և արծաթ դրամ-
ներով են կառուցվում տաճարները մեծ Անի քաղաքում. քո
քրձերով և քո արտասուքներով պիտի քեզ համար առան-
ձին եկեղեցի շինեմ»: Մինչև գետինը գլուխ տվեց ծե-
րունին և ասաց. «Բարի ասացիր հայր. բայց կա քուրձ ոսկու
տակ և կա ոսկի քրձի տակ: Առավոտյան, նախքան թմբուկը
երեք անգամ կթնդա, մեծ արժեքավոր հարստություն կգա
քեզ մոտ աղքատիկ կողովի մեջ, վայրի ցիռի մեջքի վրա:
Վերցրու այն հարստությունը, տեր, և աղքատ ծերունու հա-
մար եկեղեցի շինիր»:

Ասաց և հեռացավ սարերը:

Որքան փայլուն աստղեր կան կապույտ երկնքում, այն-
քան սուր պղնձի ձայներ առավոտյան աղմկեցին լուսարացի
հանգստությունը փառավոր Անի քաղաքում: Թմբուկի երրորդ
հարվածի հետ եպիսկոպոսը իջնում է սպիտակ մարմարյա
պալատի բարձր պատշգամբից և տեսնում է մի ցիռ, որ
ջուր էր խմում շատրվանի մոտ: Ցիռի մեջքի վրա մի հին
կողով կա, նման այն կողովներին, որոնց մեջ մուրացկան-
ները դնում են այն հացը, որ տալիս են նրանց Քրիստոսի
սերին: Այն կողովի մեջ ծանր հարստություն կար. երեք պա-
տանիներ հազիվ կարողացան վերցնել նրան ցիռի մեջքից:
Բարեպաշտ եպիսկոպոսը սուրբ ջուր սրսկեց ոսկու վրա,
արտասանելով այսպիսի խոսքեր. «Եթե դու անմաքուր ուժից

ես, հող ու մոխիր դարձիր»¹ Հարստությունը ոչ հող դառնալով, ոչ մոխիր: Այն ժամանակ նա ճարտարապետներ կանչեց Բյուզանդիայից և մի հռչակալ տաճար կանգնեցրեց² Զէ մեռնում ժողովրդի մեջ աղքատ հովվի, այդ հարուստ տաճարը շինողի, հիշատակը, և այդ տաճարը Չորան-քիլիսի է անվանվում մինչև այսօր»:

Չորան-քիլիսին դիմացավ Անիի երկրաշարժին, և արդեն Մեհմեմեդ Երկրորդի մուրճը կտրել է նրա կլոր և գեղեցիկ գմբեթը:

Կա՞ իսկապես մի այդպիսի սիրուն ավանդություն, թե ոչ,—չգիտենք: Անկասկած է, սակայն, որ նրա մեջ նկարագրված Զատիկը հայի Զատիկը չէ. մեղանում գլխավորը թաթախման երեկոն է, իսկ կիրակի առավոտյան ժամերգությունը կատարվում է արեւածագին, մինչդեռ այստեղ նկարագրված է հունական Զատիկը, որ կեսդիշերին է սկսվում: Բայց հարցը այստեղ ավանդության ճշտությունը չէ, այլ այն գեղեցիկ բանաստեղծական ձևը, որի մեջ ձուլված է նա: Եթե հավատացած կարող ենք լինել, որ մեր գրականության մեջ Անիի անցյալ օրերից մեկը նույնիսկ այսպիսի երևակայական գույներով նկարագրած չենք գտնի...

Շիրակի բազմաթիվ ավերակ եկեղեցիները բարբարոսական անգթության են մատնված. նրանք գոմեր ու ոչխարների փարախ են դարձած թուրքաբնակ և քրդաբնակ տեղերում: Այսպես էր Անին մինչև վերջին ժամանակները, մինչև վանահայրություն հաստատելը: Գեներալ Պոտտոն բերում է այսպիսի ավերակներ տեսած մի ճանապարհորդի հետևյալ խոսքերը.

«Տխր՞ւր, հողի վրդովեցնող տեսարան: Ակամա հարց է ծնվում. ինչո՞ւ ընկել է այս փառահեղ շինությունը, որի մեջ դրված են այնքան աշխատանք, միտք, թագավորական հարստություններ, մարդկանց նվերներ: Ինչո՞ւ ավերման և ոտնահարման է մատնված այն տաճարը, որի մեջ ամեն մի քար նվիրված է Աստծո անվան և օրհնված է նրա անունով: Ինչո՞ւ ծանրոցքներ կրող էջը գիշերում է այնտեղ, որ ծունկ է չոքել և աղոթիլ քահանայապետը: Իհարկե մարդկային վշտերի ուղեկիցները, մարդկային մեղքերը կլանում են տա-

ճարների բարոյական նշանակությունը, նրանց նյութական կազմը քայքայում են, վերածում նախնական անտարբերություն: «Հող էիր և ի հող դարձցիս»,—հա ինչ են ասում այդ պղծված ավերակները»¹:

Երկար ժամանակ Անին միայն հնասեր ճանապարհորդների այցելության առարկա էր: Բայց XIX դարի վերջերում գիտությունը նորից սկսեց հետաքրքրվել նրանով: Դեռ 1878-ին խոսք կար, որ Պետերբուրգի ուսանց Հնագիտական հանձնաժողովը մտադիր է պեղումներ կատարել Անիի մեջ: Բայց այդ միտքը կարծեմ անկատար մնաց ուխտունական թվականներին էլ, և միայն 1892 և 1893-ի ամառը հայտնի հալագետ պրոֆեսոր Մառը նույն հանձնաժողովի հանձնարարությամբ և հատկացրած միջոցներով հետազոտեց ավերակները և մի երկու տեղ էլ պեղումներ կատարեց, որոնք չափազանց հետաքրքրական հանգամանքներ լույս հանեցին:

Հիմնվելով իր բարեխիղճ, մանրազնին հետազոտությունների վրա, տաղանդավոր գիտնականը նոր խոսք մտցրեց ավերակների պատմության մեջ: Մինչև այժմ նա դեռ չէ հրատարակել իր ուսումնասիրության մանրամասնությունները, բայց այն համառոտ տեսությունն էլ, որ արդեն հրատարակված է², կարդացվում է մեծ հետաքրքրությամբ և, անկասկած, Անիի արդեն հարուստ գրականության գոհարներից մեկն է կազմում:

Ն. Մառը նկարագրում է կանգուն մնացած ավերակները, բացատրում է ճարտարապետական ոճերի զանազան ժամանակները, ցույց է տալիս, թե որքան վսեմություն կա նրանց մեջ: Բայց այսպես շատ այցելուներ են արել: Իսկ ինչ ոք չէ արել երբեք, այն է, որ Մառը պեղումների միջոցով լույս է հանել նոր ավերակներ, գտել է Աշոտ Ողորմածի շինած պարիսպը, որ սկսվում է «Մզկիթ» անվանված շինության մոտից և շրջան է տալիս Միջնաբերդի ուղղությամբ դեպի Մզկիթցածորը: Պեղումները երևան են հանել մի ամբողջ առհմային գերեզմանատուն և նրա մի փոքրիկ մատուռ:

¹ В. Потто, Кавказская война, т. III, СПб, 1898.

² Գ. Զանգյանի «Братская помощь» ժողովածուի երկրորդ հրատարակությունը, Մոսկվա, 1898:

որոնք գտնվում են Միջնաբերդի ստորոտից քիչ հեռու Երևանում է և մի փոքրիկ նեղ փողոց, շինությունների պատերով, իր այս հետազոտությանը Մառը այն մեծ ծառայությունն է մատուցել, որ շատ համոզիչ պարզությամբ ցույց է տվել, թե դեռ կա մի ամբողջ Անի հողի տակ, թե մեր իմացածները շատ քիչ են, թե մի օր, երբ կվառվի ավելի մեծ հետաքրքրություն դեպի Բագրատունյաց ավերակները, ավելի իրական, ոչ-ձրի հետաքրքրություն, Ախուրյանի այս բարձր ափի վրա երևան կգա հայկական մի ամբողջ Պոմպեա, ուր հողի շերտերի տակ թաղված կգտնեն բազմաթիվ անգին հիշատակարաններ՝ հուշակավոր մայրաքաղաքը մասնավորապես և մեր անցյալ կյանքը ընդհանրապես, հասկանալու և ճանաչելու համար։ Հարցը միայն այն է՝ երբ կգա այդ օրը...

Իսկ մինչև այդ՝ Անին օտարների համար ոչ միայն չէ կորցնում իր գրավչությունը, այլ, ընդհակառակն, ավելի և ավելի հետաքրքրական է դառնում, ավելի շատ այցելուների հիացմունքն է գրգռում։ Այդ հիացողներից մեկն է մի ռուս Ա. Անդրեև, որի մասին պետք է մի քիչ մանրամասն խոսել։ Բանի որ նա մի ամբողջ մեծ, բայց տխուր ու դառն երևույթի ներկայացուցիչ է։

Ում չէ հայտնի, որ իննսունական թվականների կեսից ռուսաց մամուլի նացիոնալիստական մասը սաստկացրեց իր արշավանքը հայության դեմ, հայտարարեց մի կատաղի հայակերություն, որի նպատակն էր մի ընդհանուր՝ զայրույթ ու զզվանք հարուցանել մի ազգի դեմ, որ հարյուր տարուց ավել Ռուսաստանի հավատարիմ հպատակն էր եղել։ Նացիոնալիստությունը մարդկային կյանքի դժբախտության համար զոյացած պալարներից ամենազզվելին է. ազգ ազգի դեմ, ժողովուրդ ժողովուրդի դեմ թշնամացնելու համար նա կանգ չէ առնում ոչ մի միջոցի առաջ։ Վատաբանել շահրած մի ազգությունը, ցեխի մեջ տրորել նրա անունը, նրա պատիվը, բաղաբանական անհավատարմության սարսափելի ամբաստություն բարդել նրա վրա, չքաշվելով ոչնչից և ոչ ոքից. — սրանք են նացիոնալիստական սիրած, փայփայած զենքերը։ Հայերին հուշակեցին ամենավնասակար մի տարր, որ անցյալում և ներկայում իդեալներ չէ ունեցել, որի համար հասկանալի

միայն ուրիշներից ծծելն է, կեղեքելն է։ Նույնիսկ հայոց պատմությունը ծաղրում էին ռուս նացիոնալիստները, զրտնելով, որ հայերը ոչինչ աչքի ընկնող գործ չեն կատարել իրանց անցյալում և նրանց թագավորությունն ասածը մի ուղորմելի, վայրենի բան է եղել...

Այդ նացիոնալիստներից մեկը, վերոհիշյալ Անդրեևը, այցելում է Անին։ Ավերակ մայրաքաղաքը խոսում է նրա կոշտ սրտի հետ, և նա իր հիացմունքը նկարագրում է «ИСТОРИЧЕСКИЙ ВЕСТНИК» ամսագրի մեջ (1898, № 1), որի հրատարակիչն է ռուսական նացիոնալիստության սյուներից մեկը, Մուվորին։ Նկարագրությունը կրում է «Հայկական Պալմիրա՝ ավերակներում» վերնագիրը և զարդարված է գեղեցիկ պատկերներով, որոնք Անիի ավերակներն են ներկայացնում։ Անդրեևը, իր հիացմունքը շարժած շինությունները ճանաչելու համար, հարկադրված է եղել փոքր ինչ ծանոթանալ հայոց պատմության հետ, Անիի արձանագրությունների թարգմանության հետ։

Շքեղ հնությունը հարկադրել է նրան լռել, մոռանալ շախտոսելու, հեզնելու, վատաբանելու սովորությունը։ Բայց որովհետև նացիոնալիստությունը մինչև ոսկորների ծուծը թափանցող մի ախտ էր, ուստի Անդրեևը հայկական անցյալի հոյակապ փշրանքներին նվիրած իր հիացմունքները թունավորել է ժամանակակից հայությունը՝ ցեխոտող նացիոնալիստական դառանցանքներով։ Հին, քարուքանդ պատերը, կամարները կեղծել նա չէ կարողացել, բայց ներկան կեղծելու ոչ մի դժվարություն չէ ունեցել։ Եվ հենց այդտեղ, այն հողի վրա, ուր ցրված են նրան հիացնող ավերակները, նա գտնում է մի հայ լուսանկարիչ, որ ներկա հայության շաղաքական մտքերն ու սեպարատիստական ձգտումներն է պատմում նրան։ Ինքը, Անդրեևը, չէ պատասխանում այդ հային, նա ուզում է մնալ կողմնակի դիտող։ Եվ նրա փոխարեն Անիի ավերակներում դուրս է գալիս մի ուրիշ մարդ, իհարկե, ոչ-հայ և սկսում է «ներկել» հայերին այն գույներով, որ Պետերբուրգի և Մոսկվայի նացիոնալիստները վաղուց պատրաստած ունեն իրանց շահրած ազգությունների

հրեանքն քսելու համար: Հայերի այդ դատախազը անունադիր չէ հիշված. նա ունի մի գեղեցիկ կին, որով հրապուրված է Անդրեևի ընկերը: Բայց ինչու է այդ դուռը եկել Անի: Մարդ ու կնիկ, ասում է Անդրեևը, քանզում էին ավերակները՝ գանձ գտնելու համար: Ահա այս գերեզմանակապուտը, որ ավերակների վերաբերմամբ նույնն է, ինչ բորենին մեռելների վերաբերմամբ, Անդրեևի վկան ու անկասկածելի ապացույցն է դառնում, որի բերանով ամենայն հոգարուժյամբ ցեխ է թափում մի ամբողջ ժողովրդի վրա: Օ՛, սա բնական է. նացիոնալիստության համար չկա ոչ մի սրբություն, երբ պետք է հասնել փայտյա ծածկապատակին...

Նեղսիրտ, մինչև պոռնիկները թուլանալ լցված նացիոնալիստի հետ ինչպես համեմատել Նվգենի Մարկովին, որ ուսաց գրականության մեջ բավական հայտնի է իր ճանապարհորդական աշխույժ ու հետաքրքրական նկարագրություններով: Մի ճանապարհորդ է դա, որ իր կյանքում շատ տեղեր է տեսել, շատ գեղեցկությունների, շատ հուշակալոր հիշատակարանների առաջ է կանգնել: Արևմուտքն ու Արևելքը շատ լավ ճանաչող այդ ճանապարհորդը այժմ վախճանված է: Կարծեմ նրա վերջին ուղևորություններից մեկն էր այն, որ նա կատարեց Անդրկովկասում մի քանի տարի առաջ, երբ գեռ նոր էր շինվում Կարսի երկաթուղին: Ինքը, Մարկովը, իր այդ ճանապարհորդությունը անվանել է «Ռուսական Հայաստան»¹: Նվ իրավ, նրա տեսած ու նկարագրած տեղերն են Երևանը, Էջմիածինը, Ապարանը, Ալեքսանդրապոլը, Անին:

Ամեն տեղ նա առհասարակ մի բարեխիղճ դիտող է, նկարագրում է հայկական կյանքի լավ և վատ կողմերը: Նոր-Քաջաղետի մոտ տեսած հայերի գյուղական դժբախտ կյանքը նա ներկայացնում է վառ գույներով, և ընթերցողը տեսնում է, թե որպիսի դժոխքի մեջ է ապրում նահապետական հայ ընտանիքը. որքան կեղտ, որքան խավար, հնադարյան հասկացողություններ: Բայց ահա նույն ճանապարհորդը Կարսի շրջանի գյուղերից մեկում գիշերում է մի բարեկեցիկ ընտանիքի մեջ և այդտեղ նա արդեն ընդունում է.

իր հաշ գյուղացին նույնիսկ ուս գյուղացուց առաջ է գնացել:

Անիի մասին Ն. Մարկովը խոսում է երկար, խոսում է սիրով, անկեղծ հիացմունքով: Մի առ մի նկարագրելով գյուղավոր ավերակները, ծանոթացնելով նրանց անցյալի հետ, ուս ճանապարհորդը վիշտ է հայտնում, որ Բագրատունյաց հոյակապ փշրանքները հալվում են, ոչնչանում են արագ և ոչ ոք չկա, որ միջոցներ ստեղծե ավերմունքի առաջն առնելու համար: Անին իր ներկա դրության մեջ եկեղեցիների ժողովածու է, իսկ եկեղեցիների պահպանությունը հոգևոր իշխանության պարտականությունն է: Նվ Մարկովն իր շատ գեղեցիկ նկարագրության մեջ ամենայն իրավունքով զարմանք է հայտնում, որ Էջմիածինը մինչև այժմ չէ կարողացել այդ հին, փառավոր տաճարների պահպանության համար աչքի ընկնող գործ կատարել:

Ռուս ճանապարհորդից անցնենք անգլիացի ճանապարհորդ Լինչին, որ մի քանի տարի առաջ Լոնդոնում հրատարակեց իր հոյակապ «Armenia» երկհատոր աշխատությունը, արդյունքն այն ճանապարհորդության, որ նա կատարել է Հայաստանի թուրքական և ուսական բաժիններում, արդյունք նաև այն մանրակրկիտ, բազմակողմանի ուսումնասիրության, որ նա դուրս է բերել թե իր անձնական դիտողություններից և թե բազմաթիվ գրավոր աղբյուրներից: Շքեղ տպված, շքեղ պատկերներով զարդարված այդ աշխատության մեջ մի ամբողջ մեծ գլուխ¹ նվիրված է Անիին: Ինքը, Լինչը, լուսանկարչական գործիքով վերցրել է տեսարաններ Անիից, և այդ պատկերները նրա գրքի մեջ տպագրական արվեստի վերջին խոսքն են ներկայացնում:

Լուսանկարչական գործիքը այժմ համարյա չուրաքանչյուր ճանապարհորդի հետ մտնում է Անիի մեջ, վերցնում է ավերակների տեսարանները: Բայց հանգուցյալ Քյուրքչյանից հետո ոչ ոք այնքան շատ բան չէ արել Անին լուսանկարելու կողմից, որքան արել է դերասան Ա. Վրույրը: Նա սիրող-լուսանկարիչ է, և առանձնապես սիրում է հնությունները, իսկ ամենից շատ, իհարկե, Անին: Մի քանի

¹ „Вестник Европы“, 1901.

¹ Թարգմանությունը տե՛ս «Բազմավեպ» ամսագիր, 1902 թ.:

ամառ Վրույրը ապրել է Անիում, ծանոթացել է նրա յուրաքանչյուր քարի, նրա դիրքերի բոլոր մանրամասնությունների հետ և ցույց է տվել մի մեծ, տոկուն աշխատասիրություն: Քյուրքչյանը հրատարակեց հիսունից ոչ-ավել լուսանկարներ, իսկ Վրույրը մենակ, առանց օգնականների և մանավանդ առանց նյութական աջակցության, որ գործի ամենակարևոր կողմն է, հանել է երկու հարյուր տեսարան, որոնցից հարյուրը արդեն հրատարակել է: Հայ բեմի այդ համեստ և, ինչ ասել կուզի, չքավոր գործիչը, կարելի է ասել, Անիի մեջ և Անիի շուրջը ոչինչ անծանոթ բան չէ թողել, այնպես որ նրա ժողովածուն ավերակների մայրաքաղաքի լիակատար, ամենամանրամասն տեսարանացույցը պիտի դառնա:

Բայց Անին միայն լուսանկարիչներին չէ գրավել: Նա ոգևորել է և նկարչի վրձինը: Լուսանկարը տալիս է ճշտություն, բայց չէ արտահայտում բնության գույները, լույսերը, օդը: Մեր տաղանդավոր նկարիչ Գ. Բաշինջաղյանը չորացրել է այդ պակասությունը իր այն պատկերների մեջ, որոնք Անիի տեսարաններն են ներկայացնում: Շատ լավ հաջողված են մանավանդ «Անիի տեսարանը Ավագ դռնից», «Մայր եկեղեցին»:

Վերջապես հիշենք և այն, որ 1903-ի ամառը Անիում մոտ ձրկու ամիս մնաց Փարիզի «Բանասեր» ամսագրի խմբագիր Կ. Բասմաջյանը, որ հնագիտական հետազոտություններով էր զբաղված: Իր հետ Բասմաջյանը բերել էր և մի հայ ճարտարապետ՝ Անիի և նրա շինությունների հատակագիծը կազմելու համար: Բասմաջյանը դեռ չէ հրատարակել իր առումնասիրությունների արդյունքը, իսկ նրա բերած ճարտարապետը դեռ այսօր էլ աշխատում է Անիում¹:

Ահա թե ինչ է Անին...

Ուղիղ մի դար է, նրան պաշտում են, նրանով հափըշտակվում են: Ո՞ր հնությունը, մանավանդ հնություններով ու

ավերակներով ծածկված մեր երկրում, կարող է հավասարվել Անիի այս բախտին: Ո՞րն է այն պատմական հիշատակարանը, որին միակերպ հիացական զգացմունքով վերաբերված լինի ֆրանսիացին, իտալացին, անգլիացին, գերմանացին, ռուսը, հայը: Անին նախանձելի ճակատագիր ստացավ Բագրատունիների ձեռքից: Նախանձելի էր նա, երբ շեն ու կենդանի էր. նախանձելի է այժմ, երբ հյուծված, ուժասպառ, քայքայվող ավերակների մի կույտ է ներկայացնում: Ինչպես շահանալ այդ ճակատագրի վրա. մի հինգ-տասը դժբախտ բեկորներ են մնացել մեծ քաղաքից, և այդ բեկորները քանի-քանի անգամ են նկարագրությունների, ուսումնասիրությունների, պատկերի, բանաստեղծության նյութ դարձել: Մնացել է մի այլ մարդկային գործ, որի միջոցով մեծարված շիններ Անին:


Եվ ահա ես էլ ուզում եմ նկարագրել իմ տեսածը, իմ զգացածը: Փույթ չէ որ ինձանից առաջ կա նկարագրողների մի երկար շարք: Ես առաջիններից չեմ, բայց վերջինն էլ չեմ լինի, քանի որ Շիրակի այն դաշտի վրա, Ալաշա սարի ստորոտների մոտ, կանգնած կմնան բոլորովին ավերված կամ կիսավեր ապրող պատերն ու գմբեթները, դեպի այդտեղ տանող գյուղական քարքարոտ, խորդուքորդ ճանապարհների վրա միշտ կերևան մարդիկ և միշտ կկրկնվի միևնույն երևույթը: Այնտեղ, ավերակների մեջ, ուր կարիճները, խեցեղատիները, ֆալանգաները դարավոր տերերն են, երբեք չէ թուլանում հոյակապ հնության դյուրեկական ուժը: Այդ ուժը ձգում է դեպի իրան, այդ ուժը խոսեցնել է տալիս, և հնագետն իր հրմտության պաշարով, գրողն իր գրչով, նկարիչն իր վրձինով, լուսնակարիչն իր գործիքով, վերջապես հասարակ այցելուն մի կտոր ածուխով, մատիտով կամ դանակով մեծարանքի հարկ է տալիս մարդկային տաղանդի մնացորդներին:

Ամենքն էլ իրավունք ունեն: Ավելորդ չէ ոչ մի գործ, որ մարդու միտքն ու զգացմունքը նվեր է բերում երախտավոր մարդկանց հիշատակին...

¹ Մենք առիթ ունեցանք տեսնելու այս ճարտարապետի՝ Անիում հատարած մի քանի գործերը, որոնք մեզ վրա հիանալի տպավորություն թողեցին: (Խոսքը վերաբերում է հայկական ճարտարապետության խոշոր մասնագետ Բ. Թորամանյանին — խմբ.):

ԿՈՒՐ-ԱՄՈՒՐՅԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ



Արարատի լեռ (Արարատի մաս)

Ա.

Թեև հունիսը հասել էր իր վերջին, բայց Թիֆլիսում սովորական տոթերը դեռ չէին սկսվել։ Անձրևոտ ամառ էր, համարյա ամեն օր, շարաթների ընթացքում, հեղեղներ էին թափվում երկնքից։ Նրանց շրջանը նոր էր վերջացել և օդի մեջ դեռ չէր չքացել նրանց թողած զովությունը։

Պարզ լուսնկա գիշեր էր։ Թիֆլիսի վոկալում չկար սովորական աղմուկը, իրարանցումը և գծի վրա կանգնած գնացքը, որ կես ժամից հետո պիտի մեկներ դեպի Ալեքսանդրապոլ, մի տեսակ տխուր լուսթյան մեջ էր թաղված։ Մեր խումբը բաղկացած էր յոթը հոգուց։ Խոսում էինք վաղվա գրական տոնի մասին։ Երկու մարդիկ մեր պատմության մեջ անմահացել են իբրև թարգմանիչներ և եկեղեցին էլ այդ անունով է նրանց տոնում։ Սահակին և Մեսրոպին նվիրած օրը արժե ամեն տարի գրական ուխտագնացության օր դարձնել, ասում էր մեզանից մեկը։ Ամենքս համաձայն էինք, ամենքս խոստում տվինք, թեև չգիտեինք՝ հեշտ է կատարելը։

Երկրորդ զանգակը հիշեցրեց հին ասացվածքը—«Ճանապարհորդը պիտի ճանապարհի վրա լինի»։ Գիտեինք որ Ալեքսանդրապոլի երկաթուղին խուլ ճանապարհներից է, ամառվա այս պահին ճանապարհորդներ քիչ կունենա և մենք հանգիստ կտեղավորվենք երկրորդ կարգի վագոնում։ Բայց ներս մտնելը բավական էր, որ մենք զգայինք, թե Անդրկովկասյան երկաթուղիները առհասարակ չեն սիրում, որ ճանապարհորդները հարմար ու հանգիստ տեղեր ունենան։ Վագոնը մինչև պոռնոգները լցված էր մարդկանցով։ Մի կերպ դարսեցինք մեր իրերը, մի կերպ տեղավորվեցինք նստարանների ծայրերին և... ճանապարհ ընկանք...

Անտանելի շոգ էր վագոնում: Մեզ սկսեցին նախազգուշացնել, որ, ի լրումն ամենայնի, նստարանների բարձերը լիքն են բաղլիկներով: Մեր ընկերներից մի քանիսը վճռեցին չքնել: Դեռ կարելի էր արհամարհել շոգն ու բաղլիկները, բայց ի՞նչ անել, երբ տեղ չկա: Երկաթուղու վարչությունը իրան պարտավոր չէ համարում քնելու տեղ տալ ամեն մեկին: Դա նշանակում է, որ նոսա համար միևնույն է, եթե միատեսակ փող վճարողների մի մասը ամբողջ գիշերը աչք չփակե: Զուր չէ մարդը իր սփոփանքի համար հնարել «բախտ» ասած հասկացողությունը: Բախտի բան է...

Եվ այդ գիշեր բախտի խորթ զավակ հանդիսացածները կարծում էին, որ բոլորովին դժվար չէ անքուն մնալ: Հունիսյան գիշերը մատի երկարություն ունի: Կեսն արդեն անցել է, կեսը կարելի է դեն գցել, կուշ գալով մի անկյունում և աչքերը անդադար թարթելով: Սկզբում այդ շատ հեշտ էր երևում: Դանդաղ հեռացող գնացքի առաջ փոված էր գիշերային Թիֆլիսը, որ իսկապես գեղեցիկ տեսարան է իր անհամար ճրագներով: Բայց ահա ծածկվեց տեսարանը, Թիֆլիսը դեպի հակառակ կողմն էր վազում և հանկարծ անհայտացավ, կարծես կուլ գնաց տարածության մեջ: Անհամար անիվները ավելի արագ են գլորվում և նրանց թխթխկոցը դառնում է մի անընդհատ, միապաղաղ դղրոց, միանման և հոգնեցուցիչ: Պատուհանների առջևով մի քանի շինություններ, մի ինչ-որ կամուրջ փախան, և այնուհետև, շրջակայքը ձգվում էր սեղեռային աղոտ ու անորոշ լույսի մեջ:

Շուտով նրանք էլ ձանձրացրին. վագոնի մեջ խոսակցության ձայները հետզհետե մարեցին: Գիշերը ծանրացնում էր աչքերը, և նրանք փակվում էին, արհամարհելով ամեն մի դիմադրություն:

Ես չդիմացա այդ ուժին: Բայց Մորփեոսի, կամ ավելի ճիշտ ասած՝ Անդրկովկասյան երկաթուղու բաղլիկների զորկում երկար չմնացի: Հաղիվհազ էր լույսը սկսել առավոտյան մութի թանձր ծալքերը նոսրացնել, երբ զարթնեցի և նայեցի պատուհանով: Մենք մոտենում էինք մի լայն ձորի: Դեռ դաշտեր էին, գեռ մեծ-մեծ բլուրներ էին երևում: Մի գետ պղտոր, վշշան գետ, գալիս էր վերևից կամ բոլորովին մո-

տենում էր մեր վագոններին կամ հեռանում էր, անցնելով թփերի, փոքրիկ թմբերի ետևը: Մի բան զգալ էր տալիս, որ բնության փոփոխություն է տեղի ունենում: Քունը փախավ, ես ցած իջա իմ քնարանից: Ընկերս, որ հաստատ էր մնացել իր խոսքին և չէր կարողացել աչք փակել, ուրախ էր, որ լույսը բացվում է: Բոլորովին ախորժելի բան չէ անքուն նստել քնածների բազմության մեջ և չիմանալ, թե ինչ կերպով կարելի է սպանել ծանր, ձանձրալի ժամերը:

Մենք միասին դուրս եկանք վագոնի նեղ ու փոքրիկ գավիթը: Որքան առաջանում էր գնացքը և որքան առատանում էր առավոտյան լույսը, այնքան շրջապատող բնությունը գրավիչ էր դառնում: Զորը նեղանում էր հետզհետե, պղտոր գետը վշշում էր ավելի բարձր, առավոտյան մշուշները սողում էին սարերի լանջերով դեպի վեր, բաց անելով մի վիթխարի լեռնաստանի գեղեցիկ, ահավոր, քաոսական տեսարանները: Պոկ գալ մեր տեղից այլևս չկարողացանք: Մոռանալով ամեն ինչ, մենք անհագ նայում էինք, իսկ մեր առջև հետզհետե գալիս անցնում էին տեսարաններ: Եվ այսպես՝ ժամեր...

Մենք գնում էինք այն հսկայական, երկար, հմայիչ կիրճով, որ Լոռու լեռնաշխարհը բացել էր Դեբեդ գետի համար:

Դա մի խրոխտ, վեհ, վայրենի լեռնաստան է: Սարերի կատարները իրար ուս են բարձրանում, այս ու այն կողմ սփռելով անտառապատ ու լերկ լանջեր, ձորեր, ամպերի մեջ կորած ժայռե պարիսպներ: Երկաթուղին սեղմվել է գետին, այսպես ասած՝ նրա փեշն է բռնել՝ լեռնային սոսկալի քաոսի մեջ գլուխ չկորցնելու համար: Ամբողջ ժամանակ ձեր ականջների մեջ է գետի կայտառ վշշոցը. երկաթի վրա վազող բազմաթիվ անիվների դղրոցները չէ կարողանում խլացնել այդ ջրային աղմուկը: Այդ աղմուկից հեռանալու տեղ չկա. երկու կողմից սարեր են, անընդհատ շարքերով կանգնած:

Ոլոր-մոլոր է գետի ընթացքը. այդպես է և նրա ափերը բերող երկաթուղին: Գալիս են երկար տարածություններ, երբ դուք, նայելով վագոնի պատուհանից, կարծում եք թե ձեր գնացքը մի ինչ-որ ահավոր ուժի ձեռքով ձգված է մի

հակայական խորխորատի մեջ, որից նա երբեք չպիտի դուրս գա: Շարժվում է գնացքը, շոգեկառքը հակայաքար շնչում է. և ձեզ թվում է թե նա հուսակաուր ջանքեր է անում, ելք է որոնում...

Հարթ ու լայն չէ այն ձորը, որ բնությունը հատկացրել է Դեբեդ-չային: Նրան ամեն մի քայլում նեղում են, դժվարացնում են: Կամ ժայռերն են իրանց վիթխարի ուսերը խրում գետի ալիքների մեջ, կամ ձորերն են կտրատում, ծովում նրան, կամ վերևից եկող լեռնալանջերն են պատերի պես սպառվում, ցցվում նրա վրա:

Այս բոլորը ոչինչ է եղել մարդու համար: Զինված զիտություններ, նա գլուխ չէ կորցրել լեռնաստանի անհեթեթությունների մեջ: Հանդարտ, շշտապելով, նա ծրագրել է մի վերին աստիճանի հանդուգն միտք՝ քայլ առ քայլ նվաճել բնությունը, իր երկաթե ճանապարհը տանել նրա անհյուրասեր, դաժան կրծքի միջով: Որքան մարդկային եռանդ, բազումների ի՞նչ ուժ է գործադրված... ոսկու ի՞նչ կույտեր են սպառվել հաճախ մի հարյուր կամ երկու հարյուր քայլ տարածություն նվաճելու համար...

Խիզախ, հանդուգն մարդն է երևում ձեզ ճանապարհի երկու կողմից: Նա այլևս կանգնած չէ այդտեղ, իր մուրճը ձեռքին, բայց նրա գործը ուղեկցում է ձեզ տասնյակ վերստերի տարածության վրա, ամեն անկյունից խոսում է ձեզ հետ իր հակայական եռանդի թափով:

Տեղ-տեղ ճանապարհը նման է քարե տաշտակի. — պատված է միապաղաղ ժայռոտ զանգվածը և նրա նեղ գոգում ամրացված են զույգ երկաթե ձողերը: Քարե տաշտակներին հետևում են քարե արկղները: Զորս կողմից քար և քար: Մակված մեծ ժայռի միջով սլանում է գնացքը, ահագին աղմուկ բարձրացնելով իր անիվներով: Ես փորձեցի համրել այդ փոքրիկ թունելները, բայց թիվը կորցրի. այնքան շատ են նրանք:

Քմահաճ է բնությունը լեռներում: Եվ այդ քմահաճությանը գեղեցիկ կերպով հարմարվել է լեռնային երկաթուղին: Մի բոլոր առաջ դուք ձորի խոր հատակում էիք, սեղմված ժայռե պատերի մեջ: Մեկ էլ տեսաք, գնացքը անցավ

գետի մյուս ափը, շրջան տվեց, բաց անելով ձորի վիթխարի տեսարաններ. դուք խորխորատների վրա եք: Կամ թե տեսնում եք, գնացքը դեպի վեր է սողում կրիայի քայլերով, և բոլոր շանցած՝ դուք թռչում եք անդունդների վրայով, երկաթե կամուրջներով: Այդպիսի կամուրջներից նշանավոր էր մանավանդ Շահալիի կամուրջը: Նա բավական մեծ է, կախված է ահագին բարձրության վրա: Նայելով դեպի ցած, դուք դողում եք այն վայրկենական մտքից՝ թե ինչ կլինի, եթե հանկարծ գնացքը դուրս գա գծից...

Մարդը, այո՛, աշխատել է և լավ է աշխատել: Լոռու ձորը գոտեմորող երկաթուղով նա միանգամից երկու մեծագործություն է կատարել. մեկ՝ որ շինարարական. հանձար է ցույց տվել, երկրորդ՝ որ ճանապարհորդին սիրուն հարմարություն է տվել, որ նա մի քանի ժամվա ընթացքում պտտե բնության հրաշալի ծոցում և սքանչանա շուրջը փոված, միմյանց արագ հաջորդող սքանչելի տեսարաններով: Դեբեդ գետը ժամերով մեխում է ձեզ պատուհանին և այնպես դյուլթել գիտե, որ դուք ոտի վրա կանգնած՝ հոգնածություն չեք զգում:

Ի՞նչը պիտի հոգնեցնե: Մեծ քաղաքի ժխորից, փողուց, խանձված ու հոտած փողոցներից հանկարծ, գիշերային մի քանի ժամերի ընթացքում ընկնելով այս հրաշալի խուլ, հրաշալի վայրենի անկյունը, դուք վերածնվում եք բոլորապես, թարմանում: Ի՞նչ երկինք, բայց մանավանդ ինչ երկիր: Միանմանություն չկա առջևդ, աղքատություն, վատուժություն չէ երևում, որպեսզի կշտանաս, ձանձրանաս: Բնության վրձինը չափազանց բեղմնավոր, համարձակ է եղել, սյուսեմների մանրություն, ստեղծագործող թափի թուլություն չկա: Մի կանաչադարձ, անտառաշատ հովիտից՝ սեպացած, լեռն ու ալևոր ժայռերի երկար պատին անցնելը բոլորի գործ է: Այնուհետև ուրիշ պատկերներ, ուրիշ գույներ, ուրիշ տրամադրություն: Այստեղ երկնքի մեջ խրված մի սրածայր գագաթ, որի շուրջը առավոտյան այս վաղ ժամին սողում է մշուշը, կամ վարագուրելով նրա բարձունքները կամ հանկարծ բաց անելով նրա տիտանական կողերը: Այնտեղ դարձանալի կանաչ լանջերը կանաչ գույն են տալիս վագոնի մեջ

եղած օրվա լույսին և ձեզ վրա հիացմունքի ժպիտներ են բերում կանաչների ու թփերի միջից թափվող փոքրիկ ջրվեժները: Մոտիկ են նրանք, բոլորովին մոտիկ ճանապարհին, դուք հազիվ մի վայրկյան տեսաք քարից-քար ընկնող ջինջ, բյուրեղյա ջրերը, բայց այլևս մոռանալ նրանց չեք կարող: Եվ ձեր հիշողության մեջ կայտառ ալիքների հետ տպավորված կմնան և արևի առաջին մեղմ ճառագայթները, որոնք ամառնային վաղ առավոտին այնքան հմայք են հաղորդում ոչ միայն ջրին ու խոտին, այլև լեռնային հսկա տեսարանների ամեն մի խորշին, ամեն մի կտորին:

Պակասում է միայն մի բան: Լեռնային աշխարհը իբրև մի վեհ ամբողջություն ընդգրկելու համար պետք է լինեի բարձրերում: Այդ խրոխտ գագաթները պիտի լինեն դիտանոց և նայողը պիտի իրան զգա սիրող ահագին տարածությունների վրա, հսկայական տեսարաններով շրջապատված, երկնքի ու երկրի մեջտեղ, անծայր հորիզոնների առաջին: Երկաթուղով գնացողը զուրկ է այդ դիրքից: Նա ձորի հատակից է նայում, ցածրից դեպի վեր, տեսնում է կտորներ, սեղմված է անձուկ տարածությունների մեջ: Բայց մեր երկրի լեռնային գագաթները դեռ անմատչելի են երկաթուղագծերին: Շատ է հեռու այդ ժամանակը: Գոհ լինենք և նրանով, որ գոնե լեռնային կիրճերն են հետզհետե նվաճվում: Սանահին կայարանի մոտերքում, գետի ձորից ուղիղ դեպի վեր, դեպի լեռն է ձգվում մի փոքրիկ կաժան. դա է այն ճանապարհը, որ տանում է դեպի Սանահինի հռչակավոր վանքը: Մեր լեռնաստանների ճակատին, դարերի սկզբից հաղորդակցության այդ տեսակ տանջանքների ժապավեններ են հղել գրված: Եվ Սանահինի գլխապատառ վերև վաղող կաժանի կողքով անցնող երկաթուղին արդեն մի հրաշք է ինքնրստինքյան...

Ձորից ձոր, ժայռից ժայռ, անտառներից անտառներ — ամեն տեղ կուսական բնությունն է: Ամայություն է տիրում. մարդ քիչ կա այդ գեղանկար վայրերում: Երբեմն միայն կտեսնեք գյուղական մի քանի ողորմելի տներ, բայց նրանք չեն կարողանում փոխել ընդհանուր տպավորությունը, չեն կարողանում լցնել բնության մեջ զգացվող դատարկությունը, անբնակ տեղերի դատարկությունը: Լոռու ամբողջ ձորի մեջ

միայն մի տեղ երևում է նոր ժամանակների տեսարանը, կապիտալի վիվլուկը: Դա Ալավերդիի հանքագործարանն է, գետեղված երկաթուղուց շատ մոտ, լեռան լանջերի վրա:

Այդտեղ աշխատում են մարդիկ, աշխատում է շոգին: Բայց կուսական բնության ծոցը խրված այս գործարանական երևույթը երկաթուղու ստեղծածը չէ: Նա գոյություն ունի երկաթուղուց առաջ էլ: Ինքը, երկաթուղին դեռ չէ կարողացել նկատելի կերպով տակնուվրա անել այս հիացնող ձորի դարավոր անշարժությունը: Առայժմ նա միայն փոքրիկ, լուռ ու խեղճ կայարաններ է շարել ձորի երկարության մեջ: Խիզախ ու հանդուգն է նա իբրև լեռնային երկաթուղի, բայց աղքատ է, շատ աղքատ իբրև առևտրական-արդյունաբերական երակ: Ապրանքատար գնացքներ չեն երևում, զիժը առայժմ ճանապարհորդներին է ծառայում գլխավորապես:

Բայց մի՞թե մշտական կլինի այդ անփոփոխությունը: Ո՞վ գիտե, գուցե շատ հեռու չէ այն ժամանակը, երբ այս հարուստ ու շքեղ լանջերը, դալար հովիտները կդառնան Թիֆլիսի արվարձանի պես մի բան, և ամառնային կյանքը կմիացնե այս տեղերը, օդի, զովության կարոտ մեծ քաղաքի հետ: Գլխավորն այն է, որ այստեղ նոր կյանք հաստատվի: Այնուհետև, երևի, կգա և բնության հարստությունները շահագործող ձեռներեցությունը...

Բ

Ամեն ինչ վերջ ունի, և Գեբեղ-չայի ձորն էլ վերջ է դնում իր զարդերին Մեծ Ղարաքիլիսա հայաբնակ գյուղի մոտ:

Դա մի մեծ գյուղ է և լեռնային գավառի կենտրոն: Երկաթուղին էլ ընդգծել է գյուղի նշանակությունը, կառուցանելով այդտեղ մեծ ու գեղեցիկ վոկզալ: Ամառնային սիրուն առավոտ էր, երբ մտանք բուֆետը մի փոքրիկ նախաճաշ

անելու Որբա՝ն գեղեցիկ շրջապատ է տվել բնությունը Մեծ
Ղարաքիլիսային: Գյուղը հովիտի մեջ է, շրջապատված լեռ-
նային բարձրություններով, որոնք վերին աստիճանի գեղա-
նկար տեսարաններ են բաց անում ամեն կողմից: Երևում
են գեղեցիկ տներ, որոնք վկայում են թե գյուղը մի քանի
քալ առաջ է գնացել պապենական ավանդապահությունից:
Ղարաքիլիսան վաղուց հայտնի է իբրև կրթասեր մի գյուղ:
Այդ կողմից նա կարող է ամաչեցնել մեր գավառական շատ
քաղաքները: Այդտեղ ստացվող հայերեն լրագիրների թիվը
այնքան աչքի ընկնող է մի գյուղի համար, որ Կարսի, Ա-
խալցիսայի, Հին Նախիջևանի պես քաղաքներն անգամ պիտի
կարմրեն, համեմատելով իրանց պահանջը այս գյուղի պա-
հանջների հետ:

Մեծ Ղարաքիլիսան արդեն ամառանոցի համբավ է
ստացել: Եվ նա միանգամայն արժանի է այդ համբավին:
Կա ամառանոցավորների մի թիվ, բայց նա ավելի կստվա-
րանա, երբ երկաթուղին ավելի ուշադրություն կդարձնե նրա
վրա: Առայժմ նրա արածը միայն այն է, որ Ղարաքիլիսան
մտցված է ամառանոցների ցուցակի մեջ և վայելում է ամա-
ռանոցային էժան սակագնի առավելությունը. մինչև Ղարա-
քիլիսա երկաթուղու տոմսակը սովորական տարիֆից պակաս
արժե: Բայց այդ քիչ է: Ժամանակակից կյանքը միայն էժա-
նություն չէ պահանջում. նրան հարկավոր է, որ հաղոր-
դակցությունը օրվա մեջ շատ կարճ ընդհատումներ ունենա:

Ղարաքիլիսայից երկաթուղին գնում է դեպի արևմուտք,
և տեսարանը միանգամից փոխվում է: Բնությունը դարձյալ
մեծագործ է, դարձյալ լեռներ է փռում աջ ու ձախ, բայց
այլևս հրաշակերտող ուժ չունի, քմահաճություններից զրկ-
ված է: Անտառները չքացած, փայտի կտոր չկա. ամեն ինչ
ծածկված է կանաչով: Միանմանություն է տիրում, վազոնի
պատուհանը այլևս չէ ձգում, չէ կաշկանդում: Ուղևորը շուտ
ձանձրանում է, հոգնում:

Անհյուրասեր բարձրություններ են, ցուրտ, աղքատ:
Անժամանակ ցրտերը հաճախ փշացնում են ցանքերը, իսկ
այս կողմերի ժողովուրդը համարյա միայն երկրագործու-
թյամբ է ապրում: Հողի պակասությունը շատ մեծ է և խեղ-

զում է հողի մարդկանց: Մի քանի հայ գյուղեր երկաթուղու
գծի վրա են, մի քանիսները կայարաններ են: Կանաչ դաշ-
տերի մեջ նստած կոպիտ, նահապետական քարակույտներ են.
աչք շոյող ոչ մի տեսարան մարդկային այդ բնակությունների
մեջ: Աղքատությունը աչք է ծակում ամեն մի քայլում:

Գնացքը այդ պատառոտուն խեղճությունների մոտով
անցնում է դանդաղ, «տոտիկ-տոտիկ», ինչպես կասեր
Ալիշանը եթե մեզ հետ լիներ: Ալեքսանդրապոլի երկաթու-
ղին շատ ծանրագնաց է: Միջին թվով մարդատար գնացքը մի
ժամում 20 վերստից ավել չէ անցնում, այսինքն փոստային
սայլակից երկու անգամ արագ: Պատճառներից առաջինը,
իհարկե, լեռնային դիրքն է: Ծանապարհը կամ դեպի բարձր
է գնում, կամ դեպի ցած. հարթ ու հավասար տեղերը շատ
չեն: Տեղեր կան, ուր գնացքը այնքան դանդաղաշարժ է, որ
թվում է թե ոտով կարելի է գնալ նրա հետ...

Բայց և այնպես երկաթուղի է դա և կատարում է փո-
խադրությունը այնպիսի արագությամբ, որի մասին հազա-
րավոր տարիների ընթացքում հասկացողություն չունեին այս
սարոտ երկիրները: Համեմատորեն դատելով, կարելի է ասել,
որ ուղևորը թռչում է շոգիի թևերի վրա: Թռչելով, դուք խորին
անձկությամբ եք դիտում այն հետամնացությունը, այն ան-
շարժ, մերկ ու քաղցած նահապետականությունը, որ ցույց
են տալիս ձեզ գյուղերը ճանապարհի երկու կողմից: Ե՞րբ
պիտի նրանք էլ թռչեն դեպի առաջ, ե՞րբ պիտի տարածու-
թյուններ թողնեն այս իրականության և մի լավ ապագայի
մեջ...

Դեռ մինչև կեսօր ժամանակ շատ կա: Վազոններում վա-
ռում են ճրագները և բոպե շանցած՝ գնացքը, սաստկացնելով
իր դրդողը, խրվում է կատարյալ մթության մեջ: Զաջուռի
մեծ թունելն է, 5—6 բոպեի ճանապարհ, որ փորված է լեռ-
նային շղթայի մեջ: Մինչև այստեղ գնացքը դեպի սարն էր
գնում: Դուրս գալով թունելից, նա սկսում է իջնել բարձրու-
թյունից, ահագին պտույտ տալով: Իջնում ենք Ալեքսանդրա-
պոլի վրա: Ուղևորը մի նոր աշխարհի մեջ է:

Մի կողմից, այն է՝ հյուսիսային կողմից, Զաջուռի այս
լեռնաշղթան է, որ գնում է դեպի արևելք: Նրա դիմաց, հյու-

սիս-արեւելքից դեպի հարավ-արեւմուտք, ընկած է մի այլ լեռնաշղթա, որի վրա, երկնքի տակ, իր ձյունապատ գագաթներով ամաստի պես պսպղում է վեհ և նազելի Արագածը: Հեռու դեպի հարավ հորիզոնի վրա, կապույտին է տալիս Ալաջայի շղթան: Այս երեք շղթաների մեջտեղը ընկած մեծ լեռնագաղտը մեր պատմական Շիրակն է...

Դաշտ ասելով չպետք է հասկանալ բոլորովին հարթ ու հավասար մի տարածություն, ինչպես են Կուր գետի այն տափարակները, որոնք ձգվում են դեպի Կասպից ծովը: Շիրակը մեծ մասամբ դաշտ է, բայց նրան կտրում են երկար ու խոր ձորեր, որոնք հսկայական լանջեր ունեն, և առանձնակի բարձրություններ, որոնք սարեր չեն, բայց վիթխարի բլուրներ են: Այս տարբերությունը խնամքով ընդգծում է ժողովրդի բարբառը. այդ դաշտային բարձրությունները թուրք լեզվով «դաղ» (սար) չեն կոչվում, այլ միայն «թափա» (գագաթ): Առհասարակ իր տեղագրական հանգամանքներով Շիրակը սաստիկ հիշեցնում է Սյունյաց աշխարհի Զանգեզուր և Սիսիան գավառները: Այստեղ էլ, ինչպես և այնտեղ, դուր գնում եք հարթ ու հավասար դաշտով և հաճախ տեսնում եք, որ ձեր առջև բացվեց մի ահագին ձոր, որ իր մեջ ունի լեռնային մի երկրի մինիատյուր հանգամանքները:

Ընդհանրապես ցուրտ ու ժլատ դաշտավայր է Շիրակը: Զմեռը դաժան, բուքերով ու ձյուններով հարուստ, ամառը կարճատև, զով: Դեռ դեղնած արտ չէր երևում չորս կողմում. զարու հունձը սկսվում է հուլիսի կեսերից: Ամբողջ տարածություն վրա մի հատ ինքնաբույս ծառ, մի թուփ չկա: Տկլոր են, այսինքն միայն խոտով են ծածկված թե՛ անձայր դաշտերը, թե՛ լեռնաշղթաների շարքերը: Մառապտուղ, միրգ չունի առասպելական շատակեր Շարայի երկիրը, որ իր ամբարները միայն հացով է լցնում:

Մեղ հետ ճանապարհորդակից էին մի քանի ալեքսանդրապոլցիներ: Եվ մինչդեռ մեր գնացքը իր մեծ պտույտն էր կատարում՝ Ալեքսանդրապոլին հասնելու համար, նրանք պատմում էին Շիրակի կյանքի տնտեսական հանգամանքները, խոսում էին իրանց դաշտերից ու ձորերից, իրանց քաղաքի մտավոր գրությունն էին լուսաբանում: Այդ խոսակցությունը,

սակայն, աշխույժ ու տաք չէր և մենք լսում էինք, հարցեր էինք տալիս ակամա: Երկաթուղին, ինչպես գիտեք, շատ է հոգնեցնում: Այդ նկատելի է մանավանդ այն տեղերում, ուր բնությունը ձանձրացնում է իր միանման տեսարաններով: Բայց Շիրակը, մանավանդ Ալեքսանդրապոլի շրջականներում, ունի մի գեղեցիկ տեսարան, որ և սթափեցրեց մեզ ամենքիս թմրությունից:

Ձեր առջև, բարձր լեռնաշղթայի վրա, խրոխտաբար բազմել է ու իր հպարտ գլուխը մինչև երկինք է տարել Արագածը: Նա իր ձյուններով պսպղում է ամպերի միջից և տիրում է ամբողջ դաշտի վրա: Առաջին անգամ տեսնողներս հիացած էինք նրա տեսքի վրա: Կանաչ, մինչև երկնքի մեջ ցցված գագաթները, տիրաբար հսկա: Ամեն օր շիրակեցին տեսնում է իր Արագածը, բայց և միշտ, նայելով գեղեցիկ հսկային, չէ կարող զսպել իր հիացական բացականչությունները, մանավանդ երբ օտարերկրացի կա նրա հետ: Դա մի ամբողջ պաշտամունք է, որի հուզիչ արտահայտությունները խոսում են ժողովրդական երգերի մեջ: Շիրակեցու բանաստեղծությունն է Արագածը, շիրակեցին իր սիրուն սարով է պարծենում: Իր երկիրը եկած անձանոթ ուղևորին նա ամենից առաջ իր պարծանքն է ցույց տալիս և վախենալով թե օտարականը կարող է այն չզգալ, ինչ ինքը զգում է մանկությունից, գովում է Արագածի գեղեցկությունը և ասում է թե գեղեցիկ է Արագածը հատկապես Շիրակի դաշտից: Դա ճիշտ է: Արարտյան դաշտից էլ երևում է Արագածը, բայց այդտեղ Շիրակի սիրելին գեղեցիկ չէ, նույնիսկ տգեղ է, ինչպես հավատացնում է շիրակեցին:

Ականջ դրեք այն խոսակցություններին, որ Արագածի տեսքն է հարուցանում մարդկանց մեջ—և դուք կճանաչեք ժողովրդական հոգու ամենաբնորոշ մի գիծը: Ժողովուրդը բանաստեղծ է, պաշտում է բնությունը, բայց չէ սիրում ամայությունը, վատությունը: Նա երկրպագում է ստեղծագործող, կենդանարար սկզբունքին: Սիրելի է Արագածը ոչ միայն այն պատճառով, որ բարձր սար է, գեղեցիկ է, այլև այն պատճառով, որ այդ բարձրությունն ու գեղեցկությունը գիտե բա-

րերարութիւնն անել մարդկանց: Նա շատ ջրեր է տալիս, իսկ շրջակայքը այնքան կարոտ է ջրի...

Այսպես չէ Արագածի ավազ եղբայր Մասիսը— մի անօգուտ հսկա, որ իր գլխի վրա ձյունային ահեղ զանգվածներ է պահում, բայց իր շուրջը ապրող մարդկութեան մի հատ առու էլ չէ տալիս: Մասիսը ճնշում է իր ահավոր վսեմութեամբ: Նա անհեթեթ ու անպետք հսկայութիւնն է: Արագածը ժպիտ է պատճառում— նա բարեբար ուժն է:

Այդ ժպիտով համակված էինք ամենքս, երբ մեր գնացքը հանգարտ մոտեցավ սպիտակ և գեղեցիկ վոկզալին: Ալեքսանդրապոլն է: Մեզ դիմավորելու էր եկել հայտնի հայագետ և կաղարջան ճեմարանի պրոֆեսոր պ. Գրիգոր Խալաթյանը: Այստեղ պետք է ասեմ, որ Խալաթյանը մոտ երկու շաբաթ առաջ Թիֆլիսի վրայով գնում էր իր հայրենի Ալեքսանդրապոլը: Երբ նա այցելութեան եկավ «Մշակի» խմբագրատունը, ես հայտնեցի, թե որքան մեծ ցանկութիւն ունենք Շիրակը և Անին տեսնելու: Նա ավելի ևս ոգևորեց մեզ, հորդորեց անպատճառ գնալ-տեսնել և խոստացավ մեզ համար մի շատ հաճելի պտույտ պատրաստել՝ Շիրակի նշանավոր տեղերը այցելելու համար:

Նվ, Խալաթյանը ճշտութեամբ կատարել էր իր խոստումը: Նա հայտնեց, որ ամեն ինչ պատրաստ է, և մենք ճաշից հետո իսկույն կճանապարհվենք Անի: Մենք մտանք Ալեքսանդրապոլ, գավառական մի հանգարտիկ ու բավական քարեկարգ քաղաք, որ ունի բավական հարթ ու լայն փողոցներ, փոքրիկ ու ցած տներով: Նրեում է, որ գավառական քաղաքը, որքան ներում են իր համեստ միջոցները, ամեն չանք գործ է դնում, որ առաջ գնա բարօրութեան ճանապարհով: Փողոցներում կան արդեն կերտահնային կատարելագործված լապտերներ բարձր սյուների վրա: Թիֆլիսը ավելի շատ շուներ այդ լապտերներից: Մի բան միայն վատ է Ալեքսանդրապոլի փողոցներում— փոշին: Բայց ես չգիտեմ՝ իրավունք ունի՞ Թիֆլիսում ապրող մարդը գանգատվել, ուր էլ լինի, փողոցային փոշու վրա...

Մեր խումբը Ալեքսանդրապոլ մտավ ավելի ստվարացած, ճանապարհին, Ղարաքիլիսայում, նոր ուղեկիցներ էին

միացել մեր խմբին: Բայց և այնպես Խալաթյանի ընտանիքը ընդունեց մեզ գրկաբաց և ամբողջ ժամանակը, մինչև Ալեքսանդրապոլից հեռանալը, այնպիսի սրտաբաց, բուն հայկական սիրալիր հյուրասիրութիւն ցույց տվեց մեզ, որ հիացմունք պատճառեց ամենքիս:

Գ

Ասացի, որ շիրակեցին պաշտում է իր Արագածը: Բայց երա համար, և հատկապես ալեքսանդրապոլցու համար, կա մի ուրիշ, գուցե ավելի մեծ, սրբազան պաշտամունք՝ Անին: Ալեքսանդրապոլցին Անիի ջերմեռանդ ուխտավորն է: Նվ ես դժվարանում եմ հավատալ, թե ամբողջ քաղաքում կարող է գտնվել մեկը, որ իր կյանքում գոնե մի անգամ տեսած չլինի ավերակների քաղաքը: Յուրաքանչյուր լանգամ, երբ առիթ է ներկայանում, ալեքսանդրապոլցին մեծ հաճութեամբ օգտվում է նրանից՝ Անին մի ավելորդ անգամ էլ տեսնելու համար:

Այդ պատվարներ փաստը մեր աչքի առջև էլ կրկնվեց: Ճաշից հետո կառքերի մի երկար շարք էր սպասում մեզ: Բանից դուրս եկավ, որ մեր խմբին ավելացել է մի ավելի սովոր խումբ. մեզ հետ Անի էին գնում Խալաթյանների համարյա ամբողջ ընտանիքը և նրա մի քանի բարեկամները: Մի ամբողջ կարավան էինք կազմում. բացի տղամարդկանցից, այդտեղ կային տիկիներ, օրիորդներ, երիտասարդներ, նույնիսկ երեխաներ: Մեզ հետ էր և Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Գեղամ Տեր-Պետրոսյանը, մի եռանդոտ, անխոնջ ու լուսավոր մարդ, որի գործունեությունը երախտագիտութեամբ պիտի հիշե Ալեքսանդրապոլը: Մեր կարավանի գլխավորը նա էր: Թե որպիսի սիրալիր ուշադրութեամբ էին վերաբերվում դեպի մեզ, հյուրերս, Տեր-Պետրոսյանը, նրա հետ մի կառքում նստած Գրիգոր Խալաթյանը և վերջինիս եղբայր Կարապետը,— ես պատմել չեմ կարող:

Մեր ճանապարհը սկսվեց Ալեքսանդրապոլի արևմտյան ծայրից: Առաջ մենք գնում էինք խճուղով, անցանք Արփաչայ գետը, որ մի ժամանակ ռուս-թուրքական սահմանագիծն էր կազմում: Ապա դուրս եկանք խճուղուց և մտանք գյուղական նեղ, անմշակ արահետները: Ալեքսանդրապոլից Անի կարելի է գնալ երեք-չորս ուղղությամբ. Ալեքսանդրապոլից յուրաքանչյուր կառույցի աշխատանքները, որ կարող է աչքերը փակած տանել ուղեորին և շփալվել: Նույնպես լավ գիտե՞նք և ուղեցույցի դեր կատարելը: Երբ նա լուռ ու մունջ նստած է իր տեղը, ամբողջապես զբաղված իր ձիաներով, դուք հասկանում եք, որ շրջակայքում ուշադրության արժանի, որևէ բանով հայտնի տեղ չկա: Բայց հանկարծ տեսնում եք, որ նա ետ նայեց դեպի ձեզ, մտրակով ցույց տվեց մի ուղղություն և արտասանեց այս կամ այն գյուղի, այս կամ այն բլրի անունը: Նա բացատրություններ էլ կտա, թե ինչ կա այդ գյուղում, ինչ է այդ բլուրը:

Օրը զով է, ինչպես վայել է Շիրակի լեռնադաշտին. արեգակը տաքացնում է, բայց չէ այրում: Շուրջը կանաչ տարածություններ են. գալիս են բլուրներ, նրանց մեջ ձևանում են ձորակներ, բայց դաշտավայրի ընդհանուր բնավորությունը մնում է անփոփոխ: Կանաչ արտերի մեջ պտույտներ է գործում գյուղական ճանապարհը. նա ունի հարյուրավոր և էլ ավելի խոշոր գոտիներ, ծածկված է քարերով, կոշկոռներով, խորդուբորդերով. և կառքը անդադար երերվում է, անողորմ կերպով օրորում, մի կողմից մյուս կողմն է գցում իր մեջ նստածներին, կամ բարձրանում է, կամ ցած գլորվում, կամ կողքի վրա է գնում նեղ կաժանով և դուք ամեն բան սպասում եք, թե ո՞րտեղ կգա, կամ թե խրվում է կես-չորացած ցեխերի մեջ:

Կանաչ դաշտերում հանդիպում են գեղեցիկ, սովորաբար փոքրիկ, մոխրագույն, խեղճ գյուղեր: Առաջին գյուղը, որի միջով անցանք մենք, թուրքաբնակ էր: Որքա՞ն տնակություն, որքա՞ն աղբ ու անմաքրություն է ցուցահանված նեղ, հոտած փողոցներում: Բայց այսպես է դրությունը ամեն տեղ, այսպիսի տեսք ունեն և հայաբնակ գյուղերը: Եվ նկատեցեք, դարերով տիրողները թուրքեր էին, ընդամենը 25 տարի

է, ինչ վերջ է տրվել նրանց տիրապետության: Շիրակի հին, գեղեցիկ կուլտուրան նրանք ջնջեցին: Անընդունակ լինելով սովորել բնիկ հայերից, նրանք խեղդեցին այդ բնիկներին և թույլ չտվեցին, որ իրանցից մի քայլ առաջ գնացող լինի: Այդպես էլ հաստատվեց հավասարությունը, և այժմ մի են նախկին անընդունակ տիրողները ու նրանց տանջված հպատակները: Զանազանել արտաքուստ շատ դժվար է: Միջավայրին հարմարվելու օրենքը այդպես էր պահանջում: Կեղեքող տերն ու կեղեքվող հպատակը իրար շատ մոտ էին ապրում, կողք-կողքի տված: Նրանք կամ գրկիցներ էին մի գյուղում, կամ շատ մոտիկ հարևաններ էին մի դաշտի վրա:

Թուրք գյուղի մոտիկ հարևանը շուտով երևաց: Դա Բաշ-Շորագյալն է. առաջին մեծ հայ գյուղը Ալեքսանդրապոլից մոտ 15 վերստ հեռավորության վրա: Նրա միջով հոսող գետակը, որ կոչվում է Կարախանի ջուր, մեր խմրից շատերին հիշեցրեց ծարավը: Շիրակի դաշտերում աղբյուրներ շատ քիչ կան և ծարավից տանջվելը այդ հովասուն, կանաչ տարածությունների վրա նույնքան սովորական է, ինչպես, օրինակ, Սարգարաբաղի այրված, անջրդի անապատում, որ գտնվում է այստեղից դեպի արևելք, Երևանի երկաթուղու վրա: Մեր կառքերը կանգ առան, այս ու այն կողմից երևացող գյուղացիներից և գեղջկուհիներից ջուր էին խնդրում:

Մերկ, սև, քարե գյուղ է դա: Ամեն տեղ շոր քարե պատեր միայն, ցածրիկ տները կույր են, առանց պատուհանների, դեպի փողոցի կողմը դարձրած ունեն հաստ, բութ պատեր, որոնք կիկլոպյան անարվեստ շինարարություններն են հիշեցնում: Ոչ մի կանաչ ճյուղ, ոչ մի փունջ կանաչ խոտ ամբողջ գյուղի մեջ: Դրա փոխարեն աղբ,— որքան կարելի է երևակայել: Շիրակի և Արարատյան անփայտ դաշտերի աղգաբնակությունը բնությունից և կարիքից ստիպված աղբերի մեջ է ծնվում, աղբով է զբաղվում իր ամբողջ կյանքի ընթացքում և վաղուց է կորցրել մարդուն հատուկ զգվանքը դեպի անմաքրությունները: Անասունների աղբը նրա համար միակ երկնային բարիքն է. դաժան ձմեռվա ընթացքում նա առանց այդ աղբի գոյություն չէ կարող պահպանել: Ուստի ամբողջ ամառը նա զբաղված է վառելիք պատրաստելով. հավաքում է անասուն-

ձեռքի աղբը, մերկ ոտներով կոխ է տալիս, տրորում է նրան, ձեռքերով փոքրիկ աղյուսներ է շինում այդ զանգվածից, փռում է աղյուսները, շորացնում է արեգակի տակ և ապա նրանցից բարձր բուրգեր է կազմում: Աթարը պատրաստ է նա հանգիստ սրտով կարող է սպասել ձմեռվա գալուստին: Երկար ամիսներ նա կարող է իր քարե տների մեջ կուշ գալ, իր պատրաստած վառելիքի կծու ծուխն ու գլուխ պտտեցնող հոտը վաշելել: Չարքա՜ ժողովուրդ...

Բաշ-Շորագյալի այս մոխրագույն իրականությունը խել էր իմ ամբողջ ուշադրությունը: Մենք, քաղաքացիներս, սիրում ենք այսպիսի տեսարանների առաջ փիլիսոփայական խոհերի մեջ ընկնել, մտածել մարդկային կյանքի հոգեբանության վրա: Ե՞րբ պիտի լինի, որ այս խորին, անմխիթար նահապետականությունը ազատե ժողովուրդը իր հայրական պինդ գրկից: Ե՞րբ այս ժողովուրդը կստանա իր թոքերի համար այնքան հարկավոր օդ և լույս: Մտածում ես, իսկ չի՝ չերոնե կառապանդ, այդ ծանր խոհերիդ անգիտակ, ուշադրությունդ դարձնում է գյուղից դեպի վեր, բարձր թռմբի գլուխը պսակող հին շինության վրա:

Նոր միայն հիշում ես, որ Բաշ-Շորագյալը այն կեսն է, որտեղից ճանապարհորդին սկսում է ուղեկցել Բագրատունի թագավորների մեծագործ ոգին:— Այդ անակնկալ հիշողությունը ցնցում է մարդուն: Համեմատելու, տարբերակություններ գտնելու կարողությունը մարդկային ամենաթանկագին սեփականություններից մեկն է: Բայց երբեմն ինչպե՞ս է նա տանջում...

Այժմյան սևուկ, աղբաթաթախ Բաշ-Շորագյալի մեջ ինչպե՞ս կարող են ենթադրել անգամ թե դա հին Շիրակավանն է, որ ավելի հին ժամանակներում Երազգավորս էր կոչվում: Միայն կառապանիդ ցույց տված հին ավերակն է, որ պահպանել է այս պատմական իրողությունը: Ավերակը, որ բարձրից, երկնքից կապուտակության միջից, իր հնամաշ կողերն է ցույց տալիս, Սմբատ Առաջինի շինել տված եկեղեցին է:

Շիրակավանը մայրաքաղաք էր այն ժամանակ, երբ Անին դեռ մի անհայտ բերդ էր: Այստեղ էր ապրում Սմբատը,

րանի թագաժառանգ էր: Այստեղ էին վճռվում Աշոտ Առաջինի հիմնած բավական լայնածավալ պետության գործերը: Այստեղ էին ղորաժողովներ լինում, այստեղ էին արշավանքերի ծրագիրներ կազմվում: Իսկ արշավանքները անթիվ էին: Սմբատը իր ամբողջ կյանքը պատերազմների մեջ անցկացրեց:

Բացի մի հատ կիսակործան եկեղեցուց ուրիշ մի հիշատակ չէ մնացել այս հզոր, բայց և դժբախտ թագավորից, մինչդեռ նրա տխուր կյանքը և մանավանդ սարսափելի վախճանը պատմական ամենամոռյալ դրամաներից մեկն է կազմում և անօրինակ, զարհուրելի է մանավանդ իբրև մի թագակիր գլխի ճակատագիր:

Հիշո՞ւմ եք: Իր հայր Աշոտից ստացած լինելով մի նորակազմ, խելքով և ուժով նվաճած պետություն, նա հանդիսացավ պարտաճանաչ ժառանգ: Ոչ միայն շվատնեց հայրենի ժառանգությունը, այլ ընդարձակեց, ամրացրեց նրան: Թագավորեց 24 տարի: Շարունակ կռիվեց, շարունակ հաղթեց, բարձրացրեց մանուկ պետության պատիվն ու վարկը, նույնիսկ թագ տվեց վրաց Ատրներսեհին: Նրա հայր Աշոտը արաբներից թագ ստացավ այն պայմանով, որ հարկ տա Բաղդատի խալիֆին և ճանաչե Ատրպատականի նրա փոխանորդի գերիշխանությունը: Սմբատը մեջտեղից հեռացրեց այդ փոխանորդին և անմիջապես արաբական արքունիքի հետ գործ ունեց: Բաղրատունի գահը մասնավոր, տեղական նշանակություն ուներ. Սմբատը սկսեց ընդարձակել նրա իրավասությունը, ձգտում էր համազգային գահ դարձնել նրան:

Հիշո՞ւմ եք և այն, ինչ դարձավ այդ մեծ ջանքերի, այդ քաջության և իմաստության հետևանքը: Քանի՞ կողմերից թշնամություն բարձրացավ անվեհեր, հաղթող թագավորի դեմ: Սմբատը երկաթի կամք ուներ, չընկճվեց, կռվում էր, միշտ կռվում: Եվ Ատրպատականի արաբ կուսակալները ձեռնունայն ետ էին տանում իրանց զորքերը, երբ ընտանի դավաճանությունը սև օձի պես մտավ հաջողակ թագավորի ծոցը: Հարազատ քրոջ որդին միացավ թշնամու հետ, թագավորական թագ ստանալու փառամոլ տենչանքով կուրացած

գնաց Սմբատի դեմ¹։ Վասպուրականի հայ զորքերը արա-
բական դրոշակների տակ կռվում էին շիրակեցիների դեմ։
Մանոթ տեսարան, հայրենի արատների և կեղտերի այդ
հաղթանակը այս քանի՝ երորդ անգամ էր գալիս սեփական
ձեռքով սեփական դժբախտություն դարձնելու։ Արյուն
շատ ու շատ թափվեց, երկիրը քանի-քանի անգամ կործան-
վեց։ Մենակ մնացած Սմբատը շատ դեռ ու դեռ ընկավ, հերո-
սական շատ ջանքեր գործադրեց, բայց վերջը հարկադրված
եղավ իր սուրը հանձնել Յուսուֆ ոստիկանին։

Այնուհետև ի՞նչ դրություն մի գերի թագավորի համար։
Քաջ հակառակորդին հարգելը ասպետական մի զգացմունք է
զորքերի և զորավարների մեջ։ Բայց Յուսուֆը մի արնախում
բարբարոսից ոչ ավել էր, ոչ պակաս և բավական ժամանակ
զվարճանում էր իր անզեն զոհի տանջանքներով։ Դժբախտ
թագավորին տկլորացնում էին, ծաղրում հրապարակի մեջ.
նրա կոկորդի մեջ թաշկինակ էին կոխում, նրա միսը պա-
տառ-պատառ էին անում։ Բարբարոսությունը ոչինչ սրբու-
թյուն, ոչինչ շնորհք ու տաղանդ չխնայեց այդ անպաշտպան
մարմինը զանգաղ կերպով ծվատելու համար։ Ինչպես պա-
տերազմի մեջ անվահներ էր Սմբատը, այնպես էլ այդ զար-
հուրելի տանջանքների մեջ ցույց տվեց նահատակվող բրիս-
տոնյայի անվախությունը։ Վերջը սուրն էր. նա իջավ դժ-
բախտի վզին, բայց բարբարոսությունը դրանից հետո էլ
չկշտացավ։ Դիակը կախ տվին Դվինի հրապարակում, ամեն
կերպ անպատվեցին, հայհոյեցին պատառոտած մսերի
զանգվածը։

Եվ այսպես մեռնողը մի թագավոր էր...

Բաշ-Շորագյալի աղբոտ փողոցներով անցնողը տեսնում
է հին, ավերակ եկեղեցին. այնտեղ նահատակ թագավորի
անունը հիշատակող գիր էլ չկա։ Այսպես է եղել յուրաքան-
չյուր լավ հայի ճակատագիրը։ Ո՛չ գերեզման, ո՛չ անուն։
Միայն պատմությունն է իր փոշոտած, մոռացության մատ-
նըված էջերի միջից մրմնջում այդ եկեղեցին տեսնողին, թե

ինչպես մի ժամանակ մարդիկ գիտեին մեռնել իրանց հայ-
րենի հողի համար...

Տխուր է Բաշ-Շորագյալի քարե տեսքը, ինչպես տխուր
է առհասարակ մարդկային բնակությունների ընդհանուր տե-
սարանը Շիրակում։ Ուր տուն եք տեսնում, կարծում եք, թե
նա լաց է լինում կանաչ բնության ծոցում, կարծեք ճնշված
է մի ինչ-որ ճակատագրական ծանրության տակ։ Եթե առա-
ջին Սմբատով վերջացած լինեիր Բագրատունիների գահը,
եթե արյունի և կրակի դարեր անցած չլինեին այս երկրի
վրայով, մարդ կխորհեր թե դժբախտ թագավորի արյունոտ
ուրվականն է անեծքի տակ պահում այս մերկությունը, ա-
թարի, ցնցոտիների, անճար նահատակության այս աշ-
խարհը...

Կառքերը նորից շարան ընկան, փոշի են բարձրացնում։
Մարդու գործերն ու հիշատակները կծկվեցին, անհայտացան
կանաչ տարածությունների մի անկյունում։ Սմբատի եկեղե-
ցին էլ չէ երևում։ Նորից ամենահաղթ բնությունը, հավիտյան
լուռ ու անտարբեր, հավիտյան տիրող, անփոփոխ միակ իրա-
կանություն։ Դարձյալ դաշտեր ու բլուրներ, դարձյալ ոլորուն,
տանջալից ճանապարհ, որ անցնում է լանջերով ու փոքրիկ
հովիտներով։ Միանմանությամբ ձանձրացնող տեսարաններ,
թեև զարմանալի կանաչ է տիրում ամեն կողմ, թեև դեղին ու
կապույտ ծաղիկները արեգակի տակ այնքա՛ն սիրուն գոր-
գեր են փռում ճանապարհի երկու կողմերին։

Կառապանը միշտ առաջ է նայում, մոռացել է իր ճա-
նապարհորդներին։ Իսկ ճանապարհորդը գիտե, որ շորս կող-
մում նշանավոր, ուշադրության արժանի բան չկա։ Վերջա-
պես ահա նա բարձրացրեց մտրակը և դեպի հետ նայեց։
Շտապում ես իմանալ, թե ինչ կա։ Եվ իմանում ես, որ շու-
տով կհասնենք գետին։ Դեռ հեռու ենք, բայց նրա դեմքի վրա
նկատվում է հոգնածություն։ Եվ ես հիշում եմ, որ կառա-
պանները դեռ Ալեքսանդրապոլում վիճում էին, որ գետը
անցնել չէ կարելի։ Շատ անձրևներ են եկել և այս կողմե-
րում. թեև հողը միանգամայն չորացել է, բայց լեռնային
գետերը անձրևներից հետո երկար ժամանակ շարունակում
են գիծ ու քմբոստ մնալ։

¹ Հեղինակը ակնարկում է Վասպուրականի իշխան, իսկ ապա թագա-
վոր Գագիկ Արծրունուն։ Մանք. խմբագրի։


Երևացին բարձր ափերը, բայց դետը դեռ չէր երևում։ Աղյուղում հայարնակ գլուղի մոտն ենք. հանդիպում են գլուղացիներ, կառապանը հարցնում է՝ շա՛տ է ջուրը և ստանում է գլխի շարժումներով դրական պատասխան։

Կարս-չայ գետն է։ Փոված է նա մեր առջև քարքարոտ, լայն հունի մեջ։ Հորդ ու մեծ ջուր է, բայց չնայած որ անձրևներ շատ են եղել, պահպանում է լեռնային գետի բնորոշ տեսքը. պղտոր չէ, և նրա մեջ ցլանում է կապուտակ երկինքը։

Կարս-չայը այստեղից ցած գնալով գետի հարավ-արևմուտք, խառնվում է Ալեքսանդրապոլի գետի, Արփաչայի հետ և կորցնում է իր սեփական անունը։ Ղ. Ալիշանն ասում է, որ հին Ախուրյան անունը Կարս-չային էր պատկանում։ Միանգամայն ճիշտ է։ Մեր պատմագրությունների մեջ Ախուրյանն է նույն այս գետը։ Բայց այս անունը մեր պատմությունից էլ հին է։ Դա զուտ հայկական անուն չէ, և մենք նրան ստացել ենք ուրարտացիներից կամ նախահայերից։ Սարիղամիշի մոտ դտնված սեպածև արձանագրության մեջ հիշված է Ախուրյանի քաղաքը։

Գրավելով ուրարտացիների երկիրը, ձուլելով այդ խորհրդավոր, բայց մեծագործ ազգի մնացորդները մեր մեջ, մենք ազգայնացրինք նրանց պատմական ավանդություններից շատերը, բայց մանավանդ աշխարհագրական անունները։ Վերջիններիցս մեկն է հայի համար այնքան սիրելի այս Ախուրյանը։ Նրան սիրելի է դարձրել մանավանդ Անին։ Հագարավոր տարիներ այս գետն էր, որ իր անունը պահում էր և Ալեքսանդրապոլի գետի հետ խառնվելուց հետո, մինչև վերջը, մինչև Արաքսի մեջ թափվելը։ Նկան թուրք ցեղերը, Կարս-չայ անվանեցին Ախուրյանը, իսկ Ալեքսանդրապոլի գետը, ստանալով Արփաչայ անունը, ոչնչացրեց, գոնե բոլոր օտարների համար, Ախուրյանի անունը։

Մինչդեռ մեր կառապանները, գետի ափին կանգնած էին մնացել և չէին կարողանում վճռել, թե որ կողմից և ինչ ուղղությամբ կարելի է անվնաս անցնել մյուս ափը, մեր ժիր քաղաքագլուխը, որ ճանապարհորդում էր իր սեփական կառքի մեջ, առաջ անցավ, պատվիրելով մյուսներին հետևել



Հոռոմոսի (Ղոշավան) հաղթական կամարը Անիի մոտ (XIII դ.)

իրան: Նրա կառքը համարձակ ինքնավստահությամբ վազեց հորդ ջրերի մեջ և սկսեց դանդաղ կերպով կտրել նրանց, նվաճել ալիքները, սաստիկ երերալով քարքարոտ հունի մեջ: Մյուս կառքերն էլ հետևեցին նրա օրինակին: Աղյու-
ղումցի հայերը, մինչև գոտիները ջրի մեջ, առաջնորդում էին մեր կառքերը, հարմար ուղղություն էին ցույց տալիս ձիանե-
րին: Եվ ձիաները զգուշություն ու եռանդ չխնայեցին, գլուխ բերեցին իրանց գործը հաջողությամբ: Մեր ամբողջ խումբը մյուս ավին ուրախ ու զոհ էր: Ոչինչ վնաս չէր պատահել. միայն շատերի ոտներն էին թրջվել, ջուրը բարակ շերտով անցել էր կառքերի միջով:

Ախուրյանի աջ ավից Շիրակի դաշտը գնալով նկատելի կերպով բարձրանում է: Մենք գնում ենք դեպի մի շարք թումբեր, և հետզհետե մեր առջև բացվում է Ալաջայի երկար ու բարձր շղթան, որ դաշտի հարավային սահմանն է կազմում և ձգվում է Ախուրյանի ավիներից մինչև Կարսի շրջակաները: Նրա առջև, դաշտի վրա, դանազան տեղերում և դանազան ուղղություններով բարձրանում են առանձին-
առանձին լեռնային խմբեր, որոնք ժողովրդական լեզվի մեջ «գազաթներ» են կոչվում:

Եվ իրավ, դրանք գազաթներ են՝ դաշտի հարթության վրա ցրված: Մենք դիմում ենք դեպի երեք, միմյանց կողքի կանգնած գազաթներ: Նրանց անունն է Ուլ-թափա: Բայց նախքան նրանց հասնելը մեր կառքերը կանգ են առնում Մավրակ գյուղի մոտ, ձիաներին հանգստություն տալու համար:

Բնությունից—իհարկե, Շիրակի բնությունից—այս փոք-
րիկ գյուղը (30 տնից ոչ ավել) ստացել է մի շատ սիրուն անկյուն: Նա տարածված է մի ժայռոտ թումբի լանջերի վրա և նրա առջև, դեպի արևելք, բացված է ահագին հորիզոն: Արագածի գազաթները ուղղակի գյուղին են նայում: Դեպի արևմուտք, հեռու-հեռու, Կարսի շրջակա սարերի կանաչ լանջերն են ողողված արեգակի լույսերով: Այդ ուղղությամբ էլ երևում է Կրզըլ-թափան, դաշտի մեջ կանգնած բարձրու-
թյունը, որ ահավոր անուն է ստացել վերջին ռուս-թուրքա-
կան պատերազմի ժամանակից: Մավրակի աջ կողքով,

դարմանալի կանաչ ավերի մեջ, հեղիկ անցնում է Մավրակ-
լայ գետակը, Ալաջայի դալար շղթայի ջինջ տուրքը:

Պատմությունից էլ Մավրակը ստացել է մի սիրուն դիրք: Մեր հնությունները այնքան լավ ճանաչող Ղ. Ալիշանն ասում է, որ այստեղ է եղել հին Մավրիկապոլիս քաղաքը, որ VI դարում շինվել է ի պատիվ բյուզանդական Մորիկ հայ-
ազգի կայսրի: Մինչև Շիրակավանի բարձրանալը և արքու-
նիք դառնալը, սա էր Շիրակի գլխավոր քաղաքը, կենտրոնը: Սա, այս խեղճ ու կրակ գյուղի կտորը...

Ե՛րբ է հռչակավոր քաղաքը այս դրության վերածվել, ի՞նչ իմանաս: Մի հատ փոքրիկ եկեղեցի է միայն մնացել, որ ոչինչ չէ ասում: Անխոս են շրջակաները: Քարե ցածրիկ արկղներում ապրող գյուղացիներն էլ ոչինչ չեն ասում: Ամենամեծ պատմական հիշողությունը, որ մնացել է ներկա սերունդի մեջ, 1877-ի պատերազմն է: Մի գյուղացի ցույց էր տալիս ինձ, թե իրանց որ հանդերում են տեղի ունեցել կռիվներ և պատմում էր, թե Մավրակը քանի անգամ ավարառության ենթարկվեց:

Այժմ չկան այն սարսափները: Այժմ ամեն օր միանման խաղաղության և լուսության մեջ են այս դաշտերն ու գազաթ-
ները դուրս գալիս ցերեկվա լույսի մեջ: Ամաշություն, դերեզ-
մանական լուսություն: Լուռ ու անշարժ նայում են Ուլ-թափա-
յի գազաթները իրանց առջև ցցված բարձր ու խրոխտ Ալա-
ջային: Այն տարին, որ այնպես լավ ու պարզ հիշվում է դեռ այս խաղաղ գյուղացիների շրջանում, Ալաջայի բարձրու-
թյունները ծածկված էին Մուխթար-փաշայի ահագին բանա-
կի վրաններով: Ամիսներով նստեցին թուրքերը այնտեղ. ի՞նչ էին անում,— ալլահը դիտե: Իսկ այս կողմին, Մավրակից դեպի հյուսիս-արևմուտք, կանգնած էր ռուսաց փոքրաթիվ զորքը, որ սպասում էր օգնական զորքերին: Ուլ-թափան ռուս բանակի ձախ թևի հենարանն էր: Այսօր էլ, ասում են, այդ գազաթների վրա դեռ մնում են թնդանոթների տեղերը, հողե ամրությունների, փոսերի հետքերը:


Հասարակ մարդն էլ, որ չէ եղել պատերազմի մեջ, ծա-
նոթ չէ ռազմական գիտության, մնում է զարմացած թուր-
քերի անընդունակության վրա: Ամիսներով թառ լինել բարձ-

րությունների գլխին, ոչինչ չանել, մինչդեռ դաշտի մի փոքրիկ շերտ էր բաժանում Ալաջան այն ժամանակվա ոռոսաց սահմանից... Պետք էր ծուլության, դանդաղաշարժության հերոս լինել մի այդպիսի «քաջություն» ցույց տալու համար։ Եվ Մուխթարը ցույց տվեց մինչև վերջը։ Նա սպասեց, մինչև որ ուսաներ ուժեղացան, թվով գերակշռեցին թուրքերին ու մի քանի ուժեղ հարվածով ոչնչացրին նրա բանակը։

Այս դաշտերում կատարվեցին շատ արյունահեղություններ։ Մամլրակից դեպի արևմուտք Բայրախտար գյուղն է, իսկ նրանից դեմը Կըզըլ-թափան է։ Այս խրոխտ բարձրության տիրանալու համար օրերով որոտում էին թնդանոթները, երկու հակառակ բանակների մեջ հնձում էին մարդկային շարքեր։ Ռուսների ամենամեծ անաջողությունները Կըզըլ-թափայի առջև տեղի ունեցան։ Բայց Լորիս-Մելիքովը, որ գիտեր անվրդով մնալ ճգնաժամի օրերում, շաքաթներում, անհողող դորավարի տաղանդով ծրագրեց օրհասական հարվածը և այդ ծրագիրը հանձնեց կատարելու երկու հայ զենեռալների՝ Լազարեին և նրա օգնականին, որ դեռ երիտասարդ, բայց փայլուն ընդունակություններով օժտված, տաղանդավոր, մեծ գովասանքների արժանացած Շելկովնիկովն էր։

Ահեղ հարվածը այս կողմից ուղղվեց։ Սեպտեմբերի վերջին օրերում այստեղ մեծ շարժում կար։ Լազարեը Բայրախտարի բանակի հրամանատարն էր։ Այդ բանակի գլուխն անցած՝ նա մի մեծ շրջանագիծ տվեց, անցավ ոռոսաց սահմանը, Ախուրյանի ափով գնաց դեպի հարավ, նորից անցավ թուրքաց հողը և առաջ շարժվելով, անցավ Ալաջայի ետևը, կանգնեց այն ճանապարհների վրա, որոնցով կարող էր թուրք զորքը նահանջել դեպի Կարս և էրզրում։ Մուխթարի բանակի բախտը վճռված էր։ Նա ինքը հազիվ կարողացավ փախչել, իսկ նրա զորքի մեծ մասը գերի ընկավ։

Այժմ, ամառնային իրիկնապահի մեղմ, ախորժելի լուսսերի տակ, լուռ ու խաղաղ է այս կանաչ աշխարհը, կարծես երբեք ոչինչ չէ պատահել, կարծես միշտ այսպես անվրդով է եղել աշխարհը, և սարերը միշտ այսպես լուռ, քարացած իրար են նայում։ Միայն գյուղացու կցկտուր պատմություն-



Հոռմուս։ Ս. Գևորգ և ս. Միքայել եկեղեցիներ (XIII դ.)

ներն են հիշեցնում 25—26 տարի առաջ տեղի ունեցած ահա-
վոր դեպքերը, արյունահեղությունները: Քանի-քանի անգամ
այս հին, հացաշատ, հուշակված դաշտային աշխարհում կըր-
կրնվել է այս երևույթը: Ո՞վ կարող է հաշվել: Ոչ ոք, ոչ նույ-
նիսկ պատմությունը: Նա նույնիսկ չի ասի ձեզ, թե ի՞նչ ազ-
գեր են այստեղ իրար հանդիպել զինված, իրար կոտորելու
անհագ տենչով վառված: Քանիսնե՞րը կանչել են «վա՛յ
հաղթվածին» և քանի անգամ: Թի՛վ ու համար չեն պահում
այս արյունոտ բարձրությունները, իսկ սերունդները, ինչպես
այժմյանը, միայն իրանց տեսածը, իրանց ժամանակ եղածն
են հիշողության մեջ պահել ու հետները գերեզման տարել:

Երևի այդ տեսակ մի անհիշատակ աղետի միջոցին էլ հողի
երեսից ջնջվել է մեր այս Մավրիկապոլիսը: Նրան չեն հիշում
մեր պատմագիրները Բագրատունյաց թագավորության ծաղ-
կած ժամանակ: Բայց մենք պետք է հիշենք, որ սա առաջին
իջևանն էր ճոխ ու փարթամ Անիից, և այսպիսի մի գեղեցիկ
տեղը չէր կարող անշուք ու ավերակ մնալ հարուստ մայրա-
քաղաքի մոտ: Ո՞վ գիտե ի՞նչ կյանք էր տիրում այն ժամա-
նակ այս սիրուն գետակի ափերում, ուր այնքան սքանչելի
թարմ են կանաչները, և ծաղիկները շա՛տ:

Անին, անկասկած, երջանկացնում էր իր շրջականները:
Իսկ ա՛յժմ: Այժմ նա ինքը կարոտ է ու դժբախտ, բայց և այդ-
պես, էլի լավություն է անում շրջակայքի ժողովրդին: Ոչ
միայն Մավրակը, այլև Շիրակի շատ գյուղեր պիտի շնորհա-
կալ լինեն Անիից: Եթե գոյություն չունենար ավերակների
քաղաքը, կորած ու անծանոթ խորշեր կմնային այդ գյուղե-
րը: Բայց այժմ նրանց այցելում են Անիի այցելուները:

Շիրակը պիտի աչքի բերի պես պահե իր Անին: Գեղեցիկ
է նրա Արագածը, բայց նրան տեսնելու համար չէ մեր մեծ
խումբը ճանապարհորդում: Մեզ և մեզ պես հազարներին
քաշող-տանողը Անին է: Հինը, մեռածը հովանավորում է
այժմյաններին, կենդանիներին: Պետք է հակառակը լինեք,
պետք է որ ժամանակակիցը քաշեր, գրավեր և, ի միջի այլոց,
իբրև իր զարդերից մեկը, ցույց տար և հինը, քանդվածը:
Բայց ո՞ւր, ի՞նչ տեսակ տեղերում կարող է լինել մի այսպի-
սի արդար իրողություն:

Ո՛չ մեր երկրում: Ի՞նչը պիտի գրավեր մեզ պես պարզ
ուղեորներին: Արդյոք քաղաքակրթական առաջադիմությո՞ւ-
նը, արդյունաբերական մեծագործություննե՞րը, թե խնամքով
մշակված, աշխատավոր կյանքի վեհ հաղթանակներով զար-
դարված հողը: Այդպիսի բաներ չկան մեզանում: Տխուր, տգետ,
մուրացկան է մեր իրականությունը, ցավագար, հեծեծող:
Մնում է որ հուշակված ավերակները գրավեն, անցյալի մա-
սին խոսեն: Եվ կգրավեն նրանք, մինչև որ չի փոխվի մեր
կյանքի այն հոգեբանությունը, որ այնքան գեղեցիկ կերպով
պատկերել է ռուս բանաստեղծի այս երկտողը.

Нужны нам великие могилы,
Если нет величия в живых ¹.

Ժիշտ ու ճիշտ այսպես: Ուրիշ ի՞նչ միտք ունեն այս մի
շարք կառքերը, որոնք անցան Մավրակ գետակի հեղիկ ջրե-
րով և այսպես արագ դիմում են դեպի Ուլ-թափա...

Սառոտի մոտից այս երեք գագաթները վիթխարի բլուր-
ների տեսք ունեն: Նրանք շարքով նստած են հարթ դաշտի
վրա և այնքան անսովոր են իբրև բարձրություն, որ կարծում
եք թե արհեստական են, թե մեծ ու համարձակ խաղեր սի-
րող բնությունը չէ ստեղծել նրանց: Կարծում եք թե ինչ-որ
տիտաններ են թիեթրով կուտել այդ բարձր հողակույտերը:

Բնության ուժին արժանի կերտված—ա՛յ այն մեկը, որ
շարունակ նայում է արևելքից—Արագա՛ծը: Բայց նրան
շատ ու շատ տեսանք այս ամբողջ օրը: Բավական է, կարծես
այսպես է ասում Ուլ-թափայի բարձրավանդակը: Անցանք
նրանց միջով, Արագածը ծածկվեց, այժմ ցած ենք գնում:

Սակայն Արագածի փոխարեն՝ հեռու հարավ-արևելքում
մի այլ պատկեր: Երկնքի ծայրում, հորիզոնի վրա, հավաք-
վել են մութ-մութրագույն ամպեր և նրանց մեջ երևում է մի
սպիտակ գագաթ:—Ո՛ւհ, ո՞րտեղին է հասել նա— բացական-
չում ես զարմանքով և ահով լցված: Ապշած ու հիացած էի
մանավանդ ես: Առաջին անգամն էի տեսնում ամպերի մեջ
տնկված այդ գագաթը: Ի՞նչ է նույնիսկ Արագածը նրա մոտ:

¹ Հարկավոր են մեզ մեծ գերեզմաններ, եթե չկա մեծություն
ապրողների մեջ:

Բոլոր լեռները, բոլոր դաշտերը, երկրի ամբողջ երեսը խո-
նարհ, հլու, տափակ էր նրա առաջ։

Մասիսն էր...

Դ

Ուշ-թափան հարավային կողմից երկար, զառիվայր
լանջերով իջնում է Ալաջայի ստորոտներում տարածված
դաշտի վրա։ Շատ թեք չեն այդ զառիվայրերը. կառքերը ա-
րագությամբ են սլանում դեպի ցած, ձիաները վազում են մեծ
թեթևությամբ։ Բայց ուղևորը ուրախ չէ այդ արագության
վրա։ Ճանապարհը ավելի տանջալից է, ավելի քարքարոտ է
դառնում։ Ի՞նչ ճանապարհ։ Դա ավելի նման է մի լեռնային
նեղ, փորփորած հեղեղատի, որի մեջ ընկած կառքը տան-
ջանքներ է պատճառում իր մեջ նստածներին, անդադար
զարնվելով անթիվ մեծ ու փոքր քարերին, հեղեղատ-ճանա-
պարհի կողքերին։

Դեռ Ուշ-թափայի բարձրությունը չէր վերջացել, երբ մեր
կառավարն բարձրացրեց մտրակը և ետ դառնալով դեպի
մեզ, մի սրբազան ոգևորությամբ արտասանեց.

— Անին...

— Ո՞րն է, ո՞րն է,— բացականչեցինք մենք, կանգնելով
անողորմ կերպով օրորվող կառքի մեջ։

Ու լարված ուշադրությամբ նայում ենք։

Արևը արդեն մայր էր մտնում, իսկ այնտեղ, հեռու-հե-
ռու հարավում, ալիքավոր դաշտավայրի վրա, արդեն երե-
կոյան ստվերներն են խտանում։ Պարզ չէ այդ լայնարձակ
տարածությունը, լավ լուսավորված չէ։ Ինչ-որ երկար սև
գծով եզերված մի թումբ է երևում, ինչ-որ մի տարածություն,
որ իր տեսքով նման չէ շրջապատող դաշտային բնության։
Դա՛ է արդյոք...

Իջանք Ուշ-թափայի լանջերից, ճանապարհը գնալով ան-
տանելի է դառնում, սև շրջագիծը մերթ երևում է երեկոյան
աղոտ լուսավորության մեջ, մերթ ծածկվում։ Իսկ մենք շա-

րունակ նայում ենք նրան, այս լայն ու մեծ աշխարհի մեջ
չկա ուրիշ մի բան, որ նրա պես գրգռե մեր հետաքրքրու-
թյունը, հափշտակե մեր ուշքն ու միտքը։ Զգացմունքը, ան-
հանգիստ, բարախուն զգացմունքը համակում է մարդուն ամ-
բողջապես, միտքը գործում է տենդային արագությամբ։
Շտապում ես մի րոպե առաջ իմանալ ամեն ինչ, մտքիդ
առաջ ես քաշում կարգացած նկարագրություններդ, տեսած
պատկերներդ, ուզում ես ամփոփել իրականության մեջ այն,
ինչ երևակայություն է եղել մինչև այդ րոպեն, ուզում ես մի
ժամ առաջ ամբողջացնել երեկոյան մռայլի մեջ կցկտուր, ցի-
րուցան, անլույս ու անորոշ երևացող կտորները և իմանալ,
թե ինչ է նշանակում Անին։ Ի՞նչ է տարիներով երևակայածդ,
տարիներով մտապատկերի որոշ ձև ստացածը այս իրակա-
նության մեջ, այս շոշափելի հողի վրա, այս զով, մրսեցնե-
լու չափ զով օդի մեջ։

Տարածությունը, որ բաժանում է մեզ սև ուրվականնե-
րից, գնալով կարճանում է։ Շուտով ահա... Բայց մեր կառ-
քերը շուտ են գալիս դեպի հարավ-արևելք։ Ճանապարհը ան-
փոփոխ-վատ է, Շիրակի դաշտավայրը արագ պաղանում է,
ցերեկվա լույսը գնալով ավելի ու ավելի տկարանում է։

Անիի ուրվագծերը կորան, անհայտացան։ Շուրջը ամա-
յի տարածություն է, ոչ ձայն, ոչ մարդ, ոչ բնակության
որևէ նշույլ։ Շունը ծանրանում է։ Կորել են նույնիսկ Շիրակի
կանաչները։ Ինչ-որ դեղնավուն լերկ տարածություններ են,
համարյա առանց բուսականության։ Եվ ճանապարհը եր-
կա՛ր, անողորմ, հուսահատեցնող։ Համբերություն ալլեա
չկա։ Ես միայն իմ մասին չեմ խոսում, իմ ընկերներն էլ
միևնույն ճնշված դրության մեջ են։

Կարող եք երևակայել թե մանավանդ այս անգամ, այս
դրության մեջ, ինչ պիտի լիներ մեզ համար մեր կառավարի
հետ նայելը և մտրակը դեպի առաջ մեկնելը։ Վերջապե՛ս...

— Ղոշավանք,— արտասանեց նա։

Մենք շուտով հասանք։ Ամայի դաշտի մեջ կանգնած էին
քարե կարմրագույն երկու աշտարակներ։ Նրանք միմյանց
կողքի են և կիսով չափ ավերված։ Մեկի վրա երևում է փոք-
րիկ գմբեթ։ Կամարը, որ միացնում էր այդ երկու աշտա-

բակաները, գոյացնելով դոնների նման մի բան, այժմ փլված է։ Արձանագրութիւն չէ մնացել կարմիր քարերի վրա, և ջուխտ աշտարակները կանգնած են այդտեղ իբրև պատմական հանելուկ, որի բանալին, ինչպես երևում է, կորած պետք է համարել ընդմիշտ։

Ժողովուրդն ասում է, որ այս է Ղոշավանքը։ «Ղոշա» նշանակում է ջուխտ, միմյանց կպած։ Բայց սա վանք չէ, այլ միայն գմբեթավոր աշտարակներ։ Իսկական Ղոշավանքը տեսնելու համար պետք է այս աշտարակների մոտից մի քանի քայլ առաջ գնալ։

Մեր առջև բացվեց մի հսկայական ձոր։ Շիրակի դաշտին հատուկ են այսպիսի անակնկալներ։ Միանման հարթավայր— և հանկարծ ոտներիդ տակ փռված ձոր։ Ախուրյանի ձորն էր այս մեկը, բայց ինքը Ախուրյանը չէր երևում մեր կանգնած տեղից։ Այս կողմից, մեր ջուխտ աշտարակների մոտից, ձորի արևելյան եզրը մի ահագին կիսաշրջան է տալիս դեպի հարավ։ Այնտեղ, ուր այդ կիսաշրջանի վերջին ծայրը գնում մոտենում է գետի արևմտյան բարձր ափին, երևում են լանջի վրա փռված գյուղական տներ, որոնց միջից բարձրանում է մի հսկա գմբեթ։ Ահա այն է Ղոշավանքը, կամ, ավելի ճիշտ ասած, Հոռոմոսի վանքը։

Կարելի է այստեղ, այս աշտարակների մոտ, ժամերով կանգնել, անհագ նայել ոտներիդ տակ փռված գեղեցիկ տեսարանին և չկշտանալ։ Կիսաբոլոր ձորը իր լայն ու արձակ հատակով, իր դիք լանջերով բնության ճարտարապետի մի հանդուգն, լայն թռիչքն է ներկայացնում։ Գեղեցիկ էր նա մանավանդ օրվա այս ժամին, երբ սուվերները գնալով խտանում, թանձրանում են, բայց դեռ այնքան հզոր չեն, որ ծածկեն այսպիսի հրաշալի տեսարանները թուխ վարագույրի տակ։ Արեգակ չկա, բայց ամառնային օրը իր վերջին թուպները գեղեցկացնելու համար դեռ շատ լույսեր ու դարձեր է ստանում իր պարզ կապուտակ երկնքից։ Այդ աղոտ, քնքույշ լույսերը ի՞նչ սքանչելի խաղեր էին սկսել այս մեծ ձորում, մրցելով ամեն կողմից արշավող գիշերային մթնոթյան հետ...

Կառքերը մեզ տանում են ձորի կիսաբոլոր ափով և

կանգ են առնում խղճուկ, փոքրիկ գյուղի ծայրում։ Հոռոմոսի խոշոր գմբեթը նայում է մեզ երկար պարսպի գլխից։ Հաստ, թանձր ու բարձր պարիսպ է և հի՛ն։ Սա մի ամբողջ բերդ է։ Եվ ուրիշ կերպ չէր կարող լինել մի շատ հարուստ, շատ հռչակված վանք այն հին ժամանակներում, երբ այս կողմերում մարդկային ամեն մի ձեռակերտ պետք էր պաշտպանել զենքով ու զինվորական պատրաստութիւններով։

Ձենքից ու զինվորներից ավելի ապահով պաշտպանը բնությունն է. և մեր նախնիքները, ինչպես հայտնի է, հիանալի կերպով կարողանում էին օգտվել իրանց երկրի բնական ամրութիւններից։ Հոռոմոսը Շիրակի սովորական բերդերից մեկն է։ Այդ ընդարձակ դաշտավայրը, լեռնային բարձր ու բարդ շղթաների բացակայութեան պատճառով, միանգամայն զրկված կլինէր ինքնապաշտպանութեան միջոցներից, եթե Ախուրյանը և նրա բազմաթիվ վտակները իրանց համար չփորեին խոր ձորեր, որոնք բնական պատնէշների դեր էին կատարում։ Լեռնային այնպիսի բերդեր, որոնք սովորական են Ղարաբաղում, դուք չեք տեսնի Շիրակի դաշտի վրա։ Այստեղ ձորի բերդ միայն կարող է լինել, ինչպես Զանգեզուրի սարահարթերում։ Եվ ձորի բերդը ունի մի ընդհանուր, բոլոր տեղերի համար միանման տեսք։ Դա սովորաբար թերակղզու նմանութիւնն ունեցող մի շերտ է գետի մի որևէ պտույտի վրա։ Երեք կողմից նա պաշտպանված է ձորով և միջին դարերի համար կարող էր բոլորովին անառիկ համարվել։ Մնում էր այն պարանոցը, որով թերակղզին միանում է դաշտավայրի հետ։ Այդտեղ ահա իր խոսքը պիտի ասեր զինվորական ճարտարապետութիւնը, կառուցանելով բարձր ու պինդ պարիսպներ։ Բայց պարիսպները, որքան ուժեղ ու ահարկու լինեին, անմատչելի չէին հարձակվողների համար։ Եվ նրանք միշտ Շիրակի բերդերի թույլ կողմն էին երկար ու համառ պաշտպանվել չէին կարող։

Մեր վանքն էլ այդպիսի մի թերակղզի է գրավում։ Նա նստած է Ախուրյանի հսկայական պտույտներից մեկի վրա։ Գետը գալիս է հյուսիսից, խիստ ծովում է դեպի հարավ-արևելք, նորից ծովում է դեպի հակառակ կողմը, դեպի հարավ-արևմուտք, բայց մեկ էլ մի մեծ շրջան է տալիս և իր

չբերը քշում է նորից դեպի հետ, դեպի հյուսիս։ Ահա այդտեղ է Հոռոմոսի թերակղզին։ Հարավից և արևմուտքից նրան ծնծում են անդունդի մեջ եռացող արագավազ, հորդ ալիքները, և այդ կողմից նա միանգամայն ապահով է. մարդ ասված ավերիչը խոր, ժայռոտ անդունդների մեջ ոչինչ չէր կարող անել։ Վանքը ձորի շրթներին չէ հասցնում իր շինությունները, այդ պատճառով էլ բարձր պատեր ունի բոլոր կողմերից, որոնցից մանավանդ հյուսիսայինը պաշտպանողական կարևոր նշանակություն ուներ։

Հյուսիսային պարսպի մեջ էլ բացված է Հոռոմոսի զբլիսավոր մուտքը։ Ահագին դռների մոտ հավաքված էին մի քանի գյուղացիներ, սովորականի պես զզգզված ու խեղճ մարդիկ։ Նրանցից համարյա ոչնչով չէր զանազանվում վանահայր վարդապետը, որ առաջ եկավ, ողջունեց մեզ և տարավ դեպի ներս։

Հոռոմոսի պարիսպների մեջ ամփոփված է ճարտարապետական սքանչելիքների մի մեծ թանգարան։ Այդտեղ միայն մի վանք չէ, այլ մի ամբողջ վանական աշխարհ, զանազան շինություններով, մատուռներով։ Գեղեցկություն— ահա այդ աշխարհի անունը մի բառով։ Բայց գեղեցկություն, որ հասկացվում ու հարգվում էր այն հին ժամանակներում։ Գեղեցկություն, որ մեր օրերում ոչ միայն մատնված է ծայրահեղ անուշադրության, այլև ամեն օր հայհոյվում է, անվանարկվում։ Այս խեղճ ու գոհիկ գյուղացիները իրանց գոհիկ վանահոր հետ հայհոյում են իրանց բաժին ընկած կլասիկական գեղեցկությունը այն կեղտերով ու ապականություններով, որոնք աչքի են ընկնում ամեն մի անկյունում։

Հոգատարության, խնամքի ո՛չ մի հետք։ Մի ձեռք չկա, որ վերցնե թափված քարերը, դարսե մի կողմում. մի հատ ցախավել չկա, որ սրբե աղբն ու ցեխերը։ Եվ նկատեցեք, Հոռոմոսը ավերակ չէ։ Գիտե՞ք ինչ է նշանակում ավերակը Շիրակում։ Դա նշանակում է ամենաանգութ կերպով կրծոտված պատերի բեկորներ, ջարդված կամարների, սյուների անհեթեթ կույտեր. ամեն ինչ այնքան հրեշավոր ալյանդակման է ենթարկված, որ շատ շինություններ հազիվ են կարո-

ղանում մի երկու բան ասել նայողին։ Հոռոմոսը այսպես չէ։ Նրան խնայել է սարսափելի ժամանակը։ Նա կանգուն է գեռ, նրա ծածկերի մեծ մասը դեռ չէ փլվել։ Ամբողջ մնացած շինություններ են, մասնավոր ավերմունքների ենթարկված։ Բայց տգիտությունն ու ծուլությունը ժամանակի ժանիքներից ազատված այդ փառավոր շինությունների մեջ հաստատ են պահում անմարդարնակ, սև ավերակի ամբողջ ամայությունը, ապականությունը։

Ո՞ւմ մեղադրել։ Մի՞թե միայն այստեղ ապրող մի բուրբ աղքատ գյուղացիներին, որոնք գեղեցկություն չեն որոնում, այլ մի կտոր հաց՝ գոյության կուլի մեջ չջարգվելու համար։ Սրա՞նց, այս խեղճերի՞ն մեղադրել։ Իսկ այն հազարավոր ճանապարհորդները, որոնք եկել, տեսել են, հիացել ու հեռացել։ Իսկ այն հոգևոր իշխանությունը, որի սեփականությունն է կազմում այս աննման հնությունը։ Վերջին ռուս-թուրքական պատերազմից հետո այստեղ էին ուզում հաստատել Կարսի հոգևոր կառավարությունը. մտածում են վերաշինության, դպրոց բաց անելու մասին։ Բայց մեր մտածմունքները, մեր դիտավորությունները...

Անի գնացողներին ես խորհուրդ կտամ նախ այցելել Հոռոմոսը։ Սա նախադուռն է։ Անին այստեղից է սկսվում։ Այստեղից եք դուք մտնում այն մեծագործ սերունդների աշխարհը, որ իր կարող մտքով և հաղթ բազուկներով այնքան հմայիչ է դարձրել Շիրակի այս փոքրիկ անկյունը։ Միանման կանաչ, հավիտյան լուռ, հավիտյան անհետաքրքրական ու ամայի դաշտերից ձանձրացած՝ դուք անակրնկալ կերպով կանգ եք առնում մի զարմանալի մեծագործ ուժի առջև։ Դա մարդկային հանճարի ուժն է, ոչ այն դժոխային հանճարի, որ դժբախտություն ու տանջանք է նյութում աշխարհին, այլ լուսատու, հրաշակերտող հանճարի, որով ապրել է աշխարհը և առանց որի կյանքը անեծք կլիներ...

Ի՞նչ թափ, ինչքա՞ն վեհություն այդ ուժի մեջ։ Նա ամբողջապես համակված է եղել գեղեցկության սուրբ իդեալով, նրան ոգևորել է գեղարվեստի երկնային խորհուրդը։ Քարեր են այդ ոգևորության վկաները, միայն քարեր։ Նրանք

կուտված են աշատեղից մինչև Ալաջայի ստորոտները, մի ամբողջ ծով են ներկայացնում: Հանճարը պոկել է այդ բոլոր կտորները ժայռերի կրծքից, հղկել է, զարդարել և իր մուրճով ու երկաթե գրչով հանգես է բերել իր հսկայական թոխքները, իր հսկայական սրտի ու զգացմունքների խորհուրդները:

Եվ այդ շինարար, գեղեցկացնող ուժը ավելի սիրելի ու պաշտելի է դառնում ձեզ համար այն պատճառով, որ դուք տեսնում եք նրան հաղթահարված, տապալված դժոխային հանճարի ուժից: Ամեն քայլում եք տեսնում, ամեն մի քարի կտորի վրա եք կարդում թշվառացնող, ավերող, վայրենի ուժը: Երկու մեծ սկզբունքներ. մեկը մարդկային երջանկության, մյուսը մարդկային անբախտության, մեկը երկնային ժպիտ, մյուսը սատանայական քրքիչ: Նրանք այստեղ են, ձեր աչքերի առջև, ձեր ոտների տակ: Նրանք գրկված են իրար հետ այն սոսկալի մարտի մեջ, որի վրայով հարյուրավոր տարիներ են անցել, բայց որ այժմ էլ կա, անշարժացած է և ներկայացնում է լույսի և խավարի, երկնային ժպիտների և սատանայական քրքիչների մրցությունը, մեկի և մյուսի հաղթանակը, մեկի և մյուսի անկումը...

Հոռոմոսը Անիի արվարձանն էր, նրա սիրած, փայփայած դաստակերտը: Այստեղ էր գալիս անեցին՝ իր սրտին ու զգացմունքին գոհացում տալու համար: Անեցի—դա ընդհանուր անուն է: Այստեղ եկող անեցին թագավոր էր, իշխան, վաճառական, կալվածատեր: Գալիս էին սրանք իրանց փարթամ գրպանով և մանավանդ փարթամ շնորհքով, որոնցից առատ բաժին էին հանում Ախուրյանի բարձր ափին ցցված այս վանքին: Պատմական անհայտ ու անանուն փոթորիկը սրբել տարել է այդ զարմանալի ժողովուրդը, որ այնքան սիրահար էր գեղեցկության, այնպես նվաճել էր գեղեցկությունը: Այժմ նրա տեղը նստած է մի բուռը պատառոտուն ու անճար ամբոխ: Անեցու սերունդը չէ նա, այլ դժբախտ զարերից մնացած մի տգիտություն, որ անեցու հանճարի պարծանքը դարձրել է գոմ ու ախոռ:

Բայց դուք մոռացե՛ք այդ: Հողին մի՛ նայեք, բարձրին նայեցեք, օդի մեջ մնացածներին. անեցին դեռ երևում է այնտեղ:


Ե

Մենք ուղղակի վանքը չենք դիմում: Անցնում ենք փոքրիկ բակերով, մեծ-մեծ պատերի միջով, մտնում ենք առաջ Հոռոմոսի հռչակավոր դահլիճները:

Երեք հատ սենյակներ են, զանազան մեծութունների, ամբողջովին սրբատաշ քարերից: Առաջին իսկ քայլից կանգես առնում: Բարձր, տկլոր պատեր. ի՛նչ ճաշակ, ի՛նչ վսեմություն նրանց կերտվածքի մեջ: Առաջին անգամ նայողին պինդ գրկում է Շիրակի այս անկյունում դարերով կուտված, թանձրացած զգացմունքը—զարմանքը:

Առաստաղները կամարների վրա են, զարդարված են հարուստ, ճոխ քանդակներով: Պակասում է միայն լույսը: Մեր նախնիքները չգիտեին տիրել այդ մեծ բարիքին, որ ձրի ու առատ թափված էր նրանց շինությունների դուրսը: Նրանց հիանալի կերպով աջողվում էր փառահեղությունը, բայց մի տեսակ ստվերոտ, մթագնած փառահեղությունը: Նվաղ լույս էին նրանք մտցնում իրանց գեղարվեստական սքանչելիքների ներսը, բայց որպիսի՞ ուշադրությամբ, որքան մանր ու նուրբ մտածողությամբ զարդարում էին այդ խավար ներսերը: Ստվերոտ անկյուններից, բարձր ու համարձակ առաստաղի խորությունից ձեզ նայում է վարպետի վրձինը: Այո՛, վրձին—այս անունն էս ուղում տալ այն քարե գրչին, որ քարերի վրա շարել է այն զարմանալի հյուսվածքները, բարդ ու վայելուչ, ճաշակավոր զարդանկարներով:

Առաջին սենյակի առաստաղը կիսով չափ փլված է, և այդ անճոռնի, վրդովեցուցիչ ձեղքով ներս թափվող առատ լույսը ավելի պարզ է ցույց տալիս ծայրերում, անկյուննե-



Հոռոմոսի (Պաշտպանի) դավթի ներքին տեսքը

բում փոխած քանդակագործական ճոխությունները: Մյուս երկու սենյակները ամբողջ են մնացել: Հոյակապ է մանավանդ մեկը՝ մի սյունադարձ դահլիճ, որի գեղեցիկ կամարների տակ ծանրացած խորին, անվրդով լուծված կարծել է տալիս, թե նոր միայն հեռացան այս փառավոր օթևանի բնակիչները: Այսքան սիրուն բարեհաճություն ճակատագիրը չէ ցույց տալիս ոչ մի տեղ Անիի մեջ և նրա շրջականերում:

Ժողովուրդը զրույցներ գիտե այս դահլիճների մասին: Նա ասում է թե այստեղ էր Անիի հայ թագավորների խորհրդարանը: Մի ավանդություն, որ գեղեցիկ կերպով հարմարվում է այսպիսի թագավորավայել շինության: Սենյակներից մեկում կարելի է նկատել տասներկու խորշանման բաժանմունքներ. այդտեղ, ասում են, նստում էին թագավորի տասներկու խորհրդականները: Այստեղ էին քննվում գատաստանական գործերը, այստեղ էլ վճռվում էին պետական կարևոր հարցերը: Առհասարակ, ժողովրդի երեակայության մեջ Անիի թագավորները անընդհատ, մշտական հարաբերություններ, գնալ-գալ ունեն Հոռոմոսի հետ:

Բայց գիրը սաստիկ հակառակվում է բերանացի զրույցին: Այս սենյակներից մեկի դռան ճակատին կա մի արձանագրություն, որ պատմում է, թե Սարգսի որդի Վաչեն և նրա ամուսին Մամա-խաթունը շինել են այս նշխարատունը Հոռոմոսի համար: Կարծում են, թե այս արձանագրությունը միանգամից ընդմիջտ որոշում է թե ինչի են ծառայել երեք հոյակապ դահլիճները: Նշխարատուն—դա այն տեղն է, ուր պահվում են եկեղեցական նպասները, զգեստները, սուրբերի մասունքները, մի խոսքով այն ամենը, ինչ եկեղեցու պահեստն է կազմում:

Ճիշտ է, այդ բոլոր քանդակված է քարի վրա, կրում է հին թվական, բայց նա, կամ ավելի ուղիղ ասած, նրա բացատրությունը բոլորովին չէ գոհացնում տեսնողին: Պահեստի համար այսպիսի ընդարձակ շքեղություն բարձրացնել, այս շոալությունը անհասկանալի է նույնիսկ Անիի փառթամությունների մեջ: Բայց ներսես Սարգիսյանն ու նրան հետևելով, Ղ. Ալիշանը ասում են մեզ, որ դրա մեջ զարմանալու շատ բան չկա: Հարուստ ու հռչակված էր Հո-

ռոմոսը, Թագավորների հովանավորության տակ էր գտնվում և Թագավորական քաղաքի մոտ. նրա հարստությունների պահպանության համար վայել էր ունենալ աչապիսի հոյակապ շինություն:

Սակայն այսպես պնդելով, Մխիթարյան հայրերը մոռացել են արձանագրության թվականը: Վաչեն և Մամախաթունը ասում են, թե իրանք շինել են այդ սենյակը 1229-ին, իսկ այս ժամանակ Անիի Թագավորությունը մոտ երկու դար էր, ինչ դարձել էր պատմական ավանդություն և հայ Թագավորների գերեզմանները մամուռով էին պատված: Այդ ժամանակամիջոցում Անին մի քանի անգամ ավերվել էր, ձեռքից ձեռք էր անցել: Չէ կարելի ասել, թե Հռոմոսը մայրաքաղաքի բախտակիցը չէր: Ալի-Ասլանի արշավանքի ժամանակ, 1064-ին, Անիի շրջականերում այնպիսի արյունահեղություն եղավ, որ, ինչպես ասված է մի պատմական հիշատակարանի մեջ, «արին զերեք տարեկան տղայն տարաւ ի Հռոմոսի գետն ձգեց»: Թագավորական ճոխություններից զրկված էր ոչ միայն Հռոմոսը, այլև Անին: Բագրատունիներից հետո Անին, ընկնելով զանազան իշխողների ձեռքը, կարող էր միայն հարստության ու եկամտի աղբյուր լինել իր տերերի համար. ժողովուրդը աղքատացավ ծանր հարկերի տակ: Այլևս մեծագործությունների ու շուներ նա և Սամվել Անեցին դառն գանգատներ է անում այդ դրության վրա: Անիի քահանաները, ասում են, պատարագում էին միայն փիլոնով, այնքան աղքատացել էին եկեղեցիները:

Ուրեմն, ժամանակն այնպես չէր, որ նշխարատան համար այնքան հոյակապ շինություն կառուցանեին: Բացի դրանից, եթե հավատանք արձանագրություններին, երեք դահլիճները միաժամանակ մի մարդու ձեռքով չեն շինված: Այսպես, երկրորդ սենյակը շինված էր արդեն 1277-ին, մինչդեռ Անիի մեջ անգամ այդ ժամանակների կառուցած գեղեցիկ շինություն չենք գտնում: Իսկ երրորդ փառահեղ սյունադարձ դահլիճի արձանագրությունը ավելի անհեթեթ է: Մի ինչ որ Վարդան տվել է վանքին երկու կով և երկու եղ ու փոխարենը ստացել է գերեզմանի տեղ: Երևակայում եք

ինչ աղքատություն էր տիրում վանքի մեջ, երբ այդ գնով կարելի էր առնել գերեզմանի տեղ երկու մարդու համար և, բացի դրանից՝ տարին չորս պատարագ ստանալ հոգու փրկության համար: Եվ այն խղճով պայմանագիրը դրոշմված է այն դահլիճում, որի մեջ չէր քաշվի ապրել ոչ մի միջնադարյան Թագավոր:

Ոչ, արձանագրությունները, իմ խորին համոզմունքով, չեն լուծում հանելուկը: Այս դահլիճները, այսպես է վկայում ամեն մի քար, ավելի հին, ավելի փառավոր ժամանակների գործ են, Անիի հայ Թագավորների ժամանակ միայն հնարավոր էր այսպիսի գեղեցիկ մեծագործություն: Գուցե նրանք ավերվել են, XIII դարում նորից վերանորոգվել և ստացել նշխարատուն անունը: Այդ ժամանակներում, ճիշտ որ, նրանք վանքի պետքերին ծառայելուց ավել մի ուրիշ դեր չէին էլ կարող կատարել:

Ուրեմն, ի՞նչ. — զրո՞ւյցը, թե գիրը: Այցելուն դուրս է գալիս այդ հոյակապ հարկերի տակից ամբողջովին համակված այն տպավորությամբ, որ զրույցն է հարմարվում: Ճիշտը, իհարկե, միայն այդ քարե կամարներն են իմանում:

Հռոմոսը աշխարհից բոլորովին կտրված վանք չէ եղել: Նա հիմնվել է տասներորդ դարի կեսում և հիմնադիրը, Հովհաննես վարդապետը, ինչպես վկայում է Ասողիկը, լինելով մի շատ բարեսեր և աղքատասեր մարդ, առանձին հոգացողություն է ունեցել ճանապարհորդների մասին: Վանքում նա առանձին ընդարձակ շինություն է կառուցել, ուր իջևանում էին ճանապարհորդները և առևտրական կարավանները: Արևելքում այս տեսակ շինությունները միայն շահադիտական նշանակություն չունեն: Շատ անգամ նրանք կառուցվում են իբրև բարեգործություն: Բայց ինչ էլ լինի նպատակը, անկասկած է, որ այդ օթեանները հեշտացնում են հաղորդակցությունը, զարգացնում են առևտրական հարաբերությունը: Հռոմոսը այդպիսի կուլտուրական դեր է կատարել Շիրակի համար: Նա գտնվում էր Պարսկաստանի մեծ ճանապարհի վրա, իսկ Ախուրյանը արգելք չէր հանդիսանում այդ հաղորդակցության, քանի որ նրա վրա կա՝ ճուրջ էր շինված:

Այդ հին իջևանը, որ երկար դարեր գրավում էր ճանապարհորդներին և առևտրականներին, այժմ էլ մնում է, բայց խարխուլ գրության մեջ: Եվ որովհետև Հոռոմոսի մեջ ամեն ինչ գեղեցիկ ու շնորհքով պիտի լիներ, ուստի այս իջևանն էլ, որ իր հնությամբ անմենահետաքրքրական շինություններից մեկն է, շինված էր խնամքով, նույնիսկ ընտիր ճաշակով: Հին ժամանակներից համարյա միայն եկեղեցիներ ու վանքեր են մնացել, աշխարհիկ շինություններ գրեթե չկան: Պարզ է, թե այս պատճառով որքան կարևոր նշանակություն պիտի ունենա այս իջևանատունը:

Վանքի կողքին մի բակ կա, որ տանում է դեպի տապանատունը: Այդ բակում գյուղացիները քար են դարսում: Նրա արևելյան ծայրում, մուտքի մոտ կա ահագին միապաղաղ քարից շինած մի ավազան աղբյուրի համար: Վանքի բազմաթիվ արձանագրություններից մեկը պատմում է, որ ջրի հարցը Հոռոմոսի համար երկար ժամանակ անլուծելի էր. նույնիսկ Անիի թագավորները շատ էին մտածել այդ մասին, շատ էին աշխատել, բայց ոչինչ չէին կարողացել անել: 1198 թվին Հոռոմոսի առաջնորդ Մխիթարը Ականց անունով ջուրը մեծ ծախսերով և զծվարություններով բերում է վանքը: Այժմ, իհարկե չորացած է այդ ջուրը, և չոր, պապակված քարը միայն գրգռում է իր տեսքով ծաղիկից տանջվող այցելուին...

Տապանատուն ասվածը վանքի հարավային կողմից կպած մի ընդարձակ շինություն է, դարձյալ գեղեցիկ, դարձյալ դարդադրուն: Կամարակապ առաստաղը, քանդակներով և խաչքարերով զարդարված պատերը խոսում են շինողի շքեղ ճաշակի մասին: Հոյակապ շինության վրա երեք փոքրիկ մատուռներ կան, որոնցից մեկն ունի գմբեթ: Մի ուրիշ մատուռ էլ այս շինության մյուս կողմում կա: Եղեկ են, բացի դրանից, երեք հատ փոքրիկ մատուռներ տապանատան նման մի ուրիշ շինության վրա, բայց նրանք փլվել են և իրանց վաղեմի գոյությունը հիշեցնում են մի քանի թափթփված բեկորներով:

Այս մանրիկ մատուռները, այս «տապանատուն» անունը պարզապես ցույց են տալիս, որ Հոռոմոսի բակը տոհ-

մային գերեզմանատուն էր հարուստ, իշխանավոր ընտանիքների համար: Անշուշտ, դրանք անեցիներ էին: Եվ զարմանալի չէ այս հանգամանքը, քանի որ Բագրատունի թագավորներն անգամ, թողած իրանց շքեղ մայրաքաղաքը, իրանց հոյակապ պալատները, այստեղ, Ախուրյանի այս նվիրական ափում էին իրանց հավիտենական հանգստյան օթևան գտնում: Երբ երկիրը աղքատացավ բարբարոսների ավերմունքից, երբ իշխանական փառքից մերկացավ Շիրակը, Հոռոմոսի հողում թաղվելու բախտը մատչելի դարձավ և հասարակ մահկանացուներին: Ինչպես տեսանք, երկու կով նվիրելով կարելի էր գերեզմանի տեղ գնել:

Բայց ահա, վերջապես, և ինքը, վանքը: Արդեն մթնելու վրա էր, երբ մենք մտանք այնքան հուշակավոր անուն կամարների տակ:

Իր հուշակին արժանի՝ շինություն: Գավիթը հիանալի է իր բոլոր սյուներով: Պատերի առջև տաաներկու սյուներ են, մեջտեղ՝ չորս. սրանք միանում են իրար հետ գեղեցիկ ու բարձր կամարներով և պահում են իրանց վրա խոշոր գմբեթը, որ զանգակատունն է: Գավթից դուրս տանում է բուն տաճարի մեջ, որ համարյա գավթի մեծությունն ունի: Ընդհանրապես Հոռոմոսը չէ զարմացնում իր մեծությամբ և ընդարձակությամբ: Բուն տաճարը անսյուն է. նրա իրանի մեջտեղը լայն կոլոր գոտի է, որի վրա բարձրացած է բուն մեծ գմբեթը:

Ճարտարապետական գեղեցկություններ շատ ունի վանքը. բայց այդ հարստությունները նա թարցրել է անլույս տարածության մեջ: Նեղիկ պատուհանները նույնիսկ ցերեկով էլ վերին աստիճանի ժլատությամբ են լույս ներթողում և եկեղեցու ներքին կողմը միշտ ընկղմված է կիսամթության մեջ: Արևելքին սիրում է խորհրդավորությունը, մանավանդ կրոնական հասկացողությունների մեջ: Այս խավարը անհրաժեշտ էր նրա մտքի ու սրտի վրա պատշաճավոր ազդու տպավորություն թողնելու համար:

Հոռոմոսի վանքը դրսից ծածկված է արձանագրություններով: Չորս պատերի վրա փորած երկար ու կարճ տողերը լուռ պատմում են, թե դարերի ընթացքում ինչեր է արել

ժողովրդի բարեպաշտությունը հռչակավոր վանքի համար։ Դրանք մի տեսակ կալվածագրեր են, պայմանաթղթեր նվիրատուների և վանքի միաբանության մեջ։

Միջնադարյան վանքը, մանավանդ այստեղ, Շիրակում, առևտրական սկզբունքներով էր բարեպաշտություն զարգացնում հավատացյալների մեջ։ Ստանալով նվերներ, նա պարտավորվում էր աշխատել նվիրողների հոգու փրկության համար, հատկացնելով նրանց որոշ քանակությամբ պատարագներ տարվա որոշ տոներին։ Շատ անգամ այդ պատարագների թիվը, տոները, երբ պետք է մատուցվեին պատարագները, մի լավ արժեքույց են և, նրանց նայելով կարելի է ենթադրել, թե ինչ գին և նշանակություն ունեւր վանքին ընծայաբերված այս կամ այն կալվածք, իրը։ Պայմանագիրը որոշ ժամանակի համար շէր կնքվում։ Նրա ժամանակը հավիտենականությունն էր։ Մեկը, մի ջրաղաց կամ մի զույգ եզն նվիրելով վանքին, կարող էր հավատացած լինել, որ իր մեռնելուց հետո տարվա այսինչ օրերին վանքը պատարագ պիտի մատուցանե իր հոգու համար, մինչև աշխարհի վերջը, մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը։ Պայմանը ամրապնդվում էր անեծքներով։ Ով խափանե պայմանը, նա Հուդայի ընկերը պիտի դառնա, նա նզովված պիտի լինի 318 հայրապետներից և այլն։

Դարի միամիտ հասկացողություններն են ծլլում այդ արձանագրություններից։ Իսկ այժմ, ամայի ու անբնակ վանքերի, ջարդված ու փլված պատերի կտորների վրա որքան դառն հեղնություն են բովանդակում «մինչև Քրիստոսի գալուստը», «մինչև աշխարհի վերջը» խոսքերը։ Ըստ երևույթին, երկաթի ու արյան այն դարերում մարդիկ շատ լավ պիտի ըմբռնեին, որ երկնքի տակ ապրողների համար չկա տևողականություն, չկա կարգերի և հասկացողությունների կայունություն։ Բայց մարդիկ հավատով էին ապրում և այդ հավատն էր, որ ոչ միայն ապրեցնում էր նրանց դժոխային պայմանների մեջ, այլև հավիտենական դաշնագիրներ էր կնքել տալիս։

Նույն այդ անմեռ հավատը ծեփել է Հոռոմոսի պատերը բարեպաշտության, հույսերի և ակնկալությունների արձա-

նագրություններով։ Բայց այցելուն ամենից առաջ վանքը շինողի արձանագրությունն է որոնում։

Հոռոմոսի հիմնադիրը, ինչպես ասացինք, Հովհաննես վարդապետն է եղել X դարի կեսում։ Այսպես է ավանդում պատմությունը։ Բայց վանքը մտնողի առաջ, արևմտյան դռների ճակատին, բացվում է մի արձանագրություն, որ ասում է, թե Հովհաննես վարդապետից համարյա հարյուր տարի հետո վանքը քանդվել է և նորից շինվել։ Եվ շինողը եղել է Անիի Հովհաննես-Սմբատ թագավորը, որ և տվել է վանքին Կողբում գտնվող իր մի այգին և տարին հարյուր բեռ աղ։ Այս բոլորը տեղի է ունեցել 1038 թվականին։

Տխուր, շատ տխուր հիշատակներ են այդ թագավորն ու այդ թվականը այս գեղեցիկ, մեծահռչակ սրբավայրի ճակատին։ Աստծուն հաճոյանալու, մեղքերի թողություն գտնելու համար են այս միապաղաղ գեղեցիկ սյուները կանգնել, այս կամարները օդի մեջ տարածվել։ Բայց նույնիսկ Հոռոմոսը կարո՞ղ էր ջնջել Հովհաննես թագավորի մեղքերը։ Մեղքեր կան, որոնց ահավոր ծանրությունը չեն կարող տանել մինչև անգամ տասը այսպիսի հոյակապ ու ամուր կամարակապ հարկեր։ Դրանք այն մեղքերն են, որոնք կատարվում են ոչ թե անհատների, ոչ թե այս կամ այն դասակարգի դեմ, այլ մի ամբողջ ժողովրդի, մի ամբողջ քաղաքական մեծ կազմակերպության դեմ...

1038 թվականը, երբ Հոռոմոսի ճակատին փորվում էին այդ տողերը, նախավերջինն էր Հովհաննես-Սմբատի կյանքի մեջ։ Մարմնով սաստիկ չաղ ու դժվարաշարժ թագավորը շատ գրասեր էր և գուցե շատ հարմար լինեւր այսպիսի մի վանքի վանահոր պաշտոնում։ Բայց նա սկզբից ևեթ վանք չուզեց, այլ տոհմային թագն ու գալիստը, իրեր, որոնք փոխանակ զարդարելու նրան, ճնշում ու տանջում էին, որովհետև նա չափազանց անուժ ու վախկոտ էր։ Բազրատունյաց դահի վրա հաջորդաբար առյուծներ էին նստում։ Խեղճ ու անճար էր այս մեկը, նախավերջինը։ Եվ Շիրակի փառավոր թագավորության հոգեհան հանդիսացողը այս անճարությունը եղավ, ինչպես բնական էր այն

ժամանակներում, երբ գրքից ու վանքից շատ սուրն էր զորավոր իբրև պաշտպանություն:

Հոռոմոսի այս բարձունքի վրա իր բարեպաշտական նվերը երկնքից մատուցանող թագավորը մոռացել էր արդյոք, որ 16 տարի առաջ նա մի թուղթ էր ուղարկել հունաց Վասիլ կայսրին: Մի վատ, մի անպատիվ թուղթ, որի մեջ մի շատ ստոր առևտուր էր պայմանավորված: Վասիլ կայսրը իր զորքերով շարժվում էր Անիի թագավորության սահմաններից հեռու: Վախկոտ Հովհաննես-Սմբատը մտածեց մի սարսափելի ծանր գնով հանգստություն գնել իր շաղ մարմնի համար մինչև այն ժամանակ, երբ այդ մարմինը հող կիջներ:

Հայոց կաթողիկոսը տարավ նրա թուղթը Վասիլին: Շիրակի թագավորը պայման էր դնում, որ քանի ինքը կենդանի է, թագավոր մնա Անիում, իսկ իր մահից հետո Անին դառնա հունաց սեփականություն: Բյուզանդական կառավարությունը, իհարկե, հիացմունքով ընդունեց այդ ինքնապանության գործողությունը: Իսկ Հովհաննես-Սմբատը ինքն իր աչքում արդարանում էր նրանով, որ անդամակ է և ժառանգ չպիտի թողնե Բագրատունի թագը կրելու համար:

Բայց այս մտածությունը ավելի ևս անհրապույր, մոռյալ կերպարանք է հաղորդում շաղ թագակրին: Ծիշտ է, նրա միակ որդին մեռել էր, բայց եթե անժառանգ էր Հովհաննես-Սմբատը, այդպես չէր Բագրատունիների տոհմը: Նա անժառանգ չէր: Թագավորը այդ ժամանակ ուներ մի հարազատ եղբայր, քաջ Աշոտը, որ, սակայն, հեռացված էր Անիի սահմաններից, որովհետև անդրանկության իրավունքը ավելի զորեղ էր, քան պետության գոյությունը և թագավոր կարող էր լինել ավագ եղբայրը, չնայած իր վախկոտության ու անկարողության:

Եվ այդ վախկոտը չկարողացավ հասկանալ, որ գահը Բագրատունիներին է պատկանում: Իր համար մի 16—17 տարվա անփառունակ, ողորմելի թագավորություն ապահովելու միտքը նրան տարավ հասցրեց տոհմային իրավունքները, մայրաքաղաքը վաճառելու մեծ ու զգվելի հանցանքին: Հոռոմոսի օժման տոնախմբությունը կատարող ժողովրդի

առաջ դեռ ծածուկ էր հանցանքը: Բայց արձանագրությունից մի երկու տարի հետո մեռավ թագավորը, և այնուհետև որքան լաց եղավ Շիրակը¹: Տարիներ անցան, շաղ թագավորը հող դարձավ, իսկ նրա տխուր գործը շարունակում էր այրել որբացած ժողովուրդը: Մի ամբողջ երկիր արտասվում էր իր բոլոր աչքերով: Արտասվում էր ոչ թե այն պատճառով, որ մահը անշատել էր մի թագավորին իր ժողովրդից, այլ այն պատճառով, որ այդ թագավորը դեռ ապրում էր հողի վրա, ապրում էր այն զգվելի վաճառքի, այն թղթի կտորի մեջ, որ եկավ գահ ու անկախություն ջարդելու, ստրկության շղթաները փաթաթելու այդ սիրուն, ինքն իրենով երջանիկ աշխարհի վրին:

Արտասուքների հեղեղը հասավ արդյոք այդ թագավորի ոսկորներին, ողողնց նրանց: Տխուր, տխուր է Հոռոմոսի ճակատին կնքված թագավորական արձանագրությունը: Դուք ակամա հեռանում եք նրանից, դուք հանգստություն գտնում եք երկու եզ նվիրողների արձանագրությունների մեջ: Նրանք ավելի անմեղ են երևում, քան այս տողերը, որոնք վկայում են դարերի և սերունդների առաջ, որ իր գեղեցկությամբ այնքան զարմանալի այս շինության միտքը ծագել է այդ իսկ գլխի մեջ, ուր տեղավորված էր Անին հույներին տալու սև ոճիրը...

Հոռոմոսը երկար ապրեց, բաց աչքով տեսավ իր հիմնադրի վատության հետևանքները: Արյունոտ ժամանակը մոռացավ ամեն ինչ, մինչև իսկ թագավորների հանցանքները: Հռչակավոր սրբավայրը մնաց միակ միփթարություն որբ ու անտեր ժողովրդի համար և բարեպաշտական տուրքերը եկան արձանագրությունների մի ամբողջ գրականություն զրոշմելու հաստ, աշտարակավոր շրջապարիսպի ետևվում ապաստանված գեղեցիկ պատերի վրա:

Ոչ մի հնարավորություն չկա այդ արձանագրություններից յուրաքանչյուրի մասին խոսելու, նրանցով մանրամասն զրադվելու համար: Ես միայն մի ընդհանուր դիտողություն կանեմ այստեղ:

¹ Հովհաննես-Սմբատը մահացել է 1041 թվականին: Մանոք. խրմբագրի:

Դարերի խորքից փշրանքներ են մնացել մեզ իբրև ժա-
ռանգություն: Այդ փշրանքների մեջ կարևոր տեղ են գրա-
վում արձանագրությունները: Բայց ինչպե՞ս ենք մենք վե-
րաբերվում դրանց: Կարդում ենք, անցնում, Անցնում ենք,
խմանալով, որ այսինչ ժամանակ, այսինչ անունն ունեցող
մի բարեպաշտ տղամարդ կամ կին այս կալվածն է նվիրել
վանքին: Եվ որովհետև այժմ ոչ նվիրված կալվածի տեղը
կարելի է որոշել, ոչ նվիրողների մասին մի հաստատ տեղե-
կություն տալ, ուստի բավականանում ենք մեր ստացած
քնդհանուր տպավորությամբ, թե այսինչ վանքը, ուրեմն շատ
հարուստ է եղել:

Սակայն փոքր ինչ խոր մտածողը շատ հեշտ հասկա-
նում է, որ արձանագրությունները ավելի մեծ հետաքրքրու-
թյուն են ներկայացնում, ավելի շատ բան ունեն ասելու ոչ
թե նվերների ու նվիրողների մասին, այլ այն իրավական
կարգերի, կալվածատիրական օրենքների մասին, որոնցով
կառավարվում էին մեր նախնիքները: Շիրակը այս հար-
ցերը մշակելու համար անսպառ նյութեր ունի իր հնու-
թյունների վրա: Ոչ միայն Հոռոմոսը, այլև Անին, Բագնայրը,
Տիկորը, Խժկոնքը իրանց արձանագրությունների մեջ մեր
հին կյանքի մանրանկար պատկերն են պահում: Եվ եթե
մինչև այժմ նրանք համարյա ոչինչ չեն ավելացրել մեր
պատմության վրա, պատճառն այն է, որ մեր որոնածը հին
կյանքի առօրյա պատկերը չէ եղել, այլ քաղաքական խոշոր
փաստեր, անակնկալ հայտնություններ: Չենք գտել այդպիսի
բաներ արձանագրությունների մեջ, ուստի և բավականացել
ենք նրանց ընթերցանությամբ. բավական ենք համարել ի-
մանալ անցողակի, թե ով է շինել այս կամ այն եկեղեցին:

Ավելորդ է ասել, որ այցելուն դրանից ավելի կարևոր
հարցերի լուծում է սպասում հին ավերակներից: Մենք, օ-
րինակ, գիտենք մեր պատմագիրներից, որ հայ ժողովրդի
վրա ընկած էր հարկերի և տուրքերի մի սարսափելի ծան-
րություն: Բայց ի՞նչ հարկեր էին դրանք: Պատասխանել
կարող են միայն արձանագրությունները: Իսկ այդ պատաս-
խանի մեջ մենք կգտնենք և մեր հին կյանքի տնտեսական
պայմանները, կիմանանք, թե ինչ էր արտադրում ժողո-

վուրդը և ինչ էր տալիս իր տերերին: Մենք չգիտենք, թե
ինչ հողային հարաբերություններ գոյություն ունեին հին ժա-
մանակներում: Արձանագրությունները այստեղ էլ մեզ
շատ կօգնեն: Մենք սովոր ենք ասելու, որ Հայաստանի մեջ
գոյություն չունեի ճորտություն: Բայց ահա Շիրակի արձա-
նագրությունների մեջ կարդում ենք «ճորտ», «պարոն» բա-
ռերը: Իսկ երբ կան բառերը, պետք է ենթադրել, որ գոյու-
թյուն ուներ և սխտեմը:

Արձանագրությունների գիտական մշակում, ուսումնա-
սիրություն չէ եղել և չկա մեզանում: Ամեն մի հայի հետա-
քրքրել է և հետաքրքրում է միայն հնագիտական կողմը,
առանց ընդարձակելու այդ կողմը, առանց քաղաքացիական
և կուլտուրական հարցեր ու շահեր մտցնելու նրա մեջ:
Իհարկե, հեշտ բան չէ արձանագրությունները հասկանալու
և բացատրելը: Մի այդպիսի գործ կատարելու համար հար-
կավոր է երկար ու դաժան աշխատանք: Բայց չէ կարելի
ասել, թե այդպիսի աշխատանքը կլինի ապարդյուն: Շիրակի
արձանագրությունների ահագին մեծամասնությունը պատ-
կանում է այն ժամանակներին, երբ այստեղ տիրում էին
արաբական, բայց մասնավանդ բյուզանդական ազդեցու-
թյունները: Ահա այդ ազդեցիկն պետք է դիմել՝ մեր մեջ գո-
յություն ունեցած կարգերը հասկանալու համար:

Ես ենթադրում եմ, որ Բյուզանդիայում գոյություն ու-
նեցած մի սխտեմ ինձ օգնեց հասկանալու Հոռոմոսի վան-
քի մի քանի արձանագրությունները: Ահա ինչպես:

Շիրակի արձանագրությունները կասկած չեն թողնում
ընդունելու, որ միջին դարերում մեր մեջ էլ վանքերը, եկե-
ղեցիները կարող էին մասնավոր մարդկանց սեփականու-
թյուն դառնալ: Եկեղեցի, վանք գնելը («գանձագին անելը»)
սովորական իրավունք էր: Սեփականատիրոջ համար վանքը
կամ եկեղեցին «հայրենիք» է և սովորաբար կոչվում է «մեր
ուխտը»: Եվ այդ տերերը միայն հողի և շինության իշխա-
նությունը չունեին. նրանք ազդում էին և վանքի կառավա-
րության վրա:

Հոռոմոսի վանքը մի ժամանակ պատկանել է Խաչենի
իշխանների տոհմին (XII դարի վերջում և XIII-ի սկզբում):

Այդ ժամանակվա արձանագրությունները միշտ հիշում են այդ տերերին (Հեճուպ Գրիգոր, Սմբատ, Իշխան): Իրանք, այդ իշխաններն էլ, կարգադրություններ էին անում և գրում պատերի վրա: Այսպես, Հեճուպ Գրիգորը, Սմբատը, Իշխանը կարգադրում են. «Մեր սեփական ուխտի մեջ ոչ պատրոն և ոչ ճորտ իրավունք չունենան աղուն աղալ»:

Բայց խաչենի իշխանական տոհմը դեռ կարող էր Հոռոմոսը սեփականություն ստացած լինել այս կողմերի մեծ հողային կալվածների հետ: Նրա արած կարգադրությունները դեռ կարելի է համարել կալվածատիրոջ, տեղային իշխանի կարգադրություն: Հետաքրքրականն այն է, որ վանքը, բացի այդ տերերից, ուներ ուրիշ, ավելի մասնավոր տերեր էլ, որոնք անվանվում են պատրոններ: Սրանք էլ խառնվում էին վանքի կառավարության մեջ: Պատրոն կարող էին լինել ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք: 1228-ին նույն Հեճուպ Գրիգորը և նրա մյուս ազգականները խիստ արգելում են, որ պատրոնները, ով լինեն նրանք—կին թե տղամարդ, կաշառքով վանահայր չղեն: Ահա այդ հետաքրքրական տղերքը.

«Կամաւ Ամենակալին Աստուծոյ այս մեր գիր յիշատակի է Հեճուպ Գրիգորոյ որդոյ Հասանայ և եղբարորդեաց իմոց և Իշխանիս որդոյ Քրդին և եղբարորդեաց իմոց տէրանց սուրբ ուխտիս Վանացս Հոռոմոսի, որ հաստատեցաք արձանագրով. պատրոն ով լինի այս տեղոյս ի յարանց կամ ի կանանց ով կաշառք հայր դնէ, այնպիսին նզովս առցէ զՅուդային զԱստուածավաճառին և զԿայէնին զեղբայրասպանին. և հայր և այլ գործաւորք որ կաշառք տան յայտնի կամ ի ծածուկ, յերկնաւոր հօրէն և ՅԺԸ. հայրապետացն և յամենայն սրբոց անիծեալ եղիցի յոգի և ի մարմին... Ով հակառակ կայ այս բանիս ի պատրոնաց կամ ի միաբանիցս կամ ջնջել ջանայ զայս գիրս, և ինքն ջնջեսցի ի դպրութենէ կենացն... Արդ եթէ մեծ և եթէ փոքր կարծիս առնու թէ հայր կամ այլ գործաւոր կաշառք է տվել և վրէժխնդիր չլինի վերագրելոցս, նզովիցս տէր է. ամէն»:

Այստեղից շատ պարզ է, որ վանքի անմիջական կառավարությունը պատկանում էր պատրոններին: Իշխանները

միայն բարձր իրավատերեր էին, որոնք կարող էին պատրոնների դեմ գնալ: Ի՞նչ են այս պատրոն ասվածները:

Բյուզանդական պետության մեջ գոյություն ուներ վանքերը այս կամ այն անձին (հոգևոր թե աշխարհական) տալու սխտեմը, որ կոչվում էր ֆարխաթիկարխոս: Դա մի տեսակ պարգև էր, որ, սակայն, սեփականության իրավունք չուներ իր մեջ: Քարիստիկարիոսը, այսինքն վանքը պարգև ստացողը, օգտվում էր նրա եկամուտներից, բայց պարտավոր էր հոգալ միաբանության կարիքները և առհասարակ ամեն ջանք գործ դնել, որ վանքի մեջ ապրողները խաղաղ ու անվրդով մնան, նվիրված իրանց աղոթքներին: Սովորաբար վանքերը կայսերական հրամանով ընծայվում էին պետության պաշտոնյաներին, որոնք և հարստանում էին այդ միջոցով: Բայց միշտ կայսերական հրաման չէր գործադրվում: Վանքը կարող էին տալ և նրա աշխարհական տերերը, այնպես որ կարելի է ենթադրել, որ Հոռոմոսի պատրոնները հենց այդ Հեճուպ Գրիգորի և մյուսների ձեռքից էին ստանում իրանց կոչումը: Բայց նույնիսկ տերերի համաձայնությունն էլ չէր հարկավոր: Վանքի միաբանությունը ինքը կարող էր իր համար պատրոն հովանավոր ընտրել: Այս հանգամանքն էլ մենք գտնում ենք Հոռոմոսի արձանագրությունների մեջ: 1246 թվականին, գուցե հենց նույն Հեճուպ Գրիգորի կամ նրա ժառանգների ժամանակ, մի ոմն զսեղեցի Աշոտ նվիրում է Հոռոմոսին մի ավետարան, չորս եզ, երեք կով, չորս էշ, երկու ձի: Իսկ վանքի միաբանությունը այս է գրում. «Ես Տէր Բարսեղ և Սարգիս վարդապետս և այլ եղբարքս ընկալաք զնա իբրև զմի ի պատրոնաց մերոց»: Զարմացնել կարող է այն, թե ինչպես էր, որ այդպիսի համեմատաբար թեթև նվերը այսպիսի փոխարինություն էր ստանում: Բայց արձանագրությունը այս էլ հասկանալի է դարձնում, վկայելով, որ Աշոտի նվերը տեղի ունեցավ «ի նեղ և չար ժամանակի, յետ կործանման տաթարին (թաթարին), մինչև էր վանքս ի նեղութեան»:

Եվ այսպես, եթե համոզվել են մեր բացատրությունները, պետք է ընդունել, որ բյուզանդական սովորությունը հաստատված էր և մեզանում: Եթե արևելյան կայսրների պե-

տության մեջ վանքերը կարիք էին զգում հովանավորողների, պատրոնների միջոցով պաշտպանել իրանց, որքան մեծ պետք է լիներ այդ կարիքը մեր երկրում, ուր հարստահարողներն ու թալանողները այնքան շատ էին:

Քարիստիկարիոսի սիստեմը մեծ շարիքների դուռ էր բաց անում. վանքը հարստանալու միջոց էր, և նրան շահագործում էին նրա ժամանակավոր տերերը: Մեզանում էլ, ինչպես տեսանք, պակաս չէր կարիքը: Գրիգոր Հեճուպի արձանագրության մեջ շարված անեծքները մոտավոր հասկացողություն են տալիս, թե ինչ չափերի էր հասել կաշառակերությունը և որքան վնասներ էր նա պատճառում...

Հոռոմոսի կյանքը ներկայացնող արձանագրությունները ընդհատվում են 1336 թվականին, երբ Զաքարե սպասալարի թոռան որդի Աթաբեկ Վահրամը նորից պայծառացնում է վանքը, վերադարձնելով նրա կալվածները և ավելացնելով իր կողմից նորերն էլ: Այնուհետև սև անհայտություն է գալիս հռչակավոր վանքի վրա, որ շատ հասկանալի կլինի, եթե շմոռանանք, որ շրջականներն էլ քարուքանդ, ավերակ երկիր էին դարձել: Երեքհարյուր հիսուն տարուց հետո մի արձանագրություն է երևում, որ կարող է այդ երկար ժամանակամիջոցի պատմությունը համարվել:

Դա վերանորոգության արձանագրություն է: XVII դարի վերջին քառորդում տիգրանակերտցի Դանիել վարդապետը, տեսնելով Հոռոմոսը աղբով, հողով և ամեն տեսակ աղտեղություններով լցված, վառվում է մի աղնիվ զգացմունքով և մաքրել է տալիս դժբախտության դարերի այդ կույտերը, գործադրելով մեծ ջանքեր: Այդ էլ վերանորոգություն ու բարերարություն էր: Հոռոմոսը, իհարկե, այլևս չստացավ իր նախկին հարստությունները: «Դառն ժամանակ էր,—ասում է Դանիել վարդապետը իր օրերի մասին,—աղգս հայոց, յոժ էին չքատրեալք և իշխանութիւն տաճկաց զօրացեալք»: Եվ Դանիելը իսկ որ իրավունք ուներ իր քաջագործությունը արձանագրելու համար տեղ ստանալ վանքի պատերի վրա: Այժմ էլ յուրաքանչյուր այցելու հաճությամբ այդպիսի իրավունք կտար ամեն մի Դանիել վարդապետի, եթե գտնվեր այդպիսին և ազատեր Հոռոմոսը կեղտերից ու աղբից:

Միշտ նույն իրականությունն է կախված մեր օդի մեջ: Պանիել վարդապետները ամբողջ երևույթ են կազմում այսօր էլ...

9

Վերջին լույսերը խուրձ-խուրձ մարում էին արևմուտքի խոր ծոցում, երբ մենք դուրս եկանք Հոռոմոսի դռներից և սկսեցինք իջնել ուղիղ մեր առջևը փռված կիսակոլոր ձորը: Մեր եկած ուղիղ ճանապարհով չէինք հետ դառնում:

Շրջականները արդեն գիշերային անորոշության քողի մեջ էին: Ձորալանջերի վերին մասերն էին դեռ փոքր-ինչ լուսավորված. ստորոտները արդեն կուլ էին գնում անհայտության մեջ: Նույնիսկ մեր ոտների տակ ոլորվող ճանապարհի վրա ամեն ինչ պարզ ու որոշ չէր:

Իսկ այդ ճանապարհը, սաստիկ նեղ ու քարքարոտ, Հոռոմոսի առջևից, գյուղի միջով, գահավիժվում էր դեպի Ախուրյանը: Հավասարակշռություն պահպանելու համար պետք է վազելավազ իջնել: Բայց մեր առջև բացվեց մի այնպիսի տեսարան, որի համար կարելի չէր շարժամարհել պատանման դառիվայրը, չպահել, չդանդաղեցնել քայլերը: Ես կանգ առա, որ գոնե մի բույս նայեմ և ղմայլվեմ:

Զմայլեցնողը, կանգնեցնողը Ախուրյանն էր: Ձորի թանձրացող մթության մեջ նա փայլում էր իբրև հալած արծաթե մի հսկայական շերտ: Այստեղ, իմ աչքի առաջ այդ շերտը մի հորդ գետի անթիվ պտույտներից մեկն էր գործում: Քշելով իր ջրերը դեպի հյուսիս, նա հանկարծ մի կիսաշրջան է տալիս, թեքվում դեպի արևմուտք:

Ահա ամբողջ տեսարանը: Բայց նրա շքեղությունը այդ պտույտը չէ, այլ այն փայլը, որ օրվա այս ժամին ստացել է նա: Զրերի մոտ ապրողներին հայտնի է, թե որքան լավ կարողանում են նրանք հավաքել երկնքի լույսերը, ամփոփել իրանց մեջ: Ախուրյանի այդ կարողությունը հիացուցիչ է:

Այս խոր ձորի հատակից նա խել է արևմուտքի մարող բու-
լոր լույսերը, ոչինչ չէ տվել իր ասիերին և արծաթելով իր
ոլորուն մեջքը, ինչպե՛ս է փայլում իր սև կիրճի մեջ: Մի
աներևակայելի քնքուշ, շոյող փայլ է դա, որի մեջ դուք
նկատում եք անհանգիստ ալիքների դողդողոցը: Լուռ ու ան-
շարժ բնությունը, կարծես, ամբողջովին ուշադրություն է
դարձել և շնչասպառ նայում է ձորի հատակին:

Խոշոր, ահավոր գծեր չկան այդ տեսարանի մեջ: Հոռո-
մոսի ձորը այս կողմում ոչ անշափ վայրենի է, որ ճնշե-
վախեցնե երևակայությունը, ոչ էլ շատ փոքր է, որ ոչինչ
տպավորություն չթողնե: Զափավոր է բնության թափը: Եվ
այստեղ նա իր այս ջրային տեսարանով մի խաղաղ, երա-
զուն տրամադրություն է հաղորդում մարդու մտքին: Այս
թանձր ստվերների, այս շողացող ալիքների աշխարհում որ-
քա՛ն սիրուն հանդարտությամբ է գործում երևակայությու-
նը, որքա՛ն մեղմ քաղցրություն և լիառատ վայելչություն է
ստանում զգացմունքը:

Մեր նախնիքները սրբություններ ստեղծում էին խորհրդ-
դակցելով բնության հետ: Կրոն, սրբություն չէր միայն
պաշտվում նրանց շինած վանքերի մեջ, այլև հայրենի բնու-
թյունը: Միտքն ու սիրտը դեպի երկինք տանում են ոչ միայն
սաղմոսները, խոնկը, պատարագը, այլև այն տեսարան-
ները, որոնց ընտրելու և իրանց վանքերին կապելու մեջ մեր
նախնիները կատարյալ վարպետներ էին: Հոռոմոսը իբրև
հռչակված սրբավայր ընտրել տվողը երկնքի ձայնը չէ եղել,
այլ Ախուրյանը: Նույն բնությունն է այս ձորը բերել ահա և
այն երկու մատուռները, որոնք լուռ մեզ են նայում կիսա-
մթության միջից:

Նրանք գտնվում են մի փոքրիկ թումրի վրա, այնտեղ,
ուր Ախուրյանը թեքվում է դեպի արևմուտք: Մեր փոքրիկ
ճանապարհը, ցածրանալով որքան կարող էր, տանում է դե-
պի այդ թումբը բոլորովին գետի ամիով: Ահա նա անցավ մի
ինչ-որ կամբջանման քարքարուտի վրայով. ներքևում վշշա-
լով Ախուրյանի մեջ է թափվում մի գետակ: Քարից քար
պետք է ցատկել զգուշությամբ, թե չէ՝ կարող եք ընկնե՞լ
դեպի ցած, ուր Ախուրյանի ջրերն են վազում: Իսկ այդ ջրե-

րի մեջ ընկնելը, որքան էլ գեղեցիկ լինեն նրանք այս ժա-
մին, բոլորովին հրապուրիչ միտք չէ: Ախուրյանը խեղդող է,
իսկ նրա մեջ ասլորող մեծ ձկները կերակուրի են սպասում¹:

Գետի վտանգավոր ամից պրծաք, այժմ փոքրիկ ճա-
նապարհը տարավ ձեզ գցեց ահագին քարակույտերի մեջ ու
ինքը, շարաճճին, կորավ: Այդ քարակույտերի մեջ շարժվե-
լուց դժվար բան չկարծեք թե շատ կա Հոռոմոսի ձորում:
Ոտ դնելու տեղ չեք գտնում, մի քայլից ու գիտե քանի՜ քա-
րեր են շարժվում, դղրդում:

Մատուռները մեր առջևում են. այդ քարակույտերն էլ
նրանց մանրած, քայքայված մարմնից են գոյացել: Բայց
որքա՛ն չքնաղ են այդ մարմինները: Կարծես ճարտարա-
պետը իր ամի մեջ է կոկել, զարգարել նրանց և ապա՝ դրել
այս հողի վրա: Եվ այսպիսի ավերո՛ւմ: Սև՛, զգվելի, ան-
հեթեթ քարակույտեր. նրանք, կարծես, դուրս տված փորո-
տիքներ են, որոնք փտում, նեխվում են իրանց գեղեցիկ
գիակների կողքին:

Միմյանց մոտ են կանգնած երկու մատուռները: Եվ մե-
կը մյուսին այնքա՛ն նման տխուր ճակատագրի կողմից:
Ավերված են ամենաանգութ կերպով: Ավերմունքի պատճա-
ռը միայն այն չէ եղել, որ սրանք քրիստոնեական սիրուն
եկեղեցիներ են: Կա այս բարձրավանդակ հրապարակի վրա
և մի այլ մեծ հանգամանք, որ վառել է քանդողներին հարըս-
տանալու տենչով: Մենք կանգնած ենք Բագրատունի թա-
գավորների հանգստարանում...

Ախուրյանը, ամբողջովին հալած արծաթ, նայում է թա-
գավորական հանգստարանին մի մեղմ գեղեցկությամբ, որ,
իհարկե անփոփոխ է պահում դարերի սկզբից: Նայում է
գնալով, շարունակ դողացնելով իր փայլուն մեջքը, մինչև որ
հանկարծ իր բոլոր լույսերով անհետանում է ձորի մի
պտույտի մեջ: Միայն նա է գեղեցիկ ու նազելի երկնքի այս
կտորի տակ, միայն նա է համիշտակում տանում ուշացած
այցելուի միտքը: Ամեն ինչ, բացի միայն նրանից, մեռելու-

¹ Ալեքսանդրապոլցիները մեղ ասացին, որ Ախուրյանի մեջ մեծ
և չաղ լոճա ձկներ շատ են լինում: Անանիա Շիրակացին իր թվաբա-
նական խնդիրներից մեկի մեջ հիշում է լոճ ձուկը:

թյուն, վհատություն է քարոզում նույնիսկ այս գիշերային մթության միջից: Չորի լերկ, ժայռոտ լանջեր են նայում ձեզ ամեն կողմից. նրանց դեղնած ճակատների վրա խիտ ու հարուստ բուսականություն չէ երևում: Իսկ այստեղ, այս բարձրավանդակ հրապարակում, թագավորների գերեզմանատունը ամբողջովին ծածկված է ավերակների քարակույտերով և չկա, կարծում ես, մի ափ հող, որ ճնշված ու խեղդված չլինի նրանց սարսափելի ծանրության տակ...

Մենք խմբվել ենք երկրորդ մատուռի առաջ. լուսություն է տիրում, միայն ամեն մեկը շշնջում է. «Աշոտ Ողորմած... Աշոտ Ողորմած...»:

Այդ շշուկները հանել է տալիս այս խոշոր, համարյա մարդահասակ գերեզմանը, որի առջև կանգնած ենք ամենքս: Ողորմած թագավորի աճյունն է հանգչում այդ քարերի տակ: Եվ Ողորմած թագավորի մոտ որքա՜ն ողորմած է դեպի մեզ Շիրակի երկիրը: Երեկոյի մթությունը գնալով չխտացավ, չթանձրացավ: Նա, ընդհակառակն, շուտ սկսեց հալածական դառնալ: Այս լայն ձորամեջից մենք տեսանք, թե ինչպես օդի վերին շերտերը առատ լույսեր ստացան: Լուսինն էր: Նա չէր երևում մեզ, իր պաղ շողերով դեռ չէր շոշափում այս ավերակները, բայց մաքրեց ձորամեջը, ամեն առարկա դուրս եկավ խավարի միջից և ցույց տվեց մեզ իր կերպարանքը. բարակ ու նոսր ստվերներ էին ծածկում նրանց: Լուսնի հետ վեր կացավ մի զով ու թեթև քամի, որ գնաց շոյելու Ախուրյանի ալժմ ավելի գեղեցիկ արծաթյա մեջքը...

Ես տեսել եմ Աշոտի գերեզմանի պատկերները և պետք է վկայեմ, որ պատկերը չէ տալիս իսկականի տպավորությունը: Պատկերի մեջ այդ գերեզմանը չափազանց խեղճ ու փոքրիկ մի բան է երևում, մինչդեռ նա իսկապես բավական խոշոր ու ազդու մի մահարձան է, արժանի աղբատասեր, զարմանալի համեստ, բայց քաջ Աշոտի անվան ու հիշատակին: Նա պարզ է, անպաճույճ, քանդակներ ու զարդեր չեն երևում քարի այն խոշոր կտորների վրա, որոնցից կազմված է այդ հուշարձանը: Չորս աստիճան ունեցող պատվանդանի վրա դրված է մի միապաղաղ, մեծ պրիզմա: Այս է

ամբողջ գերեզմանը: Բայց տպավորությունը, կրկնում եմ, ազդու է և այդ համեստ պարզությունից...

Պարզությունը առիթ է տվել շատերին կարծելու, թե դա չէ կարող լինել թագավորի գերեզման: Բայց այսպես դատելու համար պետք էր ունենալ համեմատելու կարողություն: Թագավորների շատ գերեզմաններ չեն մնացել մեր երկրում, որպեսզի կարողանանք համեմատելով դատել: Իմ կարծիքով, ոչինչ հիմք չկա երևակայելու, թե մեր թագավորների գերեզմանների վրա ավելի մեծ ու փառավոր արձաններ էին դրվում: Ղարաբաղի Ջրաբերդ գավառում, Եղիշե առաքյալի վանքի կողքին կոպիտ, հազիվ տաշած քարերից շինած մի մատուռ կա, որի դռան ճակատին գրված է. «Այս է տապան Վաչագան թագավորին»: Եվ իրավ, մատուռի մեջ միայն մի գերեզման կա, ճիշտ նման այս գերեզմանին— աստիճանավոր պատվանդանի վրա դրած մի պրիզմա, զարմանալի նրբությամբ հղկած, առանց որևէ զարդի, առանց որևէ արձանագրության:

Աշոտի պրիզման, ինչպես երևում է, շատ լավ հղկված է եղել. բայց նա կանգնած է բաց երկնքի տակ, քամիների, արևի, անձրևների, ձյունների ազդեցության ենթարկված, ուստի և շատ բան է կորցրել իր նախնական վայելչությունից: Մեր նախնիքները չէին սիրում բարձր ու մեծ տապանաքարեր: Նշանավոր մարդկանց հավիտենական հանգստի տեղ ընտրվում էին ոչ թե բազմամարդ վայրերը, բաց հրապարակները, այլ եկեղեցիների հովանին: Իսկ եկեղեցու մեջ և եկեղեցու մոտ արդեն մեծ ու բարձր արձաններ շինել չէր կարելի: Աշոտի գերեզմանի կողքին երևում է պատի մի փոքրիկ բեկոր, որ վկայում է, թե միաժամանակ այստեղ բարձրացած է եղել, այս թագավորական շիրիմը ծածկելիս է եղել մի շինություն, երևի մի փոքրիկ մատուռ:

Տապանաքարի հարավային կողի վրա կարդացվում է՝ «Աշոտ թագավոր»¹: Առհասարակ այս տխուր ավերակների

¹ Պրոֆեսոր Մառը կարծում է, որ այս արձանագրությունը հնության դրոշմ չունի և, երևի, ճանկոտել է այս կողմերը այցելողներից մեկը: Բայց այս կարծիքի հետ հազիվ թե կարելի լինի համաձայնվել:

վրա շատ է կրկնված այդ «թագաւոր» բառը, իսկ դա դժբախտութեան վրա դժբախտութեան ամփոփումն էր նշանակում:

Ղարաբաղի կուսակաւն անտառներում կորած մի հին, անբնակ վանքի մեջ եւ մի անձրևոտ ամառնային օր փորձով տեսա, թե ինչ նշանակութեան ունի արձանագրութեանը մի տեսակ գերեզմանների համար: Վանքի շէմքի մոտ, ներսից, հողի երեսին մի մեծ տապանաքար կար, որի վրա խոշոր տառերով փորագրված էր. «Այս է տապան խերխան իշխանին, որ էր թոռն Բաղայ թագաւորին»: Տապանաքարը, որ միապաղաղ քարե կտոր է եղել, ճաքճաքված էր մի քանի տեղից և ամրացրած չէր հողի մեջ: Նրա տակ երևում էին խորշեր: Ամեն ինչ ցույց էր տալիս, որ այս գերեզմանը բացված է և ո՞վ գիտե քանի՞ անգամ: Իմ ընկերներից մեկը ձեռքը մտցրեց քարի տակ, մի խորշի մեջ հողը ոչ միայն պինդ չէր, այլ և նստած էլ չէր. և նա ամենայն հեշտութեամբ սկսեց ձեռքով դուրս հանել հողի բավական մեծ քանակութեան: Այդ հողի մեջ երևաց մի մարդկային ատամ: Կասկած չմնաց, որ գերեզմանը այնքան հիմնավոր կերպով տակն ու վրա է եղել արված, որ խեղճ խերխանի ատամը ընկել է գերեզմանի վերևը. դրանից կարելի էր եզրակացնել, թե ինչ դրութեան մեջ պիտի լինեին խեղճի ոսկորները:

Ի՞նչ էր գրավել գերեզման քանդողներին: Եւ համոզված եմ, որ շահի ակնկալութեանը: Նույն վանքի կողքին, այս գերեզմանից մի քանի քայլ հեռու, կա մի ամբողջ գերեզմանատուն, որի պատերը, քարերը ցույց են տալիս, որ դա որևէ իշխանական տոհմի հանգստարանն է եղել: Բայց այդտեղ չկա մի հատ տառ անգամ, և մամուռով ծածկված քարերը չեն ցույց տալիս, որ այստեղ հասած լինեն քանդողները: Խերխանը ուրիշ էր: Պարզ հայտնի էր, որ նա իշխան է և թագավորի թոռ: Եվ ահա զանձ գտնելու տենչանքը քարուքանդ է արել նրա գերեզմանը: Եթե չլինեք այդ արձանագրութեանը, ոչ ոք չէր գանազանի իշխանական գերեզմանը հասարակ գերեզմաններից և խեղճ իշխանը գտնե մոռացութեան փոստում անվրդով կպահեր իր ոսկորները:

Միևնույն իրողութեանը պարզ էր ինձ համար և Բագրատունի թագավորների գերեզմանոցում: Աշոտի տխուր քա-

րերի կողքին շարված են փոքրիկ փոսեր, կարծես մկներն էն ծակեր բացել: Բայց մկները չեն այդպես արել, այլ մարդը, հավիտյան շահի ծարավ, ոսկու համար ամեն տեսակ ոճիրի ընդունակ մարդը: «Թագավոր» անունը այս զարհուրելի ավերակների պատճառ է դարձել, նա է եղել, որ, երևի, ջնջել անհետացրել է Աշոտի վրա կառուցած շինութեանը, թողնելով նրանից մի կտոր պատ միայն:

Եթե մի ժամանակ այս երկնքի տակ ամեն նպատակով կատարվող ավերանքները օրենք ու իրականութեան էին, ի՞նչ ասենք մեր այժմյան ժամանակի մասին, երբ նույն բորենիական դադանութեանը դեռ ապրում է այստեղ: Այսօր Հոռոմոսի ձորի ավերակները պետք է որ ամեն մի մարդու մեջ խղճահարութեան զարթեցնեն: Այսօր վերաշինութեան դար է, այսօր ամեն մի ավերակ զգլանքի զգացում է հարուցանում զեպի ավերողները: Բայց այսօր էլ պակաս չեն ձեռքեր, որոնք միավում են ավերակների կրծքի մեջ, պրպրտում են այդ ցավազար մնացորդները՝ կողոպտելու նպատակով: Գազանը երբեք չի մեռնում մարդու մեջ:

Տեսեք, թե ինչ ողով ու շնչով են գրված այն արձանագրութեանները, որոնք այնպես գրավում են մեր ժամանակակից բորենիներին...

Աշոտի գերեզմանը, ինչպես ասացի, գտնվում է փոքրիկ եկեղեցու առաջ, մի քանի քայլ հեռու նրա հարավ-արևելյան անկյունից: Այդ եկեղեցու անունը հայտնի է՝ ս. Գևորգ: Հայտնի է նույնպես, թե ով է այն շինել: Աշոտի գերեզմանին, եկեղեցու արևելյան ճակատից, նայում է Գաղիկ Առաջին թագավորի արձանագրութեանը, որի գեղեցիկ ոճը հարկադրում է ինձ ամբողջովին արտագրել նրան այստեղ.

«Ո՞վ հռչակաւոր դու և մեծանունդ ի վկայս, սուրբ Գեորգիոս, օգնեա քարեխօսութեամբ Գաղկայ Շահանշահի շինողի զվկայարանս դայս քոյով անուանակոչութեամբ ի քոյդ յուսականալ քարեխօսութիւն, զի ընկալցի զողորմու-

1 Անիից վերադառնալուց հետո եւ կարգացի «Մշակի» մեջ մի այցելութի դառն գանգատը, որ հատկապես վերաբերվում էր այս գերեզմանատան: Թղթակիցը գրում էր, որ թագավորների գերեզմանները զրպտողների մեջ կա նույնիսկ մի քահանա...

թիւն ի Քրիստոսէ Աստուծոյ յանվախճան արքայութեանն ընդ ամենայն արդարացեալսն, ապաշաւանօք հասանել լուսոյ փառաց արդւոյն Աստուծոյ ի վերջնում գիշերին, ի ծագել մեծի և աներեկ առաօտին այցելութիւն գտանել առաջի ահաւոր բնմին և անաշառ դատաւորին, աղաչեմք»:

Պատմութիւնն ավանդում է, որ Գագիկ Շահանշահը շատ եկեղեցասեր էր և հաճախ ինքն էլ մասնակցում էր ժամերգութեան: Այսպիսի մի մարդուն վայել է այդ արձանագրութիւնը, որի մեջ այնքան ազդու շեշտերով խոսում է ջերմեանդ քրիստոնյայի զգացմունքը, որ հոգեւոր բանաստեղծութեան էլ է հասնում: Բայց պերճ խոսքերից անհամեմատ պերճախոս է, իբրեւ նույն քրիստոնյայի սրտի նվեր, այդ սիրուն եկեղեցին: Գագիկի անվան և ժամանակին արժանի մի գեղեցկութիւն: Իսկ այն ժամանակն էր, երբ ավարտվեց Անիի Մայր եկեղեցու շինութիւնը, երբ Անիում գտնվում էր ճարտարապետական մի այնպիսի հանճար, ինչպիսին էր Տրդատը:

Բայց բարեպաշտական առատ ու չքնաղ զեղումները բավական չէին լինի Գագիկ Առաջինին մեծացնելու: Նա թագավոր էր, իսկ թագավորի մասին առաջին մտածմունքը այն կարող է լինել, թե ինչպէս էր ժողովուրդը նրա ժամանակ: Այս կողմից էլ Գագիկը փառավոր անուն ունի: Նա վերջինն էր Բագրատունի մեծագործ թագավորների շարքում: Երեսուն տարի կառավարեց իր երկիրը, և նրա մեջ միանում էին մի ժողովրդի համար բարերար երկու սկզբունքները՝ բաջութիւն և աշխարհաշինութիւն: Այդ երեսնամյակի պես խաղաղ ու երջանիկ ժամանակ շատ չէր տեսել հայոց աշխարհը: Բաջութիւնը պաշտպանում էր թշնամիներից, իսկ լայն սիրտը, կառավարչական տաղանդը այդ խաղաղ ժամանակամիջոցում բարեգործական և կրթական հիմնարկութիւններ էր ստեղծում. գթութիւն և արդարութիւն էին հաստատում ամեն տեղ:

Մի այսպիսի թագավոր, այո՛, իրավունք ունի կատարյալ հույսով դիմելու երկնային զորութիւններին և իր համար երանութիւն աղերսելու: Բայց մարդկային գործեր... ինչպէս նրանք սարսափելի անգթութեամբ ծաղրում են

նվիրական զգացմունքները: Այդ թագավորի շինած եկեղեցին այսպէս ավերված ու պղծված, իսկ նրա սրտառու արձանագրութիւնը այսօր էլ չէ կարողանում կանգնեցնել ավերակներ կողոպտողներին...

Աշոտը Գագիկի հայրն էր: Հայրը իր քանդած գերեզմանից, որդին ավերակ պատի վրա դրոշմած տողերից իրար են նայում և կարծես այժմ էլ զարմանում են աշխարհի գործերի վրա...

Միայն Աշոտի գերեզմանն է երևում Ախուրյանի այս ավերակ ամիւս մարածութեան վրա: Բայց ս. Գևորգի մի ուրիշ արձանագրութիւն պարզ ասում է, որ նա թագավորների հանգստարան է: Այդ արձանագրութիւնը գտնվում է եկեղեցու արևմտյան ճակատի վրա: Արձանագրողը Հովհաննես-Սմբատ թագավորն է, Գագիկի անարժան որդին, որ հորից ժառանգել էր գրասիրութիւն և եկեղեցասիրութիւն, մոլութեան հասցնելով վախկոտութիւնը, և որի հետ տեսնվեցանք՝ Հոռոմոսի վանքում: Արձանագրութեան մեջ Հովհաննես-Սմբատն ասում է. «Ետու զիմ գեղս զՍահառունիս ի մեր հանգստարանս թագաւորաց»¹:

¹ Ով գործ է ունեցել մեր հին արձանագրութիւնների հետ, նրան շատ լավ հայտնի է, թե որքան խեղճ դրութեան մեջ է գտնվում այդ գործը մինչև այսօր: Ամեն մի արտագրող իր իմացածն է գրել. և այդ պատճառով շեք գտնի մի արձանագրութիւն, որ միանման լինի երկու արտագրողների մոտ: Սմբատ թագավորի այս արձանագրութեան առաջին տողերը այսպէս է արտագրել Ն. Սարգիսյանը. «Ի ՌՈԶԺ դրմպիադի լինելութեան արարածոց ՈՄԿ զըպիադի Աստուծոյ մարմնանայոյ և ՃԶԵ ԹԱՀ ևս Սմպատ...»: Մինչդեռ Գևորգ վարդապետը, որի մասին խոսել ենք այս աշխատութեան առաջին մասում Անին այցելողների թվի մեջ, գտել է, որ այդ տողերը լոկ անկապ տառերից են կազմված, որոնք զասավորված են այսպէս. «ՀՌՈԶԺԳԼՄ, ՄԿԳԼ, և ինՁԱ, ԹԱ: Հ:»: Ընդունելով այս տառերի խմբերը իբրեւ փակագրութիւն, պոլսեցի մի հայ, Նիկողոս Հովվյանը, սրամիտ թվական զանազան ձևերով մի երկար բացատրութիւն է հանել նրանցից («Հայաստան» լրագիր, 1851, № 50): Նա կարգում է այսպէս. «Անդ արձակած Սմբատայ թագաւորի յամի երեքտասաներորդի թագաւորութեան հայոց» և ապա գտնում է մի շարք թվականներ (հրեական, արաբական, փրկչական, հայոց), որոնք միևնույն ժամանակն են ցույց տալիս:

Հովվյանի այս բացատրութիւնը եթե ճիշտ էլ չլինի, ցույց է

Այդ խոսքերի ապացույց է և ավերակների բազմությունը այս փոքրիկ հրապարակի երեսին: Մատուռների մի ամբողջ խումբ է հղել այստեղ: Մի քանիսների հիմքերն են միայն երևում: Մեկը Աշոտի գերեզմանի ետևում է գտնվում բոլորովին քանդված. նրա կողքին, ս. Գևորգի հյուսիսային կողմում, մի փոքրիկ մատուռի հետքեր, այդպիսի հետքեր կան և հարավային կողմում: 1841 թվականին Գեորգ վարդապետը այստեղ ընդամենը հինգ փոքրիկ եկեղեցի և մատուռ է տեսել: Անշուշտ, քարակույտները, հողը իրանց տակ ուրիշ թագավորական գերեզմաններ էլ են ծածկում: Նրանց կարող են լույս աշխարհ հանել բա՛ն ու բրիչը, եթե երբևիցե նրանք գան այստեղ գործելու ոչ թե ավերման համար, այլ ավերանքները պարզելու ու լուսարանելու գիտական նպատակով:

Հողի երեսին մնացածը այն էր, ինչ մենք տեսանք՝ սև ավերակների անճոռնի կույտեր: Նրանք լուռ ու մունջ են դժբախտ ու զոգզված, բայց մի ամբողջ գիշեր կարող են խոսել սրտիդ ու զգացմունքիդ հետ: Եվ նրանց անբարբառ մրմունջը ավելի դյութիչ կդարձնե արծաթափայլ Ախուրյանը, որ իր ջրերի մեղմ աղմուկով պատում է թագավորական հանգստարանը, մոռացած որ մի ժամանակ հոյակապ էին այդ գերեզմանների հովանավոր մատուռները, իսկ այժմ նրանք անողորմ կերպով ջարդուփշուր են դարձել և սև բացվածքներով են նայում նրա արագավազ ալիքներին: Բնությունը սիրել գիտե կյանքն էլ, մահն էլ: Մարդն է, որ իր հանցանքները կուտակում է բնության գրկի մեջ և հուսահատության փոս է դարձնում այսպիսի գեղեցիկ անկյունները...

Խմբովին, դանդաղ քայլերով մենք դուրս էինք գալիս այդ փոսից, բարձրանալով Ախուրյանի ձորի այն կողմով, որի վրա գտնվում են երկու աշտարակները: Ճանապարհը

տալիս, որ նա գոնե սուր միտք և երևակայություն ունենա՝ Երկու ընթերցվածների այս ահագին տարբերությունը մի ապացույց է, որ ժամանակն է հին արձանագրությունների ճիշտ ընդօրինակման գործ սկսել գիտական հիմքերի վրա: Այժմ պետք է ընդօրինակությունը ամբողջովին հանձնել լուսանկարչական գործիքին:

Քերում է ժայռերի կուրծքը, կարծես նա դիտմամբ է դժվարացնում մեր քայլերը, կարծես այնտեղ, ստվերների մեջ թաղված ձորում, ավերակ գերեզմանատան ոգին չէ ուզում բաժանվել մեզանից, բռնում է մեր փեշերից, որ կանգնենք լսենք նրա պատմությունները: Իսկ մենք քայլ առ քայլ նվաճում ենք ժայռի փորվածքները, դուրս ցցված ուսերը, քրտնած, հեալով հասնում ենք վերևին: Այստեղ այլևս ստվեր ու մթություն չկա: Շիրակի դաշտերն ու բլուրները ողողված են կաթնային լուսավորությամբ: Լուսինը բավական բարձրացել է հորիզոնից, և աղոտ ու խորհրդավոր հեռակներն են նայում մեզ նրա թագավորության բոլոր կողմերից...

Կառքերը սպասում էին մեզ զույգ աշտարակների մոտ: Դարձյալ սրանք, այս կարմիր աշտարակները: Կանգնած են դաշտի վրա, լուռ ու կիսակործան, իբրև մի հանելուկ, որ տանջում է այցելուին իբրև մութ անցյալից մնացած մի վիթխարի հարցական՝ ի՞նչ եմ ես:

Շատերն են պատասխան որոնել և գտել... իրանց համար: Մեկն ասում է, թե դա հաղթական կամար էր, մյուսը՝ ղինվորական դիտանոց կարծում, մի դիտանոց, որ պիտի օր ու գիշեր հսկեր այս կողմերից դեպի Շիրակ տանող միակ մեծ ճանապարհի վրա: Իսկ ժողովուրդը ուրիշ բան է պատմում: Նրբ թագավորը Անիից գնում էր Հոռոմոս, — ասում են, — այստեղ գտնվող պահապանները բարձրանում էին աշտարակների գլուխը, հնչեցնում էին զանգակները, որպեսզի վանքում իմանան և սլատրաստվեն:

Այսքան և էլ ավելի բացատրություններ գտել են, բայց զույգ աշտարակները չեն դադարում իրանց պատառոտված մարմնով մեծ հարցական լինելուց: Նրանք ծաղրում են այդ բոլոր պատասխանները: Նրանք լեզուն շունեն, գիր ու արձանագրություն չունեն, բայց գիտեն մի առանձին տպավորություն գործել, որ համարյա հավատացնում է ձեզ, որ քաջատրություններից ոչ մեկն էլ ճիշտ չէ:

Ո՛չ մեկը: Բայց ի՞նչ են դրանք:

Ռուս ճանապարհորդ Մուրավյովը, մի մութ երեկո կանգ առնելով երկու աշտարակների մոտ, այս հարցն է տվել իրան

և գտել է, որ այս կամարների վրա կարելի է գրել Դանթեի
«Աստվածային կատակերգության» հետևյալ շորս տողերը.


Ինձանով է անցնում ճանապարհը դեպի ցավալից
քաղաքը,
Ինձանով է անցնում ճանապարհը դեպի հավիտե-
նական վշտերը,
Ինձանով է անցնում ճանապարհը դեպի անհետա-
ցած մարդկանց ազգը,
Թուր հույսերդ կտրի՛ր դու, որ անցնում ես
ինձանով...

Այո՛, հազար անգամ իրավունք ունի Մուրավյովը.
Դանթեի հանձարը հրաշալի կերպով բացատրել է այսպիսի
մի անգիր ու անհիշատակ շինության էությունը:

Ի՞նչ են եղել այս զույգ աշտարակները, Դա հանելուկ է:
Իսկ ի՞նչ են նրանք այժմ: Մի անգամ էլ կարդացե՛ք
Դանթեի խոսքերը...



ԱՔԵՏԱԾԱԾՆԵՐԻ ԲԱՂԱԲԸ



Անի քաղաքի բնիկների տնային կառուցվածքի փոփոխությունը

Ա.

Դարձյալ դաշտ, դարձյալ միանման ճանապարհ...

Մի ժամի չափ վազում են մեր ձիաները, և մենք դեռ չենք տեսնում մեր ճանապարհորդության վերջին կետը: Խորին լռություն է տիրում: Այս կողմից Շիրակի գիշերը ոչնչով չէ զանազանվում ցերեկից: Միշտ միանման մեղմ աղմուկ են հանում բոժոժները, կառապանը այլևս երբեք հետ չէ նայում, նա ինքն էլ մի տեսակ քնաբեր տրամադրության մեջ է: Արդեն շատ զով է լեռնադաշտի օդը: Նա առանձնապես հաճելի է դարձնում հանգստությունը օրվա երերումներից, չափափոցներից հետո...

Ճանապարհն էլ քնացնող է: Համեմատաբար հարթ է նա, կառքը անզաղար քարերին զարնվող նավակի նման չէ: Բայց և այդպես՝ ի՞նչ համեմատություն ցերեկվա հետ: Այժմ երկինքը կաթնեղեն լույսերի համատարած տարափի հետ քնքշություն, խորհրդավորություն շատ է թափում երկրի վրա: Կարելի է կծկվել կառքի մի անկյունում, լուռ անձնատուր լինել խոհերիդ, երևակայությանդ, և այդ տրամադրությանը իր ամբողջ կարողությամբ ուժ կտա գիշերային համեստ լուսատուն: Բայց և այնպես, լուսնկա գիշերը շուտ է սկսում ճնշել: Գույներ չկան, հեռավորություններ չկան, դաշտը մի բուռի չափ տարածության մեջ է ամփոփված: Ամեն ինչ ցած ու փոքր է այս հարթավայր շրջակայքում. ոչինչ խոշոր, ոչինչ խիստ կերպով աչքի ընկնող բան, որ կարողանար հաղթել գիշերային աղոտ լուսավորությունը և փոքր ինչ հեռվից գրավել ուշադրությունդ: Այդպես կարող էր անել մի որևէ լեռնային խրոխտ բարձրություն, մի մեծ անտառ, բայց Շիրակը չունի այդպիսի բաներ...

Շուրջդ, հողի վրա, շգտնելով ուշադրությամբ գերող առարկա, երկար ճանապարհի ձանձրույթը աշխատում ես փարատել երկինքը դիտելով: Իսկ այնտեղ ի՞նչ կա, բացի բոլորակ լուսնից, որ այնպես գեղեցիկ կերպով շոյում է աչքդ ու զգացմունքդ իր նաղելի դեմքով, իր պաղ շողերով:

Ես շարունակ նրան էի նայում, բանաստեղծների և ոչ-բանաստեղծների սիրած գիշերային թագուհուն: Մենք կարծես իրար հանդիպելու էինք գնում. նա դեպի մեզ, մենք դեպի նրան: Եվ հանկարծ... նրա առատ լույսերի մեջ, երկար ու երկար, ձգվեց մի բարձր բան, որ մեզ նայում էր իր սև, չլուսավորված կողմով: Կարծես գետնից բուսած կլոթ աշտարակների զծագրությունները: Լուսնի լույսով նրանք պարզ նկարված էին բարձրում, երկնքի բաց-կապույտ գույներին մեջ:

Առաջին վայրկյանում տպավորությունն այնպես էր, որ այդ հզոր պարիսպները ոչինչ վնաս չեն կրել, որ նրանք այժմ էլ ամուր ու ուժեղ պաշտպանում են մի բան: Մի՞թե Անին այս աստիճան լավ է դիմացել ճակատագրի հարվածներին:

Ձեռն հավատում. Գիտես, որ ոչ ոք և ոչինչ չէ խնայել այս քաղաքը: Բայց պատրանքը, կրկնում եմ, կա, և նա մի րոպե այնքան ուժեղ է՝ այն աղոտ լույսերի և թանձր ստվերների մեջ, որ հազի՞րում է քեզ, խաբում է: Մոռանում ես, որ առջևդ միայն ավերակի սանձարձակ շափազանցություններ ու հրեշավոր բավիղներ պիտի տեսնես. մոռանում ես կարդացածդ, մոռանում ես ողբերը, լուսանկար պատկերները: Եվ թվում է, թե այդ պարիսպների տակ, այդ պարիսպների ետևում դեռ կյանք է պլպլում, դեռ շարժվում են պահապանները, և ահա այն մեծ դռնից, դեպի ուր դիմում ենք, դուրս կգան մարդիկ, որոնց հանձնված է քաղաքի ապահովությունը և կսկսեն հարցուփորձ. ո՞վ ենք, ի՞նչ ենք...

Ահա հասանք, ահա մեր կառքը առաջին անգամ ցավոտ ցնցումով ընդհարվեց դրսի դռան թափված քարերին: Բայց պատրանքը դեռ կա, չէ հեռացել, դեռ կպած է սրտին մի քանի թելերով: Այդ թելերից մեկն է այն փոքրիկ, շատ

փոքրիկ առում, որ մեզ չեա մանում է գոնով: Ո՛ր է գնում ես, ո՞ւմ համար...

Երկու պատերի մեջ ենք: Անիի արտաքին և ներքին պարիսպները: Այդտեղ ահա ցնդում է ինձ հափշտակած պատրանքը: Այդտեղ դիպված է այն սարսափը, որ այնքան զար այս տեղերի միակ պահապանն է եղել: Այդտեղ զգում ես, որ մտել ես գերեզմանի մեջ և հավիտենականությունը իր հաճվոր լռությամբ գրկել է քեզ:

Գծվածի պես ցատկոտում է մեր կառքը, պարում է. քարից քար զարնվելով: Նա խուլ աղմուկ է բարձրացնում երկու պատերի նեղ արանքում: Բայց և այս աղմուկը ոչինչ է. նրան կլանում, ոչնչացնում է հսկայական գերեզմանի լռությունը: Չկա մի վայրկյան, որ մոռացնել տա նրան. չկա մի վայրկյան, երբ նրանով խիտ առ խիտ լցված չէ այս սև, քարքարոտ մուտքը:

Լուսինը պատերի ետևումն է. Հսկաները թանձր ստվեր են արձակում և զրանով են ուղում ծածկել իրանց մարմնի վերքերը, զրանով են ուղում ծածկել իրականությունը և երևալ աչքիդ հզոր ու հպարտ: Բայց իզո՞ւր: Լուսնի լույսը մատնում է նրանց: Սպիտակ, փայլուն շերտեր են երևում նրանց թանձր ու սև մարմինների վրա: Եվ տեսն'ք, թե ի՞նչ անճոռնի ծակեր են, որոնց միջով լույսը ցույց է տալիս իրան: Տեսն'ք, ինչ պատռվածքներ են կերել, կրծոտել այդ պատերն ու աշտարակները:

Ո՛չ: Խավարն էլ անզոր է ծածկելու հին, ալևոր ավերմունքը: Անողորմ կերպով կրծոտված են այդ ամբողջությունները: Թեև այդքան զգաղված, ծեր, ուժալիկ, բայց նրանք դեռ ազդո՞ւ են: Մի զառամյալ, փոշիացած հասակ, որ տարածված է գերեզմանի ափին, բայց,—զարմանա՞լի բան,— շարունակ խոսում է իր երիտասարդության մասին:

Այստեղ մահն է տիրում: Այստեղ ոչ ոք և ոչինչ չէ կարող դիմանալ և դիմադրել մահի իշխանության: Բայց այստեղ ամեն ինչ մահի զրկում, գերեզմանի անդունդից, խոսում է կյանքի մասին:

Մի կյանք, որ վաղուց, շատ վաղուց ջնջված, սրբված է այս տեղերից:

Վերջապես մենք քաղաք մտանք:

Ավագ դուռը երկու հսկա աշտարակների մեջ սեղմված մի ցածրիկ կամար է, անճոռնի կերպով կրծոտված: Բայց նա առաջին գեղեցկությունն է, որ ավերակների կույտերի միջից գալիս է ուղևորին շենքով-շնորհքով Անի մտցնելու: Գեղեցիկ է նա ոչ այնքան իր շինությունը: Նրա գեղեցկությունը ավելի այն տեսարանն է, որ նա ցույց է տալիս ուղևորին: Ամբողջ Անին միանգամից առջևդ է:

Խավարից դեպի լույս էինք գնում: Զգիտեմ ինչու, երկու պատերի միջով անցած մեր կարճ, բայց լուռ, գերեզմանական ճանապարհից հետո, լուսինը ինձ թվաց կորցրած բախտ, որ գտնվում է հանկարծ: Եվ երբ Ավագ դռան կամարի տակ նրա պաղ, արծաթե շողերը ընկան ինձ վրա, ես առաջին վայրկյանում մոռացա ամեն ինչ և գիշերային լուսատուն ողջունեցի, արտասանելով Ալիշանի տողերը.

Ո՛ր գաս իմ լուսնակ հեղիկ ու հանդարտ
Համասփիռ լուսովդ ի լեռ, ձոր և արտ...

Արդյոք գերեզմանային խավա՞րն էր այդպես սիրելի դարձնում լուսինը, թե այն տեսարանը, որը մեր աչքերի առջև պարզելու համար նա թափում էր իր անամպ ճակատի բոլոր լույսերը... Զգիտեմ, երևի մեկն էլ, մյուսն էլ...

Ավագ դուռը հյուսիսային կողմից է մտցնում քաղաքը: Դեպի հարավ մեր առաջ տարածված էր մի երկար տափարակ, որ վերջանում էր մի բարձր ու մեծ բլուրով: Տափարակը Անին է, բարձր բլուրը՝ նրա Միջնաբերդը: «Անին շեն, աշխարհն ավեր, աշխարհը շեն, Անին ավեր», — հիշում եմ ես հին ժողովրդական ասացվածքը: «Անին շեն, աշխարհն ավեր» ասացվածքի հին մասն է, հեռու-հեռու դարերի ետևում թաքնված: Իսկ երկրորդ մասը այսօրվա իրականությունն է, որին մենք ականատես ենք:


Շեն աշխարհի մեջ ավեր Անին լուսնի լույսով մի լուռ հարթ դաշտ էր: Զանազան կողմերում այդ դաշտի վրա, գի-

շերային արծաթագոծ խորհրդավորության մեջ, բարձրացած են պատեր, աշտարակներ: Նրանք հանկարծ են խոսում, ամենքը միասին, վտիտ, ծովաված, մաշված ուրվականների պես: Ուստի առաջին ընդհանրությամբ համարյա ոչինչ չես հասկանում: Ավերակների ժխոր է, չգիտես ո՛ւր նայես, ո՛ւմ նվիրես ուշադրությունդ: Տե՛ս, մինչև անգամ Միջնաբերդի հեռավոր բարձունքներից ինչ-որ կույտեր են նայում: Եվ անհնարին էլ է նայել ամեն մեկին, ճանաչել ամեն մեկը առանձին-առանձին: Զգայուն բանաստեղծները ավերակներ երգում են լուսնի լույսով: Ես հասկանում եմ, թե ինչու: Ցերեկվա լուսավորությունը չափազանց պայծառ ու ուժեղ է, չափազանց պարզ իրականություն է հաղորդում ավերակներին, աչք է խոթում ապականությունը, քանդվածի զգվանք ազդող անհեթեթությունները:


Այդպես չէ գիշերային լուսավորությունը: Մեղմ, աղոտ, երազուն, նա շակում է աչք ծակող անկարգությունները, անորոշության քող է գցում տարածության վրա, արծաթագոծում է սև-սև պատվածքներն անգամ: Վշտոտ, խորհուն կերպարանք է տալիս ամեն ինչին. և թվում է թե ավերակները գիշեր ժամանակ սկսում են ապրել մի ինչ-որ սուվերային, պաղ, խորհրդավոր կյանքով: Այդ ժամանակ լավ է, համիշտակող է ընդհանուր տեսարանը, որ, սակայն, չէ կարող երկար ժամանակ բավարարություն տալ նայողին: Զգում ես մանրամասնություններ իմանալու, իսկականն ըմբռնելու կարիքը, զգում ես ցերեկվա լույսի առավելությունը:

Եվ մենք բավականանում ենք այդ ընդհանուր տպավորությամբ: Մեր կառքերը դանդաղ շարժվում են քարքարոտների միջով, և հետզհետե մեր մոտով անցնում են ավերակները: Ահա փլված Աշտարակը: Ահա երևաց և Անիի թագն ու պարծանքը՝ Մայր եկեղեցին, որ նայում է մեզ իր չլուսավորված կողմով: Ի՜նչ սիրուն հասակ, բայց ինչպե՞ս ցավեցնող է նրա կտուրին երևացող կլոր քանդվածը, որ գմբեթի տեղն է ցույց տալիս:

Մայր եկեղեցու մոտ մի պարսպապատ սպիտակ շինություն է երևում: Միակ շինությունը անհայտացածների այս քաղաքում, ուր մարդկային բնականություն կա: Դա հյուրա-



Հյուսիսային պարիսպները (ճեպվից, կարալիկե եկեղեցին և Միլենաբերդը)



Անիի պարիսպները, շտխատուն և ժուաբ

տունն է, որ, ինչպես իր տեղում ասացի, շինել է Ալեքսանդրապոլի հոգաբարձությունը 60-ական թվականների սկզբում:

Շատ էլ ընդարձակ չէ այդ շինությունը: Գոնե մեր մեծ խումբը ծայրեծայր լցրեց մեծ սենյակը և նրա կողքին գտնվող երկու փոքրիկ սենյակները: Բայց այդ բանի համար էլ շնորհակալություն: Մի փոքրիկ, հասարակ գործով գոնե մենք կարողացել ենք ցույց տալ, որ միանգամայն անզգա ու անպարտաճանաչ չենք: Երկար ճանապարհից հոգնած ուղևորը որպիսի հաճությամբ մտնում է այդ օթեանը, ուր կարող է հանգստանալ, կազդուրվել: Եվ այս ո՛րտեղ: Այնտեղ, ուր ճարտարապետի, ռազմագետի հանձարը վաղուց է բնության և մարդու ծաղր ու խաղալիք դարձել, ուր հզոր կամարներն ու թանձր պարիսպները պարտված տրորված են և քար քարի վրա չի ուզում մնալ, ուր օձերը, մողեսները, կարիճներն ու այլ թունավոր միջատներն են բնակչություն կազմում:

Եվ հյուրատունը բավական շեն ու բարեկարգ է այս մեռելության աշխարհում: Մեզ ընդունում է Անիի վանահայր Միքայիլ վարդապետ Տեր-Մինասյանը, որ միանգամից մեր ամենքիս համակրանքն է գրավում: Աղքատ, միջոցներից զուրկ է այդ վանահայրությունը: Բայց վարդապետը մտածում է ավերակների մասին, մտածում է և այցելուների մասին: Ինչ կարողացել է հավաքել իբրև նվեր, գործ է դրել հարմարություններ ստեղծելու համար: Եվ այցելուն գտնում է այդտեղ այն ամենը, ինչ իրան հարկավոր է, բացի, իհարկե, ուտելիքից. սամովար, սփռոց, ամաններ, լամպաներ: Իր փոքրիկ տնտեսությունից վարդապետը հաճությամբ տալիս է կաթ, մածուն: Մի շատ սիրալիր, շատ ուշադիր մարդ է: Անին իսկ որ այգալիսի մի հոգաբարձուի է կարոտ:

Մնացածը լրացրին խալաթյան երկու տիկիներին կանխատես պատրաստությունները, որ բերել էին իրանց հետ Ալեքսանդրապոլից: Նրանք մեզ ընթրիք տվին, որ կատարյալ շքեղություն կարելի էր համարել այստեղ, այս ավեր ու հիմնահատակ քաղաքում:

Ավելի դժվար էր գիշերելու հարցը: Ցերեկով Աննի մեջ

արեւը խաղում է, բայց գիշերները լեռնազաշտի օդը մրսեցնելու չափ զով է: Ամենքս շունեինք տաք վերմակներ: Պետք էր «յուլա գնալ»: Եվ մենք, տղամարդիկս, քաշվեցինք երկու փոքրիկ սենյակները, տեղավորվեցինք ինչպես հնարավոր էր:

Պառկեցինք: Խոսում էին, որ ֆալանգաները այսպիսի ժամանակ են դուրս գալիս որսի: Ահ զգում էինք, բայց շուտ մոռացանք: Կոտրած պատուհանից ներս էր փչում Աննի զով քամին: Պետք է շուտ քնել՝ առավոտը շատ շուտ վեր կենալու համար: Վճռել էինք ժամի հինգին պատրաստ լինել և հենց այդ ժամից էլ սկսել մեր պտույտը, տեսնել ամեն ինչ:

Քունը վաստակած ուղևորի ամենալավ բարեկամն է: Եվ մեր այդ բարեկամը շուշացավ. նա մոռացնել էր տալիս ֆալանգաներն ու կարիճները, մոռացնել տվեց և պատուհանի քամին: Միայն մի բան համառությամբ նստած էր մտքիս մեջ՝ այս այցելությունը: Եվ քնի զրկում հանդարտ, մի ինչ-որ խորությունից, զուլիս է բարձրացնում պատանկությունս հիշատակը, բերելով իր հետ այժմ մոռացված, բայց մի ժամանակ ամեն մի բերանից հնչող երգը: Հիշո՞ւմ եք.

Ա՛յ հայ տղա, խղճա՛ ինձի,

Տե՛ս թե քո Անին ինչպես է...

Գ

Եվ մենք տեսանք, թե ինչպես է նա...

Առավոտ էր: Արևը դեռ նոր էր նոսր ու թույլ լույսեր թափում Ալաջայի բարձր լանջերի վրա: Ամեն ինչ խոստանում էր մի պարզ, անամպ օր:


Հյուրատան բակում, երկար սեղանի վրա, մեզ սպասում էին թեյի լիբը բաժակները: Նրանք հավաքում են մեր ամբողջ խումբը սեղանի շուրջը, և ավերակների մշտալուռ

առավոտը աղմկվում է կենդանի, աշխույժ խոսք ու զրույց-ներից: Ամեն մեկս շտապում էինք նախ և առաջ մեր անձին, մեր հսին խնկարկել:

Ամենքս բաղաբացիներ էինք, հայտնի հարմարությունների սովորած, հայտնի պայմաններով մեր կյանքը շափած ու ձևած: Շարունի մեղկ ստրուկներ: Անիի այս տանը մի գիշեր, միայն մի հատ գիշեր տարիների, ո՞վ գիտե, ի՞նչ երկար շարքի մեջ խանգարել էր մեր սովորությունները, մեր շափն ու ձևը: Եվ այդ գիշերը ամեն մեկիս թվում էր մի ահագին զեպք, այնքան տակնուվրա էր արել մեր հասկացողություններն ու զգացմունքները, որ մեզանից ամեն մեկը պարտք էր համարում բավական մանրամասն զեկուցում տալ ընկերներին իր կրածների և զգացածների մասին: Այդ բոլոր խոսք ու զրույցները միայն այն էին վկայում, որ քաղաքը մարդուն թուլացնում է, քնքշացնում է: Քաղաքը բնության աղճատումն է. ուրիշ կերպ, կարծես, չէ կարող քաղաքակրթություն լինել:

Մեզ կրթողը բնությունը չէ, այս պատճառով ենք այսօրան մեղկ ու փխրուն: Իսկ բնությունը — ահա նա այստեղ է իր կուսական, միշտ թարմ ու հաղթ ուժի մեջ: Որքա՞ն ժպտուն է Շիրակի երկնքի կապուտակությունը: Նրա տակ, մայր հողի գրկում և երեսին, բոլոր ուժերը լարած՝ կյանքն է զործում հեալով: Միայն այստեղ, մեր շուրջը, մի փոքրիկ տարածության վրա, ամեն ինչ դադրած է, մեռնող է, անպտուղ ու ժառաղատություն է քարոզում: Այս պատճառով էլ բնությունը սիրում է կոնտրաստներ, հակադրություններ փռել այսպիսի տեղերում: Նա՛ ժպիտ, ավերակը՝ սև հուսահատություն: Նա՛ կենդանություն, սա՛ մեռելություն: Նա ա՛մեն կողմից կանչում է՝ «վա՛յ կորածին», սա ողբում է իբրև անհույս, հավիտենական կորածություն...

Ահա մեր առջև, առավոտյան քնքույշ լույսերի, անմահ հական ժպիտների, թարմության մեջ բարձրացրել է իր սգավոր, կրծոտված մարմինը մի մեծ, մի չքնաղ ավերակ, երկնքի ու երկրի տոներին հակադրելով մի սոսկալի անհույս մեռելություն: Մայր եկեղեցին է: Նա մեր առջև է, բաժանված մեզանից քարե ցածրիկ պատով: Ամբողջ մնացած մի



Կաթողիկե եկեղեցին (կառուցված 1001 թվականին, Տրդատ հարստության ձեռքով)

շինություն, ամբողջ, իհարկե, համեմատական հասկացողությամբ, ավերակային լիզվով: Եվ դա բախտ է, բայց որքան թշվառ բախտ: Այստեղից երևում են նրա երկու անկյունները: Դրանցից մեկը, որ նայում է արևմուտքին, ճեղքված է վերևից, կտուրից, մինչև համարյա կեսը: Մի զարհուրելի վերք այդ հին, կիսամաշ մարմնի վրա: Կարծես մի ժամանակ մի ինչ-որ ահռելի սուր զենք բարձրացել է այդ կողմի վրա և մի հարվածով պատռել է գեղեցիկ հյուսվածքներով զարդարված պատը: Շատ ժամանակ է, ինչ Մայր եկեղեցին կրում է իր վրա այդ վերքը: Երևի ճեղքը վերևում լայն է, այնտեղից քարեր շատ են թափվել: Թվում է, թե այդ վիրավոր անկյունը այլևս չէ կարողանում կապ պահպանել երկու պատերի մեջ և նրանցից մեկը կարծես քիչ առաջ թեքված լինի:

Նայողը տխրություն մի համոզվում է, որ Մայր եկեղեցու փլումը այդտեղից պիտի սկսվի: Ահադին ճեղքը հավիտյան այդպես անպատիժ շախտի թողնե շինությունը: Մի թեթև պատահականություն կարող է մի ժամում աղետ բերել աղետների քաղաքի այս հրաշագեղ թագուհու գլխին: Բավական է, որ պատի այդ մասը փլվի, եկեղեցին դրանից հետո կսկսե մաս-մաս թափվել: Եվ այնուհետև ի՞նչ կմնա Անիում...

Երբ 977 թվականին Բագրատունիների զահր բարձրացավ Սմբատ Երկրորդը, Անին դեռ փոքրիկ էր և բոլորովին պատանի մայրաքաղաք: Նրա հայր Աշոտ Ողորմածն էր առաջին թագավորը, որ օծվեց Անիում: Նույն Աշոտը պարիսպ քաշեց Միջնաբերդի հյուսիսային ստորոտի մոտով: Այդ պարիսպն այժմ է հայտնվել՝ պրոֆեսոր Մառի պեղումների շնորհիվ: Նա ցույց է տալիս, թե որքան փոքր էր Անին իր առաջին թագավորի ժամանակ:

Սմբատ Երկրորդը ամենախրոխտ Բագրատունիներից մեկն էր և մեր պատմության մեջ ստացել է «Տիեզերակալ» պատվանունը, որ եթե ճիշտ չէ բառացի մտքով, գոնե ցույց է տալիս, որ քաջ ու անվահեր մի թագավոր էր դա: Մեռավ մեր Տիեզերակալը 13 տարի թագավորելուց հետո: Եվ այդ ժամանակը նա այնքան պատերազմների մեջ չանցկացրեց,

որքան շինությունների մեջ: Անին զարդարելու հիմքը Սմբատը դրեց: Եվ իր հաջորդին թողեց մի ամրացրած, մեծացրած քաղաք, որ այնուհետև սկսեց հիացնել ամենքին:

Իր հոր պարիսպը բավարար չհամարելով, Սմբատը նրանից «մի նետրնկեց հեռու», ինչպես ասում է Մատթեոս Ուռայեցին, կառուցեց նոր բարձր ու պինդ պարիսպ, որ սկսվելով Ախուրյանի ափից, մի լայն շրջան էր տալիս դեպի հյուսիս, արևմուտք և համարյա երեք կողմից պատում էր քաղաքը: Այդ պարիսպն է, որ դեռ այսօր էլ պահում է իր հզոր մնացորդները և որ երեկ այնպես աշխատում էր մթության քողով վարագուրել իր ավերանքները:

Ութ տարի տևեց պարիսպի շինությունը: Այնուհետև Սմբատը իր նոր բացած քաղաքամասում դրեց Մայր եկեղեցու հիմքը: Թագավորական ճոխությունը բավական չէր լինի մեծ և երջանիկ քաղաքին վայելուչ մի զարդ կառուցանելու համար, եթե երկրում պատրաստ չլինեին և մեծ տաղանդը: Պատմությունը, բարեբախտաբար, պահել է այդ տաղանդի անունը՝ քաջագործ Տրդատ, որի մտքի և ստեղծագործական շքեղ ընդունակության արդյունքն է Մայր եկեղեցին: Տրդատը իրան ցույց էր տվել, խաչիկ կաթողիկոսի ծախսով մի հոյակապ եկեղեցի կառուցանելով Արգինայում: Սմբատը նրան հաճնեց իր եկեղեցու շինությունը, բայց հենց շինության սկզբում էլ մեռավ: Թե ինչ եղավ թագավորի մահից հետո, պատմում է եկեղեցու հարավային պատի վրա փորագրված արձանագրությունը. նա ասում է, որ Սմբատի հիմնադրած եկեղեցին շինել վերջացրել է նրա եղբայր և հաջորդ Գագիկ Շահանշահի ամուսինը, Կատրանիտե թագուհին, որ Սյունյաց թագավոր Վասակի աղջիկն էր: Շինությունը վերջացել է 1001 թվականին և, այնուհետև, հայոց թագուհին սկսել է զարդարել իր եկեղեցին:

Նայելով այդ թվերին, Մայր եկեղեցին շինվել է քսան տարվա ընթացքում: Քսան տարի Տրդատ ճարտարապետի տաղանդը գործել է այդ քարերի վրա, հղկել է, զարդարել, շարել է, բարձրացրել՝ դարեր հիացնելու համար: Բայց քսան տարում միայն պատերն են վերջացել: Կատրանիտե թագուհին Տրդատի ձեռակերտով չէ բավականացել, և Ասողիկը

պատմում է, թե ինչպես գեղեցիկ կերպով զարգարված էր եկեղեցին ներսից:

Բազրատունի թագուհիները շինարարական մեծագործությունների մեջ էին ցույց տալիս իրանց սրտի և քսակի ճոխությունը: Կատրանիտեի սկեսուր Խոսրովանուշ թագուհին, Աշոտ Ողորմածի ամուսինը, շինեց Հաղբատի և Սանահնի հռչակավոր վանքերը, որոնք կան մինչև այժմ: Եվ սկեսուրը ավելի բախտավոր էր իր հարսից: Նրա եկեղեցիների մեջ այժմ էլ աղոթում է հայը, մինչդեռ հարսի չքնաղ կերտվածքը ամայի է, կիսաքանդ, և դողալով սպասում է վերջնական կործանման, որ կարող է գալ ամեն օր:

Արևմտյան մուտքի մեջ, Տրդատի հրաշակերտած կամարի տակ, կախված է մի փայտե դուռ, խեղճ ու հասարակ մի բան, նոր դուրս եկած այս կողմերի վարպետի ուրազ տակից: Միակ բանը, որ արված է այդ փառահեղ ավերակները պահպանելու համար: Դա մի անձաշակ կարկատան է, որ ավելի ևս ողբալի է դարձնում հին, սիրուն մուտքի տեսքը: Կարծեմ մեր դերասաններն են շինել տվել այդ տախտակե դուռը: Նրանք կամեցել են փակված եկեղեցի դարձնել Անիի այս մեծ սրբավայրը: Եվ չէ կարելի չգովել այդ միտքը: Անդուռ, անկողպեք եկեղեցին բաց է ամեն բանի և ամեն ինչի առաջ. իսկ այսպես՝ նա պաշտպանվող, տեղ ունեցող ավերակի է նման, որ էլի մի բան է:

Այդ դռնով էլ մեզ ներս է ընդունում Կատրանիտեի շինությունը: Տպավորությունը միևնույն է մեր ամբողջ խմբի համար. ոչինչ ձայն, ոչ իսկ շշուկ չէ լսվում: Ամեն մեկս խորին երկյուղածությամբ, շունչը պահելով, համբ, անձայն քայլերով ենք առաջանում կամարների տակ: Դեռ աչքն է պահանջատեր: Դեռ պետք է տեսնել, նայել այս ու այն կողմին, մի հասկացողություն, մի ամբողջացրած միտք կազմելու համար: Եվ լուռ ենք, շարժվում ենք կամացուկ:

Մենք այսպես ենք, իսկ այստեղ, օրվա այս կանուխ ժամին, մի ամբողջ ժամերգություն կա: Բայց ժամերգությունը Մայր եկեղեցու միաբանությունը չէ կատարում, այլ ծտերի բազմությունը, որ շար է ընկել փլված գմբեթի լայն շրջանակի վրա: Այդտեղից էլ, այդ մեծ, կլոր բացվածքից.

առատ ներս է թափվում երկնքի լույսը: Սրջանի՜կ փոքրիկներ, Նրանց պետք է կատարել իրանց առավոտյան օրհներգը, ձոնված արթնացող բնության, և շա՛տ են մտածում, թե իրանց ուրախ, անընդհատ ժլծվոցների տեղը թանձր սուգի մի յթևան է....

Ես ասացի, որ միայն փայտե դուռն է դարավոր ավերակի վրա երևացող հոգածության առարկան: Բայց պետք է ավելացնեմ և այն, որ երբ Անին անցավ ուսաց ձեռքը, Մայր եկեղեցու ներսը լիքն էր քարերով: Մեծ գմբեթը, ինչպես կարծում են, փլվել է 1830-ական թվականներին և, փլվելով, նա ամբողջովին ներս է թափվել, ծածկելով եկեղեցու հատակը քարակույտերով: Ալեքսանդրապոլի հոգաբարձության առաջին գործերից մեկն եղավ մաքրել հատակը: Եվ այն ժամանակից Մայր եկեղեցու ներսում չեն երեվում քարեր:

Կա և մի այլ գործ, որ կատարվել է ներկա վանահոր օրով: Սեղանի վրա դրված են Աստվածածնի պատկերը, մի ծածկոց, մի մեծ ժամագիրք: Տխուր ու վշտահար է Տիրամայրը: Այսպես է նրան ներկայացնում եկեղեցին ամեն տեղ: Բայց այստեղ, այս փառահեղ ավերակների մեջ, ո՞րքան խտացած, ո՞րքան ազդու, մորմոքող է երևում այդ անարվեստ պատկերից թափվող վիշտը: Շուրջը տկլորություն, ճաքճաքած քարեր, փշրած սյուներ, կործանման տազնապը տոգորել է ամբողջ մթնոլորտը. հույսի և ո՛չ մի չող: Ի՜նչ ահավոր մոռացվածություն... Եվ այդտեղ այդ վշտոտ կինը: Նա ոչ ոքին չէ նայում: Բայց նրան պաշտում է վշտոտ աշխարհը: Նրան է նվիրել Կատրանիտեն իր եկեղեցին, երբ սա Անիի ամենաբախտավոր օրերի վկա բարձրացավ իր վեհափառ սյուների վրա: Նրան է նվիրված սրբավայրը և այժմ, երբ ամայություն է չորս կողմը, և այս մեծ քաղաքի մեջ մի հատ կենդանի մարդ կա, մի վարդապետ...

Նստած Աստվածամոր պատկերի առաջ, դասերի աստիճանի վրա, մենք նայում էինք բարձր, մեզ իր լայն ու գեղեցիկ զրկի մեջ առած շինության: Ես չեմ նկարագրի նրա մանրամասնությունները, դա ավելորդ էլ կլինի: Գիտեմ իմ սեփական փորձով: Անիի ավերակների այս թագուհին միշտ


անփութիւն հիացմունք, սքանչացում է պատճառել բոլոր այցելուներին. նկարագրել են շատերը, օտար թե հայ, կարգացել են շատ ու շատ բան: Բայց իսկական հասկացողութիւն կազմեցի միայն այն ժամանակ, երբ ներս մտա հռչակավոր եկեղեցու ջարդված դռներով: Այդտեղ, առաջին վայրկյաններից հետո, երբ միտքը, զգացմունքը սկսեցին իրար հաշիվ տալ, առաջին ճշմարտութիւնն այն էր ինձ համար, որ մարդկային խոսքը, որքան էլ պերճ ու զարդարուն լինի նա, շատ տկար է այն ահագին հարցի դիմաց, որ այստեղ դրվում է նրա առաջ:

Նվ ի՞նչ անե խոսքը, երբ այնպիսի հավատարիմ և ճիշտ ընդօրինակող, ինչպիսին է լուսանկարը, չէ կարողանում հաղթել այս կամարների աննման թոխքները, նրանց տակ գոյացած լույսերն ու ստվերները, չէ կարողանում բռնել այդ բոլորը միանգամից, ամփոփել մի ընդհանուր պատկերի մեջ: Հանգուցյալ Քյուրքչյանն անգամ, շնայած որ իր գործի կատարյալ վարպետն էր, չէ կարողացել այնպես լուսանկարել Մայր եկեղեցու ներսը, որ իրականին փոքրիշատե նմանվող ապավորութիւն տար:

Նա այստեղ միայն իմացա, որ խոսքը, պատկերը ոչինչ են:

Ամեն կողմից, յուրաքանչյուր խոռոչից, յուրաքանչյուր գծից, ավելի ճիշտ՝ յուրաքանչյուր կտոր քարից նայում է այս զարմանալի տաճարի շինողը: Տրդատը անմահ է, քանի որ այստեղ քար քարի վրա կմնա: Նա արտահայտել է իր գաղափարը մի հիացնող համաչափությամբ: Չկա մի բան, որ խանգարե այդ տպավորութիւնը, չկա մի տեղ, ուր սխալ և անփութ եղած լինի ճարտարապետը: Հիմքից մինչև վերև՝ միևնույնը, ստեղծագործութեան միանման հոսանքը, միալար թափը, առանց թուլանալու, առանց պառավելու: Քսան տարվա աշխատանք միանման աշխույժով, ոգևորությամբ:

Ստեղծագործողը շլացուցիչ զարդերի մեջ չէ ուզեցել արտահայտել իր գաղափարը, — վսեմութեան, վեհութեան գաղափարը: Զարմանալի պարզութիւն է տիրում այս շորս պատերի, այս բազմաթիւ կամարների վրա: Վեհութիւնը հենց այդ պարզութեան մեջ է: Ճարտարապետը հրաշալի



Կարողիկե եկեղեցու ավագ խորանը

պերպով կարողացել է նվաճել գեղեցկության երկու սկզբ-
քունք. բարձրություն և նրբություն: Այդ նվաճումը այսօր էլ,
ինն հարյուր տարուց հետո, մնում է անխախտ, թեև խախտ-
ված ու մաշված է շինությունը: Հասկանում ես, թե ի՞նչն է
այդ հրաշքի պատճառը: Օդ կա այս շինության մեջ, և նվաճ-
վածը այդ իսկ օդն է: Համարձակ բարձրանում են պատերը,
որպեսզի համարձակություն տան հրաշալի նուրբ, քնքույշ
սյուների: Վերևում նրանք միանում են նույն նրբությունը,
նույն քնքշությունը մարմնացնող կամարներով:

Քնքշությունը, սովորաբար, ուժի պակասություն է են-
թադրել տալիս: «Քնքույշ» բառը, կարծես, ինքնբոստինքյա-
լրացվում է «փխրուն», «զյուրարեկ» բառերով: Բայց այ-
նքնքշության մեջ մի ամենի ուժ կա: Ինչպե՞ս են այդ բարակ
կամարները այնպես համարձակ կտրատում օդը իրանց գե-
ղարվեստական թափքներով: Ինչպե՞ս են դիմացել ինն հար-
յուր տարի առանց վերանորոգությունների, առանց կարկա-
տանների, մոռացված ամենից, ամայի ու անբնակ, քանդող
բնության և ժամանակի կամքին թողված:

Շիրակը, առհասարակ, գեղարվեստը շինության մեջ
արտահայտելու կողմից շատ առաջադեմ երկիր էր մի ժա-
մանակ: Այդ զարմանալի ընդունակության զազանիքը մեզ
մասամբ բացատրում է շինության նյութը՝ քարը: Դա դե-
ղին և կարմիր գույներ ունեցող տուֆն է, համեմատաբար
կակուղ նյութ, որ պնդանում է օդի ազդեցությունից: Այդ
նյութը մշակելու գործում հինավուրց շիրակեցին կատարյալ
արախտության էր հասել: Քարը նրա ձեռքին խաղալիք էր:
Ահագին բեկորներից միասպաղաղ սյուներ կոլորացնելն ու
հզկելը սովորական բան էր նրա համար: Մեծ-մեծ սալերի ե-
րեսները բարակ, զարմանալի բազմատեսակ, ֆանտաստիկա-
կան մանվածքներով, նուրբ քանդակներով ծածկելը ոչ մի
դժվարություն չէր ներկայացնում: Երկաթե զրիչը հնազանդ-
վում էր նրան ինչպես վրձինը նկարչին: Բայց այդ բոլոր
բավական չէ. շինությունը միայն գեղեցիկ չպիտի լինե-
ր, այլև տոկուն, երկարակյաց: Պետք էր, որ շիրակեցին իմա-
նար և գեղեցիկ քարերը իրար կպցնելու մի բոլորովին ուրիշ

գաղտնիք: Եվ երևում է, որ նա ունեցել է այդպիսի գաղտ-
նիք:

Տրդատը ճարտար ձեռքով կարողացել է երկրի այդ
շինարարական բոլոր ընդունակությունները միացնել իր
գաղափարը ամբողջությամբ մարմնացնելու համար: Վեհ պար-
զություն, որ մի քնքույշ, խտակ կանացի նրբությամբ հափըշ-
տակեր հավատացյալին դեպի բարձր, դեպի երկինք՝ ահա
նրա գաղափարը: Չորս սյուները, որոնք կանգնած են եկե-
ղեցու մեջտեղում, պատերին կպած կիսասյուները, զրանց
միացնող կամարները՝ իրանց գծերով օդային կերտվածքի
տպավորությամբ են համակում այցելուին: Աչքը գերողը
բմաճաճ զարդարանքները չեն, որոնք չկան, այլ այդ գծերը,
այդ պատերի ու կամարների ներդաշնակ համաշափությամբ
կազմված օդայինի, քնքույշի տպավորությունը:

Այս տպավորությունը դեռ ամբողջ չէ: Անկասկած, ևս
ավելի ազդու, ավելի հափշտակիչ էր այն ժամանակ, երբ
այդ սյուների վրա բարձրանում էր եկեղեցու գմբեթը: Այժմ
նրանից հետք չէ մնացել, և կտուրի մեջտեղը բացված կոլոր
ու մեծ ծակը միայն այն է հասկացնում, որ խոշոր ու մեծ
պիտի եղած լինի գմբեթը: Ասողիկը ասում է, թե այդ գմբե-
թը երկնային կամարի նմանությունն ունի: Ուրեմն, հա-
փության կորել, ոչնչացել է Տրդատի այս սքանչելի ստեղծա-
գործության թագն ու պսակը: Եվ այդ կորուստը սուր ցավ
է պատճառում այցելուի հիացմունքով լցված սրտին:

Բայց նրա հետ դեռ կարելի է հաշտվել: Կան ուրիշ ցա-
լեր այս հնացած մարմնի մեջ, որոնք տանջում են տեսնո-
ղին: Դրանցից մեկի մասին ես արդեն խոսել եմ: Հյուսիս-
արևմտյան ճեղքված անկյունը, որ վախեցնում է մանա-
վանդ այստեղից, ներսից: Երկնքի կապուտակության մեջ
երևում է ալլանդակ, զզվելի ավերանքը, որ մի ինչ-որ
հրեշի նման խրվել է այս նուրբ, կանացի քնքշությամբ
սիրտ փայփայող մարմնի մեջ: Հյուսիսային պատի ծայրը
կարծես մի ահռելի բերան է դարձրել այդ բացվածքը և
նրանով կանչում է, որ ինքը փլվելու վրա է, որ երկար չէ
կարող այդպես մնալ: Այժմ նայեցեք մյուս ցավին: Մեծ ու
գեղեցիկ սեղանի կիսաբոլորակ խորությունն է: Ներքեում

նրան զարդարում են պատի մեջ շինած կամարավոր խոր-
շերը: Իսկ վերևից, կտուրի տակից, սև օձի նման գալարվե-
լով գալիս է, փոքրիկ պատուհանին հասնում դեռ չբաց-
ված, բայց նույնպես սպառնալից ճեղքվածի գիծը:

Տե՛ր աստված, որքա՛ն անտարբեր, անկարող ենք մենք:
Անիի Մայր եկեղեցուն սպառնացող այս ավերանքները կա-
րելի էր անվնաս դարձնել մի համեստ գումարով: Բայց
ո՛ւր է գումարը, ո՛ւր է գիտակցությունը: Եվրոպայում հնու-
թյունները պահպանելու համար հատուկ մարմիններ են
կազմվում, առանձին ինժեներներ են պահվում, և օտարերկ-
րացի ճանապարհորդը գնում է նրանց տեսնելու, լսում է,
թե ինչ պատմական հիշատակություններ են կապված այս
կամ այն հնություն հետ: Իսկ մեզանո՛ւմ: Ահա տարիների
ընթացքում կղաքգանա հազարդակցության հարմարությու-
նը, և մեր երկիրը անհամեմատ մեծ բազմությամբ ճանա-
պարհորդներ կգրավի: Բայց ոչինչ ապահովություն չկա, որ
այն ժամանակ Շիրակի ամենաճշակավոր հնությունը քա-
րերի մի գարշելի կույտ չի ներկայացնի:

Եվ սակայն, այս տեղերի ուղեցույցն էլ շատ բան կա-
րող էր պատմել օտարական այցելուին: Կանգնեցնելով
նրան Մայր եկեղեցու մեջտեղում, նա ցույց կտար գմբեթի
տեղը, այն կոլոր մեծ ծակը, որի միջով այժմ անձրև և ձյուն
է թափվում այս օդային կամարների տակ, և կասեր, որ մի
ժամանակ այստեղ, գմբեթի միջից կախված էր Հնդկաստա-
նից բերել տված բյուրեղյա ջահը, որ այժմյան փողով մի-
լիոններ ֆրանկ արժեք: Կասեր, որ ջահը բերել տվողը Սմբատ
Տիեզերակալն է եղել և կավելացներ, որ այդ թագավորը
Անին զարդարողը, մեծացնողը, առաջնակարգ բերդ դարձ-
նողն է: Կասեր, որ նույն այս գմբեթի ծայրին, դրսից,
դրված էր մարդու հասակի բարձրություն ունեցող արծաթ-
յա խաչ: 1064 թվականին Անին պաշարեց Ալփ-Ասլանը:
Բազրատունի թագավոր չկար, որ պաշտպաներ Անին. քաջ
Գագիկը, վերջին թագակիր Բազրատունին, այդ ժամանակ
դավով ու խաբեությամբ արգելված էր Բյուզանդիայում և
ողբում էր իր ձեռքից զոռով խլված հայրենի ժառանգությու-
նը: Սելջուկ բռնավորը վերցրեց Անին, նրա վայրենի զին-

վորները թափվեցին Մայր եկեղեցու վրա, իջեցրին արծաթե
խաչը և նրա փոխարեն մահմեդականի կիսալուսինը բարձ-
րացրին, վայր գցեցին և ջարդեցին բյուրեղյա ջահը: Բայց
եկեղեցին երկար ժամանակ մզկիթ չմնաց, և խաչը, թեև ոչ
նախկինը, նորից բարձրացավ նրա վրա...

Ահա ինչեր է ազդում, ինչեր է ասում թագավորի սկսած
և թագուհու վերջացրած եկեղեցին իր մեջ մտնողին: Եվ
նա ազգել է միշտ, ազդել է սրտի ու երեակայություն վրա,
ազդել է իր շինող տիկնանց տիկնոջ անունով: Մի չքնաղ
ավանդություն է պատմում Վարդան Բարձրբերդցին: Եկե-
ղեցու միտքը Կատրանիտին տվել է երազում հրեշտակը,
խոստանալով, թե ինքը կօգնի շինության և շինողներին,
խոստանալով մնալ տաճարի մեջ մինչև այն ժամանակ, երբ
արաբները կտեսնեն Քրիստոսի գալուստը:

Երա՛զ... բայց ո՛վ գիտե, գուցե հավատավոր մարդը
չկասկածե, որ այսօր հրեշտակը դեռ մնում է Կատրանիտի
եկեղեցում...

Դրսից էլ նա պահում է իր ընդհանուր տպավորությու-
նը՝ մեղմ, քնքույշ գեղեցկություն: Բայց այստեղ այլևս ան-
պաճույճ պարզությունը չէ տիրապետում: Այստեղ բարակ
ու գեղեցիկ քանդակագործությունն էլ եկել է միացել պա-
տերի վսեմ պարզության հետ: Պատեր... ավելի լավ է ասել
հղկած քարե տախտակներ, որոնց միապաղաղ երեսը սքան-
չելի համաշափությունը զարդարում են փոքրիկ, կարծես
մեքենայով և ոչ թե ձեռքով կոկած բարակ սյուներ՝ իրանց
նազելի կամարներով: Գեղեցիկ են մահալանդ եռանկյու-
նաձև խոր խորշերը, որոնք մի քանի տեղ կտրատում են
պատերի դրսի մակերևույթը, գեղեցիկ են ոչ միայն իրանց
ճաշակավոր զոգերով, այլև սիրուն, ոլորուն զարդանկար-
ներով: Այդ խորշերը Անիի ճարտարապետության շատ բնո-
րոշ մի հատկությունն են կազմում և ուր որ տեսնեք նրանց,
կարող եք հավատացած լինել, որ կամ անեցու շինություն
է, կամ Անիից վերցրած ընդօրինակություն:

Երեք դուռ ունի Մայր եկեղեցին: Գլխավորը կամ ա-
վազը արևմտյանն է, որով մենք ներս մտանք: Բայց ավելի
գեղեցիկ են հյուսիսային և հարավային դռները, որոնց վրա

գտնվող ավերված կամարները ցույց են տալիս, որ մի ժամանակ ծածկեր են ունեցել նրանք: Պատուհանները, ինչպես ամեն տեղ, երկարած են, փոքր ու նեղ, համեմատած շինության հետ, նրանց շրջանակները զարդարված են քանդակներով: Բայց դրանցից անհամեմատ գեղեցիկ են կոլոր պատուհանները, որոնք բացված են շինության ճակատների վրա:

Արձանագրությունները քանդակված են հարավային, արևմտյան և հյուսիսային պատերի վրա: Նրանք բավական լավ են պահվել. կան մի քանիսները, որոնք խոսում են Անիի ներքին կյանքի մասին, պարունակելով զանազան տուրքերի և հարկերի վերաբերյալ կարգադրություններ: Բայց այս տեսակ արձանագրությունների մասին՝ հետո:

Առայժմ հեռանալով Տրդատի փառավոր ստեղծագործությունից: Նկեղեցու շորս կողմը լիքն են ավերակներով: Պեղումները այստեղ շատ բան կայարգեին: Զէ՛ որ Մայր եկեղեցին հարուստ քաղաքի կենտրոնն է եղել: Առաջնորդ աստեղ նկատել են մատուռների հետքեր, բայց գուցե լինեն և ուրիշ նշանավոր շինություններ, օրինակ՝ կաթողի կոսի կամ եպիսկոպոսի ապարանք և այլն:

Դ

Քարակույտերի վրայով Մայր եկեղեցուց գեպի արևելք ենք գնում և, մի կարճ տեղ անցնելով, հասնում ենք ս. Փրկի: Եկեղեցուն:

Այժմից իսկ ասեմ, որ Մայր եկեղեցուց հեռացող այցելուն պիտի իմանա, որ այդպիսի մեծ ու բարձր շինություն այլևս չպիտի տեսնե ամբողջ Անիում: Հայտնի է այն հին առասպելը, որ ասում է, թե Անիում հազար ու մի եկեղեցիներ կային: Շատերը մեղանում, մանավանդ բարեպաշտ ազգասերներից, աշխատել են ապացուցանել, թե այդ թիվը կարող է և չափազանցություն չլինել: Բայց Անին և շրջա-

կաները տեսնողի համար չեն կարող ծիծաղելի չլիլ այդ ազգասիրական ապացույցները: Առասպելը առասպել է, դրա մասին կասկած չպիտի էլ լինի: Եվ փոխանակ առասպելի թիվը ճշտություն համարել տալու, ավելի լավ կլինի, եթե մենք մտածեինք առասպելի ծագման մասին:

Անին շատ եկեղեցիներ է ունեցել,— այս էլ անկասկածելի փաստ է: Այն համեմատաբար փոքրիկ տարածության վրա, որ զբաղում է Անին, այնքան շատ են եկեղեցիները, որ նրանք, անկասկած, ավելի մեծ տպավորություն թողած պիտի լինեն նախ և առաջ իբրև բազմություն: Առասպել հեշտ կարող էր կազմվել: Ուշադրություն դարձրեք թիվ վրա՝ 1001: Դա մի թիվ է, որ Արևելքում գործ է ածվում առհասարակ մեծ բազմություն ցույց տալու համար: Արևելքին չէ կարող չափազանցությունների չդիմել, երբ հարցը քանակության է վերաբերվում: Բազմությունը նրա վրա առհասարակ շատ մեծ տպավորություն է թողնում մանավանդ այն դեպքերում, երբ հիացմունք կամ երկյուղ է ազդում: Ի՞նչնա պատրաստ է 10-ը՝ 100, 100-ը՝ 1000 դարձնել:

Անիի մեջ 1001 եկեղեցի ասողը, անշուշտ, չէր ասում, թե ինքը մեկ մեկ համարել է ու այդ թիվը ստացել, այլ այն, որ եկեղեցիներ շատ կան: Եվ դա ճիշտ էր: Շատ պիտի լինեին նրանք մանավանդ այն պատճառով, որ շատ փոքրիկ քաներ էին, ոչ թե եկեղեցիներ, այլ եկեղեցիկներ: Գոնե այս են ցույց տալիս Անիի ավերակները: Շիրակեցին սիրում էր փոքրիկ, համարյա մինիատյուր աղոթատեղիներ: Դրանց թիվը շատ պիտի լինի, որպեսզի ժողովուրդը առանց եկեղեցու չմնար:

Բայց փոքր չափերը գեղեցկությանը չեն խանգարում: Շինարարական տաղանդը փայլեցնում էր և փոքրիկ եկեղեցիներ: Ապացույց՝ ս. Փրկիչը:

Ճարտարապետական ոճի կողմից սա արդեն այն ինքնուրույնությունն ունի, որ կոչվում է: Այս ձևը գոյություն ունի Հայաստանում, և նրա ամենագեղեցիկ, հրաշալի օրինակն էր Վաղարշապատի այն եկեղեցին, որ շինել էր տվել Ներ-



Ս. Փրկիչ եկեղեցին (արևմուտից)

տես Շինող կաթողիկոսը VII դարում¹ Ասողիկի պատմությանը նայելով, Գագիկ Առաջին թագավորը, հիացած Վաղարշապատի եկեղեցու վրա, որ նրա ժամանակ արդեն ավերակ էր դարձած, սկսեց նույն ձևով և ճարտարապետությամբ մի եկեղեցի շինել Անիում, Մաղկոցաձորի մոտ (1000 թվականի վերջից)։ Ներսես Շինողի եկեղեցին նվիրված է Գրիգոր Լուսավորչին. Գագիկն էլ, վերջացնելով իր եկեղեցին, նույն անունը տվեց նրան։ Ասողիկը մեծ ոգևորությամբ է խոսում Գագիկի այդ եկեղեցու գեղեցկության մասին։ Դժբախտաբար, այսօր այդ շինության տեղն անգամ հայտնի չէ²։ Բայց աչքի առաջ ունենալով նրա Վաղարշապատի նախատիպը, պետք է կարծել, որ նա օրինակ է եղել ս. Փրկիչ համար, որ կառուցված է 1035 թվին։ Այնպես որ կարելի է ասել, թե ս. Փրկիչը, իբրև ամբողջ մոացած եկեղեցի, շատ պիտի օգնե Ներսես կոթողիկոսի և Գագիկ թագավորի շինել տված եկեղեցիների տիպը պարզելու գործին։

Ս. Փրկիչը ծածկված եկեղեցի է։ Ուղում եմ ասել, որ նրա զմբեթը դեռ կանգուն է և չէ էլ ծակված, թեև դրսի կողմից զմբեթի գագաթը մաշկված է. պոկված են քարե սալերը, որոնք ծածկում էին նրա երեսը, և բացված է մանր կրախառն քարերից շինած որմնամեջը։ Եկեղեցուն վերևից վտանգ չէ սպառնում. բայց դրա փոխարեն հիմքերն են մաշված, քերված։ Արևմտյան կողմի դուռը քանդված է և մի մեծ բացվածք է դարձել։ Հարավային կողմից եկեղեցու ամբողջ ծանրությունը հենված է մի կտոր բարակ, մաշված հիմքի վրա։ Տպավորությունը այնպես է, որ ս. Փրկիչը իր այդ վիրավոր կողից պիտի ընդունե կորստյան հարվածը։ Եվ մինչդեռ մենք նայում էինք այդ կուրր եկեղեցու ընդհանրապես լավ պահված, սիրունատես մարմինը և միմյանց հաղորդում էինք այն տպավորությունը, որ կործանում պիտի գա և

¹ Ներկայումս Զվարթնոց անունը կրող ավերակ եկեղեցին, էլ՝ միածնի մոտ։

² Գագիկ I-ի կառուցած բոլորակ այս եկեղեցին հայտնաբերվեց ն. Մառի կողմից կատարվող պեղումների միջոցով 1905—1906 թթ.։ Մանոք. խմբագրի։

նրա համար, վանահայր վարդապետը, որ շրջում էր մեզ հետ, հայտնեց, թե ինքը հաշվել է, որ ընդամենը մի երկու հարյուր ութիւ բավական կլինի ս. Փրկիչը ազատելու համար:

Երկու հարյուր... Մեր ժամանակներում դա էլ փո՞ղ է հարյուրավոր մարդկանց համար...

Ս. Փրկիչը Անիի ամենագեղեցիկ օրերում մեծ հռչակ ստացած մի իշխանական տոհմի հուշարձանն է: Նրան կառուցել է Ապլղարիպ մարզպանը, որ մեկն էր Պահլավունի հղբայրներից: Արձանագրությունները վկայում են, որ Ապլղարիպ իշխանը այստեղ, եկեղեցու մոտ, ուներ մի ապարանք, որ նվիրեց իր եկեղեցուն: Մի ուրիշ բարերար զանգակատուն է շինել, եկեղեցին ունեցել է նաև ամառնային և ձմեռնային գավիթներ: Բայց այդ բոլոր շինություններից ոչինչ չէ մնացել: Քարակույտեր են թափված ամեն տեղ, նրանց մեջ երևում են սյուների և կարնիզների կտորներ: Ավերումը տրորել, տակն ու վրա է արել ամեն ինչ, անհեթեթ կույտեր կազմելով այստեղ: Մի ինչ-որ հրաշքով ողջ են մնացել Ապլղարիպի դրած պատերը, որոնք, ինչպես երևում է արձանագրություններից, Անիի շեն ժամանակներն էլ ավերվել են, բայց դարձյալ էլի վերանորոգվել են:

Պահլավունի իշխանների իսկական հայրենիքը այստեղից բավական հեռու էր՝ Նիգ գավառը, էջմիածնից դեպի հյուսիս, ուր այժմ էլ մնում է Պահլավունիների տոհմային ամրոցը, Բջնին: Բազրատունի թագավորների ժամանակ Պահլավունիները կարևոր դիրք բռնեցին Շիրակում: X և XI դարերում անուն են հանում Ապուղամր իշխանի որդիները: Դրանցից երկուսը, Վասակ և Վահրամ իշխանները, մեր պատմության մեջ փառավոր անուն են ստացել իբրև քաջ զորավարներ, որոնք հերոսական մահ գտան պատերազմի դաշտում, հայրենիքի թշնամիների դեմ կռվելիս: Վահրամ իշխանի հոյակապ դեմքը մենք դեռ առիթ կունենաք տեսնելու: Երրորդ հղբայրն էր Ապլղարիպը, որ միայն Անիի արձանագրություններից է հայտնի: Նա կոչվում էր մարզպան հայոց և իր իշխանական փարթամությունը ցույց է

տվել եկեղեցիների շինության մեջ: Եվ ս. Փրկիչը իր արտաքին ու ներքին տեսքով միանգամայն արժանի է Պահլավունիների հռչակավոր տոհմին, որ այնքան նշանավոր մարդիկ տվեց հայոց պետության և եկեղեցուն¹:

Եկեղեցու ներսը այնքան էլ հեշտ չէ մտնել. կանգնելու տեղ չկա: Լիքն է քարերով: Պատերը ներսից անկյունավոր են. ծեփի վրա նկատվում են նկարների հետքեր, որոնք կրոնական բովանդակություն ունեն: Նկարչությունն էլ միացած էր ճարտարապետության հետ՝ Ապլղարիպ իշխանի դաստակերտը գեղեցկացնելու համար: Բայց դա Մայր եկեղեցու գեղեցկությունը չէ:

Ս. Փրկից մենք թեքվում ենք դեպի հարավ: Բացվում են Անին այս կողմից շրջապատող ձորերի տեսարանները: Քաղաքի ծայրն է, երևում են պարիսպները: Մենք կանգ ենք առնում մի կույտ ավերակների մոտ, որոնք կոչվում են «թագավորական բաղնիս»: Բաղնիս լինելը ճիշտ պետք է համարել: Հողից ցած սենյակների հետքեր են երևում: Հեշտ կարելի է նկատել ջրի ավազանը, որի մեջ լողանում էին պատերի մեջ մնացել են ջրի կավե խողովակները: Շինությունը ճաշակով է շինված, սրբատաշ քարերից: Գուցե և սովորական բաղնիս չէ, բայց ո՞վ կարող է ասել, թե թագավորների բաղնիսն էր դա: Ոչինչ հիշատակություն չկա: Իսկ այս կողմերում յուրաքանչյուր բան, որ որոշ անուն ու հիշատակարան չունի, այցելուների երևակայության առարկա է դառնում: Եվ ստեղծվում են անուններ ու ավանդություններ. որոնք հենց այն պատճառով, որ հավանականությունից հեռու լին, դառնում են մի տեսակ ավերակային ճշմարտություններ:

Բաղնիսից իջնում ենք մի փոքրիկ զառիվայրով դեպի մի փոքրիկ հրապարակ, որ ձգված է մեծ ձորի պոռնգի վրա:


¹ Վասակ իշխանի որդին էր հայտնի Գրիգոր Մագիստրոսը, ժամանակի հունական կրթության և հունամոլ աղնականության բնորոշ ներկայացուցիչը. նրա սերունդից կաթողիկոսներ եղան Գրիգոր Վասակներ. ներսես Շնորհալի:

Այդտեղ, այդ հրապարակում, ձորի պռունգին կա մի փոքրիկ, բայց զարմանալի գեղեցիկ եկեղեցի:

Դա ս. Լուսավորիչն է, զրսից էլ, ներսից էլ այնքան զարդարված, որ թուրքերը անվանում են «նագըշլը քիլիսե», զարդարուն եկեղեցի: Մայր եկեղեցու փոքրիկ պատճենը: Դեռ չմտաեցած, ձեզ գրավում են ծանոթ մեղմ, քնքույշ գծագրությունները. նույն եռանկյունաձև խորշերը, նույն բարակ սյունակներն ու նազելի կամարները պատերի երեսին: Ավելացրած է միայն փարթամ քանդակագործություն. կամարների վրա ուրվում են հյուսված զարդեր, իսկ նրանց կազմած անկյուններում քանդակված են շորքոտանի կենդանիներ և զույգ-զույգ կամ մենավոր թռչուններ:

Եկեղեցին շրջապատված է, համարյա երեք կողմից, փլատակներով: Փլված է գավիթը կամ ժամատունը արևմտյան մուտքի մոտ, որ միակն է եկեղեցին մտնելու համար: Այդտեղ մնացել են կիսով չափ խորտակված կամարներ միայն: Եկեղեցին այդ ավերակների մեջ շատ լավ է պահվել. բոլոր պատերը ամբողջ են. ամբողջ է և բարձր գմբեթը, որի ծայրը միայն քանդված է, կարծես հողմահարված է հարավային կողմից: Զարգվել, թափվել են երեսի սրբատաշ բարերը, երևում է պատի միջուկը, որ տղեղ է, գետի մանր սև քարերից է շինված: Այդպես մաշկված են և եկեղեցու ուսերը: Բայց և այդպես, ս. Լուսավորիչը Անիում աչքի ընկնող բախտ ունի: Նրա պես քիչ վնասված շինություն չկա այստեղ: Եվ այդ է պատճառը, որ երբ ռուս-թուրքական պատերազմից հետո հայոց հոգևոր իշխանությունը վանահայրություն հաստատեց Անիում, այստեղ սկսեցին ժամասացություն կատարել և մինչև այսօր էլ Լուսավորիչն է Անիի անձուխ եկեղեցին:

Հյուսիսային պատի տակով գնացինք, արևմտյան դռնով ներս մտանք: Ներսից էլ եկեղեցին լավ է պահվել: Մնացել է նույնիսկ սվաղը, որի վրա դեռ կան գունավոր նկարները:



Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (կառուցված 1215 թ.)

Նկարագարդ են ոչ միայն պատերը, այլև առաստաղը, դմբ-
թի մեջը: Ավետարանի տեսարաններն են ներկայացնում այդ
նկարները: Մեր ընկերներից մեկը ուշադրություն դարձրեց,
որ պատկերների դմբերը քերված են, մի տեղ Քրիստոսի
աչքերը փորված են: Քրիստոսնություն թշնամիների, մահմե-
դական ամբոխի շահատակության նշաններ են: Մցխեթի
վրաց հռչակավոր տաճարի մեջ էլ ես տեսել էի այդ բար-
բարոսական գործերը...

Նկարները հույն վարպետների գործեր են, այդ ցույց է
տալիս մանավանդ այն հանգամանքը, որ պատկերների բո-
վանդակությունը հունարեն լեզվով է գրված: Պատահում են
և վրացերեն արձանագրություններ: Հոսնական և վրացական
գրերը առիթ են տվել օտար այցելուներին կարծելու, թե
ս. Լուսավորիչը հունական եկեղեցի է եղել: Բայց անգիտու-
թյունից առաջացած այդ կարծիքը ջրում է եկեղեցու պատի
վրա փորագրած երկար ու ընդարձակ հայերեն արձանագրու-
թյունը, որի մեջ պատմված է եկեղեցու հիմնադրությունը
այնպիսի մանրամասնություններով, որոնք չեն հանդիպում
ոչ մի տեղ Շիրակի գավառում: Արձանագրությունն ասում է,
որ ս. Լուսավորիչը կառուցել է այս կողմերի եկեղեցիների
առատածեղն բարերար Հոսենց Տիգրանը¹: Այս մարդու արձա-
նագրությունները քանդակված են համարյա բոլոր նշանավոր
եկեղեցիների վրա: Նրան տեսնում ենք Հոռոմոսի վանքում,
Անիի Մայր եկեղեցու վրա, Խժկոնքի վանքում: Եվ ամեն տեղ
նա վերանորոգող է, մեծ նվերներ է տալիս: Բայց այն, ինչ
նա տվել է այս ս. Լուսավորչին, բավական է հասկացնելու
համար, թե ի՞նչ ահագին հարստությունների տեր էր նա:

Հոսենց Տիգրանը պատկանում է Անիի ուրիշ շրջանին և
նրա եկեղեցին, որքան մինչև այժմ հայտնի է, ամենից
կրտսերն է Անիում:

Աչքի ընկնող հանգամանք է, որ Անիի այն եկեղեցի-
ները, որոնք մնացել են մինչև մեր օրերը և ունեն արձա-
նագրություններ, շինված են Բագրատունի թագավորների

¹ Տիգրան Հոսենցը Անիի XIII դարի սկզբի ամենահարուստ ժող-
ժատուններից, առևտրական վաճառուներից մեկն էր: Մանթրուքյուն
խմբագրի:

ժամանակ: Բացատրությունը միայն ս. Լուսավորչին է: Բայց
հազիվ թե տարօրինակ թվա այդ հանգամանքը, եթե մենք
աչքի առաջ ունենանք մեր մայրաքաղաքի ճակատագիրը:
Անշուշտ նրա փարթամության ամենալավ օրերը Բագրատու-
նիների ժամանակներն էին: Ընկան Բագրատունիները, պիտի
ընկներ և նրանց մայրաքաղաքը: Մեծ ու գեղեցիկ գործեր
կատարելու ի՞նչ հարմարություն կարող էր լինել, երբ հա-
րուստ քաղաքը կեղեքելու, կոշոպտելու տենչ էր վառում իր
տերերի մեջ:

Հույները, խլելով Անին, չկարողացան վայելել նրան
երկար ժամանակ: Շիրակի մայրաքաղաքը կովածաղիկ դար-
ձավ տիրոջների մեջ. ամեն մեկն ուզում էր իր ձեռքը գցել
նրան: Ավերումների մի շարք եկավ անցավ խեղճ քաղաքի
վրայով, բայց Շեղգատյան քուրդ ցեղը կարողացավ մոտ
120 տարի պահել նրան իր ձեռքում: Այդ ամբողջ ժամանա-
կը Անին կամ ժպտում էր, վայելելով խաղաղություն, կամ
սուգերի մեջ էր թողնվում կոտորողների, քանդողների ձեռ-
քից: Հայ ազնվականությունը քաշվել, հեռացել էր այս կող-
մերից: Ինչպե՞ս պիտի այդ տխուր ժամանակներում քա-
ղաքը զարգարվեր նոր, գեղեցիկ շինություններով: Եվ եթե
Հոսենց Տիգրանը մի զարմանալի բացառություն է կազմում,
այդ էլ շատ հասկանալի է:

Իր բոլոր արձանագրությունների մեջ Տիգրանը անվա-
նում է իրեն ծառա և սպասավոր Զաքարե Ամիր Սպասալարի
և Շահնշահի, որ Զաքարեի որդին էր: Ամեն տեղ նա ասում
է, որ նվերներ է տալիս եկեղեցիներին նախ և առաջ իր այդ
տերերի հոգու փրկության և արեւատության համար: Ինչո՞ւ
էր Տիգրանը այդքան սիրում իր տերերին, — մենք հաստատ
չգիտենք: Բայց որ այդ տիրասիրությունը միայն նրա անձ-
նական զգացմունքը չէր և կարող է նաև ժամանակի երախ-
տագիտության արտահայտություն համարվել, — այդ էլ
պարզ է, եթե ի նկատի ունենանք, թե ո՞վ էր և ի՞նչ էր
Զաքարե Ամիր Սպասալարը:

XII դարի երկրորդ կեսում, երբ ամբողջ Հայաստանը
գտնվում էր զանազան մահմեդական իշխողների ձեռքում,

երբ ըստ երևույթին հայերը ստրկացած էին, և կարծեք թե պիտի հաշտվեին իրավադուրկ գրության հետ, հանկարծ, անսպասելի կերպով, զույս է բարձրացնում Վրաստանը և մի կարճ միջոցում հազթող զենքի ուժով հանդիսանում է տանջվող հայության փրկիչը։ Դա Թամար թագուհու փայլուն ժամանակն էր։

Վրաց հաղթական բանակի հրամանատարներն էին երկու հայ իշխաններ, Զաքարե և Իվանե եղբայրները։ Դրանք Լոռու տերերն էին, բայց իրանց քաջություններով մի մեծ աշխարհի իրական կառավարիչներ և իշխաններ դարձան։ Գլխավորը Զաքարեն էր, բայց այդ փայլուն զորավարը ուներ մի զարմանալի եղբայրասիրություն, ուստի և երկուսի անունները միշտ միասին ենք հանդիպում։

Զաքարեն իր սեփական հայ բանակն էլ ուներ, որ միացած էր վրացիների հետ։ Նրա արշավանքները, արագ նվաճումները հայոց և վրաց տարեգրությունների մեջ հիացմունքով են պատմվում։ Տարիների ընթացքում Վրաստանի սահմանակից երկրները խլվեցին մահմեդական իշխողների ձեռքից։ Արարատյան երկիրը, Շիրակը վրաց պետության մասեր դարձան, Զաքարեի արշավանքը հասավ նույնիսկ Խլաթ քաղաքին։

Զաքարեն և Իվանեն չէին բավականանում միայն նվաճումներով։ Նրանք խաղաղեցնում էին իրանց գրաված երկրները, բարեկարգություն էին հաստատում։ Նրանց առջև փուլած էին քարուքանդ դարձած գավառներ, ուր եկեղեցիները ավերված էին, վանքերը խաղալած, հասարակաշահ շինությունները ոչնչացված։ Նվ երկու եղբայրները ցույց են տալիս մի զարմանալի աշխարհաշինություն։ Շիրակում և ուրիշ տեղերում այդ երկու իշխանների անունները երևում են անթիվ արձանագրությունների մեջ։ Նրանք վերանորոգում են քանդված եկեղեցիները, շինում են նորերը, կալվածներ են հատկացնում այդ հաստատություններին¹։

Անիի համար մանավանդ վերաշինության, վերածնուն-

¹ Խժեռների ս. Սարգիս եկեղեցու արձանագրությունն ասում է. «Ես Զաքարե Ամիր Սպասալար Հայոց և Վրաց, որդի Սարգսի, աղատեցի զսուրբ ուխտս զայս իմով արեամբս ի յալազգեաց»։ Իսկ Հառիճայի

թյան ժամանակ էր Զաքարեի տիրապետությունը։ Մեծ Սպասալարը ամենից շատ սիրեց Բագրատունյաց գեղեցիկ մայրաքաղաքը։ Թեև Անին վրաց թագավորության մի մասն էր կազմում, բայց այնտեղ իրական տերն ու իշխանը Զաքարեն էր. ամբողջ քաղաքը նրա ժառանգական սեփականությունը զարձավ. և նա, իհարկե, իր առատությունից մեծ բաժին էր հանում՝ մայրաքաղաքի բարեգարգության համար։ Զաքարեից հետո Անին մնաց նրա ժառանգներին, որոնք հարյուր տարուց ավել տիրեցին այդ քաղաքին և նրա պատմության մեջ երկրորդ հայկական իշխանության շրջանը կազմեցին, որ թեև նման չէր Բագրատունյաց շրջանին, բայց դարձյալ նախանձելի մի ժամանակ էր։ Նվ ո՞վ գիտե, գուցե Լոռու իշխանները կարողանային վերականգնել հայոց թագավորությունը այս կողմերում, եթե թաթարական արշավանքը արյունի հեղեղներ չբերեր դժբախտ երկրի և, մանավանդ, Անիի գլխին (1239)¹։ Այդ հեղեղները, սակայն, չընդհատեցին Զաքարյան տոհմի իշխանությունը Անիում։ Թաթարները ճանաչեցին նրա ժառանգական իրավունքները։ Բայց մի կողմից Զաքարեի սերունդները գնալով մանրացան, մյուս կողմից երկիրը սաստիկ աղքատացավ. այնպես որ մեծ Սպասալարի ժամանակվա աշխարհաշինությունը չէ երևում այլևս, և արձանագրությունները մանր-մունր կարգադրություններ և նվերներ են հիշատակում...

Ահա Զաքարե Սպասալարի ժամանակների գործ է զարգարուն գեղեցիկ ս. Լուսավորիչը, Այն ժամանակ, երբ Հոհեննց Տիգրանը վերջացնում էր շինությունը, մեծ Սպասալարը արդեն մեռած էր, թողնելով իր իշխանությունը իր Շահնշահ որդուն, որ այդ ժամանակ զեռ պատանի էր։ Հոր և որդու անուններն էլ Տիգրանը մտցրեց արձանագրու-

վանքի արձանագրության մեջ Զաքարեն գրում է. «Գանձադին արարի զհոշակաւոր սուրբ ուխտս Հառիճայի յիւր բնական հայրենատէրանցն լաղազս կենդանութեան տեառն իմոյ բարեպաշտ Թամար թագուհու... Երևեցի ի սմա ամբոց և զկաթողիկէս բազում ծախիւք և զարդարեցի ամենայն սպասիւք և սրբութեամբ»։

¹ Հետազայում հայտնաբերված փաստերը հաստատում են, որ ժողովրդ-թաթարները Անին գրավել են 1236 թվականին։ Մանր. խմբ.։

թյան մեջ: Ինչպես երևում է, նա շատ բարեբարված էր Սպասալարից, գուցե և նրա կողմից պաշտոնյա էր նշանակված Անիում: Ժամանակի ամենահարուստ անեցիներից մեկն էր Հոնենցը: Նա ոչինչ չիսնայեց իր շինած վանքը բարեզարդելու համար. միևնույն ժամանակ չուր բերեց այս քարափի գլուխը, որ, ինչպես վկայում է արձանագրությունը, մացառներով պատած մի տեղ էր, ուր հին ժամանակներում մի փոքրիկ մատուռ էր շինված: Նա շրջապատեց եկեղեցին՝ պատերով, զարդարեց նրան սպասներով և զգեստներով, նվիրեց բազմաթիվ անշարժ կալվածների՝ գյուղեր, հողեր, այգիներ, որոնցից մեկը գտնվում էր Նրևանում, ջրաղացներ, խանութներ, տներ, կարավանսարաններ: Սրանք դեռ անվիճելի սեփականություններ էին: Բայց Տիգրանի մոտ գրավ դրված էին և ուրիշ շատ կալվածներ. այդ գրավականների իրավունքն էլ նա տվեց իր եկեղեցուն: Տիգրանի փարթևությունն նշաններից մեկն էլ այն է, որ նրա անունն էր կրում Անիի փողոցներից մեկը:

Բայց ա. Լուսավորչի եկեղեցին միայն մարդը չէ զարդարել ու գեղեցկացրել: Դուրս գալով նրա փոքրիկ հարկի տակից, մենք ամենքս մոտեցանք քանդված պարսպին, ձորի ծայրին: Եվ հիացած կանգնեցինք: Ի՞նչ տեսարան: Ի՞նչ հրաշալի ճաշակ է ունեցել Հոնենցը:

Տեսել էինք Անին գիշերով. առավոտյան լույսը բացել էր մեր առջև նրա կենտրոնում փռված ավերակների մոռյալ կույտերը: Բայց Անին շրջականեր ունի, Անին հափշտակող տեսարաններ ունի: Դրանցից մեկը, մի վե՛հ, լա՛յն տեսարան, այժմ տարածված էր մեր ոտների տակ: Ախուրյանը մենք երեկ Հոռոմոսի մոտ թողեցինք: Ահա նա էլի երևում է մեզ: Այս լայն ու խոր, ժայռոտ ձորը նրանն է: Մեծ-մեծ թումբեր են բարձրացել նրա երկու կողմին, բայց նրանք չեն ծածկում ջրերի օձապտույտ ճանապարհը: Հրե՛ն, հեռո՛ւ, արևելքում նա դուրս է գալիս այստեղից նայողի առաջը: Նա գալիս է արևելքից համարյա ուղիղ, գալիս է գեպի մեզ: Դարձյալ նրա կախարհիչ ընդունակությունը երկնքի լույսերը իր մեջքի վրա հավաքելու. դարձյալ նրա արագ ընթացքը լուռ ու անկենդան ամբարի մեջ: Հոռոմոսից նա էլի մի քանի

գիծ պտույտներ է անում, մերթ դեպի հյուսիս թեքվելով, մերթ հարավ ուղղությունը բռնելով, բայց Անիի դիմաց նա արևելքից գեպի արևմուտք հոսող մի գետ է:

Հեովում է նա, կարծես, երկնքի երեսից կտրած մի կապույտ ժպտավեն է և անշարժ սավան: Բայց որքան մոտենում է ավերակ քաղաքին, այնքան փոխում է իր գույնը, ընդունում է ամբողջ դեղին-հողմ գույնը: Մեր ժամանակ Ախուրյանը պղտոր գետ էր: Արեգակը դեռ շատ չէր բարձրացել հորիզոնից. դեռ առավոտյան մեղմ լույսերն էին թափված այս ձորային ամբողջ տեսարանի վրա: Եվ որքան հրաշալի էին նրանց հաղորդած գույները: Մենք շատ ենք բարձր, ջրերի գույնը չէ հասնում մեզ. բայց պարզ լուսավորված այն խոր հատակում տեսնում ենք, թե որպիսի ուժգնությամբ ջրերը վազում են առաջ. տեսնում ենք ալիքները, տեսնում ենք, թե ինչպես նրանք տեղ-տեղ սպիտակ փրփուր են կտրում և այդպես քիչ առաջ դալով, անհայտանում են, նորից դեղնավուն ջրեր դառնալով: Ախուրյանի հատակը համեմատաբար հարթ է. միայն տեղ-տեղ քարերը կանգնում են նրա ճանապարհին, և այդ տեղերում գետի մեջքը ծածկվում է սպիտակ, եռացող փրփուրով: Այդպիսի սպիտակ մանյակներ մի քանիսն են երևում Անիի այս կողմում:

Մեր կանգնած տեղը մի անկյուն է: Հյուսիսային կողմից ուղիղ գեպի Ախուրյանն է գալիս մի ձոր, որ որքան առաջանում է, այնքան էլ լայնանում է: Այստեղ, մեր ոտների տակ, այդ լայն, լուռ, հսկայական լանջեր ունեցող ձորը խառնվում է Ախուրյանի ձորի հետ, խառնում է նրա հետ և իր տեսքը և, այդպիսով, քաղաքի այս անկյունը մի ամուր, հզոր բերդի կերպարանք ունի, բերդի, որի պաշտպաններն են բնության փորած խորխորատները: Այդ ձորը Անիի և շրջակաների արձանագրությունների մեջ այնքան հաճախ հիշատակվող Գլիձորն է կամ Գեղիձորը: Գայլերի այդ ձորում հիշատակվում են ջրաղացներ. բայց այնտեղի ջուրը միայն ջրաղացներ չէ պտտեցրել, այլ ոռոգել է և անեցիների բանջարանոցները:

Գլիձորի խառնուրդից հետո Ախուրյանը նկատելի կեր-

պով իր ընթացքը շնորհում է դեպի հարավ-արևմուտք: Բավական տեղ գնալով Անիի այս կողմի հարավային դիրքով, նա Միջնաբերդի մոտ թեքվում է դեպի հարավ և անհայտանում է ժայռե բարձր պատերի արանքում:

Երկար մենք ղմայլվում էինք Անին հարավից փայփայող այս մեծ և վեհ տեսարանով: Հոնենց Տիգրանը, այդ՝ իմացել է գանձեր թափել այնպիսի մի տեղ, ուր բնությունը անհամեմատ ավելի հափշտակիչ է, քան տաղանդավոր ճարտարապետի, հմուտ քանդակագործի շնորհք: Գեղեցիկ են այդ քարերը, այդ քանդակները: Բայց չէ կարելի կասկածել անգամ, որ այդ գեղեցկությունը ավելի շեշտում, ավելի բարձրացնում է այս զարմանալի բնությունը: Ս. Լուսավորիչը իր արևելյան և հարավային զարդարուն կողերով անշարժ, ապշած նայում է այն անավոր ապառաժներին, որոնք Ախուրյանի և Գլիձորի բարձր, սեպացած կողերն են կազմում: Հարավային կողից Ախուրյանին նայում է և Հոնենցի երկար արձանագրությունը, որ օր ու գիշեր, լուռ ու մունջ անդադար պատմում է, թե մարդը ինչն է արել, ինչն է տվել: Բայց ո՞ւմ է պատմում: Զորերին, գորշ ժայռերին միայն, այս ամբողջ գեղանկար ամայության: Նա ասում է, թե ամբողջ այս ձորը, այստեղից սկսած մինչև գետի կեսը, գնված և նվիրված է Ս. Լուսավորչին: Կարծեմ փարթամ եկեղեցու անթիվ կալվածներից միայն այս մեկն է մնացել նրա անկողնապետի սեփականություն: Մնացել է, որովհետև նրան կողոպտել չէր կարելի: Ամայի, քարքարոտ մի տեղ է, ոչ ոքին այսօր չէ կարող պետք գալ: Ամայությունը ավերակի սեփականություն... Սա արդար է, բնական է:

Բայց այսպես անպետք, այսպես ամայի ու անմարդ չէր այս զառիվայր գետեզրը այն ժամանակներում, երբ Անին կենդանի, ապրող քաղաք էր: Նա շատ կարևոր նշանակություն է ունեցել մեծ քաղաքի համար. և այս կարևորությունը այժմ էլ ապացուցանում են այստեղ փռված ավերակները:

Ս. Լուսավորչից զառիվայրով դեպի գետը իջնելով, դուք

կանգ եք առնում մի փոսի առաջ, որ, չնայած իր քայքայված դրությամբ, ունի իր սեփական անունը, արժանանում է լուրաքանչյուր այցելուի ուշադրության, նույնիսկ մի տեսակ արկածախնդրական հետաքրքրություն է վառում: Փոսը արհեստական է և նրա մեջ նայողը տեսնում է մարդու աշխատանքի հետքեր: Դա էլ մի մուտք է, մի մուտք, շինված դարձյալ քաղաքացիների համար, սակայն մութ ու ստորերկրյա, անհայտ մի ճանապարհի վրա: Իր պաշտպանության մասին մտածող մարդը խրվել է հողի մեջ, փորել է, անդուլ ու անդադար պատիճաններ է շինել այդ խավարի մեջ, կամարներ է կապել, վերևի ծածկոցը պահպանելու համար: Աշխատանք, հմտություն, անվախություն շատ ու շատ է մտցված այս մանր, եզրիպտական գործի մեջ: Մի ճանապարհ, բայց ո՞ւր էր նա գնում, ո՞րտեղ էր կանգ առնում:

Եղել են շատ ճանապարհորդներ, որոնք ուզեցել են անպատճառ լուծել այդ հարցերը: Եվ մտել են այս անցքը, սկսել են առաջ գնալ: Բոլոր փորձ անողները միևնույն բախտը չեն ունեցել, ո՛րը կարողացել է շատ առաջ գնալ, ո՛րը վերադարձել է՝ մի քիչ տեղ ստորերկրյա ճանապարհի զժվարությունները ճաշակելուց հետո: Եթե այստեղ հողի վրա ավերանք է տիրում, միայն ավերմունքն է հասկանալի, այդ չէ նշանակում է, թե հողի մեջ, մարդկանցից ծածկված խորության ծոցում, ուրիշ տեսակ է իրականությունը: Այնտեղ էլ բնության օրենքն է տիրում, այնտեղ էլ քանդվում են մարդու ձեռքի գործերը. և ուղևորը, որ ձեռքին թելի կծիկ պիտի ունենա և ճրագ, մրցելով ավերանքների հետ, ահագին աստիճանների զժվարությունները հաղթելով, չէ կարողանում վերևի հողի փլվածքների դեմ մի բան անել և վերադառնում է: Մանավանդ ճրագը զժվար է երկար տեղ տանել, նա հանդուլ է, իսկ առանց լույսի, իհարկե, չէ կարելի քայլեր փոխել: Ոչ ոք չէ կարողացել անցնել ստորերկրյա ամբողջ ճանապարհը, ոչ ոք չէ իմացել թե ո՛ւր է նա վերջանում: Հենց այս պատճառով էլ նա ստացել է մի սարսափելի անուն թուրքերեն լեզվով՝ «գեղան-գալմաղ» (գնացողը չի գա):

Բնական է, որ այս խորհրդավոր անցքի հետ էլ կապվելու զրույցներ, առասպելներ: Ասում են, թե այս ճանապարհը գնում է, անցնում Ախուրյանի տակով, ապա բարձրանում է գետի մյուս ափով և դուրս է գալիս մի մեծ ու բարձր բլուրի գլուխ, ուր ցույց են տալիս մի հին աշտարակի ավերակները: Չ. Ալիշանը, բերելով այս ավանդությունը, հիշեցնում է Հոնդոնի ստորերկրա թունելը Թեմզա գետի տակով և ասում է, որ, ուրեմն, հայերը անգլիացիներից առաջ են այդպիսի մի մեծագործություն կատարել: Պատվավոր հանգամանք և համեմատություն, ի՞նչ խոսք: Բայց ամբողջ հարցը այն է, թե որքան իրական է Ախուրյանի տակով անցնող թունելը: Ոչ ոք չէ կարող ասել:

Անին այցելողների տպավորությունները արձանագրելու համար վանահայր վարդապետը պահում է մի հատուկ մատչան: Թերթելով այդ գիրքը, ես գտա մի ուսու այցելուի գրածը: Կարծեմ Նրեանի երկաթուղու շինության վրա աշխատող տեխնիկներից մեկն է եղել այդ գրվածքի հեղինակը: Նա պատմում է, թե ինչպես մտավ այս ստորերկրյա ճանապարհը, հաստատ վճռած լինելով իմանալ, թե ի՞նչ է դա: Այդտեղից ես իմացա, որ ժողովրդի մեջ մի ուրիշ ավանդություն էլ կա: Ասում են, թե այդ ճանապարհը տանում է գետի մի տեղ, ուր թագավորները թաքցնում էին իրանց գանձերը: Ահա այդ գանձերն էլ վճռականություն են տալիս ուս այցելուին, և նա, լավ պատրաստություններ տեսնելով, մտնում է ստորերկրյա ճանապարհը: Նա ուներ իր հետ ացեախիների լապտեր, գործիքներ՝ ճանապարհի դժվարությունների դեմ մրցելու համար: Նեղություններ, շարշարանքներ շատ է կրում հետաքրքրությունից բռնված ուղևորը, բայց մոռանում և արհամարհում է ամեն ինչ, սողում է կարիճների, ֆալանգաների վրայով, գլուխ չէ կորցնում այն տեղերում, ուր ստորերկրյա անցքը այս կամ այն կողմ է թեքվում: Գնում է, հասնում վերջին և վերադառնալով, ասում է, թե առասպել է թագավորական գանձերի ավանդությունը:

Նր: Մի հասարակ ստորերկրյա ճանապարհ է դա և ուրիշ ոչինչ:

Մոտավորապես այս է պատմում ուս այցելուն: Նա ասում է, թե հասել է ճանապարհի վերջին, և ո՞վ գիտե, թե որքան ճիշտ է նրա այդ խոսքը: Բայց որ խորհրդավոր անցքի հետ կապված են այդպիսի ֆանտաստիկ առասպելներ, դրա պատճառն այն է, որ Անին մայրաքաղաք է եղել, փարթամ թագավորներ է ունեցել: Չկա մի հին բերդ, որ այդպիսի գաղտնի ճանապարհ ունեցած չլինի դեպի ջրի ձորը: Պաշարման ժամանակի համար էր շինվում ջրի ճանապարհը: Եվ պետք է ասել, որ Անիի այդ ստորերկրյա անցքը այնքան էլ նշանավոր մի շինություն չէ: Գոնե ներսես Սարգիսյանը, որ տեսել էր Թոխաթի, Ամասիայի և Բաբերդի գետնափոր ուղիները, ասում է, որ Անիի այս անցքը նրանց մոտ աննշան մի բան է...

Ավելի հետաքրքրական է այն, որ ճանապարհը այստեղից միայն դեպի գետը չէ գնում, այլ ճյուղավորվելով, բարձրանում է գետի վեր, մտնում է քաղաքի տակը: Բայց այս մասին ես հետո կխոսեմ: Առաջով շփոթենք Ախուրյանի այս հետաքրքրական լանջի նշանավոր տեղերը:

Քիչ էլ ցած գնալով, ձորի հատակին մոտ, գետի վրա, ցցվում է մի ժայռ, որի վրա ավերակների մի մեծ կույտ է ցրված: Ժայռը շրջապատված է պարիսպներով, որոնց թռվառ հետքերն են միայն մնացել, իսկ պարիսպների մեջ երևում են երկու կես-քանդված, կես-կանգուն մատուռներ: Մեկը պարզ շինություն է, քառանկյունի, կանգնած է ժայռի պռունգին և ուղղակի Ախուրյանի մեջ է նայում. մյուսը՝ գեղեցիկ, զարդարուն, աշտարակաձև է, ս. Փրկչի նման բայց այն տարբերությամբ, որ դրսից նրա շրջագիծը միալար կոլորակ չէ, այլ կազմված է կիսաբոլոր անկյուններից. որոնք գեղեցիկ խորշեր են գոյացնում:

Որքան սոսկալի է եղել ավերմունքը այս ամայի ձորի այս փոքրիկ անկյունում: 1845 թվականին Ներսես Սարգիսյանը գտել է այդ երկու մատուռները բոլորովին անաղարտ, բոլորովին անվնաս: Իսկ այսօր նրանք արևմտյան

կողմից արդեն պատեր շունեն և նայում են ու, այլանդակ բացվածքների նման: Միայն արևելյան կողմից կոլոր մատու-
որ դեռ պահում է իր կրծոտած, ծամծամած կողերը: Սա
ապացույց է, որ Անիի հավիտենական չէ, որ նրան մի կարճ
կյանք է մնում: Ամեն տեղ, յուրաքանչյուր քայլում ձեր
աչքին է խփում անխնամ ավերակի օրենքը՝ այսօրը երեկ-
վանից վատ: Քանդողը մի բույս անգամ չէ հեռանում ծե-
րության փշրանքներից: Քանդում է բնությունը, քանդում է
մարդը: Եվ պե՛տք է ասել, որ մարդը ավելի վատ, ուղղակի
զգվելի քանդող է: Բնությունը գոնե միանգամից վերցնում,
տրորում է շինությունը և մեծ-մեծ բեկորների մի կույտ է
դնում նրա տեղ: Բնությունը ոչինչ չէ գողանում, ոչինչ չէ
տանում: Իսկ մարդը մոտենում է բորենու նման. նրան գրա-
վում են հղկած, զարգարուն սալ քարերը, որոնք շինության
երեսն են կազմում: Եվ նա դանդաղ պոկում է այդ քարերը,
մաշկում է գեղեցիկ շինությունը, բաց անելով նրա փորո-
տիքը ու այդպես ձգում, գնում է, տանելով իր հետ գողա-
ցածը: Կարմիր քարերից շինված կոլորակ մատուռը հրեշա-
վոր կերպով մաշկված է շատ տեղերից: Կարմրությունը երե-
սի քարերն են տալիս, նրանք պոկված են և գեղեցիկ մար-
մինը բաց է արել իր կաշվի տակ թաքնված սպիտակ զանգ-
վածը...


Երկու մատուռների մասին ոչինչ հիշատակություն չկա:
Եվ ժողովրդական երևակայությունը եկել, բազմել է պատ-
մական հավաստիության տեղ: Ասում են, որ այստեղ թա-
գավորի աղջիկը թե քույրն էր ապրում: Ասում են, ցույց
տալով մի շինության հետքեր: Ո՞վ էր այդ թագավորը, ո՞վ
էր նրա դուստրը կամ քույրը, — ոչ ոք չէ ասում: Լսելով ա-
վանդություններ մի տեղի մի շինության մասին, ես ամե-
նից առաջ այն հարցն եմ տալիս ինձ, թե ի՞նչ հանգամանք-
ներ կարող էին նպաստել այս կամ այն ձևով ավանդություն
կազմվելուն: Այս մատուռների շուրջը շափաղանց շատ են
այնպիսի հանգամանքներ, որոնք միայն թագավորական մի
շինության ավանդությունը կարող էին ստեղծել: Դուք էլ

ակամա հավատում եք, որ թագավորի արժանի մի տեղ է
սա:


Ամենից առաջ դիրքը: Երեք կողմից գետն է պատեցնում
իր պղտոր ալիքները: Նեղ է այստեղ նրա կիրճը: Այս փոք-
րիկ մատուռների առաջ, հարավային կողմից, Ախուրյանը
լիզում է իր ձախ թևի ժայռերը, որոնք միապաղաղ պատի
պես ձգվում են գետի վեր, ձգվում անվերջ: Այստեղից այդ
տիտանական պատը երկնքի մեջ ցցված է երևում: Դեպի
արևմուտք մատուռները նայում են Անիի Միջնաբերդին, որի
զլխից այս կողմն են նայում արքայական պալատների և
հեղեղեցիների ավերակները, ավերակներ այժմ, իհարկե, իսկ
այն ժամանակները, երբ շունչ կար այս կողմերում, զար-
գարուն, գեղեցիկ շինություններ: Հյուսիսից ձգված է մեր
զառիվայրը, որով իջել ենք մինչև գետի վրա ցցված այս
ժայռը:

Այդտեղ, այդ զառիվայրի վրա, երևում են հետքեր,
որոնք ցույց են տալիս, թե որքան մեծ խնամքի առարկա
են եղել մատուռները: Քաղաքից այստեղ էր բերում մի հո-
յակապ, արհեստական ճանապարհ: Նա քարե, սրբատաշ
սանդուղք էր, որ ուղղակի վերևից ցած չէր գահավիժում,
այլ զառիվայրի թեքությունը նվաճելու համար աջ ու ձախ
էր ծովում և այդպիսով հարմարություն էր տալիս այդտեղով
իջնողին և բարձրացողին: Եվ այդ սանդուղքը բաց չէր: Նրա
երկու կողմով պատեր էին գնում, որոնք միանում էին կա-
մարներով: Պատերի մեջ թողնված չեն պատուհաններ՝ այդ
ծածկված ճանապարհը լուսավորելու համար: Նա գնում,
վերջանում էր երկու մատուռների մոտ:

Որքա՛ն ծախս ու աշխատանք է կլանել այս քարե
ճանապարհը: Այժմ նրանից խղճուկ կտորներ են միայն
մնացել, բայց դրանք էլ բավական են ցույց տալու համար,
որ այդ շինությունը Անիի զարդերից մեկն էր կազմում: Ահա
և մի ուրիշ պատճառ, որ ժողովրդական երևակայությունը
թագավորի աղջիկ կամ քույր դներ երկու մատուռների
ժայռի վրա, շրջապատված պարիսպներով, Ախուրյանի հան-
գարտ ալիքների վրայից, կիրճի խորքից դեպի բարձր, դեպի



Կամուրջի մնացորդ Ախուրյան գետի վրա (Զեփուս գյուղի մոտ), X—XI դդ.



Կամուրջի մնացորդներ Ախուրյան գետի վրա (XI դ.)

Շիրակի երկինքը աղոթքներ ուղարկող: Երեւի այդ ծածկված ճանապարհով էր թափափորաղն կույսը գնում քաղաք և վերադառնում այնտեղից: Նրա ապահովության, նրա հարմարության համար էր այսքան ոսկի թափվել այս շոր ու քարքարոտ ձորալանջի վրա...

Երեւակայել կարելի է դեռ ուրիշ շատ բան, շատ տեսարաններ ու խորհրդավոր վիպական հանգամանքներ: Բայց երեւակայությունը դեռ ճշմարտություն չէ: Հոնենց Տիգրանը իր արձանագրության մեջ ասում է, թե ինքը վերանորոգեց և ս. Լուսավորչին տվեց նաև Բեխենց վանքը: Արդյոք այս մատուռն էր շին Բեխենց վանքը: Շատ կարելի է: Շատ կարելի է նույնպես, որ ծածկված ճանապարհը հատկապես այդտեղի համար չէր շինված: Մատուռներից մի ճանապարհ գնում է դեպի արևմուտք, գետի ափով և հասնում է մեծ կամուրջին, որից այժմ մի-մի ավերված պատ են մնացել Ախուրյանի երկու ափերին:

Կանգնած են այդ բարձր բեկորները իրար հանդեպ, և նրանց միջով գետը տանում է իր ջրերը: Որոշ, ամբողջացրած հասկացողություն այդ պատերը շին տալիս կամուրջի շինության մասին: Միայն աջ ափի պատը, մյուսի համեմատությամբ, մի քիչ ավելի բան ունի իր վրա, և նայելով նրան, կարելի է մի քանի մանրամասնություններ ենթադրել: Կամուրջը լայն ու հաստատուն էր, արժանի մի մեծագործ ժողովրդի անվան ու համբավին: Կարծում են, որ նա երկու հարկ է ունեցել, մեկը ոտով գնացողների, մյուսը, անասունների համար: Այդ կարծիքը շատ հավանականություն ունի¹, երթևեկությունը այս կողմից շատ մեծ պիտի լիներ, որովհետև չկա մի ուրիշ տեղ, որով Անիից դեպի հարավ ընկած

¹ Ախուրյանի վրա, Անիի սահմաններից հեռու, դեպի հյուսիս, բայց Անիի ճանապարհներից մեկի վրա, Չրփրլու գյուղի մոտ, մնացել է մի դարմանալի հին կամուրջ, որի կամարը այժմ փլված է: Զարմանալի է նա իր տեսքով, որ ցույց է տալիս թե շինարարական տաղանդով օժտված մարդը ինչ հանգուցն մտքեր կարող է իրագործել: Ախուրյանը այստեղ չափազանց խոր ու նեղ կիրճով է անցնում, և այդ խոր անդունդի վրա, ուղիղ նրա միջից տիրաբար բարձրանում է հսկա կամուրջը, որ անսնդին հիացմունք և ահ է ազդում:

երկիրը հաղորդակցություն ունենա մայրաքաղաքի հետ: Անցնելով գետի մյուս ափը, որ այստեղ համեմատաբար ցած է և դյուրամատչելի, ճանապարհը ծովով ելավ բարձրանում էր վերև, դուրս գալիս այն լեռնադաշտը, որ փռված է Անիի առաջ հարավից, բաժանված քաղաքից Ախուրյանի մեծ ձորով: Չմոռանանք հիշել, որ այդ դաշտում, Անիի դիմաց, գտնվում էր մեծ քաղաքի գերեզմանատունը, որ այժմ ներկայացնում է քարերով ծածկված մի մեծ տարածություն:

Ահա այս ճանապարհի մի մասն է կազմում այն քարաշեն, ծածկված սանդուղքը, որ իջնում է քաղաքից մինչև մատուռները կամ, եթե ուզում եք, Բեխենց վանքը: Սակայն ես չեմ ուզում ասել, թե այդ սանդուղքներով էին բարձրանում գետի մյուս ափից եկող մարդիկ և կարավանները: Ցաքուցրիվ ընկած, սարսափելի կերպով աղճատված ավերակները այնպես գաղտնապահ են, որ շատ անգամ ավելորդ էլ է նրանց դիմել մի բան հասկանալու համար: Ես միայն այն գիտեմ, որ կամուրջից ուղղակի դեպի վեր, դեպի քաղաքը դիմելու ոչ մի հնարավորություն չկա. ձորը այդ կողմից ուղղաձիգ, անմատչելի լանջեր ունի, որոնց մի կողմի վրա թառ է եղել «մզկիթ» անվանվող շինությունը, իսկ մյուս կողմում Միջնաբերդի բլուրն է ցցվում: Միակ հարմար ուղղությունը, որ կամուրջով անցնողների համար կարող էր լինել, այն է, որ գնում է նախ դեպի մատուռների կողմը, և ապա պտույտներով բարձրանում է դեպի քաղաքի հարավարևելյան անկյունը, դեպի Տիգրանի դուռը:

Այս բոլոր տեղերը, մինչև կամուրջը, XIII դարում նվիրված էին ս. Լուսավորչին: Այս բոլոր տեղերը այժմ են լուռ ու ամայի ավերանքներ: Բայց Անիի շին ժամանակները նրա աչքն էին իբրև ելք դեպի Ախուրյանի ձորը: Մեծ կենդանություն, անդադար շարժման տեղեր պետք է եղած լինեն: Երեւակայեցեք մի մեծ քաղաք և այդ քաղաքի կողքով հոսող մի գետ, որ խորխորատներ է սիրում, նրանց հատակն է քերում: Միայն այս կողմով աղգաբնակությունը կարող էր մոտենալ նրա առատ ջրերին...

Ս. Լուսավորչի մոտից մենք վերադառնում ենք մեր ճակած ճանապարհով, այս անգամ սկսում ենք պտտել քաղաքի շուրջը, նրա պարիսպները տեսնելու համար:

Նրանք, այդ պարիսպները սկսվում են հենց այստեղից, քաղաքի հարավ-արևելյան անկյունից և գնում են նախ հարավից դեպի հյուսիս, Գլիձորի երկարությամբ, ապա թեքվում են արևելյան հյուսիսից դեպի արևմուտք և կտրում են քաղաքի ամենավտանգավոր տեղը, այն հարթությունը, որով Անին միանում է Շիրակի դաշտի հետ:

Մեր երկրում հնություններ որոնողը ամեն տեղ տեսնում է եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, խաչքարեր, ուխտատեղիներ: Այդ մնացորդները մեծ առատություն են ներկայացնում: Օրերով ճանապարհորդող այցելուն շլանում է այդ առատությունից. նա տեսնում է արվեստի հարուստ քաղմագանություն, աշխարհագրական դիրքերի, բնության տեսարանների վրա է հիանում, բայց և այնպես, մի տեսակ ձանձրույթ է զգում, միակողմանիության զգացմունքի տակ է ճնշվում: Ամեն քայլում աղոթքի տեղեր. ամեն տեղ հոգեպաշտության հուշարձաններ, խունկ ու մոմ, երկնքի իրերը պատմող գործեր: Նրանք շատ լավ են երբ, ուզում ենք իմանալ, թե մեր նախնիքները որքան՝ բարեպաշտ էին, ինչպե՞ս էին վերաբերվում իրանց կրոնին, որի համար այնքան տառապանքներ էին կրում, այնքան արյուն էին թափում: Ստանալով մեկը մյուսից պերճախոս ապացույցների անթիվ փաստեր, դուք վերջիվերջո անտարբերության պես մի րան եք զգում: Կշտացածի նման եք և ձեր ուշադրությունը արդեն առանձնապես նշանավոր կրոնական շինությունները կարող են գրավել:

Այո՛, մենք չերմեռանդ աղոթողներ էինք, մենք մեր խոսքը չէինք խնայում մեր բարեպաշտությունը ամենափայլուն կերպով ցուցաբերելու համար: Բայց մի՞թե մենք միայն աղոթել գիտեինք: Մի՞թե մենք շունեինք երկիր, սեփական

նություն: Մի՞թե մեզ համար երբեք գոյություն չէ ունեցել ինքնապաշտպանության անհրաժեշտությունը: Պատերազմը միշտ կախված էր մեր երկրի վրա. նա տրորեց, տակնուվրա արավ ամեն ինչ: Եվ մի՞թե այդ դարավոր իրականության մեջ մենք երբեք շտվորեցինք պատերազմի արվեստը: Աղոթում էինք, ճիշտ է, շատ էինք աղոթում, շափաղանց էինք աղոթում, լաց լինում, երկինք կանչում նույնիսկ այն ժամանակ, երբ երկինքը չէր լսում: Բայց հո եկեղեցում, վանքում չէինք թաքում. հո մեզանում էլ գիտեին երկաթը սուր դարձնել, մեզանում էլ մարդիկ կային, որոնք կռվում էին, հարձակվում էին, պաշտպանվում:

Ո՛ւր են նրանք: Նրանց հիշատակնե՛րը:

Մեր լեռնաստաններում, օրինակ՝ Ղարաբաղում, ման էկողը փոքրիշատե կարողություն ունի այդ հարցը բավարար կերպով լուծելու: Մնացել են բերդեր, ամրություններ: Բայց ճա նրանցից երբեք այն տպավորությունը չեմ ստացել, թե աչքիս առջև ունեմ մեր նախնիքների ռազմական ընդունակության կատարյալ արտահայտությունը: Այդ լեռնային ամրությունները, ճիշտ է, շատ են ազգու, շատ են ճնշող իրանց տեսքով: Բայց մարդը այդ հանգամանքի մեջ շատ քիչ գործունի: Նա միայն ընտրել է, նա միայն օգտվել է իմացել: Ամպերի մեջ կորած մի լեռնագագաթ, խորխորատների վրա ցցված մի ահագին ժայռ, որ միայն մի կողմից ունի փոքրիշատե մատչելի կողեր, մի խոսքով՝ այն, ինչ լեռնային լեզվով կոչվում է «արծվի բույն» — ահա ինչեր է տվել բնությունը լեռնցուն: Դրանք շատ փոքրիկ բաներ են, և դրանց միանգամայն անմատչելի դարձնելու համար հարկավոր չէ ձեռք արվեստ, ռազմագիտական նրբություն: Բնությունը ամենից շատ բանն է արել, մարդը լրացրել է պակասը մի հատ պատ քաշելով, որի վրա աշխատանք, իհարկե, շատ է թափել, բայց որ դուրս է բերվել մի հասարակ արհեստավորի ձեռքով: Այդ պատերը հաճախ հանգզնություն են ցույց տալիս, ուրվվելով այնպիսի տեղերում, ուր մարդու ոտ, խակապես, չափտի կարողանար կոխել: Բայց խնդիրը ոչ հանդգնությունն է, ոչ պատը:

Ինքնապաշտպանութեան գործը սաստիկ զժվարանում է զաշտային տեղերում, ուր բնութիւնը արդեն պաշտպան-վողի կողմը չէ, այլ նրա թշնամու, հարձակվողի կողմը: Այստեղ արդեն մարդկային հնարագիտութիւնն է դուրս գալիս մատնող բնութեան դեմ, իր խելքով, իր ձեռքերով է իր համար պահպան ամրութիւններ կանգնեցնում, որոնք և ցույց են տալիս, թե շինողը որքան մտածել է իմացել, որքան բաներ է նախատեսել և որ աստիճան հանճարեղ է եղել տեղի դիրքերը հասկանալու, բոլոր պատահականութիւնները նախատեսելու մեջ: Այսպիսի տեղերում է կատարյալ թափով արտահայտվում ռազմական արվեստը, երկրի գլխավորի տաղանդը:

Եթե Ախուրյանը կամեցած լիներ իր խորխորատները փորել Անիի շուրջը մի մեծ կիսաբոլորակի ձևով, կամ թե Գլխձորը փոխանակ կարճ և ուղղաձիգ լինելու՝ մի խոր ու ժայռոտ անդունդ տարած լիներ Անիի հյուսիս-արևելյան կողմով էլ, այն ժամանակ անեցին գուցե բավականանար փոքրիկ պաշտպանողական միջոցներով: Նա կբավականանար իրան շրջապատող ձորերի թույլ տեղերը ամրացնելով և ապահով կնստեր իր տանը: Բայց Անին կիսով չափ դաշտային բերդ է: Եվ դաշտի կողմից էլ նա ընդունել է այդպիսի բերդի կերպարանը:

Միայն Անին է այն բերդը, որ այսօր կարող է լիովին հասկացողութիւն տալ, թե միջնադարյան հայր ինչպես էր կարողանում իր ստացվածքը պաշտպանել դաշտի վրա: Ես չգիտեմ մի ուրիշ տեղ, ուր եկեղեցիների շափ գեղեցիկ և նրանցից էլ ավելի վեհ լինի ժողովրդական կյանքի քաղաքական կողմի արտահայտութիւնը: Աղոթողների կողքին բարձրանում էին զինվորութեան հուշարձանները: Զքնաղ եկեղեցուց մինչև ահեղ պարիսպները մի քանի քայլ տարածութիւն է: Տեսնում եք, որ այստեղ արտահայտված են մարդկային կյանքի հակադրութիւնները մի զարմանալի պարզութեամբ: Մայր եկեղեցու, ս. Փրկչի բնօրյշ կամարների տակ սիրաբեր պիտի փափկանար, վերանար աշխարհից.—այսպես են կամեցել ճարտարապետները: Բայց նույն

ճարտարապետները կանգնեցրել են և ահարկու աշտարակներ, բարձր ու հաստ պատեր, որոնց վրա նույն մարդը, թե ուզում էր ապրել ու հրջանիկ լինել, պիտի գազան դառնար, արյուն թափեր, միս հոշոտեր:

Անին միայն իր սիրուն եկեղեցիներով չէ հռչակավոր: Բոլորովին ո՛չ: Եկեղեցիներ շատ կան, Տրդատը Արգինայում էլ ցույց է տվել իր հանճարը: Ինչ որ չկա մի ուրիշ տեղ, այդ Անիի պարիսպներն են: Եվ շատ հասկանալի է, թե ինչու բոլոր այցելուների վրա ավելի մեծ տպավորութիւն թողնողը պարիսպներն են: Արիւր համեմատում է Անիի պարիսպները տիեզերակալ Հոռմի պարիսպների հետ: Երևակայում եք ավելի մեծ պատիվ մի հին բերդի համար: Եվ նշանավոր գիտնականը գտնում է, որ մեր պարիսպները Հոռմի պարիսպներից ո՛չ պակաս վեհատեսիլ են, ո՛չ պակաս ամուր:

Այսպիսի համեմատութիւնները միայն կարող են լրացնել այն պակասութիւնները, որոնք այնքան ցավալի են մեր պատմագրութիւնների մեջ: Եվ երբ նրանք մեզ ասում են, թե Սմբատ Երկրորդը կոչվում էր Տիեզերակալ, առանց, սակայն, բացատրելու թե ինչու՝ համար էր նա այդպես կոչվում, մենք պիտի մեր ուշադրութիւնը կանգնեցնենք այն հանգամանքի վրա, որ նույն Սմբատն է շինել այս պարիսպները, շինել է ութ տարի: Այդ ժամանակ միայն մենք կարող ենք բավականաչափ հասկանալի դարձնել մեզ համար նրա այդ տիտղոսը: Այսպիսի ամրութիւններ ծրագրող, գլուխ բերող թագավորը չէր կարող վատասիրտ ու հաղթվող լինել:

Բագրատունիների մեջ ամենախրոխտն է Սմբատ Շահանշահը: Կատրանխտե թագուհին Մայր եկեղեցու արձանագրութեան մեջ անվանում է նրան մեծ: Եվ խրոխտ է նրա շինութիւնն էլ: Խրոխտ է նույնիսկ այժմ, երբ ավերված, կրծոտած կողերով է պաշտպանում իրանից ավելի դժբախտ ավերակների քաղաքը. բայց պաշտպանում է, ինչպես մի ժամանակ ամուր ու անվնաս կողերով էլ, կրծքով էլ պաշտպանում էր շին ու եռուն քաղաքը:

Գլխձորի արևմտյան կողը եզերելով, պարիսպը գնում է

ճախ դեպի հյուսիս: Այդտեղ է Գլիժոր տանող դուռը: Իսկ
երբ պարիսպը սկսում է փոքր առ փոքր թեքվել դեպի հյուս-
սիս, այնտեղ մեծ աշտարակի կողքին բացվում է Դվնա
գուռը: Դա դեպի Դվին տանող ճանապարհի դուռն է: Իսկ
Դվինը քանդվելուց, անհայտանալուց հետո դուռը ստացել
է Երեանի դուռ անունը:

Սոսկալի քարակույտեր են թափված այդ դռների մեջ,
դուրսն ու ներսը: Մենք այդ քարակույտերի վրայով էլ դուրս
ենք գալիս Անիից: Բայց բոլորովին դրսում չենք, մեր առջև
դարձյալ մի պատ կա: Դա արտաքին պարիսպն է, որ
սկսվում է այստեղից քիչ դեպի աջ, Գլիժորի վրայից: Քա-
ղաքը հյուսիս-արևելյան կողմից, այսինքն Շիրակի դաշտի
կողմից պաշտպանելու համար երկու զուգընթաց պատեր են
եղել շինված: Այդ պատերի միջով էլ մենք ծանր առաջ ենք
գնում, մանրամասն դիտելով Սմբատի ամրությունները,
կանգնելով յուրաքանչյուր մի տնտարանի, յուրաքանչյուր
մի ուշագրավ մանրամասնության առաջ:

Դրսի պարիսպը սաստիկ վնասված է: Տեղ-տեղ հավա-
սարված է հողին, տեղ-տեղ փոքրիկ մնացորդներ է պահել
և համարյա ոչ մի տեղ չէ մնացել իր բնական բարձրության
մեջ: Սա բնական է. այդ առաջավոր ամրությունները ամե-
նից շատ էին ենթարկված թշնամիների հարվածներին:
Նրանք պաշտպանում էին ներքին պարիսպը, որ համեմա-
տաբար լավ է պահվել: Համեմատաբար եմ ասում և ընդ-
հանուր առմամբ: Թե չէ՝ ներքին պարիսպն էլ շատ տեղ
այնպիսի ավերմունքներ է ենթակայացնում, որ երեակայե
անգամ դժվար է:

Երկու պարիսպների մեջտեղը լցված է քարակույտերով,
տեղ-տեղ դրանք կատարելապես անանցնելի են: Թափված
են ոչ միայն առանձնացած քարեր, հատ-հատ, այլև պատե-
րի և աշտարակների ամբողջ բեկորներ: Բայց կան մի քանի
կտորներ ներքին պարիսպի վրա, որոնք առաջ դուր կանգ եք
առնում հաճությամբ: Նրանք բոլորովին անաղարտ են մնա-
ցել. կարծում եք, թե նրանց շինող վարպետները նոր, դեռ
երեկ, անցյալ օրը, վերջացրել են իրանց գործը, իջել այդ

քարձր կատարներից: Այդ կտորներն էլ ձեզ հասկացություն
են տալիս, թե ինչ տպավորություն էր թողնում Անին իբրև
քերդ այս կողմերից մոտեցող բարեկամի և թշնամու վրա:
Դեղեցկությունը միացած ամրության հետ: Քաղաքի համար
այդ պարիսպը միայն պաշտպանություն չէր, այլև զարդա-
րանք: Նայեցե՛ք այդ սրբատաշ սալ քարերին, որոնք հագցը-
ված են պատի մեջ: Նայեցեք այդ կոյոր լայնանիստ աշտա-
րակներին: Ինչպե՛ս են նրանք համաչափ ու դեղեցիկ քարձ-
րանում, ներկայացնելով միևնույն ժամանակ ուժ, դժվա-
քամատչելի ամրություն: Դեղին, կարմիր, սպիտակ քարերից
է շինված հսկա պարիսպը: Բայց վարպետները շատ տեղ
ամբողջ զարդեր են դրել սև քարերից: Նրանք կամ այնպես
են դասավորված, որ շահմաթի տախտակի նմանությունն
են տալիս, կամ կազմում են մեծ, ահադին խաչեր: Դվնա
գուռերի մոտ մի աշտարակի կարնիզի վրա երևում է մի
գեղեցիկ բարձրաքանդակ, որ ներկայացնում է վիշապ և
եղի գլուխ: Բայց ավելի շատ են քրիստոնեությունը նշանե-
րը: Այս բարձր աշտարակներից մի քանիսի մեջ մատուռ-
ներ էլ կան շինված:

Անիի պարիսպները շատ անգամ են վերանորոգվել,
կարկատվել: Սմբատ Տիեզերակալին հաջորդած Բագրատու-
նի թագավորները կարիք չունեին վերանորոգելու պարիսպ-
ները. նրանք այնքան երկար լծագավորեցին, որ ժամանակը
կարողանար ավերիչ ազդեցություն ունենալ այս ամրու-
թյունների վրա: Երբ հունաց դավադրությունը, միացած մի
քանի հայերի ստոր դավաճանության հետ, դուրս էր հանում
Անիից վերջին Բագրատունի թագակրին, Սմբատ Տիեզե-
րակալի մահից ընդամենը մի հիսուն տարի էր անցել: Բազ-
ատունիներին կարճ միջոցով հաջորդեցին հույները, ապա
Շեղդատյան մահմեդական տերերը, որոնք 120 տարի իշխե-
ցին այստեղ: Այս ժամանակներում էլ Անին ամենազառն
հարվածներ կրեց թշնամիներից, մեծ-մեծ պաշարումների
ենթարկվեց: Պարիսպների վերանորոգությունը անհրաժեշտ
էր, բայց մահմեդական տերերը շատ չնչին բան արին
այդ կողմից. և Անին մնաց զուտ քրիստոնեական քերդ: Այդ

են վկայում նրա պարիսպների վրա մնացած խաչերն ու հայերեն արձանագրությունները:

Իսկ արձանագրություններ բավականչափ կան և մեծ մասամբ վերաբերվում են այն ժամանակներին, երբ Անիի պատկանում էր Զաքարի Սպասալարի ժառանգներին:


Ես վերևում մի քանի խոսք ասացի վերակենդանության այն ժամանակամիջոցի մասին, որի սկիզբ ղնողը այդ հայ իշխանն էր: Վերանորոգվեցին քարուքանդ եկեղեցիներն ու վանքերը, հասարակական շինությունները: Առանց վերանորոգության չէին կարող մնալ Անիի պարիսպները: Բայց Զաքարյանները իրանց անձնական միջոցներով միայն մասնավոր վերանորոգություններ կարող էին անել. անդառնալի կերպով անցել էին Սմբատ Տիեզերակալի ժամանակները, երբ այնպիսի մի հսկայական ձեռնարկություն, ինչպիսին էր այս մեծ ու հպարտ շրջապարիսպը, կարող էր գլուխ բերվել առանց մասնավոր մարդկանց օգնության: Զաքարյանները այդպես չէին կարող անել: Եվ մենք տեսնում ենք մի սրտառուչ հանգամանք. բերդաշինությունը բարեպաշտության, բարեգործության առարկա:

Մասնավոր մարդիկ իրանց հոգու փրկության համար շինում էին աշտարակներ, պարիսպների ավերված տեղերն էին վերանորոգում և գրում էին արձանագրություններ: Ընդամենը այնպիսի նվիրաբերություններ, ինչպես ստանում էր եկեղեցին, զանազանությունը այն էր, որ այս խրոխտ ամրությունները չէին կարող, իհարկե, նվերների փոխարեն պատարագներ խոստանալ: Հայր մեռնելիս կտակ էր անում իր հոգու փրկության համար. և այդ կտակի մեջ միայն այս կամ այն սուրբը, այս կամ այն ուխտատեղին չէր հիշվում, այլև մայրաքաղաքի շրջապարիսպը, որ հարկավոր էր մարդկանց պաշտպանության համար:

Տեսե՛ք ինչեր են գրված Անիի պարիսպների վրա.

«Կամօքն Աստուծոյ ես Շանուշս, կենակից Խաչերեսին, անդարձով Խաչերեսին շինեցի զԲուրջս յիշատակ մեզ (1218 թ.)»:

«Շնորհին Քրիստոսի ես Մամխաթունս, դուստր Խա-



Պատկեր (Մաս 1) Երևանի պարիսպների վրա գտնվող արձանագրություն

շերեսին Լօռեցոյ անժամ ի Քրիստոս գնացի յիմ հօրն ի հո. ամին որ ինչ տունալ էք... անյիշատակ էի շինեցի զբուրջն» յիշատակ ինձ... աղաչեմ որ կարգայք մեզ թող... (1219 թ.)»

«Կաման Աստուծոյ եւ Լուստոս որդի Գրիգորոյ շինեցի զարձանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց և յարեշատուիւն Շահնշահի սպարապետին, ի յամիրայութեան Վահրամայ կատարեցաւ բուրջս, Տէր Աստուած, ողորմեա Լուստին» ամէն»:

«Շնորհին Քրիստոսի ի տէրութեանս Մանդատորթա-խուցէս Ամիր սպասաւար Շահնշահ Սարգսի՛ եւ Մխիթարիչ Գանձակեցի ծառայ Քրիստոսի ի յարգար վաստակոց Աբրահամու եղբօր իմոյ շինեցի զարձանս վասն փրկութեան հոգ-տոյ նորա և յիշատակի մեզ և ծնողաց մերոց. որք կարգայք յիշեցէք զԱբրահամ ի Քրիստոս Յիսուս (1215)»:

Ահա և Զաքարյան իշխաններից մեկի գիրը.

«Շնորհին Քրիստոսի եւ Մանդատորթա-խուցէս Ամիր Սպասաւար Շահնշահ Զաքարիա շինեցի զարձանս և զպարիսպս վասն յիշատակի մեզ և ծնողաց մերոց»:

Բայց այս բոլոր վերանորոգություններն ու կարկատան-ները Անիի պարիսպների ընդհանուր տեսքի վերաբերմամբ ունեն երկրորդական, անկարեւոր նշանակություն: Հիմքը՝ գլխավոր մարմինը անփոփոխ է մնացել Տիեզերակալի օրե-րից, այսինքն ինն հարյուր տարի: Մարդ զարմանում է թե այս քայքայված ամրությունները ինչպե՛ս են իրանց զառա-մած ուսերի վրա տանում այսքան երկար ժամանակամիջոցի ծանրությունը: Ահա շինարարական հանձարի մի նոր, ավելի մեծ հաղթանակ...


Անկասկած է, որ Անիի պարիսպները անհամեմատ լավ պահպանված կլինեին, եթե միայն բնությունը եղած լինե-րա ճակատագրի տերն ու տնօրենը: Բայց Անիի պարիսպ-ները, ինչպես առհասարակ ամեն մի շինություն այստեղ,

1 Զաքարե Սպասաւարի թոռնորդին: Զաքարեն իր որդուն տվել էր Շահնշահ անունը, որ հետո իբրեւ պատվանուն գործ էին ածում մյուս Զաքարյանները: Մանդատորթա-խուցես վրացերեն լեզվով գլխա-վոր հրամանատարի պաշտոնն է նշանակում, որ ինչպես երևում է, ծառանգական մի տիտղոս էր Զաքարյանների մեջ:


ահագին, անսպառ քարահանքեր են եղել շրջակա երկրի համար դարերի ընթացքում: Եվ քարահանքը գրավիչ է եղել մանավանդ նրանով, որ միանգամայն պատրաստ, տաշած ու հղկած քարեր է տվել: Այդ քարերով ամբողջ ամրություն-ներ, ամբողջ ապարանքներ են կառուցվել շրջակա գյուղե-րում: Նույնիսկ Կարսը, շնայած որ այստեղից բավական հե-ռու է, Անիի քարերով է ամրացրել իր պարիսպները: Ինչո՞ւ զարմանալ, երբ այսօր իսկ շարունակվում է նույն թալանը, նույն հափշտակությունը: Ռուս այցելուներից մեկը, Ե. Մար-կով, ասում է, որ Երևանի երկաթուղու կապալառուները Անիի քարերն էին գործ ածում կայարանների շինության և այլ պետքերի համար:

Տարել են, տարիներով, դարերով տարել են, բայց ա-հագին քարահանքը դեռ բոլորովին չէ դատարկվել: Դեռ պարիսպների տակ քարակույտեր են թափված, դեռ կիրն ու ավազը պահում-պահպանում են բարձր կանգնած, հպար-տությունք երկար ձգվող պարիսպների մի երկար տարածու-թյուն: Սմբատի ձեռակերտը, այո՛, դեռ ճակատը պնդացրած գիմադրում է մարդկանց և բնության արհավիրքներին: Եվ նա դեռ երկար կգիմադրե, գոնե ավելի երկար, քան ներսում գտնվող շինությունները:

Ճակատի պնդության ամենամեծ ապացույցը՝ տալիս է Ավագ Դուռը, Անիի գլխավոր մուտքը հյուսիս-արևելյան կող-մից, այսինքն դաշտավայրի ամենահարմար և դյուրամատ-չելի տեղից: Որքա՛ն հարվածներ պիտի թափված լինեն նրա վրա, ո՞վ կարող է իմանալ: Մի փոքր հասկացողություն տալիս են շրջակա պատերի և աշտարակների ծակծակած երեսները, որոնք այսօր էլ պահպանում են իրանց ստացած հարվածների հետքերը: Մանր հարվածներ են դրանք, երևի նետերի հարվածներ: Հին պատերազմական արվեստը գի-տեր բերգեր հարվածելու մեծ գործիքներ, բաբաններ, որոնք քանդում էին պատերը: Այստեղ քանդվածք չկա: Այստեղ հղկած քարերի երեսները ծակծակված են. ծակող գործիքը խոր տանել իր հարվածը չէր կարողանում: Խփվելով պա-տին, նա թողնում էր նրա վրա իր սուր ծայրի հետքը և հետ



Ագի Ավագ Դուռը և խառնարանը քարգեղից մեկը



Ագիի Հյուսիսային պարիսպները և Ավագ Դուռը

թուշում: Նետերի թանձր տարափներ ես ներկայացնում քեզ, նայելով այդ շեշտ պատերին՝ վերեկից մինչև ցած: Փոքրիկ, առողջացած սպիների ցանցի նման ծածկում են այդ ծակոտիները ամրությունների վիթխարի մարմինները: Դրանք հին օրերի վկաներ են միայն, ցավ չեն պատճառում: Ի՞նչ համեմատություն կարող է լինել այդ անմեղ ճեղքվածքների և այն խոր, մահացու վերքերի մեջ, որոնք իրենց ահռելի բերանները բացած են ամեն տեղ և նայում են ամեն մի կողմից:

Այդպիսի վերքեր շատ ունի Ավագ Դուռը: Նայում եք նրան, և մի կրճատած կմախքի տպավորություն եք ստանում, բայց մի կմախքի, որ իր ծվենները պահպանելու կարողությունից դեռ միանգամայն չէ զրկվել: Այսօր էլ նա դեռ մի ամրության դուռ է: Նրա պաշտպանության համար երկու աշտարակներ են բարձրանում աջ ու ձախ կողմերին, երկու վիթխարի, երեք հարկանի աշտարակներ, որոնցից մեկը դեռ ամբողջ է, բայց պատռված գլխով, իսկ մյուսը կերված է կիսով չափ: Դռան ճակատի վրա մի ինչ-որ պատուհան է եղել, որ քանդվել է, դարձել մի անձեռ ռեանտոնի ծակ: Հայերեն մի արձանագրություն այդտեղից վկայում է, որ Անին վերաշինվել և բարեկարգվել է Գրիգոր և Հովհաննես աղաների պարոնության ժամանակ: Այդ պարոններն էլ, որոնք, երևի, քաղաքի կառավարիչներն էին, ազատել են ազգաբնակչությունը շատ հարկերից:

Բացի մի քանի հատ գեղեցիկ խաչքարերից, որոնք հագցրած են աշտարակներին, Անիի Ավագ Դուռը չունի ուրիշ զարդեր: Բայց նրա ամենասիրուն զարդը, անշուշտ, եղել է այն տեսարանը, որ բացվում է այստեղից դեպի ներս: Քաղաքի մեծ մասը աչքիդ առջև է: Այժմ նա քարակույտերով ծածկված մի տարածություն է, որ գնում վերջանում է Միջնաբերդի բարձր բլուրի վրա: Սև քարակույտերի մեջ բարձրանում են քարուքանդ պատեր, շինություններ: Ահա Մայր եկեղեցին, ահա նրանից դեպի արևմուտք ինչ-որ անգլուխ, քանդված շինություն. Միջնաբերդի բարձրությունից էլ նայում են պատերի կտորներ:

Գեղեցիկ է տեսարանը այժմ էլ, թեև միայն ավերակ ու մահ է ցույց տալիս: Իսկ ի՞նչ պիտի եղած լինի նա այն ժամանակ, երբ այս ամառի տարածությունը ծածկված էր տներով, ապարանքներով, եկեղեցիներով:

Մի փոքրիկ առու պարիսպների միջով գալիս է և Ավագ Դռնով ներս մտնում: Ասում են, թե դա գյուղացիների բերած ջուրն է, որ կանաչները ջրելուց հետո ինքն իր համար ճանապարհ է բացել դեպի մեռած քաղաքը: Չնայած որ փոքր է ու ողորմելի այդ ջուրը, բայց մի տարօրինակ տպավորություն է գործում. կարծես նա գնում է ներսում մարդկանց պետքերը հոգալու: Բայց այնտեղ ոչինչ մարդկային պետքեր չկան: Զուրը ավելորդ է: Վանահոր խուցերում այս ջրից չեն խմում. խմելու ջուր բերում են բեռներով, արևմտյան ձորի աղբյուրներից: Բայց այս առվակը ցույց է տալիս, թե որքան հեշտ է եղել դրսից ջուր բերելը Անիի մեջ:

Ավագ Դռնից ուղղակի դաշտը դուրս գալ չէ կարելի. նրա առջևով ընկած է դրսի պարիսպը, որ այնտեղ դուռ չունի: Այսպես արված է, իհարկե, այն պատճառով, որ քաղաքի ամենագլխավոր դուռը ավելի լավ պաշտպանված լինի: Ավագ Դռնից քիչ դեպի արևմուտք գնալով, տեսնում եք դրսի պարսպի դուռը. դա է դաշտից բերող մուտքը: Հարձակվող թշնամին, ներս խուժելով այդ դռնից, պիտի ընկներ երկու պատերի մեջ ու պիտի գնար դեպի Ավագ Դուռը աշտարակներից և պարիսպների գլխից տեղացող նետերի տարափի տակ: Պաշտպանող զորքը, եթե ունենար քաջություն, կարող էր այդտեղ, այդ նեղ տարածության մեջ, մեծ կոտորած անել: Հին ժամանակների պատերազմը բերդերի պաշտպանության համար միայն սրեր ու նետեր չէր հանում, այլև քարեր, եռացրած ջուր, յուղ, որոնք պարիսպների գլխից թափվում էին հարձակվողների վրա:

Դրսի դռնից ներս մտնողը, դեռ երկու քաջ շարած, տեսնում է ներսի պարսպի վրա մի բարձրաքանդակ առյուծ, որ կանգնած դրություն մեջ չէ, այլ վազողի դրության մեջ: Անիի մեջ դրա պես մեծ քանդակ չկա: Նա բավական լավ է պահվել պատի ճակատին, շրջանակի մեջ: Ի՞նչ է ներկայացնում

կենդանիների թագավորը այստեղ: Ասում են, թե Բագրատունիների զինանշանն էր առյուծը՝ ուրեմն և այստեղ, այս գլխավոր մուտքի մոտ, նրա իսկական տեղը պիտի լիներ, որպեսզի մտնողը տեսներ և իմանար: Բայց ո՞վ կարող է հաստատապես ասել, թե ճիշտ որ առյուծն էր Բագրատունյաց դրոշմը: Ոչ ոք չէ հաղորդել մեզ այդպիսի տեղեկություններ. մեր պատմագիրները երբեք ուշադրություն չեն դարձրել պետական կարգերի, ներքին կյանքի, սովորությունների, օրենքների վրա...

Առյուծի քանդակից Անիի զույգ պատերը շարունակվում են դեպի արևմուտք, ավելի ևս մոտենալով իրար: Մենք անցնում ենք մի նեղ պարսպամեջով, որ լցված էր քարերի կույտերով. մեր նեղ ճանապարհը նկատելի կերպով գեպի ցած էր թեքվում. դա նշան էր, որ պարիսպները դեպի ձորն են ծովում:

Նվ իրավ, երբ մենք նորից դուրս եկանք Անիից, մեր առջև բացված էր մի փոքրիկ ձոր, որ քաղաքի հյուսիսային կողմից սկսվելով, անցնում էր, հետզհետե լայնանալով և մեծանալով, դեպի արևմուտք:

Մենք մտանք մի նոր, հետաքրքրական աշխարհ:

Ե

Անիին վերաբերվող արձանագրությունների մեջ, շատ տեղերի հետ, երբեմն հիշվում է և Իգաձոր անունով մի տեղ: Կարծում են, թե այս հյուսիսային ձորն էր կրում այդ անունը:

Բայց ինչ անուն էլ ունեցած լինի այս կողմը, անկասկած է, որ մեծ մայրաքաղաքի ամենաբանուկ, կենդանությունը ու շարժողությունը լի մի անկյունումն ենք գտնվում: Բուն քաղաքը, այն, որ ամփոփված է շրջապարիսպների և բնական ամրությունների մեջ, փոքր-ինչ հեռու է այժմ մեզանից: Ետ նալեցե՛ք: Որքա՛ն գեղեցիկ են այն

պատերը, որոնց միջով մենք անցնում էինք մի բուսական առաջ: Նրանք այժմ բարձր են մեզանից. նրանք մի հուժկու շրջան են տալիս ձորափի եզրով, թեև ավերված ու կիսակործան են, բայց տիրում են իրանց ոտների տակ փռված քարքարոտ լանջերի վրա, խրոխտաբար նայում են ձորին, հանդիպակաց լանջերին, որոնք ցածր ու խեղճ են, կարծես պատկառանքով ու զարմանքով են նայում նրանց:

Մեր ձախ կողքին ձորագլուխն է, այն հարթավայրը, որ տարածված է Անիի գլխավոր մուտքի առաջ. այստեղ այս ձորը հաղորդակցություն էր պահպանում այն բարձր ու գեղեցիկ պատերի ետևում թաքնված քաղաքի հետ: Անին փոքր է իր այդ պարիսպների մեջ: Բայց ի՞նչպես էր, որ վայելում էր մեծ, բազմամարդ քաղաքի հռչակ: 1001 եկեղեցի ուներ նա, ասում են. և յուրաքանչյուր եկեղեցուն հարյուր տուն զգեցվով, ավելացնում են այդ առասպելի վրա երկրորդ առասպելը, թե Անին ուներ հարյուր հազար տուն: Բայց դուր չէ ասված, որ թե մի տեղ կրակ չլինի, այնտեղից ծուխ չի բարձրանա: Եթե Անին շունենար մի ապշեցնող բազմամարդություն, այդպիսի առասպել չէր էլ ստեղծվի: Բայց ո՞ւր էր տեղավորվում այդ ահագին բազմությունը: Անին իր շրջականերով էր մեծ: Միջուկը բերդն էր, բայց քաղաքի այդ սիրտը մեծ ելքեր ուներ դեպի զանազան կողմեր: Մեկը մենք արդեն տեսանք,—ս. Լուսավորչի մոտ: Բայց նա լոկ հաղորդակցության միջոց էր, երևի: Մինչդեռ այս կողմը, հյուսիսային այս մեծ ելքը արդեն խառնում էր դուրսը ներսի հետ, հեռավոր մասերը՝ կենտրոնի, սրտի հետ:

Թագավորական չքեղ քաղաքի այս դրսի հրապարակը, որի վրա բացվում էին գլխավոր դռները, հարյուրավոր տեսարաններ է տեսել, բախտի հարյուր ու մի տեսակ խաղերի վկա է եղել: Ինձ թվում էր, որ անպատճառ այստեղ, այս դաշտի մի որևէ անկյունից է Արիստակես Լաստիվերտցին տեսել թագավորական գնացքը, որ հետո ոգրի նյութ դարձրեց նա, երբ թագավորությունը ավերակների մի կույտ էր եղել: Լավիկան բանաստեղծ էր Լաստիվերտցին և բնական է, որ իր տեսած հանդեսի հիշողությունը խոր ազդած լիներ

ներա վրա, մանավանդ այն օրերում, երբ Շիրակը ողբում էր Գաղիկ վերջինին:

«Իսկ թագավորը,— ասում է նա,— առավոտները երբ դուրս էր գալիս քաղաքից, իր առագաստից դուրս եկող փեսայի էր նման կամ ինչպես ցերեկվա արուսյակը, որ արարածների գլխավերևը բարձրանալով, ամեն աչք դեպի իրան է քաշում: Այսպես էլ նա փայլում էր իր պսպղուն շորերով և մարգարիտներով ծածկված թագով, և ամեն մարդ զարմանքով նրան էր նայում: Սպիտակամազ նժույգը, ոսկեզօծ զարդերով զարդարված, գնում էր նրա առջևից, արեգակի ճառագայթներից փայլվում էր նա և տեսնողների աչքն էր շլացնում: Իսկ առջևից գնացող զորքերի բազմությունը միմյանց վրա կուտակվող ծովային ալիքների նմանությունն էր տալիս»:

Մարդկային վիճակի մի կողմն է սա, գեղեցիկը, ժպտունը, նախանձելին: Անիի դռների առջև փռված հրապարակը երկար չէ տեսել այսպիսի ճաճանշավոր տեսարաններ, խաղաղություն, բախտի օրեր: Ավելի շատ են եղել նրա տեսած սարսափները: Քանի՜ արյունածարավ, վայրենի բանակներ են կոխկռտել նրան. քանի-քանի անգամ նա եղել է դեպի երկինք դարձրած, երկինքը զարհուրեցնող գազանությունների հրապարակ: Անշուշտ այս կողմերում էր և ոչ թե մի ուրիշ տեղ այն փոսը, որ, ինչպես պատմում է վարդանը, փորել տվեց Ալի-Ասլանը Անին առնելուց հետո: Մի փոս, որ բավական ընդարձակ պիտի լիներ, քանի որ նրա վրա մորթվեցին հազար մարդիկ և երբ սրանց արյունով լցվեց փոսը, արյան ծարավ վայրենի սելջուկը հանեց շորերը, մտավ նրա մեջ և լողացավ այդ կարմիր բաղնիսում...

Տոներ, սուգեր, խաղ ու աղետ, ծիծաղ ու լաց, այո՛, շատ է տեսել թագավորական քաղաքի այս լայն հրապարակը:

Բայց թող անցյալը փոքր-ինչ մի կողմ քաշվի և մենք նայենք մեր ձորին:

Իգաձորը, ասում են, պիտի Այգեձոր նշանակած լինի: Բայց այգիներ կարո՞ղ էին լինել այստեղ: Շիրակի դաշտը

ծառ առհասարակ չէ ընդունում: Իսկ Իգաձորը, բացի Շիրակի մի կտորը լինելուց, այնպիսի շոր ու այրված մի տեղ է, ուր ոչ մի ծառ չէր էլ կարող արմատ բռնել: Լերկ հող է երևում ամեն տեղ, կարծես թե մանրած կավիճ է ցանված: Իսկ ձորի կողերը մոխրագույն ապառաժներ են, որոնք պանրի պես կակուղ են եղել մի ժամանակ այստեղ եռանդով գործած կացնի, մուրձի, ուրագի, մի խոսքով ամեն կտրող և կտրող գործիքի տակ, որ մարդու ձեռքում տուն շինելու և տուն ավերելու զենք է: Եվ այդ կակուղ, հեշտ նվաճվող սպիտակ ժայռերը գեղեցիկ նյութ են եղել բնակարաններ շինելու համար: Հենց ձորի սկզբից ձեր առաջն են գալիս այդպիսի բնակարաններ, բնական և արհեստական այրերի շարքեր:

Բնությունը տվել է, մարդը հարմարեցրել է իր բազմաթիվ պետքերի համար: Կա գեղարվեստի Անի, ապարանքների, սիրուն տաճարների Անի, կա և քարայրերի Անի: Եվ այս վերջինը առաջինից ավելի մեծ ու ընդարձակ է: Նա թաքնված է ձորերի հատակում, սողում է թեք լանջերով, մտնում է հողի տակ, կախվում է ձորերի վրա: Նա միայն այստեղ չէ, այս հյուսիսային և արևմտյան ձորերում: Նա շատ է ընկել և Գլիձորի երկարությամբ, նա գնում է Ախուրյանի ձորով դեպի արևելք, դեպի Հոռոմոսի կողմերը:

Տրոգլոտիտների մի ամբողջ աշխարհ: Եվ մինչդեռ գեղարվեստի Անին միանգամայն անապատ ու մեռած է, այս մեկը, չե՞ք զարմանում, անմարդաբնակ չէր: Գյուղական կանայք, երեխաներ խմբված էին Իգաձորի լանջերին: Նրանք զարմանքով էին նայում մեզ, բայց չգիտեին, թե որքան մեծ էր մեր զարմանքը: Անի և բնակություն... Այս անկարելի հանելուկը պարզեց վանահայր վարդապետը: Մոտակա հայ գյուղերից մի քանի տներ ամառը կարճ ժամանակով բնակություն են հաստատում այստեղ՝ կաթնապտետությունամբ պարապելու համար: Հարմարությունը, որ գրավում է նրանց, միայն Ալաջայի ստորոտների կանաչները չեն, այլև այն, որ կան պատրաստ ու ապահով բնակարաններ՝ այդ այրերը: Բավական է, որ գյուղացիները իրանց հետ

շոր ու անկողին վերցնեն, և մի կարճ միջոցով, մի քանի շաբաթների ընթացքում, կենդանանում է Իգաձորը, որ մի ժամանակ եռուն ու աղմկալից է եղել իրրև առևտրական շուկա:

Իսկ թե այստեղ շուկա է եղել, ցույց են տալիս այրերը, որոնցից շատերը խանութներ էին: Այժմ էլ մի հայացքով կարելի է ճանաչել այդ խանութները, նրանք փորված են մոխրագույն կակուղ ժայռերի մեջ, ունեն գարակներ ապրանքների համար:

Մարդ մտքով մի բույն տեղափոխվում է այն հին ժամանակները, երևակայում է հենց այսպիսի մի պայծառ ու գեղեցիկ առավոտ՝ մեծ քաղաքի պատերի տակ ընկած այս ձորում: Գյուղացի կանանց և երեխաների խմբերը կատարյալ են դարձնում իլյուզիան, և դու մի բույն գտնում ես քեզ առևտրական շուկայի մեծ ժխորի մեջ, տեսնում ես այս ձորը լցված ամեն գիրքի և կարողություն մարդկանցով, որոնք առնում են, տալիս են կամ պարզապես նայում են: Որքան խոսք ու զրույց, ի՞նչ շարժում ու իրարանցում...

Արևելքի քաղաքների կյանքը ամբողջապես շուկաների մեջ է: Իսկ Անիի պես մի խոշոր ու փարթամ քաղաքի շուկան չէր կարող չլինել մեծ ու բանուկ: Այս ձորը, իհարկե, միակ շուկան չէր: Այնտեղ, քաղաքի մեջ էլ կա շուկա: Բայց այնտեղ չկար, չէր կարող լինել այսպիսի լայնարձակ ազատություն: Գուցե ավելի գյուղական էր Իգաձորի շուկան: Բայց այստեղ էլ, անշուշտ, խոնվում էին ամեն կողմից եկած վաճառողներ ու գնողներ: Այստեղ միայն չբռնկա գյուղացիները չէին պարպում իրանց սալերը, կանգնեցնում իրանց հոտերը: Այստեղ էին գալիս և հեռավոր կարավաններ, և արևելյան քանի՜ լեզուներ խառնվում էին այս ձորում վաճառքի գործերի մեջ: Անեցին, շմոռանանք, հարաբերություններ ունեւ նույնիսկ կախարդիչ Հնդկաստանի հետ...

Մարդկային բնակության հատկացրած քարայրերը այնքան շատ են, որ ամեն մեկը առանձին-առանձին տեսնելու ոչ մի հնարավորություն չկա: Մենք բավականանում ենք մի քանիսները տեսնելով:

Մեր երկրում քարերի մեջ փորված բնակարանները շատ էլ հազվագյուտ երևույթ չեն: Իգաձորի այրերի մոտ ես հիշեցի այն զարնանային թաց ու մառախլապատ օրը, 10—12 տարի առաջ, երբ ես իջնում էի սարսափելի քարքարոտ ու գլխիվայր վազող ճանապարհով դեպի Զանգեզուր գավառի Գորիս ավանը: Մեծ ձոր էր, և նրա հսկայական լանջի վրա կանգնած էր շաքարի գլուխների ձև ունեցող մեծամեծ ժայռերի մի ամբողջ անտառ: Իմ ձին պտույտ էր գալիս այդ վիթխարի կոնուսներից մեկի շուրջը: Ես զարմացած նայում էի նրա միապաղաղ քարե զանգվածը, որ հղկել էր բնությունը քարերի ընթացքում: Իսկ երբ անցա դեպի ձորամեջ նայող կողմը, զարմանքս կրկնապատկվեց, տեսնելով ժայռի մեջ փորած կանոնավոր քառանկյունի խորշը, որի մեջ նստած էր մի հայ գեղջկուհի և ճախարակ էր մանում: Գյուղական մի ամբողջ հարկ էր պահվում այդ ժայռի գոգում: Ծվ այսպիսի տներ քիչ չեն այժմ էլ այդ ձորում, մասնավորապես Գորիսից քիչ հեռու գտնվող Խնձորեսկ մեծ գյուղի ձորում, ուր մեզանից մի դար առաջ ամբողջ աղզաբնակությունը ապրում էր քարայրերի մեջ: Քարայրերի բազմություն կա և Գառնի գյուղի մոտ, Արարատյան նահանգում, ուր քարայրային շինության ամենաբարձր և սրամիտ արտահայտությունը Գեղարդի վանքն է:

Անիի քարայրերից շատերի վրա էլ երևում է գեղեցկացնող արվեստը: Բայց այն այրը, ուր մտանք մենք, մեծ մասամբ բնական մի կերտվածք էր, և մարդու ձեռքը շատ հետքեր չէ թողել նրա վրա:

Նա հողի երեսին էր գտնվում, ձորի սկզբում, համարյա հարթ տեղի վրա: Փոքր-ինչ մեջքներիցս կռացած ներս ենք իջնում և տեսնում ենք մեզ բավական ընդարձակ, մեծ սենյակի տարածություն ունեցող մի քարե խոռոչի մեջ: Պատերն ու առաստաղը, գուցե և հատակը, իհարկե, միապաղաղ քար են, առանց մեծ խորդ ու փոսերի: Երկինք չէր երևում, բայց լույսը թափանցում էր պատերից մեկի ետեվից, երևի մի ինչ-որ խոռոչով: Ազոտ լույս, որ, սակայն,

բավական շատ էր այսպիսի մի սենյակի համար և որ պարզ
ցույց էր տալիս մեզ նրա մեջ եղած դրուժյունը:

Գյուղական մի ամբողջ տուն: Պատերի տակ, մերկ
հատակի վրա, երևում էին ամաններ, իրեղեններ, պղնձե
կուժ, շորեր: Մուտքի մոտ, անկյունում, դեռ փռված էր մի
անկողին: Հանկարծ, անսպասելի կերպով, այդ անկողնի
միջից մի երեխա բարձրացավ նստեց և իսկույն սաստիկ
լաց սկսեց: Անժանոթ մարդկանց մեծ խումբը, որ այդպես
անքաղաքավարի, անկոչ խուժել էր այդ, համենայն դեպս
մեկի սեփականություն կազմող տունը, վախեցրել էր խեղճ
երեխային, և նա հուսահատ ճղավում էր, շտեմնելով մոտը
իր ծնողներից և մերձավորներից ոչ մեկին: Մենք սկսեցինք
հանգստացնել նրան, համոզել որ չվախենա, որովհետև մենք
վատ մարդիկ չենք: Փաղաքշական խոսքերը ոչինչ ազդե-
ցություն չարին, ընդհակառակն, կարծես ավելի բորբոքեցին
երեխայի հուսահատությունը: Ոչինչ չկարողացան անել և
մեզ հետ եղած տիկիները: Անախորժ դրուժյունից մեզ
դուրս բերեց Ալեքսանդր Քալանթարը, տալով երեխային
մի հատ կոնֆետ: Դա ուղղակի հրաշագործ միջոց է: Շաքարը
հաղթեց իր քաղցրությամբ, և լացը իսկույն կտրվեց...

Բայց այդ լացը, զոնե ինձ համար, բոլորովին ավելորդ
չէր: Թվում էր, թե նա լրացնում է բնակության տեսարանի
կենդանությունը, քանի որ, բացի երեխայից, ոչ ոք չկար
տան մեջ: Այս կամ սրա պես մի բան էր հաստատված այս-
տեղ այն ժամանակ, երբ այս այրերը ժամանակավոր օթե-
վանի պաշտոն չէին կատարում եկվոր գյուղացիների համար,
այլ իրանց մշտական տներն ունեին: Դարերի ամայությունը
սրբել տարել է այդ տների կյանքի բոլոր հետքերը, թող-
նելով միայն այդ քարե սենյակները, որոնց մեջ հեռավոր,
զուցե բոլորովին խորթ սերունդները, անգիտակ իրանց նախ-
նիքների գոյությանն անգամ, բնակվում են մի քանի շա-
բաթներով, կարծես այն մտքով, որ ավերակների այցելու-
ներին ցույց տան, թե ինչպես էին ապրում այն հեռավոր
ժամանակի մարդիկ:

Բայց ինձ թվում է, թե այսօրվա գյուղացիները բոլո-




Ժալափոր բնակարաններ Մաղկոցաձորում

բովին հարազատ կերպով չեն պատկերացնում հին կյանքը։ Ապացույցը այն է, որ այսօրվա բնակիչները չեն կարող այն անել, ինչ անում էին հին մարդիկ այս ձորերում՝ իրանց ապրուստը կարգադրելու համար։

Քարայրերի Անին, ասում են, աղքատ ազգաբնակչության էր պատկանում։ Հայտնի չափով ճշմարտություն, իհարկե, կա այս ենթադրության մեջ։ Բայց բացարձակապես ասել, թե միայն անճար մերկությունն էր այստեղ ապաստան գտնում՝ անկարելի է։ Մեր տեսած սենյակը այնքան լավ է պահվել, որ կարելի է անսխալ ասել, թե այժմյան մեր ունեւոր գյուղացին անգամ դրանից լավ բնակարան չունի իր ապրուստի համար։ Բացի դրանից, պատահում են այնպիսի այրեր, որոնց առջև դուք ակամա կանգ եք առնում։ Առանց մեծ ծախսերի չէր կարելի փորել այդպիսի գեղեցիկ, նույնիսկ զարդարուն սենյակներ։ Եվ կարելի է ասել, թե այդտեղ վայել չէր համարի բնակվելու ունեւոր անեցին, ոչ միայն արհեստավորը, այլև վաճառականը։— Ո՛չ, չէ կարելի։

Կան և այնպիսի այրեր, որոնք, ճիշտ որ, աղքատության որջեր կարող էին լինել։ Մեր տեսած սենյակից մի քանի քայլ հեռու, պարիսպների լանջի ստորոտում, մենք մտանք մի ուրիշ այր։ Այստեղ արդեն ոչ օգ կա, ոչ լույս։ Յաժրիկ, նեղ մի խոռոչ, որ գնում է խոր, ունի մութ անցքեր, բաղկացած է երկու թե երեք սարսափելի փոքրիկ սենյակներից, որոնցից մեկում մնացել են ձիթահանքի հետքեր։ Այստեղ, ուրեմն, տնտեսական հիմնարկությունը խառնված էր մարդկանց բնակարանի հետ։ Այս այրում էլ մենք տեսանք գյուղացիների իրերն ու շորերը. հին ձիթահանքը այժմ պանրագործարան էր դառել։

Ձորը հետզհետե մեզ դեպի ցած է տանում, նրա ձախ լանջերը ավելի և ավելի բարձր, քարքարոտ են դառնում։ Անիի պարիսպները արդեն երկնքումն են և նրանց զարհուրելի պատուվածքների, մեծ ու փոքր ճեղքերի միջով անամպ կապուտակությունն է մեզ նայում։ Ձորը ավելի մեծացավ, խորացավ ու լայնացավ։ Այստեղից նա արդեն փոխում է իր



Պարիսպ

անունը: Այստեղից նա Մաղկոցաձոր է կամ, ավելի կարճ ու պարզ, Մաղկաձոր:

Անունն արդեն ենթադրել է տալիս բանաստեղծական մի գեղեցիկ անկյուն՝ մեծ մայրաքաղաքի աչքի առաջ. նա ասում է, որ Անիի ծաղկանոցն էր այս ձորը: Բայց ի՞նչ է պատասխանում բնությունը այդ գեղեցիկ անվան: Նա մեծագործ է այս ձորի մեջ, նա տեսարաններ տալիս է, բայց բուսական ոչ միայն փարթամություն, այլև փոքրիշատն վայելուչ հարստություն չունի: Ընդհակառակն, աղքատ ու սկիոր է նա, լերկ ժայռերով, և նրա հսկայական լանջերը, խոր ու լայն հատակը նույնիսկ կանաչ գույն էլ չունեն, խոտերով չեն ծածկված, այլ անփոփոխ շարունակում են պահպանել նույն սպիտակ-կավճային գույնը, նույն լվացված, լերկ-աղքատիկ տեսքը:

Այստեղ, ձորի հատակում, ձեր աչքին ներկայանում է այսպիսի տեսարան: Ձորի ձախ, արևելյան կողը Անիի արևմտյան պարիսպների շարունակությունն է: Նա ձգվում է բարձր ու բարձր, պատի պես կտրված, միապաղաղ: Այդ բնական վիթխարի պատը, կազմված մոխրագույն տուֆի ժայռերից, ավելորդ է դարձրել մայրաքաղաքի արվեստական պաշտպանությունը այս կողմից. և նրա վրա այլևս պարիսպ չեն շինել: Ի՞նչ հարկավոր էր նա. բնության դրած պատը ոչ միայն անհասանելի բարձր ու անառիկ է, այլև շատ քիչ խոռոչներ ունի իր վերևի մասերում և կարծես թե սվաղով ծածկված է: Բայց քարը փխրուն ու կակուղ տեսք ունի: Թվում է, թե այս ժայռերը կարելի է փոփոքել նույնպիսի հեշտությամբ, ինչպես հողն մի պատ: Այդ միտքն են տալիս ժայռերի ստորոտից քիչ բարձրում գտնվող այրերը:

Նույնպես սպիտակ, նույնպես լերկ է և ձորի հատակը: Այստեղ բնության միակ զարդը փոքրիկ վտակն է, որ իր պարզ ու մաքուր ջրերը տանում է նեղ, քարքարոտ հունով, բայց առանց աղմուկի, առանց նույնիսկ ձայնի: Դա Ալաջայի ջուրն է:

Ի՞նչ ժլատն է Ալաջայի մեծ շղթան: Մի բուռը ջուր է նա ուղարկում դեպի այս կողմերը: Բայց և որքա՞ն ուշադիր

է բնությունը Անիի մոտ դեպի սարերի այդ համեստ ու ժլատ տուրքը: Մի ահագին, անդնդախոր ձոր է նա հատկացրել այս ջրին, մի ձոր, որից Ախուրյանն էլ չէր քաշվի, իբրև իր մեծության ու հպարտության անարժան մի ծոցից:

Մաղկոցը հենց այդ ջուրն է: Իր ճանապարհի վրա նա ինքը կանաչներ ու ծաղիկներ չէ փռում, բայց ահա գյուղացիները նրա ավերին բանջարանոցներ են տնկել, մշակել են կաղամբ, վարունգ և այլ կանաչեղեն: Առաջ էլ այսպես էր. ծաղկոցները հենց այդ բանջարանոցներն էին, այդ պարտեզները: Առաջ էլ այսպես էր, բայց, իհարկե, ոչ այս շափերով: Հողի և ջրի այդ արգասավորությունն ավելի լայն ու մեծ շափերով շահագործել են անեցիները: Նրանք այժմյան գյուղացիների պես չէին. նրանք խիզախ, հանդուգն ձեռնարկություններ սիրում էին և իրագործում: Եվ նրանց ձեռքի տակ իսկական, գեղեցիկ ծաղկոց-պարտեզ պիտի դարձած լինի այս ձորը:

Սարսափելի ավերումները, որոնք այնքան հուսահատական են այս կողմերում, այնքան բարձրագորշ դեպի երկինք են աղաղակում բառի բուն մտքով յուրաքանչյուր քայլի վրա, այն աստիճան սաստիկ են ճնշում երևակայությունը, որ այցելուին թվում է թե բնությունն էլ ավերված է մարդու ձեռքով: Բազրատունյաց մայրաքաղաքի մեջ զեղարվեստական ճոխություններով շրջապատված մարդը ենթարկվում է այն ուժեղ լոգիկայի ազդեցության, թե ճաշակի, կուլտուրական զարգացման այս աստիճանին տիրացած մի ժողովուրդ չէր կարող ընտրել իր համար մի մեռած կամ աղքատ բնություն, իսկ թե ընտրել էլ, անպատճառ կհարստացներ, կկենդանացներ այդ բնությունը իր հանձարի ուժով: Եվ ականա ասում եք ձեզ, որ բնությունը միայն մսի և արյան կյանքն ու նրա գործերը չէ հավիտենական ողնջացման և ապականության մատնել, այլև քերել է հողի երեսը, սպանել է երկրի ստեղծագործական ուժերն էլ:

Իհարկե, կա ճշմարտության մի խոշոր բաժին այս ենթադրության մեջ: Իհարկե, սպանել ժիր ու ընդունակ մարդուն և նրա տեղը թողնել դատարկություն միայն՝ նշանակում

է սպանել նրա ձեռքի տակ եղած հողը: Բայց և այնպէս, հազիվ կարելի լինի պնդել, թե Անիի շրջականները պատմական աղետներից առաջ առանձին ճոխ ու փարթամ արդասավորութեամբ հոշակված էին, երկնքից ընտրված մի անկյուն էին: Ո՛չ: Երկրի բնութիւնը այսօր էլ ձեզ ասում է, որ ինքը միանման է ամեն տեղ և Շիրակը եթե ստացել է երկնքից հարստութիւն, դա միանման է ամեն տեղ, և նա չէ ունեցել, ինչպէս շունի այժմ էլ, այն տեսակ անկյուններ, որոնք հրաշալի լինեին մյուս տեղի հետ համեմատելով:

Ուշադրութեամբ դարձրեք այն ընծայարկութիւնների վրա, որոնք հիշատակված են Անիի և ուրիշ տեղերի բազմաթիվ արձանագրութիւնների մէջ: Դրանց մեջ խոստում է ինքը բնութիւնը: Մարդը կարող է նվիրել եկեղեցիներին և վանքերին այն, ինչ տալիս էր հայտնի տեղի բնութիւնը: Եվ ահա մենք տեսնում ենք, որ Անիի և նրա մոտիկ շրջականների սահմանում եղած նվերները բաղկացած են տներից, վրապակներից, ձիթահանքերից, ջրաղացներից, մարգերից: Այգիներ չեն հիշվում այդ տեղերում: Նվիրվում էին, իհարկե, և այգիներ, բայց նրանք գտնվում էին հեռու այս տեղերից — Օշական, Փարպի, Աշտարակ, Մրեն, Բազմաւան և այլ տեղերում: Ուրեմն մայրաքաղաքի կենդանութեան և փարթամութեան ժամանակ էլ Շիրակի այս կտորը Շիրակ էր, անփայտ, ծառազուրկ: Այնպէս որ Անիի շրջականների միակ բուսական զարդը, բացի, իհարկե, կանաչ լեռնադաշտի տեսարաններից, Մաղկոցաձորն էր իր բուրաստաններով: Հասկանալի է, թե որքան սիրված պիտի լիներ այս ձորամէջը: Երբ մեզ պատմում են փարթամ, հարուստ, շուշու մի կյանքի մասին, որ երկար ժամանակ եղում էր այս քաղաքի պարիսպների ներսում, մենք չենք կարող երևակայել մի ժողովուրդ, որ նստած լիներ քարի ու ավազի վրա, որ հասկացած չլիներ բնութեան բարիքների — ծաղիկների, օգտակար բույսերի ամբողջ գրավչութիւնը:

Այդ մեծ հաճույքը, միացած օգտակարութեան հետ, Անին որոնում էր Մաղկոցաձորում: Եվ այդ ձորը, այո՛, աչք-ժրմանից անհամեմատ ավելի գեղեցիկ էր, ավելի մշակված.

բայց ծաղկավետ պարտեզներից ավել մի բան չէր ներկայացնում:

Մաղկոցաձորի մի կողմը նկարագրեցի ես, այն որ դարձած է դեպի քաղաքը: Մյուս կողմ, աջը, որ Ալաջայի շղթայի կողմն է, այնպէս սեպացած չէ, պատի պէս կտրված ու անմատչելի: Պահպանելով մի զառիվայր ու բարձր ձորակողի հատկութիւնները, նա շատ տեղերում զյուրամատչելի է, և այդ տեղերից էլ ձորին են նայում քարայրերի խմբերը:

Բ.

Առավոտյան անդորրութիւնն էր տիրում պարտեզների ձորում: Ո՛չ մի ձայն. ոչ թռչուն կա, որ իր երգով փառաբանե բնութեան այս սքանչելի ժամերը, ո՛չ Ալաջայի ջուրն է ձայնծալտ հանում, ո՛չ բնակչութիւն կա, որ կյանքի վիվլուկ մտցներ երկու բարձր, մոխրագույն կողերի մեջ ամփոփված այս նեղ տարածութիւնը: Քնած է ամեն ինչ, հավիտենական քնով է քնած: Հավիտենական քուն — դա ինքը մահն է, այս կողմերի միակ իրական, անողորմ տերը...

Մեր խմբի խոսակցութիւններն են միայն, որ ժամանակավորապէս, մի քանի րոպեով, աղմկում են մահվան խոր քունը: Անիի ժայռոտ կողը, այդ միապաղաղ վիթխարի պատը, արձագանքներ է տալիս մեր ձայներին: Արձագանքը փոխվում է միապաղաղ խուլ թնդչունի, երբ մեր խումբը ամբողջովին բարձր ձայնով սկսում է երգել: Ձորը կենդանանում է:

Բայց պատահական այցելուների խմբերը, որքան էլ բազմաթիվ ու ստվար լինեն, չեն կարող փոփոխել մահվան հովտի դարավոր ճակատագիրը: Ահա վերջացավ մեր երգը, վերջացավ և Մաղկոցաձորի ժայռոտ պատը: Մի ոլոր-մոլոր ճանապարհ ձորի հատակից գնում է դեպի բարձր: Մենք բռնում ենք այդ ճանապարհը: Եվ դարձյալ այն ամենը, ինչ կա այստեղ — ձոր, ջուր, ժայռեր, քարայրեր, բանջարա-

ձոցներ, օգուերկինք ընկղմված է նույն լուսնյան, մեռելութ-
յան ծովի մեջ: Ոչինչ հետք չէ մնում մի խումբ մարդկանց
ձայներից, աղաղակներից: Ոչինչ բան քնից չզարթնեց և
կախարդված աշխարհի մեջ ոչ շարժում առաջ եկավ, ոչ
որևէ զգացմունք...

Միմյանց հտեից շարան ընկած բարձրանում ենք Մաղ-
կոցաձորից դեպի վեր, դարձյալ դեպի մեռած քաղաքը, դե-
պի այն վիթխարի կախարդանքը, որ կոչվում է Անի: Բայց
նախքան արեգակի տակ գտնվող Անին մտնելը, կանգ առ-
նենք այս լանջի վրա, կանգ առնենք այն առեղծվածի առջև,
որ կոչվում է Ստորերկրյա Անի:

Ասում են թե եղել է այդպիսի Անի. հողի տակ ծածկ-
ված, օրվա լույսից ու ջերմությունից զրկված մի Անի, որի
մուտքերից մեկի մոտ այժմ մենք կանգնած ենք:

Ս. Լուսավորիչ եկեղեցու մոտ, Անիի հարավ-արևելյան
անկյունում, ես ձեզ ցույց տվի այն ստորերկրյա անցքը,
որ կոչվում է «Գեղան-գյալմաղ»: Նրա մասին, ինչպես
գիտեք, ասում են, թե մի կողմից գնում է դեպի Ախուրյան
գետը, իսկ մյուս կողմից անցնում է քաղաքի տակը:

Այստեղ էլ, Մաղկոցաձորի այս լանջի վրա, ժայռերի
մեջ ցույց են տալիս մի փոքրիկ ծակ և ասում են, որ դա
էլ ստորերկրյա մի մուտք է, որ տանում է քաղաքի տակը:
Այնպես որ դուրս է գալիս, թե Անիի տակը փորված է և մի
քաղաք էլ այնտեղ է եղել, — իսկական քաղաք, մարդկանց
բնակության հատկացրած: Իբրև ենթադրություն՝ այսպիսի
միտք Անին այցելողներից շատերն են հայտնել: Բայց այդ
այցելուներից մեկը, Գեղամյանց, հավատացնում է մեզ,
թե դա ենթադրություն չէ, այլ հաստատ իրողություն: Եվ
հավատացնում է իբրև իր աչքով տեսած մարդ: Նա Մաղկո-
ցաձորի այս ծակով մտել է Ստորերկրյա Անին և տալիս է
նրա նկարագրությունը: Ես չեմ ճանաչում մի այլ ճանա-
պարհորդ, որ նույնպես մտած ու նկարագրած լինի: Եվ ո-
րովհետև ինքս էլ չեմ տեսել, ուստի այդ շատ հետաքրքրա-
կան հանգամանքը կծանոթացնեմ ընթերցողիս Գեղամ-
յանցի պատմվածքով:

Նախ և առաջ Ստորերկրյա Անին տանող մուտքը:

«Այդ մուտքը, — ասում է այցելուն, — գտնվում է Միջ-
նաբերդի հյուսիս-արևմտյան կողմը՝ դեպի Մաղկոցաձոր
տանող արտաքին պարսպի քայքայված դռան ձախ կողմը,
ճիշտ վեց քայլ հեռու դեպի հարավ: Միմյանց վրա բնու-
թյունից շարված մեծամեծ ժայռերի մի երկայն կարգ պարս-
պածե պատել է այդ տեղը: Ժայռերի մեջ երևում է մի նեղ
ծակ, ուր օձաձև սողալով ամենից առաջ մտավ իմ ուղե-
ցույցս և սկսեց իմ գլխիցս քաշ տալ, ֆյուրբշյանի վա-
նեցի ծառաներն էլ ոտքերիցս ինձ ներս էին քաշում և իրանք
էլ հտեիցս ներս մտնում: Զորս սաժեն տեղ այդպես գետ-
նաբարձ սողալով առաջ գնալով, վերջապես մեր առաջին
բացվեցավ Ստորերկրյա Անին»:

Մի այսպիսի դաժան, օձային ճանապարհը չէր կարող
մուտք լինել մի ստորերկրյա քաղաքի համար, եթե ենթա-
դրենք այնտեղ մշտապես ապրող մի ժողովուրդ, որ պիտի
հաղորդակցություն ունենար դրսի աշխարհի հետ: Բայց
ահա դեռ ուրիշ ինչ սարսափելի պայմաններ ունի այդ
ստորերկրյա քաղաքը.

«Ներսից փչող բարակ սառն քամին, անտանելի մթու-
թյունը, հեղձուցիչ օդը իմ տաղնապը և մրսելու երկյուղը
(սերթուկս հանած էի) ավելի շատացրին և ես ուրախու-
թյամբ ետ կդառնայի, եթե կարողանայի ընկերներիս ներս
մտած օձային ճանապարհից դուրս գնալ մենակ, առանց
օգնության ընկերներիս, որոնք այդ միջոցին ճրագներ վա-
ռած սկսել էին արդեն շրջել այս և այն կողմ: Ես ստիպվե-
ցա հետևել նոցա:

«Ստորերկրյա Անին այնքան խորը փորված է, որ նրա
մեջ ազատ կերպով կարող են շրջել հարյուրավոր մարդիկ:
Մի քանի տեղ միայն մարդ հարկադրվում է գլուխը կռաց-
նել: Պատերը և առաստաղը կազմում է պինդ, կարելի է
ասել քարացած կիր, տեղ-տեղ էլ պատերում հանդիպում էի
մեծ և փոքր ժայռերի, երբեմն նաև քարածուխի: Իմ մտած
ճանապարհը նախ գնում է դեպի հյուսիս, հետո դեպի արև-
մուտք, արևելք, հարավ, անդադար պտույտներ անելով յու-

րաքանչյուր 5—6 սաժենի վրա: Մեջտեղում միշտ փողոցներ, որոնց մեջ երեք հոգի հազիվ կարող են մեկմեկու կողքին գնալ: Փողոցների երկու կողմը կես, մեկ և մինչև մեկուկես արշին բարձրությամբ փոքր քարերից շինված արվեստական պատեր, որոնց այն կողմը և տներ ու դուքաններ՝ քառակուսի և կլորակ ձևերով:

«Տների և դուքանների մեջ փոքրիկ բաժանմունքներ» պահարաններ և դռների տեղեր: Լույս ոչ մի տեղից չէ թափանցում, ո՛րտեղից էր փչում ցուրտ քամին, չեմ կարող ասել: Տեղ տեղ վերևից մի թթվաշ ջուր էր կաթկթում: Կես ժամից ավելի ման գալով և մրսելուց երկյուղ կրելով (ջերմաչափը իջավ մինչև 8°, երբ դուրսը 32° էր), ես դուրս ելա: Ուղեցույցս ինձ պատմեց, որ 1876-ին նա մի քանի տաճիկ զորավարների հետ 4 ժամ ման էր եկել Ստորերկրյա Անիում և նրա ծայրն ու ճոթը չէ գտել: Նրա ասությամբ մեր ման եկած փողոցներով կարելի է գնալ մինչև Միջնաբերդի տակը և հասնել մինչև պարիսպները, ուրեմն ամբողջ քաղաքի տակը դատարկ է և ամեն մի քայլափոխում, ասում էր ուղեցույցս, կհանդիպեք մեծ և փոքր բնակարանների և դուքանների: Բայց, ավելացնում էր նա, տեղ տեղ էլ կհանդիպեք պատերի, որոնցից անցնելը անկարելի է և որոնց մյուս կողմը եղած մասերում ման գալու համար կան դրսից մուտքեր, ուրիշ տեղերից, արդեն խանգարված:

«— Պաշտահն՝ և ք խաչերի կամ մատուռների այդ տեղերում,— հարցրի ես ուղեկցիս:

«— Ո՛չ, պատասխանեց նա,— միանգամայն հավատացնելով, որ Ստորերկրյա Անին միայն կենդանի մարդկանց բնակարան և գլխավորապես վաճառատեղի է եղած»¹:

Այս նկարագրությունից մենք իմանում ենք, որ Անիի տակ կան ստորերկրյա անցքեր: Բայց դրանք ճիշտ որ այն դերն են կատարել, որ այնպիսի վստահությամբ վերագրում է նրանց Գեղամյանցը: Այս հարցը փոքր-ինչ պարզաբանելու համար ես կբերեմ մի ուրիշ նկարագրություն էլ:

Վերևում ես մի երկու անգամ հիշել եմ կազակներին

օֆիցեր Ռժեվուսկուն, որ ռուս-թուրքական վերջին պատերազմի ժամանակ երկար մնացել է Անիի մոտ և նկարագրում է այն պատերազմական գործողությունները, որոնք տեղի ունեցան այդ կողմերում: Նույն այդ օֆիցերը խոսում է և Անիի ստորերկրյա անցքերի մասին: Փորվածքները աջքանբազմաթիվ են ավերակ մայրաքաղաքի տակ ու շուրջը, որ հաստատապես չէ կարելի ասել, թե որ կողմի քարայրերն ու անցքերն է նկարագրում ռուս զինվորականը: Կարելի է միայն հաստատ ասել, որ Անիի արևմտյան կողմերի մասին է խոսքը, քանի որ այդ կողմերում կարող էր գտնվել ռուսաց զորաբաժինը, որ իր առջև ուներ Ալաշայի թիկունքների և ստորոտների թուրքաց բանակը:

«Հետևյալ օրերը,— ասում է Ռժեվուսկին,— մեզ համար հանգիստ անցան: Մեզ տանջում էին միայն սարսափելի շոգերը, ճանճերը և զանազան սողունները, ինչպես են կարիճներ, ֆալանգաներ և թունավոր սարդեր: Շոգերից մենք փրկություն գտնում էինք այն գետնափորերում, որոնք շինված են համարյա ամբողջ Անիի տակ: Գնդի հրամանատարը տոթից հանգստանալու տեղ ընտրեց մի ամբողջ ստորերկրյա դահլիճ, որ բոլորովին կանոնավոր քաղանկյունի ձև ուներ և որին կպած էր մի փոքրիկ եկեղեցի: Ինչ պաշտոն էին կատարում այս ստորերկրյա բնակարանները— չգիտեմ: Սենյակների ամբողջ շարքեր փորելը կամ ավելի ճիշտ ասած՝ քարերի մեջ կտրելը,— շարքեր, որոնք մի քանի վերստ տարածություն ունեն,— մի այնպիսի ժամանակ, երբ վառողը դեռ հայտնի չէր, նահանջում էր ահագին աշխատանք, իսկ զանազան զարդարանքները՝ մեծ հմտություն: Չեմ կարող մոռանալ այն ճաշը, որ տվեց մեզ գնդի հրամանատարը այդ գետնափորի մեջ. երկար ժամանակ իմ հիշողությունից չի անհետանա իր կարգ ու սարքով առանձնատեսակ այդ ընկերական քեֆը բարձր դահլիճի կիսամթության մեջ. կազակները երգում էին, վայրենի լեղզիակա էին պարում. Կախեթի գինին անպետք էր»:

Այս բոլորը դեռ կարող է տեղի ունեցած լինել Մադկոցաձորի քարայրերից մեկում, ուր կարելի է դահլիճ էլ գտնել, խնջույքներ էլ սարքել: Բայց ահա ինչն է զարմանալին:

¹ «Փորձ» ամսագիր, 1880, № 8—9, էր. 96—97:

«Հազիվ թե մեկը,— շարունակում է ռուս օֆիցերը,— երբեք վիցն հետազոտած լինի այն ստորերկրյա քաղաքը, որի մեջ մոլորվել, ճանապարհ կորցնել շատ հեշտ է, բայց որի լիակատար հետազոտությունը գուցե հետաքրքրական հնագիտական գյուտեր տա: Թե որքան մեծ են և իրանց ճյուղավորություններով մոլորեցնող են այս ստորերկրյա անցքերը, երևում է հետևյալ դեպքից: Խորանժիյ¹ Բորիսովը, որ Անիի կողմերը հետախուզությունների էր ուղարկված դեռ այն ժամանակ, երբ մեր զորաբաժինը կանգնած էր Արփաշայի մեր ափին, նկատում է մի ձիավոր շերքեղի և իր կազակներով հետամուտ է լինում նրան: Արդեն համարյա հասել էին կազակները, երբ հանկարծ շերքեղը ձին բռնց մի փոքրիկ ձոր և անհայտացավ: Չորր այնքան փոքր էր, որ եթե շերքեղը դուրս գար այնտեղից, նրան անպատճառ կտեսնեին. և սակայն ոչ նա, ոչ նրա սպիտակ ձին չէին երևում: Բորիսովի աչքին ընկավ առջևում բացված սև ծակը և որքան էլ վտանգավոր էր անծանոթ ստորերկրյա աշխարհ մտնելը, բայց թշնամի ձիավորին գերելը անխուսափելի էր թվում, ուստի և կազակները երկար չմտածեցին ու ձիաները բռնեցին մութ գետնափորի մեջ: Սակավ առ սակավ աչքը սկսեց սովորել շրջապատող մթության. առջևից պարզ լավում էր հեռացող ձիու դուրսույնը. որքան էլ վտանգ շատ լինեք այդտեղ, կազակները շարունակում էին իրանց հալածանքը, և յուրաքանչյուր ընկնող քարերին: Առջևից գնացող ձիու սմբակների ձայնը ավելի և ավելի մոտ էր լսվում. հանկարծ այնպես թվաց, թե վազող ձին կանգ առավ: Պետք է որ այլևս փախչելու ճանապարհ չլիներ,— այսպես մտածեցին կազակները, հանելով իրանց սրերը, որպեսզի նրանց գործի դնեն, եթե այդքան անհանգստություն պատճառած շերքեղը կամենար պաշտպանվել: Մի ինչ-որ բան սպիտակին տվեց, ավելի և ավելի պարզ նկատվեց այդքան եռանդով հալածված ձիու կերպարանքը. նա այժմ կանգնած էր, բայց, ավա՜ղ, առանց ձիավորի: Երկար ժամանակ կազակները դեսուդեն պրպտելով,

¹ Առաջին օֆիցերական աստիճանը կազակների մեջ:

որոնում էին ձիու տիրոջը, լուցկիներ էին վառում, խուզարկում էին բոլոր անկյունները: Բայց տեսնելով, որ գետնափորները անվեջ են և համոզվելով, որ զուր են ման գալիս, նո դարձան, աշխատելով գտնել ելքի ճանապարհը: Սուկալի բոպեններ անցկացրին նրանք, երբ համոզվեցին, որ կորցրել են ճանապարհը: Նրանց մտքով անցնում էր, թե կարելի է ողջ-ողջ թաղվել այս անելանելի նրբանցքների և զահլիճների մեջ, և այս միտքը սառցնում էր նրանց սրտերը, սարասափ էր լցնում նրանց մեջ: Երկար թափառում էին նրանք, ամեն բոպեն հետ ու հետ էին գնում, փոխում էին ուղղությունը և բոլորովին հոգնած, ուժասպառ դարձած՝ նկատեցին, վերջապես, լույսի այն ճառագայթը, որ թափանցում էր նրանց շրջապատող մութ տարածության մեջ: Բանից դուրս եկավ, որ ելքի տեղը գտնվում է այնտեղի հակառակ կողմում, որով ներս էին մտել: Եվ ելքը ավելի նեղ էր, բացի դրանից, ճանապարհը փակել էին թափված քարերը: Հարկավոր եղավ ձեռքերով մաքրել ելքի տեղը, որպեսզի ձիաները կարողանային դուրս գալ: Եվ կազակների ձեռքը այդքան աշխատանքի և անախորժ զգացմունքի զնով ընկած պատերազմական ավարն էր մի անախտան, մոխրագույն, ծեր, չափազանց նիհար ձի և մի զզվելի թամբ»¹:

Անկասկած, այս պատերազմական արկածը տեղի ունենալ կարող էր միայն Անիի տակ եղած գետնափորների մեջ: Չորս կողմում մի ուրիշ տեղ չկա, ուր ստորերկրյա այդքան երկար ու ընդարձակ անցքեր որոնենք, անցքեր, որոնք թույլ տալին խմբական ձիարշավներ սարքել: Մայրո Ռժեվուսկին չէ տեսել այդ ստորերկրյա փողոցները, նրբանցքները, դահլիճները. նա միայն լսել է Բորիսովի պատմվածքները, և մենք տեսնում ենք, որ դրանք համաձայնվում են Գեղամյանցի նկարագրության հետ ընդհանուր կետերում: Թույլ տանք, որ թե՛ Բորիսովը և թե՛ Գեղամյանցը շատ բան տեսած ու հասկացած են համարել իրանց երևակայության միջոցով, որ, ինչպես հայտնի է, այդպիսի մութ ու հավոր տեղերում գործում է անհամեմատ մեծ եռանդով, ստեղծում

¹ Сборник военных рассказов, т. V, стр. 147.

է իրականության անհամապատասխան պատկերներ և անուններ: Թող այդպէս լինի: Բայց և այդպէս, մնում է այն փաստը, որ Անիի տակ ինչ-որ երկար, ճշուղավորվող անցքեր կան, ինչ-որ խորհրդավոր բավիղներ:

Ամբողջ հարցն այն է, թե ինչ են եղել դրանք: Ասում են մարդկային բնակության տեղեր: Հավատա՞նք: Մարդը թե՛ հնում, — շմոռանա՞ք այս, — թե՛ այժմ մի արարած է, որ չէ կարող ապրել առանց օդի, լույսի և արևի: Ստորերկրյա Անին չէր կարող տալ իր բնակիչներին այդ ամենագլխավոր տարրերը, առանց որոնց կյանք չկա: Նույնիսկ եթե ենթադրելու էլ լինենք, թե վերևից, քաղաքի միջից մեծ մեծ ծակեր էին բացված՝ լույս ու ջերմություն հաղորդելու համար ստորերկրյա աշխարհին, դարձյալ ոչինչ հավանականություն ստեղծած չէինք լինի այն բանի համար, թե մարդիկ էին ապրում հողի տակ: Այդ ապրուստը անհնարին կլինե՞ր այնքան լայն ու մեծ ստորերկրյա տարածության վրա:

Վերջապէս մի առանձին ստիպողական հարկ էլ չկար, որ Անին իր-ազգարնակության ավելորդ մասը թաղեր գետնի տակ: Նա իր շրջականերում ունի ընդարձակ և լայն տեղեր, ուր կարող էին հարյուր հազարավոր մարդիկ բնակվել: Եվ մենք, դատելով լրջությամբ, վերջիվերջո կզանք այն եզրակացության, որ ստորերկրյա անցքերը, փորվածքները ուրիշ նշանակություն են ունեցել, ուրիշ դեր են կատարել: Գուցէ նրանք պատերազմական գիտության մշակած գաղտնարաններ, մթերանոցներ, նույնիսկ ժամանակավոր ապաստանատեղեր են եղել: Եվ եթե մենք աչքի առաջ բռնենք, թե այս կողմերի քարի կակուղ հատկությունը որքա՞ն զարմանալի դյուրություն և հաջողականություն է հաղորդել անեցիների ճարտարապետական տաղանդին, որքան խիզախ ձեռնարկողներ է դարձրել նրանց՝ շինելու և փորելու գործի մեջ, հասկանալի կլինի, որ մայրաքաղաքի պաշտպանողական նպատակների համար այդպիսի վիթխարի ձեռնարկությունն էլ, ինչպէս ստորերկրյա անցքերի ցանցն է, միանգամայն կարելի և հնարավոր էր: Կարծում եմ, որ ռուս օֆիցերի պատմած դեպքը, երբ մի շերտի, նեղն ընկած ժամանակ, ազատվում է մի խումբ կազակների ձեռքից, ապավինելով գետնափորներին,

պիտի մի ազոտ առաջնորդ դառնա մեզ համար՝ «Ստորերկրյա Անիի» նշանակությունը հասկանալու համար...

Այստեղ էլ ես կրկնում եմ, ինչպէս դեռ էլ առիթ պիտի ունենամ կրկնելու այն, ինչ ասել եմ Անիի պատերազմական նշանակության մասին: Երբ այցելում ամփոփվում է այդ նշանակությունը ըմբռնելու մտքի մեջ, նա չէ կարող չհիանալ, տեսնելով, թե որքան խնամք ու ուշադրություն, որքան ճարտարություն, կանխատեսություն է թափված՝ այս բերդին ամեն կողմից պաշտպանողական հզոր միջոցներ հայթայթելու համար: Ավերակների երկար տարածության վրա, կրկնում եմ, միայն քրիստոնյայի աստծո խորտակված պաշտամունքը չէ ողբում, նրանից ավելի խոսում է այս լուռ վայրերում ջարդված, կոտորատված հուժկու ռազմական-պաշտպանողական հանճարը: Դուք տեսնում եք, որ մի սուր աչք տեսել է ամեն ինչ, որոշել է այն տեղերը, ուր մայրաքաղաքը կարող էր հարվածներ ընդունել, և դրել է այդ տեղերում հակահարվածների ամուր պատվանդաններ:

Ստորերկրյա մութ, խորհրդավոր, սարսափ ազդող փորվածքներն էլ հարկավոր են եղել Անին այնքան սիրուն կերպով պաշտպանության դիրքի մեջ դնող հանճարին... Գոնե ինձ համար ամենահավանական ենթադրությունն այս է: Իհարկե, ոչ ես, ոչ էլ մի ուրիշը չենք կարող ամենաճիշտ հավանականությանը մոտեցած լինել, քանի՜ որ ձեռքի տակ ունենք երկու ականատեսների նկարագրություններ:

Դրանք շատ անբավարար են: Մի ստորերկրյա աշխարհ ճանաչելու համար բավական չեն երկու պատահական այցելուները, որոնք ահ ու երկյուղով բռնված մի կարճ ժամանակ եղել են փորվածքների մեջ: Պետք է հանդիստ, մանրամասն ուսումնասիրություն, պետք է ոչ թե լուցկիների լույս, այլ գիտության և լուսաբանության պայծառ ջահեր մտցնել այս տեղերը:

Դա դեռ ապագայի գործ է: Անին կարգին չէ ուսումնասիրված, չէ լուսաբանված իր ավերակային կյանքի բոլոր, բոլոր դիրքերից:

Պետք է հուսալ, որ կգա այդ օրն էլ: Եվ այն ժամանակ

այն բոլոր մութ հարցերի հետ, որ պահում է իր կրծքի տակ՝ Անին, կպարզվի և ստորերկրյա քաղաքի էությունը...

Թ

Նոր ենք դուրս եկել Մադկոցի ձորից, նոր ենք ոտք դրել Անիի մակերևույթի վրա: Բայց հեռանալ ձորի պոռնգից դեռ չենք կարողանում: Բարձր ժայռերի գլխից մենք դեռ մի քանի լուպի էլ դիտում ենք արևմտյան շրջակայքների տեսարանը: Մեր ձախ կողմին բարձրացած Միջնաբերդը նույնպես նայում է այն ձորին, որի մեջ էինք մենք մի կես ժամ առաջ. դա մի դարավոր անշարժ հայացք է, և կարծում ես, թե նա միշտ դուրսված է այն ամենի վայրենի գեղեցկությունից, որ ներկայացնում է Մադկոցաձորը այստեղ, նրա ոտների առաջ: Բայց մեր ուշադրությունը գրավողը այնքան այդ մեծ, ամալի, մոխրագույն ձորը չէ, որքան այն շինությունը, որ ուղիղ մեզ է նայում ձորի հանդիպակաց կողմի ժայռոտ դռնավայրերից:

Շինություն... Բայց ո՞վ է նրան շինել: Երկու վարպետներ են երևում՝ բնությունը և մարդը: Ո՞վ է զրանցից շատ աշխատել այդ շինության վրա: Մարդը: Բնությունը միայն նյութ է տվել. բնությունը այդ թեք լանջի վրա ցցել է մի մեծ ժայռ, իսկ մարդը բարձրացել է այնտեղ, իր մուրճով ծակծկել է ժայռը, սենյակներ է փորել, մինչև իսկ պատուհաններ է բացել, և ահա այդ քարայրային ապարանքը լուռ մեզ է նայում իր բաց դռներով:

Մեր տեսած այն քարայրերի մեջ, որոնք մի ժամանակ մարդկանց էին ծառայում, այս մեկը առաջինն է թե իր չափերով, թե իր զարդարանքներով: Մենք իսկույն հատկացնում ենք նրան «ապարանք» անունը: Եվ իրավ, որքան կաբելի է դատել հեռվից, նա սովորական տուն չէ:

Մոտիկից տեսնել նրան, մանավանդ նրա ներսը մտնել հեշտ չէ, եթե չասենք, թե անհնարին է: Նրա ժայռը ցցված

է ձորի պատվածքի ծայրին: Ներքևից, ձորի հատակից, ոչ մի ճանապարհ, որ տաներ դեպի վեր, դեպի մեր մկրտած ապարանքը: Գուցե կարելի լինի մագլցելով վեր բարձրանալ: Ժսկ վերևից, ձորի պոռնգից միայն թուկերի վրա կարելի է կախվել, ցած գնալ, սենյակների մուտքին հասնելու համար:

Մենք ոչ մեկն ենք անում, ոչ մյուսը, այլ մեր կանգնած տեղից ուղղում ենք մեր դիտակները և տեսնում ենք այն, ինչ կարելի է տեսնել դրսից: Քարայրի ապարանքը կամ այրերի այդ խումբը, ինչպես կամենում եք՝ անվանեցեք, — երկհարկանի է: Երևում են մի քանի կամարածե գեղեցիկ դռներ. մի երկու սենյակների առջևի պատը քանդված է, և դուք տեսնում եք, որ նրանք ներսից ավազան են եղել: Ոչ միայն ավազան: Երկար մեր ուշադրությունը գրավում է իր բոլոր երեք պատերով մեզ նայող սենյակը: Նրա մեջ մենք նկատում ենք բազմաթիվ դարակներ, նկատում ենք և ինչ-որ գունավոր նկարներ: Ապրանքի հարավային մասն է այդպես կիսաքանդ և ցույց է տալիս իր ներքինը: Մնացած մասը դեռ ծածկված շինության արտաքին ամբողջությունն է պահպանում, և այդտեղ երևացողը պատուհաններն են միայն...

Բնականաբար, մեզ իսկույն պիտի բորբոքեր այն հարցը, թե ի՞նչ է եղել այդ շինությունը: Կենդանի մարդուն մի անհայտ ու անխոս ավերակի առաջ ամենից շատ այդ է տանջում: Եվ մեզանից ամեն մեկը իր ենթադրությունն էր հայտնում: Մեկն ասում էր, թե երևի այդտեղ ապրելիս է եղել մի իշխան կամ մի շատ հարուստ մարդ: Իհարկե, ամենից առաջ մի այդպիսի միտք պիտի գա, քանի որ մենք գտնվում ենք մի մայրաքաղաքի, այն էլ իր փարթամությամբ հռչակված մայրաքաղաքի հողի վրա: Բայց մի ուրիշը իրավացի կերպով նկատում է, որ մասնավոր շինությունները այնքան մեծ ու փառահեղ չեն եղել, զոնե Անիի մեջ այդպիսի մի տան, ապարանքի կանգուն ավերակներ չենք տեսնում: Կան, այո՛, շինություններ, որոնք եկեղեցիներ չեն. բայց մենք նրանց մասնավոր մարդկանց սեփականություն չենք ճանաչում և ասում ենք, թե դրանք պետական հիմնարկություններ, պաշտոնարաններ են եղել: Այսպես էլ այդ

ժայռի մեջ փորված ապարանքը երևի որևէ պաշտոնական հիմնարկություն է եղել՝ կամ զինվորական պահականոց, որ հսկում էր հարավային կողմից եկող մեծ, կարևոր ճանապարհի վրա, կամ գուցե մաքսի և այլ հարկերի տուն:

Սրանք մեր խոսակցություններն են, ընթերցող: Եվ ես չեմ ասում, թե ուրիշ այցելուներ բոլորովին ուրիշ տեսակ խոսակցություն, ուրիշ տեսակ ենթադրություններ չեն ունենա այս միևնույն առարկայի վերաբերմամբ: Ամենքն իրավունք ունեն: Ոչ մի գրով, ոչ մի հիշատակությամբ չխանգարվող քարային լուծյան առջև ենք կանգնած: Քարերից էլ, ասենք, գաղտնիքներ խլում են. բայց ի՞նչ տեսակ քարերից: Ո՛ւր էր, եթե մենք էլ, հասարակ այցելուներս, մասունքներն այն հանճարից ու հնարավորությունից, որ օրինակ, Վանի ժայռերի վրա նշանակված բազմադարյան ալևոր գաղտնիքը բացեց...

Բայց կասեմ, որ շատ ճիշտ է մեր խոսակցության մեջ շեշտված այն հանգամանքը, որ մասնավոր աչքի ընկնող մեծ շինություններ ոչ ոք չէ ուզում ընդունել Անիի կանգուն ավերակների մեջ: Կարծես թե անեցին դրամ խնայելիս չէ եղել միայն եկեղեցիներ և պաշտոնարաններ շինելիս:

Ահա մենք գնում ենք դեպի այդպիսի մի շինություն, որ նույնպես առեղծված է, որի ինչ լինելու առիթով տեսակ-տեսակ դատողություններ կան:

Մաղկոցաձորի եզերքով մի ծուռումուռ ճանապարհ տանում է մեզ քիչ դեպի հյուսիս: Մեր առջև պատերի մի տրորված խումբ է երևում. նա բարձր է, նայում է մեզ երեք հատ սեկին տվող կամարակապ բացվածքներով, որոնք ներքին հարկումն են գտնվում: Դրանք սենյակներ են և բավական լավ պահված սենյակներ, բայց նման են դիակի կտցահարած, պատռոտած աչքերին, որոնց միջից մահն է նայում իբրբով ու սառն անհուսությամբ: Այդ մեծ, բայց անկենդան աչքերի առաջ, ուր, երևի, այդ տան բակն էր գտնվում, թափված է քարակույտերի մի մեծ տարածություն: Նա ցույց է տալիս, որ այս շինությունը ավելի շատ բան է ունեցել, քան ինչ ունի այժմ, բայց կամարներ ու պատեր շատ են թափվել և կազմել են այս քարակաշկառը: Իսկ ինչ մնացել է կրով ու

ժեփով կապված, կանգուն, մնում է այդ երեք սև աչքերի ետևում և վերևում զգզված, կրծոտված, ճարճած ու կիսով չափ թափված, բայց դարձյալ հիացնում է տեսողին, դարձյալ նրա մտքին ու երևակայության դատելու, ենթադրելու այնքան նյութ տալիս:

Առաջին տեսողներն ասացին, որ դա արքայական պալատ է: Բայց եղան մտածողներ էլ, թե Բագրատունի թագավորները այսպիսի վտանգավոր տեղ պալատ չէին շինի: Քաղաքի ծայրն է, Անիի պարիսպը գալիս հասնում է շինության պատերին: Ի՞նչպես կարելի էր, որ թագավորը իր համար բնակավայր ընտրե թշնամու հարվածներին ենթարկված այսպիսի մի տեղ: Ակսեցին թագավորական պալատի ամենահարմար և միակ հնարավոր տեղ համարել Միջնաբերդը: Իսկ այս շինությունը, — երևակայությամբ, իհարկե, — հատկացրին Բագրատունյաց ժամանակի ամենափառավոր իշխանական տոհմին, Պահլավունիներին: Եվ այս ապարանքը նկարագրությունների մեջ կոչվում էր «պահլավունեաց պալատ»: Սակայն ուշադրություն դարձրել են և այն հանգամանքի վրա, որ պալատը այդքան հին շինություն չէ: Պրոֆեսոր Մանր ենթադրում է, որ նա շինված է Զաքարյանների ժամանակ և եղել է զորանոց, ուր հավաքվում էին պարիսպները և աշտարակները պահպանող զինվորական զնգերը:

Մանոթ լինելով այս բոլոր առարկություններին և ենթադրություններին, մենք, այնուամենայնիվ, քարակաշկառների վրայով մտնում ենք ներքին հարկի կամարակապ սենյակները, համարյա համոզված, որ մտնում ենք արքայական պալատը: Եթե ինձ կարողանային ապացուցանել անհերքելի փաստերով, թե դա զորանոց է միայն կամ մի ուրիշ պաշտոնարան, համենայնդեպս ո՛չ պալատ, ես, այնուամենայնիվ, շատ հասկանալի և բնական կգտնեի այն, եթե կամենում եք՝ անվանեցեք, նախապաշարմունքը, որ ծանրացած է այցելուի վրա հատկապես մի անգամ արտասանված անվան՝ թագավորական պալատի վերաբերմամբ: Բնական եմ համարում այդ տրամադրությունը, որովհետև ինքս էլ ենթարկվել եմ Անիի այցելուի հոգեբանության: Վե՛հ ու տխրալի ավերակները ինչ-որ թագավորական, վսեմաշուք ազդեցու-

թյուն են թողնում, և դուք համարյա մոռանում եք, որ Բագրատունյաց մայրաքաղաքը ամբողջ դարեր ապրել է առանց թագավորների և ապրել է, տեսնելով գեղեցիկ օրեր էլ:

Այդ անթագավոր ժամանակների Անին չկա ձեր աչքի առջև: Բագրատունիները գերում են, հափշտակում են ձեզ այն վայրկյանից, երբ ձեր ոտը առաջին անգամ դիպչում է Անիի հողին և մինչև վերջը ձեզ այնպես է թվում, թե վերջին անբախտ Գագիկի հետ աչք է փակել և նրա մայրաքաղաքը: Եվ զարմանում եք, երբ ձեզ ասում են, թե Բագրատունիներից հետո էլ երկար ու երկար ժամանակ եղել է գեղեցիկ Անի:

Ինձ պես տրամադրված էին և իմ բոլոր ընկերները. և մենք ամենքս շրջում էինք այդ ավերված շինություն մեջ, մեր տպավորությունների, մեր դատողությունների մեջ վերաբերվելով նրան իբրև պալատի...

Ներքին հարկը դեռ պալատական հատկություններ չէ ցույց տալիս: Անցնում ենք սենյակից սենյակ, կան նեղ անցքեր, կան խավար անկյուններ: Արդյոք ի՞նչ են եղել դրանք. մառաններ, մթերանոցներ, ծառաների բնակարաններ, թե բանտեր: Երևում է, որ նույնիսկ շեն ժամանակն էլ բավական մոռաց տեսք է ունեցել այս պինդ, կամարակապ ներքնահարկի ներսը:

Այդպես չէ վերևի հարկը, ուր մենք բարձրացանք բակի կողմից: Թեև այդտեղ ավերանքը իր ամբողջ ուժի մեջ է, կատաղի, անզուսպ, բայց կան բեկորներ, կան մանր փրշորանքներ, որոնք առաջին իսկ հայացքից ժպտում են երեսիդ իբրև փառահեղություն վկաներ: Այդ ժպիտները ավերանքի, ապականության կույտերի տակից, կույտերի վերևից...

Դեռ ցածրում, Մաղկոցաձորի սկզբում, մեր ուշադրությունն էին հրավիրել այս մեծ տան վրա, որ իր ամբողջ քայքայված հասակով պինդ կպած է ձորի շրթունքին և նայում է նրան իր արևմտյան պատի ամբողջ երկարությամբ: Բայց այնտեղից նայելիս՝ դուք պատրաստված պիտի լինեք իմանալու, որ դա տուն է և ոչ թե պատերի կտորների ինչոր անհասկանալի մնացորդներ: Իսկապես պատի կտորներ են դրանք ժայռոտ լանջի գլխին, ահագին պատռվածքներով,

հրեշավոր ճեղքերով միմյանցից բաժանված պատեր, որոնց մեջ բացված ծակերով (պատուհաններով) մեզ է նայում շարունակ խորհրդապահ երկինքը: Այստեղ միայն, վերին հարկի այս մնացորդների մեջ միայն, կարողանում եք փոքրիշատե ամփոփ հասկացություն կազմել մի մեծ, հարուստ ապարանքի մասին:

Նայելով շուրջը, նայելով պատերին, սենյակների դասավորության, մարդ համոզվում է, թե դա ապարանք է եղել մի փարթամ ու ունեւոր մարդու բնակության համար: Զորանոցի, պահականոցի, դիվանի կամ մի այլ պաշտոնարանի ենթադրությունը թվում է շատ անհավանական: Ասում են, թե թագավորական պալատ չէր կարող լինել մի այսպիսի վտանգավոր տեղ, քաղաքի ծայրում: Այս իսկ պատճառով այս շինությունը չէ կարող մի իշխանի, օրինակ մի Պահլավունու, մի Զաքարյանի բնակատեղ էլ լինել: Բայց ինչո՞ւ այդքան վճռական դեր հատկացնել տեղի դիրքին: Այդ դիրքը նախ և առաջ շատ վտանգավոր չէ: Մաղկոցաձորի կողք, որ ուղղակի սկսվում է պատի ետևում, շատ էլ դյուրամատչելի չէ դարձնում Անիի այս կողմը: Երկրորդ՝ ինչո՞ւ ենթադրել, թե թագավորը կամ այսինչ փառավոր իշխանը միայն մի հատ պալատ պիտի ունեցած լինի, այն էլ անպատճառ Միջնաբերդում: Այս տեղի դիրքը կարող էր վտանգավոր լինել միայն պատերազմի, պաշարման դեպքում: Բայց հո հայտնի է, որ Անին խաղաղ ժամանակներ էլ շատ ու շատ է վայելել, իսկ այդ խաղաղ ժամանակներում՝ Մաղկոցների հսկայական ձորի վրա բարձրացած այս տան մեջ բնակվելը այնպիսի մի զվարճություն և բանաստեղծական գեղեցկություն էր, որպիսին հազիվ թե մեկը գտներ Անիի մի ուրիշ կողմում:

Ոչինչ անհավատալի բան չկա այս շինության, այս բնության մեջ թե այստեղ չէր կարող մի իշխողի, մի հարուստի առատ, վայելուչ կյանք ընթանալ: Թշնամին եկավ, պաշարեց Անին, — և ահա այս ապարանքի տերը տեղափոխվում է մի ապահով տեղ, հենց նույն Միջնաբերդը: Մի՞թե չէ կարելի ենթադրել և այսպիսի մի հանգամանք: Վտանգի միջոցին Միջնաբերդ էին տեղափոխվում շատերը ոչ միայն


րաց ու անպաշտպան շրջականներից, այլ հենց պարսպապատ Անիի տափարակ մասից:

Ասում են այս բոլորը այն պատճառով, որ զորանոց լինելու համար այս շինությունը չափազանց շքեղ է, իսկ պարիսպները պահպանող պահակների բնակարան լինելու համար չափազանց մեծ է: Եթե Անիի զինվորները այսպիսի ապարանքներում էին ապրում, հապա ինչե՞ր էին շինվում թագավորների և իշխանների համար: Զմոռանանք, որ Անին ուներ ընդարձակ պահականոցներ իր պարիսպների մեծ երկու-երեք հարկանի աշտարակներում, ուր, ինչպես հայտնի է մեր պատմագիրներից, նույնիսկ փոքրիկ եկեղեցիներ էլ կային:

Սենյակները սիրուն տպավորություն են թողնում նախ և առաջ այն պատճառով, որ համապատասխանում են մեր ժամանակի շինարարական կարգերին: Բարձր ու անզարդ են պատերը, առաստաղ չկա: Անակնկալի տպավորություն գործում են մեծ ու լայն պատուհանները, որոնք հին շինությունների մասին մեր կազմած հասկացությունն են ջրում: Մենք սովորել ենք հին եկեղեցիներում, ժամատներում տեսնել նեղ ու փոքրիկ պատուհաններ, մենք զիտենք և այն, որ հին տները լույս ընդունում էին վերևից, առաստաղում բացված կոյոր ծակերից: Իսկ այստեղ գոնե երկու հատ պատուհաններ են մնացել, որոնք չէին կարող ուրիշ բանի ծառայել:

Սենյակների մեջ ուշադրության արժանի մնացորդը «աղբյուրն» է: Պատի մեջ, դեղնցիկ քառակուսի շրջանակով պատած մի կամարակապ խոռոչ կա, որ կարող էր մեծ կրակարանի կամ բուխարու նմանությունը տալ, եթե պարզ նկատելի չլիներ, որ այդտեղ ջուր է եղել գալիս. տեղը երևում է, ուստի և անվանվում է «պալատի աղբյուր»: Մեր ալեքսանդրապոլցի բարեկամներից մեկը այդտեղ ասում էր, թե իր մայրը մի 40—50 տարի առաջ այցելել է Անին և պատմում էր, թե այս աղբյուրը այն ժամանակ ջուր էլ ուներ: Որքա՞ն հեշտություն մեզ Անիի մեջ առասպելներ կազմվում:

Շինության այն ճակատը, որ դարձրած է դեպի քաղաքը, առանձին խնամքով գեղեցկացված է: Կանգնելու, նայելու շատ բան կա այդ կողմում: Այստեղ է կամարակապ դուռը,



Պառնեաց պալատի շխմուտք (XIII դ.)

որ տան գլխավոր մուտքն է եղել. նրա վերևում, երկրորդ հարկում, մեծ ու լայն պատուհանն է, որի սրանկյուն կամարը, պրոֆեսոր Մառի կարծիքով, հիշեցնում է պարսկական ոճը: Թե դուռը և թե պատուհանը գեղեցիկ շրջանակների մեջ են գտնվում: Շինողը առանձին ուշադրություն դարձրել է դռան վրա, որի կոյուր գեղեցիկ քանդակազարդ կամարի շուրջը շրջանակի մեջ գտնվող ամբողջ տարածությունը ծածկված է մանրանկար դարձաքանդակներով: Դռանը ներկայացնում են խաչերի և աստղերի նուրբ, ճաշակավոր հյուսվածքներ: Դռան շրջանակն էլ ծածկված է ոլորուն, վերին աստիճանի նուրբ հյուսվածքներով:

Եվ այդքան խնամքը, այդ ճաշակավոր դարձաքանդակները այսօր սարսափելի կերպով կրճատել, ծամծմել ու ցած է թափել ավերանքը: Դռան կամարի մի փոքրիկ կտորն է մնացել, իսկ խաչերի և աստղերի հյուսվածքները մեծ մասամբ մաշկված են, վերցված: Երևի Անիի այցելուները այստեղից են հիշատակներ վերցնում իրանց համար, այդ դժբախտ պատի երեսը մաշկելով: Զարդերի փոքրիկ մասերն են մնացել, որոնք շուտով, երևի, բոլորովին կանհետանան, եթե այցելուները չխղճան:

Ավելի բախտավոր է մուտքի վրայի պատուհանը. բայց նա չունի էլ մուտքի նուրբ ու ոլորուն զարդերը: Շրջանակի մեջ առնված նրա երեք կողմերը ներկայացնում են շահմաթի տախտակ, որի քառակուսիները կազմված են սև և դեղնավուն քարերից: Նուրբ ճաշակ այդտեղ էլ երևում է: Բայց ահա պատուհանի ավերումն այլևս մարդու ձեռքից չէ գալիս, այլ վերևից ճեղք է տալիս պատը և պատուհանի ճակատից կախ է ընկել մի քար:

Նայելով մուտքի և պատուհանի հանդիսավորության, զարդերին, դիրքին և ազդող տպավորության, մենք, իհարկե, չկարողացանք զսպել մեր երևակայությունը և սկսեցինք հին, տեղին ու հանգամանքներին հարմարվող տեսիլներ ստեղծել: Այս հանդիսավոր մուտքով, երևի, աշխարհի շատ հզորներ էին մտնում և այս հրապարակում, որ բացված է հանդիսավոր մուտքի առաջ, երևի, ժողովուրդ էր խմբվում, իսկ ապարանքի կամ պալատի տերը, անշուշտ, թագավոր կամ նրա պես մի

իշխող, երևում էր մեծ ու գեղեցիկ պատուհանում, լսում էր, խոսում էր:

Սակայն ես, խոստովանում եմ, զննողարուն, հանդիսավոր պատուհանից ավել սիրեցի մյուս պատուհանը, որ, երևի, սենյակի միջից նայում է Մաղկոցաձորին: Այստեղ պաշտոնականություն չկա, այստեղ հրապարակում խմբված ամբոխի աչքերի համար ճարտարապետը զարդեր ու քանդակներ չէ շռայլել: Բայց այստեղ բնություն կա, ամենհի, լայն, հուժկու, որի վսեմությունը նույնիսկ ծիծաղելի է դարձնում ամեն մի արհեստական զարդարանք: Հասարակ, անպաճույճ, բայց լայն պատուհանից Մաղկոցաձորի հատակն է երևում այնտեղ, ցած, շատ ցած: Ձորի լանջերը, նրանց հետևող դաշտերը և այդ լայնարձակ տեսարանի վերջում Ալաջայի կապույտ շղթան,— մի բնություն է սա, որից ժամերով կշտանալ չէ կարելի: Որքա՞ն պայծառ ու ժպտուն է ամառվա օրը այս տեսարանի մեջ: Որքա՞ն սիրուն են սովերները հսկայական ձորի անկարգ դասավորված խորշերում ու խոռոչներում: Իսկ դե՞նք, հեռո՞ւն, արևով ու ջերմությամբ ողողված դաշտե՞րը: Եվ լուծություն, լուծո՞ւն ամեն կողմ... Այս մահը կարծես անամպ, ժպտուն երկինքն էլ է դյութել, օդն էլ, արևն էլ: Մահ, ավերակ...

Այստեղ, այս պատուհանի առաջ ես երևակայում էի այն կյանքը, որ այս տան մեջ էր անցնում մի ժամանակ: Ոչ այն պաշտոնական կյանքը, որ իր իշխանությամբ, կառավարելու և հրամայելու իրավունքով նայում էր քաղաքին այն մյուս, զարդարուն պատուհանով: Այստեղ, անշուշտ, ներքին կյանքն էր, մասնավորը, ընտանեկանը, որի քաղցրություններն ու դառնությունները մի են թե՛ աշխարհի տերերի, թե՛ անճար աղքատի համար: Ո՞վ էր այստեղով նայում Մաղկոցաձորին և ի՞նչ էր տեսնում այնտեղ: Իմ երևակայության առաջ են գալիս փափկասուն տիկիներ, իշխանազուն երեխաներ, նաժիշտներ, մի խոսքով, մի մեծ ու շեն տուն այս պատուհանի առաջ: Իսկ այնտեղ, ձորում, քարայրների, ծաղկոցների մի ամբողջ եռուն, կենդանի աշխարհ, որ շարժվում է, որ զործում է, հաց է աշխատում, ուրախանում է, տրամում է, մեռնում է ու ծնվում:

Գուցե և այսպես չէր,— ես չգիտեմ: Գուցե և այսպիսի ամառնային գեղեցիկ առավոտներին այստեղ բնտանեկան կյանքը չէր վայելում բնության գեղեցկությունները, այլ բոլորովին ուրիշ հոգսեր էին տիրում: Գուցե այս տանից մի բարբարոս ձեռք էր երկաթի պես ճնշում գեղեցիկ մայրաքաղաքը, գուցե այս տունը անեծք և սարսափ էր քաղաքի համար,— ես դարձյալ չգիտեմ:

Բայց ետ նայելով լուռ, կիսակործան սենյակներին, քարուքանդ պատերին, թափված քարակույտներին, ավերակի փողիին, ես հիշեցի Ֆիրդուսու խոսքերը.

Այժմ սարդն է վարագույր գործում Կեսարի

սրահներում,

Նվ բուն է պահապան Աֆրասիաբի կամարազարդ

զմբեթի տակ...



Ապարանքի կամ պալատի մոտ,— անվանեցե՛ք ինչպես կամենում եք,— մի կամարազարդ ավերակի բեկոր է գտնվում, անհայտ ու անհիշատակ: Երևակայությունն է նրա համար անուն գտել, մի անուն, որ թելադրել է ապարանքի հարևանությունը: Նա կոչվում է «Պահականոց»: Իբր թե արքունի պալատի պահապանները ապրում էին այդտեղ...

Այդ ավերակի ետևում մի փոքրիկ թումբ կա, կորած քարերի խառնիխառն կույտերի տակ: Մի հսկա ավերակ, գուցե և ավերակներ, բոլորովին գետնին հավասարեցրած: Երևում է, որ մի մեծ շինություն փլվել, մանրվել է այստեղ ու այդպիսի անհեթեթ քարակույտեր դարձել: Արդյոք այստեղ չէր այն սքանչելի եկեղեցին, որ 1000 թվականին կառուցեց Գագիկ Առաջինը, օրինակ առնելով էջմիածնի մոտ յոթներորդ դարում կառուցած Զվարթնոց եկեղեցին: Այդ եկեղեցու մասին ես խոսել եմ ս. Փրկիչ եկեղեցու նկարագրության մեջ:

Ապագա պեղումները կորոշեն Գագիկի այդ փառահեղ

շինություն տեղը: Մենք, ենթադրություններով, «գուցեներով» առաջնորդվող այցելուներս, միայն թափված քարերի բազմությունից և ավերակի կոլոր ձևից էինք ուզում եզրակացություն հանել: Բայց ո՞րտեղ չկան թափված քարեր: Անիի մեջ մի ավի հող չկա, ուր շինություն եղած չլիներ. այսօր էլ մի ավի հող չկա, ուր քարեր չլինեն թափված:

Այդտեղից քիչ դեպի արևելք, քարերով ցանված մի տափարակ տարածության վրա, բարձրանում է մի մաշված, տրորված եկեղեցի, որ հաղիվ է կարողանում ամբողջություն պահպանել, բայց որ Անիի ամենանշանավոր շինություններից մեկն է: Դա ս. Առաքելոց եկեղեցին է:

Բաղկացած է երկու մասից— բուն եկեղեցի և զավիթ կամ ժամատուն: Տարբեր ժամանակների, տարբեր ոճերի շինություններ են: Ամբողջությունը եկեղեցու սովորական ձևին շատ քիչ է նման. չկա գմբեթ, չկան սյուներ: Այս տեսքը շատերին է մոլորեցրել և կարծել տվել, թե դա եկեղեցի չէ: Մուրավյովը ասում է, թե դա Բագրատունիների պալատն էր: Իսկ ամբոխը անվանում է նրան Նուշիրվանի խոհանոց, կարծելով, թե պարսից Նուշիրվան թագավորը ապրել է այստեղ, այսպիսի փառավոր պալատ և խոհանոց է շինել: Պալատ անվանող ճանապարհորդները հայերեն չգիտեին և չեն կարողացել այն բաղմամբով արձանագրությունները, որոնք մնում են այս մաշված ու հյուծված պատերի վրա¹, իսկ եկեղեցին խոհանոց անունով մկրտող ամբոխը չգիտեր, որ Անիի ժամանակ Նուշիրվանը հարյուրավոր տարիներ առաջ գոյություն ունեցած մի թագավոր էր:

Մեր առջև կանգնած էր մի երկար, ոչ այնքան բարձր շինություն, որի արևմտյան կողմում, կամարակալ բացվածքի վրա, բոլորովին մաշված, դրսի կեղևից պղկված կտուրք մի կոլոր բարձրություն է ներկայացնում,— արդյոք զմբեթի մնացորդը:

Բուն եկեղեցին հնություն և ճարտարապետական լրջություն է պատկերացնում հենց նրանով, որ ներսից զուրկ է զարդերից: Բայց զարդերի փոխարեն որքա՛ն ազդու, հափըշ-


¹ Քյուրթլյանը միայն զավիթն է համարում Պահավունիների

տակող տպավորություն են թողնում պատերի մեջ շինված և առաստաղի վրա աղեղնաձև միմյանց փաթաթվող լայն սյուները: Եկեղեցու ներսում կա մի արձանագրություն, որ 1031 թվականին գրել է տվել Վահրամ Պահլավունի իշխանի որդին, Ասուղամբը, որ հայտնում է, թե մի արտ է նվիրել ս. Առաքելոցին՝ իր եղբայր Գրիգորի առողջության և երկարակեցության համար:

Նշանակում է, որ ս. Առաքյալը Անիի հին շինություններից մեկն է, թագավորների շրջանի մի շինություն, որ, ինչպես և այդ շրջանի մյուս շինությունները, ճարտարապետի պարզ, բայց վեհ կերտվածքով էր պարծենում:

Ուրիշ բան է ժամատունը: Նա արդեն հետագա ժամանակների գործ է, այն ժամանակների, երբ Անիում արվեստը ավելի զարդերով, քանդակագործական քմահաճո թուխքներով էր շլացնում: Այդ ժամանակները շինվեց և զարդարվեց ս. Լուսավորչի եկեղեցին, Անիի հարավային ծայրին: Բայց ո՛չ Լուսավորիչը, ո՛չ առհասարակ որևէ ուրիշ շինություն Անիում չի կարող իր զարդերով ու քանդակներով մրցել այս գավթի հետ: Դա, խոսելով ժողովրդական ոճով, մի նշխած ձու է:

Անխոնջ, սրամիտ վարպետները կամեցել են ապշեցնել տեսնողներին իրենց երկաթե գրչի ճարտար խաղերով, թուխքներով, անսպառ աշխույժով: Եվ միանգամայն հասել են իրանց նպատակին: Ապշել են նրանց ժամանակակիցները, ապշում է և այժմյան այցելուն: Նա կանգ է առնում ժամատան գեղեցիկ, խոր ու խոշոր քանդակներով զարդարված մուտքի մոտ և երկար ու երկար նայում է պատերը լայն, նրբահյուս ժապավենների նման ծածկող քանդակներին: Միայն գրանք էին, այդ քանդակները. պատերի մեջ շինած խորշերը, նրանց կիսակողոր գլուխները, ամեն տեղ, ամեն անկյունում երևում է ծպտուն, ստեղծագործող արվեստը: Իսկ ժամատան նե՞րսը, իսկ նրա կամարակապ առաստաղը: Ճոխություն է թափված ամեն տեղ: Քարերը հրաշակերտված են արևելցու ֆանտազիայի կրակոտ ուժով: Մի մատ տեղ չկա, ուր գործած չլինի վարպետի գրիչը: Եվ նայողի աչքը չէ կարողանում կանգ առնել մի տեղի վրա, ըմբռնել մի հայտնի դասավորություն, մի ամբողջություն, վերջացրած միտք գտնել: Այդ գեղարվես-



Առաքելոց եկեղեցու գավիթը

տական համաշխարհային, երևի, անժանոթ էլ էր մեր վարպետներին: Նրանք արշխատել են միայն անսպառ առատությամբ թափել, կուտակել. ճարտարությունը ոճի խիստ արտահայտության մեջ չէր, այլ զանազան ոճերի, զանազան հերյուրումների խառնվածքի մեջ: Յուրաքանչյուր մասնիկ, առանձին վերցրած, հիանալի տպավորություն է թողնում իր համարձակ, կանոնավոր, նուրբ գծերով: Քանդակել նշանակում էր գեղանկարել: Եվ ս. Առաքելոցի ժամատունը այդ կարողության ամենաբարձր արտահայտությունն է, որ միայն անեցուն էր տված և որ մի ուրիշ տեղ, ուրիշ ժողովրդի մեջ հազիվ թե եղած լինի...

Եվ նկարագրող այցելուն, խոստովանում եմ, շատ անզոր է այդ ռալլ շքեղությունների առաջ: Նրան տված են շատ թույլ, շատ ընդհանուր տպավորություններ արտահայտող բառեր, նրա ուժից վեր է բառերով թղթի վրա նկարելը այն, ինչ Անիի վարպետները նկարել են քարերի վրա: Եվ իրավացի է նկատում ռուս այցելուներից մեկը, թե միայն նկարիչը կարող է արտահայտել ս. Առաքելոց եկեղեցու շքեղ հարստությունները:

Շատ ծեր, չափազանց մաշված ու ուժասպառ է այդ անմահ շինությունը: Թեև նա դեռ պահվում է իբրև ամբողջություն, բայց անխնա կրծոտված է ամեն կողմից: Ժամատան մի մեծ անկյունը հիմքից այնքան քանդվել ու մաշվել է, որ պահվում է մի բարակ պատի կտորի վրա, թվում է, որ եթե մեկը մի մուրճով, մի բրիչով խփե այդ տեղին, շինության ամբողջ կեսը իր զարդերով, իր գեղեցիկ առաստաղով շուտ կգա, քարակույտների վրա նոր կույտեր ավելացնելով:

Ս. Առաքելոց եկեղեցին ժամանակին շատ նշանավոր դեր է կատարել Անիի մեջ: Երևի նրա մոտ գտնվում էր քաղաքի մեծ հրապարակներից մեկը, ուր հավաքվում էին մարդիկ՝ գրավելով կենտրոնական դիրք, մի ժամանակ, ըստ երևույթին, լինելով և եպիսկոպոսական եկեղեցի, նա մի տեսակ վարչական պաշտոնարանի էր նման: Պրոֆեսոր Մառն ասում է, որ ժամատները հայոց եկեղեցիներում կարևոր շինություններ էին: Այդտեղ ժամասացության ժամանակ կանգնում էին այն ծխականները, որոնք չէին կարողանում եկեղեցի մտնել՝

տեղի պակասության պատճառով: Այդտեղ թաղվում էին նշանավոր հոգևորականներ և արքայահայրեր և այդ կողմից մի մի պանթեոններ էին: Վերջապես այդտեղ հավաքվում էր ժողովուրդը ոչ միայն եկեղեցական, այլև վարչական, նույնիսկ քաղաքական հարցեր քննելու համար:

Զուր չէր ս. Առաքելոցի ժամատունը այնքան գեղեցիկ ու զարդարուն: Այդտեղ էին կատարվում կարևոր խորհրդակցություններ, այդտեղ էին որոշվում այն հարաբերությունները, որ ուներ քաղաքը իր տերերի հետ: Այս են վկայում եկեղեցու արձանագրությունները:

Դրանք թանկագին նյութեր են անեցու վրա զանազան ժամանակ բարդած հարկերի և տուրքերի էությունը պարզելու համար: Շատ քիչ են այնպիսի արձանագրություններ, որոնք պարունակում են իրանց մեջ այս կամ այն հավատացյալի նվերը և փոխարենն ստացած պատարագների թիվը: Մեծամասնությունը Անիի տերերի, Անիում հարկահանության պաշտոն կատարողների կարգադրություններն են, որոնցով քաղաքացիներին ազատում են այս կամ այն տեսակ հարկերից: Եկեղեցու պատերը դիվանական արձանագրությունների պաշտոն են կատարել: Կարգադրությունը փորագրվել է քարի վրա, որպեսզի անջնջելի մնա, որպեսզի հրապարակական լինի, ամենքին հայտնի:

Շատ արձանագրություններ անթվական են, բայց և նրանք, որոնք թվական ունեն, ցույց են տալիս, որ Առաքելոց եկեղեցին պաշտոնական կարգադրությունների դիվան դարձել էր XIII—XIV դարերում, այն ժամանակներում, երբ Անին իր միջից մեծ գաղթականություններ հանած, անշքացած մեծ քաղաք էր: Մի արձանագրություն կրում է 1384 թվականը: Դրանից հետո գրված որևէ արձանագրություն դեռ չէ գտնված Անիի մեջ:

Եկեղեցու պատերի տված նյութերով, իհարկե, չէ կարելի ժամանակագրական կարգով պատկերացնել Անիի հարկատվության չափերը: Դրանք կցկտուր տեղեկություններ են, բայց դարձյալ հետաքրքրական են իբրև փաստեր մեռած քաղաքի ներքին կյանքից: Կրեմմ այդ փաստերից մի քանիսը՝

Տեղերեցի Մխիթար եպիսկոպոսը երկրաշարժի աղետից

քաղաքը ազատ պահելու համար կարգադրում է, որ կիրակի օրերը փողոցում առևտուր չլինի:

Նուրայտին Քոթիթ անունով տամզաշին գալիս է Անի և տեսնում է, որ այդտեղի քահանաները ունեն յարլը (հրամանագիր, ԳՐԱՅԻԿ), որով ազատվում են «բաժ ու տամզա» տալուց և հաստատում է նույն արտոնությունը «վասն յերկար կենդանութեան փաթշահին»:

Մի ուրիշ անգամ էլ անհայտ տամզաներ (դրոշմողներ, կնքողներ) նույն արտոնությունն են հաստատում «վասն յերկար կենդանութեան պատրոնաց մերոց Սահիպ Դիւանին և Սահմատին և Քարիմադինին»:

Սրանք, հավանորեն, օտար տիրողների շնորհներն են: Ահա և հայ տերերի, գլխավորապես Զաքարյանների, կարգադրությունները:

1301 թվականին Իվանեի որդի Աղբուղեն, Շահնշահի հրամանով, գալիս է Անի, տեսնում է քաղաքը աղքատացած «և խիստ ի վեր մնացել զի շատ հարկ էր ի վերայ դրած որ ի սկզբանէ չէր եղել»: Եվ նա վերացնում է երեք հարկ. 1) «եզին հազրն», որ, երևի, եզների վրա դրած մի հարկ էր, 2) «կովին համբրելեն» (կովի գլխահամար) և 3) «ոշխրին աղհակն» (հարկ ոշխարի փարախներից):

Դամզաճի Մխիթարը, որ Գրիգոր Խուցիսին որդին էր, պարոն Աղբուղի հրամանով, վերացրել է «ջաղացնոյ դամզէն» և «դահեկը» (տասանորդը) «վասն Զազին հոգոյն»:

Դամզաճի Գեշը, Պայիկի որդին, վերացրել է «քասանկին դամզէն» թե քաղաքում, թե դրսից եկած ապրանքի համար և պատվիրում է, որ «ներկարարն զվաճառիքն քասանիկ շառնեն»:

1329 թվականին մեռնում է Աթաբեկ Շահնշահը (Զաքարյաններից), մեծ տրամություն պատճառելով աշխարհին. նրա այրին, Խուանդղե տիկինը, որ Շամշադին Սահիպ զիվանի դուստրն էր, թե պատրոնի հոգու փրկության և թե իր եղբայրների արևշատության համար վերացնում է իրանց տոհմային կալված կազմող Անիում «կովերոյն և զիշանուն զհամբրելէ» և զզոնագիրն»:

Տիրողների այս ողորմությունները, անշուշտ, թեթևա-

թյուններ էին անեցիների համար: Այդ թեթևության չափը մենք մոտավորապես անգամ չենք կարող որոշել, քանի որ մեզանում դեռ ոչ ոք չէ կարողացել ուսումնասիրել և պարզել, թե ինչ հարկեր էին դրանք: Առհասարակ, Անիի և նրա շրջակաների արձանագրությունները հարկերի շատ անուններ են տալիս, և Ղ. Ալիշանը հաշվում է դրանց մոտ վաթսուն հատ: Հասկանալի է, որ դրանք լոկ անուններ էլ կմնան, մինչև որ չուսումնասիրվեն բյուզանդական և արևելյան հարկահանական սիստեմները:

Ահա և հոգևոր տուրքերի մի նմուշ:

Ապուղամրի որդի Գրիգոր արքեպիսկոպոսը գրում է 1217 թվականին. սահմանված է սկզբից, որ յուրաքանչյուր գյուղից երկու գրիվ հաց տան աթոռին, իսկ Անիի ամեն մի եկեղեցին զատկին մի մի մորթի էր տալիս, երևի մատաղներից: Իր պատրոնների, ազգականների և եղբայրների երկարակեցության համար արքեպիսկոպոսը վերացնում է այս տուրքը:

Անշուշտ շատ էին և հոգևոր տուրքերը, այնքան շատ, որ կարելի էր լինում նրանց մի մասը բաշխել իբրև շնորհ: Եվ այսպիսով լրանում է այն ընդհանրապես աղոտ պատկերը, որ անեցու շլինքին փաթաթված հարկերն ու տուրքերն է ցույց տալիս: Միայն մեր ժամանակներում չէ, որ հարկերի աղբյուրներ են գտնում այնքան նուրբ մտածողությամբ: Այդ ընդունակությունը հատուկ է եղել և հին տիրապետողներին: Անիի դռներով ներս մտնող շալակավորն անգամ պիտի սահմանված տուրք տար:

Զգիտենք որքան տևողություն ուներ յուրաքանչյուր հարկ, բայց ունենք մեր պատմագիրների վկայությունը, որ հարկերը սոսկալի կերպով ճնշում էին անեցուն, հասցնում էին նրան թշվառության դուռը: Ահա այդ հանգամանքն աչքի առաջ ունենալով, կարող ենք երևակայել, թե որքան մեծ շնորհակալությամբ և երախտագիտությամբ պիտի վերաբերվեր անեցին Առաքելոց եկեղեցուն, որ իր պատերի վրա արձանադրում էր հարկերի ջնջումը և ոչ թե նոր հարկեր սահմանելը...

Գեղեցիկ սրբավայրը միայն թեթևության, ազատության մասին խոսելու լեզու ուներ:

Ս. Առաքելոց եկեղեցուց ոչ հեռու, դեպի հյուրատունը և Մայր եկեղեցին տանող ճանապարհի կողքին, թափված են մի աշտարակի ահագին բեկորները: Ծառերն ասել եմ, որ ավերանքը անընդհատ շարունակում է իր գործը Բագրատունյաց դժբախտ քաղաքում. նա շարունակ քանդում է, շարունակ ավելացնում է անհեթեթ քարակույտերի թիվը, տարածությունը: Այս ահագին բեկորները դրա հսկայական վկաներն են:

Դեռ 1880-ական թվականներից առաջ այստեղ բարձրացած էր մի վեցանկյունի աշտարակ: Նրա բարձրության հասնող ոչ մի շինություն չկար Անիի մեջ: Ի՞նչ էր դա: Տեսել, նկարագրել են նրան շատ ճանապարհորդներ, բայց նրա կատարած պաշտոնի մասին կարծիքները տարբերվում էին: Բավական համոզիչ և տարածված էր այն ենթադրությունը, թե դա մի դիտանոց էր, իհարկե, ոչ թե աստղաբաշխության ծառայող, այլ պարզապես զինվորական նպատակների: Սակայն աշտարակի վրա կար պարսկերեն մի երկար արձանագրություն, որ վկայում էր, թե աշտարակը մզկիթի մինարե էր:

Մահմեդական տերերի իշխանությունը այնքան երկարատև է եղել Անիում, որ անկարելի է ենթադրել, թե գեղեցիկ քաղաքը այդքան երկար ժամանակամիջոցում առանց իսլամական աղոթատան մնաց: Այդպիսի կրոնական անտարբերություն երբեք և ոչ մի տեղ չեն ցույց տվել մահմեդական տիրողները: Եվ ահա Անիի մեջ էլ, անկասկած, գոյություն են ունեցել մզկիթներ: Դրանք, որքան հայտնի է, երկու հատ էին. մեկն այս փլված աշտարակն է, մյուսը այն կանգուն աշտարակը, որ գտնվում է Միջնաբերդի հյուսիս-արևելյան կողմում, Ախուրյանի բարձր ափին:

Բայց զարմանալի հանգամանքն այն է, որ փլված աշտարակի մոտ ոչինչ հետքեր չկան, որ ցույց տան, թե այստեղ եղել է մզկիթ կամ մի այլ շինություն: Միթե մզկիթը այնպես է եղել ավերված, որ նրանից քարեր անգամ չեն մնացել: Հայտնի չէ: Մեն-մենակ կանգնած էր այստեղ մի

աշտարակ, նրա ներսում իննսուն աստիճաններ տանում էին մինչև վերևի ծայրը. իսկ նրա վրայի պարսկերեն արձանագրությունն ասում էր.

«Ես Բեյ-Սուլթան, որդի Մահմուդի, որդուց Շուարի, որդուց Մինուլեհի, Շեդդադեան, իմ ծնողների հոգու փրկության և իմ զաւակների համար (որոնց խնամութիւնը, ազգականութիւնը և միութիւնը թո՛ղ աճէ) հրամայեցի և արգելում եմ տէրերին այս էր-իւ-Մամբրան մզկիթի առջև ոչխար ու ուղտ վաճառել. Հէճ. թի 595 (1198—1199)»: Արձանագրության տակ հայերեն գրված էր. «Որ հաստատուն պահեն օրհնին յԱստուծոյ, ամէն»:

Եվ այսպես, մենավոր աշտարակը, բացի մզկիթի վկան լինելուց, ցույց էր տալիս, որ այստեղ անասունների վաճառանոց էլ էր: Մզկիթը, իհարկե, առաջ է բերում այն հարցը, թե ինչ դիրք էր բռնում մահմեդական ազգաբնակչությունը Անիում և որքա՛ն բազմամարդ էր նա: Այս հարցում էլ, ինչպես և շատ ուրիշ հարցերում, առաջնորդվելով լոկ ենթադրություններով, մենք հավանական պիտի համարենք, որ Անին, գոնե մահմեդական տիրողների ժամանակ, իր մեջ բավական թվով իսլամ բնակիչներ ուներ: Ուրիշ կերպ անկարելի է ենթադրել մի մահմեդական տիրապետություն այսպիսի հայաշատ կենտրոնում, որ թագավորական մայրաքաղաք է եղել, որ տեսել է կատարյալ անկախության օրեր, արյուն է թափել այդ անկախությունը պահպանելու համար: Բացի դրանից, երկու մզկիթների գոյությունը հավատացյալների թվի պակասություն չէ ցույց տալիս:

Գուցե մահմեդական ազգաբնակչության թիվը պակասել է Զաքարյանների երկարատև իշխանության միջոցին, գուցե հենց այդ ժամանակ էլ ավելորդ է դարձել այս աշտարակի մոտ շինված մզկիթը և նա քանդվել, անհայտացել է: Բայց մենք չպիտի մոռանանք, որ Զաքարյաններից առաջ Անիի տերը Շեդդատյան քուրդ ցեղն էր, որի աշխանությունը տևեց 120 տարի, իսկ Զաքարյանների իշխանությունը չնչեց թաթարական արշավանքը, որ ողողեց ամբողջ Շիրակը և կլանեց նրան: Իսլամի տիրապետության շրջանը, այսպիսով, մի քանի դար է շարունակվում: Եվ անկարելի է, որ տիրողները

հեռու մնային այս գեղեցիկ, գրավիչ քաղաքից, թողնելով նրան բացառապես հայերին:

Հաստատուն փաստ համարելով մահմեդական աչքի ընկնող աղգարնակության գոյությունը Անիի մեջ, մենք, բնականաբար, պիտի հետաքրքրվենք և այն հարցով, թե ի՞նչ է թողել այդ ցեղը իրանից հետո: Զարմանալի չպիտի թվա այն իրողությունը, որ բացի այս երկու մզկիթներից, մենք ուրիշ հիշատակներ չենք գտնում Անիի մեջ, եթե չհաշվենք Ավագ դռների մոտ եղած պարսկերեն արձանագրությունը: Զարմանալի չպիտի թվա, ասում ենք, այդ տիրողների շինարարական և ստեղծագործական աղքատությունը մի այսպիսի տեղ, ուր կուլտուրական բարձր զարգացման հասած հայ ժողովուրդը այնքան առատությամբ թափել է իր եռանդի և մեծ կարողության հիշատակարանները: Ցեղերի առանձնահատկություններն են խոսում այստեղ: Մոնղոլա-թաթարական ցեղերը միայն իշխողներ, միայն կաշի քերթողներ էին. աշխարհաշինություն նրանց չէր տված: Եվ նրանք, բնականաբար, անմասն, օտար ու խորթ պիտի մնային մարդկային ձևոնարկող ոգու, շնորհի ու տաղանդի այն լայնարձակ ասպարեզում, որ Անին էր ներկայացնում: Տիրող մահմեդականները արյունի և անեծքի էջեր են թողել այս տեղերի տարեգրությունների մեջ, իսկ նրանց երկաթե լուծի տակ ընկած բնիկ ժողովրդի գործերը այսօր էլ հիացմունք են պատճառում քաղաքակիրթ մարդկության: Սա համատարած մի իրողություն է: Սա պատմության ամենագրական, հաստատուն փաստն է ամեն տեղ:

Եվ զեռ շատ մեծ հարց է, թե մահմեդական տերերը ի՞նչ մասնակցություն ունեին այս իսլամ հիշատակարանների կառուցման մեջ: Ովքե՞ր են եղել կառուցանողները: Այդ հարցը մի քիչ կարող է պարզել մյուս մզկիթը, որի մասին ես քիչ հետո կխոսեմ: Այստեղ այն կավելացնեմ, որ այս փլված աշտարակը, ըստ երևույթին, նշանավոր է եղել իր ամրությամբ և բարձրությամբ: Ուրիշ ճարտարապետական աչքի ընկնող հանգամանքներ նա չունի: Ի՞նչ ուժ է եղել, որ ութսունական թվականների սկզբում խորտակել է այդ հսկա զանգվածը—ես չգիտեմ: Բայց որքան էլ ահավոր եղած լինի

անձանոթ խորտակողը, զանգվածը այնքան ամուր է եղել, որ չէ ցրվել եկել, այլ միայն կոտրատվել է: Ճանապարհի կողքին ընկած է ահագին, վեցանկյունանի գլանը, որի ներսը դատարկ է:

Ավերումը անողորմ է Անիի մեջ: Բայց ապշեցնող է այն ամրությունը, որ հաղորդված է եղել շինություններին: Այդ ամրությունն է, որ այնքան ճակատի պնդություն է տալիս մեռած քաղաքին իր ամենի և անմեռ թշնամու ավերանքի դիմաց:

ԺԱ

Քանզված աշտարակից ուղիղ գծով դեպի հարավ-արևմուտք ենք վերադառնում, դարձյալ դեպի Մաղկոցաձորի կողմը: Այգտեղ մեն-մենակ կանգնած է մի փոքրիկ եկեղեցի, որ Անիի մեջ շրջող ուշադրությունը շարունակ գրաված է պահում դեպի իրեն:

Այդքան ուշագրավ է այդ եկեղեցին գլխավորապես այն պատճառով, որ կործանման այս աշխարհում միանգամայն պինդ է պահպանել իր ամբողջությունը: Հեռվից նայողին ներկայանում է մի անխախտ եկեղեցիկ, որ այդքան դարերի հոսանքի մեջ նույնիսկ իր գեղեցիկ գմբեթն էլ պահել է մինչև վերջին սուր ծայրը և թվում է, թե այդ ծայրին ամրացրած խաչը նոր է վերցվել կամ ընկել:

Ուշագրավ է եկեղեցիկը և այն պատճառով, որ գեղեցիկ դիրք է գրավում քաղաքի ծայրին, Մաղկոցաձորի վրա, ուր որ գնում եք, նա նայում է ձեզ և այդ նայվածքը աշխույժ է, թե կարելի է ասել—երիտասարդական: Ուշագրավ է, վերջապես, և այն պատճառով, որ իր ճարտարապետության մեջ ունի մի առանձին, գաղտնի դյութական ուժ: Հեռվից այդ ուժը դուր չեք տեսնում պարզ կերպով, այլ միայն զգում եք:

Դա Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցին է:

Մոտենալով նրան, մենք, մեռած քաղաքի այնքան գեղեցկությունները դիտած և նրանցով այնքան սքանչացած այցելուներս, չենք կարողանում պահել մեր հիացմունքը. մեր խմբի համարյա յուրաքանչյուր անդամը միևնույն զգացմունքն էր բացականում. «ի՛նչ գեղեցիկ է»:

Եվ, իրավ, Անիի հնագույն շինություններից մեկն է դա, Մայր եկեղեցուց էլ տարիքով, և կրում է Բագրատունյաց շրջանի ճարտարապետության պարզ և վեհ գրոշմը: Փոքրիկ, ոչ այնքան բարձր մի եկեղեցի է դա, ավելի ճիշտն ասած՝ մատուռ, բայց իր այդ փոքրիկ մարմնի վրա թե ներսից և թե դրսից պահպանել է բոլորովին ինքնուրույն, զարգացած ճաշակի համաշափ, նուրբ պատկերը: Դա այն ժամանակների ձևակերտ է, երբ Անիում Տրդատ ճարտարապետի պես մեծ վարպետ կար: Ո՞վ գիտե, արդյոք այս մինիատյուր կերտվածքին չէ դիպել նրա ձեռքը:

Կոլոր, աշտարակաձև եկեղեցի է, բայց մի աշտարակ, որի դրսի շրջապատը տասներկու հավասար կողերից է կազմվում: Կարմրագույն, նրբատաշ քարերը այնպես են իրար կպած, որ կարծում եք, թե միապաղաղ տախտակ է կազմում: Ճիշտ է, ավերանքը այստեղին էլ է մոտեցել, կրծոտել է հիմքերը, քարեր է թափել: Բայց ինձ վրա ավերանքը, այստեղ այնքան ցավեցնող, տխուր նախազգացումներով լի տպավորություն չթողեց, ինչպես մյուս ավերանքների մոտ: Ինչ-որ վստահություն ներշնչող ուժ ունի այս եկեղեցիկը: Նա կարծես հավատացնում է ձեզ, որ իր մեջ դեռ շատ ու շատ պնդություն ունի, դեռ կարող է շատ դիմանալ և համենայնդեպս, երկրի երեսից չի անհայտանա իր քույրերից առաջ: Գմբեթի ծայրին մի կողմում սև փոս կա ձևացած. բայց այդ էլ ոչինչ—նա կա և կմնա:

Տեսողության պատրանք է դա, թե այն անգիտությունը, որ մարդը ցույց է տալիս աշխարհային գործերի և դեպքերի վերաբերմամբ: Զգիտեմ: Սիրում եմ հավատալ իմ ստացած տպավորությանը: Եթե Անի հրաշակերտողների սերունդները ոչ այժմ, ոչ էլ մոտակա ապագայում չպիտի կարողանան վերանորոգությունների միջոցով պահպանել իրենց հեռավոր պապերի թողած ժառանգությունը, Ապուղամրենց ս. Գրիգոր

ը կարող է այդ անկարող սերունդներին ասել, թե ինքը, այնուամենայնիվ, չի խորտակվի, կպահի իր ծակված զուլալը, մինչև այն ժամանակ, երբ ավելի պատրաստ, ավելի հասկացող, ուժ ունեցող մի սերունդ կծնվի հայերից: Նա կսպասե, նրա համբերությունը տարիներով չէ չափվում, այլ դարերով...

Իբրև արքայական Անիի շինություն, Ապուղամրենցը ցույց չի տա ձեզ զարգանկարների, հյուսվածքների, քանդակների այն շռայլ ճոխությունը, որի վրա դուք հիացել եք ս. Առաքելոցի ժամատանը կամ Հոսենց Տիգրանի ս. Լուսավորիչ եկեղեցում: Դրա փոխարեն դուք կտեսնեք բարակ ու նուրբ կարնիզներ, ճաշակավոր կամարներ դռների, պատուհանների, եռանկյունի խորշերի ճակատին: Պարզությունը, միացած սիրունության հետ, այստեղ էլ այն գլխավոր սկզբունքն է, ինչպես Մայր եկեղեցու մեջ: Նայեցեք գմբեթը շրջապատող տասներկու նեղ պատուհաններին. յուրաքանչյուրը գետեղված է երկկարգ կամարավոր սյուների մեջ: Կարծեք տասներկու աչքեր լինեն. և աչքեր, որոնց մեջ,— թվում է մի ըոպե,— դեռ բոլորովին չէ մարել լույսը, որոնք դեռ նայել գիտեն և նայում են աշխարհի շուրս կողմը իրանց վեր քաշած թփերի տակից:

Ներսից կոլոր շրջապատը արդեն վեց կողերից է կազմվում. ամեն մի կողը տափակ չէ, դրսի կողմերի նման, այլ կիսաբոլորակ է. կիսաբոլորակները միմյանցից բաժանում են սյուները, որոնք պատի միջով բարձրանում են, վերևում միանում այն բոլորակին, որի վրա կանգնած է բարձր ու գեղեցիկ գմբեթը: Նույն վեհ պարզությունը պահպանված է և այստեղ՝ ներսում: Բայց այսքան խնամք, այսքան ճարտարապետական շնորհք թափված է ինչո՞ւ համար: Մի նեղ ու անձուկ տեղ, մի ափ հող եկեղեցու ծածկի տակ առնելու համար: Մի ափ հող, որի վրա հազիվ 5—10 հոգի աղոթողներ տեղավորվեին:

Ավելին հարկավոր էլ չէր Ապուղամրենցին: Սա ծխական եկեղեցի չէր, այլ մի մատուռ տոհմային գերեզմանատան մեջ: Եվ այդ գերեզմանատունը պատկանում էր այն հռչակավոր տոհմին, որի մասին ես մի քանի խոսք ասել եմ


վերևում, ս. Փրկչի եկեղեցու նկարագրության մեջ, — Պաշլավունիների տոհմին: Ապուղամբը, ինչպես գիտեք արդեն, այն մեծ իշխանն էր, որի թոռներից երկուսը՝ Վասակ և Վահրամ, Բագրատունյաց ժամանակ մեծ անուն և հռչակ էին վայելում: Նրա անունն է, ինչպես երևում է, մնացել այս տոհմային մատուռի վրա:

Բայց ե՞րբ է նա շինվել: Արձանագրությունները լռում են այդ մասին: Եկեղեցու դռան ճակատին մի արձանագրություն ունի տիկնանց տիկին Շուշանը, որ Ապուղամբի որդի Գրիգոր իշխանի կինն էր, Վասակի և Վահրամի մայրը: Այդ արձանագրությունը ունի 994 թվականը: Գոյություն ունե՞ր Ապուղամբենցը գրանից առաջ թե ոչ, — չգիտենք: Հավանական է, որ այդ թվականից շատ առաջ չլինի շինված:

Տիկնանց տիկին Շուշանը, կամ ինչպես անվանված է մի ուրիշ արձանագրության մեջ, Շուշիկը իր հռչակավոր որդիների արժանի մայր էր: Որդիները, Վասակ և Վահրամ, իրանց անձը նվիրել էին հայրենիքի բարօրության, իրանց արյունն անգամ չխնայեցին, իսկ Շուշիկ տիկինը հասարակաց քարիքի համար անում էր այն, ինչ կարող էր անել մի գթառատ, հարուստ կին: Նա հայտնի է իր բարեգործություններով. խնամում էր աղքատներին ու որբերին և ամեն մի զրկված, ամեն մի դժբախտ գտնում էր այդ իշխանուհու սիրտն ու ձեռքը միշտ բաց: Նա իր որդիների մայրը չէր միայն, այլև բոլոր դժբախտացածների մայրը:

Ահա այդ նշանավոր կինը իր արձանագրության մեջ հիշում է Պաշլավունիների տոհմային մատուռին արած իր մի նվերը: Կան և ուրիշ արձանագրություններ, որոնք, բացի միայն մեկից, նույն Պաշլավունիներին են պատկանում, նրանց ընտանեկան հանգամանքներն են պատմում, տոհմացուցակներ են տալիս: Այսպես է, օրինակ, այն մեծ արձանագրությունը, որ գրել է տվել Ապղարիպ մարզպանը 1040 թվականին:

Դա նույն Ապղարիպն է, որ շինել է ս. Փրկչի: Ինչպես գիտենք, Ապղարիպը Շուշիկ տիկնոջ որդին էր, Վասակի և Վահրամի եղբայրը: Ս. Փրկչի շինությունից չորս տարի հետո Ապղարիպը իրանց տոհմային եկեղեցում գրում է, որ իր



Ս. Գրիգոր եկեղեցին հաւալ-արեւմտեցից (X դ.)

հայր Գրիգոր իշխանը վախճանվել է այն ժամանակ, երբ ինքը դեռ երեխա էր, թեև չէ հիշում իր հորը, բայց ծնողական սերը նրան պարտավորեցրեց շինել այստեղ հանգստարան ոչ միայն նրա համար, այլև իր վաղամեծիկ եղբայր Համգեի և քույր Սեդայի համար: Բացի հանգստարանից, նա շինել է և երկու սենյակ, հավանորեն փոքրիկ մատուռներ՝ ս. Ստեփանոսի և ս. Քրիստափորի անունով. այդտեղ պիտի պատարագներ մատուցվեն երեք հանգուցյալների համար: Այդ ժամանակ, ինչպես երևում է, վախճանվել էր և Շուշիկ տիկինը, Ապղարիպը պարտավորեցնում էր, որ նրա համար էլ պատարագ մատուցվի:

Մի արձանագրություն էլ ունի Վահրամ փառավոր իշխանը: Առաքելոց եկեղեցում մենք տեսանք, որ Վահրամի որդի Ապուղամբը կալված է նվիրում իր եղբայր Գրիգորի երկարակեցության համար: Երեի հիվանդ էր այդ Գրիգորը. և եղբայրը, բարեպաշտ հոր ցուցմունքով, այդ նվերով ուզում է շարժել երկնքի գույքը: Այստեղ, Ապուղամբենց մատուռում, Վահրամ իշխանն է նվեր տալիս նույն այդ եղբայրասեր Ապուղամբի համար: Բայց տալիս է ոչ թե նրա երկարակեցության համար. Ապուղամբը մեռել էր, և հայրը նրա հոգեբաժինն էր տալիս իր հայրենի մատուռին: Ով որ այս նվերը անտես անե, ասում է նա, «Ապուղամբի մեղացն պարտական եղիցի առաջի Աստուծոյ»:

Տոհմային հիշատակներ: Նրանք անհետաքրքրական չպիտի լինեն այն բոլոր մարդկանց համար, որոնք գիտեն, թե որքան մեծ գործեր ունի կատարած Պահլավունիների հռչակավոր տոհմը իր ազգի համար: Մասնավորապես Վահրամ իշխանը այնպիսի գեղեցիկ հիշատակներով է կապել իր անունը Բագրատունյաց գահի և հայրենիքի հետ, որոնք այսօր էլ միայն հիացնել կարող են ամեն մի հայի:

Ապուղամբենց ս. Գրիգորի աշտարականման, կոլոր ձևը մեզ պետք է կրկնել տա այն, ինչ ասացինք ս. Փրկչի մասին: Դա այն ձևն է, որ ուներ Վաղարշապատի Զվարթնոց եկեղեցին: Եվ որովհետև Ապուղամբենցը ավելի հին է, քան Գագիկ Առաջինի շինել տված եկեղեցին և ս. Փրկչը, ուստի

նրան պետք է համարել առաջին, գոնե մեզ հայտնի, ընդօրինակությունը ներսես Շինողի հռչակված եկեղեցուց:

Պահլավունիների հոյակապ տոհմի հին փառքը շատ գեղեցիկ կերպով է ներկայացնում փոքրիկ, բայց սիրուն, ազդու Ապուղամբենցը: Նայելով նրան, մենք կարող ենք իմանալ, թե ինչ շիրիմների պահապան էր նա այսքան դարեր: Բայց ո՞ւր են շիրիմները: Մատուռի մեջ, մատուռի շուրջը ոչինչ չէ երևում: Գուցե պեղումները բաց անեն Պահլավունիների հանգստարանը: Բայց կարող է այն էլ լինել, որ Ապղարիպ մարզպանի արձանագրությունը երկոտանի բոլորեն իներ է հավաքել այս պատերի տակ և, նրանք, գանձեր, հանելու տենչանքով քանդել, քարուքանդ են արել իշխանական դամբարանները:

Զէ՞ որ այստեղ ամեն ավերանք, ամեն ապականություն անպատիժ է եղել և անպատիժ էլ մնում է...

Պահլավունիների սիրունիկ, անջնջելի մնալու արժանի հուշարձանը տափարակ Անիի հարավային վերջին ծայրն է մատնանիշ անում: Գոնե այցելուն դրանից դենը չէ նկատում խոշոր ավերակներ. և թվում է, թե մեծ շինություններ չեն եղել այստեղ: Տափարակ քաղաքը այս գերեզմանատան մոտերքում էլ վերջանալիս է եղել: Այնուհետև տափարակի վրա սկսում է բարձրանալ թեք, բայց դժվարամատչելի ժայռոտ լանջերով այն մեծ բլուրը, որ Միջնաբերդն է կազմում՝ բուն Անին, հին Անին, որ ավերակների մի այլ աշխարհ է ներկայացնում:

Բայց այդ աշխարհը այցելելուց առաջ մենք դեռ պիտի տեսնենք տափարակային Անիի մի պարծանքն էլ, վերջինը, որ իր բարձր աշտարակով հրավիրում է այցելուին քաղաքի հակառակ, արևելյան ծայրը, դեպի Ախուրյանի մեծ ձորը:


Ուղեորվում ենք դեպի այդ աշտարակը: Մեր ճանապարհին, բավական մի ընդարձակ տեղ, փռված են հողի տակից նոր լույս հանած ավերակներ: Դրանք պրոֆեսոր Մառի պեղումներն են, որոնք կատարվել են 1892—1893 թվականներին: Տեսանք Մառի գտած հին, մեծ պարիսպը, որ շինել է տվել Աշոտ Ողորմածը: Հաստ ու մեծ քարերից շինած մի պարիսպ, որ Միջնաբերդի ստորոտով գնում է, սկսվելով Ա-

խորյանի ձորագլխից, մեզ դեպի նրան հրավիրող աշտարակի մոտից և շրջան տալով դեպի արևմուտք, դեպի Մադկոցաձորը:

Ինչպես իր տեղում ասել եմ, պրոֆեսոր Մառի կարծիքն է, որ այդ պարիսպն է Անիի հին մասի շրջագիծը: Հիմնը վելով մեր պատմագիրների տված տեղեկությունների վրա, մինչև 1892—1893 թվականները այն համոզմունքը կար, թե Անիի այժմյան երկու պարիսպներից մեկը Աշոտ Ողորմածն է կառուցել, մյուսը՝ Սմբատ Տիեզերակալը: Սակայն ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, որ Մատթեոս Ուռայեցին ասում է, թե Սմբատի պարիսպը Աշոտի պարսպից մի նետնեկեց հեռու էր: Այդպիսի տարածություն, ինչպես գիտենք, չկա Անիի արտաքին և ներքին պարիսպների մեջ: Մնում էր, ուրեմն, մի ուրիշ տեղ որոնել Աշոտի պարիսպը: Պրոֆեսոր Մառը որոնեց և գտավ, բայց ոչ հողի երեսին, այլ հողի տակ: Եվ նրա գտածը ճիշտ որ համապատասխանում է Ուռայեցու ցույց տված տարածության:

Այժմ, երբ մեծ հավանականությամբ որոշված են երկու թագավորների, հոր և նրան հաջորդած որդու գծած սահմանները, կարելի է հետևել Անիի շինության երկու հետաքրքրական շրջաններին, որոնք մի զարմանալի աճեցողություն և զարգացում են պատկերացնում:

Հայոց պատմությունից հայտնի է, որ մինչև Աշոտ Ողորմածը (952—977) Անին Բագրատունյաց մայրաքաղաք չէր: Մինչև այդ Անին մի ամուր բերդ էր միայն, որ ամփոփված էր, երևի, Միջնաբերդի և նրա հարավային ստորոտում տարածված անմատչելի ժայռերի վրա: Աշոտը թագավոր օծվեց Անիում, իր գահը այնտեղ հաստատեց: Հայաստանի շատ տեղեր թագավորական բնակություն են ունեցել իրանց մեջ, բայց մի փոքրիկ գյուղաքաղաքի, մի ավանի դիրքերից առաջ չեն գնացել: Այդպես չէր Աշոտի քնտրած տեղը: Մի կարճ միջոցում նա այնքան մեծացավ, որ այլևս չէր կարող տեղավորվել իր սահմաններում: Հարկավոր եղավ նրան մեծացնել: Եվ ահա Աշոտը Միջնաբերդի ստորոտի մոտով անցկացրեց այն հաստ պատը, որ պիտի պաշտպաներ նոր մայրաքաղաքը հյուսիսային դաշտի կողմից, — Անին իջավ դեպի



Մզկիթի վերածված աշխարհիկ շենք (Մաճուչեի մզկիթ)

դաշտը: Դա նրա մայրաքաղաքային կյանքի առաջին շրջանն էր:

Աշոտը, ինչպես ցույց է տալիս Ողորմած անունը, բարեկարգության, աշխարհաշինության մարդ էր: Անին լցվեց մարդկանցով: Աշոտյան պարիսպը նեղում էր աճելությունը՝ նվ նա չկարողացավ կանգնեցնել ազգաբնակչության շարժումը դեպի առաջ, դեպի հյուսիս, դեպի դաշտը: Աշոտի որդի Սմբատը, նույնպես աշխարհաշին ու մեծագործ մի մարդ, լայնացրեց տարածությունը, նա գուցե և քանդեց իր հոր պարիսպը և այդտեղից «մի նետընկեց հեռու» շինեց այն պարիսպները, որոնք այժմ շրջապատում են ավերակները:

Տափարակի վրա էլ Անին արագ աճեց ու մեծացավ, լցրեց ամբողջ տարածությունը մինչև Սմբատի պարիսպները: Դա երկրորդ, ավելի նորագույն շրջանն է: Եթե հաշվի առնենք տարիները, կտեսնենք, որ Անին իբրև մայրաքաղաք՝ 25 տարեկանից ավել չէր, երբ ալդքան տարածվեց: Աշոտ Ողորմածի մահից մի 5—8 տարի հազիվ էր անցել, երբ նկատելի դարձավ մայրաքաղաքի համար նրա որոշած սահմանների սաստիկ անձկությունը: Ահա իսկ որ մի հեթիաթական հերոս, որ օրերով չէր մեծանում, այլ ժամերով...

Բայց կա ավելի զարմանալի: Մի քանի հատ տարիներով անջատվող այդ երկու շրջանների մեջ մենք նկատում ենք խոշոր տարբերություն: Բավական է համեմատել Աշոտի և Սմբատի պարիսպները: Հոր շինությունը պարզ ու կոպիտ է, հաստ, դիմացկուն: Իսկ որդունը: Կարծես մի 15—20 տարվա ընթացքում Անի էր մտել մի բոլորովին նոր ժողովուրդ, բերելով իր հետ շինարարական քարային ստեղծագործության մի զարմանալի հանճար, որ իսկույն արտահայտվեց Սմբատյան հսկա պատերի, Մայր եկեղեցու, ս. Առաքելոցի և ուրիշ կերտվածքների շինության մեջ: Ո՛րտեղից եկավ այդ փոփոխությունը, այդ հսկա առաջադիմությունը...

Սմբատից հետո էլ ծավալման մեծ թափը կանգ չառավ: Նա գնաց դեպի հյուսիս, դուրս եկավ Սմբատյան կրկնակ պարիսպներից, տարածվեց դաշտի վրա, իջավ ձորերը և անթիվ քարայրեր փորեց իր համար: Այսպես արագ ու

միանգամայն արտակարգ էր զարմանալի մայրաքաղաքի հասակ քաշելը: Հնությունը չէր, որ երկար դարերի ընթացքում դանդաղ, աստիճանաբար մեծացրեց նրան, այլ այն խորհրդավոր, զարմանալի և իր ընդհանուր մտքով միայն ըմբռնելի շունչը, որ եկավ անցավ Շիրակի վրայով Բագրատունիների թագավորության սկզբից և հրաշալի գործերով ծածկեց Ախուրյանի այս բարձր ափը...

Ն. Մառի պեղումները մեզ մի չափազանց պերճախոս լեզվով ապացուցանում են, թե դեռ որքան ու որքան բաներ չգիտենք մենք Անիի մասին, որքան իրողություններ դեռ թաղված են հողի տակ: Մենք փողոցի նմանություն ունեցող նեղ անցքերով էինք գնում, տեսնում էինք տների պատեր: Նվես, դանդաղ քայլելով գիտության ու անխոնջ աշխատասիրության հարթած այդ նեղ ճանապարհով, երևակայում էի մի օր, երբ ավերակային հողը հեռացված կլինի այս քաղաքի ամբողջ երեսից և մեր հայկական Պոմպեան իր բոլոր մանրամասնություններով արևի տակ կլինի, այսպիսի մի պայծառ ու տաք արևի տակ: Երևակայում էի քաղաքի հրապարակները, վաճառանոցները, փողոցները բացված: Մենք այն ժամանակ կգտնեինք և այն, թե ինչ անուններ էին կրում դրանք: Չէ՞ որ այժմ էլ արձանագրություններից գիտենք այդ անունները: Գիտենք, օրինակ, որ կար Բուն փողոց, այսինքն գլխավորը, որ, երևի, քաղաքի մի ծայրից գնում էր մինչև մյուսը, կային և Վերի-փողոց, Դարբնոց-փողոց, Սառած-փողոց, Կտեր-փողոց: Ինչպես հատուկ է միջնադարյան քաղաքներին, Անին ուներ և բաղմամբով մանր-մունր փողոցներ, որոնք կոչվում էին «զուլակ», այսպես են ս. Առաքելոց զուլակ, Հատեցոնց զուլակ, Մուղուլակ: Վաճառանոցները, ինչպես արևելյան այժմյան բոլոր քաղաքներում, զետեղված էին կարավան-սարանների մեջ, որոնք կոչվում էին «փնտուկ», մնացել են Կամարակապ-փնտուկի, Վասլի փնտուկի անունները: Արհեստանոցներն էլ իրանց առանձին տեղերն ունեին. Կոշկակարոց, Բազմոց, Նալբանդոց, Կատտոնոց, Գտակարոց և այլն...

Երևակայում եք և դուք, ընթերցող, որ մի օր այս բոլոր անունների տները գտնված, հայտնի կլինեն: Այն ժա-

մանակ մեր Անիի հին կյանքը կարելի կլինի պատկերացնել ոչ թե երևակայությամբ, ստեղծած ու մտացածին մանրամասնություններով, այլ պարզ ու որոշ, ինչպես իրական վեպի մեջ: Մանավանդ որ փողոցների ու հրապարակների հետ էլ կբացվեն և շատ տների դռներ ու մենք շողափելի փաստեր ու վկաներ կունենանք անեցու ներքին ընտանեկան կյանքի մասին:

Ես հավատում եմ, որ կլինի այդպիսի օր և նա հեռու չէ. միայն թե լինեն Մառի նման եռանդ ու տաղանդ ունեցող մարդիկ: Ի՞նչպես չհավատալ, երբ գնում ես հողի միջից դուրս բերած Աշոտյան մեծ պարսպի տակով: Ի՞նչպես չհավատալ, երբ այդ պարսպի մյուս կողմում, հին, Աշոտյան շրջանի քաղաքում, տեսնում ես հողի միջից դուրս բերած մի ամբողջ եկեղեցի իր հիշատակարաններով, իր հետաքրքրական հանգամանքներով:

Կանգնելով այն բեկորների առաջ, որ պեղելով հայտնագործել է Մառը, դուք իսկույն հասկանում եք, որ դա էլ մի տոհմային մատուռ է, տոհմային գերեզմանատան մեջ: Մատուռը նվիրված է եղել Աստվածածնի անվան: Իսկ այն տոհմը, որին պատկանելիս է եղել գերեզմանատունն ու մատուռը, կոչվելիս է եղել Խամբուշենց:

Ամենից շատ աչքի ընկնող հանգամանքն այն է, որ Խամբուշենց եկեղեցին, ինչպես իրավացի նկատում է Մառը, ցույց է տալիս, թե տեղի ինչ սարսափելի անձկություն կար Անիում: Յուրաքանչյուր թիզ հողը բռնված է եղել շինություններով: Խամբուշենց եկեղեցին միայն կողմնակի մուտքեր ունի, իսկ արևմտյան կողմից ոչինչ դուռ չունի, որովհետև շարժվելու տեղ չի եղել:

Դատելով այն բեկորներից, որոնք թափված են պեղումների տեղում, Խամբուշենց եկեղեցին ունեցել է շատ վայելուչ ճարտարապետական ոճ և զարդարված է եղել ոչ ճոխ ու հարուստ, բայց սիրուն տպավորություն թողնող քանդակներով: Բայց եկեղեցու հիմքերը միայն կան. մնացածը կտորկտոր թափված է նրա շուրջը: Խամբուշենց գերեզմանատունը գտնվում է հարավային կողմում: Տապանաքարերի վրա

գրություն չկա, բայց փոքրիկ խաչքարեր կան թափված, որոնք դրված են եղել այդ գերեզմանների վրա:

Ես տեսա մի ինչ-որ քարի կտոր, որի վրա արձանագրություն կար: Չգիտեմ այս թե ուրիշ մի արձանագրությունից Մառը իմացել է, որ Խամբուշենց եկեղեցին տեսել է Անիի անկախության ժամանակները: Նա ունի 1042 թվականը:

ԺԲ

Աշոտի նորագյուտ հաստ պարսպի տակով ենք գնում, Մառի բավական խոր փորվածքի միջով, իսկ մեզ հետզհետե մոտենում է բարձր, բազմանկյուն աշտարակը, շինված կարմրագույն քարերից:

— Մզկիթը, — ասում ենք մենք իրար:

Նա պարսպի մյուս կողմումն է, ուրեմն Անիի հին մասին է պատկանում: Խրոխտ ու հպարտ, չնայած իր ճակատին սողացող դավաճան ճեղքերին, աշտարակը բարձր է տարել իր զլուխը կամ, ավելի ճիշտ ասած, ծայրը, որովհետև իսկական զլուխ չէ մնացել նրա վրա. և նայում է իր կողերով դեպի ամեն կողմ, իբրև ավերակ քաղաքի միակ պահապան: Ճակատի վրա, վերևում, երևում են ինչ-որ արաբական տառեր, որոնք կարդացվում են, ինչպես ասում են, այսպես՝ «Բի'սմ իլլահ» (հանուն Աստծո):

Աշտարակը մեզ դիմավորում է իբրև առաջավոր պահակ. նրա ետևում գտնվում է ինքը, այն շինությունը, որ, ինչպես վճռել են Անիի բոլոր այցելու գիտնականները, մզկիթի պաշտոն պիտի լինի կատարած: Նա կանգնած է Ախուրյանի ձորի սպառվածքի վրա, նայում է դեպի հյուսիս-արևելք, իսկ իր երկար կողերից մեկը դարձրել է դեպի հարավ-արևելք, դեպի ձորը, մյուսը՝ դեպի հակառակ կողմը:

Ահա այս հակառակ, արևմտյան-հյուսիսային կողմն էլ ենթարկված է ավերանքի: Այս մասը փլվել է համեմատաբար

նոր ժամանակներում, այժմ էլ կարծեմ փլվում է կամաց-կամաց, քայլ առ քայլ: Եթե շիններ այդ, շինությունը կարելի կլիներ ամբողջ մնացած համարել: Ամբողջ ու անվնաս է նույնիսկ կտուրը:

Մուտքը արևմուտքից է եղել: Այդտեղից էլ ներս է խուժել ավերանքը: Նա ոչնչացրել է արևմտյան պատը, բաց է արել շինության ամբողջ ներսը: Դա մի փառավոր դահլիճ է, որի փառքն ու վայելչությունը կազմում են երեք կարգ սյուները և նրանց վրա տարածված կամարների ցանցը:

Քայլդ դանդաղեցնում ես, տեսողությունդ լարում՝ դահլիճի սյունակարգերի և կամարների ներկայացրած գեղեցկությունը միանգամից ըմբռնելու համար: Առաջին իսկ հայացքից ես հիշեցի Հոռոմոսի դահլիճը: Նմանություն կանույն կարճ սյուները: Բայց տարբերությունը ավելի շատ է: Այնտեղ սյուները բարակ են, անկյունավոր, այստեղ նրանք հաստ են և կոլոր: Այնտեղ կամարները նուրբ են, բարձր, կիսաբոլոր չեն, այլ աղեղնաձև, այստեղ նրանք ցածր են, ավելի հաստ և թանձր ու կիսաբոլորակներ են կազմում: Վերջապես, այստեղ սյուները և կամարները ավելի խիտ են: Նկատվում է փոքր ինչ կոպտություն. վարպետը նրբության, բարձրության մասին չէ մտածել, այլ կարծես կամեցել է ճնշել այն քարային ահագին թանձրությամբ, որ այնպիսի համարձակությամբ իրանց վրա բարձրացրել են լայն ու կարճիկ, գեր, կարծես վերևի ծանրության տակ ճնշված սյուները:

Սկզբից, իր շինության օրից, այս դահլիճը, երևում է, մի ինչ-որ մեծ պաշտոնի է եղել հատկացրած: Նրա համար ծախս չեն խնայել, նրան զարգարել են առատ ձեռքով: Անթիվ կամարների վրա հանգչող առաստաղը զարդարված է այս կողմերին հատուկ խոր քանդակներով, ինչպես Հոռոմոսի դահլիճի առաստաղը, ինչպես ս. Առաքելոց եկեղեցու գավիթը: Զարդարուն է և հատակը, կազմված մանր քարերից մոզաիկի ձևով: Առաստաղը մնացել է, հատակն է քանդվել:

Միայն մարդիկ չեն զարդարել այս հարուստ կամարահարկը: Զարդարել է նրան և բնությունը, զարդարել է իրան

հատուկ վսեմ հսկայությունը: Չորս մեծ ու լայն, գեղեցիկ կարնիզներով զարդարած պատուհաններ նայում են դպի հարավ-արևելք, և այդտեղ փոված է Ախուրյանի միշտ գեղեցիկ ձորը: Պատը ցցված է ձորի կողին, նրա արհեստական շարունակությունն է կազմում: Եվ պատուհանների տակից բացվում է, ցած և ցած է գնում այն գոգավոր խորությունը, որ այստեղից պատռում է ձորի կողը մինչև վերջը, մինչև Ախուրյանի զեղնավուն ալիքները:

Իմացել են պինդ, լավ, գեղեցիկ շինել, բայց իմացել են և տեղ ընտրել: Զգիտես՝ որի՞ն առավելություն տաս՝ շինարարական տաղանդին, թե բնությունը ճանաչելու տաղանդին: Թվում է, որ վերջինն ավելի աչքի է ընկնում: Գուցե մայրաքաղաքի մեջ սրանից ավելի գեղեցիկ ապարանքներ ու պալատներ են եղել, ավելի մեծ ու հարուստ, ավելի զարդարուն ու հոյակապ: Բայց թվում է, որ այս դահլիճը հետ մնացած չպիտի լինի ոչ մեկից, որովհետև իր գեղեցկության մեծ մասը սա բնությունից է վերցրել: Ո՛վ է եղել այսպիսի փառահեղություն նվաճողը:

Այս հարցը կարելի է այսպես էլ ձևակերպել. ի՞նչ է եղել այս շինությունը:

Մզկիթ, ինչպես ասացի: Այս անունը շինության ճակատին դրոշմել է բարձր աշտարակը: Այսօր էլ բաց ու բանուկ է այն ճանապարհը, որով մուեղդիներ բարձրանում էր այս մինարեի գլուխը և այնտեղից կանչում էր իսլամի ահավոր աստծուն: Դահլիճի կողմից մի փոքրիկ դուռ տանում է աշտարակի ներսը: Ութսուն կիսավեր աստիճաններ այսօր էլ բարձրացնում են այցելուին վերև և այնտեղից ցույց են տալիս Անիի և շրջականների գեղեցիկ տեսարանները: Եվ յուրաքանչյուր բարձրացող գիտե, որ մուեղդիների ճանապարհով է գնում, գիտե որ անթիվ անգամ ջերմեռանդ մուսլիմների ոտները կոխ են տվել այդ մաշված, այժմ վտանգավոր աստիճանները, մի ժամանակ, երբ այստեղ անթիվ գեղեցիկ տաճարներում պաշտվող քրիստոնեական աստծո հետ բարձր ու զիլ ձայնով փառաբանվում էր և մարգարեի ալլահը: Այժմ լռություն է տիրում և այստեղ: Հաղթվող և հաղթահարված քրիստոնեության հետ հավիտենական լռության և համրու-

թյան է դատապարտված նաև հաղթահարողը, սուր և ավերանք նվիրագործած իսլամը: Թե մեկից և թե մյուսից ավերակներ են միայն մնացել այժմ...

Բացի միևնույնից կար մի ուրիշ հիշատակ էլ, որ այժմ անհետացել է: Մի ժամանակ, երբ դեռ չէր փլվել զահլիճի արևմտյան պատը, նրա վրա կարգացվում էր նեշքի անվանված պարսկերեն տառերով մի մեծ արձանագրություն, որ գրել է տվել XIV դարի առաջին կեսում Աբուլալիյի Բեհա-տուր թաթար խանը: Արձանագրությունը արտագրվել է ժամանակին և թարգմանվել: Նա աղոտ լույս է գցում Անիի վերջին ժամանակների, աղքատության և դժբախտության ժամանակների վրա:

Թաթար իշխողի այդ հրաման-արձանագրությունից մենք իմանում ենք, թե ինչպես կեղեքվում էին անեցիները հարկահանների ձեռքին: Որոշված էին հայտնի հարկեր և տուրքեր՝ դամդա, բաժ: Բայց առնողները, ինչպես այդ սովորություն է և մեր օրերի արևելյան բռնակալությունների մեջ, ավելացնում էին այդ հարկերը իրանց օգտին: Թե այստեղ, Անիում, և թե Վրաստանի գավառներում, ասում է խանը, սովորություն կա «խալան» և «գինու փառչ» անունների տակ ավելորդ և անիրավ հարկեր ստանալ: Եվ այնքան ծանր էր այդ հարստահարությունը, որ Անին սկսեց ավերվել: Բնակիչները թողին իրանց տները, շարժական և անշարժ ստացվածքները և սկսեցին հեռանալ, ուղարկելով խանին աղերսագրեր, որոնց մեջ նրանց հուսահատական ճիշդ կարողանում էր ասել. «Ամենակալ Աստվածը թող չվերացնե քո գլխից իր բարձր հովանին»: Եվ ահա, ականջ դնելով այդ ճիշդերին, Աբուլալիյի Բեհատուր խանը հրամայում էր. ոչ ոք չհամարձակվի որոշած հարկերից մի բան ավելացնել կամ պակասեցնել:

Դեռ ինչն՝ր, ի՞նչ դժբախտություններ, անեծք ու արտասուք կարող էին պատմել այս համատարած ավերակները, եթե հանկարծ լեզու ստանային: Հուզիչ տպավորություն է թողնում այն հայերեն փոքրիկ արձանագրությունը, որ կա Աբուլալիյի խանի այդ հրամանի տակ: Խոնարհ, աղերսավոր

շեշտով նա ասում է. «Հաստատուն պահողքն աւրհնին աստուծոյ»...

Հաստատուն պահեցի՞ն արդյոք: Կատարեցի՞ն մահմեդականները իրանց սրբազան տան վրա արձանագրված այս հրամանը:

Բայց ո՞րքան էր դա մահմեդական սրբազան տուն: Մոտեցե՛ք այն տեղին, ուր միևնույն կայած է շինություն, և դուք իսկույն կնկատեք, որ դա հետո է շինված, որ այդ աշտարակի և բուն շինության ոճի, պարագաների մեջ տարբերությունը մեծ է:

Ստացվում է այն եզրակացությունը, որ Ախուրյանի այս բարձր ավին, այս սյունադարձ զահլիճ շինողները մզկիթ չեն ունեցել ի նկատի: Դա հին շինություն է, այն ժամանակների շինություն, երբ Անիում մահմեդականների այնպիսի թիվ չկար, որ հարկավոր լինեին այսպիսի մեծ և փառավոր մի մզկիթ կանգնեցնել: Աշոտի պարիսպը գտնելուց հետո մանավանդ կասկած չէր կարող մնալ, որ իբրև Անիի հին մասի մի շինություն, դա կառուցված պիտի լինի Աշոտի կամ նրա հաջորդի օրերում:

Ոմանք կարծել են, թե դա է եղել Անիի կաթողիկոսարանը: Բայց պրոֆեսոր Մառը իրավացի նկատում է, որ այն ժամանակները հայոց կաթողիկոսը նստում էր Արգինայում: Շատ հավանական է երևում մյուս ենթադրությունը՝ թե դա եղել է դատարան: Քանզված հատակը ցույց է տալիս, որ ներքևում էլ կա մի հարկ, ուր երևում են մութ սենյակներ: Նրանք կարծես ասում են, որ բանտարկվողների համար են շինվել:

Ուրեմն, մահմեդական բարեպաշտությունը չէ շինել այս տունը: Նա միայն օգտվել է իր իշխող դիրքից և մզկիթ է դարձրել վաղուց պատրաստ և իր գեղեցկությամբ գրավիչ շինությունը:


Ես նստած էի «մզկիթի» մեծ պատուհանում և չէի կարողանում աչք վերցնել նրա առջև փռված ահագին, խոր ձորից: Ինձ հափշտակողը դարձյալ Ախուրյանն էր: Ես տեսել էի նրան երեկոյան վերջալույսին, տեսել էի վաղ առավոտյան և տարբեր գեղեցկություններ էի գտել նրա մեջ: Այժմ

օրվա ուրիշ ժամն էր: Արեգակը մոտենում էր միջօրեին և նրա տակ այլևս շվաքներ չկային: Չկային նրանք նույնիսկ Ախուրյանի ձորում, գոնե նրա այն մասում, որ բացված էր իմ պատուհանի առջև: Եվ այժմ էլ ուրիշ տեսակ գեղեցկություն: Ես խորասուզվել եմ նրա մեջ, որոշել եմ նրա առանձնահատուկ գծերը, գույները և նրանցով հիանում եմ: Անբա-
պառ է պատկերի քաղցրությունը...

Իմ պատուհանը տիրում է վիթխարի տեսարանի վրա: Մեծ, օձապտույտ ձոր. արևով ողողված նրա հատակում՝ գետը եղեգնապատ ավերած: Գորշ, շոր ժայռերի շոր, այր-ված պատեր: Նրանցից վերև կանաչ լեռնադաշտ, մեծամեծ բլուրներ, որոնք շարքեր են կապում, հասնում են հորիզո-նին, կորչում են այնտեղ: Մի մեծ աշխարհ: Բայց նա լուռ է, նա անկենդան է: Եվ միակ բանը, որ քարացած, կախարդ-ված չէ, որ շարժվում է, կյանքի նմանություն է բերում, Ա-խուրյանն է:

Միայն նա: Երկնքի տակ ոչինչ բան չէ գրավում աչքդ, չէ ընկնում սրտիդ զարկերակին, — միայն նա: Լուռ, ան-ձայն, բայց գնալուն, բուսի, վայրկյան անգամ կանգ չառ-նող: Հավիտենական ճանապարհին հյու հպատակ, նա վա-զեցնում է իր գեղնավուն ալիքները, փրփուրների մանյակ է գցում իր խոնավ պարանոցով, պտույտներ է տալիս ժայ-ռերի շուրջը, կանաչ կղզիներ է կազմում: Միշտ աշխույժ, միշտ կայտառ: Նրան չեն հուսահատեցնում ալևոր, դառա-ժած, մահով պատած, մահ մարմնացնող ժայռերն ու լան-ջերը: Գրանց նայես, գրանց լսես, ինքդ էլ պիտի պառկես մի տեղ, ծածկվես այս տեղերի համար ճակատագրական սավա-նի տակ և դառնաս սֆինքս, հավիտենական լուսթյուն: Բայց գետը չէ էլ շտապում փախչելու այդ հուսահատ ավերից: Ինչպես և այն ժամանակ, երբ այստեղ յուրաքանչյուր քարի ետևից կյանքն էր նայում, կյանքն էր ժպտում ու լացում, նա այժմ էլ անփոփոխ իր գեղեցիկ, նազելի ընթացքն է տանում և նրա միջից, միայն այնտեղից ես ստանում եմ սիրտ լայ-նացնող ժպիտներ:

Բնության մահը, ավերակներից դուրս հոսող և ամեն տեղ թափվող մահը չէ կարողանում ծալ-ծալ կուտվել սրտիդ



Վանաձորի ձորը

վրա: Որովհետև կա գետը, որովհետև նրա ալիքները, նրա փրփուրն մանյակները տանում են միտքդ իրանց հետ, շոյում են նրան, փափուկ և մեղմ են շոյում և հասկացնում են, որ մեռելությունն է կանգնում, քարանում, իսկ կյանքը գնում է, փրփրում է, պայծառ լույսեր է տալիս, ջերմ արևն է ցոլացնում իր սրտի մեջ...

Եվ կենդանության այդ քարոզը որքա՜ն հրաշալի է մահվան այս կիրճում: Ահա այստեղ, ուղիղ իմ պատուհանի դիմաց, գետի երկու կողմերում բարձրացած են քանդված, անճոռնի, անհեթեթ ձև ստացած կամ, ավելի ճիշտ ասած, ամեն մի ձևից ու կարգից բնկած պատեր: Միայն մահվան ահռելի ժանիքները կարող են այսպիսի հրեշավոր այլանդակությամբ ծամծմել մի մարմին: Դրանք Անիի հռչակավոր երկհարկանի կամուրջի մնացորդներն են, որոնց մասին ես արդեն խոսել եմ: Կանգնած են դրանք, ապշություն, մահվան ցրտություն են ներշնչում: Գետը անցնում է նրանց միջով, արհամարելով այդ դիակնային ներշնչումը: Կանգնել այսպես, այլանդակ, մաշկված, լինել անճոռնի ողնշություն և շարունակ, մաս-մաս, հյուսիս-հյուսիս ողնշանալ, թափվել, լինել անխուսափելի իբրև ինքը, մահը, անհասկանալի, սառցնող իբրև ինքը, հավիտենականությունը.— այսպես է ասում ավերանքը: Իսկ գետը այդ գերեզմանային հարկի տակով էլ անց է կացնում իր ջրերը կայտառ ու ժիր: Նրա և այդ պնդերես հարևանների մեջ պայքարը անընդհատ է, մշտնջենական— կյանքի և մահվան պայքար: Եվ ով ապրում է, ում կրծքի տակ արյուն է խփում, նա ամբողջ սրտով այդ հեղուկի հետ կլինի, այդ վազող ջրերի հետ, որոնք միայն չեն թողնում հուսահատվել այստեղի բնությունից և պատմությունից:

Ժամանակներ կային, դարերով չափվող ժամանակներ, երբ այս պատուհանից գեպի ցած, գեպի Ախուրյանի մեծ ձորը, նայում էին այստեղ ապրողները: Տեսարանը հարկավոր էր մարդուն, թե նրան, որ դատում էր մարդկանց այս կամարների տակ և թե նրան, որ երկիր էր ավերում, սուր էր պաշտում և այստեղ խոնարհվում էր սուր և տիրապետություն հովանավորող աստծուն: Այստեղից երևում էր կա-

մուրջի վրայով անցնող ամեն մի մարդ, այստեղից տեսնում էին ամեն մի շարժողություն, որ տեղի ուներ ձորում: Վերջապես, այս պատուհանը նայում է Բեխենց վանքին: Հրեն նա այլանդակված, սև, զարհուրելի խոռոչ դարձած իր կրծքով նայում է այստեղից: Երկու թշնամի կրոնների պահապաններ իրար աչք են տնկել հսկայական ձորի վրայով: Այնտեղ աղաչում էին աստծուն խաղաղության համար, այստեղ աստծուց հատու սուր և բազուկի զորություն էին աղերսում: Մեկը ընկած, մյուսը նրա կրծքին կանգնած: Նա խեղճ սաահարկու: Մարդկային ճակատագիր: Երկուսն էլ այսօր ավերակ, երկուսն էլ իրանց քարային կոկորդներով մահ, մահ են կանչում: Մահ այս տեղերի յուրաքանչյուր առարկայի, յուրաքանչյուր քարի, յուրաքանչյուր հիշատակի համար...

Եվ այդ մահվան կոչերը պիտի այս մեծ ձորն էլ լցնեն ին ներքևից մինչև պոռնգները, թե չլինեք գետը:

Բնությունը միայն Ախուրյանով է ապրում: Միայն նրանով էր այսպես հափշտակել ինձ այս ավերված, բայց գեղեցիկ, քարանկյունների վրա տիրաբար ցցված պատուհանում:

— Դե՛սնք,— լսեցի ես և զոռով պոկվեցա Ախուրյանից ու նրա ձորից...

ԺԳ

Գնում ենք բարձրագիր Անին տեսնելու, այն, որ բլուրի վրա է տեղավորված, միջուկը, սիրտը — Միջնաբերդը:

Ախուրյանի ձորը և Ծաղկոցաձորը Անիի հարավային մասում մոտենում են իրար, մի նեղ պարանոց կազմում: Այդտեղ ահա, մի ձորի ափից մինչև մյուսը, արևելքից արևմուտք ուղղությամբ ձգված է այս դաշտավայրի համեմատությամբ բավական բարձր մի բլուր, որ ունի մոտ 300 ոտնաչափ: Հյուսիսային կողմից բլրի լանջերը զառիվայր քարքարոտներով իջնում են գեպի քաղաքը: Դրանք բավական դժվարամատչելի են, և հազիվ թե Անիի ամենալավ ժա-

մանակներում էլ այդտեղ շինություններ եղած լինեն. գոնե այժմ լանջերի վրա չեն նկատվում ավերակներ: Բլուրը դյուրամատչելի չէ և արևելյան կողմից: Այդտեղ նրա համարյա ուղղաձիգ լանջերը իջնում են Ախուրյանի ձորի վրա, և նեղ ճանապարհը, որ այդ կողմով քերում է բլուրի ստորոտը, տեղտեղ այնքան մոտենում է Ախուրյանի խոր ձորին, որ ուղևորը պիտի դգուշությամբ քայլե, թե չէ կարող է ցած, դեպի գետի ժայռոտ կողերը սահել:

Միայն արևմտյան կողմից Միջնաբերդի բլուրը անհամեմատ դյուրամատչելի է: Այդ կողմում նրա լանջերը ավելի թեք են և չեն հասնում Մաղկոցաձորի կողերին: Մեջտեղ մնում է մի լայն ու հարթ տարածություն, որ տանում է դեպի Միջնաբերդի ետևը, դեպի նրա հարավային ստորոտները: Քերդ շինողներն էլ ասում են այցելուին, որ առհասարակ Անին այս կողմից վտանգի է եղել ենթարկված: Ուստի Մաղկոցաձորի այս կողմով, սկսած այն տեղից, որով մենք ձորի միջից բարձրացել էինք քաղաք, նորից սկսվում է պարիսպների ընդհատված շարքը:

Մզկիթի շինությունից Միջնաբերդի այս կողմը դալու համար, մենք ստիպված էինք երկար պտույտ անել նրա հյուսիսային լանջերի տակով: Արևը շատ էր բարձրացել և Անիի մեջ սկսվել էր ամառնային միջօրեն: Շիրակի լեռնադաշտը առհասարակ զով ու կարճատև ամառ ունի: Բայց այդ ամառն էլ այրելի գիտե, մանավանդ Անիում: Կատարյալ անապատային մի արև, նա խաշում է քարակույտերը, նա շատ դուրեկան է այդ քարերի տակ թափվող կարիճներին, բայց մարզը շատ է նեղվում երկնքից թափվող կրակից: Այս անհուն քարակույտերի մեջ, ջրից, կանաչից ու ծառերից զուրկ այս մեռած անապատում ի՞նչ կարող է մեղմացնել միջօրեի կրակոտ սլաքների ազդեցությունը: Ոչինչ: Ոչ մի քան չկա: Լեզուդ չորանում է բերանումդ: Եվ միայն ավերակների անունը, միայն Միջնաբերդ ասած բանը կարող է այդ անհրապույր ժամին շրջեցնել քեզ այնքան երկար տառածության վրա...

Մաղկոցաձորի եզրով ձգված պարիսպը այլևս այն հետաքրքրությունն ու հիացմունքը չէ զարթեցնում այցելուի

մեջ, ինչպես Անիի հյուսիսային ամրությունները: Զորը արդեն պաշտպանության մեծ մասը իր վրա է եղել վերցրած, ուստի պարիսպը այնքան բարձր չէ, չունի մեծ աշտարակներ: Իսկույն երևում է, որ այս պաշտպանողական միջոցը այնքան էլ շատ կարևոր չէ եղել և նրա վրա ուշադրություն չեն դարձրել: Մի հասարակ, հաստ պատ է, որքան կարելի է նկատել այս ներսի կողմից: Այստեղ էլ չէ երևում այն ստուկալի ավերածքը, որ այնպես ջարդ ու փշուր է արել, ցանդել, ալլանդակել է դաշտային մասի ամրությունները: Հին, թողնված մի պարիսպ: Կարծում եք, թե նրա վրայից նոր են իջել պաշտպանողները: Պահպանների շրջագայելու տեղերը, ցած իջնելու և բարձրանալու սանդուղքները,— ամեն ինչ մնացել է, և լավ է մնացել:

Պարիսպը ոլորվում է այնպես, ինչպես Մաղկոցաձորի կողմն է ոլորվում: Ահա նա ցած է գնում, մենք էլ գնում ենք նրա հետ, մեր ձախ կողմում թողնելով Միջնաբերդի բլուրը: Որքան մենք ցածրանում ենք, այնքան Միջնաբերդը բարձրանում է, մինչև որ նրա գլուխը բոլորովին անտեսանելի է դառնում մեզ:

Մաղկոցաձորի այս պատի կողմից Միջնաբերդի ամբողջ ետևի, այսինքն հարավային մասն է երևում: Նա այս տեղից մի սապատող բարձրություն է, լայնարձակ, մեծ լանջերով: Բլուրի գլուխը այնքան փոքր է, որ թվում է թե այս լանջերի վրա պիտի փռված լինեին Միջնաբերդի տները: Զէ՛ որ Անիի հին շրջանում, մինչև հյուսիսային դաշտային մասը դուրս գալը, այս բլուրի վրա էր գտնվում ամբողջ քաղաքը: Նա շատ մեծ չպիտի լիներ, քանի որ Միջնաբերդը իր բոլոր լանջերով, իր բոլոր ստորոտներով վերցրած, այնուամենայնիվ, մի մեծ տարածություն չէ ներկայացնում և ավելի մի մեծ գյուղի է հարմարվում, քան մի քաղաքի: Ո՛ր էր կարող նա զետեղված լինել, եթե ոչ բլուրի հարավային դռովայր ու համեմատաբար լայնահաստ լանջերի վրա: Բնակությունները այստեղ պիտի հասնեին մինչև պարիսպները: Եվ, սակայն, այս ամբողջ տարածությունը այժմ մաքուր ու բաց է, կարծես սրբված: Ոչ տան հետքեր են երևում, ոչ ավերակներ կամ գո-

նե քարակույտեր: Մի՞թե ոչինչ չէ մնացել, կամ մի՞թե բոլոր մնացորդները հողի տակ են ծածկված...

Ահա պարիսպը ցած գնալով որքան կարող էր, սպառվեց մի փոքրիկ, ավերված եկեղեցու մոտ: Նա ապացույց է, որ Միջնաբերդի այս մեծ լանջերը բոլորովին ամայի ու անխնամ չէին, ինչպես ցույց է տալիս ներկա դրությունը:

Միջնաբերդի առանձնատան դիրքը, նրա պարզ ու հասարակ շրջապարիսպը, շինությունների բացակայությունը առաջին անգամ տրամադրում են այցելուին կարծելու, թե այստեղ մի բոլորովին այլ աշխարհ էր, թե Անին, իսկական գեղասեր, ճարտարարվեստ Անին բլուրի այն կողմին մնաց: Սակայն այս փոքրիկ եկեղեցին, որ, իբրև առաջին դիմավորող, մտցնում է ձեզ Միջնաբերդի աշխարհը, ցրում է այդ տպավորությունը: Իր փոքրիկ պատառոտուն մարմնով նա ասում է, որ այստեղ էլ միևնույն Անին է: Նույն խնամքը, նույն ճաշակը շինության վրա: Ոչինչ չկա, որ նրան դուրս վռնդե Անիի վարպետներին արժանավայել կերտվածների շարքից:

Իսկ նրա դի՞րքը:

Նրա արևմտյան պատի տակ մենք շվաք գտանք և նրստեցինք այդտեղ հանգստանալու: Փոքր-ինչ զուլություն այդ այրող արևի մեջ, փոքր-ինչ հանգիստ այնքան ման գալուց հետո, որքա՞ն ակործելի էր: Մանավանդ ի՞նչ սիրուն տեսարանով է վարձատրում մեզ փոքրիկ եկեղեցին: Դեպի արևմուտք, դեպի հարավ խորություններ, անդունդներ, և մենք տիրում ենք նրանց վրա: Նայելու շատ ու շատ բաներ կան:

Ծաղկոցաձորի շարունակությունն է այդ տեսարանների սիրտն ու հոգին. նա է այստեղ, Միջնաբերդի այս կողմում, ձորի ու ժայռոտ բարձրությունների մի ամբողջ քառս թափել: Մեր փոքրիկ եկեղեցուց, մեր ոտների տակից ուղղակի զառիվայր է ցած գնում: Գնում է նա երկար, մինչև հասնում է Ծաղկոցաձորի խորության, որի հատակը այստեղից չէ երևում: Խոր է ձորը, բայց ավելի խորանում է, երբ փոքր-ինչ թեքվում է դեպի արևելք և, դեմ առնելով միապաղաղ ժայռերի տարածության, դարձյալ ուղղվում է դեպի հարավ, սակայն աշխատելով մոտենալ արևելքին: Նրան պահող,

նրան սեղմող ժայռոտ տարածությունը մեր նստած տեղից շատ ցած է. նա կազմում է Միջնաբերդի շարունակությունը: Այստեղից Ծաղկոցաձորի հանդիպակաց բարձր ափն է երեվում. նրանից դենը Ալաջայի հարթ ստորոտների շարունակությունն է, և մի լայն հանապարհ գնում է այդտեղով դեպի հարավ, ձորի ուղղության հետ զուգընթաց:

Մեր եկեղեցու լանջը, ինչպես ասացի, շատ զառիվայր է: Այստեղից նայողին թվում է, թե ցած, դեպի Ծաղկոցաձորը գնացողը պիտի գլորվելով գնա և չպիտի կարողանա պահել իրան: Բայց տեսե՛ք, հենց այդ լանջիվայրը վտանգավոր են համարել Անիի տերերը: Պետք է եղել այդտեղ ավելի զարգացնել պաշտպանողական միջոցները, չբավականանալով Միջնաբերդի շրջապարիսպով: Եվ ահա այդ պարսպից մի ուրիշ պարիսպ բաժանվելով, գնում է դեպի ցած: Գնում է հանդուգն համարձակությամբ, արհամարհելով լանջի թեքությունը: Սկզբում նա կարճահասակ է, բայց որքան ցած է իջնում, այնքան ավելի բարձրահասակ է դառնում: Եվ, այդպիսով, կարողացել են այն հետևանքին հասնել, որ դեպի ձորը վաղող պարսպի գլուխը, այսինքն այն տեղը, որով պիտի շարժվեին պահապանները, համեմատաբար քիչ թեք ուղղություն ունի:

Այստեղ ինձ արդեն քանիներորդ անգամը պետք է կրկնել, որ Անին մեր նախնիքների ռազմագիտական տաղանդի մի աննման թանգարան է ներկայացնում: Ահա մի փաստ էլ, գուցե ամենահիշանալին բոլոր այստեղ հավաքված փաստերից: Ինչպե՞ս լավ են իմացել օգտվել բնության ահավոր խաղերից. ինչպե՞ս կարողանում էին նվաճել անմատչելի վայրենություններն անգամ, հպատակեցնելով նրանց իրանց բահերին, թիերին, բրիչներին: Պարիսպը իր վերևի մասերում է քիչ ավերված: Մնացած մասը կարմիր միապաղաղ մի զանգվածի է նմանում: Թվում է թե դա Միջնաբերդից դուրս պրծած մի ամեհի գաղան է, որ համարձակ ցած է վազել և հասնելով խորխորատին, կանգնել, ծառացել է նրա վրա:

Միայն ռազմական պետքերի կարող էր ծառայել այդ մեծ, ահարկու տպավորություն թողնող պարիսպը: Նա վերջանում է քառակուսի սպառվածքով, որ ցցված է ձորի ահա-

գին խորութեան վրա, և իր մի հատ մեծ պատուհանով խո-
ժոռ, սպառնական հայացք է բնեռել ոչ միայն ձորի, այլև
նրա ափով անցնող ճանապարհի վրա: Այստեղից չէ երևում
այդ աչքը, բայց այստեղից նայողն էլ զգում է, որ այնտեղ,
պատի բարձր, քառակուսի ծայրը պլշած նայում է, դարձյալ
սպառնալից, դարձյալ ահարկու, ինչպես իր կառուցման
առաջին օրից...

Փոքրիկ, անանուն եկեղեցուց մենք դանդաղ շրջագայում
ենք Միջնաբերդի հարավային ստորոտով, ուղղվելով դեպի
արևելք: Բայց աչքից չգցենք մեղանից ցած ընկած ժայռերի
տարածությունը: Մաղկոցաձորը, դնալով նրա արևմտյան
կողմով, նեղանում, կուչ է գալիս և այստեղից նա հազիվ
նկատվում է իրեն մի սև, անհատակ պատվածք: Միշտ այդ
նեղված ձորը ձգտում ունի դեպի արևելք գալու, ժայռերը
հաղթահարելու: Ինչո՞ւ, ի՞նչ կա արևելքի մեջ ձգողական:
Ախուրյանն է այդ կողմում, և Մաղկոցաձորի ջուրը շտապում
է մի ժամ առաջ միանալ նրա հետ: Սև ապառաժ բարձրու-
թյունն է ընկած նրա և Ախուրյանի մեջ. չէ թողնում միա-
նալ, բաժանում է, բայց ժայռն էլ վերջ ունի, ժայռն էլ
հոգնում է: Հրե՞ն, հեռու հարավում Ախուրյանի լայն
պատվածքը ժայռերի միջով շրջան տվեց, թեքվեց դեպի
արևմուտք: Իրան է սպասում Մաղկոցաձորի երկար ու նեղ
շարունակությունը և իսկույն ընկնում է Ախուրյանի գիրկը...

Եվ ստացվում է այսպիսի մի տեսարան: Միջնաբերդի
հարավային մասը, ցածրանալով, տեղի է տալիս այն բարձր
ժայռերին, որոնք անչառում են Ախուրյանը Մաղկոցաձորի
ջրից: Այսպիսով, Անիի թերակղզին ստանում է սեպի նման
վերջավորություն, որ իր սուր անկյունով խրվում է երեք
կողմից շրջապատող ձորերի մեջ: Սուր անկյուն կազմող
ժայռոտ բարձրությունը, երկու ջրերը իրարից անջատողը,
այժմ անվանվում է Գրգըլ-գալե կամ Գրգ-գալե: Մի բերդ,
ուրեմն: Եվ իրավ, բնության շինած մի անմատչելի ամրու-
թյուն է դա, ուր, ինչպես ցույց են տալիս այնտեղ երևացող
ավերակները, մարդիկ են ապրել, պաշտպանվել:

Շատ բերին է աջողվում գնալ, տեսնել Աղջկա բերդը:
Ճանապարհը սաստիկ վտանգավոր է. նա բերում է այդ

ժայռերի կուրծքը և անցնողը առանձին ճարպիկություն և
դյուրաթեթևություն պիտի ունենա խոր ձորի մեջ գլորվելու
անխուսափելի վտանգից ազատված լինելու համար: Այդ
հանգամանքը արգելք է դնում մեր առջև: Եվ ես կասեմ այս-
տեղ այն, ինչ տեսնողներն են ասում:

Ժայռոտ բարձրության գլուխը չափազանց փոքր ու ան-
ձուկ է, որպեսզի այնտեղ մի աչքի ընկնող բերդ տեղավոր-
վեր: Բայց ինքնապաշտպանության հոգսով պաշարված հին
մարդու համար անձկությունը այնքան նշանակություն չու-
նեք, որքան ամրությունը, ուստի նա փոքրիկ բերդերն էլ
չէր արհամարհում: Երեք կողմից ջրերով շրջապատված, իսկ
չորրորդ կողմից մի պարսպանման սպառվածքով անմատ-
չելի ժայռը դեռ հին ժամանակներում պաշտպանության մի
գեղեցիկ վայր է դառնում: Ենթադրում են, որ դա է եղել
հին Անի բերդը: Այդտեղ էր, ինչպես կարծում են, հայոց
ամենագլխավոր և ամենաժողովրդական աստվածուհու,
Անահիտի տաճարը: Երբ քրիստոնեությունը Հայաստանում
պաշտոնական կրոն դարձավ, Գրիգոր Լուսավորիչը, ինչպես
հայտնի է, սկսեց կործանել հեթանոսական մեհյանները և
նրանց տեղ եկեղեցիներ կառուցանել: Այստեղից մի ուրիշ
ենթադրություն էլ. — այս ժայռի վրա էլ, ուրեմն, Լուսավորիչը
կառուցած պիտի լինի եկեղեցին:

Այժմ էլ այնտեղ երևում է կարմիր քարերից շինված մի
գեղեցիկ եկեղեցի, շրջապատված փոքրիկ մատուռներով: Ավե-
րանքը այդ անմատչելի տեղն էլ է հասել, նրա համար ար-
գելք չէ եղել վտանգավոր նեղ ճանապարհը, որ քարերի մեջ
փորած աստիճաններով է դեպի վեր գնում. և նրա քայքայող
շունչից այդ եկեղեցուց էլ մի քանի պատեր ու բեկորներ են
միայն մնացել: Ե՛րբ է շինվել նա: Մի արձանագրության
կտոր ասում է, որ եկեղեցում պատարագ է մատուցվում Զա-
քարե Սպասալարի մայր Սահակդուխտի համար: Հավանա-
կան է, ուրեմն, որ եկեղեցին եթե ոչ շինված, գոնե վերանո-
րոգված է այդ հուշակավոր իշխանի ձեռքով: Բացի այս
եկեղեցուց նկատվում են ժայռի գլխին և մի քանի ուրիշ

1 Եկեղեցու մի պատի վրա, խորհրդավոր տառանշաններով ծածկ-
ված մի քար կա:

ավերակներ, որոնք աշտարակների ձև են ցույց տալիս: Դրանք էլ մի կողմից են ուժ տալիս այն կարծիքին, թե Գրգ-գալեն է եղել նախնական Անին, որ դեռ Հինգերորդ դարից հայտնի էր «ամուր» տիտղոսով: Այդտեղ է ծնվել բերդը, այդտեղ է մկրտվել, իր գեղեցիկ անունը ստացել: Եվ ապա տարածվել է դեպի հյուսիս, անցել է ձորը, բարձրացել մեր այս Միջնաբերդի լանջերով ու առաջ փնացել ոչ միայն աշխարհագրական սահմանների, այլև անմահ փառքի ու հրուշակի մեջ...

Ահա վերջանում է Միջնաբերդի հարավային լանջը, և մենք հասել ենք այն տեղին, ուր արդեն դեպի Ախուրյանի ձորն է նայում բլուրը և ուր, ինչպես վերևում ասացի, լանջը ավելի զժվարամատչելի է դառնում: Այստեղ, այս դեպի ցած, դեպի Ախուրյանի գոգը գահավիժող լանջերի հարավ-արևելյան անկյունում, որտեղից բացվում է մի նոր, վեհ ձորային տեսարան դեպի Գրգ-գալեի ժայռերը, միայնակ կանգնած է մի այլ, փոքրիկ, բայց նախընթացից ավելի գեղեցիկ եկեղեցի:

Բայց մի՞թե եկեղեցի է դա: Եթե չլինեք կոլոր անզարդ գմբեթը, կարելի պիտի լինեք նրան անվանել որևէ մուտքի, դռան նմանություն ունեցող մի բան: Փոքրիկ մի կամարակապ, որ երեսը դարձրած է դեպի արևելք, և ինչ-որ հրաշքով համարյա ամբողջ մնացած մի գմբեթ նրա վրա, — ահա այդ եկեղեցին: Երևի դա եկեղեցու մի մասն է միայն, որ ազատվել է կործանումից: Իսկ կործանումը այնքան հալուժալ է արել և անում է այդ խեղճ պատանիկը, որ հազիվ ես հաշտվում այն մտքի՝ հետ, թե եկեղեցի ես տեսնում:

Նրա հարավային փոքրիկ, կիսով չափ քարակույտների մեջ կորած դուռը զարդարված է ճոխ օրնամենտներով. երկու կողքին, պատի վրա, գեղեցիկ եռանկյունի խորշեր են երևում: Մուտքի մոտ և շուրջը թափված քարակույտները դրսևավորապես գեղեցիկ քանդակազարդ բեկորներ և կարնիզների կտորներ են. նրանք ցույց են տալիս, թե որքան զարդարուն է եղել այս խեղճ ու քարուքանդ եկեղեցին: Այդ զարդերը, ավերակի տարօրինակ, եկեղեցու նմանություն չտվող ձևը առիթ է եղել, որ կարծիք կազմվի, թե դա թագավորական

տան երեխաների գերեզմանոց է եղել: Գոնե այս անունով է Քյուրթչյանը ներկայացնում մեզ այդ սիրուն մուտքի լուսանկարը:

Որ թագավորական տունը սեփական գերեզմանոց է ունեցել և Անիում, այդ վկայում է և մեր պատմագիրներից մեկը: Ամբողջ հարցն այն է, թե ո՞ւր գտնել նրան և ինչպես: Ահա մենք բարձրանում ենք Միջնաբերդի գլուխը: Ի՞նչ է մնացել այստեղ:

Բարձրանում ենք արևելյան լանջով: Այդտեղից շատ մոտիկ են երևում այն շինությունները, որոնց ավերակները աչքի են ընկնում քաղաքի ամեն մի կողմից: Բայց այդ կարճ տարածությունը մենք մեծ ջանքերով ենք կարողանում նվաճել: Լանջը մի լայն գոգավորություն ունի, որ վերևից մինչև ցած, շինությունների մոտից մինչև Ախուրյանի ձորի պոռն-գը լցված է քարերով: Սարսափելի՛ կույտեր: Թեև մենք վաղ առավոտվանից արդեն շատ ենք սովորել նրանց, շատերի վրայով ենք անցել, բայց այս լանջը բոլորովին ուրիշ բան է: Քայլում ես դեպի բարձր, քայլում ես քրտինք թափելով, հող շատ քիչ ես տեսնում ոտներիդ տակ: Ամեն տեղ քարերի մեծ ու փոքր կտորներ, որոնք զժվարացնում են քայլդ կամ շարժվում են ոտներիդ տակ, հարկադրելով ջանքեր անել, որ ետ ու ետ չգնաս: Իսկ վերևից Անիի արեգակը այրող սլաքների տարափ է թափում...

Արդեն քարակաշկառների այս միապաղաղ տարածությունը մի հասկացողություն է տալիս, թե ո՞ր աստիճան ահավոր է եղել Միջնաբերդի կործանումը: Անհեթեթ քարակույտները աննպատակ վայրերի, բնական բեկորներ չեն, խլոված ժայռերից դարերի ընթացքում: Ո՛ւր: Յուրաքանչյուր կրտորը ունեցել է իր հայտնի պաշտոնը, կատարել է իր հայտնի դերը Միջնաբերդը կազմող շինությունների մեջ: Այն բոլորը, ինչ թափված, այլանդակ կերպով կույտ-կույտ է արված այստեղ, մի ժամանակ եղել է համաշափ շարված, միտք ու նշանակություն ունեցող վայելչություն, ճաշակ: Բարձրացել է, — ո՞վ գիտե երբ, — փոթորիկ, գուցե փոթորիկների մի ամբողջ շարք, որ տրորել, մանրել է անթիվ պատերը և լցրել է լանջի այդ գոգի մեջ իբրև անպետք մի շեղակույտ, որ այսօր

միայն տանջում է ուղևորին, դժվարացնելով նրա ամեն մի քայլը, որ տանում է դեպի Անիի այդ թագն ու պսակը:

Մի կերպ հասնելով գագաթին, մենք ապշած կանգ առանք: Այսքան էլ ավերա՞նք: Եվ այս բացականչությունը ակամա դուրս է թռչում գիտե՞ք ուր.— նույնիսկ Անիի մեջ, նույնիսկ նրա բոլոր ավերակները տեսնելուց, կարծանման ամենամեծ թե սարսափներին սովորելուց հետո: Ո՛չ, այնտեղ, ներքևում, դեռ լավ էր: Տափարակային Անիում դեռ կարելի է մի բան հասկանալ, կարելի է մի միտք կազմել, մի պատկեր ամբողջացնել: Այստե՛ղ ոչ մի հնարավորություն: Թեև այստեղ ամեն ինչ գետնատարած, մինչև հիմքերը խորտակված չէ: Քարակույտերի մեջ բարձրանում են պատերի բեկորներ, կամարների կտորներ: Բայց ի՞նչ են դրանք:

Ահա մի կամ երկու փոքրիկ եկեղեցիներ. մեկը նույնիսկ իր կտուրն էլ է պահպանել, և դա Անիի հնագույն եկեղեցիներից է, պարզ ու վայելուչ ոճով, նույնիսկ արձանագրություն էլ ունի, որ գտել ու կարդացել է Բասմաջյանը:

Սակայն ձեր որոնածը եկեղեցիներ չեն այստեղ: Միջնաբերդ է, անկասկած այստեղ են եղել թագավորների արքունիքը, բարձր պաշտոնական հիմնարկությունները: Այստեղ ապրել են նշանավոր իշխանները, այստեղ են եղել և իշխողները: Մի հին ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ գրասեր, բարեպաշտ, բայց չափազանց թույլ ու սահմանափակ Հովհաննես-Սմբատ թագավորը ունեցել է գրադարան: Բագրատունի թագավորները, ինչպես և ժամանակի հայ ազնվականությունը երկու մեծ ու փառավոր մայրաքաղաքների ազդեցության էին ենթարկված՝ Բաղդադ և Բյուզանդիա: Ավելի մեծ էր բյուզանդական ազդեցությունը. հունական լուսավորությունը ընկճել էր հայ միտքն ու սիրտը: Այս բոլորի հետքերն ու հիշատակներն եք որոնում գեղեցիկ քաղաքի այս կարևորագույն մասում:

Բայց ոչինչ չեք գտնում: Լուռ, անհեթեթ քարակույտեր էին ինձ նայում ամեն կողմից և իրանց անտարբեր տեսքով միայն ծաղրում էին իմ բոլոր մտքերը, իմ երևակայության թռիչքները: Ավելի լավ է ոչինչ չիմանալ Բագրատունյաց կյանքի մասին, ավելի լավ է միանգամայն անտեղյակ լի-

նել այս տեղի ամբողջ անցյալին: Գոնե այդ դեպքում ավերանքը այնքան չէր տանջի, չէր զայրացնի իր թանձր, անթափանցելի մթնոթյամբ, անհասկալի մթնոթյամբ...

Դարձյալ հո՛ւյս դնել ապագայի վրա, դարձյալ պեղումներ չնսպասել: Բայց մտածում ես, այն ի՞նչ հսկայական ուժ պիտի լինի, որ կարողանա մաքրել այս ահռելի քարակույտերը, ջոկել պիտանին անպիտանից և վերականգնել Միջնաբերդի պատկերը գեթ հողի երեսին, առանց պատերի, այսինքն պարզել գեթ նրա հատակագիծը: Հուսահատական հարց: Տարիների, տասնյակ տարիների տոկուն աշխատանք է հարկավոր: Բայց կարելի՞ է սպասել նրան, երբ դեռ դիտավորություն անգամ չէ ծագել:

Ժիշտ է նկատել Մուրավյովը, թե այստեղից է սկսվել զարհուրելի ավերանքը, այստեղից է ցած իջել, տարածվել քաղաքի մեջ: Թվում է թե հրեշավոր կործանիչ ուժերը նախ և առաջ այստեղ են գումարվել, ծովացել, այստեղ են ժայթքել կործանում և մահ և ապա ցած են գլորվել, տարածվել են լավայի պես Շիրակի դաշտերում...

Հիշատակարանները չկան, կորած են, բայց բնությունը իր սեփականությունը պահել է անփոփոխ, և այցելուի համար այն մխիթարությունը կա, որ այդ բարձր դիրքից կարող է ուզածին չափ զմայլվել այն մեծ, ընդարձակ տեսարանով, որ փռված է շրոս կողմում:

Փոքր ու անձուկ մի տարածություն է Միջնաբերդի գլուխը: Նրա երկարությունը, արևելքից արևմուտք, քայլերով կարելի է չափել: Մի րոպեի մեջ Ախուրյանի ձորի տեսարաններից դուր անցնում եք Մաղկոցածորի տեսարաններին: Իսկ լայնությունը ավելի նեղ է, և հարավի ու հյուսիսի տեսարանները մի երկու քայլով են իրարից հեռու: Հարավում Գրգավեի ձորերը, հյուսիսում՝ դաշտերը մինչև Ուշ-թափան:

Մաղկոցածորին նայող ծայրի կամարազարդ ավերակների մոտից մենք նայում ենք դեպի հեռուն: Ուղիղ գծով մեր գիմաց Ալաջայի փեշերն են, իսկ նրանց տակ, ստորոտում, մի տեղ կա, որ Անիի հետ կապված է բազմաթիվ հիշատակներով: Այժմ այդ տեղը կոչվում է Ղոզլիջա, — մի թուրքական փոքրիկ գյուղ, որի մոտ, սակայն, մի փառավոր եկեղեցի է

մնացել: Թուրքերը անասունների գոմ են շինել եկեղեցին, բայց նրա պատերի բազմաթիվ արձանագրությունները մի ամբողջ պատմություն են պարունակում իրանց մեջ:

Նրանք ասում են, որ դա Բգներ կամ Բագնայր ավանն է: Իր անունով այդ ավանը հիշեցնում է մի հին, հեթանոսական հիմնարկություն լինելը: Եվ, երևի, քրիստոնեության մուտքը բոլորովին չէ ոչնչացրել տեղի կրոնական նշանակությունը, այլ, ինչպես և ուրիշ տեղերում, ծառայեցրել է նրան իր նպատակներին: Գոնե X դարից, երբ այդ եկեղեցին շինվել է, ինչպես կարծում են, Պահլավունի իշխանների ձեռքով, Բագնայրը նշանավոր ուխտատեղի է եղել և Անիի արևմտյան կողմում համարյա նույն պաշտոնն է կատարել, ինչ Հոռոմոսը արևելյան կողմում:

Անին հավասար ջերմեռանդությամբ ձգվում էր և դեպի այս արևմտյան Հոռոմոսը: Ապացույց՝ այն անշարժ կալվածները, որոնք Անիի զանազան կողմերում էին գտնվում և նվիրված էին Բագնայրի ս. Աստվածածին եկեղեցուն: Առավել նշանավոր է այն իրողությունը, որ այդտեղ էլ, ինչպես և Հոռոմոսի վանքում, եղել են տոհմային գերեզմանոցներ, որոնք ունեցել են փոքրիկ մատուռներ:

Բագնայրը ավելի մոտիկ է Անիին, քան Հոռոմոսը: Եվ եթե այսօր շատ ու շատ հանգամանքներ համոզում են մեզ, որ Հոռոմոսը համարյա արվարձան էր Անիի համար, նույն հավանականությունները նույնպիսի ուժով էլ պիտի ընդունել տան, որ Բագնայրն էլ մայրաքաղաքի արևմտյան արվարձանն է եղել: Ընդունելով այս միտքը, որի դեմ առարկություններ հազիվ թե լինեն, մենք ստանում ենք Անիի մեծ տարածությունը, որ, սկսվելով Հոռոմոսի վանքի մոտ, գալիս անցնում է դեպի արևմուտք և դեմ առնում Ալաջայի լանջերին:

Եվ անպատճառ հարկավոր չէր, որ այդ ամբողջ տարածությունը ծածկված լիներ անեցիների տներով: Մի քաղաքի սահմանները նրա տները չեն որոշում, մանավանդ մի այնպիսի քաղաքի, որի բնակիչների մի մասը հողագործությամբ և անասնապահությամբ էր պարապում: Իսկ թե Անին այդպիսի բնակչություն էլ է ունեցել, այդ ցույց են տալիս եկե-

ղեցիներին նվիրված արտերը, ինչպես նաև այն տեսակ-տեսակ հարկերը, որոնք դրված էին անասունների վրա: Անասնապահությունը պահանջում է արոտատեղեր, խոտհարքեր, մարգեր: Եվ այդ բաներն էլ հիշատակված են արձանագրությունների մեջ:

Հին, մեծ քաղաքը մենք ներկա ժամանակների չափով ու կարգերով չպիտի երևակայենք: Հին քաղաքների համար հողը տնտեսական մեծ գործոններից մեկն էր: Հիշենք այստեղ այն ավանդությունը, որ կապված է Անիի հյուսիսային պարիսպներից դուրս գտնվող Հովվի եկեղեցու հետ: Իբր թե մի հովիվ, տեղ չգտնելով Անիի եկեղեցիներում, իր համար կառուցել է առանձին եկեղեցի: Այս ավանդությունը եթե անեցու ջերմեռանդ կրոնասիրության աստիճանը ցույց տալու համար է ստեղծվել, պակաս պերճախոս չէ և իբրև մի ապացույց, թե անասնապահությունը այստեղ ինչ հարստության աղբյուր էր:

Մենք ունենք և պատմության ավանդած իրողություն: Ահա Սմբատ Տիեզերակալը, Մայր եկեղեցու հիմնադիրը, Անին այնպիսի զարմանալի պարիսպներով շրջապատողը, նա, որ ահագին գումար ծախսելով՝ Հնդկաստանից բյուրեղյա ջահ բերել տվեց: Ասողիկը, պատմելով այդ թագավորի փարթամությունը, ասում է, որ նա հացի և զինու շատ պաշարներ ուներ: Նույն Ասողիկը հաղորդում է և այն, որ մեծագործ, գոռոզ թագավորը Անիում խոտի մեծ ամբարանոց ուներ, որ հավաքված էր տարիներով: Հողի մարդ էին ամենաքեր: Եվ թագավորը այնքան մեծ բան էր համարում իր խոտի դեղերը, որ երբ նրանք անհայտ պատճառից այրվեցին, նա բարբարոսական անարդարությամբ հրամայեց ողջ-ողջ այրել մի խեղճ խելագարի, որ ասել էր, թե ինքն է կրակել թագավորի խոտը:

Այսպես, ուրեմն, Անին իր շրջականներում ընդարձակ տեղեր պիտի ունենար իր տնտեսական պետքերի համար: Եթե ընդունում ենք, որ անթիվ քարայրերի մեջ մարդիկ էին ապրում, պիտի ընդունենք և այն, որ այդ մարդիկ մեծ մասամբ գյուղական գործերով էին ապրում, և նրանց ապրուստի համար հարկավոր էր հող: Անին իր պարիսպների մեջ չէր

պարփակված: Բացի քարայրերից, ուշադրություն դարձրեք
այն ընդարձակ դաշտավայրերի վրա, որ սկսվում է հյուսի-
սային պատերից: Այդ տարածության վրա անթիվ ու անհա-
մար քարեր են թափված, որոնք ասում են, թե այդտեղ էլ
քնակություն է եղել: Իսկ մինչև Բագնայր և Հոռոմոս, ան-
շուշտ, ձգված էին անեցիկների ոչ միայն հողերը, այլև գուցե
շատ տները:

Եվ ուրիշ կերպ անկարելի կլինի հասկանալ, թե ինչպես
էր որ Անին ահագին բազմամարդ մայրաքաղաքի հոշակ
ունեի, այնքան ահագին, որ նրա անսովոր շափերը ցույց
տալու համար կազմվել էր հազար ու մի եկեղեցիների առաս-
պելը:

Անին այն հորիզոնի մեջ, որ երևում է Միջնաբերդից—սա
և՛ հասկանալի է, և՛ բնական:

ԺԴ

Այդ հորիզոնը ամփոփում է իր մեջ ավերակների մի
հսկայական տեսարան: Այլևս առանձին-առանձին կտորներ
չեն առջևդ. մանրամասնությունները, առանձին գծերը ան-
հայտացել են, ամեն մի մեծ թե փոքր ավերակ, լինի դա
Մայր եկեղեցի, թե Սմբատյան պարիսպներ, Ապուղամբենց
ս. Գրիգոր, թե Բեխենց վանք, ապարանք Մաղկոցաձորի վրա,
թե Հովվի եկեղեցին, գալիս միանում է ընդհանուր տեսարանի
մեջ, ներկայացնում է մի տխուր ու թշվառ ամբողջություն:

Բնությունը կարծես դիտմամբ բարձրացրել է Միջնաբերդի
ժայռերը, որպեսզի նրանք պատվանդան դառնան տիրող
մարդու համար: Մեր այդ պատվանդանի վրա էլ միևնույն էր
միջօրեի արևը՝ անողոք, խաշող, ճիշտ ավերակային: Շուրջս
միայն այրված հող, տաքացած քարեր. ծարավը ավելի սաս-
տիկ է տանջում, քրտինքը ծլում է ճակատից: Բայց ես նըս-
տում եմ ժայռոտ բարձրության ծայրին, որովհետև այդ րո-
պեին ավելի ուժեղ, ավելի տիրապետող է նայելու ցանկոթ-
ությունը:

Եվ ես նայում էի, երկար նայում: Ի՞նչ տեսարան: Նրա
հսկայական կրժքի յուրաքանչյուր անկյունից, յուրաքանչյուր
խորշից դեպի այս ժայռոտ բարձր պատվանդանն էր բարձ-
րանում այն, ինչ դժբախտն է, ավերվածը, ապականվածը: Նա
ինձ ասում էր. «Ես պարզապես մարդկային մի գործ եմ»:
Հավիտենական չէ մարդը, նրա գործն էլ այդպես է. մորթվում,
հոշոտվում, ծվեն-ծվեն է դառնում մարդը.— այդպես և նրա
գործը: Ու ես հիշեցի Չայլդ-Հարոլդը Հոռոմի ավերակների
մեջ, մտաբերեցի Բայրոնի թախծալից հանճարով դրոշմված
տողերը.

Նայեցե՛ք, այստեղ, ձեր ոտների տակ,
Մեծ Հոռոմը նույնպիսի փոշի է դարձել,
Որպիսին մենք էլ կդառնանք,
Երբ կճաշակենք գերեզմանի մոթ հանդիսոր...

Մեր այս Միջնաբերդը, իհարկե, ո՛չ Հոռոմի Կապիտո-
լիումն է, ո՛չ Աթենքի Ակրոպոլիսը, աշխարհահռչակ ավե-
րակներ, որոնց միջից տիեզերական իրողություններ, հան-
րամարդկային նվիրական հիշատակներ են խոսում,— մինչ-
դեռ մեր Անին մի մասնավոր երևույթ է մարդկության կյան-
քում, մի փոքրիկ կաթիլ պատմության օվկիանոսի մեջ:

Բայց այդ միևնույն է: Միևնույն՝ նրանով, որ Ակրոպո-
լիսն էլ, Անին էլ գերեզմաններ են: Մահը աշխարհիս վրա
ծայրագույն հավասարությունն է: Նա փռում է գերեզմաններ,
մեծ ու փոքր գերեզմաններ, բայց մեծն էլ, փոքրն էլ խոսում
են անկախ այն հանգամանքից, թե մեծ են կամ փոքր: Մեծ
գերեզմանները աշխարհի մեծարանքն են, աշխարհի սուրբ
խոսքն են: Բայց սա չէ նշանակում, թե փոքր գերեզմանները
պիտի լռեն իրանց հարազատ երկրում, իրանց մերձավոր
շրջաններում:

Թող ինչ ասում են ասեն, Ակրոպոլիսը և Կապիտոլիումը՝
ամբողջ մարդկության, քաղաքակիրթ աշխարհի բոլոր ան-
կյուններին,— մեր Անին էլ Ախուրյանի ափում բարձր ձայնով
ու բաց ճակատով ասում է, թե ինքն էլ նույնպես մարդկային
մի մեծագործություն է, թե առանց բարձր ընդունակոթ-
ությունների, առանց խոշոր տաղանդի գործադրության չէ նա
Ալաջայի ստորոտներում երևան եկել իբրև սիրոն ու շքեղ

մայրաքաղաք: Հրաշքի պես մի բան է նա երևում ասիական աշխարհի այս դժբախտ անկյունում: Բայց այդ հրաշքը երկընթից չէ ընկել: Մայրաքաղաքը իր թագավորության արդյունքն է. իսկ թագավորությունն էլ հրաշքի պես ծնվեց, հրաշքի պես փայլեց և, իբրև հրաշք, կարճ ապրեց, վաղանցուկ եղավ:

Իմ աչքի առջև մարմնացած էր այն ժամաշուկը, երբ այստեղ կյանք առավ մեր պատմության ամենազարմանալի երեվոյթներից մեկը, երբ տխուր ճակատագրին հավատարիմ իրականությունը մի կողմից քաջություն, տաղանդ, մտավոր ու կուլտուրական ընդունակություններ էր հանում երկրի երջանկության համար, մյուս կողմից ներքին քայքայում, ապականություն էր դուրս բերում այդ լուսավոր երևույթի դեմ: Եվ Անին մի թե կենդանի հուշարձան չէ, փայլուն, լուսատու վերածնության և խավար անկման ու անհամաձայնություն:

Ինչ որ ներշնչում է Անին իր յուրաքանչյուր քարով, իր ամեն մի ջարդված զարդարանքով, իրան չէ պատկանում, այլ այն տոհմին, որ ստեղծագործեց նրան և այն ժամանակներին, երբ նա ապրեց իբրև առաջինը հայոց քաղաքների մեջ: Ձեռակերտը իրան կերտողների մասին է խոսում: Մայր եկեղեցու հիանալի կամարների տակ ինձ Տրդատ ճարտարապետն էր երևում: Իսկ այստեղ, Միջնաբերդում, ուր թագավորական անհայտացած պալատներ են թափված, այս ընդհանուր տեսարանի, այս ամբողջության վրա իմ աչքի առջև սավառնում էին խրոխտ, մեծագործ, բայց և դժբախտ Բագրատունիները:

Այս փառավոր հիշատակարանները նրանց հանճարը, նրանց հսկայական ջանքերն են մարմնացնում միջօրեի պարզ, ջերմ լույսերով ողողված մթնոլորտի մեջ: Եվ ահա ես էլ նրանց հետ եմ:

Իններորդ դարի երկրորդ կեսի սկզբում Հայաստանը ապստամբված և նորից նվաճվող երկրի դրությունն էր ներկայացնում:

Այդ ժամանակից երկու հարյուր տարի առաջ էր, երբ հայերը իրանց երկրում առաջին անգամ տեսան այն նվա-

ճողներին, որոնք մի թարմ ազգի ամբողջ թափով նոր էին դուրս եկել պատմության ասպարեզը: Դրանք արաբացիներն էին, որոնց առաջնորդում էր երկրի վրա նոր հաստատված կրոնը՝ իսլամը: Իսլամի հիմնադիր Մուհամմետը վախճանվել էր 632-ին, իսկ 8 տարուց հետո, նրա հաջորդները, կատարելով նրա պատվերները, իրանց արշավանքների մի ճյուղավորությունը արդեն մտցրել էին Հայաստան:

Բայց Հայաստանը մի անկախ ու առանձնակի նպատակ չէր արաբական աշխարհակալ սրի համար: Կռիվ էր մղվում ահագին Պարսկաստանին տիրելու համար: Եվ Հայաստանի մեջ առաջին անգամ մտած արաբական բանակը ավելի նպատակ ուներ սպառնական գիրք գրվել Պարսկաստանի հյուսիսում ու այդպիսով հեշտացնել բուն Պարսկաստանում գործող բանակի հաջողությունները: Ընկավ հին, մազդեզական Պարսկաստանը, Սասանյանների գործը ջարդվեց, և ամբողջ ահագին պետությունը արաբական կալված դարձավ: Դարերի ընթացքում Հայաստանը կռվածադիկ էր Պարսկաստանի և հռոմայեցիների, ապա և՛ բյուզանդացիների մեջ: Արաբական տիրապետությունը, ժառանգելով Պարսկաստանը, շարունակեց նրա պայքարը Հայաստանի տիրապետության վերաբերմամբ: 650 թվականներից հետո արաբները սկսեցին մի կողմից նվաճել Հայաստանը սարսափելի կոտորածներով և ավարառություններով, մյուս կողմից կռիվներ մղել Բյուզանդիայի դեմ՝ Հայաստանի համար:

Իսկ ի՞նչպես էր վերաբերվում երկիրը այդ նոր տերերին:

Հինգերորդ դարի առաջին կեսում վերջացել էր Արշակունյաց թագավորությունը: Այնուհետև Հայաստանը շուներ նույնիսկ անվանական ազգային կենտրոնական իշխանություն, ինպիսին էր Արշակունյաց հարստությունը իր գոյության վերջին տարում: Երկիրը պահպանեց իր ներքին կազմակերպությունը, ենթարկված մնալով Պարսկաստանին ու Բյուզանդիային: Ներքին կազմակերպությունը, ինչպես հայտնի է, ֆեոդալական սիստեմն էր, կալվածատեր իշխանների այն մեծ ցանցը, որ, լինելով տեղային անկախ ինքնավարությունների սկզբունք, չափազանց թույլ փոխադարձ կա-

պերով էր միացած երկրի ընդհանուր պաշտպանության համար:

Արաբները իրանց նվաճող սրերի բերանով Հայաստան մտցրին նախ և առաջ նոր կրոնի հարցը: Բնական էր, որ քրիստոնյա Հայաստանը նոր ահեղ թշնամու դիմաց մի քնազդային մղում զգար ղեպի իր կրոնակից Բյուզանդիան: Կար և մի նոր հանգամանք նոր լուծի մեջ: Արաբները ծանր հարկեր էին դնում իրանց ոչ մահմեդական հպատակների վրա և զինվորական ուժի ճնշման տակ էին ապահովում այդ ծանր հարկերի վճարումը: Սա էլ մի ուժեղ հանգամանք էր, որ իսլամական լուծի դեմ ասելություն էր հաստատում:

Իսլամը հաղթանակում էր ապշեցուցիչ հաջողությամբ և արագությամբ: Եվ այդ հաղթանակի համար լայն ասպարեզ բաց էր անում ամենից առաջ այն, որ նվաճվող երկիրները շատ թույլ էին իրանց ներքին անկերպարան դրությունը: Պարսկաստանում ներքին անհամաձայնություններ, հեղափոխություններ կային, քրիստոնյա Սիրիան, Եգիպտոսը արդեն զզվել էին բյուզանդական կրոնամոլ-բյուրոկրատական կառավարությունից, ուստի մատը մատին չխփեցին արաբներին դիմադրելու համար:

Ներքին անբարեկարգության դժբախտ տեսարան էր ներկայացնում և Հայաստանը: Այդ դժբախտությունը հին էր, պատմական—հայ ֆեոդալ-նախարարների անմիաբանությունը: Նրանից օգտվեց արաբական տիրապետությունը, ինչպես ժամանակին օգտվել էին պարսկական, հռոմեական, բյուզանդական տիրապետությունները: Բայց և այդպես, նախարարների գոնե մի մասը կարողանում էր հայտնի դեպքերում միանալ մի զաղափարի համար և գործել համերաշխությամբ: Արաբական լուծի ծանրության դեմ դիմադրություն կազմվեց երկրի մեջ և դրա առաջին նշանավոր հերոսն էր Թեոդորոս Ռշտունին:

Այս նշանավոր հայ իշխանը պատմության մեջ գուցե առաջին քրիստոնյա գործիչն էր, որ փորձեց մահմեդականության միաբան արշավանքի դեմ կանգնեցնել տարբեր դավանությունների պատկանող քրիստոնյաներին: Եթե հայոց և հունաց եկեղեցիների մեջ վիճ էին բացել աստվածաբանա-

կան վիճաբանություններն ու անհամաձայնությունները, այդ էլ նշանակում, թե չկան ընդհանուր քրիստոնեական շատ կարևոր շահերը, որոնք պիտի միացնեն երկու ազգերը այնպիսի հարցերում, ուր արդեն մասնավոր անհամաձայնությունները չէին խոսում, այլ քրիստոնեության լինել-չլինելը:

Եվ Ռշտունին պատերազմ սկսեց արաբների դեմ, աշխատելով միացնել հայոց և հունաց ուժերը: Նա հաղթություն էլ տարավ, բայց շուտով նկատեց, որ քրիստոնեական համերաշխության գործը սաստիկ խախտու է, որ բյուզանդական բյուրոկրատիան և նեղ կրոնամոլությունը չպիտի թույլ տան որևէ համաձայնություն, որևէ միություն ընդհանուր թշնամու դեմ: Մի այնպիսի ահավոր ճգնաժամում, երբ իսլամը իր արշուճոտ թուրն էր բարձրացրել քրիստոնյա աշխարհի վրա, բյուզանդական կայսրների համար կարևորը այդ վտանգի դեմ ուժեր զինելը չէր, այլ այն կրոնական վեճերը, որոնք Քաղկեդոնի ժողովի պատճառով մղվում էին հայոց և հունաց եկեղեցիների մեջ: Թեոդորոս Ռշտունին ականատես եղավ, թե ինչպես Բյուզանդիայի կայսրը, անձամբ Հայաստան գալով, բռնությամբ հարկադրում էր, որ հայերը դավանափոխ դառնան:

Նա ատեց այդ բռնությունը, նա շատ լավ հասկացավ, որ խղճի, համոզմունքի ազատությունը ավելի իսլամի ներկայացուցիչների մոտ կարելի է գտնել, քան բյուզանդական քրիստոնեության լուծի տակ: Նա հասավ նույն եզրակացության, որին վաղուց հասել էին Սիրիայի և Աֆրիկայի քրիստոնյաները, այն է՝ որ բյուզանդական օրթոդոքսության հակառակ քրիստոնյայի համար ավելի ձեռնտու է իսլամի հետ հաշտվելը: Այս սարսափելի դառն ու տխուր իրողությունը Ռշտունուց հետո էլ հարյուրավոր անգամ հաստատություն գտավ թե մեր և թե ուրիշ ազգերի պատմության մեջ:

Շատ թեթև ու մեղմ պայմաններով Ռշտունին հպատակության համաձայնություն կայացրեց արաբական արքունիքի հետ: Դա արաբացիների մշտական տիրապետության առաջին հիմքն էր, բայց ոչ վերջնականը: Ռշտունու մահից հետո Հայաստանը երկար չվայելեց այդ զաշնադրության բերած հանգստությունը: Ամեն ժամանակ, բոլոր հանգամանք-

ների մեջ նա իր թշվառ ճակատագրի զոհն էր, ճակատագրի, որ աշխարհագրական ու պատմական պայմաններն էին ստեղծել վաղուց ի վեր: Նա ուներ իր ներքին ուժերը, նա հարուստ էր մարտնչող տարրերով, բայց դժբախտությունն այն էր, որ այդ ուժերը հավաքողներ, ղեկավարողներ շատ քիչ կային: Համարյա երբեք կարելի չեղավ մի ներքին, միահամուռ համաձայնություն կայացնել, կենտրոնացնել երկրի ամբողջ ռազմական կարողությունը հայրենիքի պաշտպանության գաղափարի շուրջը: Ծիշտ է, հայ առաջնակարգ նախարարներին շատ և շատ անգամ է հաջողվել ազդեցիկ դիրք գրավել իրանց դասակիցների մեջ, միություններ կազմել, բայց դրանք երբեք ընդհանրական, համազգային չեն եղել և միշտ էլ հայրենիքի շահերին չեն ծառայել: Միշտ կովածաղիկ դարձած հզոր հարեանների մեջ, երկիրը տարուբերվել է օտար, իրար հակառակ ազդեցությունների տակ: Մերթ մի ազդեցությունն է գերակշիռ հանդիսացել, մերթ մյուսը, նայած թե նախարարական դասի ազդեցիկ և ընդունակ ներկայացուցիչները դեպի ո՞ր կողմն են հակված: Շատ չեն այն դեպքերը, երբ հայրենիքի իսկական շահերը այդ հակումների իսկական պատճառներ դառած լինեն: Փառասիրությունը, շահամոլությունը, հաճախ և տգետ ինքնահավանությունը զլխավոր, նույնիսկ և միակ գերակատարներն են եղել: Եվ անձնական հաշիվները, սեփական տան շահերը ամեն անգամ մեկի արածի դեմ կանգնեցրել են մյուսին: Այս պատճառով էլ համարյա միշտ արտաքին սարսափելի վտանգների առաջ ներկայացել է ներքին անհամաձայնություններից ծվատվող մի թույլ երկիր:

Այս ողբալի դրությունն էր տիրում Հայաստանի մեջ և այն ժամանակ, երբ նա կովածաղիկ էր Արաբիայի և Բյուզանդիայի մեջ: Նախարարական համակրանքները կամ Բյուզանդիայի կողմն էին թեքվում, կամ իսլամի կողմը: Եվ երկիրը ավերվում էր, որովհետև նրա համար մրցող կողմերից ոչ մեկը չէր ուզում ձեռք վերցնել նրանից:

Այդ տատանումները պիտի հարկադրեին արաբներին վերաբերվել Հայաստանին իբրև մի անվստահելի, վտանգավոր երկրի, որ, ի լրումն ամենայնի, կրոնով միացած էր

իրանց ռիսերիմ թշնամիների, այսինքն բյուզանդացիների հետ: Ուստի նրանք ամեն տեսակի խիստ միջոցներ էին ձեռք առնում՝ հայոց երկիրը հնազանդության մեջ պահելու համար: VII դարի վերջում արաբական զորքը հաղթեց ու ցիրուցան արավ բյուզանդական բանակը: Դրանից հետո արաբները նորից խուժեցին Հայաստան, նորից նվաճեցին նրան սրով, կոտորածներով: Այդ ժամանակից էլ նրանք սկսեցին կառավարել մեր երկիրը առանձին փոխարքաներով, որոնց մեր պատմագիրները ոստիկան անունն են տալիս: Արաբական տիրապետությունը բոլորովին հաստատվեց Հայաստանում:

Այդ տիրապետության առանձնահատկությունները մանրամասն բնորոշելու կարիք չկա: Նկատի ունենանք սկզբունքը — ասիական սանձարձակ բռնակալություն: Արաբները, ճիշտ է, կրոնական համբերողություն ունեին. նրանք բռնությունամբ, սրով և կրակով չէին մահմեդականացնում իրանց հպատակ ազգերը: Բայց սա չէ նշանակում, թե նրանք առանձին մի բարեհաճություն էլ ունեին դեպի նրանց: Իսլամը, որ կազմակերպել, ամրապնդել էր այդ ահաբեկ ուժը, թույլ էր տալիս, որ իր տիրապետության տակ այլակրոն ազգեր էլ ապրեն, բայց միայն այն պայմանով, որ դրա փոխարեն այդ ազգերը հարկեր տան և մի շարք ստորացուցիչ պարտավորություններ կատարելով ցույց տան, որ իրանք ստրուկներ են իրանց տերերի առաջ, որոնց, իբրև նվաճողների, պատկանում են բոլոր իրավունքները:

Հիմնական այս կանոնը արդեն բավական էր, որ արաբական լուծը անշափ ծանր դարձնե ոչ-իսլամ հպատակների համար: Սակայն շմոռանանք, որ անսահման բռնապետական սիստեմի մեջ ահագին նշանակություն ունի կառավարողների անձնավորությունը: Երբ մի հայտնի չափով մեղմ ու բարի է այդ անձնավորությունը, կարգերն էլ մեղմանում են և լուծը այնքան անողորմ կերպով չէ ճնշում հպատակներին: Հայաստանի, ինչպես և ամեն մի արաբական երկրի բախտը կախված էր երկու անձնավորությունից. մեկը իսլամ աշխարհի բարձադույն պետն էր, խալիֆը կամ, ինչպես մեր

պատմագիրներն են անվանում, ամիրապետը, մյուսը՝ նրա փոխանորդը, որ կառավարում էր երկիրը:

Մեր պատմությունը, բազմաթիվ արյունոտ փաստերով ցույց է տալիս, որ բարի ու մեղմ ոստիկանների թիվը շատ քիչ է եղել, շատ աննշան: Ահագին մեծամասնությունը բազմապես էր դաժան, արյունարբու մարդկանցից: Ոստիկանները հենց առաջին քայլից, VIII դարի սկզբից, իրանց բարբարոսական ջանքերը դարձնում են հայ նախարարների դեմ: Դա մի վերին աստիճանի նենգավոր քաղաքականություն էր: Խալիֆների արքունիքը շատ լավ հասկացել էր, որ Հայաստանի դիմադրական ուժը այդ բազմաթիվ խոշոր ու մանր իշխաններն են: Թեև նրանք մի համախմբված, միաձուլ ուժ չեն ներկայացնում, թեև նրանց շահերն ու ձգտումները շափազանց շատ են ընդհարվում իրար հետ, բայց և այդպես խորին հնությունից նվիրագործված կարգերով այդ իշխաններն են ժողովրդի առաջնորդները, երկրի զինվորությունն են ներկայացուցիչները: Դարավոր անցյալը ցույց էր տվել, որ ժողովրդի համար այնքան մեծ նշանակություն չունեին, թե ով է երկրի գլխավոր տերը — պարսիկը, հուռայեցին, թե Արշակունի թագավորը: Նա ուներ իր տեղական ինքնագլուխ իշխաններին, որոնց մեջ էլ տեսնում էր այն սկզբունքը, որ նրա պարտավորությունների և իրավունքների աղբյուրն էր: Ահա այդ նախարարական մեծ դասակարգը, որ կանգնած էր երկրի բարձրագույն տիրոջ և ժողովրդի մեջտեղը, վերացնելն ոչնչացնել էր կամենում արարական արքունիքը: Ոչնչացնել՝ կենդանակեր գրկել երկիրը իր մանր-մունր ինքնավարություններից, անմիջապես հպատակեցնել նրան տիրողին, առանց մեծ վտանգ զգալու, թե զենքի ուժ կգործադրվի հպատակության դրությունից ազատություն գտնելու համար:

Դեռ նոր էին արարները իրանց տիրապետությունը հաստատել Հայաստանում, երբ վարդանակերտի կոխը հաստատեց, թե ինչ հազթություններ կարող է տանել միաբանված նախարարությունը: Արաբացի ոստիկանները սկսեցին գործել: Մի կողմից նրանք ճնշում էին ժողովուրդը, կեղերում էին նրան, մյուս կողմից օգուտ էին քաղում յուրաքանչյուր առիթից, յուրաքանչյուր պատրվակից՝ նախարարների դա-

սակարգը բնաջինջ անելու համար: Առաջին մեծ պատճառը վարդանակերտի կոխըն էր, երբ նախարարական մի փոքրաթիվ գունդ հազարավոր արաբացիներ կոտորեց: Դրա վրեժն առավ նախիջևանի Կապը կամ Կաշմ գորապետը, խաբու-թյամբ իր մոտ հրավիրելով հարյուրավոր նախարարների և նրանց զինվորներին և այդ ամբողջ բազմությունը եկեղեցու մեջ այրելով: Այրվողների թիվը, ինչպես ավանդված է պատմական հիշատակարանների մեջ, հասնում էր 1200-ի, իսկ այն տարին (705), երբ կատարվեց այդ սոսոր բարբարոսությունը, արաբական պատմագիրները կնքեցին «կրակի տուրք» անունով:

Բայց այդ զարհուրելի կրակը ոչ միանգամայն լափեց ոչնչացրեց հայ նախարարությունը, ոչ էլ արաբական լուծի գործը հեշտացրեց: Հարստահարությունները, կեղերումները մասնավոր ապստամբական շարժումներ էին առաջացնում Հայաստանի զանազան կողմերում: Արաբացիները անգթությամբ ճնշում էին այդ ապստամբությունները, աշխատելով թուլացնել երկիրը թե կոտորածներով և թե ռազմիկ տարրերը Հայաստանի սահմաններից դուրս քշելով: Հայ ազնվական զասակարգը սոսկալի հարվածներ էր ստանում: Կոտորածից ազատված նախարարական տները, ամբողջ ընտանիքներ, գերի էին ուղարկվում խալիֆների մայրաքաղաքը:

Ահա այդպիսի մի ապստամբական դրություն էլ ներկայացնում էր իններորդ դարի կեսը, երբ անհայտ էր մեր Անին և, երևի, միմիայն այս Միջնաբերդի սահմաններում էր ամփոփված:

Բայց այս անգամ արաբական իշխանությունն էլ ուրիշ կերպարանքով էր հանդես գալիս: Տիրում էր Աբրասյան տոհմը, ընդհանրապես արատավոր, դաժան ու անգութ մի տոհմ, որ բարձրացրել էր խալիֆների իշխանությունը, հիմնել էր Բաղդադ մայրաքաղաքը, բայց և անկման ու քայքայման սկիզբն էլ էր դրել: Այլևս իսլամի նվաճող, հաղթահարող, ահարկու ուժը արաբները չէին կազմում: Թուլացել էին նրանք, բավականություններով և հեշտասիրությամբ չի կյանքը գրկել էր նրանց նվաճողական թափից: Խալիֆները, իրանց անձնական ապահովության համար այլևս տեղական, արաբ

գորքեր չէին պահում: Ներքին խռովություններ էին ծագել մահմեդական ահագին պետության մեջ. թե արքունիքի պահպանության, թե խռովությունները ճնշելու և թե արտաքին թշնամիներին դիմադրելու համար՝ խալիֆները վարձկան զինվորներ էին հավաքում, որոնք և հետզհետե սկսեցին ահագին նշանակություն ստանալ արքունիքում:

Այդ վարձկանները զանազան կողմերից էին գալիս: Բայց շուտով խալիֆների պալատական զորքը համարյա մի ցեղի մարդկանցից կազմվեց:

Միջին Ասիայում թափառող թուրք ցեղերը շատ անգամ, հավաքված իրանց խարույկների շուրջը, լսում էին զարմանալի և գրավիչ պատմություններ: Հատ-հատ մարդիկ այդ ցեղերից, պատահաբար ընկնելով Բաղդադի խալիֆների զորքի շարքերը, վերադառնում էին իրանց հայրենի վրանները և այդտեղ հրաշքներ էին պատմում Արևելքի պերճ մայրաքաղաքի հարստությունների մասին: Այդ պատմությունները մի-մի կայծեր էին, որոնք վառում էին վայրենի, քաջ թուրքերի եռանդն ու հետաքրքրությունը: Եվ նրանք ամբողջ խմբերով դիմում էին դեպի արևմուտք, ուր պատրաստ տեղ էին գտնում խալիֆների բանակում: Այդ բանակը զորեղացավ, դարձավ զուտ թուրքական. և իբրև մեծ ուժ բռնացավ պետության մեջ, իր ձեռքն առավ արքունիքի գործերը:

Աբբասյան խալիֆները, այդպիսի գրավիչ դեր կատարելով Միջին Ասիայի թափառական ցեղերի համար, ապագայի կանխատեսությունը շունչին: Նրանք բավական էին իրանց վարձկան զորքերով, որոնք նույնիսկ բյուզանդացիներին էին ջարդում, բայց չգիտեին, որ այդ քաջ զինվորները բաց են անում այն վտանգավոր ճանապարհները, որոնցով Միջին Ասիան պիտի թափվեր արևմուտք և պիտի ոչնչացներ արաբական իսլամը, ստրկացներ արաբներին և կերպարանափոխեր ամբողջ Արևմտյան Ասիայի ճակատագիրը:

Ահա խալիֆների խնամած, գզված այդ թուրքական բանակի մի մասն էր, որ մտավ Հայաստան, նրա մեջ ծագած ապստամբությունը ճնշելու համար: Թուրքական զորքի առաջնորդն էլ թուրք էր—Բուղան, որ մեր պատմության սև էջերի հրեշ հերոսներից մեկն է: Անգութ ու գաղանաբարո-

Բուղան, ի լրումն ամենայնի, ուներ հրահանգ հայ իշխանների ուժն ու թիվը սպառելու:

Բայց այդ ի՞նչ ապստամբություն էր:

Տարոնի Բագարատ իշխանը ինչ-որ ընդհարում ունեցավ Հայաստանի ռաիկանի հետ, և այդ ընդհարումը, որ ինքնըստինքյան մի շնչին բան էր, պատճառ դարձավ, որ Բաղդադի արքունիքը կատաղությամբ բռնկվի: Խալիֆը այդ ժամանակ Ալ-Մութեվաքիլն էր, կամ ուրիշ անունով, Ջաֆարը (մեր պատմագիրների Ջափրը), Աբբասյան ընդհանրապես սարսափելի տոհմի ամենավատ տիպը—ուխտադրուժ, անշնորհակալ և անգութ: Այսպիսի մի բռնակալի ժամանակ շատ դժվար բան չէր ուղցնել, չափազանցնել Բագարատ իշխանի վարմունքը: Զորքեր ուղարկեցին Տարոնը պատժելու համար: Բագարատը բռնվեց և ուղարկվեց Բաղդադ: Սակայն Սասունի ժողովուրդը ձմեռը իջավ իր սարերից, հարձակվեց Մուշի վրա, ջարդեց արաբական զորքը և սպանեց նրա հրամանատարին: Այստեղ արդեն դաժան Աբբասյանը ամեն չափ անցած համարեց և Հայաստան ուղարկեց Բուղային:

Թուրք հրամանատարը իր թուրք բանակով հրեղեն լավայի պես խուժեց դժբախտ երկրի սահմաններից ներս: Ապստամբությունը Տարոնի գավառում էր ծագել, բայց Բուղայի առաջ ամբողջ երկիրն էր տարածված իբրև բարբարոսությունների դաշտ: Երկու տարի (851—853) նա հրով և սրով անցավ մի ծայրից մինչև մյուսը: Կոտորած չէր լինում միայն այնտեղ, ուր տեղական իշխանը հնազանդություն էր հայտնում: Եվ որովհետև հնազանդություն հայտնելն էլ չէր ազատում գերության շղթաներից, ուստի մի քանի իշխաններ ամրացան իրանց լեռներում, բայց դիմադրություն ցույց տալ չկարողացան և անձնատուր եղան: Կարծես եկել էր հայ իշխանական տոհմերի վերջնական կորուստը: Բուղան հավաքում էր իշխաններին և գերիների պես ման էր ածում իր հետ:

Միայն մի տեղ սարսափելի թուրքը կանգ առավ: Միայն մի տեղ հայտնվեց մի ուժեղ ձեռք, որ ծանր հարվածներ իջեցրեց նրա գլխին: Այդ տեղը Հայաստանի արևելյան ծայրում էր գտնվում:

Շուշու գավառի հարավային մասում, Վարանդա և Դի-
զակ գավառակների սահմանների վրա, Քաղլար գյուղի դի-
մաց և Տոդ գյուղի ետևում բարձրանում է մի հսկա, ժայռե-
րով պատկված սար, որի զլխին այսօր էլ երևում են հին
բերդի մնացորդները, Բուդայի ժամանակ այդ էր Քթիշ բեր-
դը¹։ Նա պատկանում էր տեղական իշխանին, որին ժողո-
վուրդը պարզապես «երեցի որդի» էր անվանում, բայց որի
խակական անունն էր Եսայի։ Ժամանակի իշխանները կրում
էին և հավելվածական անուն, գլխավորապես արաբական։
Եսային կոչվում էր և Աբու-Մուսնի։

Մեր պատմագիրներից մեկը (Մովսես Կաղանկատվացի)
Աբու-Մուսնին անվանում է «խաղաղության մարդ»։ Բայց
այդ դժբախտ ու սև ժամանակում, երբ Հայաստանի դաշտերը
ծածկված էին դիակներով և անմեղ արյունը արդարություն
էր խնդրում երկնքից, խաղաղության մարդն էր, որ արտա-
սանեց աշխարհ սասանեցնող խոսքը։ Բուդան, իր հաղթա-
կան-գալլային արշավանքը վերջացնելով, հասավ Պարտավ
քաղաքը։ Նու նայելով իր եկած ճանապարհին, նա կարող էր
մի թուրք զորապետի գոռոզությունը ասել, որ երկար էր այդ
ճանապարհը, բայց ինքը մի հաղթական զբոսանք է կատա-
րել, և ոչ ոք չկարողացավ դանդաղեցնել իր քայլը, ոչ ոք
չհամարձակվեց դուրս բարձրացնել իր դեմ։ Հաղթանակի
զբոսանքը գուրս էր եկել դժբախտ Հայաստանի սահման-
ներից, անցել էր Քիֆլիսի վրայով, դեմ էր առել Կովկասյան
լեռնաշղթային, և ամեն տեղ միենույնը, ամեն տեղ հնազան-
դություն, արյունոտ պատուհաս։

Մնում էր շատ քիչ բան։ Պարտավից դեպի հարավ, եր-
կու օրվա ճանապարհի վրա, ինչ-որ լեռներում, մնում էր
ինչ-որ «երեցի որդի», որ խաղաղության մարդ էր կոչվում։
Բուդան խրոխտ ու սպառնալից հրաման ուղարկեց այդ մար-
դուն—խսկույն գալ և գյուլս իջեցնել Բաղդադի խալիֆի զո-
րության առաջ։ Մի քանի ժամանակից հետո լեռներից պա-
տասխան եկավ, և Բուդան իմացավ, որ նորից պետք է իր

հաղթական սուրը հանե, նորից պետք է հարկադրե տեղական
մի իշխանի սողալ իր ոտների մոտ, կյանք հայցել։

Այդ պատասխանը, բարեբախտաբար, պահվել է մեր
պատմության մեջ։ Նա արյունոտ, նահատակ երկրի պատիվն
էր, որ խոսում էր լեռների գազաթից։ Նրա մեջ խոսում էին
արաբական դարավոր լուծի տակ ձմրված ժողովրդական հոգու
լավագույն, նվիրական շեշտերը։ Իմ պատմության համար
շատ կարևոր է, որ այստեղ բերեմ այդ պատասխանը։

«Աշխարահակալների համար,— գրում էր Աբու-Մուսնի,—
օրենք է թագավորական խնամատարությունը ման գալ աշ-
խարհի վրա, հնազանդ հպատակների մեջ, տառապյալների
նեղությունները վերացնել, խնամողների պես թեթևացնել
զրույթունը, և ոչ թե ավազակի պես հարձակվել և սրով ու
զերույթամբ ավերակ դարձնել երկիրը։ Եվ եթե դու խաղաղու-
թյան ոստիկան էիր եկել արքունիքից, պիտի հպատակներին
երկրի շինություն պարգևեր և ոչ թե ավերանք ու խռովու-
թյուն։

«Արդ թող հայտնի լինի քեզ, որ որքան բավական լինի
իմ զորությունը և որքան կենդանի լինեմ ես, հակառակ պի-
տի կանգնեմ աստուծո զորությունը և ուժով։ Քեզ խաղաղու-
թյան սիրով չպիտի տեսնեմ, այլ զենքով, աղեղով և սրով,
քաջ մարտիկներով և ընտիր ձիաներով։ Եվ եթե քեզ հաճելի է
ապրեցնել քեզ և քո զորքը, վեր կաց գնա այստեղից, իմ
սահմաններից։ Իսկ եթե կշտապես, քո զայրույթին և կա-
տաղության հետևելով, զրկվել այս աշխարհի կյանքից և ոս-
կորներդ ցրվել անապատում, լինել երկրի զազանների և
երկնքի թռչունների կերակուր,— այդ էլ քո կամքն է, և ես քո
արյան պատասխանատուն չեմ, մանավանդ որ մեծ
բարեպաշտություն եմ համարում սատկեցնել աստուծո
թշնամիներիդ, ինչպես Մովսեսը Ամադեկին, Հեսուն
քանանացիներին, Սամվելը Ագագին, Դավիթը Գողիաթին և
ինչպես առհասարակ բոլոր այն խորայնացիները, որոնք սա-
տակեցրին այլազգիներին և աստված իր հաճությունը հայտ-
նեց։ Այդպես էլ ես կանեմ քեզ և քո զորքիդ հետ։

«Այժմ քեզ հետ շատախոսելու բան չունեմ։ Քո ձեռքում
է խաղաղությունն էլ, խռովությունն էլ։ Եթե, ինչպես ասացի,

¹ Այսօր էլ այդ սարի վրա գտնվող վանքը ժողովրդի մեջ ունի
Քթիշի վանք անունը։ Անշուշտ ապագա դարերի գործ է, որ այդ անու-
նը սրբազորել, հայացրել են, դարձնելով նրան «Գոթիշ»։

ինձանից հեռանա, խաղաղություն է, իսկ եթե ոչ՝ պատերազմ է, կռիւ, ճակատամարտ։ Եւ զու նպատակ կլինես, իսկ իմ աղեղը՝ խոցոտողը, դու հակառակորդ և իմ տղաները հաղթանակող, դու թշնամի և իմ զորքը քեզ դատապարտող. քոնը պատերազմ կլինի, մերը՝ հաղթություն, քո մարմինը և իմ նիզակը, քո պարանոցը և իմ սուրը. քո ստացվածքը և մենք նրան ժառանգող, քո ավարը և մենք ավար առնողներ. դու ավազակ, մենք կողոպտողներ, դու եղեգ, մենք դյուրավառ կրակ, դու հարդ, մենք հեշտ փշող քամի, դու ծաղիկ, մենք թառամեցնող խորշակ, դու պտղալից հանդ, մենք ապականոց կարկուտ, դու շինություն առանց հիմքի, ես հիմնիվեր քանդող հեղեղ, դու լեշ, իմ զորքը պատառոց գազան, որ պատառում է քո սրտի առագաստը, դու խաղալիք, մենք երեխաներ և ձեռք առնելով քո զորությունը, խաղալով խաղում ենք քեզ և քո ամբողջ հպարտության ու գոռոցության հետ. դու վայրի երե, մենք որսորդներ, դու թրուշուն, մենք քեզ վերևից ցած ենք իջեցնում և ցանցի մեջ գցում, դու ծովի վիշապ, մենք կարթ ենք և քթից դեպի վեր ձգելով՝ հանում ենք անդունդների խորքից. դու եղջյուր չունեցող եղջերու, մենք արծիվներ քեզ վրա, կուրացնում ենք քո աչքերը, քո լեշը գցում ենք իմ ձագերի և ծակերում բնակվող աղվեսների առաջ»¹։

Դժվար թե գտնվի մի այլ վավերագիր, որի մեջ այսպիսի կլասիկ պարզությամբ արտահայտված լինի լեռնական մի պարզամիտ ժողովրդի հոգին։ Եւ կարգալուծ այս խորխոտողերը, այդ երկար համեմատությունները, ինձ թվում է թե Աբու-Մուսեն, իր շուրջը հավաքած իր լեռնականներին, խորհրդակցել է նրանց հետ, միասին թելադրել ու խմբագրել է այդ լեռնային վճիռ պատասխանը, որի շատախոսութունը միայն սեփական ուժի գիտակցության նշանն է։ Լեռների որդին պարզամիտ է իբրև երեխա. իսկ երեխան, հայտնի է, երկար է խոսում, ոգևորությամբ է խոսում, իր ունեցածի մասին, այն բանի մասին, ինչ նրա պարծանքն են կազմում։

Ահա՛ որտեղից, ահա ի՛նչ շրջանից և ի՛նչ լեզվով էր

¹ Թովմա Արծրունի, Դպր. Գ, գլ. Ժ։

դուրս գալիս արյունոտ դիակի պես անողոք գազանի ոտների տակ ընկած մի երկրի պատվաճանաչության ըմբոստ կարողության ձայնը։ Դա ժողովրդի դիմադրության ահագին թափըն էր. դա ինքնավստահ, չլուտ ուժն էր, որ հրապարակ էր գալիս ճակատ-ճակատի զարնվելու բարբարոսության հետ։ Սուր բռնության դեմ, արյուն՝ արյուն բերողի համար։ Առանց երկար ու բարակ մտածելու, առանց հանգամանքների, հակառակ կողմի ուժն ու կարողությունը կշռելու, դուրս է նետվում ժողովրդական կորովը՝ հավատացած, որ պիտի հաղթե, բռնավորի հետ պիտի խոսե այն իսկ ուժի լեզվով, որ բռնավորության միակ հիմքն է։

Բայց կար և նրա հակառակ ծայրահեղությունը։ Եւ այդ միևնույն տեղը, միևնույն պատերազմի դաշտի վրա։

Բուղան պաշարում է Քթիշը։ Ահագին դիմադրություն այդ հսկա սարի գագաթին։ Աբու-Մուսեն ցույց տվեց, որ իր գրած պատասխանը տղայական պարծենկոտություն չէր, այլ լեռնական իրողություն։ Պատմագիրը մեզ ավանդում է, որ մոտ մի տարի տևեց պաշարումը. 28 անգամ Աբու-Մուսեն կռվի բռնվեց Բուղայի հետ և ո՛չ մի անգամ թիկունք չցույց տվեց արաբացիներին։ Բանը այն տեղին հասավ, որ գոռոզ հրամանատարը սուրհանդակ թոցրեց Բաղդադ՝ հարցնելու Զաֆար խալիֆին, թե ի՛նչ անել, Քթիշը նվաճել չէ լինում։

Հեշտ ու էժան հաղթանակներով հղիացած թուրքը լեռնական կորովի պողպատին էր ընդհարվել ճակատով։ Նա ծանր ու բարակ պատրաստություններ տեսավ, իր բնակչության համար տներ շինեց, ուր նստած՝ մտածում էր իր անվան փառքը խայտառակությունից աղատելու համար։ Քնել չէր կարողանում բռնավորը, ասում է պատմիչը, այնքան դառնացած էր, անհաջողությունից այնքան կատաղած, որ ոչ ոք չէր համարձակվում մտնել նրա մոտ։ Տասն օր այդպես փակված մնաց, երկյուղից իր տունը շրջապատել էր սրերը մերկացրած զորքերով։

Այդ վիճակի մեջ էր Բուղան, երբ մի օր նրա բանակում եղած մեծերից մեկը կարողացավ ներս մտնելու թույլտվություն ստանալ։ Բռնելով տխուր-տրտում հրամանատարի ձեռքը, այդ մարդն ասաց.

— Ինչո՞ւ թուացնում ես քեւ ձեռքը: Ինչո՞ւ քո քաջության անունը քո ձեռքով կորցնում ես, այն քաջության, որից ամբողջ աշխարհը զարհուրած գողաց և ոչ ոք քեզ չհակառակվեց: Քո հզոր բազուկը ինքդ ես տկարացնում. բայց մի՞թե՞ դու ես առաջինը, որ հաղթվեցիր ու հարվածներ կրեցիր թշնամիներից: Մի՞թե՞ միայն քո զորքը կոտորվեց, քո ավարը բաժանվեց թշնամիների մեջ: Ինչո՞ւ չես միտ բերում, թե սկզբից մինչև այսօր ամեն տեղ, ուր զորք է հավաքվում, ուր պատերազմ, սուր, ճակատամարտ է լինում, կրքեմն հաղթում են և երբեմն էլ հաղթվում: Աշխարհակալներից ո՞րն է, որ սրի չմատնվեց. ազգերի իշխանները մի տեղ գորանում են, մի տեղ տկարանում:

Եվ խոսակցությունը երկարացավ այս ուղղությամբ: Բուդան հետզհետե ենթարկվեց այդ խոսքերի ազդեցության, հետզհետե թոթափեց իրանից թուլությունը, զվարթացավ, դուրս եկավ իր հուսահատության սենյակից: Գլխավոր հրամանատարի հուսաբեկումը, թուլությունը բանակի կորուստ է նշանակում: Քթիշը վերջնական հաղթանակ տանելու վրա էր, բայց ժամանակին արտասանած հուսատու խոսքը փրկեց բանակը, — մի ամբողջ արարական բանակ, փրկեց հրամանատարին, — Բուդան էր այդ փրկվողը:

Այդ փրկողը մի հայ իշխան էր, այն էլ խոշոր իշխան, ժամանակի հայ իշխանների գլխավորը: Դա Սմբատ Բագրատունին էր, հայոց աշխարհի սպարապետը:

Մի պատահական հյուր չէր սպարապետը արաբական բանակում: Երբ Բուդան մտավ Հայաստան, սկսեց իր արյունոտ արշավանքը, Սմբատը խոնարհ ու հեղ զնաց նրա առաջ, ընդունեց նրան հարգանքով ու պարգևներով: Իր հավատարմությունը գործով ցույց տալու համար՝ հանձն առավ առաջնորդել արաբական բանակը դեպի երկրի զանազան կողմերը: Թուդան չէր կարող արհամարհել այդպիսի մի ժառանգությունը: Երկրի առաջնակարգ իշխանը պիտի ցույց տար նրան ճանապարհները, պիտի կարևոր տեղեկություններ հաղորդեր յուրաքանչյուր իշխանի զորքերի, ամրությունների մասին: Եվ Սմբատը մեծ բարեխղճությամբ էր կատարում այդ անսխալանձելի, եթե ավելին չասենք, պաշտոնը: Անկասկած, Բու-

դայի հեշտ հաղթանակների մի մեծ պատճառը նա էր. անկասկած, նա իր հեղինակությամբ, իր հալոթյամբ ազդում էր իրանց բերդերում ամրացած իշխանների վրա, համոզում էր նրանց անձնատուր լինել: Կարծես ոչինչ ծանր զոհաբերություն չէր կանգնեցնում նրան իր նպատակին հասնելու համար:

Ի՞նչ էր դա: Մի ստոր, զզվելի դավաճա՞ն: Երկրի մարմնից ու արյունից գոյացած մի ցե՞ղ, որ կրծում, ոչնչացնում էր այդ երկրի կյանքը:

Գործերին նայեք, — այո՞: Սակայն մեր պատմագիրները միաբան հավատացնում են, թե դավաճան չէր Սմբատ սպարապետը, այլ իր երկրի բարելավության համար տոշորվող: Հովհաննես կաթողիկոս պատմագիրը ասում է, թե սպարապետը, տեսնելով Բուդայի գործած «սասանությունը», տեսնելով թե ինչպես նրա սուրը կոտորում էր, «զմահ ի կենսա խառնեալ սակա աշխարհին իւրոյ փրկութեան», մեծ ընծաներով և խոնարհ զխով զնաց նրա առաջ:

Բայց այդ ի՞նչ աշխարհ է, որի փրկության համար Սմբատը «մահ խառնեց իր կյանքի հետ», այսինքն մեծ վտանգի ենթարկվեց: Թե նկատի ունենանք նրա «սպարապետ» տիտղոսը, կարող կլինենք ասել, թե ամբողջ Հայաստանն էր նրա աշխարհը: Բայց թե ամբողջ Հայաստանի փրկության համար էր նա իր կյանքը վտանգում, — այդ մասին խոսք չէ կարող լինել, որովհետև մենք չենք տեսնում հաշիշ իշխաններից մեկին պատկանած մի գավառ, որ Բուդայի ճիրաններից ազատված լինի Սմբատ սպարապետի ջանքերով: Ընդհակառակն, նույն Հովհաննես կաթողիկոսը վկայում է, որ Բուդան նրան իր «խորհրդակիցն» ու «կամակիցը» դարձրեց: Իսկ այդ խորհրդակցությունն ու կամակցությունը երբեք չէր վերաբերվում աշխարհաշինության և խաղաղության, քանի որ Բուդան երբեք այդպիսի բաներով չէ զբաղվել...

Մնում է «իր աշխարհի» խոսքերը հասկանալ իրանց ուղիղ, բուն նշանակությամբ, այսինքն՝ որ Սմբատը «մահը կյանքի հետ խառնեց» Բագրատունյաց տոհմի կալվածները փրկելու համար: Եվ իրավ, այդպես էլ եղավ: Ալևոր սպա-

րապետի մեջ ամենից ուժեղ խոսում էին տոհմային շահերը: Բագրատունիները ժամանակի ամենահարուստ հայ իշխաններն էին, այնքան հարուստ, որ կարողացել էին շատ ընդարձակ կալվածներ գնել մյուս իշխաններից: Այդ կալվածները արդեն բավական էին մի թագավորության կազմելու համար: Բագրատունիներին էին պատկանում Արարատյան և Տայոց նահանգների կեսից ավելին, մեծամեծ կալվածներ Տուրուբերանի, Բարձր Հայքի և Գուգարքի մեջ: Ահա այս տեղերն ազատեց Սմբատ սպարապետը Բուղայի անգթություններից: Բայց ազատեց ի՞նչ գնով: Մանր է նորից կրկնելը:

Աբու-Մուսեն անվերջ դիմադրել չէր կարող իր սարի ժայռոտ գագաթից: Մի տարին էլ շատ մեծ հերոսություն էր բարձր լեռնագագաթին պաշարված և ամեն տեղից կտրված լեռնական զորքի և նրա հրամանատարի համար: Չհաղթվելով արաբական սրերից, նա կարող էր հաղթվել ավելի սարսափելի թշնամուց՝ սովից: Գտնվեց պատվավոր ելք, որ, երևի, հավասար չափով հաճելի էր երկու կողմերի համար: Աբու-Մուսեն հայտարարեց թե, ինքը երբեք չէ էլ մտածել խալիֆի հպատակությունից դուրս գալու մասին և պատրաստ է լսել նրա հրամանը: Բուղան էլ, հաղթելու հույս չունենալով, շտապեց այդ մասին հայտնել Բաղդադ և հրահանգներ խնդրել: Սմբատ սպարապետը, անկասկած, դեր կատարեց այդ բանակցությունների մեջ:

Խալիֆից եկած պատասխանն այն եղավ, որ Աբու-Մուսեն ցած դնն զենքը, պատիվներով դուրս գա իր բերդից և իբրև ազատ ու պատվավոր իշխան՝ գնա ներկայանալու Բաղդադի արքունիքին: Պատերազմը վերջացավ:

Քթիչ սարի ստորոտում, Բուղայի բանակի մեջ իրար հանդիպեցին երկու ծայրահեղությունները: Մեկը, հերոսի փայլով պսակված Աբու-Մուսեն, ըմբոստություն էր, բազուկի ուժով պաշտպանվող ազատությունը, իրավունքի, արդարության, անկախության պատերազմող ոգին: Իսկ մյուսը, ալեգարդ, հարուստ սպարապետը, աղաչանքի, խոնարհության, ամենատխուր կոմպրոմիսների ներկայացուցիչն էր: Մեկն ասում էր՝ զարկի՛ր ու ստացիր, մյուսը պատասխանում էր՝

Թե՛ զարկել հարկավոր չէ, կարելի է ստանալ աղաչանքով, ծունկ չոքելով, հավատարմությամբ:

Երկու սկզբունքները արաբական բանակումն էին: Երկուսկզբունք, որոնք իրար անչափ հակառակ են, իրար թշնամի են: Ո՞վ պետք է հաղթեր:

Բուղան իր բանակը, հայ իշխաններին տարավ Պարտավ: Այդտեղ նա հայտարարեց մի վճիռ, որ ուխտադրություն չէր, քանի որ իսլամական օրենքը թույլ էր տալիս ամեն անգամ, երբ պահանջում է օգուտը, ոչինչ համարել անհավատի հետ կապած դաշինքը: Բուղան հայտարարեց, որ բոլոր հայ իշխանները իր գերիներն են: Նույնիսկ Սմբատ սպարապետը, այն մարդը, որ արաբական բանակի առաջնորդը, խորհրդակիցն ու կամակիցն էր:

Ամենքը ուղարկվեցին Բաղդադ: Բագրատունի իշխանը, անշուշտ, զարմացած էր այն սև ապերախտության վրա, որ ցույց տրվեց դեպի իր անձը. սակայն գոհ պիտի լիներ, որ գոնե ազատեց իր բազմաթիվ կալվածները ավերանքից: Բայց ո՞րքան գեղեցիկ պիտի լիներ այդ գոհությունը: Ահա նրա հետ նույն գերության ճանապարհը գնում է Աբու-Մուսեն: Նա էլ, իհարկե, գոհ էր, որ իր երկիրը ոտնակոխ չեղավ, որ արաբացին հաղթող չդուրս եկավ, և ժողովուրդը դարձյալ իր ստացվածքի տերն է: Բայց միևնույն ժամանակ այդ հերոս իշխանը իրան ապերախտության դոհ չէր համարում: Երախտիքի իրավունք ունենալ, այն էլ ո՞ւմ վրա, Բուղայի՞ վրա: Այդ անպատվությունից ազատ էր «երեցի որդին»...

Խալիֆի արքունիքում էլ միևնույն վերաբերմունքը: Այդտեղ էլ մոռացված էր Սմբատի երախտիքը: Նրան էլ, ինչպես և մյուս իշխաններին, առաջարկվեց ուրանալ քրիստոնեությունը: Նա չընդունեց այդ առաջարկությունը և, քաջաբար նահատակվելով, ստացավ «խոստովանող» անունը:

Ի՞նչ էր ապացուցանում այդ մահը հեռավոր իսլամական աշխարհի խորքում: Ա՛յն միթե, որ հպատակական հավատարմությունը հաղթահարված էր իբրև մի շատ անպետք միջոց՝ բարեբախտություն ձեռք բերելու համար:

Ո՛չ: Սմբատ սպարապետը Բագրատունյաց տոհմի վա-

դեմի քաղաքականության մի արտահայտությունն էր: Իննե-
րորդ դարի այն սարսափների մեջ, երբ թվում էր, թե հա-
կերի խորատկույթը վերջնական է, երբ քայքայված, մանրա-
ցած, ցիրուցան դարձած ազգային իշխանությունը կարծես
պիտի կորցնեի իր անկախության վերջին նշույլը, Բագրա-
տունյաց այդ քաղաքականությունը մի հրաշալի երկունքի
մեջ մտավ և հանկարծ, անսպասելի կերպով, ծնեց մի թա-
ղավորություն, որ մոռացնել տվեց բազմաշարշար երկրի
կրած բոլոր տանջանքները: Անկումից ամենալայն ինքնա-
վարություն, ավերանքի և արտասույթի վիճակից շքեղ ու պերճ
աշխարհաշինություն, թուլությունից, բարոյական անկումից
մեծամեծ առաքինություններ, հերոսություն: Ահա ինչ էր
տալիս այդ զարմանալի երկունքը: Ահա ինչ էր պատրաստել
Բագրատունիների տոհմային տաղանդը:

Մերատ խոստովանողի պես մի զգուշ, չափազանց խո-
հեմ, սեփական շահերը չափազանց թանկ գնահատող քա-
ղաքագետ գործիչ հարկավոր էր իրեն վերջինը այն Բագրա-
տունիներից, որոնք իրանց տոհմի գերիշխանությունն ու
մեծությունն էին նախապատրաստում սերունդից սերունդ:
Սպասվում էր այն մարդը, որ տոհմային ձգտումները ըն-
տանեկան ավանդությունների կարգից հանե և իրագործե
կյանքի մեջ: Եվ այդ մարդը կար արդեն Բուդայի հարված-
ներից ենթարկված Հայաստանում: Դա խոստովանողի որդին
էր, Աշոտը:

Երեսունը անցկացրած մի ժիր երիտասարդ էր նա, երբ
կանչվեց իր հորը փոխարինելու սպարապետության պաշ-
տոնի մեջ: Եվ առաջին իսկ քայլերից ցույց տվեց իրան իրեն
իր հոր քաղաքականության հետևող: Հնազանդություն արա-
բական իշխանության—սա առաջին պայմանն էր, որ ապա-
հովում էր մի երկարատև գործունեության խաղաղությունը:
Չհարուցանել խալիֆայի ոչ մի կասկածը, քաղաքական
ցնցումների ոչ մի առիթ չթույլ տալ, երկարատև, վերին աս-
տիճանի համոզիչ իրականությամբ հարկադրել նույնիսկ
գոռոզ մահմեդականներին հավատալ, թե մի քրիստոնյա
աշխարհ էլ կարող է իսլամի հավատարիմ հարկատուն և
գաշնակիցը լինել—ահա ինչն էր Աշոտի եռանդուն գործու-

նեության միտքն ու նպատակը: Այս ուղղությամբ նա աշխա-
տում էր ամբողջ երեսուն տարի:

Բայց արտաքին քաղաքականությունը դեռ ամեն ինչ
չէր: Ավելին ասենք. արտաքին քաղաքականությամբ չէր էլ
կարելի երկրի շինությունը առաջ տանել, կառուցանել պե-
տական սկզբունքները պահպանող հաստապինդ, հուսալի
սյուներ: Աշոտը մի շատ տաղանդավոր գործիչ հանդիսացավ
մանավանդ ներքին կառավարության մեջ:

Բագրատունյաց տոհմի լայնարձակ կալվածները,
օգտվելով երկարատև խաղաղության բարիքներից, տնտե-
սական-կուլտուրական նախանձելի օաղիս էին ներկայաց-
նում Հայաստանի մեջ: Այդտեղ հաստատված էր կարգ, օրի-
նականություն: Երկրի մեջ տեղի չէին ունենում ներքին խռո-
վություններ, վեճեր՝ նախարարական այս կամ այն տան
ներկայացուցիչների փառասիրական և շահասիրական ձեռ-
տումներին գոհացում տալու համար: Բագրատունի տոհմը
դեռ այն երջանիկ դրության մեջ էր, երբ կարգադրողը մեկն
է, իսկ մյուսները հնազանդվում են նրան: Աշոտը, ոչ մի տե-
ղից ոչինչ արգելքի չհանդիպելով, երկար խաղաղությամբ
հովանավորված մի ժամանակ ուներ իր երկիրը տնտեսապես
ծաղկեցնելու համար:

Նա շատ լավ հասկացել էր, որ մի երկրի ուժը նրա բա-
րեկարգությունն է, նրա տնտեսական բարգավաճումը: Հով-
հանես կաթողիկոսը թվում է այն շինարարական և տնտե-
սական ձեռնարկությունները, որոնք Աշոտի հովանավորու-
թյամբ և անմիջական ջանքերով բարեգարգեցին երկիրը:
Քաղաքները, գյուղերը, ավանները զարգարվեցին շինու-
թյուններով, ագարակներ, գոմեր, բուրաստաններ էին շին-
վում ամեն տեղ, դարգանում էր կանոնավոր կյանքը: Նույնը
հաստատում է և Ասողիկը: Խոսելով Աշոտի որդի Մմբատի
մասին, Ասողիկն ասում է, թե նրա և նրա հոր ժամանակ,
մարգարեի ասածին պես, ամեն մեկը հանգստանում էր իր
որթի և թզենու տակ, այսինքն յուրաքանչյուր մարդ ուներ
իր կյանքը ապահովող և առատություն պարգևոք տնտեսու-
թյունը: Երկիրը աճում էր արագ, ագարակները ավաններ էին

դառնում, ավանները փոխվում էին բազմամարդ քաղաքների: Ժողովրդի հարստությունը այն աստիճանին էր հասել, որ մինչև իսկ հովիվներն ու նախարարածները մետաքսե շորեր էին հագնում:

Ահա ինչպես ստեղծվեց այն ճոխությունը, որ այսօր այնպես ապշեցնում է Շիրակի ավերակները և մանավանդ, բոլոր ավերակների թագուհի Անին տեսողներին: Այդ երջանիկ կացությունը պատրաստվում էր վաղուց և հանկարծ իր փարթամությունն սկսեց ցույց տալ Աշոտ իշխանի իմաստուն կառավարության ժամանակ:

Սա արդեն ներքին լուրջ ու մեծ ուժ էր, որի վրա կարելի էր հենվել: Աշոտի բարոյական հեղինակությունը սաստիկ մեծանում էր ոչ միայն Բագրատունյաց տոհմի կալվածների մեջ, այլև նրանց սահմաններից դուրս: Դարերով կեղեքված, ներքին անկերպարան դրությունից և արտաքին արհամիրքներից հալումաշ դարձած հայոց աշխարհը հասկանալի է, թե ինչպիսի մեծ հաճույքով և բավականությամբ պիտի տեսներ իր մի մասի այդ խաղաղ ու գեղեցիկ վերածնությունը ավերակների այն դարում, երբ քարը քարի վրա չէր կանգնում: Ամեն կողմից աչք են տնկում գործունյա, եռանդոտ Աշոտի վրա, ամեն տեղ կարող էին խորին բավականությամբ արտասանել. «Մարդ է երևան եկել», ինչպես ասում էին տառապած, երկնքի այցելության սպասող խորայնացիները:

Սակայն Հայաստանի հողի վրա երևան եկած այդ մարդը միայն բարոյական հեղինակության վրա հենվել չգիտեր: Նա ուներ և խորերը թափանցող քաղաքագետի գործնական խելքը: Հայկական բազմադարյան իրականությունը ցույց էր տալիս, թե որքան գեղեցիկ գաղափարներ խորտակվել են լոկ այն պատճառով, որ նախարարական խոհմերը, տարբեր շահերի և տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ հանդիսանալով, երբեք չեն կարողացել միանալ հայրենիքի ընդհանուր օգուտը, կենսական շահերը պաշտպանելու համար: Երկրի ճակատագրի տնօրինողները եղել են մանավանդ առաջնակարգ նախարարական տները, որոնց ղեկավարում էին եսականությունը, տեղական նեղ հասկացողությունները: Աշոտը, այդ դեռ անխախտ իրակա-

նությունը իր համար գոնե մասամբ անվնաս դարձնելու համար, խնամիական կապեր հաստատեց իր ժամանակի երկու գլխավոր իշխանական տների հետ, ամուսնացնելով իր երկու աղջիկներին Սյունյաց և Արծրունի իշխանների հետ: Եվ այդ ամուսնությունները, գոնե Աշոտի կենդանության ժամանակ, ցանկալի պտուղներ տվին: Փեսաները հպատակված էին իրանց աներոջ և երեք հռչակավոր ազնվական տոհմերը կատարյալ համաձայնության ու համերաշխության մեջ էին:

Ասել թե այդքանը բավական էր Բագրատունի տոհմին թագավորական ժիրանի պատրաստելու համար, կնշանակեր նվազեցնել Աշոտի նշանակությունը: Կար դեռ գլխավորը: Բարոյական, աշխարհաշեն առաքինությունները հազիվ թե երբևիցե գահ պատրաստած լինեն մեկի համար, եթե դրանց հետ միացած չէ զինվորական ընդունակությունը: Մի այնպիսի ժամանակ, երբ ամեն տեղ տիրում էր զորեղի իրավունքը, երբ սուրն էր հարցեր վճռողը, պատմություն ստեղծողը, մեր Աշոտը չէր կարող մի քայլ առաջ գնալ, եթե լիներ մի խաղաղ քրիստոնյա, պատերազմը ատող կամ, որ ամենավատն է, պատերազմից վախեցող: Նա լավ ուսումնասիրել էր զինվորությունը, նա քաջ զորավար էր,— ահա թե ինչն էր գլխավորը: Արդեն այն հանգամանքը, որ նա մի մեծ, հարուստ ու շեն երկրի տեր էր, ինքնըստինքյան մի նշանավոր ուժ էր ներկայացնում: Աշոտը իր ձեռքի տակ ուներ 40.000 հոգուց բաղկացած մի բանակ: Մի ճնշող քանակություն չէր գա, որ ահագին գերակշռության չափը ապահովեր: Ընդհակառակն, շրջապատող պետությունների զինվորական կարողության հետ համեմատած՝ դա մի շատ համեստ ուժ էր: Քայց ի՞նչ կարող էր անել Աշոտը, երբ երկիրը այդքանն էր մատակարարում: Մնում էր, որ նա մեծ հեռատեսությամբ շահագործեր այդ ուժը, վարեր այնպիսի մի քաղաքականություն, որ միակ հնարավորն էր գոյություն ունեցող հանգամանքների մեջ:

Մենք արդեն տեսանք այդ քաղաքականության հիմնական ձգտումը, հենակետը: Դա Սմբատ Խոստովանողի կտած սկզբունքն էր: Աշոտը այնպիսի հավատարմություն ցույց տվեց արաբական իշխանության, այնքան խոհեմու-

թյամբ տարավ իր ստանձնած սպարապետությունը, որ իր հոր նահատակությունից հետո անմիջապես, երբ, զաժան Մովսեվաբիլ խալիֆը սպանվեց իր որդու ձեռքով (861), ստացավ «Իշխանաց իշխանի» պատիվը: Դա առաջին քայլն էր, որ տանում էր դեպի քաղաքական հաղթանակներ:

Բայց ո՞րքան իրական ու խելացի էր այդ քաղաքականությունը, ո՞րքան լավ էր նա համապատասխանում հայրենիքի պատվին ու շահերին:

Քաղաքական ազատություն ազգերը սովորաբար ստանում են զենքի միջոցով: Հայ ազգին երբեք խորթ ու անհասկանալի չէ եղել այս համաշխարհային ճշմարտությունը: Հայաստանը իր պատմության ընթացքում շարունակ ապստամբական դրություն ներկայացնող երկիր էր, երբ նրա տերերն էին պարսիկները, հոռմեացիները: Արաբական տիրապետության շրջանում էլ, մոտ երկու դար, ինչպես տեսանք, ապստամբություններ էին, որ բարձրանում էին իսլամի լուծի դեմ:

Սակայն սրով և արյունով հայերին շատ քիչ է հաջողվել իրանց հայրենի ազատությունը պահպանել: Նրանց տերերը չափազանց մեծ և ուժեղ աշխարհականներ էին: Արաբական բռնակալության դեմ էլ անզոր հանդիսացան երկրի ապստամբական նահատակությունները: Նրանք, ընդհակառակն, ավելի ևս ծանրացրին իսլամի երկաթե լուծը և առաջ բերին այն սարսափելի վտանգավոր ծրագիրը, որպիսին էր, ինչպես գիտենք, երկրի ռազմիկ ուժերի, իշխանական տոհմերի բնաջինջ լինելու արաբական քաղաքականությունը:

Մի նրբամիտ, հեռատես քաղաքագետ, կանգնելով այս դարավոր իրողությունների ասպարեզում, հետ ու առաջ նայելով, պիտի հասկանար, որ ապստամբական ուղղությամբ առաջ գնալու տեղ այլևս չկա, եթե չպետք է թույլ տալ, որ երկիրը կատարելապես ուժասպառ դառնա: Ապա նույն այդ գործիչը պիտի հարց տար իրան՝ թե ի՞նչ պիտի ստանար երկիրը, եթե նույնիսկ հաջողություն էլ գտներ իր ապստամբությունների մեջ:

Լավագույն դեպքում նա պիտի դուրս գար արաբական լուծի տակից, բայց իսկույն բյուզանդական լուծի տակ ընկնե-

լու համար: Իսկ այս լուծը արաբականից զանազանվում էր նրանով միայն, որ մահմեդական չէր, քրիստոնեական էր:

Կարո՞ղ էր նա բերել ազատություն, հանգստություն: Անցյալը հարուստ փաստերով ցույց էր տալիս, որ, այո՛, կարող էր, եթե միայն երկիրը հրաժարվեր իր քաղաքական և եկեղեցական ինքնուրույնությունից, այսինքն դադարեր առանձին ազգ լինելուց: Բյուզանդականությունը կրոնական եեղ անհամբերողություն էր, իսկ տեղային-ազգային ինքնավարությունների վերաբերմամբ՝ անհաշտ թշնամի:

Ահա այս հաստատ իրողությունները հեռատես, տաղանդավոր գործչին պիտի ցույց տալին, որ արաբական լուծը դեռ այնքան բացառիկ մի դժբախտություն չէ, որ անկարելի լինի նրա հետ հաշտվել որևէ պայմանով, որ մահվան և կյանքի հարցի չափ անհրաժեշտություն լիներ նրան բյուզանդական լուծի հետ փոխելու: Ապացույցը մի խոշոր օրինակ, Թեոդորոս Ռշտունին:

Դեպքերն ու իրողությունները այդպես տարրալուծող քաղաքագիտական նուրբ միտքը մեր Աշոտն էր:

Պատմական մեծագործություն կատարել կարող է այն խոշոր խելքը, որ անցյալի և ներկայի տերն է հանդիսանում, որի համար աշխարհի կարգերը, պատմական և ընթացիկ իրողությունները խոստեն առաջնորդներ են և շեն թույլ տալիս մոռանալ գլխավորը, հիմնականը, ընկնել Աբբասյանների ետևից:

Աշոտը շմոռացավ դարձվոր ահեղ իրականությունը—այն, որ Հայաստանը հարևան հակառակորդ մեծ պետությունների մեջ տրորվող մի երկիր էր դարերից ի վեր: Փոխվում էին տրորողները, բայց չէր փոխվում տրորվողի դրությունը: Վերացնել այդ ճակատագիրը անկարելի էր, այդպես են վկայում մի շարք արյունոտ դարեր անցյալում: Եվ տրորվողին մնում էր հարմարվել իր դրության, շահագործել հանգամանքները իր օգտին, լրջությամբ և առանց կանխակալ հախապաշարմունքների վերաբերվելով նրան տրորող կողմերին:

Լուրջ վերաբերմունքը կարող էր արաբական բռնակալության խորքերում գտնել այն շահավետ հանգամանքը, որ

նա, մանավանդ Աբրահայան դինաստիայի օրով, ժառանգել էր պարսկական հին բռնապետական ավանդությունները, իսկ այս ավանդությունները երբեք դեմ չեն եղել, որ նվաճված, հարկատու ազգերը իրանց սեփական ինքնավարությունն ունենան: Բյուզանդիան այդպիսի ավանդություններ չունի: հայերը այդ փորձել էին դեռ Արշակունիների ժամանակ, երբ Հայաստանը բաժանվեց պարսիկների և բյուզանդացիների մեջ:

Արաբական բռնապետության այդ նպաստավոր հատկությունն էլ Աշոտի քաղաքական ձգտումների հենակետը դարձավ: Նա պիտի տեսներ, նա անշուշտ տեսնում էր Հայաստանը տրոհող կողմերի մեջ եղած մեծ տարբերությունը: Բյուզանդականությունը—դա ձուլում, ոչնչացնում էր: Հայկական կյանքը հարյուրավոր փաստերով ցույց էր տվել, որ հայերի և հույների մեջ եղած դավանական տարբերությունը այնքան անհաղթելի անջրպետ չէր, որպեսզի կարողանար միշտ բաժանած պահել երկու ազգերը: Դավանական խտրությունը հեշտ էր շտկվում, մոռացվում և այնուհետև, հայերի հունացման դեմ միակ ազդու զենքը կարող էր մնալ լեզուն, որ, սակայն, նույնպես թույլ ու անկարող մի զենք էր: Մինչդեռ արարներին և հայերին բաժանողը դավանական գիծը չէր, այլ կրոնական խտրության խոր վիճը: Այդտեղ ձուլումը կարող էր լինել միայն բռնությամբ, բայց այս միջոցի ամբողջ տկարությունը զգացել էին և իսլամի պետերը, ուստի և չէին դիմում նրան:

Ահա որքան փաստեր, իրողություններ կային, որոնք Աշոտին տանում էին դեպի արաբական տիրապետության կողմը: Նա ինքը չէր բերել այդ տիրապետությունը, այլ գործ ուներ նրա հետ իբրև գոյություն ունեցող իրողության հետ: Իր 40 հազար զինվորներով նա չէր կարող ջնջել փաստը, քերել, վերացնել նրան սրի բերանով: Եվ, բացի դրանից, միթե այդ բանակը հարկավոր էր նրան, միթե մի գործիչ կարող է վատնել իր ուժերը և այնուհետև ոչինչ չունենալ իր ձեռք բերած հաջողությունը պահպանելու համար:

Թողնելով որ 40-հազարանոց բանակը իր թիկունքը պահպանե, Աշոտը մոտեցավ իր սուչև դրված մեծ հարցին

ավելի իբրև խելոք ու ճարտար քաղաքագետ, քան իբրև քաջ զորավար: Նա փորձեց փոփոխել դարերի իրականությունը, փորձեց ցույց տալ, որ ապստամբությունը ազատության միակ միջոցը չէ, ինչպես հասկանում են բոլոր ազգերը, որ կարելի է իրագործել նույն գաղափարը առանց ահավոր ցնցումների, խնայելով երկրի ուժերը:

Եվ նա փառավոր կերպով ապացուցեց այդ բանը: Պատմության մեջ հազվագյուտ են նրա նման բախտավոր մարգիկ, որոնց հաջողվում է արյունահեղությունների արդյունքը փոխարինել խելքի, խաղաղ տաղանդի արդյունքով:

Քաղաքական գործիչի համար, որքան էլ սա ցավալի լինի, գոյություն ունենալ միայն բարոյական սկզբունքներ չեն կարող: Նրա ձեռքում եղած միջոցները միշտ մաքուր ու արգար չեն, որովհետև հանգամանքներն են իրերի տերը և զոհել հանգամանքները որոշ բարոյական սկզբունքների, երբեմն նշանակում է զոհել ամբողջ գործը: Մեր Աշոտի գործունեության մեջ էլ կան գծեր, որոնք պետք է դատապարտվեն բացարձակ բարոյականության տեսակետից: Այսպես է, օրինակ, Գրիգոր Մամիկոնյանի գործը:

Սա Բաղդադում բանտարկված հայ իշխաններից մեկն էր, որին հաջողվեց փախչել կապանքներից և գալ իր հայրենի երկիրը, Բագրևանդ: Արաբական իշխանությունները պատվեր են ուղարկում Աշոտին՝ անպատճառ բռնել փախըստականին: Բայց անակնկալ զեպքը գալիս է ազատելու համար հայ իշխանապետին այդ շատ անախորժ դրությունից: Գրիգոր իշխանը տեղ հասնելուց մի քանի օր հետո մեռնում է: Աշոտին մնում էր հայտնել իրան հրաման ուղարկող իշխանության, որ մահը արդեն ազատել է փախստականին ամեն տեսակ երկյուղից և պատասխանատվությունից: Բայց նա այդպես չէ անում. այլ կտրում է մեռած իշխանի գլուխը և ուղարկելով արաբական ոստիկանին, հավատացնում է, թե Մամիկոնյանը փախչում էր, երբ ինքը վրա հասավ, բռնեց ու գլխատեց: Դրանով նա իր հավատարմության մի նոր, խոշոր փաստ էլ տվեց արաբացիներին և իրան էլ նյութապես լիովի վարձատրեց: Իբրև այդ հավատարմության վարձատրություն, նա պարգև ստացավ Բագրևանդը, վրան էլ դրամական մի

խոշոր գումար: Ահա ինչ էր նշանակում մի նետով երկու նապաստակ սպանել: Որքան կարևոր էր հավատարմության փաստը, այնքան, գուցե և ավելի, կարևոր էր Բագրատունյաց կալվածների սահմանը մեծացնելը: Հարց է, սակայն, թե որքան մաքուր էր այդ միջոցը:

Սակայն ի պատիվ մեր հերոսի, պետք է ասել, որ նա ի շարք չէր գործ դնում այդպիսի քաղաքագիտական ընդունակությունը և, որ գլխավորն է, ստրկական շահագրգռություններով չէր ընդգծում իր հավատարմական պարտականությունները: Նրա օրինականությունը, երկրի հանգստությունը, մի խոսքով, խալիֆների իսկական շահերի պաշտպանությունը պահանջում էր, նա գործում էր համարձակ, նույնիսկ զենքի ուժով:

Այսպես, նա Հայաստանի սահմաններից դուրս վճռեց Ահմեդ ոստիկանին, որ դեռ նոր հայոց սահմանները մտած ուղում էր Պարտավի և Մանազկերտի մահմեդական իշխողների հետ մի դավադրություն կազմել հայ նախարարներին Դվինում կոտորելու համար: Աշոտը վերին աստիճանի ճարպիկ և զգույշ միջոցներով կարողացավ բռնել ոստիկանի գաղտնի դավադրական թղթակցությունները, որոնց վրա հիմնված՝ պահանջեց ոստիկանից հեռանալ Հայաստանի սահմաններից: Ապա նա իր զենքը դարձրեց Ահմեդի դավակիցներից մեկի, Մանազկերտի էմիրի զեմ, պաշարեց այդ բերդը և ընկճեց էմիրին:

Եվ Բաղդադի խալիֆը չէր կարող անբավական լինել Աշոտի այս խիզախ գործողություններից, քանի որ ամեն ինչ կատարվում էր նույն խալիֆի իրավունքներն ու հեղինակությունը պահպանելու համար: Վրաստանն էլ հանձնված էր Աշոտի հսկողության, և հենց որ այնտեղ որևէ վտանգավոր խլրտում էր սկսվում, Աշոտը իսկույն վրա էր հասնում, խաղաղություն էր հաստատում, հեռացնելով խռովարարներին: Վրաստանի իշխանական դասակարգի հետ էլ Աշոտը բարեկամացել էր խնամիական կապերով: Հարմար դեպքում նա չէր մոռանում իր կալվածների սահմանները ուղղելը. այսպես, նա վրաց տիրապետությունից հանեց Շիրակի սահմանակից Աշոցք գավառը:

Պետք է աչքի առաջ ունենալ մանավանդ այն, որ հայ իշխանապետի այսքան երկարատև, անխախտ հավատարմությունը Բաղդադի արքունիքը տեսնում էր մի այնպիսի ժամանակ, երբ արաբական պետության քայքայումը այլևս գաղտնիք չէր ոչ ոքի համար: Իսլամի աշխարհակալությունները կանգ էին առել վաղուց և այժմ եթե ոչ անհնարին, քոնե շահագրգռեց դժվար էր պահպանել եղածն անգամ: Զանազան կողմերում բռնկվող ապստամբությունները անդադար բեկորներ էին խլում ահագին պետությունից. կազմվել էին և կազմվում էին բազմաթիվ տեղական անկախություններ, կես անկախություններ, երկրորդական, երրորդական նշանակություն ունեցող էմիրներն անգամ ձգտում էին առաջնակարգ նշանակություն և լայն ու մեծ իշխանություն ստանալ: Խալիֆները հազիվհազ էին կարողանում գլուխ պահել այդ խառնաշփոթությունների մեջ: Նրանց արքունիքն անգամ թուրքական վարձկան զինվորության ձեռքին էր: Ապստամբություն էին ոչ միայն առանձին նահանգների տեղական, բնիկ տերերը կամ տեղի գաղնալ կամեցողները, այլև խալիֆի փոխանորդները, նրանք, որ ուղարկվում էին երկիր կառավարելու, հնազանդության մեջ պահելու համար: Կարելի է ասել, որ ուժ ու կարողություն զգացող ամեն մեկը մեղք էր համարում բախտ չփորձելը:

Աշոտը բախտ չփորձեց, թեև նրա աչքի առջև Ասորպատականը, Քրդիստանը ապստամբության դրոշակներ էին բարձրացրել, թեև, օրինակ, Պարտավի արաբական ոստիկանը մի ժամանակ համոզում էր հայ իշխաններին միանալ իր հետ և ապստամբվել խալիֆի դեմ: Գուցե այդ դեպքերն ու առաջարկությունները որոշ հարմարություններ տալիս էին, գուցե նրանք շատ գայթակղեցնող դյուրություններ էին ներկայացնում, բայց Բագրատունի իշխանապետը չոգևորվեց, չփոփոխեց իր ծրագրերը: Եվ երբ Բաղդադի իշխանության դեմ ապստամբված մի պարսիկ իշխան, Ջահապ անունով, 80 հազար զորքով մտավ Հայաստան, Աշոտը, առանց երկար մտածելու, նրա դեմ ուղարկեց իր բանակը, որ մեծ հաղթություն տարավ և այդպիսով մի խոշոր ծառայություն էլ արավ խալիֆի գահին:

Պե՛տք է ասել, որ այդ զգուշութիւնը, խոհեմութիւնը՝ այդ ինքնազսպումը ավելորդ չէին: Աշոտը տեսնում էր, որ իր առջև մահամեղական աշխարհն է: Նա թուլանում էր ներքուստ, բայց դեռ սպառնալից և ուժեղ էր արտաքին թշնամիներին դեմ: Բյուզանդիան դեռ ընդհարվում էր նրա հետ, դեռ պարտութիւններ էր կրում: Այդ մահամեղական աշխարհում մի ապստամբված մահամեղական և նույն վիճակի մեջ գտնվող մի քրիստոնյա նահանգի դրութիւնը չէր կարող միեւնոյնը լինել: Ապստամբ մահամեղականը դարձյալ մահամեղական էր, մինչդեռ ապստամբ քրիստոնյայի դեմ դուրս էր գալիս կրոնական կատաղութիւնը: Իսլամը սրբազան պատերազմը նվիրագործել էր ոչ-իսլամ ազգերի դեմ, և ապստամբված, առհասարակ զինված քրիստոնյան իր դեմ պիտի հաներ նույնիսկ իրար հակառակվող մահամեղականներին, պիտի առիթ տար նրանց գործադրել իր վրա կրոնով սրբագործված անգթութիւնները:

Ո՛չ, Աշոտը, զինված մեծ համբերությամբ, իր օգտին էր ծառայեցնում բոլոր նպաստավոր հանգամանքները, այն ամենը, ինչ կար նրա երկրում և երկրից դուրս: Միշտ անխոնջ հսկող, միշտ ժողովրդի բարօրութեան հզոր ախոյան, նա բարոյական ահագին հեղինակութիւն ձեռք բերեց բազմաթիվ հայ իշխանական տոհմերի մեջ, և նրա օրով մենք չենք տեսնում, որ Հայաստանի այդ հարյուրզլխանի հիդրան ներքին դժբախտ խռովութիւններով ալեկոծեր երկիրը: Աշոտը զսպում էր, Աշոտը կարգադրում էր, այստեղ էլ գործադրելով իր սիստեմը, այն է՝ ցնցումներ չառաջացնելով, կրքեր չվառելով, այլ խաղաղ միջոցներով, իմաստուն կարգադրութիւններով: Եվ նրան լսում էին, նրան հպատակվում էին:

Իհարկե, Աշոտը մի անապատական ճգնավոր չէր, որին միայն խոսքն է տված, միայն բարոյական քարոզը: Նա հենվում էր իր զինվորական ուժի վրա, երբեք չմոռանալով, որ աշխարհիկ գործերում բարոյական հեղինակութեան հենակետը արդարութիւն պաշտպանող սուրն է: Դրսի և ներսի թըշնամիները տեսնում էին, որ հայ իշխանապետը նույնքան

զինվորական է, որքան և խաղաղ գործիչ: Աշոտը ամրացնում էր սահմանները, նոր-նոր բերդեր էր շինում:

Նրա ուշադրութիւնից չվրիպեց և Անին: Դեռ փոքրիկ ու անզարդ մի տեղ էր նա, բայց հնուց հռչակված իր ամրութեամբ: Եվ նա ավելի ամրացրեց այդ բերդը, կարծես հանձնարարում էր իր հաջորդներին, իմանալով, որ իր ձեռնարկած գործի, իր սերունդների հավիտենական փառքը այստեղ պիտի անմահանա...

Տարիներն էլ չազդեցին այդ զարմանալի մարդու վրա: Տեսանք նրան 30-ից անց հասակում ժառանգած իր հոր պաշտոնը: Երկար կյանք էր տված նրան: Հասել էր արդեն 70-ին, բայց դարձյալ գործում էր երիտասարդական եռանդով:

Եվ նրա ահագին ջանքերը, այն երկարատև, հաստատուն բարօրութիւնը, որ նրա ձեռքի գործն էր, վերջապես, բերին վաղուց ցանկացած պտուղը: Հայերի մեջ մի շարժում սկսվեց. Աշոտի փեսաների ձեռներեցութեամբ, բայց համարյա բոլոր իշխանների հաճութեամբ, հայոց աշխարհը խնդիրք ներկայացրեց Մոթամեղ-Բիլլահ խալիֆին, որ փոխանակ իսլամ ոստիկան ուղարկելու Հայաստան, այդ պաշտոնը տրվի Աշոտ իշխանապետին: Խալիֆի վեհապետական իրավունքները մաղի չափ չէին վնասվում: Հայաստանը դարձյալ մնում էր նրա հարկատուն:

Մենք չգիտենք այս ձեռնարկութեան մանրամասնութիւնները, չգիտենք նույնիսկ թե ովքեր պատգամավոր գնացին Բաղդադ. բայց անկասկած է, որ խալիֆի արքունիքում պատրաստված էր բարեհաջող տրամադրութիւն և պատրաստողների մեջ առաջինը ինքը, Աշոտն էր: Պետական բարձր պաշտոնյաների մեջ նա ուներ իր բարեկամները, որոնք անձամբ ճանաչում էին նրան: Եվ վերջապես ի՞նչն էր ավելի լավ պատրաստող, քան 30—33-ամյա անխոնջ գործունեութիւնը, որ ամենալավ գրավականն էր խալիֆի համար, թե ապստամբական իրարանցումների, խառնակութիւնների այդ սաստիկ վտանգավոր ժամանակներում Հայաստանի հարկատվական հպատակութիւնը ամենալավ կերպով ապահովված կլինի նրան ինքնավարութիւն տալով:

Արարների համար հպատակութիւնը, ինչպես և հին պարսիկների համար, հարկեր տալով էր արտահայտվում: Հայերի ներքին կյանքի, տեղային վարչական կարգերի մեջ նրանք չէին խառնվում առանց հարգելի պատճառների, որոնք նրանց տիրապետության հարցն էին շոշափում: Այսպիսով ճանաչված էր հայերի ինքնավարական սկզբունքը: Եվ խալիֆը ոչ մի արգելք չգտավ Հայաստանից եկած խնդիրքի դեմ մանավանդ այն պատճառով, որ Աշոտի և նրա հաջորդների վրա մոտիկ հսկողութիւն կար: Շիրակի կողքին, Գվինում, պիտի մնար արաբական ոստիկանը:

Մնում է որոշել Աշոտի նոր պաշտոնի հանգամանքները: Ի՞նչ պիտի լիներ նա: Հայերը, իհարկե, ցույց տվին խալիֆի արքունիքին, որ հին դարերում էլ, պարսիկների ժամանակ, Հայաստանը կառավարողը և արքունական հարկեր տվողը թագավոր էր: Այդպես էլ որոշվեց:

887 թվականին Հայաստանում տեղի ունեցավ պատմական մեծ դեպքը: Մովսէս-Բիլլահը թագ ու արքայական գավազան էր ուղարկել Աշոտին: Գեորգ կաթողիկոսը մեծ հանդեսով օծեց նրան: Շիրակի թագավորութիւնը իրողութիւն դարձավ:

Չորս հարյուր հիսուն տարի էր անցել այն ժամանակից, երբ նույն այս Արարատյան նահանգի մի ուրիշ գավառում մարեց Արշակունյաց թագավորութիւնը: Չորս հարյուր հիսուն տարվա մեջ Հայաստանը շատ չար ու բարի տեսավ, հերոսներ եկան գնացին, հայրենիքի բախտը ապահովելու համար շատ ազնիվ ձգտումներ եղան, շատ արյուն թափվեց, անհամար զոհեր գնացին: Բայց առեղծվածը մնաց անլուծելի, ոչ ոք չկարողացավ որոշել երկրի ճակատագիրը. ոչ ոք ուժ չունեցավ հաղթահարելու անողորմ հանգամանքները, զուր անցան անձնազոհութիւնը, հերոսական ջանքերը: Եվ ոչ ոք չկարողացավ անել այն, ինչ արավ Աշոտ Բագրատունին քաղաքագետի, կառավարչի և զորավարի փայլուն տաղանդով:

Աշոտը մի նոր շրջան էր բաց անում մեր պատմության մեջ՝ մանր, տեղական թագավորութիւնների շրջանը:

Մանր, տեղական: Ինչո՞ւ այսպես: Ինչո՞ւ Հայաստանը

այլևս չկարողացավ գոնե վերադարձնել Արշակունի հարստութիւն ժամանակը, երբ ամբողջ երկրի համար մի էր վասական, հարկատու թագավորը:

Հետաքրքրական հարց: Պատմության էջերը դիտողին առաջին անգամ այդ հարցը տալիս է ինքը, մանր, տեղական թագավորութիւնների այս անդրանիկը, որի ծնունդը պատմում էինք մինչև այստեղ: Տալիս է նա այդ հարցը և ինքն էլ լուծում:

Ի՞նչն էր պակասում նրան՝ համատարած, ընդհանրական դառնալու համար:

Ըստ երևութիւն—ոչի՛նչ: Ամեն ինչ ցույց էր տալիս, որ այդ տոհմային, մասնավոր թագը կենսունակութիւն, աշխույժի, զորութիւն ակներով էր զարդարված և նա կարող էր մի ընդհանրապես դժբախտ, չարատանջ, ներքին պակասութիւններից կեղեքվող երկրի հավաքողն ու քաղաքական բարեկարգ կեցութիւն մեջ երջանկացնողը դառնալ:

Բարեբախտ սկզբնավորութիւնը արդեն մի մեծ գրավական էր: Աշոտը 4 կամ 5 տարի միայն թագավորեց: Բայց մենք, որ գիտենք, թե թագից առաջ որքան երկար էր նա աշխատել, կասենք, որ այդ սակավակեցութիւնը այնքան մեծ գրկանք չէր հայոց աշխարհի համար: Սմբատ Խոստովանողի և նրա որդու կառավարութիւնը մոտ 50 տարվա մի շրջան է կազմում: Կես դար խաղաղութիւն, հանգստութիւն,— սա այնպիսի մի երջանկութիւն էր, որին հաճախ չէր արժանանում հայ ազգը իր միշտ ոտնակոխ, միշտ անհանգիստ հայրենիքում: Ահա այդ հազվագյուտ երջանկութիւնը պիտի ասպարեզ հրավիրեր հայ ժողովրդի խաղաղ ստեղծագործական ուժերը: Խաղաղութիւնը, կյանքի և զույգի ապահովութիւնը մարդկության ծաղկելուն նույնքան հարկավոր է, որքան երկնային ցողը ծաղկոցին: Մինչև իններորդ դարի կեսը հայ աշխարհի զանազան մասերում ապրող սերունդները սիգիֆյան աշխատանք էին կատարել: Նրանք անում էին, մի բան ավելացնում էին, բայց գալիս էին հեղեղները, տանում ամեն ինչ: Եվ նորից պետք էր անել, նորից քար դնել մինչև մոտակա հեղեղը:

Կես դարի խաղաղութիւնը Բագրատունյաց տոհմի կալ-

վածներում հոյակապ պտուղներ է տալիս: Ինչպե՞ս լավ հովանավորված է այդտեղի ժողովուրդը: Նրան տալիս են ապրելու, կատարելագործվելու հնարավորություն, միևնույն ժամանակ տալիս են և մի երկար ու ժպտուն ապագայի ապահովություն, հրաշքով ստեղծելով մի թագավորություն, որ երկրի վրա իջնում է երկնքի օրհնության պես, առանց տանջանքների ու ցնցումների, խաղաղ ու պայծառ, պահպանելով երկրի ուժերը, հենված արդեն պատրաստ վարչական և զինվորական կազմակերպության վրա:

Դինաստիաներ հիմնողները սովորաբար արտակարգ ընդունակությունների տեր մարդիկ են լինում: Տափակ խեղճությունները ոչինչ ստեղծել չեն կարող: Աշոտի թագավորությունը զարմանալի է ոչ միայն իբրև հրաշքի նման մի բան, որ իրականանում է Բուդանների կատարած ավերակների այն հուսահատ, օրհասական ժամանակներում, երբ երկիրը պետք է խորտակման վիճակում գնար, բայց բարձրացավ մինչև սեփական ազատություն.—զարմանալի է և նրանով, որ իր շարունակության մեջ շատ փայլեր ունեւր, շատ երջանիկ ու կենսատուակ էր, բայց և շատ սակավակյաց, անասելի անբախտ...

Այդ թագավորությունը միայն հայտնի չափով քաղաքական ինքնագլխություն չէր ներկայացնում, ինչպես նրա ժամանակ և նրանից հետո լույս ընկած ուրիշ տոհմային մանր թագավորությունները, այլև ժողովրդի ստեղծագործական ուժերի, կուլտուրական ընդունակությունների բարձր արտահայտությունը: Քաղաքական կյանքը գուցե և շատ արտասովոր զարգացում չգտավ Բագրատունիների երկրում, բայց որ կուլտուրական կյանքի ավելի բարձր բարգավաճում մենք քացի այդ թագավորությունից, մի ուրիշ տեղ չպիտի որոնենք, այդ, անկասկած, մի ճշմարտություն է, որի վիթխարի ապացույցն է Շիրակը: Այստեղ, ինքնավարության սկզբից, գուցե և էլ առաջուց, գոյացել էր մի ոչ-սովորական միջավայր, որ կարող էր մտավոր-վարչական և կուլտուրական կենտրոն դառնալ ամբողջ Հայաստանի համար: Եվ շատ բնական պիտի լինեւր տեսնել, որ բազմատանջ երկրի այլ մասերն էլ, ուր չէր տարածվում Բագրատունիների իրավասությունը, ամբողջ

թափով ձգտում են իրանց վիճակը խառնել Շիրակի վիճակի հետ, համախմբվում են նրա շուրջը:

Կյանքի ծայրագույն հրամանատարներ հանդիսացող բոլոր հանգամանքները այդ էին տրամադրում: Ամենից առաջ ապահովությունը, որ այնքան ցանկալի մի վիճակ է գոյության կովի դաժան պայմաններին մատնված մարդու համար:

Բագրատունիները ապահովություն էին: Աշոտը սկիզբն էր, նրանից առաջացավ մի ամբողջ տաղանդավոր սերունդ, որ աշխարհաշինությունը շատ բախտավոր աջողակությամբ միացնում էր քաջության հետ: Թվենք Աշոտի ժառանգներին կարգով՝ Սմբատ Առաջին, Աշոտ Երկաթ, Աբաս, Աշոտ Ողորմած, Սմբատ Տիեզերակալ, Գագիկ Առաջին: Բոլորը հերոսներ: Ոչ մեկը այդ անուններից չի կարմրի իր տոհմի պատմության առաջ իբրև թուլամորթ, վախկոտ: Միայն Գագիկից հետո առաջին անգամ այլոսերում երևաց Բագրատունի տոհմում—Հովհաննես-Սմբատը: Մի հատիկ օրինակ էր դա, բայց այլասերում, որ և վախկոտի անխելությունը խեղդեց Շիրակի անկախությունը: Նրանից հետո տոհմային առաքինությունը իսկույն շտապեց վերականգնել իր հեղինակությունը: Գագիկ վերջինն էր դա, որ սակայն, չնայած իր երիտասարդական աշխույժին, իր քաջության, չկարողացավ ոչնչացնել այլասերման կատարած ոճիրը և Բագրատունիները պատմության ասպարեզից անհետացան:

Քաղաքական ապահովության հետ կապված է կյանքի այն վիթխարի գործոնը, որ տնտեսական շահ է կոչվում: Այս կողմից էլ Բագրատունիների երկիրը զբաղիչ էր: Այստեղ ծաղկեց առևտուրը: Այստեղ ազգաբնակչության հարստությունը նույնիսկ առասպելական համբավ ստացավ: Այն ժամանակվա հռչակավոր, հարուստ կենտրոնները՝ Կ. Պոլիս և Բաղդադ, այս տեղերի վրայով էին իրար հետ առևտրական հաղորդակցություն պահպանում և հայերը, անշուշտ, եթե ոչ միակ, գոնե գլխավոր միջնորդներն էին հանդիսանում այդ առևտրի մեջ, քանի որ բյուզանդացիների և արաբների մեջ շատ սաստիկ էր քաղաքական թշնամությունը: Այդ երկու համաշխարհային կենտրոններում էլ հայերը աշակերտում էին գիտության, արվեստներին: Միայն Աբբասյանների փա-

ռավոր մայրաքաղաքը ի՞նչ մեծ կրթարան էր: Այդտեղ էր կենտրոնացած այն ժամանակվա դիտությունը, այդտեղ գնացող հայր կարող էր հանդիպել Ասիայի և Աֆրիկայի բազմազան ազգերին, որոնց գրավում բերում էր այդտեղ համաշխարհային առևտուրը:

Ճիշտ է, Բաղդադն ու Կ. Պոլիսը միայն Բագրատունյաց երկրների համար գոյություն չունեին, ճիշտ է, նրանք մեծ կենտրոններ էին ամբողջ Հայաստանի համար, բայց մենք միայն Բագրատունի թագավորության սահմաններում, այն էլ զլխավորապես Շիրակում ենք տեսնում քաղաքակրթության աշակերտած ժողովրդի գործերը, ժողովրդի, որ կույր ընդօրինակող չէր, այլ ուներ իր սեփական աշխատանքը, իր անհատական վերին աստիճանի զարգացրած ինքնուրույնությունն էր մտցնում իր յուրացրածի մեջ:

Այսպես ահա, երկար ժամանակ ամեն տեսակ հնարավորություն, հրապույր կար, որ հայ աշխարհի բոլոր բաժան-բաժան մասերը, վերջապես, միանան, իրար հետ կապվեն Շիրակի կենտրոնածիզ հովանու տակ: Բայց այդպես չեղավ: Բագրատունիները, չնայած իրանց բոլոր ընդունակություններին, չկարողացան նույնիսկ երկու հարյուր տարի լրիվ անցկացնել թագավորական գահի վրա: Աշոտի տնկած սերմը հաղիվ կարողացավ վաղանցուկ հյուսիսից բացված մի ծաղիկ դառնալ, որ իր բուրմունքը հաղորդեց մեր պատմության մի քանի էջերին և չորացավ, դուրս չպրծվելով կյանքի անապատի մեջ:

Ահա այս իրողությունն է, որ ամենից շատ տանջում է այցելուին Անիում, երբ նա, վերջացնելով իր շրջագայությունը, սկսում է ամփոփել իր տպավորությունները, փորձում է թափանցել ավերակների, այսպես ասած, փրկիստփայության մեջ: Յուրաքանչյուր քար, յուրաքանչյուր հիշատակ անբարբառ, լուռ ու համբաստում է մտքիդ, որ այստեղ, նախքան այս ավերակները, մի ահեղի անարդարություն է կատարվել, մի ոճիր: Նրա զոհը փոխած է այստեղ, մեր ոտների տակ: Իսկ ո՞ւր է դահիճը:

Ասել թե Բագրատունիները չհասկացան միության, ամբողջության գաղափարը, ասել մանավանդ, թե նրանք ոչինչ

չեն արել այդ գաղափարը տարածելու համար,—կլիներ մի մեծ անարդարություն: Աշոտը միության սկիզբը դրել էր, նրա առաջին հաջորդները գնացին այդ ուղղությամբ: Բայց այդ հաջորդները բախտ չունեցան: Հենց առաջին քայլերում, երբ Բագրատունյաց գահը չէր էլ ամրապնդել, երբ նա նույնիսկ մշտական մայրաքաղաք էլ դեռ չունեի, երկիրը տակն ու վրա արին եղբայրասպան պատերազմները: Որքա՞ն դժբախտություն, որքա՞ն արյուն ու ավերում տեսավ հայոց աշխարհը, մինչև Բագրատունիները համոզվեցին, որ ընդհանուր պետական գաղափարը չէ կարելի իրագործել և ստիպված եղան ամփոփվել իրանց կալվածների սահմաններում, բավականանալ տեղային, մասնավոր անկախությամբ:

Ո՞վ էր մեղավորը: Դարձյալ Ֆեոդալական սիստեմը, Հայաստանի միության, ուժեղացման հին թշնամին: Ոչինչ չկարողացավ խելքի բերել նրան, քաղաքական փոթորիկները, տկարության, անհամաձայնության բոլոր, բոլոր արհամիրքները եկել ու անցել էին երկրի վրայով, առանց խրատական նշանակություն ունենալու: Հին, պատմական իմաստուն ասացվածք է, թե հայերը անմիաբան ազգ են: Դա նշանակում է, որ Հայաստանում պետական կազմակերպությունը երբեք Ֆեոդալական սիստեմից հեռու չէ գնացել: Բագրատունիների ժամանակ նվրոպայում անգամ պետական միության գաղափարը դեռ չէր իրականացել. ինչպե՞ս մեղադրել հայերին, որոնց հայրենիքը դեռ ամենահին ժամանակներում, դեռ ուրարտացիների ժամանակ, գավառական մանր թագավորությունների մի ցանց էր ներկայացնում: Այդ հիմքը մնաց անխախտ, ծծվեց ազգի արյունի մեջ: Ֆեոդալական դրությունը դեռ երկրի թուլություն չէր կարող լինել այն դեպքում, երբ ուժեղ էր կենտրոնական իշխանությունը, երբ թագավորը կարողանում էր ճնշել, հարկադրել տեղական իշխաններին, հնազանդության մեջ պահել նրանց: Այդպիսի ուժեղ կենտրոն Հայաստանը շատ քիչ է ունեցել, այդ պատճառով էլ նրա պատմությունը, համարյա սկզբից մինչև քաղաքական ինքնուրույն կյանքի վերջը, ներքին թուլության, բաժան-բաժան կացության, տեղական շահերի անհաշտության պատմությունն է:

Չունենալով ընդհանուր շահերի ամուր գաղափար, Հայաստանը խախտու, երբեմն գրության մեջ ընկավ մանավանդ Արշակունի հարստության վերջանալուց հետո, մի հարստություն, որ, չնայած իր տկար ու անկատար կողմերին, այնուամենայնիվ մի և ընդհանուր հայրենիքի գաղափարն էր մարմնացնում: Երկիրը կեղեքվում էր արտաքին թոնավորների ձեռքին և չէր կարողանում հավաքել իր դիմադրական ուժերը: Իսկ նրա ուժերը այնքան էլ արհամարհելի չէին: Քաջություն և վարչական ընդունակություն չէր պակասում հայերին: Նրանց ամբողջ գծախտությունն այն էր, որ Ֆեոդալական կազմակերպությունը կտրատել, մանրացրել էր հայրենիքի շահերը, նեղ, գավառական կերպարանք էր տվել նրանց: Չգտնելով իր հայրենիքում պետական գործունեության ընդարձակ ասպարեզ, հայը հեշտությամբ կտրվում էր իր գավառական նեղ, փոքրիկ, նույնիսկ չնչին շահերից և գնում էր հեռու, օտար երկնքի տակ իր ընդունակությունների համար գործադրություն որոնելու:

Բյուզանդիան շատ լավ սովորել էր շահագործել հայերին իբրև զինվորական ուժ: Իր երկրի անկարգ ու անկերպարան պայմանների մեջ էլ հայը գիտեր քաջությամբ պատերազմել: Բավական էր հայ զինվորական խմբերին տալ որոշ կազմակերպություն, միություն, և նրանք բյուզանդական գործը գեղեցիկ կերպով պաշտպանում էին Ասիայի և Եվրոպայի դաշտերում:

Իր ընդարձակ պետական կազմակերպությամբ, իր ճոխ ու բարձր պաշտոններով Բյուզանդիան ավետյաց երկիր դարձավ հայ ռազմիկ տարրերի համար: Դարերի ընթացքում այստեղ էին թափվում ցեղի առաջավոր ուժերը: Այնտեղ զինվորությունը բաց էր անում նրանց առջև փառքի և իշխանության բոլոր աստիճանները, մինչև կայսերական գահը: Բյուզանդական բանակի շարքերը լցվեցին հայերով. անվանի, քաջ զորավարներ դուրս եկան նրանցից: Արքունիքում նրանք բռնեցին հրամայող դիրք, կայսերական գահը զրավեցին, ամբողջ զինաստիա հիմնեցին: Այդ բախտավորները, եթե բախտ կա և կայսերական գահերի վրա, շրջապատված էին փառքով, շլացուցիչ շքեղությամբ: Ահագին պետության

մեջ ամեն ինչ հնազանդվում էր նրանց: Բայց և այդպես, չկանոնաց մեջ մեկը, որ իրական օգուտ հասցրած լինի իր թուն հայրենիքին, որ իր ամենակարող ուժի, իր ընդունակության մի մասն էլ նվիրած լինի իր ազգակիցներին:

Ընդհակառակն, հայերը Բյուզանդիայում հիմնավորապես մոռանում էին իրանց հայությունը, հաճախ ուղղում էին իրանց թույլ ու խեղճ ազգակիցների դեմ բյուզանդական օրթոդոքսության զենքերը: Այն ժամանակներից է, երևի, որ բացարձակ ճշմարտություն դարձավ թե հայը օտար երկնքի տակ, օտարի ծառայության մեջ, կարող է նույնիսկ հանճար ցույց տալ, իսկ իր ազգի համար լինել միայն հեռվից հնչող մի հռչակավոր անուն և ուրիշ ոչինչ:

Դա դարձյալ միևնույն գրությունն էր բնորոշում, այն, որ հայը իր երկրի մեջ իր ընդունակությունները գործադրելու և վարձատրվելու ասպարեզ չէր գտնում, որովհետև այնտեղ համայնականություն չկար, որովհետև Ֆեոդալական սիստեմը ամեն ինչ մանրացնող էր, սեփական շահերի, մանրմունքի, միմյանց հակառակ, թշնամի հաշիվներ էր...

Ահա այդ մանրող ուժը դուրս եկավ և Բագրատունիների գեմ, բերելով իր հետ, ինչպես միշտ, կոխի, ատելություն, քայքայում: Ընդհարման առաջին սարսափելի ծանրությունը վիճակված էր կրել Աշոտի որդուն և անմիջական հաջորդին՝ գծախտ Սմբատին, որի ողբերգական կյանքի հետ մենք փոքր-ինչ ծանոթացանք Շիրակավանի մոտով անցնելիս: Հարվածը գալիս էր ընտանի թշնամուց, հարազատ քրոջ որդուց:

Ֆեոդալական կազմակերպության մեջ մի տոհմի ուժեղությունը կարող էր նշանավոր աստիճանի հասնել, եթե հաջողվում էր միանալ հարևան տոհմերի հետ: Այդ միությունը սովորաբար գլուխ էր գալիս բարեկամության կապերով: Արդեն տեսանք, որ Աշոտը, իր զարմանալի շենքը հաջողությամբ կառուցանելու համար, խնամիացավ Վասպուրականի Արծրունիների հետ: Այդ խնամիությունը օգտակար հանդիսացավ, բայց ոչ երկար ժամանակով: Ֆեոդալական սկզբունքը կարող էր մոռանալ նույնիսկ ազգակցական կապերը: Գագիկ Արծրունին, Աշոտի թոռը, միացավ Ատրպատականի

Յուսուֆ ոստիկանի հետ և կատաղի կռիվ հայտարարեց իր քեռու դեմ: Հետևանքը հայտնի է: Մմբատը նահատակվեց սոսկալի տանջանքներով, իսկ Գագիկը թագ ստացավ Բաղդադից: Եվ այս պառակտումը տեղի էր ունենում Աշոտի թագավորելուց հազիվ 20—21 տարի անցած:

Յուսուֆը իմացավ գործի դարձնել ֆեոդալական անմիաբանությունը: Տեսնելով որ Բաղդադի արքունիքի հաճությամբ կազմված հայկական թագավորությունը աշխատում է մեծանալ, ընդհանրական, ուրեմն և անհամեմատ ուժեղ դառնալ, նա շտապեց բաժանության կռվախնձորը գլորել հայ իշխանների մեջ: Գագիկը ամենայն հեշտությամբ թագ ձեռք բերեց: Բայց պատմությունը կարող է փոքր-ինչ խնայել այս անունը իր դատաստանի առաջ գոնե այն պատճառով, որ նա, թագավորելուց հետո էլ շարունակեց իր անզուսպ կատաղությունը Բագրատունիների դեմ: Վերջում նա զղջացող շարագործ դարձավ, և Վասպուրականի թագավորությունը շարունակեց իր գոյությունը, այլևս չխառնվելով Շիրակի գործերի մեջ:

Սակայն Յուսուֆի պես մարդը շատ քիչ պիտի վախենար այս հանգամանքից: Գագիկ Արծրունու նման անհատներ շատ էր տալիս հայ ֆեոդալականությունը: Սմբատի հաջորդ Աշոտ Երկաթը, թագավորությունը ժառանգելուց մինչև մահ, ամբողջ 14 տարի, կռվեց Յուսուֆի և մանավանդ նրա անբարոյականացրած հայ նախարարների դեմ, որոնք չէին ուզում ճանաչել նրա իշխանությունը: Նկատենք, որ այդ նախարարներից մեկը Աշոտի աներն էր:

Երկու Բագրատունիները կռվում էին հերոսաբար, բայց չկարողացան զսպել ֆեոդալականությունը: Հաղթվողը դարձյալ պետական միության գաղափարն էր: Եվ Բագրատունիները հարկադրված եղան ձեռք վերցնել այդ գաղափարից՝ նրանք, Արծրունիների նման, ամփոփվեցին իրանց կալվածների սահմաններում: Դա հարցի ամենալավ, թեև ոչ արմատական լուծումն էր: Գոնե տանը, իրանց սեփական գավառում, Բագրատունիները ազատ էին ցույց տալու, թե ինչ աշխարհաշեն մեծագործությունների են ընդունակ:

Այդ ինքնամփոփման ժամանակի առաջին գործն է մեք

Անին, ուր Աշոտ Ողորմածը 961 թվականին թագավոր օծվեց: Այդ օրից մայրաքաղաք Անին սկսեց հեթաթական հերոսի նման օրերով աճել, դարգանալ ու զարգարվել: Բախտավոր սատղի տակ էր նա իբրև խնամքի ու հոգածության առարկա և հենց այդ պատճառով էլ ցավեցնում է նա իբրև ոչ այնքան բախտավոր քաղաքական կենտրոն: Հազիվ 7 տարի ապրել էր իբրև մայրաքաղաք, և ահա պառակտումը մտավ և Բագրատունիների տունը, Շիրակի թագավորությունը մանրացավ նույնիսկ իր սահմանների մեջ. Անիի քթի տակ մի ախոյան բարձրացավ, մի նոր մայրաքաղաք:

Եթե մեր այս Միջնաբերդը շատ բարձր լիներ, գոնե Ալաջայի շափ բարձր, մենք այստեղից դեպի հյուսիս-արևմուտք նայելով կտեսնենք այն ահեղ բարձրավանդակները, որոնց վրա իր անառիկ ամրություններով նստած է հռչակավոր Կարսը: Այդ ամրությունների կենտրոնը Ախուրյանի աջ ափին ցցված ժայռոտ բարձրությունն է, այժմ Միջնաբերդը, իսկ այն ժամանակ բուն Կարս ամրոցը, հարավ-արևելյան բաց, դաշտային կողմից շրջապատված հաստ պարիսպներով:

Այդ բերդն էր, որ պառակտումը պաշտպանեց իր հզոր կրծքի մեջ: Բագրատունիների ամենաթույլ, հիվանդոտ կողմն էր գահաժառանգության հարցը: Արևելքում շատ քիչ է պատահում, որ գահի շուրջը կռիվներ չլինեն թեկնածուների մեջ: Աշոտ Առաջինը, ինչպես երևում է, չէր կարողացել հաստատուն մի կարգ որոշել, թե ինչպես պիտի իր ժառանգները հաջորդեն իրար: Եվ երբ նա փակեց իր աչքերը, վեճ ու գծություն ընկավ նրա եղբայր Աբասի և նրա որդի Սմբատի մեջ: Ո՞վ պիտի ժառանգեր՝ արքայեղբայրը, թե արքայորդին: Վեճը, որ սպառնում էր շատ վտանգավոր կերպարանք ընդունել, խաղաղ լուծում ստացավ այն մտքով, որ գահաժառանգությունը պիտի լինի ուղիղ գծով, այսինքն՝ որդուց որդի: Բայց առաջին պայքարը վերջինն էլ չդառավ: Օրինականությունը շատ ամուր չէր Բագրատունի տոհմի մեջ: Աշոտ Ողորմածի եղբայր Մուշեղը չկամեցավ հպատակ մնալ իր եղբորը և Կարսում առանձին թագավորություն հիմնեց: Աշոտը չդիմադրեց, նա գոհ էր, որ այդպիսով վերջ են գտնում ժառանգական վեճերը:

Նրա խաղաղասեր քաղաքականությունը գոնե աղետի առաջն առավ. Կարսի թագավորությունը գոհ մնաց իր վիճակով, չթշնամացավ Անիի թագավորության: Ընտանեկան երկպառակությունները վերջանում էին, բայց այդ չէր նշանակում, թե քաղաքական շահերն էլ խնայված են մեջտեղ:

Այստեղից այնտեղ՝ Անիից Կարս, հազիվ 50—60 վերստ տարածություն լինի: Երկու քաջ մի պետության համար: Եվ երկու քաջի վրա՝ բաժանում, քայքայում: Ֆեոդալի հակացողությունը տարածության վերաբերմամբ էլ տարօրինակ էր. նա չէր իմանում, որ տարածությունը պետության համար շունչ է, նրա փառասիրական տենչն էր, որ գիտեր բավականանալ նույնիսկ Կարսի փոքրիկ, մանրադիտական թագավորությամբ:

Որքան նեղ, ճնշող է մեր հին իրականությունը: Միևնույն մեծ լեռնադաշտի երկու, համարյա հանդիպակաց ծայրերում, միևնույն գետի ափին կանգնած երկու մայրաքաղաքներ: Նրանք իրար շփեցին, իրար չկործանեցին զենքով: Շնորհակալություն և այդքանի՜ համար: Բայց մի՞թե կործանումը միայն զենքով է կատարվում: Իսկ առանձնացումը, իսկ իրարից անտարբերության, սառնության խոր խրամատներով անջատվելը: Չկար զենքի թշնամություն, բայց չկար էլ զենքի բարեկամություն: Միևնույնը չէ՝ սա երկու դրակից, արյունակից, միևնույն վիճակին ենթարկված հարևանների համար: Բնությունից անառիկ դիրք ստացած Կարսը պիտի լրացներ Անիի կես-դաշտային դիրքի պակասությունները, պիտի նրա պատվարը, հզոր մարտկոցը դառնար: Սակայն նույնիսկ օրհասական վտանգի, կործանման ռոպեներին էլ նրանք իրար ձեռք չմեկնեցին:

Կարևոր է որ Կարսի թագավորությունը նույնիսկ կուլտուրական տեսակետից էլ Շիրակի լրացումը չդարձավ:

Կարսը Շիրակին չէր պատկանում. նրա գավառը ուրիշ անուն ուներ՝ Վանանդ: Եվ կարծես աշխարհագրական բաժանումը կուլտուրական բաժանում էլ է եղել: Վանանդը Շիրակ չէ իր հին հիշատակարաններով: Միևնույն տոհմի հատվածն էր այստեղ թագավորում մոտ մի դար. երկու սահմանակից գավառները միևնույն երկիրն են իրանց բնու-

թյամբ, աշխարհագրական հանգամանքներով: Կարսի թագավորները շունեոր մարդիկ չէին: Բայց և այդպես, մեծագործության հիշատակներ նրանցից մեզ չեն մնացել: Չէ կարելի ասել, թե ժամանակն է անհետացրել նրանց բոլոր գործերը, որովհետև ժամանակակից պատմագրությունների մեջ էլ մենք չենք տեսնում, որ նրանք մի բան արած լինեն:

Բացառություն է միայն Կարսի հոյակապ Մայր եկեղեցին, որ շինել է Աբաս թագավորը և այսօր ուսաներին է պատկանում: Բայց ուշադրություն դարձրեք թե երբ է նա շինված: Նախքան թագավորության պառակտումը: Աբասը Աշոտ Ողորմածի և Մուշեղի հայրն էր: Բագրատունիները դեռ մշտական մայրաքաղաք չունեին: Աշոտ Առաջինը թագավորեց Բագարանում, Սմբատը՝ Շիրակավանում, իսկ Աբասը մայրաքաղաք ընտրեց Կարսը և այդտեղ շինեց եկեղեցին:

Կարսը, ուրեմն, ավագություն ուներ, իբրև մայրաքաղաք, Անիի վերաբերմամբ: Իր նախապատվությունը նա չկամեցավ զիջել Անիին. և եթե Աշոտ Ողորմածը թագավորեր այնտեղ, իր հոր քաղաքում, իր հոր հոյակապ եկեղեցու մոտ, գուցե և Մուշեղը չկարողանար անջատ գահ հաստատել: Նրան, անշուշտ, շատ օգնել է այն, որ հայրական խանգարված մայրաքաղաքն էր նորից թագավորանիստ դարձնում:

Այսպես թե այնպես, Կարսի բաժանված թագավորությունը, դատելով մեզ մատչելի բոլոր հանգամանքներից, միանգամայն ամուլ էր թե իբրև քաղաքական և թե իբրև կուլտուրական ոճ:

Բնությունը, կարծես, միայն Շիրակի հողն էր ընտրել՝ Բագրատունիների և առհասարակ հայ ցեղի բարձր ընդունակությունները բեղմնավորելու համար:

Բայց Կարսը Անիից բախտավոր էր: Անին միայն 84 տարի մնաց թագավորանիստ, իսկ Կարսը՝ 120 տարի (հաշվելով և Աբաս I-ի թագավորության տարիները): Եվ այն ժամանակ, երբ Բագրատունիները անհետացել էին Անիից, Կարսում դեռ մի քանի տարի էլ Մուշեղի ժառանգն էր թագավորում:

Նայում եք այդ երկու քաջի իրականության և ձեր աշ-

քերի առջև իր ամբողջ հասակով կանգնում է այն մեծ ոճի-
րը, որ քարուքանդ արեց այս բոլոր կողմերը:

Նա կործանում բերեց: Կործանումը երկար ժամանակից
ի վեր էր պատրաստվում: Հայ ֆեոդալականությունը դեռ
կարող էր բաժան-բաժան ապրել, թագավորել, տոշորվել
փառամոլությունից, քանի որ Հայաստանի տերը թույլ
կազմալուծվող խալիֆայությունն էր: Բայց նրա դժբախտու-
թյունը հեռու չէր: Պատմության անողոր օրենքով թույլերը,
կենսունակություն չունեցողները դուրս պիտի նետվեին աս-
պարեզից: Դա Բաղդադի արքունիքի ճակատագիրն էր: Նրա
անկման հետ երևան են գալիս նոր հանգամանքներ. Արև-
մուտյան Ասիայում դարձյալ կազմակերպված ուժն է գլուխ
բարձրացնում: Բյուզանդիան գերակշռող է հանդիսանում
իբրև տիրապետող: Սա առաջին ահավոր վտանգն էր հայ
ֆեոդալականության համար: Հեռավոր արևելյան երկրներից
այդ վտանգի առաջն էր գալիս մի ուրիշը, ավելի անողոր,
ավելի ահավորը:

Երկուսն էլ պիտի իրար հանդիպեին, իրար հետ ընդ-
հարվեին Հայաստանի հողի վրա: Եվ նրանց մի շունչը բա-
վական պիտի լիներ, որ հայ ֆեոդալականության ստեղծած
թագավորությունները տապալվեին խաղաթղթերից շինած
տնակների նման:

Վերևում ասացինք, որ Աշոտ Բագրատունին բաց արավ
մեր պատմության մեջ մանր, գավառական թագավորու-
թյունների շրջանը: Այստեղ ասենք, որ XI դարի առաջին կե-
սում, երբ մեր հիշած երկու վտանգները հետզհետե աճում,
մեծանում էին, Հայաստանում, բացի մեզ ծանոթ երեք թա-
գավորություններից (Վասպուրական, Շիրակ, Կարս) կային
և Սյունյաց, Աղվանից և Լոռու լեռնային թագավորություն-
ները: Թիվը բավական է, որ դուք ասեք, թե թագավորու-
թյունների մի ամբողջ ցանց կար: Սակայն ցանցը մի որոշ
կապ է ենթադրել տալիս իր բաղկացուցիչ մասերի մեջ,
մինչդեռ դուք գիտեք, որ ոչինչ միացնող կապ չկար մեր
այդ թագավորությունների մեջ: Նրանք նստած էին իրանց
փառահեղ առանձնության մեջ: Եկավ արտաքին ուժը և ա-

մեն մեկին առանձին-առանձին, զանազան ժամանակնե-
րում, խորտակեց:

Առաջին ընկնողը Վասպուրականն էր: Արևելքից առա-
ջացող վտանգը, սելջուկյան արշավանքը, եկել կանգնել էր
նրա դիմաց: Ի՞նչ անել: Ֆեոդալականությունը մահվան
րոպեին էլ հավատարիմ մնաց իր ավանդական ոգուն: Տես-
նելով որ անկարելի է սեփական ուժերով դիմադրել վտան-
գին, Արծրունիների գահը շտապեց ընկնել Բյուզանդիայի
գիրկը: Դա արևմտյան վտանգն էր, բայց այնքան սարսա-
փելի չէր միամիտ հայ իշխողների համար, քանի որ երևան
էր գալիս զինված ոչ թե սրով, այլ նենգավոր քաղաքակա-
նությունը: Կյանքի պատուհաս չէր բերում այդ վտանգը և
Արծրունիները կարծեցին թե մեծ իմաստությամբ են գոր-
ծում իրանց ազատության համար մի առուծախ առաջարկե-
լով բյուզանդացիներին: Վասպուրականը փոխանակվեց Սե-
բաստիայի հետ: Արծրունիները իրանց ժողովրդի, իրանց
գահի հետ վեր կացան, գնացին իրանց գնած տեղը: Նրանք
չգիտեին, որ կարելի է ժողովուրդ գաղթեցնել, բայց չէ կա-
րելի հայրենիք փոխադրել մի տեղից մյուս տեղ, թագով
պսակված գլխի մեջ չկար այն հասկացողությունը, որ թագը
ուրիշ ազգերի ողորմությամբ չէ կարելի պահել, այլ պետք
է հենված լինի սեփական ուժի վրա:

Սեբաստիա գնացին վասպուրականցիները ոչ թե ա-
զատվելու, այլ կույ գնալու համար: Բյուզանդիան գրավեց
հայ ֆեոդալներին իր ներսը և արագ մարսեց նրանց:

Այդ միջոցը իր հեշտությամբ, իր օգտավետությամբ
այնքան ձեռնտու էր բյուզանդականության, որ Վասպուրա-
կանից հետո հերթը հասավ Շիրակին:

Այստեղ դեռ այնքան ահարկու չէր սելջուկյան վտանգը,
ուստի ուրիշ տեսակ հող պատրաստվեց խաղաղ նվաճման
համար: Շիրակում սաստիկ էր բյուզանդական ազդեցու-
թյունը: Հունական կրթությունը շատ տարածված էր հայ
ազնվականության մեջ: Թագավորական տոհմն էր, կար-
ծեմ, որ օրինակ էր տալիս: Երկիրը շարունակ շփման մեջ
էր Հայաստանի բյուզանդական բաժնի հետ, իսկ Կ. Պոլիսը
իբրև ճոխություններով գրավում էր թե իշխաններին, որոնք

այնտեղ վայելչություն և պատիվներ էին որոնում, թե վաճառականներին: Շատ լավ ուսումնասիրած լինելով հայ ֆեոդալների թույլ կողմերը, Կ. Պոլսի արքունիքը սիստեմ էր դարձրել նրանց զանազան պատվավոր տիտղոսներով, ընծաներով սիրաշահելու: Այդ միջոցները իրանց արդյունքը տվին, հունասեր, նույնիսկ հունամոլ կուսակցություն էր կազմվում մանավանդ ազնվական դասակարգի մեջ:

Միակ արգելքը, որ կանգնած էր հայերի և հույների մեջ, կրոնական տարբերությունն էր: Բայց դա չէր կարող այնքան անհաղթելի մի արգելք հանդիսանալ քաղաքական գործի մեջ: Բյուզանդականությունը նույնիսկ առժամանակ թողեց իր ֆանատիկոսակուն ատելությունը դեպի հայոց եկեղեցին, կրոնական վեճերը առժամանակ դադարեցին: Ճարպիկ ու ճարտար կերպով պատրաստվում էր խաղաղ նվաճման ծրագիրը: Հույները այնպես էին կարողանում զսպել իրանց, որ հայոց կաթողիկոսին նույնիսկ թույլ տվեցին ջրօրհնի արարողությունը կատարել իրանց բանակում:

Իսկ հայ ֆեոդալականությունը մեծ եռանդով նպաստում էր հունական կլանող ծրագրին: Գազիկ I-ից հետո Անիի թագավորությունը երկարատև օրհասի մեջ ընկավ: Նա նորից ճեղքվեց ժառանգական վեճերի պատճառով, ավելի ևս մանրացավ:

Բագրատունիների և ամբողջ Շիրակի դժբախտությունն էր, որ Գազիկից ծնվել էր առաջ Հովհաննես-Սմբատը, ապա Աշոտը: Սովորություն է, որ թագավորների անդրանիկն է գահը ժառանգում, ինչ էլ լինի նա: Հովհաննես-Սմբատին, այդ դանդաղաշարժ, անընդունակ, վախկոտ, բայց գրասեր և հոգեւոր մարդուն մենք ճանաչում ենք: Նրա եղբայր Աշոտը՝ կատարյալ հակապատկեր, մի քաջ ու եռանդոտ Բագրատունի: Նա չկարողացավ հաշտվել այն դառն իրողության հետ, որ լուկ ծնունդի իրավունքով պիտի թագավորե իր անընդունակ եղբայրը: Ժառանգական վեճ բացվեց, որ շատ սուր կերպարանք ստացավ: Աշոտը նույնիսկ աններելի միջոցների դիմեց, մինչև անգամ փորձեց սպանել իր եղբորը: Ոչինչ, սակայն, չօգնեց: Անընդունակությունը չղիջեց երկրի օգտի համար: Եղբայրների մեջ, վերջապես, կայացավ հաշ-

տությունը, հիմնված երկրի բաժանման վրա: Հովհաննես-Սմբատը թագավորում է Անիում, իսկ Աշոտը—գրսի աշխարհում: Ֆեոդալականությունը վերջիվերջո քաղաքի թագավորություն էր մտցնում Հայաստանի մեջ. մի թագավոր, որին պատկանում էր մի հատ քաղաք իր շրջակայքով: Սակայն դա ժամանակավոր դրություն պիտի լիներ. որոշված էր որ Հովհաննես-Սմբատի մահից հետո Անիի ամբողջ թագավորությունը պիտի անցներ Աշոտին:

Եվ այդ տխուր ժամանակներում սելջուկյան վտանգը ցույց տվեց իր ահավոր դեմքը Անիի վախկոտ թագավորին: Նա դեռ նվաճումներ չէր անում այս կողմերում. հայտնվեց Շիրակի սահմանակից մի գավառում, ապա դարձրեց իր արշավանքը դեպի Վասպուրական, Միջագետք: Բայց եղածն էլ բավական էր մի Հովհաննես-Սմբատի համար: Դժբախտաբար, արևմտյան վտանգն էլ դինված երևան եկավ Շիրակի սահմանների մոտ: Վասիլ կայսրը արշավում էր դեպի Վրաստան: Վախեցած Սմբատը, ինչպես՝ գիտենք, շտապեց իր չաղ մարմնի համար հանգստություն ապահովել, լենին նվիրելով կայսրին:

Այս կերպարանքով է հասել մեզ պատմական դառն իրողությունը: Բայց մենք չպիտի կարծենք, թե այսքան հեշտ կերպով կարող էր կատարվել այդ ստոր վաճառքը, առանց հույների մասնակցության և գիտության: Մի թագավոր, որքան էլ նա Հովհաննես-Սմբատ լիներ, չէր կարող այդպիսի գործ կատարել առանց երկար պատրաստության, առանց ճնշումների: Կար նրա համար էլ զսպանակ՝ կրոնասիրությունը, որ այնքան հիշատակներ է թողել Հռոմոսում: Եթե պետական գաղափար չկար, պետք է լիներ կրոնասեր մարդու երկյուղը հոգու պատասխանատվության մասին: Ո՛չ, Անիի վաճառքը միայն թագավորի վախկոտության հետևանքը չէր կարող լինել: Այդ վախկոտությունը այն պարարտ հողն էր, որի վրա գործել սկսեցին բյուզանդական ոսկիները, միացած հայ ֆեոդալների արարքների հետ:

Հունամոլության ամենաածայրահեղ մի ներկայացուցիչ մեծ ազդեցություն և նշանակություն ուներ Հովհաննես-Սմբատի արքունիքում: Դա Վեստ-Սարգիսն էր:

Կարոտ էլ չէ այս մարդը որևէ հանձնարարականի. հայտնի պատմության փոքրիշատե ծանոթ հայի համար դա մի զգվելի հասկացողություն է: Մի դավաճան, որ Անիի թագավորության հոգեհանը հանդիսացավ: Այստեղ կարելի է այդ ատելի տիպի առանձնահատուկ մի քանի գծերը բնորոշել, որպեսզի ընթերցողը իմանա, թե դա մի բացառիկ հրեշ չէր, գլխովին շարության և ավերանքի համար ստեղծված:

Վեստ-Սարգիսը մի ազդեցիկ իշխան էր, խոշոր կալվածատեր Շիրակում: Նրան սյունեցի են անվանում: Բայց այդ անունը լուկ նրա ծագումը պիտի հայտնե. նա Սյունիքում չէր ապրում, ամուսնացած էր Գրիգոր Մագիստրոսի ազգյա հետ և, այդպիսով, բարեկամացած էր ժամանակի իշխանական ամենաազդեցիկ տոհմի, Պահլավունիների հետ: Այդ ամուսնությունը նրան հայտնի դիրք պիտի տար այս կողմերում:

Սակայն Սարգիսը առանց ամուսնության էլ դիրքի տեր մարդ էր: «Վեստ» բառը, որ անբաժան կպած է նրա տխուր անվան, հունական պաշտոնի, աստիճանի անուն է: Նա ցույց է տալիս, որ Սարգիսը պարզապես մի բյուզանդական պաշտոնյա էր: Այդ, իհարկե, չէր խանգարում, որ Սարգիսը մի ջերմեռանդ, կրոնասեր հայի համբավ էլ վայելե: Եվ իրավ, Սամվել Անեցին գրում է. «Մեծապատիվ Վեստն Սարգիս՝ զկնի բազում շինուածոց բերդից և եկեղեցեաց, զհրաշալի զվանս զհծկոսն շինեաց, պայծառ պսակավ զարդարեալ զքաւարանն»: Այսօր էլ կա հծկոնքի վանքը, որ Անիից շատ հեռու չէ. և նրա արձանագրություններից մեկի մեջ այսօր էլ խոսում է բյուզանդական շատ շողոքորթված, իր դիրքով և աստիճաններով հպարտացող և շլացնող պաշտոնյան: Նրա մասին ասված է. «Որդիացեալ և սիրելի ճորտ երից թագաւորաց Հոռոմոց, առեալ երից պատիւ. անթիպատ պատրիկ, վեստ և դուկ արեւելից»:

Բյուրոկրատի մի տիպիկական դեմք: Մենք փաստեր չունենք պնդելու, թե Սարգիսը իրապես պաշտոններ է վարել բյուզանդական ծառայության մեջ: Կարող է այնպես էլ հղած լինել, որ այդ պատիվները, այդ աստիճանները նա ստացել է առանց իրական ծառայությունների, լուկ իբրև

շլացնող վարձատրություն: Այսպիսի օրինակներ մենք ունենք: Բյուզանդական կառավարությունը իր իրավասության տակ չգտնվող երկրների նշանավոր մարդկանց շնորհում էր պետական տիտղոսներ, ինչպես այժմ շքանշաններ են շնորհվում: Հայտնի է մեզ, որ Վահրամ Պահլավունի մեծ իշխանն էլ ուներ անթիպատ պատրիկի տիտղոսը:

Բայց այս հարցը շատ էլ կարևոր չէ: Կարևորն այն է, որ Սարգիսը տոգորված էր բյուզանդական բյուրոկրատիայի ոգով: Սրա շատ բնորոշ ապացույցներն են հծկոնքի արձանագրության այն բառերը, որ վերևում արտագրեցինք: Այդպես քծնել իրանից բարձրի առաջ, այդպես պարծենալ կայսերական դոնից ստացած շնորհներով կարող էր միայն բյուզանդական բյուրոկրատը: Հայտնի են այդ դասակարգի հատկությունները¹. սաստիկ ընչասիրություն, հարստանալու, բարձր դիրքեր գրավելու անհագ ծարավ, կաշառասիրություն, եսամոլություն: Առհասարակ, հունական կրթություն ստացած հայ իշխանները շատ լավ յուրացրել էին բյուզանդական բյուրոկրատիայի քաղաքավարական ձևերը. նույնիսկ հաճույական-շողոքորթական արտահայտություններն էլ, որոնք ամենաէական մասն էին կազմում բյուզանդական կառավարող շրջանների աշխարհավարության մեջ. ընդօրինակվում էին հայերի կողմից ստրկաբար: Բավական է համեմատել Վեստ-Սարգիսի աներ Գրիգոր Մագիստրոսի նամակները բյուզանդական շատ տիպիկական բյուրոկրատուսումնական Միխայիլ Պսելլի նամակների հետ. նույն ոճը, նույն դարձվածքները, նույն ոգին:

Եվ ահա բյուզանդական հոգով մկրտված այդ հայ բյուրոկրատը, Վեստ-Սարգիսը, ազդեցություն ուներ Անիի արքունիքում: Այնտեղ նա առաջին մարդն էր, այդ բանի ապացույց է և այն, որ Հովհաննես-Սմբատի մահից հետո նա էր տերության խնամակալը: Պետք է երևակայել, թե բյուզանդականության այդ գործիքը ինչպես էր փաթաթել խեղճ վախկոտ թագավորին իր ցանցերի մեջ, ինչպես էր համոզում նրան, թե փրկությունը հունաց քրիստոնյա թագա-

¹ См. «Безобразков», Византийский писатель Михаил Пселл, М., 1890.

վորին անձնատուր լինելն է: Առանց եկեղեցու աջակցության նա հազիվ թե կարողանար գլուխ բերել բյուրոկրատական ճարպիկությամբ հյուսած ինտրիգը: Եվ նրա աջակիցը հանդիսացավ ժամանակի հայոց կաթողիկոսը, Պետրոս, որ մեծ հարստություններ ուներ, բայց դարձյալ ընչաքաղց էր, մանավանդ փառամուր:

Եկեղեցու պետի հաճությամբ բուրորվին թուլացրած պիտի լինի Հովհաննես-Սմբատին: Փառավոր կաթողիկոսը ոչ միայն չընդդիմացավ Անին նվիրելու և Շիրակի թագավորության վերջ դնելու մտքին, այլև ինքը իր ձեռքով տարավ այդ թուղթը, հանձնեց Վասիլ կայսրին: Հունական բանակում, հասկանալի է, բաց գրկով պիտի ընդունեին այդ վեհափառ զեսպանին. չէ՞ որ թագավորությունը գնելուց հետո հերթը պիտի գար եկեղեցուն: Կայսրը շատ շողոքորթեց Պետրոսի փառասիրությանը, անձամբ ներկա գտնվելով ջրօրհնեքի արարողության: Նա նույնիսկ դեմ էլ չէր, որ տարածվի այն առասպելը, թե երբ Պետրոսը հայոց մեռոնը կաթեցրեց գետի մեջ, գետը կանգ առավ: Այսպիսով, այնքան մի անսպասիվ պատգիրակություն կատարած հայոց կաթողիկոսը դեռ վարձատրվեց պատմության մեջ «Գետադարձ» տիտղոսով, որ հրաշագործ սրբություն է ցույց տալիս...

Ահա ինչ հանգամանքների մեջ կատարվեց քաղաքական զվճելի դավադրությունը: Նա պատրաստվում էր վաղուց, նա հայկական իրականության, սիստեմի հետևանքն էր: Եվ դարգացավ, խոսքից իրողություն դարձավ էլի նույն գործոնների, նույն հանգամանքների ստիպմամբ:

Ապօրեն թուղթը դեռ չէր նշանակում, թե ամեն ինչ վերջացած է: Գեո հեշտ կարելի էր իրավունքներ պաշտպանել, կործանման առաջն առնել: Բայց բյուզանդականությունը հայոց արքունիքում Վեստ-Սարգսի պես մի ստրուկ ուներ և նրա միջոցով էլ պայքար սկսեց Անիի մեջ:

Հովհաննես-Սմբատն ու Աշոտը համարյա միաժամանակ մեռան: Տերություն խնամակալը ասում էր, որ Անին կայսրի կալվածն է արդեն: Բայց հայությունը դեռ այն աստիճան անպատիվ անկման չէր հասել, որ լուռ հպատակվեր Վեստ-Սարգսին: Հունամուկ կուսակցության դեմ զուրս եկավ

ազգային կուսակցությունը: Բագրատունիները անժառանգ չէին: Մեջտեղ կար Աշոտի որդին, Գագիկը, 14-ամյա մի վառվառ, կտրիճ, կրթված պատանի: Նրա շուրջը խմբվեց ազգային կուսակցությունը, որի գլուխն էր Վահրամ Պահլավունին: Անին տեսնում էր, թե որքան սուր կերպարանք է ընդունել, որքան երկար տևեց այդ երկու ուղղությունների ընդհարումը: Երկու տարի դատարկ մնաց Հովհաննես-Սմբատի գահը: Երկու տարի շարունակ Վեստ-Սարգիսը չէր թողնում, որ սրբազան մայրաքաղաքը ընդունե իր մեջ իր կտրիճ Բագրատունուն: Հայրենի բախտի դավաճանը իր ետեվում ուներ բյուզանդական ամբողջ զորությունը: Եվ եկան օրեր, երբ Անին պիտի տարուբերվեր այն մտքի մեջ, թե արդյոք զուր չէ՞ դիմադրությունը, արդյոք ամեն ինչ կորած չպիտեք է համարել:

Այնտեղ էր, երեկ, Ուշ-Յափայի և Ալաջայի ստորոտների այն մեծ դաշտավայրերում, որ ահագին բանակներ էր դնում բյուզանդական զորքը: Չորս անգամ նա ամբողջ թափով արշավեց դեպի Շիրակ, չորս անգամ ավերանքով ու կոտորածով հասավ Անիին, որպեսզի կատարե Վեստ-Սարգսի և նրա նմանների բաղձանքը և խլե Անին իր թագավորության ձեռքից: Ահագին զորակույտերը ճնշող, հուսահատեցնող տպավորություն էին թողնում հայ ազգաբնակչության վրա: Բայց դեռ չէր մեռել հայի բախտը, դեռ կար մի բազուկ, որի մեջ կայտառ զարկում էր հերոսությունը: Կենդանի էր Վահրամ Պահլավունին: Մեր առյուծը չվախեցավ այն հսկայական դժվարությունից, որը հաղթելուց հետո միայն պիտի կարողանար վերջին Բագրատունուն նստեցնել հայրենի գահի վրա: Երեք անգամ նա հետ մղեց բյուզանդական արշավանքը, երեք անգամ Վեստ-Սարգիսը ամաչեց, բայց դեռ այդքանը բավական չէր:

Մի օր Անին իր գեղեցիկ պատերի վրայից տեսավ ահեղ մի տեսարան: Շրջակա դաշտերը ծածկվել էին զինվորներով: Եկել էին այդ գեղեցիկ պարիսպները խլելու: Բյուզանդականությունը այս անգամ այնպիսի զորությամբ էր հանդես եկել հափշտակողի դերում, որ ահ ու սարսափ պիտի տարածեր: Մեր պատմիչներն ասում են, թե բյուզանդական

բանակը 100 000 հոգուց էր բաղկացած: Նա կատաղած էր նախկին անհաջողություններից և զենքի լեզվով խոսելուց առաջ՝ իր այդ կատաղությունը թափում էր այն նախատինքների և հայհոյանքների մեջ, որ ամեն օր ուղարկում էր պաշարվածներին:

Ահա այն պարիսպները, Ավագ Դուռը, բարձր աշտաբակները: Հունիսյան միջօրեն իր տոթով խանձում է նրանց հալումաշ, ծովումած կմախքները, բայց նրանք այդպես քարոքանդ ու մեռած էլ պատմում են այն օրհասի տազնապը: Առաջին անգամն էր, որ նրանց առջև, խաչերով զարդարված ճակատի դիմաց, կանգնած էր մի խոշոր բանակ, որ նույնիսկ խաչերով էր զարդարում իր բոլոր նշանները, բայց անողոք էր, ատելությամբ էր լցված դեպի պաշարված քրիստոնեությունը, որին հայհոյում էր, նախատում էր ամեն օր: Ի՞նչ պիտի լիներ: Արդյոք Սմբատյան ամբողջությունները պիտի կարողանային ցույց տալ, որ իրանք միայն զենեցիկ չեն, այլ և ջուտ, անհաղթահարելի:

Ահա նրանց ետևում, այս կողմ, քաղաքի մեջ գնդեր են կազմվում, պատրաստվում: Մեծ բազմություն է, ամբողջ 30 հազար մարդ: Նրանք ծածկել են մայրաքաղաքի բոլոր ազատ տեղերը—հրապարակները, Միջնաբերդը, պարիսպները: Շարժվելու նշան տրվեց: Ավագ Դուռը բացվեց, զինված բազմությունը դուրս է գնում, դուրս, դեպի պատերազմի դաշտը: Վահրամ մեծ իշխանը իր տեղն է. նա է հայ բանակի հոգին, նա տանում է, հարդարում է ճակատը: Ի՞նչ տեսարան: Ալեղարդ հերոսը իր ամբողջ բանակով կայծակի պես հարվածում է բյուզանդական բանակը: Ահռելի թափռնի այդ հարվածը: Նա ոտի տակ է գցում, տրորում է թշնամուն, չէ թույլ տալիս, որ սա ուշը գլուխը հավաքե: Կոտորածը սոսկալի է: Հայերը կատաղած են իրանց լսած հայհոյանքներից, այս ամբողջ անարդար, ավազակային գործից: Եվ այնքան անխնա, անգութ են այդ կոտորողները, որ Վահրամը, նույնքան քաջ քրիստոնյա, որքան քաջ զորավար, միջամտում է, խնայել է հրամայում: Նա արդեն տեսնում էր, որ բյուզանդական պարտությունը կատարյալ է, որ ընկածին ջարդելը այլևս ավելորդ անգթություն է: Մեր պատմիչները

հավատացնում են, որ Անիի շրջականերում 20 000 բյուզանդական զինվորներ էին փոխված:

Արյունոտ պայքարը վերջացած էր: Անին հաղթանակի ավետին ստացավ: Հաղթության տոներ իր հետ մայրաքաղաքը մտցրեց արդեն 16 տարեկան կորովի երիտասարդին: Նա ուրախ էր, ժպտուն, այդ Բագրատունին, ավա՜ղ, վերջինը: Ծերունի հերոսը առաջնորդում էր նրան դեպի Մայր եկեղեցին, դեպի հայրենի ժառանգությունը, դեպի այն թափուք գահը, որին դավաճանությունը ոչնչացած էր հայտարարել: Իր բոլոր գեղեցկություններով զարդարված Անին այդ օրը մոռացավ իր բոլոր ցավերն ու զրկանքները, որ կրել էր այդ երկու մռայլ տարիներում:

Բայց դժբախտ երիտասարդ: Դավաճանը, տեսնելով իր գործի խորտակումը, Հուդայի առաքինությունն էլ շունեցավ, խեղդող թոկին չդիմեց, այլ, տարաբախտաբար, հասկացավ, որ ամեն ինչ դեռ կորած չէ: Նա վերցրեց թագավորական գանձերը և փակվեց Միջնաբերդում: Արդյոք ա՛յս Միջնաբերդում, ուր մենք ենք նստած, թե այն մյուսում, Գրգ-դալեի ժայռերի վրա: Ինձ թվում է թե այնտեղ պիտի լիներ:

Վահրամ իշխանը, վերջացնելով իր գործը, գնաց իբժերություն հանգիստը վայելելու իր ամրոցում, իր Մարմաշենի հովանու տակ: Նա ճանաչում էր իր թագավորեցրած երիտասարդին, գիտեր որ նա կարող է և կիմանա կատարել իր պարտավորությունները:

Եվ Գագիկը, իրավ, հանդես եկավ մի հերոս, անվախ երիտասարդի բոլոր կատարելություններով, բայց և միամբտություն: Մենակ, առանց նույնիսկ մի հատ թիկնապահի, նա մտավ Միջնաբերդը, երևաց դարանամուտ վեստ-Սարգսին և հրամայեց նրան հեռանալ իր քաղաքից: Միայն այդքա՛նը: Գագիկի այդ վարմունքը հասկանալ չէ կարելի, եթե չլինի միայն մի հանգամանք,— այն, որ Սարգիսը Գրիգոր Մագիստրոսի փեսան էր: Գրիգորը, ինչպես գիտեք, Վահրամ իշխանի եղբորորդին էր, և սկզբում նույնպես մոտ էր Գագիկին, նույնպես ազդեցիկ էր եթե ոչ իր քաջությունը, գոնե գիտնականությամբ, հունական կրթությամբ: Մենք իսկույն կտեսնենք, որ հունամոլ Գրիգորը ավելի իր փեսայի

կողմնակիցն էր, քան իր հորեղբոր: Երիտասարդ Գազիկը չէր կարող միանգամայն արհամարհել հունական կուսակցությունը հայ իշխանների մեջ: Քանի որ հարցը վճռված էր զենքի ուժով, քանի որ իր թագավորելը արդեն վերջ էր տալիս խռովության, նա, ինչպես երևում է, վճռեց հաշտեցնող քաղաքականության հետևել, ուստի և բավականացավ Սարգսին Անիից վռնդելով:

Բայց հանգստացա՞վ չարագործը: Շուտով Գազիկը տեղեկացավ որ նա ամրացել է Սուրմառի բերդում և շարունակում է իր դավերը Անիի դեմ: Մի փոքրիկ արշավանք գործեց Գազիկը, առավ Սուրմառին և բռնելով Սարգսին, բերեց բանտարկեց Անիում: Դավաճանության գործը փոխվեց: Մինչև այժմ նա, քանի ազատ էր և ուժեղ, գործում էր բացարձակ, ճակատ ճակատի, գոռոզ, բարձրագլուխ: Այժմ, ընկնելով բանտի մթության մեջ, նա փոխեց գայլի մորթը և հագավ օձի կաշի, սկսեց քարշ գալ, սողալ: Հունաց պահանջները վերանորոգվեցին. Կոնստանտին Մոնոմախոս կայսրը պաշտոնապես պահանջեց Անին: Գազիկը վերին ապտիճանի քաղաքավարությամբ պատասխանեց, թե ինքը կայսրի դեմ ոչինչ թշնամություն չունի, պատրաստ է նույնիսկ տեր ճանաչել նրան, բայց քաղաքը հանձնել և հայրենի գահից հրաժարվել չէ կարող: Նորից հունական արշավանքներ պետք է սկսվեն: Զայրացած Գազիկը ուզում էր խեղդել Սարգսին, բայց նա պիտի ժամանակ և կյանք վաստակեր սուտ, շողորթի, քսու լեզվով: Եվ նրան հաջողվեց այդ Հաջողվեց իր հարազատին մատնելով: Նա խոստովանեց Գազիկի առաջ, որ այդ բոլոր շարիքի հեղինակը ինքը չէ, այլ իր աները, Գրիգորը: Անսպասելի, ապշեցնող էր այդ հայտնագործությունը: Երիտասարդ թագավորը մեծ վստահություն ուներ դեպի Գրիգոր Պաշլավունին և այժմ, բնականաբար, պիտի սաստիկ զրգովեր նրա դեմ:

Իր նամակների մեջ Գրիգոր Սագիստրոսը գանգատվում է, որ Գազիկը հավատաց խարդախ մարդկանց խոսքերին և սկսեց հալածել իրեն: Բայց ճիշտ որ Գազիկը խաբված էր: Գուցե իշխանի մեղքը շատ չափազանցեցրած կերպով էր նրա փեսան ներկայացրել Գազիկին. այս հանգամանքը կա-

թելի է մեծ հոժարությամբ ընդունել: Բայց որ Գրիգորը միանգամայն անմասն եղած լինի այն հունամոլ շարժման մեջ՝ դա թե անբնական է, թե հավանականությունից զուրկ: Անբնական՝ որովհետև բյուզանդական արքունիքում կրթություն ստացած, բյուզանդական սգով տոգորված մի մարդ չէր կարող հակառակ լինել Սարգսի ձեռնարկության. հավանականությունից զուրկ՝ որովհետև իրերի ընթացքը ցույց է տալիս, որ նա, այո՛, հունամոլ գործիչներից մեկն էր:

Անիի անկման պատմությունն անող մեր մատենագետները Գրիգոր Սագիստրոսի մասին վատ խոսք չունեն: Բայց չպետք է մոռանալ, որ դրանք հոգևորականներ են, իսկ Սագիստրոսը, իբրև լավ կրթված մարդ, ահագին հեղինակություն ուներ հոգևորականների մեջ և ավելի հոգևոր մի գործիչ էր, քան իշխան: Նույն վարագուրված վերաբերմունքն ունեն մատենագիրները և դեպի Պետրոս կաթողիկոսը: Սրա կատարած դերը միանգամայն սև է, բայց այդ ակնությունը շատ թույլ ու նոսր ակնարկներով է երևում, առանց հանդիմանության կամ պարսավանքի: Եվ հասկանալի է, թե ինչո՞ւ: Զէ՛ որ Պետրոսը «Գետադարձ» էր, հրաշագործ...

Զնայած այս զգուշավոր վերաբերմունքին, Սամվել Անեցին ուղղակի գրում է. «Տեր Պետրոս և ազատ Սարգիս և Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳազիկ և զԱնի ետուն է կայսրն Յունաց»: Եվ վերջապես ի՞նչ արավ Գրիգորը՝ թագավորի կասկածներից ու հալածանքից ազատվելու համար: Փոխանակ իր արդարությունը ապացուցելու, նա թողեց ամեն ինչ, փախավ գնաց Կ. Պոլիս, ուր պատիվներ էր ընդունում կայսրից անշուշտ ոչ այն պատճառով, որ հայոց երկրի շահերն ու անկախությունն էր պաշտպանում: Այդ վարմունքը ավելի ևս համոզեց Գազիկին և նա մի հանդիմանական նամակ գրեց, որին Գրիգորը պատասխանեց բյուզանդական պաշտոնյայի ճոխ ու ճոռոմական ոճով, բայց առանց ապացույցների, լոկ խոսքերով էր հավատացնում, թե իր թշնամիները սուտ են ասում: Կարո՞ղ էր հավատալ Գազիկը:

Կրկնում ենք, Պաշլավունի տոհմի ներկայացուցիչը գու-

ցն Սարգսի դավակիցը չէր, այլ լուկ համակրող: Փաստն այն է, որ իր աներոջ մատնելով՝ Սարգիսը նշանավոր հաջողություն ձեռք բերեց: Վստահությունը դեպի Պահլավունիները խախտված էր, այդ գնով էլ Սարգիսը բանտից ու մահվան վտանգից ազատվեց, Գազիկի հավատը գրավեց դեպի իրան ու շարունակեց գործել:

Մոնոմախոսը զորքեր ուղարկեց իր պահանջը կատարել տալու համար: Դարձյալ պատերազմներ, դարձյալ արյուն էր թափվում Անիի համար: Եվ պատերազմի դաշտում, ազնիվ կռվի մեջ, գեղեցիկ մայրաքաղաքի պատիվը հիանալի կերպով պաշտպանվեց: Գազիկը հաղթում էր, Բագրատունյաց զենքին նա մի նոր, հրաշալի փայլ էր տվել: Ասիական մի փոքրիկ թագավորից պարտություններ կրելը. այնքան վիրավորեց բյուզանդական գոռոզությունը, որ վերջին անգամ նա հանդես եկավ թե ավելի ստվար բանակով և թե մի անպատիվ, ստոր դաշնակցությամբ: Գազիկին երկու կրակի մեջ դնելու համար Մոնոմախոսը, քրիստոնյա, նույնիսկ ուղղափառության արտառությունը վայելող մի միապետ, միաժամանակ հարձակման դաշինք կապեց Դվինի մահմեդական իշխողի հետ, թույլ տալով նրան սեփականացնել այն ամենը, ինչ նա զենքով կիսեր Անիի թագավորությունից: Եվ խաշի ու կիսալուսնի այս դաշնակցությունը ո՞ւմ դեմ: Մի խեղճ, փոքրիկ երկրի դեմ, որ նոր էր գուրս եկել մի վախկոտ, անընդունակ թագավորի խնամակալության տակից:

Դաշնագրությունը ճշտությամբ կատարվեց. երկու կողմից արշավանք սկսվեց: Բայց Բագրատունյաց վերջին կորյունը քաջության հետ հեռատեսություն էլ խառնեց: Երկու թշնամու դեմ նա ուժ չունեւ. մնում էր ընտրություն անել, թե ո՞րն է իսկական, վնասակար թշնամին: Պետք էր դեռ գլուխ կտրել այդ հարցի վրա: Գազիկը շտապեց հաշտությամբ առնել Դվինի արշավանքի առջևը. այդ նպատակին նա հասավ փողի և ընծաների միջոցով: Ոչնչացնելով այդ կողմի վտանգը, նա իր ամբողջ երիտասարդական թափով ընկավ բյուզանդացիների վրա և սարսափելի ջարդ տվեց նրանց:

Զենքը դարձյալ և դարձյալ խայտառակեց անիրավ հափշտակություն ծրագրողներին: Մեր հերոսը կարող էր այժմ հանգիստ առնել իր գեղեցիկ մայրաքաղաքում, որի համար էր այնքան այրուն թափել: Իբրև լավ Բագրատունի, նա էլ, սուրը պատյանում դնելուց հետո, սկսեց աշխարհաշինություն և բարեկարգություն:

Սակայն օձի գլուխը չախշախված չէր: Եվ նա դարձյալ քարձրացավ, դարձյալ իր դավերի ետևից գնաց: Այս անգամ ուրիշ տեսակ թակարդ լարվեց մի այնպիսի թագավորի առջև, որի երիտասարդական հերոսությունները միայն բավական էին, որ կապվեին դավադիրների ձեռքերը և փափկեին նույնիսկ ապառաժ սրտերը: Անիի դավադիրների թելադրությամբ Մոնոմախոսը այս անգամ այլևս գոռոգ պահանջներ անող չգուրս եկավ, այլ մի քաղցր նամակով հրավիրում էր Գազիկին սիրո և հաշտության տեսակցության, նշանակելով տեղը Կ. Պոլիս:

Զգաց Բագրատունին, որ մեքենայություն է սարքված, բայց չիմացավ, որ սարքողները իրան շրջապատողների մեջ են: Նա վճռեց չգնալ Կ. Պոլիս: Վեստ-Սարգիսը սաստկացրեց իր եռանդը. նա գործում էր, իր կողմնակիցների թիվն էր շատացնում: Արթունիքում երկու կուսակցություն կազմվեց: Բայց թագավորը հաստատ էր իր վճռին: Վտանգավոր թուլություն դարձյալ լսվեց Վահրամ իշխանի ձայնը: Մերունին խրատում էր չգնալ: Պատին սեղմված դավաճանությունը, տեսնելով, որ զուր են անցնում իր հորդորները, որ թագավորը չէ վախենում իր նկատած վտանգների և ոչ մեկից, ձեռք առավ ամենավերջին, ստոր միջոցը—կրոնը:

Դարձյալ հարկավորվեց Դետագարձ կաթողիկոսը, Վեստ-Սարգիսը շատ լավ գիտեր, թե ինչ թուլություն ունի հայ հոգևորականը դեպի բարեպաշտ և մանավանդ առատաձեռն իշխանը: Ինքը արդեն այդպիսի մեկն էր, ուստի հրապուրեց պաշտոնով բարեպաշտության, իսկ անձնական արամադրությամբ փողի և հարստության սիրահար կաթողիկոսին: Նա էլ մտավ թագավորին համոզողների շրջանը:

Դավադրությունը համոզում էր թագավորին, թե ոչինչ չկա, իզուր են նրա կասկածները, թե նրա բացակայությամբ

ժամանակ Անիին մատ դիպցնող շի լինի: Բոլոր դավակից-ները պատրաստ էին երդվել, հաստատ թուղթ տալ, որ իրանք կպահեն կպահպանեն ամեն ինչ և նրան կտան, վերադառնալուց հետո: Գագիկը պինդ էր պահում իրան, բայց թուլացավ, երբ տեսավ այդպես ասողների շարքում գետ կանգնեցնող Պետրոս կաթողիկոսին: Նա այդ շրջապատողների պես փշացած մարդ չէր, իբրև ազնիվ մարդ, իբրև պատվավոր երիտասարդ, վերջապես իբրև քրիստոնյա հավատացող նա իրավունք չհամարեց չհավատալ և կեղեցուն, չհավատալ այն խաչին ու ավետարանին, որոնք կաթողիկոսի ձեռքումն էին և որոնց վրա երդվում էին այդքան մարդիկ: Կրոնը ազդեց, կրոնը թուլացրեց, որովհետև ո՞վ կարող էր ասել՝ թե կրոնը մի ամենազդվելի ուժի տիրույթում է:

Գագիկը, վերջապես, դիջեց, բայց դարձյալ զգուշություններով, վերապահումներով: Նախ և առաջ պահանջեց, որ կաթողիկոսը լինի քաղաքի տերը և պատասխանատու մինչև իր վերադարձը: Գետադարձը հանձն առավ այդ: Ամյա նա իր հավատարիմ զորավարներից մեկին նշանակեց Անիի բերդապահ և բավականաչափ զորք դրեց նրա տրամադրության տակ: Այդ կողմից էլ ապահովվելով, նա ընդունեց դավադիրների երդմնաթուղթը:

Ամեն ինչ վերջացավ...

Եղե՛լ է մի ուրիշ անցի, որ այնպես դուրս եկած լինի իր մայրաքաղաքի դռներից, — այնքան վառ սիրով լցված դեպի այդ գեղեցիկ տեղը, այնքան նուրբ ու զզվելի կերպով խաբված, տարակուսանքների, ծանր մտածությունների մեջ միայն մի անգամ մարդկային խղճին և նրա պաշտամունքին հավատացած... Եղե՛լ է մի ուրիշը, որ այնպես տաներ իր հետ մի ծաղկած քաղաքի, մի ամբողջ երկրի բախտը, ինչպես այն երիտասարդը, որ, — ենթադրում եմ, — իր անդառնալի ճանապարհը դեպի արևմուտք սկսեց մայրաքաղաքի արևմտյան կողմից, հուսատու մնաս բարով ասեց Մաղկոցաձորին և նրա վրա ցցված հուժկու պարիսպներին ու կամաց-կամաց անհետացավ հորիզոնից, անցնելով Ալաջայի ետևը:

Դավադրությունը, վերջապես, հաղթանակ էր տոնում:

Պատմական դրաման բաժանվում է երկու մասի՝ մեկը Բոսֆորի ափի վրա, մյուսը՝ Ախուրյանի: Բագրատունյաց առյուծը ոտով գլխով թակարդի մեջ էր: Կայսերական շքեղ ապարանքներում իմացավ Գագիկը, որ բարեկամության, հայրենասիրության, կրոնի լեզվով իր հետ խոսողը ամենացած դավադրությունն է եղել: Կայսրը առաջարկեց նրան միևնույն առևտուրը, որ 20—22 տարի առաջ վասպուրականի Արծրունիներին տարել, քշել էր դեպի Բյուզանդիայի խորքերը:

Բայց Գագիկը Արծրունիներից չէր: Ի՞նչն էր նրան պակասում՝ քաջություն, որ գիտե սուրը ձեռքին պաշտպանել հայրենի սեփականությունը և մեռնել նրա համար, թե՛ կրթությունը, լայն ծանոթությունը մարդկային իրավունքների և պարտավորությունների հետ: Հենվելով երկուսի վրա էլ՝ թե անվախության և թե իրավունքի գիտակցության վրա, նա երիտասարդական հոգու ամբողջ թափով մերժեց այդ առևտուրը: Անին պատկանում է Բագրատունիներին ու ազգին, և ոչ ոք իրավունք չունի ծախել նրան:

Ոչ ո՞ք: Եվ ոչ իսկ դավաճանությունը: Մինչդեռ այնտեղ այդպես էր, այստեղ, գուցե հենց նույն այս Միջնաբերդում, Բագրատունիների դիակը վաճառքի էր հանված: Կար մի անձ, որին պատկանում էր վճռական խոսքը — գետ կանգնեցնող կաթողիկոսը: Նրան էր հավատացել Գագիկը, նրան էր տվել քաղաքի բանալիները իբրև սուրբ ավանդ մինչև իր վերադարձը, մի ավանդ, որի վրա պիտի հսկեր ինքը, վկայության կանչված Ավետարանը: Ինչպե՞ս վերաբերվեց այդ ավանդին նա, որի արդարությունը երկինքը հաստատել էր, կանգնեցնելով մի ամբողջ գետի ընթացքը:

Արիստակես կաստիվերտցին, մի սրտառու բանաստեղծ-պատմաբան, պարզ ասում է. «Առաքե՛ (հայրապետն Պետրոս) առ այն, որ ունէր զիշխանութիւն արեւից կողմանն, որ նստէր ի քաղաքին Սամուսատ և գրէ թէ՛ «Ծանո՛թագատրին թէ՛ մեզ զինչ հատուցանէ փոխարէնս, և ես տաց զքաղաքս և զայլ ամուրս որ յաշխարհիս են»:

Ի՞նչ կտաք, որ ձեզ հանձնեմ: Եվ այս շարչիական սակարկությունը գիտե՞ք ով էր սկսում: Մի կաթողիկոս, որ մի

Թագավորի շափ հարուստ էր և ապրում էր շքեղության ու փարթամության մեջ: Մատթեոս Ուռհայեցին վկայում էր, որ Գեատադարձը ուներ հինգ հարյուր գյուղ: Եվ արդյոք ինքը, Գագիկը, այսպիսի հողային հարստության տե՛ր էր: Չնայած սրան, դարձյալ անկշտության հարց, ի՞նչ կտաք:

Նրան և նրա ընկերակիցներին, իհարկե, տվին այնքան, որ նրանք գոհ մնացին: Եվ Անիի բանալիները ուղարկվեցին Կ. Պոլիս, կայսրին: Գագիկին, իհարկե, շանթեց այս սև դավաճանությունը, երդման, խաչ-ավետարանի այս վաճառքը: Բայց նա խնկոյն չընկճվեց: Ամեն ինչ կորցնելուց հետո էլ նա գիտեր, որ ունի մի անկողոպտելի սեփականություն՝ մարդկային իրավունքը, արդարությունը: Կայսրների պալատում նա մի ըմբոստ, կրակոտ բողոքող էր: Նրան աշխատում էին համոզել, որ կատարված իրողությունը օրինական է, նա պատասխանում էր ջախջախիչ խելոքությամբ և իրավունքով:

Չամշյանը, չգիտեմ ո՞րտեղից վերցնելով, բերում է հետևյալ խոսակցությունը կողոպտող կայսրի և կողոպտված Թագավորի մեջ: Յուրջ տալով Անիի բանալիները և դավադրության գրած թուղթը, Մոնոմախոսն ասաց.

— Ի՞նչ ունես սրանց դեմ, ահա քո նախարարները ինձ տվին Անին և ամբողջ Արևելքը:

— Թող Աստված դատե ինձ և ինձ դավաճանողներին, — պատասխանեց Գագիկը հառաչելով, ապա ավելացրեց.

— Եթե նրանք տվին քեզ, մի՞թե դու կարող ես վերջնել իրավունքով և արդարությամբ:

— Նրանք տալիս են և ես վերցնում եմ:

— Բայց նրանք Անիի և Արևելքի տերերը չեն. տերը ես եմ նրանց հետ: Եվ երբ ես չեմ նրանց հետ միասին քեզ տվողը, դու արդարությամբ վարված չես լինի եթե վերցնեա՞: Թողնում եմ դեռ այն, որ հայոց բոլոր նախարարները համաձայն չեն այդ բանին:

— Այսքան նախարարների համաձայնությունն էլ բավական է այն նամակի հետ, որ տվել է Հովհաննես Թագավորը. նա Անիի տերն էր և տվեց նրան մեզ, հույներին:

— Այդ նախարարները առանց Թագավորի համաձայնու-

թյան չեն կարող որևէ մեկին տալ Թագավորի քաղաքը. նույնպես էլ Թագավորը չէ կարող Թագավորական քաղաքը տալ ուրիշին առանց նախարարների համաձայնության, որովհետև այն քաղաքը թեև Թագավորինն է, բայց ազգինն էլ է: Եվ, ուրեմն, եթե Հովհաննես Թագավորն է նրան տվել երդման թղթով կամ միայն հայոց նախարարները, այդ էլ ոչինչ է, որովհետև համաձայնությունը երկու կողմից միաժամանակ, լրիվ չէ. առաջինի մեջ պակասում է իշխանների համաձայնությունը, երկրորդի մեջ՝ Թագավորինը:

Չորոնենք թե որքան վավերական է այս վիճաբանությունը: Թակարդի մեջ ընկած հերոսը, անշուշտ, սրանից ավել և շատ պիտի խոսած լինի իրան դավաճանությամբ բռնողների և կողոպտողների դեմ: Ի՞նչ օգուտ դրանից: Իրավաբանական սկզբունքները պիտի հաղթանակեն մի նախամտածած, երկար տարիներ ստոր ու զզվելի արարքների միջոցով պատրաստված մեծ ոճիրի մեջ:

«Անին չորս հարյուր իննսուն և չորս թվականին (1045) առնվեց ո՛չ թե պատերազմի օրենքով, այդ խաբեությունը», — ասում է Հաստիվերտցին: Պատերազմի օրենքն էլ զուտ արդարություն չէ, բայց ի՞նչ ասես, երբ այդ արդարությունն «էլ բացակա էր այդ բռնության մեջ: Մարդիկ, որոնք պատերազմի դաշտում հաղթվել ու փախել էին, այնքան անպատիվ երես ունեցան, որ ճանապարհի կողքին դարանամուտ եղած ավազակների պես վրա տվին և ստորությամբ էին խլում այն, ինչ չէին կարողացել խել բաց ճակատով, ազատ մրցությամբ: Մեր հերոսը իր գերության շղթաների մեջ էլ վեհ ու գեղեցիկ էր իր անբարոյական հակառակորդներից: Բայց ի՞նչ օգուտ:

Իրողությունը մնում էր ավազակային հափշտակությունը: Գագիկը մեն-մենակ էր պաշտպանվում, իսկ քանի՞ փաստաբաններ ուներ բյուզանդականությունը: Այդ վեճերի ժամանակ հայ նախարարներից մեկը Կ. Պոլսում շտապեց օրինականացնել Անին հափշտակողների գործը: Դա նույն Գրիգոր Մագիստրոսն էր, որ ներկայացավ կայսրին, իր բոլոր տոհմային կալվածները, որոնց մեջ էր և Բջնի բերդը, հանձնեց

նրան և փոխարենը կալվածներ ու իշխելու իրավունք ստացավ Միջագետքի կողմերում:

Այս բանը նա ինքն է պատմում իր նամակների մեջ: Պատմում է իրան և իր նմաններին արդարացնելու համար: Ի՞նչպես: Նա խոստովանում է, որ թողեց Գագիկին ու անցավ կայսրի կողմը այն պատճառով, որ երկիրը այլևս չէր կարելի պաշտպանել թշնամիներից: Ողորմելի՜ արդարացում, որ այնքան վայել է թույլ ու անպետք իշխաններին: Կարծես Գրիգոր Մագիստրոսը փորձել էր իր հայր Վասակի նման կրճրով պաշտպանել Բջինն և չէր կարողացել: Կարծես նրա հորեղբայր Վահրամ իշխանը այդ իսկ ժամանակ չէր նստած իր կալվածներում, առանց կայսրի մասին մտածելու, հույսը իր ծեր բազուկների վրա դրած: Եվ կարծես Գագիկ Բագրատունին, կույր հունամուլության այդ զոհը, երբեկից հաղթվել էր պատերազմում, երբեկից ցույց էր տվել թե չէ կարող մի կայսրի պես էլ պաշտպանել երկիրը, եթե ամբարիշտ, ինքնահավան հայ ֆեոդալները տային նրան կեսը այն հավատարմության, որ տալիս էին Բյուզանդիայի արքունիքին:

Բանականություն, տրամաբանություն չկար օտարամուլության ստրուկների նույնիսկ ամենաշնորհալի, կրթված ներկայացուցչի մեջ: Այդ ապացույցն է պատմությունը, ապացույցն է իրանց, այդ ֆեոդալների անդառնալի կորուստով: Անիի վաճառումը Բագրատունյաց տոհմի մահվան դատավճիռը չէր միայն, այլև այն քաղաքական սխտեմի, որ պահվում էր Հայաստանում հին-հին դարերից իբրև ազգային ինքնուրույնության միակ եղանակ: Մագիստրոսները իրանք իրանց զուխներն էլ էին կտրում: Այնպիսի հեշտությամբ, այնքան ֆանատիկոսական համառությամբ քանդելով Աշոտի մեծ տաղանդով կառուցած շինությունը, ոչ ոք այնուհետև այլևս չկարողացավ դրա նման մի կերտվածքի քարն անգամ զենել բուն Հայաստանի հողի վրա:

Եվ այդպիսի մի տխուր քաջագործության հեղինակ Մագիստրոսները պատասխանատվություն էլ չունեն մեր պատմության մեջ: Պատմագիրները պատմում են նրա արարքները առանց որևէ հանդիմանության, առանց պարսավանքի. ընդհակառակն, պաշտպանում են նրան, հիանում են նրանով,

որովհետև նա գիտուն էր, գրող ու թարգմանիչ էր, աստվածաբան էր, նույնիսկ թոնդրակեցի աղանդավորներին անխնահալածել ու կոտորել է հանուն ուղղափառ քրիստոնեության: Էլ ի՞նչ է հարկավոր հոգևորական հեղինակներին հիացնելու համար...

Իսկ մենակ մնացած, դավով շրջապատված Բագրատունի հերոսը: Նրա բողոքները գնացին հետզհետե մարելու ոչնչանալու հեռավոր, խորթ աշխարհի անտարբերության մեջ:

Բայց նրան սպասող ժողովուրդ կար: Տեսան, որ Գագիկը գնաց, ուղում էին որ նա վերադառնա: Դավադրությունը ծածուկ էր գործել, ծածուկ էր հաղթանակել: Եվ ահա Անին տեսնում է, որ իր թագավորի փոխարեն հունական զորքն է մոտենում իր պարիսպներին: Նա վրդովվում է: Ապիրատ զորավարը, որ բերդապահ էր թողնված, Գետադարձից ավելի սուրբ էր պահում իրան հանձնված ավանդը: Նա հայտարարեց, որ մայրաքաղաքը կհանձնե միայն նրա օրինավոր տիրոջ և քաջարի հարձակումով ցրեց հունաց բանակը: Մի անգամ էլ կենդանի փաստով ապացուցվեց, որ քաջությունը չէ գալիս տիրելու այս քաղաքին, այլ ոճիրը:

Հանկարծ քաղաքին իբրև սոսկալի ճշմարտություն հայտնի է դառնում, որ Գագիկը այլևս չպիտի վերադառնա: Երբեք՝ չէ: Հունական խարդախության դեմ զրգուլած անեցիները մտածում են հարևան օտար տիրողներից մեկին կանչել և մայրաքաղաքը նրան հանձնել: Մտածում են վրաց, աբխազների թագավորների մասին, որոնք բարեկամություն ունեին Բագրատունիների հետ, մտածում են նույնիսկ Դվինի մահմեդական իշխողի մասին, որ նույնպես խնամիությամբ կապված էր այդ տոհմի հետ: Բայց ոչ ոք չէ մտածում, որ այդ միջոցին, երկու քայլի վրա, Կարսում, նստած է հարադատ Բագրատունի թագավորը, նույնպես Գագիկ անունով: Բերել նրան, նորից միացնել Բագրատունյաց ճեղքված թագավորությունը, նորից մեծացնել ուժը, բախտ փորձել — ոչ ոք այդ մասին չէ մտածում: Ինչո՞ւ: Արդյոք Կարսի Բագրատունիները Դվինի էմիրի՞ց էլ հեռու էին անեցիներից, թե կատաղի թշնամությունը Բագրատունյաց հարազատ տոհմի դեմ չէր թույլ տալիս նրանց անունը տալ:

Հավանականը այս երկրորդն է: Չհիշվեցին և Լոռու Քաղաքատունիները.— այս փաստը շատ բան է ասում: Չէ՞ որ կենդանի, հաղթական էին Վեստ-Սարգիսը և նրա ընկերները: Դժբախտության օրերում նրանք հրապարակի տեք հանդիսացան և հայտարարեցին, որ, այնուամենայնիվ, բյուզանդական տիրապետությունը պիտի մտնե այդ քաղաքի մեջ: Եվ հնազանդվեց ժողովուրդը:

Հնազանդվեց, ինչպես հնազանդվում են մահվան ճակատագրին, լացով ու արտասուներով: Համայնական սուգ կատարեց անտեր մնացած մայրաքաղաքը: Ի՞նչ տեսարաններ այդ օրերում: Ժողովուրդը դիմում է իր անցյալին, նրա սովերեններին և պատմում իր անհատակ ցավն ու վիշտը: Թագավորների գերեզմանների վրա խմբվում է բազմությունը, իր արտասուներով թրջում է նրանց հողը, իր ողբերով աղմբկում է նրանց պալատների գերեզմանական լուսնությունը: Հայր լավ թաղել գիտե: Եվ այդ լացն ու շիվանը, այդ համայնական սուգը արժանի էր իր առարկային. այդպես թաղվում էր միջնադարյան հայոց ամենալավ, ամենագեղեցիկ թագավորությունը: Անմխիթար երկիրը, երևի, զգում էր, որ դավերջինն է հայրենի հողի վրա. զգում էր, որ վաղը, մյուս օրը պիտի գա պատուհասը, զգում էր իր փախուստի, պանդրխտության ճանապարհները Լեհաստանում, Մոլդավիայում:

Լալիս էր անցյալը, լալիս էր ներկան... Լաց էր վիճակվում գեղեցիկ մայրաքաղաքին իբրև հավիտենական ճակատագիր: Այսօր էլ անփոփոխ չէ՞ նույնը: Նայեցե՛ք քարերով լցված մի քաղաք, մերկ այրված շրջականներ: Այրել է արտասուները, այրել է այնպես, որ նույնիսկ օդի մեջ էլ ծպտուն ու հնչյուն չէ լսվում: Արտասուների աղերն են ծծվել այս թշվառ հողերի մեջ... Եվ այսօր էլ մենավոր այցելուն, մտնելով մահվան քաղաքը, մի բան է ամենից առաջ զգում՝ որ նա լաց է լինում, որ նրա արտասուները երբեք չեն սպառվում...

Լաց ու կոծ... Դավաճանությունը, հայրենի անկարգությունը նրան ներս մտցրեց: Ո՛ւր էր Վահրամը: Կենդանի էր դեռ ծեր առյուծը. բայց այլևս ոչինչ չէր կարող անել: Թագավորը հեռու արևմուտքում, հույներն են Քաղաքատունիների ժառանգները:

Օտարամուլ ֆեոդալականության զգված և փայփայված բյուզանդականությունը եկավ բազմեց Անիի մեջ: Բայց ի՞նչ ռզուտ: Ո՛չ լավագույն օրեր, ո՛չ այնպիսի մի բարեկարգություն, որ գոհացներ անեցիներին: Դավադիրներից և դավաճաններից ոչ մեկն էլ չբարձրացավ Անիում: Հույն «կատապաններն» էին կառավարում Շիրակը:

Պակաս ողբալի չէր և Գագիկից Անիի բանալիները ավանդ ստացած հոգևորականի դրությունը: Հերթը այժմ նրան հասավ: Միայն խոր տգիտությունը կամ ոսկիների փայլի պատճառած կուրությունը կարող էր շտեմել, որ բյուզանդականությունը միայն մարմնի ստրկացում չէ, այլ և հոգու: Քաղաքական ազատություն խլող հույները թույլ պիտի տայի՞ն. որ հայերի մեջ՝ մնա կրոնական ազատություն: Պետրոս Գեոտարձը հրաման ստացավ գնալ Կ. Պոլիս:

Մատթեոս Ուռհայեցին մեծ գովասանքներով է խոսում Պետրոսի մասին և նկարագրում է կաթողիկոսարանի հարուստությունները: Քաղաքատունի թագավորները ոչինչ չէին խնայել, որ կաթողիկոսությունը շքեղ կերպով ներկայացնե հայոց եկեղեցու բարձրագույն իշխանությունը: Ո՛չ շքեղություն էր պակասում կաթողիկոսարանին, ո՛չ իշխանական դիրք ու իշխանակություն: Շատ արձանագրությունների մեջ մենք տեսնում ենք, որ առաջ կաթողիկոսն է հիշատակվում, հետո միայն թագավորը: Այսպես էր մանավանդ Պետրոսի ժամանակ: Եվ Ուռհայեցին պարզ ասում է. «Կաթողիկոսական աթոռը հայոց թագավորության աթոռից նվաստ չէր»: Պետրոսը տիրում էր մի ընդարձակ եկեղեցական պետության վրա: Հինգ հարյուր թեմեր էին հնազանդվում նրան, եպիսկոպոսների թիվը հարյուրների էր հասնում: Կաթողիկոսարանում միշտ գտնվում էին 12 եպիսկոպոս, 4 վարդապետ, վաթսուն երեց և 500 աշխարհական: Մի ահագին արքունիք, ինչպես տեսնում եք. Անին միայն կարող էր այսքան շքեղություն պահպանել իր մեջ: Կաթողիկոսարանին պատկանում էին, ինչպես հիշեցինք, հինգ հարյուր գյուղեր:

Ի՞նչ էր պակասում հոգևոր միապետին: Եվ սակայն այն անտանելի հարցը, որ նա ուղարկեց հունաց աշխարհը՝ «Ի՞նչ եք տալիս»: Մոնոմախը շատ լավ բռնել էր Պետրոսի թույլ

կողմից: Կայսերական հրամանը Գետադարձը կատարեց և ճանապարհ ընկավ մեծ շուքով ու շքեղությամբ: Նա տարավ իր հետ իր բարեկամներին և ազգականներին, որոնց հետ և փառավոր թիկնապահ խումբ, բոլորը երեք հարյուր զինված մարդիկ: Իսկ շքախումբը կազմված փառավոր ջորիներ հեծած հարյուր հալիսկոպոսներից, վարդապետներից, քահանաներից և այլ կրոնավորներից: Բացի այդ բոլորից կային և երկու հարյուր հետևակ ծառաներ:

Աշխարհային փառքի և շքեղության սիրահար կաթողիկոսը, բնականաբար, պիտի և շահամոլ լիներ: «Պետրոսը շատ էր գանձ սիրում և շատերը դրա համար վատաբանում էին նրան», — ասում է Լաստիվերտցին: Կ. Պոլիսը ավելի ևս շոյեց նրա փառասիրությունը՝ շքեղ կերպով ընդունելով նրան: Պալատում նրան նստեցնում են ոսկի աթոռի վրա: Նվերներ ունկնդրությունը վերջանում է, հայ հոգևորականներից մեկը, իհարկե Գետադարձի պատվերով, վերցնում է իր հետ այդ աթոռը: Ծառաները արգելում են այդ, բայց հոգևորականը ընդդիմանում է և բանը հասնում է այն տեղին, որ կայսրը խմանում է այդ վեճը ու ոսկի աթոռը տալիս է ընչաքաղց հյուրին:

Այդ մոլությունը ավելի ևս զրգոելու համար, կայսերական առատ և թանկագին ընծաներ են թափվում հայոց կաթողիկոսի գանձարանը: Ստեղծվում է մի ոսկի վանդակ, որի մեջ նստած Պետրոսը, սակայն, իր եկեղեցու անկախությունը պահպանելու առաքինությունն է ունենում: Նրան արգելված էր վերադառնալ Անի. և խեղճ շահամոլը օտարություն մեջ ոսկի շղթաներով կապկապած էլ կմեռներ, եթե Արծրունիներից մեկը իր երաշխավորությամբ չվերցներ նրան ու շտաներ Սեբաստիա, ուր և նա մեռավ մի վանքում: Իսկ նրա գանձերն ու հարստությունները վերջիվերջո հույների ձեռքն ընկան...

Մարդկային հաշիվներ, մարդկային մոլություններ: Նրանք էին, որ մի ամբողջ աշխարհ դժբախտացրին...

Իսկ ի՞նչ արավ դոռող, արատավոր բյուզանդականությունը դավերով ու խաբեությամբ խլած Անիի հետ: Չկարողացավ պահել իր ձեռքում այդ համեղ պատառը: Պարսկաս-

տանի կողմից սպառնացող վտանգը, սելջուկյան հեղեղը, ուղղվեց դեպի Շիրակ: Գագիկ չկար, Վահրամ չկար: Ուսհայեցին ասում է, թե քաջ Գագիկի քաղաքը պահպանելու համար հույները կին մարտիկ էին ուղարկում: Ահա այդ կիները վատաբար թաքնվեցին Միջնաբերում, երբ Ալի-Ասլանի զորքը մոտեցավ Անիին: Սմբատյան պարիսպները դիմացան, դիմացան, բայց հո նրանք չէին կարող պատերազմող բանակ էլ դառնալ: Անին նվաճվեց, քարոքանդ եղավ առաջին անգամ. հույների ոտը կտրվեց Անիից (1064):

Ուրեմն, միայն 19 տարի տիրապետելու համար էր այնքան զրկանք ու տանջանք կրում Շիրակը: Ո՛ւր էր Գրիգոր Մագիստրոսը: Նա կենդանի չէր, որպեսզի տեսներ, թե ի՞նչ ապահով ձեռքերի էր հանձնել իր տոհմային կալվածները և անհրաժեշտ էր գտնում, որ Գագիկն էլ հանձնե:

Հայրենիքի դժբախտությունները ցավոտ արձագանք էին գտնում հեռավոր արևմուտքում արգելված Գագիկի սրտի մեջ: Նա ամուսնացել էր Արծրունի օրիորդի հետ, ուներ որդիներ, թոռներ: Դեռ հույս ուներ, թե պիտի ստանա իր հայրական ժառանգությունը. և ամեն ժամանակ, երբ հարմար առիթ էր ներկայանում, նա աշխատում էր այդ ուղղությամբ: Նրա որդի Հովհաննեսը եկավ Անի, բայց չկարողանալով այդտեղ անվտանգ ապրել, գնաց Վրաստան: Երկրորդ փորձն արավ նրա որդին, երիտասարդ Աշոտը և հաջող կերպով. Մելիք-Շահից նա ստացավ Անին կառավարելու իրավունքը և շտապում էր դեպի իր պապերի երկիրը, բայց Շեղդատյան տոհմը, որ արգեն Անիի տերն էր՝ դարձել, սպանել տվեց խեղճին, երբ նա Շիրակի սահմանին էր հասել: Նրա դիակը տարան Կ. Պոլիս: Այդտեղ արգեն մեռել էր Հովհաննեսը: Մեռավ և Գագիկը: Անիի Բագրատունիները կորան, անհայտացան:

1064 թվականի արշավանքը ցույց տվեց Կարսի Գագիկ թագավորին, որ իր փոքրիկ ուժով չպիտի կարողանա դիմադրել արևելքի վտանգին, մանավանդ որ արգեն Վանանդը տեսել էր իր մեջ սելջուկներին, փորձել էր նրանց ուժը: Ուստի թագավորը ծախեց իր երկիրը հույներին և նույնպես տեղա-

փոխվեց արևմուտք, այնտեղ բյուզանդականության ալիքների մեջ անհայտանալու համար:

Այսպես ահա, երեք փոքրիկ թագավորությունները, որոնք Հայաստանի արևելյան սահմանագլխի վրա ամրություններ էին, չկարողացան միանալ իրար հետ և հատ-հատ Բյուզանդիայի որսը դարձան: Կ. Պոլսի արքունիքի քաղաքականությունը դրանով լրանում էր, մի քաղաքականություն. սակայն, որ դատապարտված է պատմության մեջ իբրև կարճատև, վնասակար նույնիսկ Բյուզանդիայի շահերի համար: Այդ շահերը պահանջում էին, ընդհակառակն, որ քրիստոնեություն երեք առաջավոր պահակները ուժեղանան, որպեսզի կարողանային դիմադրել արևելքի վտանգին: Դրա փոխարեն, բյուզանդականությունը մերկացրեց սահմանները և թույլ տվեց, որ Միջին Ասիայի հորդանները մտնեն կայսրության մեջ, վերջիվերջո էլ ոչնչացնեն Բյուզանդիան:

Բայց ի՞նչ միջիթարություն կարող է լինել այդ տխուր հանգամանքից: Փակենք պատմության էջերը: Անիի վիճակը Բագրատունիներից հետո մեզ արդեն հայտնի է: Ընկնելով, վեր կենալով, լավ օրեր տեսնելով, բայց վատերից էլ անչափ տանջվելով, նա մի կերպ դարերով կյանք քարշ տվեց: Այդ ժամանակները նա արդեն նախկին փառքով ապրող մի քաղաք էր: Գլխավորը այն 84-ամյա շրջանն է, երբ Անին Բագրատունյաց մայրաքաղաք էր: Այդ շրջանն է Անին Անի գարձրել, այդ շրջանն է, որ այսօր էլ բոլոր այցելուների առաջ հանդես է գալիս իբրև պատմական փառավոր ժամանակների մի հուշարձան: Վերջացավ Բագրատունիների շրջանը և այդ վերջից հետո Անին արդեն ավերանք ու դժբախտություն քարոզող մի քաղաք է: Լաստիվերտցին, երևի 1064-ի ավերանքից հետո, արդեն գրում է.

«Այժմ թագավորը, պատվից ընկած, կալանավոր, գերունման նստած է հեռու տեղերում: Այսպես էլ հայրապետական աթոռը, ամայացած իր վրա նստողից, երևում է տխուր դեմքով, իբրև մի նորահարս կին, որ այրի է մնացել: Հեծելազորքը, անտեր մնացած, թափառում է, ո՛րը Պարսկաստանում, ո՛րը Հունաստանում, ո՛րը Վրաստանում: Իշխանական տոհմերից կազմված սեպուհ գունդը, զորս եկած հայրենի-

քից, ընկած իր ճոխությունից, ուր որ լինում է, առյուծների կորյուներին պես մոնչում է: Թագավորական պալատը ավերակ և անմարդ: Մարդաբնակ աշխարհը բնակիչներից թափուր մնաց: Ուրախության ձայն չէ լսվում այգեքաղի ժամանակ, ոչ էլ հնձան կոխողների երգերը: Մանուկները չեն խաղում ծնողների առաջ և ոչ էլ պատվով ծերերը նստում են հրապարակներում: Հարսանիքի ձայն չէ լսվում, ոչ էլ հարսնարանի առագաստներն են զարդարվում: Այս ամենը պակասեց ու կորավ և այլևս չի հարություն առնի: Այժմ ամենինչ մեզ համար ողբի փոխվեց և այն ուրախության զգեստը սև սգավոր քուրձի փոխվեց: Ո՛ր լսելիքը կտանն մեր թշվառության պատմությունը: Ո՛ր քարե սիրտը չի թուլանա հառաչելով և չի փշրվի հեծեծալով»:

Կարծես այսօր այստեղ, մեր կողքին է նստած զգայուն Լաստիվերտցին:

«Այս ամենը այն վաճառքից եղավ»,—հառաչում է նա: Այդ էլ կա, այդ էլ տեսնում ենք այստեղ...

ԺԵ

Հյուրատան մեծ սենյակում մեզ, հոգնած, արևից խաշված ուղեորներին, սպասում է խալաթյանների սիրալիր ոռսրտաբաց հյուրասիրությունը: Բացված են սեղանները. ոչ ոք չկա դրսում, սենյակը լցվել է մինչև պոռնոգները: Կենդանի աղմուկ է տիրում, բազմամարդ ընկերության աղմուկը: Լուռ ժարդ չկա, լսվում են հնարքներ, ծիծաղ և տպավորություններ, կցկտուր տպավորություններ, որոնց համար շատ անգամ մի խոսք, մի բացականչություն էլ շատ բավական է:

Քաղցր է այս զով ստվերը Անիի անողորմ արևից հետո: Ավելի քաղցր է ընկերների և ծանոթների լայն շրջանում հանգստանալը այնքան տեսնելուց, այնքան զգալուց հետո: Ամեն մեկը մի տրամադրություն է բերել դրսից: Եվ մեր ճաշի սեղանը տրամադրությունների սեղան էլ է: Իրար լսում ենք, իրար հասկանում ենք: Բայց խոսքը վատ հաղորդիչ է:

Նա չէ կարող սրտի ամբողջութիւնը դուրս բերել, դնել սեղանի վրա: Նա սպունդի պես չէ ծծում այն ամենքը, ինչ շարժվում է սրտի գաղտնարաններում, ինչ գույն ու ջերմութեան աստիճան է հաղորդում մտքին ու տրամադրութեան: Ո՛չ, ընկերական գեղեցիկ, սրտաբաց, մտերմական շրջանի մեջ էլ ամեն ինչ չէ արտահայտվում ձայնով: Այնտեղ, ներսում, դեռ մնում են բաներ, որոնց ամեն մեկը իր, միայն իր նվիրական, սուրբ սեփականութիւնն է համարում և պահում է միայն իր համար:

Զգիտեմ ուրիշներն ինչպես, ես մի ինչ-որ ճնշված տրամադրութեան տակ էի ինձ զգում, թեև խոսում էի, թեև ոչնչով հետ չէի մնում շրջանից, բայց մի ինչ-որ անտեսանելի, հզոր զսպանակ ստիպում էր ինձ շփոթացվել, պահպանել օրինավորութեան այն աստիճանը, ուր մարդ իրան պարտավոր է զգում հաշվի առնել յուրաքանչյուր խոսք, յուրաքանչյուր շարժումներ, որպեսզի չվիրավորեն շրջապատի տխրական տրամադրութիւնը:

Ամբողջ ժամանակ ինձ վրա բռնացած էր այն ամենը, ինչ զգում և անում ես մի սգատան մեջ: Ինձ թվում էր, թե այստեղ մի մեռելական դրութիւն կա, որը պետք է հարգել, պետք է իրան պատշաճավոր վերաբերմունքով մեծարել: Խոսք, զրույց, կերուխում, կենացներ, սրախոսութիւններ,— ես ոչինչ չէի թողնում, ոչինչ չէի մոռանում, բայց այդ բոլորի մեջ ինձ թվում էր, թե մի մեռելատան ենք, մեռելահաց ենք ուտում, մեռելների թասն ենք խմում: Թվում էր թե մեռելատները մեր համեստ, սակավախոս, հարգելի վանահայրն է, և ամեն մեկս պատրաստ ենք մեր խոսքով, մեր շարժումներով ու վարմունքով նրան մխիթարել, ցույց տալ, որ զգում ենք նրա ներկայացրած գաղափարը— սգատան վշտի գաղափարը:

Պատասխանում է նա իր կենացին, պատասխանում է ոչ իր կողմից, այլ ավերակների այս ամբողջ քաղաքի կողմից,— և մեռելատան ու մեռելահացի տպավորութիւնը ավելի սաստկանում է, լցնում է սրտիդ բոլոր խորշերը: Խոսողն և անհիշատակ մահերի դարավոր շեղքեր են կուտված այս պատերից դուրս. նրանք մամուռով չեն պատված,— Անին

մամուռ չէ սիրում,— բայց փոշիացել են, անշարժացել և իրանց կենդանի ներկայացուցիչ են թողել այս մենավոր հոգևորականին: Նայելով նրա համակրելի պարզ դեմքին, կարծում ես, թե դա է միակ կապը մահվան սովերների մեջ հանգչող աշխարհի և կենդանի մարդկութեան մեջ, կարծում ես թե եթե մի բան ունես ասելու այդ աշխարհին, պետք է նրա հավատարմատարի միջոցով ասես...

Օտարոտի, քմահաճո չէր այդ տրամադրութիւնը, որ տիրում էր իմ ամբողջ էութեան վրա: Այնքան տեսնել, այնքան ման գալ պատմութեան մեռելային սովերներում և պահպանել առօրյա տրամադրութիւնը, իհարկե, անկարելի է: Ամբողջ ժամանակ, առանց մի վայրկյան դադարի, մեր պատահանով մեզ է նայում Մայր եկեղեցին իր կտրատած, ջարդված կողերով: Նրա մոտ, պատի տակ գլուղացի երեխաները հայերեն երգեր են երգում: Մեր վանահայրն է նրանց սովորեցրել այդպես երգել: Որքա՛ն մեղամաղձոտ են մանկական դվարթ ձայները ավերակների մեջ, որքա՛ն հուզում են ա՛յսպիսի մի միջավայրում: Երեխաները այն գլուղացիներից են, որոնց առավոտյան տեսանք ձորի քարայրերում: Եկել են և նրանց մայրերն ու քույրերը, որոնք գլուղական ամոթխածութեամբ նայում են մեր մեռելահացին...

Նվ երբ մտածում եք թե ինչ ու ինչ տեղերից ենք եկել ու հավաքվել այս բոլոր կենդանի մարդիկս... Գավառական առանձնացումների, գավառական նախապաշարմունքների ու հակառակութիւնների զոհ է այս շքեղ քաղաքը: Այժմ մենք առաջ ենք քայլել. այժմ տարբեր գավառների, տարբեր վանդութիւնների ներկայացուցիչ հայերս հավաքվում ենք մի հարկի տակ, խոսում ենք, զգում ենք միասին, որովհետև գավառական բաժանումները այժմ այլևս չեն կարող այնքան հզոր լինել, քանի որ մենք արդեն ունենք մի ընդհանուր գրական լեզու, որ խոսակցական է դառել կամ դառնում է:

Ճաշից հետո, մինչև որ մեր կառքերը կպատրաստվեն, մենք մեր անձով սենյակից դուրս ենք գալիս զովութիւն որոնելու: Իսկ ո՛ւր կարող էինք նրան գտնել, եթե ոչ Մայր եկեղեցու կամարների տակ:

Դարձյալ այնտեղ ենք, դարձյալ Տրդատի դարսած քա-

բերը համաշխարհային մեր միտքը: Եվ երկար նայում ենք, երկար էլ խոսում ենք այս սյուների, այս կամարների պահպանության մասին:

Մենք խնդրեցինք վանահորը ցույց տալ նվիրատվությունների մատյանը: Տեսանք նրան, մեծ մասամբ դեռ սպիտակ, չգրված: Մի քանի թերթեր միայն ծածկված են անուններով և թվանշաններով: Խեղճ ու աղքատիկ են այս վերջինները, այնքան խեղճ, որ, կարծում եմ, մենք կամաչեինք ցույց տալ նրանց Անին այցելող օտարազգիներից մեկին: Ամենախոշորը այդ թվանշանների մեջ 100 ութբլի է, այն էլ մի վարդապետից նվիրված: Մնացածները 10-ից դեն չեն անցնում: Եվ այդ կարճ ու աղքատ ցուցակը մի քանի տարիների ընթացքում է կազմվել: Ավերակների ի՞նչ պահպանություն այսպիսի խեղճուկ փշրանքներով, երբ նրանք բավական չեն նույնիսկ վանահոր ապրուստի համար:

Հարցրե՛ք յուրաքանչյուր հային.— նա կկամենար, որ Բարգատունյաց շքեղ հիշատակների ամեն մի մնացորդը պահեր-պահպանվեր, կկամենար նույնպես որ վանահայր, մինչև իսկ ամբողջ մի բարեկարգ միաբանություն ապրեր այստեղ ամեն ժամանակ, բայց...


«Լոկ այդ բանը ինձնից կոպեկ չպահանջեր»,— պատասխանում է յուրաքանչյուր հայի կողմից՝ մեր արատները այնքան լավ ճանաչող բանաստեղծը:

Սարսափելի կոպեկ, երբ նա հայկական է...

Ահա կոպեկ չէ պահանջվել այցելուների մատյանի մեջ մտնելու համար,— և որքան շատ են եղել ցանկացողները: Ես թերթում եմ այդ անշուք, քրքրված զիրքը: Զգացմունքների մի ամբողջ Աստվածաշունչ, ուր հայի հետ Անին մեծաբողների շարք են կազմում և շատ օտարազգիներ:

Զգացմունքը հարգելի է: Զգացմունքը հարկավոր է մարդուն: Հարկավոր է մանավանդ Անին, անզգայության, մարդկային քարասրտության այս հսկա նահատակին: Բայց զգացմունքը պետք է ծննդաբերող լինի, պետք է մարդու ձեռքը տանն դեպի գործ:

Թե չէ՝ զգացմունքների մի ամբողջ մթնոլորտ, իսկ նրա մեջ այսօր էլ մլլում է շարունակվող ավերանքի փոշին և կո-



պիտ ու անողոք կախւած է իսպառ անհետացման, վերջնական խորտակման սպառնալիքը...

Դարձյալ մեր կառքերը շորս անիւններով զարնվում են ավերակների բյուրավոր քարերին:

Ավագ Դուռը մեզ ընդունել էր գիշերով, երբ լուսինն էր իր աղոտ լապտերը կախել երկնքից, այժմ դուրս է տալում ամառնային օրվա այն ժամին, երբ անցել է միջօրեի տապը, և արդեն իրիկնապահի հովերն են բարձրանում: Տպավորութունը տարբեր է մտնելու և դուրս գնալու միջոցին: Նկողը դրսից տեսնում է իրար մոտ կանգնած կոկոր աշտարակները, որոնք պահպանել են իրանց ձևը: Ներսից գնացողը ունի իր առջև այդ աշտարակների մյուս երեսը: Ավերված, մաշկված, նրանք ցցվում են իբրև բացված սև դերեզմաններ, իբրև հսկա մոմխանների պատյաններ, որոնց մեջ այլևս մարմին չկա: Այդ սև, ներսից կիսակոկոր և վերևից կամարավոր պատըռվածքներից մահը դիտում է իր իշխանության մատնված քաղաքը:

Իսկ ինքը, Ավագ Դուռը: Ներսից նա ավելի սաստիկ ավերված է. կուշ է եկել իր քառակուսի, երեք հարկանի աշտարակի մոտ, կողքը տվել է նրան, բայց էլի սաստիկ ճնշված է իր գլխին ու ուսերին նստած քարակույտներից: Տխուր դուռ:

Քանի դեռ Անիի ներսումն ենք, հիշենք, որ այստեղ, պարիսպների մոտ, Ավագ Դուռն աջ կողմում, պրոֆեսոր Մառը 1892 թվականին պեղել, դուրս է բերել մի փոքրիկ եկեղեցի, Գրիգոր Լուսավորչի անունով: Հարգելի գիտնականը մեծ հիացմունքով է խոսում այդ փոքրիկ շինության գեղեցկությունների մասին: Դրսից այդ ս. Լուսավորիչը ծածկված է եղել շքեղ քանդակներով, իսկ ներսից բոլոր պատերը, մինչև գմբեթի ծայրը հարուստ, գունավոր նկարներով էին ծեփված, որոնք, իհարկե, կրոնական բովանդակություն ունեին: Ամենից հետաքրքրականն այն է, որ եկեղեցու մեջ պատերի մեկի առջև դրված է եղել եկեղեցին շինողի քանդակագործ պատկերը, որ ձեռքին բռնած ուներ եկեղեցու կաղապարը: Պատկերների տակ, ծեփի վրա, եղել են հայերեն արձանագրություններ, որոնք պատկերների բովանդակությունն էին

ցույց տալիս: Սեղանի շուրջը հրաշալի զարդեր էին կազմված հայերեն տառերից և այլ նկարներից:

Ո՛ւր են այժմ այդ շքեղ շինության մնացորդները: Եկեղեցու մի փոքրիկ բեկոր է երևում ցույց տված տեղի վրա: Գուցե այդ է փոքրիկ ս. Լուսավորիչը: Բայց ո՛ւր են նրա զարդերը...

Անցնենք այսպիսի հարցերի մոտով, ահա անցանք Ավագ Դուռն, ապա պարիսպների միջով, և դաշտն է փռված մեր առջև, իսկ դաշտի վրա փռված են անթիվ, անհամար քարեր: Բնակության հետքեր քաղաքից դուրս: Գուցե և: Նրանք անկարելի չեն, նրանց մասին վկայություն է տալիս դաշտի երեսին բարձր ցցված ավերակը՝ Չորան-քիլիսեն: Մոտենում ենք նրան և տեսնում ավերանքից աղճատված մի թե երկու պատի կտոր, որ հազիվհազ հաստատում է թե ինքը ճիշտ որ, եկեղեցի է: Եվ սակայն, ներսեսյանը իր նկարագրության մեջ ասում է, թե նա կոկորակ ու երկար գմբեթ ունի: Ունեցել է մի ժամանակ...

Հովիվը, որ, ավանդության նայելով, շինել է այս եկեղեցին, ունեցել է ոչ միայն ճաշակ, այլև շատ ծանր գրպան: Գուցե հովիվների և երկրագործների թա՛ղ էր այստեղ: Այժմ Հովիվ-եկեղեցին Անիի տխուր ու ջարդված հյուրընկալն է. ամենից առաջ նա է դիմավորում այցելուին, ամենից երկար տեղ նա է ճանապարհ դնում Անիից գնացողին:

Ահա նա էլ անհետացավ: Այլևս Անի չկա: Դաշտեր, Ուշթափայի լանջերը իջնում են դրանց վրա:

Գնում ենք Անիից: Զարմանալի բա՛ն: Պատմական վայրերում յուրաքանչյուր մի հասարակ շարժողություն, մի սովորական խոսք ընդունակ է մարդու մտքի մեջ մի ահագին հիշատակ զարթեցնելու: Այն, որ մենք գնում ենք Անիից, գնում ենք ընդմիշտ, հեռանում ենք ամիսոսանքով, հեռանում ենք տխուր հիշատակներով, հանկարծ ինձ դրդում է երևակայության աչքով տեսնելու այս դաշտերը, այն լանջերը փախստականներով ծածկված:

Նրանք էլ հեռանում էին, դժբախտության այն հազարավոր զավակները: Եվ քա՛նի անգամ... Դարերի ծալքերի մեջ կորել են նրանց հառաչանքները, աչքերից ծորող արտա-


սունքը, երբ հուսահատ ու անմխիթար, թողնում էին իրանց գեղեցիկ հայրենիքը, իրանց նախնիքների գերեզմանները, իրանց հողերն ու կայքերը և հնալուժ փախչում էին գլուխ ապրեցնելու:

Ո՞ւր: Նեղ ու քարքարոտ ուղիներ են օձերի պես պտըտվում Ուշ-թափայի շուրջը: Մի՛ կարծեք, թե դրանք կարճ են, շուտով կմոլորվեն Շիրակի դաշտերում, կկանգնեն մի տեղ: Անեցի փախստականների ոտների տակ դրանք անհուն երկարություն ունեցող ճանապարհներ էին: Այստեղից Լեհաստան, այստեղից Վոլգայի ափերը... Այստեղից դեպի ամեն կողմ, ուր կարելի էր հալածականի դառն ճակատագրից ազատվել: Ինչպե՞ս էին գնում, ինչո՞ւ էին գնում: Մով, սար, անապատ, գետ ու անտառ, հող ու քար—ամեն ինչ իր կոշտացած գարշապարի տակ էր տալիս փախստականը: Գնում էր՝ դիակներ փռելով այդ տանջանքի ու անեծքի ճանապարհների երկու կողմով: Գնում էր, այստեղ ամայություն թողնելով: Ամայությունն է միայն, որ չէ տանջվում:

Եվ ամայությունը գալիս էր բռնելու մի ազնվական, ընդունակ ժողովրդի տեղը, մի ժողովրդի, որ իր ազգի պատմության մեջ միակ և եղակի օրինակն է տվել իր աշխարհաշինությանը, իր մեծագործություններով: Նա տարավ իր Անիի անունը, Անիի շնորհները, զարմացրեց իր անեցի լինելով ամենքին և այդ պատճառով էլ հայ ժողովրդի մեջ անեցի լինելը նախանձելի պատիվ մնաց, որ այսօր էլ դեռ շատ ու շատ գաղթավայրերի պարծանքն է:

Հասանք Ուշ-թափայի ստորոտներին, իսկ ես մտքով դեռ այն գաղթականների հետ եմ, տեսնում եմ նրանց փախուստը, նրանց հոգսերն ու մտքերն եմ դուշակում, նրանց կակիժն ու կարոտն եմ զգում: Ընդարձակ է Շիրակի դաշտը, բայց բավականանո՞ւմ էր նա գաղթականների լայն հոսանքը տեղավորելու: Գնում էին հազարավոր տներ, գնում էր մեծատունը, գնում էր աղքատը:

Ապում են, թե այդ դժբախտ բազմությունները մի հայ վարդապետի անեծքով դատապարտվեցին կոտորածի և գաղթի: Այս խոսքը վարդապետներն են հնարել, որպեսզի իրանց համար հեղինակություն ստեղծեն: Անին ճգնավոր-



Հովվի եկեղեցին (Անիի պառիսպներից դուրս)

ների աչքի փուշն էր,— ես այդ կարդացել եմ: Շատ կար նրա մեջ կենսունակություն, շատ էր նրա կյանքը հարուստ ու պարարտ: Բայց ինչի՞ նշան էր դա: Վարդապետների օրհնություններով չէր այդ փարթամությունը երկնքից ընկել, որպեսզի նրանց անեծքով էլ խորտակվի: Ժողովուրդը պողպատ ունեւր իր բազուկների մեջ, խելք ունեւր իր գանգի տակ և աշխատում էր, հարստանում էր, վայելում էր իր վաստակածը: Վարդապետները ուզում էին, որ այդպես չլինի, ուզում էին, որ մի մեծ ճգնաժամից դառնա մեծ քաղաքը: Եթե երկինքը մի վարդապետի համար այդքան սարսափելի վրեժ-խնդրություն պիտի գործ դնեւր, էլ ինչո՞ւ անեցինք զար-յուրավոր եկեղեցիներ ու վանքեր էին զարդարում իրանց առատ նվերներով և աղոթողների խմբեր էին ապահովում իրանց հարստություններով:

Ո՛ր: Այդքան շքեղ բացված բարօրությունը չէր կարող ինչպես ասվում է, իր գլուխը չուտել այն երկաթի դարերում, երբ համարյա անխախտ արդարությունն էին համարվում քաղաքակրթված և վայրենի տիրողների համար: Ով աշխատող էր, նա պիտի հեծեծանքների մեջ ապրեր: Եվ վարդապետների հարուստ ու զարդարուն վանքերն ու եկեղեցիները չէին, որ երկոտանի գաղաններին ցույց էին տալիս, թե կարելի է հարստություն շատ դուրս մոզել այս երկրից: Այդ ինչ աստվածություն էր, որ ոսկով ու արծաթով ծանրաբեռնված իր աղոթատները բուերի բնակարան դարձնելը համարեց արդարություն այս երկրի համար: Վարդապետական անեծքի շատ տարածված ավանդությունը վանական այն դժբախտ հասկացողության արդյունքն էր, որ կարծում էր, թե եթե այդ ժողովուրդը կոտորվում, սպանվում է, պատճառն այն է միայն, որ նա մեղավոր է: Միջնադարյան խավար: Քանի՞ ազնիվ բռնկումներ է նա հանգցրել, քանի՞ բազուկներ է թուլացրել, որքա՞ն և որքան ազատարար եռանդ է սպանել...

Այստեղ, երեք դադաթների այս ստորոտներում, ես տեսնում եմ կանգ առած փախստականներին, որոնք վերջին հայացքն են գցում իրանց սիրուն քաղաքի վրա, հարյուր ու միևրորդ անգամը հառաչում են, նորից և նորից արտասունք-

ների կաթիլներ են ծլլացնում և բռնելով կանանց և երեխաների ձեռքից, աստված են կանչում, երեսները դարձնում դեպի անծանոթ, հեռավոր աշխարհները: Փախչում էին նրանք տանջանքից: Բայց ազատվո՞ւմ էին տանջանքից: Իբրև մարդ՝ գուցե, իսկ իբրև հայ՝ ո՛չ: Տանջվեցին նրանք և հաստանում, տանջվեցին Մուղավիայի երկնքի տակ: Տանջանքը հայի հետ է...

Թո՛ղ այստեղ մնան ամեն ժամանակ և ամեն դեպքի մեջ թշվառ գաղթականները: Ահա մեղանից էլ ծածկվեց ավերակների երկիրը: Ալաջայի արևելյան ստորոտները շատ ետ մնացին: Շտապենք, ճանապարհ շատ կա, իսկ արեգակը արդեն շատ է թեքվել դեպի արևմուտք, և ռուս-թուրքական պատերազմի հսկա ականատեսները—Ավլիար, Կըզըլ-թափա, Յաննի, Կարադալ և ուրիշ բարձրությունները արդեն երկկոյան կապտագույն ստվերների մեջ են փաթաթվում:

Մենք ուրիշ ճանապարհով ենք վերադառնում, և մեր առջև դուրս եկող հայ և թուրք գյուղերը ուրիշ անուններ ունին: Սակայն տարբերությունը միայն այդ անուններն են: Շիրակի նույն գյուղական տեսարանը, քարերի, շորացած ցեխի, աթարի կույտեր կանաչ, դարմանալի կանաչ դաշտերում, վճիտ լեռնային ջրերի մոտ:

Վերջ ունի՞ն այդ կանաչ տարածությունները: Արևը մայր մտնելու վրա մենք գոհությամբ տեսանք որ վերջ, այո՛, ունին: Տեղի դիրքը փոխվեց: Մենք մեծ, գառիվայր լանջերով իջնում էինք դեպի մի ձոր, որ ընկած էր արևմուտքից դեպի արևելք և որի արևմտյան կողմում բարձրացած էին մեծ բլուրներ: Շուտով ձորի լայն, կանաչ հատակում երևաց բավական լայն, կապուտակ գետը, Կարս-չայն էր, այսինքն նույն Ախուրյանը, բայց առանց Ալեքսանդրապոլի Արփաշայի: Գյուղական փայտե, հողածածկ կամուրջով անցնում ենք գետը: Մի փոքրիկ գյուղի մեջ ենք: Արգինան է: Ի՞նչ դալար ու գեղեցիկ հովիտ ունի այստեղից Ախուրյանը:

Կամուրջի մոտ երևում է նոր ձևի մի ջրաղացի մեծ շինությունը, որ պատկանում է մի ռուս գյուղացու: Կատարյալ անակնկալություն Շիրակի գյուղական աշխարհում, ուր այսպես հաստատ թագավորում է նահապետականությունը, ուր


նոր ժամանակը դեռ համարյա ոչինչ է կարողացել մտցնել Բայց ինքը, գյուղը դեռ հարազատ է, դեռ հպատակ է ավան-
գականության, թեև վարչական կենտրոն է:

Հայեր շատ քիչ կան այստեղ. գյուղը պատկանում է
առաներին և թուրքերին: Եվ սակայն, սա պատմական Արգի-
նան է, որ Բագրատունիների ժամանակ ամբողջ Հայաստանի
կրոնական մայրաքաղաքն էր, թեև իր մեծությամբ դարձյա-
մի գյուղ էր:

Շիրակի քաղաքական կենտրոնը տեսնելուց հետո մենք
կամեցանք նայել և նրա հովանու տակ հաստատված հոգևոր
միապետության կենտրոնը: Դրա համար էինք շեղվել մեր
ուղղությունից, բավական երկարացնելով մեր ճանապարհը:
Բայց ի՞նչ տեսանք:

Գյուղի արևելյան մասում, տների մեջ, բարձրանում է
ավերակի մի հսկա կտոր, իսկապես մի պատ միայն, հյու-
սիսայինը, որին կպած է արևմտյան մի փոքրիկ մասը: Երե-
վում են հայերեն արձանագրության կտորներ, երևում են
դռան հետքեր: Պատը հոյակապ շինության տպավորությունն
է թողնում: Նրա քարերից, նրա դարավածքի ձևերից Բագրա-
տունյաց ժամանակի հովերն են գալիս: Ամփոփ ձևի, ամբող-
ջության մասին ոչինչ հասկացողություն կազմել չենք կարող:
Բայց բարձր ու գեղեցիկ շինության այդ մեծ կտորը իսկույն
փոխադրում է ձեզ Անի, կապում է ձեր միտքը նրա շինու-
թյունների հետ:

Եվ իրավ, Արգինան սերտ կապված էր Անիի հետ, Ար-
գինան զարգարողն էլ Անին էր: Այս պատը, որ կանգնած է
այսպես մենակ ու անհիշատակ, Տրդատ ճարտարապետի
գործն է: Ասողիկը պատմում է, որ խաչիկ կաթողիկոսը նրա
ձեռքով շինել տվեց կաթողիկոսարանի Մայր եկեղեցին: Եվ
ոչ թե մենակ այս եկեղեցին, այլև ուրիշ երեք եկեղեցիներ
նույն այս տեղում: «Շինեաց զսուրբ կաթողիկէ եկեղեցին վի-
մարդեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանօք զմբեթարդ
խորան երկնամասն, հանդերձ ևս երիւք եկեղեցեօք՝ նոյնաձև,
հրաշատեսակ, չքնաղաղեղ յօրինուածով. և զարդարեաց մե-
ծապալծառ, ծիրանածաղիկ, ոսկեթել անկուածովք ի զարդ»



Արգինա կաթողիկէ եկեղեցւոյ տփեռնի տեսքը (X Գ. մեզ)

ոսկւոյ և արծաթոյ և ամենայն զարդու պայծառութեան ջահարորոք լուսաւոր անօթոց»:

Բանաստեղծական չափազանցութիւններ այս ոգևորված գովասանքների մեջ չպետք է լինեն: Բավական է շմոռանալ կաթողիկոսական աթոռի այն ժամանակվա դիրքը, ահագին հարստութիւնները: Անշուշտ, փառահեղ է եղել և խաչիկի շինել տված կաթողիկոսարանը—միշտ հիշենք, որ Տրդատն էր այդ բոլոր շինութիւնների կառուցանողը: Ուրեմն, այժմյան ողորմելի Արգինան ի՞նչ փարթամ և ճոխ կեցութեան տեղ էր, որքա՛ն զարդեր ուներ:

Տասներորդ դարի առաջին կեսի վերջում հայոց կաթողիկոսական աթոռը Աղթամարից տեղափոխվեց Շիրակ: Բագրատունի թագավորների համար նշանակութիւնից զուրկ չպիտի լինեն այն կարևոր հանգամանքը, որ համազգային կրոնական բարձր իշխանութիւնը գտնվում է Վասպուրականի թագավորների հովանավորութեան տակ: Ունենալ իր երկրում կաթողիկոսարանը նշանակում էր բարեկամ ու դաշնակից լինել մի ուժեղ հեղինակութեան հետ և նրա միջոցով քաղաքական մեծ ազդեցութիւն ձեռք բերել: Արաս թագավորը, որի ժամանակ տեղի ունեցավ կաթողիկոսութեան տեղափոխութիւնը, երևի շատ էր աշխատում գրավել ժամանակի կաթողիկոսին ոչ միայն իր երկրի խաղաղ ու ապահով դրութեամբ, այլև խոշոր կալվածական հարստութիւններով:

Աթոռը փոխադրողը Անանիա Մոկացի կաթողիկոսն էր: Արասի մայրաքաղաքը Կարսն էր և Անանիան կաթողիկոսարանը հիմնեց Արգինայում, որ Կարսից հեռու չէր: Հետաքրքրական է, որ միջին դարերում էլ հայ կաթողիկոսները աշխատում էին հոգևոր բարձրագույն իշխանութիւնը տոհմային սեփականութիւն դարձնել, ինչպես այդ արել էին Գրիգոր Լուսավորչի որդիներն ու թոռները: Այսպես, Անանիան Մոկացիների տոհմը առաջացրեց կաթողիկոսական աթոռի վրա, գոնե շորս կաթողիկոս Շիրակում այդ տոհմի ներկայացուցիչներն էին: Տարբերութիւնը այն էր, որ մինչդեռ Գրիգոր Լուսավորչի հաջորդները ամուսնանում էին և իրանց որդիներին էին հանձնում աթոռը, միջնադարյան կաթողիկոսները ամուսնացած չէին, և կաթողիկոսութիւնը

նրանց մոտիկ ազգականներին էր անցնում: Այսպես, Արգինայում շինութիւններ կատարած խաչիկը Անանիայի քրոջ որդին էր, Պետրոս Գետադարձը խաչիկի եղբայրն էր, իսկ երբ դնաց Հունաստան, իր տեղը տվեց իր քրոջ որդի խաչիկ Երկրորդին: Քիչ ժամանակից հետո կաթողիկոսութիւնն անցավ Գրիգոր Մագիստրոսի ժառանգներին, այսինքն Պահլավունի տոհմին:

Արգինան կաթողիկոսական աթոռ մնաց մինչև Պետրոս Գետադարձը, որ թողեց իր եղբոր կառուցած հոյակապ շինութիւնները և տեղափոխվեց Անի, ուր, իհարկե, ավելի մեծ հարմարութիւններ կային թագավորական ճոխութիւններով ապրելու համար: Ասողիկը, խոսելով Սարգիս կաթողիկոսի մասին, որ հաջորդեց այս շինարար խաչիկին, իբրև մի նշանավոր հանգամանք հիշատակում է այն, որ նա առանց կաշառքների և շողոքորթութիւնների կաթողիկոս դարձավ: Այս հանգամանքը մասամբ հասկանալի է դարձնում, թե ինչու կաթողիկոսները հարուստ մարդիկ էին և չափազանց սիրում էին հարստութիւնը: Ոսկին ճանապարհ էր բաց անում դեպի փառք, ոսկին դիրք ու հեղինակութիւն էլ էր ստեղծում:

Մոկացոս տոհմից միայն խաչիկ Առաջինն էր, որ կաթողիկոսարանի մեծ հարստութիւնները Արգինան շքեղազարդելու վրա ծախսեց: Պետրոսը ոչինչ չէ արել. ինչպես տեսանք, նրա հավաքած ու պինդ պահած գանձերը վերջը հոռուց սեփականութիւն դարձան: Մեկը իր երկրին տվեց նրանից ստացած գանձը, մյուսը պահեց նրան իբրև գեղեցկութիւն, անձնական զարդարանք, որ անհետացավ անօգուտ:

Սակայն ասենք և այն, որ մեր երկիրը այնպիսի բախտ չէր ստացել, որ կարողանար երկարատև երջանկութիւն պահպանել իր որդիների մտավոր ու նյութական գանձերով: Ամեն ինչ ավերակ ու փոշի դարձավ: Եվ այսօր այս մի հատ մեծ պատն է, որ ցույց է տալիս, թե որքան խղճուկ մի բան է մնացել ութ հարյուր տարի առաջ ծաղկած ու գեղեցկացրած Արգինայից:

Տեղի դիրքը այնպես է, որ շատ բան չէր էլ կարող մնալ: Արգինան բաց է ամեն կողմից, բնական ամրութիւններ չունի: Բացի դրանից, Ախուրյանի հովիտը այն ճանապարհն է,

որ տանում է դեպի արևմուտք, դեպի Կարս: Մարտափետ
կերպով ոտնակոխ է եղել նա:

Արգինայի վրայով է անցնում Ալեքսանդրապոլից Կարս
տանող խճուղին: Մեր կառքերը հեշտ ու արագ սլացան նրա
վրայով: Գյուղական ճանապարհների անողորմ երեքանքը մի
տխուր հիշողություն դարձավ մեզ համար:

Հրաշալի լուսնակ երեկո էր, երբ մենք մտանք Ալեք-
սանդրապոլ:

ԺԶ

Վերջացավ մեր ճանապարհորդությունը, պիտի վերջանա
և իմ խոսքը Անիի մասին: Բայց ես վերջակետ չեմ դնում:
Եթ օր էլ ունենք, ընթերցող, երբ էլի Անիի հիշատակներդ
գուրս կգան մեր աչքի առաջ, բայց ուրիշ տեղ, ուրիշ հանգա-
մանքների մեջ:

Հետևյալ օրը, մինչև ճաշը, երբ մենք բավական կազ-
դուրվել էինք անքուն գիշերներից և տանջալից ճանապարհ-
ներիով կառքերի մեջ ոստոստալուց հետո, Գր. Խալաթյանը ա-
ռաջարկեց մեզ մի թնթև ճանապարհորդություն էլ՝ մինչև
Ղանլիջա անունով գյուղը: Օրը կիրակի էր, Ալեքսանդրապո-
լի փողոցներում տիրող մեռելությունը ցույց էր տալիս, որ
անծանոթ եկվորներս ոչինչ զվարճություն չպիտի տեսնենք
գավառական տոնի ժամանակ էլ, երբ դարձյալ ամեն ինչ ըն-
տանիքների ծոցում է ամփոփվում:

Նույն պարզ ու տաք եղանակն էր: Մեր կառքերը գուրս
եկան Ալեքսանդրապոլի փողոց փողոցներից և դիմեցին դե-
պի հյուսիս: Հարթ տափարակով էինք գնում. կարճ միջոցից
ծովեցիներ դեպի ձախ, և մեր առջև բացվեց մի մեծ ձոր, որի
խիստ քարքարոտ և շատ դառիվեր ձողի վրայով էր անցնում
մեր ճանապարհը: Իջանք կառքերից, ոտով գնացինք դեպի
գյուղը, որ տեղավորված է սև-սև ու գորշ ժայռերով պատած
մի լանջի տակ:

Գա է Ղանլիջան, ավելի ճիշտ ասած՝ երկու Ղանլիջանե-

րի՝ Ներքին և Վերին, խառնուրդը, որ, այնուամենայնիվ,
փոքրիկ ու խեղճ մի գյուղ է, բնակեցրած գաղթական ժողո-
վրդով: Շրջակայքը քարակույտեր են և տներն էլ քարակույ-
տերի նմանություն ունեն. պատերը ցածրիկ, առանց պատու-
հանների... Բայց դուք դիտեք, որ Շիրակի գյուղում ենք, էլ
ի՞նչ հարկավոր է նկարագրությունը:

Միայն մի բնական հրաշալի դարդ ունի Ղանլիջան. դա
այն պաղ և ախորժա՜համ աղբյուրն է, որ բխում է ժայռերի
տակից: Եթե պատահե՛նք ձեզ լինել այդ ջրի մոտ, կուշտ խմե-
ցե՛ք նրանից և ապա հարցրե՛ք առաջին պատահած գյուղա-
ցույց, թե ո՞րն է այն քարը, որի վրա հին բաներ կան գրած:
Նա խկույն կհասկանա, թե ինչ եք ուզում և կառաջնորդե՛
նե՛զ դեպի ձեր դիմաց գտնվող ժայռերը:

Գյուղի հին, զարմանալի տապանաքարերի բազմությամբ
ժածկված գերեզմանատներից վերև դուք կընկնեք մեծ-մեծ, ցից
քարերի մեջ, որոնք կարծես գիտմամբ, մեկի ձեռքով տնկված
են հողի մեջ: Մի քիչ էլ դեպի վեր, և դուք կկանգնեք մի ա-
հագին, բայց ոչ բարձր, միապաղաղ սև ժայռի առաջ: Ժայռի
ձակատը հղկված է և վրան քանդակված է մի քանի տող սե-
պածև արձանագրություն: Նրան կարդացել է ռուս գիտնա-
կան Նիկոլսկին: Ուրարտուի թագավոր Արգիշտին նվաճել է
այս կողմերը.— ահա ինչ է ասում արձանագրությունը: Վանի
մեծ թագավորության հյուսիսային ծայրն է սա: Սահմանա-
պահ մի բերդ պիտի լինի այս ձորի ժայռերի վրա,— և ճիշտ
որ, նրա հետքերը նկատվում են այժմ, թեև ոչ իսկական ու-
րարտյան հետքերը:


Վերջին 20—30 տարիների ընթացքում ինչե՛ր արին
սեպածև արձանագրությունները: Նրանք խորտակեցին մի
ամբողջ պատմություն, որի մի մասն էր կազմում մեր հին
պատմությունը, դարերի անհայտությունից աշխարհ հանեցին
մի զարմանալի, անծանոթ ազգ, որ հազարավոր տարիներ
առաջ ապրում և գործում էր այստեղ, կուլտուրա էր զար-
գացնում, նվաճողական արշավանքներ էր կատարում իր պե-
տության գոյությունը ամրացնելու համար:

Ես մի առանձին հետաքրքրությամբ էի նայում այդ
խորհրդավոր նշաններին, որոնց միջից նայում էր բարեկա-

ասորական քաղաքակրթության մի փոքրիկ նշուղավորությունը, նա, որ հաստատվել էր հայկական լեռնաշխարհում ուրարտացիների ձեռքով: Ի՞նչ զարմանալի դիմացկունություն այս ժայռի մեջ: 2600 տարիների անձրևները, քամիները չեն կարողացել հալել մաշել այդ մի քանի շարք փոքրիկ և խոր, եռանկյունի փոսիկները: Նրանք մնացել են, որպեսզի հազարավոր տարիների լուսնյունն ու անհայտությունը վերջիվերջո խախտեն և ցույց տան, թե այն ազգը, որ այսպիսի նշաններ էր փորում ժայռերի վրա, անմահ հիշատակի բոլոր իրավունքներն ունի:

Անմահանում է պատմական հսկան, աշխարհակալը, անմահանում է հանճարը: Այստեղ ոչ հսկա կա, ոչ հանճար: Մի թագավոր իմացել է նվաճումներ անել. նա հասել է այս տեղին, բերելով իր հետ Տիգրիս-Սփրատյան հովտի զարմանալի քաղաքակրթության պատառիկները: Ահա ինչ է ասում սև ժայռը: Եվ ստացվում է ճիշտ որ խոր, ազդու տպավորություն: Հուշարձանը մի որևէ թանգարանի անկյունում չէ ընկած. նա իր բնական տեղումն է, իր պատվանդանի վրա: Դիրքը, շրջակայքը, երկիրը—ամեն ինչ շորս կողմում անհուն հնության պատկառելի ազդեցությունն է սաստկացնում...

Մեր կառքերը դղրդում են Ղանլիջայի նեղ, քարքարոտ փողոցներում, դուրս կանչելով այն մերկությունը, որ պատրաստված է քարե տների մեջ: Կուշ եկած մարդիկ, ցնցոտիներ, բոլորովին տկլոր երեխաներ, աղբ ու կեղտ: Բայց Վերին-Ղանլիջայի հարավային ծայրում բարձրանում է մի հսկա, գեղեցիկ եկեղեցի: Նա շատ հեռվից, դեռ ձորի եզրից էր գրավել մեր ուշադրությունը: Այստեղ, գյուղի մեջ, նա աչք ծակող մի հակասություն է ներկայացնում: Այդքան գետնատարած մերկություն և այնպիսի գեղարվեստական վեհություն արտահայտող եկեղեցի: Ոչինչ ներդաշնակություն: Իսկույն զգում էի, որ խղճուկ գյուղը թախտի բերմունքով մի այդպիսի, իրան անսովոր, զարդ ժառանգություն է ստացել հին-հին դարերից: Եվ այնքան բարեհաճ է եղել ժամանակը զեպի այդ զարդը, որ նա այժմ Շիրակի անթիվ-անհամար



Մարմաշենի եկեղեցիների խումբը (առեկից)

չարդուիշուր եղած պատերից մեկը չէ. պահվել է ամբողջությամբ, այսօր էլ ծառայում է քրիստոնյա ժողովրդին:

Եկեղեցին հուշակավոր Մարմաշենն է, Շիրակի հայկական անկախության ժամանակների հուշարձաններից մեկը: Նրա բարձր պատերը, սրբատաշ քարերի զարդերը, պատերի մեջ կամարավոր սյուները, արձանագրությունները ձեզ իսկույն փոխադրում են Անի: Բազրատունիների դարի կնիքը՝ նույն կարմիր քարերը, նույն համարձակությունը և ճարպիկությունը, որով այդ ահագին սալերը տաշվում, հղկվում էին, զարդերով ծածկվում, պատեր, կամարներ, թաղեր դարձվում: Գմբեթն է փոքր-ինչ ճարտարապետական ոճի տարբերություն ցույց տալիս. բայց նա, անշուշտ, հետո է շինված, վերանորոգության ժամանակ, որի մասին երկար խոսում է հյուսիսային պատի մեծ արձանագրությունը: Գմբեթը մեր օրերում էլ վերանորոգության է ենթարկվել Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Գ. Տեր-Պետրոսյանի նախաձեռնությամբ: Վերին աստիճանի բնորոշ անիական առանձնահատկությունը—երկար, խոր եռանկյունի խորշերը, պատերի դրսի երեսին Մարմաշենն էլ ունի: Ներսը անզարդ է, սևացած և մութ նեղ պատուհանները չափազանց ժլատ լույս են ներս թողնում: Ներսում սյուներ չկան. խոնավության ծանր հոտն է խփում ներս մտնողին: Բայց կտուրի և գմբեթի բարձրությունը հին շինության գեղեցիկ, ազդու տպավորությունն է ամբողջացնում:

Շինությունից ավելի գեղեցիկ է շինողի անունը: Դա մեզ ծանոթ հերոս Վահրամ Պահլավունին է, որ եկեղեցու հարավային պատի վրա մի երկար և շատ լավ պահված արձանագրություն ունի:

Մարմաշենը, ինչպես վկայում է այդ արձանագրությունը, մեծ իշխանի տոհմային հանգստարանն էր և այդ պատճառով էլ նրա առանձին ուշադրությանն է արժանացել: «Շինեցաք,—ասում է նա,— և այլ բոլորում եկեղեցիս և վանորայս. բայց զտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուով մեծացուցաք և լիացուցաք ամենայն գոյիւք, լերամբք և գաշտօք, աւանդեցաք ի սա գիւղս և ագարակս գանձագինսս: Մտեք քանդված ժամատունը կամ գավիթը: Նա մաքրված

է ավերակների կույտերից և ներկայացնում է մի փոքրիկ, համարյա քառակուսի սալահատակ տեղ, շրջապատված կիսատ պատերով: Մնում են ժամատան սյուների հիմքերը, ինչ որ կիսատ արձանագրություն է կարգացվում երկու մեծ կտոր սպիտակ քարերի վրա, որոնք ավերակների միջից են հանված: Եվ այդ ավերանքի, ջարդուիշուր պատերի, խորտակված սյուների մեջ, եկեղեցու մուտքի կողքին բարձրացած է մի բոլորովին անվնաս մնացած, բոլորովին նոր գեղեցիկ, որի վրա գրված է, թե դա պատերազմում սպանված Վահրամ իշխանի տապանն է¹:

Նա նայում էի տառերին և զարմանում էի նրանց ձևի վրա. մեր օրերում գործածական գլխատառերի ձևն ունեին: Զարմանք էր պատճառում մանավանդ այն, որ անեղծ էին մնացել նույնիսկ այն տողերը, որ քարի վրա գծել էր արհեստավորը նրանց մեջ տառերը փորելու համար: Եվ, վերջապես, ոչ մի վնաս չէ դիպել այդ քարերին, չկա նրանց վրա նույնիսկ մի փոքրիկ քերթվածք, մի կոտրված մասնիկ: Զարմանքս ուշ փարատվեց, երբ մի գյուղացի պատմեց, թե ընդամենը հինգ տարի առաջ է շինվել այդ գերեզմանը: Բանից գուրս եկավ, որ մի քանի ջերմեռանդ ալեքսանդրապոլցիներ, կամենալով մեծ Պահլավունուն իրանց հարգանքն ու հիացմունքը հայտնել, նորոգել են նրա գերեզմանը, արձանագրություն են հորինել նրա համար: Նպատակը բարի է եղել, բայց միջոցը՝ անպետք: Հնություն հետ այդպես չեն վարվում: Աշխատում են, որքան կարելի է, պահպանել հնությունը, իսկ երբ վերանորոգություն են կատարում, այդպես էլ գրում են: Պահլավունուն հարգողները մոռացել են այդ տարրական ճշմարտությունը և կատարել են մի տգեղ կեղծիք: Եթե եղելույն տեղյակ գյուղացի չպատահե Մարմաշենի գավթում, այցելուն պիտի սաստիկ մոլորության մեջ մնա:

Բայց ո՞րքան ճիշտ է, թե Վահրամ իշխանի հավիտենական հանգստի իսկական տեղն է ցույց տալիս այդ գերեզմանաքարը:

Վահրամի մահից 178 տարի հետո նրա ժառանգները, Գրիգոր եպիսկոպոսը և նրա եղբայր Խարիփը, վերանորոգում

¹ Մարիամ ափս. Թագուհի, տե՛ս История Грузии, кр. 61:

են եկեղեցին, որ այլազգիները բերդի նման մի ամրութիւնն էին դարձրել: Այդ վերանորոգութիւնը շինութեան մասերի հիմնավոր փոփոխութեանը չէր վերաբերում, այլ գլխավորապէս այն է եղել, որ երկու եղբայրները մաքրել են եկեղեցու մեջ թափված աղտեղութիւնները, նորից շինացրել ու պայծառացրել են նրան, նվիրելով կալվածներ: Մինչդեռ կատարված էր այդ գործը, Խարիփը սպանվեց թշնամու դեմ մղած մի կռիւ մեջ: Եւ նրա վշտահար եղբայր Գրիգոր եպիսկոպոսը նրա դիակի համար տեղ է պատրաստում վահրամ իշխանի կողքին: Այս բոլորը պատմում է Գրիգոր եպիսկոպոսը այն ընդարձակ արձանագրութեան մեջ, որ փորված է Մարմաշենի հյուսիսային պատի վրա: «Զմարմին նորա (Խարիփին),—ասում է նա,—բերեալ թաղեցաք առ դրանք սրբոյ կաթողիկէիս մերձ առ նշխարս հաւուն մերոյ վարհամա իշխանին» (արձանագրութեան սկզբում էլ Գրիգոր եպիսկոպոսն ու Խարիփը անվանվում են վահրամի թոռներ):

Ահա այն միակ, շատ հավանական վկայութիւնը, որ ցույց է տալիս, թե ուր հողին հանձնվեց Պահլավունիների հսկա ներկայացուցչի մարմինը: Զամշյանն ասում է, թե նա թաղվեց Սանահնի վանքում: Բայց այդ բանի դեմ խոսում են մի շարք փաստեր և, ամենից շատ այն, որ ինքը, վահրամը, այստեղ էր ընտրել գերեզմանատուն իր և իր տոհմի համար. այստեղ էլ իր մահից 32 տարի առաջ նա թաղել էր իր ամուսնուն, Սոփիա տիկնոջը, որ, ինչպէս ասված է նրա տապանաքարի վրա, վախճանվել էր երիտասարդ հասակում:

Թող ընթերցողը չզարմանա իմ այս մանր խուզարկութիւնների վրա: Վահրամ իշխանը յուրաքանչյուր հայի համար պիտի լինի հազվագյուտ հերոսներից մեկը, որոնք երբևէ չեն ելել նրա պատմութեան ասպարեզում, մեկը այն մեծ և առաքինի հայրենասերներից, որոնք ամեն մի ազգի իսկական պարծանքներն են կազմում: Այս պատճառով էլ փոքր, անհետաքրքրական հարց չպիտի համարվի այն, թե ուր է թաղված այդպիսի մի պատմական գործիչը: Քանի-քանի՝ թանկագին շիրիմներ է կորցրել, իսպառ անհայտացրել դաժան ժամանակը: Մարմաշենը ինչ-որ հրաշքով պահել է իր ամբողջութիւնը և իր երկու կողերի արձանագրութիւններով

պահել է ու պահում է մեծ Պահլավունու հիշատակը, մի տեղ նրա սեփական գեղեցիկ խոսքերը պատկերացնելով, մյուս տեղ՝ ցուցմունք, թե ուր է նա հանգչում: Այստեղ, այս դռան մոտ,— ահա ուր է նա: Գերեզմանաքարը եթե ոչ բոլորովին, գոնե մոտավորապէս ճիշտ է ցույց տալիս հանգստյան տեղը:

Նրա առաջ նստելը, նրան մտքեր ու խոհեր նվիրելը մի բուսեղ թողն'ք. եկեք դուրս գանք զավթից, նորից կանգ առնենք վահրամի մեծ արձանագրութեան առաջ: Մարմաշենը տոհմային սեփականութիւն է և շինված է տոհմի գլխավոր ներկայացուցիչների անունից, թեև արձանագրութեան մեջ խոսողը վահրամն է: Նա ասում է, որ եկեղեցու շինութիւնը սկսվեց Սմբատ թագաւորի (Տիեզերակալի) ժամանակ և վերջացավ Հովհաննէս-Սմբատի թագաւորութեան օրով, 936—1029 թվականներին, ուրեմն 43 տարվա ընթացքում: Այդքան երկար ժամանակամիջոցը, իհարկե, անընդհատ գործադրված չէ եղել մի այսպիսի փոքրիկ շինութեան վրա. անշուշտ զանազան պատճառով երկար ընդհատումներ են եղել: Սակայն շինութիւնը այնքան էլ հեշտ չէր, և վահրամ իշխանը, որ քաղմաթիւ վանքեր ու եկեղեցիներ է շինել իր հարստութիւններից, այս մեկի մասին ասում է, որ մեծ ջանքեր և շատ ծախսեր է նա կլանել:

Շինողների անուններն էլ այսպէս է դասավորում վահրամը. «Ես և մայր իմ Շուշիկ (կամ Շուշանիկ) Հայոց տիկնաց տիկին և եղբարք իմ վասակի իշխանաց իշխան (Գրիգոր Մագիստրոսի հայրը), որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմին և Ապլխարիբ Հայոց մարզպան (ս. Փրկիչ եկեղեցու շինողը և Ապուղամբենց ս. Գրիգորը տոհմային գերեզմանատուն դարձնողը) և մանուկն Համղէ (որ փոքր հասակում էլ մեռավ, ինչպէս ցույց է տալիս Ապուղամբենցի արձանագրութիւնը)»: Ինչպէս գիտենք, այս չորս եղբայրները Գրիգոր իշխանի որդիներն էին: Բայց նրանք միասին չէին ապրում. վասակը սպանվեց իր հայրենի Բջնի ավանում (էջմիածնի հյուսիսային կողմում), Ապլխարիբը Անիում շինեց գերեզմանատուն, իսկ վահրամ իշխանի ամրոցը հենց այստեղ, Արփաշայի ձորի այս ժայռոտ կողի վրա էր գտնվում, հավանաբար այն իսկ տեղում, ուր ուրաքտյան Արգիշտի թա-

գավորը բերդ էր շինել: Թեև այսպես բաժան-բաժան, բայց Վահրամը-իր հղբայրների և մոր անունից շինեց Մարմաշենը, տալով նրան տոհմային սեփականության պատիվը և այդ սեփականությունից էլ հարուստ կալվածներ հատկացնելով նրան:

Այսպես՝ սեփականությունը, իսկ ի՞նչ էր նրա տեր տոհմը: Վահրամը ներկայացնում է և նրան: «Որք էաք, — ասում է, — ամենայն տամք և տոհմիք հաւատարիմք տէրանց մերոց և նահատակեալ ի վերա տանս Հայոց աշխատութեամբ և արեամբ մերով և որդւոց մերոց, և գանձուց առատութեամբ և ամենայն հնարիք խնդրէաք զխաղաղութիւն աշխարհիս և զհաստատութիւն եկեղեցեաց»:

Ոսկե՝ խոսքեր, որոնք, ինչպես տեսնում ենք, անապարծութեամբ չեն խոսում այս կարմիր քարերի երեսից, այլ համեստութեամբ, զարդարուն սրտաբացութեամբ պատմում են այդ մարդկանց կատարած դերը: Նրանք հավատարիմ էին իրանց տերերին, այսինքն՝ Բագրատունի թագավորներին: Նրանք իրանց անձնական բոլոր ջանքերը, իրանց մեծի ու փոքրի արյունը նվիրած էին հայրենիքին և ոչինչ չէին խնայում՝ ո՛չ գանձ, ո՛չ ուրիշ որևէ միջոց՝ հայրենիքի խաղաղությունը և բարեզարդությունը ապահովելու համար:

Եթե տեսնելով ֆեոդալական այն խառնակությունները, որոնք ամբողջ ժամանակ տակնուվրա էին անում հայոց երկիրը, մենք զարմանում ենք, թե դեռ ինչպես էր, որ խաղաղ ու աշխարհաշեն թագավորություններ էլ էին մնում, — չպիտի մոռանանք, որ այսպիսի մարդիկ էլ կային մեր հայրենիքում: Դժբախտությունն այն էր, որ սրանք քիչ էին, հազվագյուտ: Ավելի ևս, ուրեմն, բարձրանում է այդ բացառիկ երևույթների, այդ աննման հերոսների նշանակությունը, սաստկանում է նրանց ազդած հիացմունքը:

Մենք երախտապարտ ենք Գրիգոր Մագիստրոսին, որ իր մեծ հորեղբոր մասին բավական առատ տեղեկություններ է թողել իր նամակների մեջ: Ծիշտ է, բյուզանդական ոգով տոգորված այդ իշխանը միայն ներբողներ կարող էր նվիրել իր տոհմի ամենափայլուն ներկայացուցչին, բայց այս դեպքում մենք միայն նրան շունենք վկա, ժամանակակից կամ

ժամանակով մոտ պատմագիրներն էլ հիացմունքով են խոսում նրա մասին: Եվ, հիմնվելով այդ նյութերի վրա, մենք կարող ենք, դո՛ւնե ազոտ կերպով, նկարել այդ վեհ հասակը այստեղ, նրա գերեզմանի առաջ:

Վահրամ իշխանը գերեզման մտավ ութսուն տարեկան հասակում, 1047 թվականին: Ուրեմն նա ծնված պետք է լինի 967 թվականին: Այս հաշվով նա 19 տարեկան երիտասարդ էր, երբ սկսեց Մարմաշենի շինությունը: Եվ այդ վաղ բարեպաշտական եռանդը տարօրինակ չի թվա, եթե մենք աչքի առջև ունենանք նրա ծնողներին: Գրիգոր իշխանի մասին, որ նրա հայրն էր, մենք ընդարձակ տեղեկություններ չգիտենք: Հայտնի է միայն, որ նա մի բարեպաշտ, եկեղեցասեր և մարգասեր իշխան էր. և նրան միանգամայն արժանի ամուսին էր Շուշիկ տիկնաց տիկինը, որի մասին խոսել ենք Ապուղամբենց ս. Գրիգորի նկարագրության մեջ:

Տասն և հինգ տարեկան էր Վահրամը, երբ քառասնամյա հասակում վախճանվեց Գրիգոր իշխանը: Այրիացած Շուշիկ տիկինը, բավական չհամարելով այն լայն քրիստոնեական քարեգործությունը, որին նվիրված էր իր ամուսնու հետ նրա կենդանության ժամանակ, հեռացավ աշխարհից, մտավ կուռ-սանոց: Երեսուն տարեկան էր նա այդ ժամանակ և մինչև կյանքի վերջը մնաց խիստ ճգնող:

Ահա ամենից առաջ ինչ ժառանգեց Վահրամը իր ծնողներից: Մանկության վաղ օրերից նա տեսնում էր, թե ինչպես աղքատներն ու զրկվածները համակրանք և աջակցություն են գտնում Գրիգոր իշխանի տանը, ինչպես հայրն ու մայրը փող ու հարստություն չեն խնայում գերիներ ազատելու համար, եկեղեցիներ են շինում, եկեղեցիներ են զարգարում: Այստեղից ահա Վահրամ իշխանի բնավորության ամենալայն գիծը — բարեպաշտություն, աշխարհաշինություն: Նա հետևեց իր ճգնավոր մոր օրինակին, վանքեր և եկեղեցիներ շինելով: Նրա դռները բաց էին ամենքի համար: Ամեն մեկը գիտեր, որ իշխանի ապարանքում պատրաստ ապաստան ունի և առանց հարցնելու մտնում էր այնտեղ, ինչ ուզում էր՝ պահանջում էր ու ստանում: Եվ որ ամենագեղեցիկն է՝ այդ սրտաբաց հլուրենկալությունը ազգություններ չէր

ճանաչում. հայի հետ հավասար իրավունքով պատասխարվում և հյուրասիրվում էր և պարսիկը. խաղաղության գործին նվիրված իշխանը վերին աստիճանի արդարադատ էր և արդարասեր. երկիրը ծաղկեցնելու հոգս տանելով, նա սիրում էր և կուլտուրական կյանքի հիմքը — երկրագործությունը:

Բայց այս բոլոր բարեմասնությունները դեռ բավական չէին, որպեսզի հռչակվի մի իշխան այն ժամանակներում, երբ ուժն էր գլխավորը, երբ բռնությունն էր տիրապետության իրավունքները օրինականացնում: Վահրամ իշխանը մի թուլամորթ ճգնավոր չէր, երկրայինը չէր մոռանում երկնայինի համար: Նա շատ լավ գիտեր, ավետարանական ասացվածքի պես, աստուծունը աստուծուն տալ, կայսրինը՝ կայսրին: Եվ երբ պահանջում էր հանգամանքը, խաղաղասեր, հյուրընկալ իշխանը զրահ էր հագնում, զինվում էր և նետվում պատերազմի փոթորիկի մեջ, ուր նույնպես առաջին տեղն էր բռնում, նույնպես աչքի ընկնող էր իր անվհեր քաջությունը:

Բարեպաշտությունը ժառանգական էր, իսկ քաջությունը — Երևի նույնպես ժառանգված, թե ոչ հորից, գոնե պապերից: Գրիգոր իշխանի որդիները վախկոտներ չէին: Գոնե երկուսը՝ Վասակը և Վահրամը ժամանակի ամենաքաջ մարդիկն էին: Վասակը մի բուռն մարդկանց հետ դուրս եկավ սելջուկյան մի սովոր գորաբաժնի դեմ, որ արշավում էր դեպի Բջնի: Այդ փոքրիկ ուժով նա ընկավ թշնամու վրա, կոտորեց, փախցրեց նրան և, երբ հաղթանակով վերադառնում էր, Սերկեսիլի սարի վրա սպանվեց մի անհայտ դարանակալի ձեռքով:

Բայց պատերազմի գործում մեծ եղբորից ավել հռչակվեց Վահրամը: Սրա քաջագործությունները այնքան որոտալից էին, որ տարածվեցին աշխարհի բոլոր կողմերում, Հայաստանի սահմաններից դուրս էլ ահագին արձագանքներ տվին: Վրացիները, հավատացնում է Մագիստրոսը, տաղեր և երգեր հորինեցին Վահրամի վրա և պարելով երգում էին հրապարակներում: Հայաստանում գտնվեցին այնպիսիները, որոնք սկսեցին գրի առնել Վահրամի գործերը, որպեսզի նրա մահից հետո դուրս բերեն նրա կյանքի ամբողջ պատմու-

թյունը: Տարաբախտաբար իրանք, այդ կենսագրողները Վահրամից շուտ մեռան և նրանց հավաքած նյութերը կորան:

Հայաստանի սահմանակից մեծ և փոքր պետությունների տերերը մեծարեցին հռչակված հայ զորավարին իրանց պատվավոր տիտղոսներով և հարուստ ընծաներով, որ ուղարկում էին Վահրամի տունը՝ հատուկ պատգամավորությունների ձեռքով: Բյուզանդական կայսրը շնորհեց նրան անթիպատ պատրիկի տիտղոսը (այդ տիտղոսով էլ Վահրամը իրան հիշատակում է Մարմայենի արձանագրության մեջ), Բաղդադի՝ խալիֆը և Պարսկաստանի կիսանկախ էմիրները, կողմնակալի, քեշիսի պատիվ հատկացրին նրան: Սրով ու կորովով նվաճած այդ հռչակն ու փառքը, սակայն, չկուրացրին Պահլավունի իշխանին, չարժարժեցին նրա մեջ փառասիրական մեծ տենչեր: Այստեղ է ահա նրա բնավորության ամբողջ վսեմությունը, ամբողջ մեծությունը: Հայաստանը, ինչպես վերևում ասացի, մի երկիր էր, որ ռազմիկ նյութեր էր տալիս հարևան երկրներին, գլխավորապես Բյուզանդիային: Վահրամը, իր հռչակի վրա հենված, կարող էր մեծ փառք գտնել իր հայրենիքի սահմաններից դուրս, օտարների ծառայության մեջ: Բայց նա չհրապուրվեց այդպիսի փառքով, չդարձավ մի անձնամոլ հերոս, որի համար դափնիներն ու պսակներն ունեն նշանակություն, որ էլ կարելի լինի նրանց հնձել: Զանազան կողմերից, առավելապես, երևի, Բյուզանդիայից նա ստանում էր հրապուրիչ առաջարկություններ: Առաջարկում էին թողնել հայրենի երկիրը, առաջարկում էին օտար երկնքի տակ ստանձնել զորավարի, գլխավոր հրամանատարի պաշտոններ: Բայց նա չսեց և ոչ մեկին:

Ի՞նչ ազնիվ, անշահասեր հայրենասիրություն: Մի ուրիշը, գոռոզացած այնքան զարմանալի հաջողություններից, շողորորթված թագավորների, կայսրների և ազդեցիկ իշխողների հաճոյական նամակներից, որոնց պատասխանները սպասվում էին արքունիքներում, կարհամարհեր իր հայրենի աղքատ ու զժգույն իրականությունը, իր փառքին ու ընդունակություններին արժանի չէր համարի իր փոքրիկ երկիրը և կգնար ոչ թե նոր-նոր հռչակ վաստակելու, այլ ունեցածի

պտուղները լիովին վայելելու: Սակայն Վահրամի մեջ առա-
ջինությունը քաջարի ղինվորի հաստատակամության հետ
ձուլված էր: Եվ նա մնաց իր տանը, որպեսզի իր ժողովուրդը
փնամեն, նրա լավ օրի գաղափարին նվիրվի: Մնաց իր հաշ-
րենիքում, որպեսզի հավատարմությամբ ծառայե իր տերե-
րին, իր հարազատ թագավորներին:

Ահա ինչպիսի մարդիկ էին պակասում մեր դժբախտ
հայրենիքին: Ահա ինչ տեսակ հսկաներ էին, տարաբախտա-
բար, թվով շատ քիչ, շատ աննշան մեր երկրում: Այսպիսի
ամբողջացրած, կատարյալ տիպեր մեզանում գիտավոր աստ-
ղերի պես են երևացել: Եվ չգիտես թե ինչի վրա ավելի հիա-
նաս—անվհճեր քաջությամբ թե քաղաքացու պարտաճանա-
չության վրա, փայլուն ճակատագրի՝ թե զարմանալի համես-
տության վրա: Ամեն ինչ խոշոր է այս մարդու մեջ: Ոչինչ
ցած, ոչինչ մանր բան նրան չէր տված:

Մնալով հայրենի երկրում, նա երբեք չհաճագործեց իր
ահագին հեղինակությունը իր կամ իր դասակիցների ու
քարեկամների համար: Անխախտ էր նրա սկզբունքը: Եվ իր
համեստ գավառից, ծերության հասակում, նա դուրս եկավ
օրհասական վտանգի ժամանակ, երբ դավաճանությունը
պատրաստվում էր հաղթանակ տոնել՝ Բագրատունյաց գահի
ավերակների վրա: Վահրամը դուրս եկավ Անիի մեջ մի դե-
րում, որ նրա սպիտակ մազերը ամեն երկրավոր թագերից
ավելի մեծ փայլերով էր զարդարում:

Մենք տեսանք այդ դերը: Տեսանք, որ իր ազգի շահերը
պաշտպանելու համար նա սուրը ձեռքին դուրս եկավ աթ-
կայսրության դեմ, որ նրան անթիպատ պատրիկ էր անվա-
նել: Կարող էր նմանության պես մի որևէ բան լինել նրա
և այն Վեստի մեջ, որ նույնպես իշխան էր, նույնպես պատիվ
ու հարստություն ուներ, բայց աչքը դրած էր բյուզանդական
չքեղ սեղանի վրա և քսու, գետնատարած զարդիլիությամբ
փառքի փշրանքներ էր մուրում այնտեղից, ո՞վ գիտե, գո-
ցե և մտքով անց կացնելով, թե Բագրատունյաց թագը մի օր
կարող է հանգչել իր անարժան գլխի վրա:

Վահրամը, տեսանք, հաղթեց թե կայսրին և թե իր եղ-
բորորդու փեսային: Հերոսական պողպատե բազուկով նա

նստեցրեց երիտասարդին իր պապերի գահի վրա: Իսկ ինքը
ազնիվ ու անշահասեր, հեռացավ ասպարեղից: Մինչև իսկ
չփորձեց իր ահագին հեղինակությամբ պաշտպանել իր եղ-
բորորդուն, երբ նա, իր բյուզանդամոլ հակամենների պատճա-
ռով, դավադրության մասնակից համարվեց և հալածական
զարձակ: Անշուշտ, այդ բյուզանդամոլությունը մեծ սառնուե-
թյուն մտքեց Վահրամի և Գրիգոր Մագիստրոսի մեջ: Որ-
պիսի՝ կսկիծով լսած պիտի լիներ նա իր կյանքի վերջին ժա-
մանակներում, թե ինչպես այդ եղբորորդին, վախկոտության
ախուր պատկերը երեսին, Բջինն տվեց կայսրին և ընդմիջա-
հեռացավ պապերի հողից...

Տեսանք մենք, որ դավադրությունը իր գործը կատարեց:
Տեսանք, որ Գագիկը, գուցե անփորձությունից փոքր-ինչ
հրերուն երիտասարդ, չսեց Վահրամի խորհուրդը և գնաց
Բյուզանդիայում կորստյան վիճ գտնելու: Ո՞ւր էր այդ ժա-
մանակ Վահրամը: Այստեղ, երևի, այստեղ, Արփաշայի այս-
ձորում, մենակ իր վշտի հետ: Այնտեղ, վերևում, նրա ամրոցը
էր, շրջապատված ռաբանչելի և ամրապատ պարիսպներով ու
աշտարակներով, ինչպես ասում է Մագիստրոսը: Հայաստա-
նի մեջ կա՞ր մի ուրիշ այդպիսի գեղեցիկ ու պինդ ամրոց:
Ուշին Մագիստրոսը բացասական պատասխան է տալիս, ի-
հարկե, չհամեմատելով այդ փոքրիկ ամրոցը Անիի բերդի
հետ: Ահա այդտեղից, իր Վահրամաշենից, ցած էր իջնում բա-
րեպաշտ մեծ ծերունին, մտնում էր իր Մարմաշենը, սրտի դառ-
նության դեմ մխիթարություն էր որոնում աղոթքի, երկնքի
տուաջ խոնարհությամբ գլուխ իջեցնելու մեջ, և ապա արև-
զարդ հոնքերի տակից խոժոռ հայացք էր ուղղում դեպի հա-
րավ, դեպի Ալաշայի ստորոտը, ուր կատարյալ տեր էր դար-
ձել դավադրությունը:

Երկար շտեկեցին ծերունու այդ օրերը: Անիի մեջ հա-
տատված հույն կուսակալը վեճի բռնվեց Դվինի Աբուսավար
էմիրի հետ: Դեռ հազիվ մի տարի էր անցել Անին հափշտա-
կելուց, և ահա պատերազմ բորբոքվեց: Հույները հաղթեցին,
իսկ Աբուսավարը նրանց վրեժը Արարատյան դաշտի հայերից
հանեց, սրով և հրով տանջում էր նրանց, մահմեդականաց-
նում էր: Իր գտած հաջողություններից հանդգնացած՝ նա ա-

վելի առաջ անցավ, ասպատակութիւններ էր անում Շիրակում, հասնում էր մինչև իսկ Անիին...

Ահա այդ ժողովրդական աղետը դուրս հանեց ծերունի առյուծին Վահրամաշենից: Ութսուն տարիները նրան չէին ընկճել, և նա զորք էր տանում Արտավարի դեմ: Հունաց անիրավ տիրապետության համար չէր նա սուրը պատյանից հանում, այլ իր ժողովրդի համար: Այդ պատճառով էլ նա անհարմար չգտավ, որ հույն զինվորներն էլ միանան իր զորքին: Իր հետ նա տանում էր և իր որդի Գրիգորին:

Պատերազմական բախտը այս անգամ էլ չդավաճանեց նրան: Մահմեդական զորքը չդիմացավ նրա ամուր բախման և փախուստ դարձավ: Վահրամը հալածեց նրան մինչև Դվինի դռները: Այդտեղ նորից բոլորվեց օրհասական կռիվը, որի մեջ սպանվեց Գրիգորը (Առաքելոց եկեղեցու արձանագրութեան մեջ հիշվածն է): Մերունին, վստոված այդ դժբախտութիւնից, սուրը ձեռքին ընկավ թշնամիների մեջ և պատերազմում էր անխնա, ինքն իրան մոռացած: Նրան շրջապատեցին, և զինվորի մահը եկավ լրացնելու այն փառքը, որ այդ մարդու ամբողջ կյանքն է կազմում: Հայրենիքի հավատարիմ սպասավորը մինչև վերջին շունչը չդավաճանեց իրան և վերջացրեց նրանով, որ իր սպիտակ մազերը շաղախեց հայրենիքի փրկութեան համար թափած արյունի մեջ: Ի՞նչ մահ...

Շիրակը նորից որբացավ: Լաստիվերտցին ասում է, որ այդ մահը մեծ կորուստ էր առհասարակ հայերի համար, հույները դեռ քաշվում էին այդ պատկառելի մարդուց. երբ նա հողի մեջ մտավ, նրանք սկսեցին իրանց դարավոր ատելությունը հրապարակ հանել: Դրանից հետո էր, որ Պետրոս Գետադարձին տարան Կ. Պոլիս...

Ահա ինչեր է ասում Մարմաշենի դուռն կողքին գտնվող գերեզմանը:

Նվ մինչդեռ ես նստած էի այդտեղ, եկեղեցու ներսում մի ինչ-որ ձայն բարձր ելևէջներով հնչում էր կամարների տակ: Դա աղոթք չէր: Դադթական թուրքահայ քահանան, ցնցոտիներով պատած մի բնարի և խղճալի ծերունի, հուզիչ շեշտերով և աննման պարզությամբ պատմում էր 1895-ի կոտորածը Սասունում: Այսպես է մեր պատմությունը: Ամեն

ինչ—հնադարյան ավերակ, եկեղեցի, գերեզման, կենդանի քահանան կոտորածների, դժբախտութիւնների մասին է խոսում...

Պահլավունիների այս գերեզմանատունը, ինչպես երևում է, միայն այս եկեղեցին չէ ունեցել. նկատվում են նրա մոտ մեծ-մեծ ավերակներ, իսկ մի մատուռ, եկեղեցու հարավային կողքին, այժմ էլ կանգուն է: Հին գերեզմանների մեջ, արևելքան պատի տակ, ցույց են տալիս մեկը և ասում են թե Վահրամ իշխանի կինն է: Բայց ուրիշ աղբյուրներից իմանում ենք, որ տիկինը թաղված է եղել այն մեծ վանքում, որից մնացած մի պատի ավերակը երևում է այստեղից քիչ հեռու, հյուսիսային կողմում: Նշանավոր է, ասում են, և հին կամուրջը, որ շինված է Արփաշայի վրա: Պե՞տք է զարմանալ: Վահրամ իշխանաց իշխանն էր այս տեղերի տերը:

Նրա գեղեցիկ հիշատակներով զվարթ վերադարձա Ալեքսանդրապոլ: Վահրամաշենը չպետք է բաժանել Անիից...

Այդ օրվա մի փոքրիկ տպավորությունս էլ պիտի պատմեմ: Ալեքսանդրապոլի հայոց եկեղեցիներից մեկը, Ամենափրկիչը, Անիի Մայր եկեղեցու նմանությամբ է շինված: Մենք այցելեցինք այդ մեծ, բարձր, գեղեցիկ շինությունը: Թիֆլիսը իր 50—60 հազար հայ ազգաբնակչությամբ չունի և ոչ մի բան, որ հիշեցներ այդ ընդարձակ տաճարը: Բայց Ամենափրկչի ճարտարապետության վրա մեծ կարծիք կազմելու համար մարդ չպետք է տեսած լինի Անիի Կաթողիկեն: Երբ մտաբերում ես, թե դա Անիից վերցրած ընդօրինակություն է, իսկույն աչքիդ առչե պատկերանում է սերունդների տարբերությունը: Ալեքսանդրապոլցիները հայտնի են իբրև ճարտար ու վարժ վարպետներ: Բայց ի՞նչ համեմատություն բուն օրինակի և նրա պատճենի մեջ: Այստեղ այն տպավորությունը չկա. քարեր են դարսված իրար վրա, ընդօրինակող ձեռքը կոպիտ է եղել, չէ կարողացել ընդօրինակել և այն օդային, թեթև, նուրբ արտահայտությունը, որով առգործված է Անիի Մայր եկեղեցու յուրաքանչյուր քարը:

Սերունդների տարբերություն... Նա շատ է աչք ծակում, բայց նրան, իհարկե, կարելի է բացատրել շատ պատճառներով:

Երեկոյան ես ճանապարհ էի դնում իմ ընկերներին Թիֆ-
լիս: Ինքս չգնացի: Դեռ մի քանի տեղեր էլ էի ուզում տես-
նել:

Տեսա սլաղ, հունիսի վերջին օրվա արևի տակ անգամ
մրսող կարսը: Մյուս օրը Գր. Խալաթյանի հետ իշա երկաթու-
ղով Արարատյան դաշտի կրակների մեջ:

Տեսա էջմիածինը իր խիտ ծառաստանների, այգիների
մեջ, մոծակների ու մլաքների անողորմ կամայականության
մատնված: Տեսա նրա լավն էլ, վատն էլ: Տեսա Զվարթնոց
հեղեղներն, զարմանալի հնությունների այդ թանգարանը:

Տեսա Երևանը իր Զանգիով, իր կեղտոտություններով ու
մոծակներով, նայելով նրա կավե պատերին, հիշեցի Աբով-
յանցի շափազանցեցրած, ահեղ, բայց սիրուն նկարագրու-
թյունը:

Շատ և շատ անգամ տեսա Մասիսն ու Արագածը:

Վերջապես տեսա Օշականը, ս. Մեսրոպի գերեզմանը
և կեղեցու խաղաղ ստվերի մեջ:

Զգացմունքների մի ահագին բեռ էի տանում հետս էջ-
միածնից: Երբ գնացքը մոտենում էր Անի կայարանին, մենք
կանգնեցինք պատուհանի առաջ: Հեռվում, արեգակի պայծառ
լույսերի մեջ, նորից, վերջին անգամ, երևացին այժմ ինձ
այնքան ծանոթ, այնքան սիրելի ավերակները:

Նվ ես զգացի, որ ամենից ուժեղը, ամենից տպավորի-
չը, ամենից անմոռանալին դրանք են, այդ սգավոր պա-
տերն ու շենքերը...



ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արաքս բազավոր 309, 315, 317.

356:

Արրապայաններ 299, 309.

Արիխ 37, 187:

Արովյանց երեմիա 43:

Արովյան Խաչատուր 32, 33, 374:

Արաճամ 192:

Արու-Մուսե, տե՛ս Նսալի իշխան:

Արուսայիդ Ռեհատուր. խան, 256:

Արուստար էմիր 371, 372:

Արաբեկ Վահրամ 122:

Ալիշան Անոն 53, 54, 81, 92,

95, 109, 142, 176, 237:

Ալ-Մուսիվեֆիլ խալիֆ 285, 289,

298:

Ալի-Ասլան 110, 158, 200, 341:

Անմեղ ոստիկան 302:

Աղասի 32:

Աղբուղա Զաֆարյան 236:

Աղվանյանց Գրիգորիս եպիսկո-
պոս 51:

Ամիր Սպասալար Շահնշան 192:

Անանիա Շիրակացի 125:

Անանիա Մոկացի կաթողիկոս
356, 357:

Անդրեև Ա. 62, 63, 64:

Աշոտ (որդի Գագիկ II-ի) 341:

Աշոտ Առաքին, թագավոր, 89.

294—297, 299—311, 313, 315,
317, 318, 336:

Աշոտ Բագրատունի (որդի Գա-
գիկ I-ի) 116, 320, 321, 324,
325:

Աշոտ Նեկար, թագավոր, 309,
314:

Աշոտ Ողորմած, թագավոր, 51:

126, 127, 129, 131, 132, 150.

152, 247, 248, 250, 253, 257.

309, 315, 317:

Ապլարիպ մարզպան 164, 165

244, 246, 247, 365:

Ապուղամար Պանկավունի 164, 234:

237, 244, 246:

Առոն 16, 17:

Ասողիկ 17, 111, 151, 157, 163

273, 295, 354, 357:

Ատրենքահն, վրաց թագավոր, 89:

Արարատյան Ալեքսանդր 43:

Արարատյանց Առաքել 42:

Արգիշտի, թագավոր, 359, 365:

Արխատկես Լաստիվերոցի 17.

199, 333, 335, 340, 342, 344

372:

Արծրունի Գագիկ 30:

Արծրունիներ 313, 314, 319, 334.

340:

Արդուրյան Հովսեփ 22:

Արշակունիներ 300:

Բագարատ իշխան 285:

Բագրատունիներ 17, 19, 26, 67.

91, 116, 150, 169, 198, 224.

231, 251, 276, 292, 294.

308—311, 313, 314, 315, 317.

320, 325, 337, 338, 341, 342.

354, 362:

Բայրոն Զ. 30, 275:

Բաշինջաղյան Գ. 66:

Բասմաջյան Կ. 66. 270:

Բեգորբակով 323:

Բեյ-Սուրբան Շեղդառեան 299:

Բժշկյան Մինաս 21, 23, 25, 26:
Բոքե-Էոմեն 28:
Բորիսով, սպա, 216, 217:
Բրոսն, ակադեմիկոս, 26, 37,
39, 40:
Բուդա, զորապետ, 284, 285, 286,
289—294:

Գագիկ Առաջին, թագավոր, 129,
130, 131, 151, 163, 230, 246,
309, 320:

Գագիկ Արծրունի 313, 314:

Գագիկ Բագրատունի, Կարսի թա-
գավոր, 337, 341:

Գագիկ Եկեղուց, թագավոր, 16,
158, 200, 224, 325, 327—
337, 339, 341, 371:

Գագիկ Շահնշահ, տե՛ս Գագիկ
Առաջին:

Գեղամյանց Ե. 52, 212, 214:

Գեղ Դամդանի 236:

Գեորգ վարդապետ 36, 131, 132:

Գեորգիոս 129:

Գեոտղարձ կաթողիկոս, տե՛ս
Պետրոս կաթողիկոս:

Գրիգոր 192:

Գրիգոր աղա 196:

Գրիգոր արքեպիսկոպոս 237:

Գրիգոր եպիսկոպոս 363, 364:

Գրիգոր իշխան 232, 244, 246,
365, 367, 368, 372:

Գրիգոր եռուցիսի 236:

Գրիգոր Մագիստրոս 165, 322,
323, 327, 328, 329, 335, 336,
341, 357, 365, 366, 368, 371:

Գրիգոր Պանկավունի, տե՛ս Գրի-
գոր Մագիստրոս:

Գրիգոր Վկայասեր, կաթողիկոս,
165:

Գևորգ կաթողիկոս 51, 55, 306:

Դանթե Ա. 134:

Դանիել վարդապետ 122, 123:

Եսայի իշխան 286—289, 293,
293:

Երեմիա Չելեպի 21:

Զանգի, ամիրս, 18:

Զաֆար Սպասալար 122, 169,
170, 171, 190, 192, 267:

Զաֆարյաններ 190, 192, 223,
236, 239:

Էբրոս 27:

Թամար քաղունի 170, 171:

Թեոդորոս Ռշտունի 278, 279,
299:

Թովմա Արծրունի 288:

Թորամանյան Թ. 66:

Իշխան 120:

Իվան Զաֆարյան 170, 236:

Լազարե, գեներալ, 49, 96:

Լինչ 65:

Լորիս-Մեյիբով, գեներալ, 45, 96:

Լուսոտ 192:

Խալաթյան Գրիգոր 84, 85, 356,
374:

Խալաթյան Կարապետ 85:

Խանիկով 39:

Խաչեհ 190:

Խաչիկ կաթողիկոս 151, 354, 358,
357:

Խարիփ Պանկավունի 363, 364:

Խերխան, իշխան, 128:

Խոսրովանուշ, թագուհի, 152:

Խուանդե տիկին 236:

Կանենց 30:

Կամ (Կաշմ) զորապետ 283:

Կատրանիտ քաղունի 151, 152,
153, 159, 187:

Կարենյանց Հակոբ 42:

Կեստներ 39, 40, 52:

Կեր-Պորտ Թորեա 23, 24, 26:

Կոխ 27:

Համգե 246, 365:

Հենուպ Գրիգոր, իշխան, 120,
121, 122:

Հեմիլտոն 27:

Հոնենց Տիգրան 168, 169, 171,
172, 174, 182, 243:

Հովհան Երզնկացի 32, 33:

Հովհաննես (որդի Գագիկ II -ի)
341:

Հովհաննես աղա 196:

Հովհաննես, թագավոր, տե՛ս Հով-
հաննես-Սմբատ:

Հովհաննես կաթողիկոս 291, 295:

Հովհաննես-Սմբատ, թագավոր,
115, 116, 131, 270, 309, 320,
321, 323, 324, 325, 334, 335,
341, 365:

Հովհաննես վարդապետ 111, 115:

Հովվան Նիկողոս 131:

Մահմուդ 239:

Մամախարոն 109, 110, 190:

Մամիկոնյան Գրիգոր, իշխան,
301:

Մառ Ն. 61, 62, 127, 150, 163,
223, 228, 234, 247, 248, 251,
252, 253, 257, 348:

Մաթեոս Ուռնայեցի 151, 248,
334, 339, 341:

Մարիամ քաղունի 363:

Մարկով Նիկոնի 64, 65, 193:

Մեյիբ-Շահ 341:

Մեհմեդ Երեղուց 60:

Մեղլեքի վ. 32, 47:

Մեհրոպ Մաշտոց 73, 374:

Միխայիլ Պետլ 323:

Միկուչեն 239:

Մխիթար 112:

Մխիթար Դամդանի 236:

Մխիթար եպիսկոպոս 235:

Մխիթարյան Աբել, վարդապետ,
40:

Մխիթարյաններ 25:

Մորամեդ-Բիլլան, խալիֆ, 305,
306:

Մոնոմախոս Կոնստանդին կայսր
328, 330, 331, 334, 339:

Մովսես Կաղանկատվացի 286:

Մորիկ կայսր 95:

Մուրեվիկի խալիֆ, տե՛ս Ալ-
Մուբեկբի:

Մուխար փաշա 44, 45, 46, 48,
49, 95, 96:

Մուհամմետ 277:

Մուշեղ 315, 317:

Մուրավյով Ա. 38 39, 133, 134,
231, 271:

Յուսուֆ ոստիկան 90, 314:

Ներսես կաթողիկոս 40:

Ներսես Շինոդ 161, 163, 247:

Ներսես Շնորհալի 17, 18, 19,
165:

Ներսեսյան 349:

Նուրիվան, թագավոր, 231:

Նուրայտին Քոքիթ 236:

Շահնազարյան Կարապետ, 39:

Շահնշահ (Զաքարի որդի) 169
236:

Շահնշահ (որդի Հոնենց Տիգրա-
նի) 171:

Շահնշահ սպարապետ 192:

Շամշադին Սահիպ 236:

Շանուշ 190:

Շելկովնիկով, գեներալ, 49, 96:

Շիրախունի վարդապետ 50:

Շուարի 239:

Շաշմանի տիկնոց տիկն 244
246, 365, 367:

Էսմյան 334, 364:

Պանկավունիներ 21, 164, 165,
223, 231, 244, 246, 247, 222,
330, 364, 373:

Պայիկ 236:

Պատկանյան Ք. 53:

Պետրոս Պետադարձ, կաթողիկոս,
324, 329, 331—334, 337, 339,
340, 357, 372:

Պոպկո, գեներալ, 50:

Պոտոն, գեներալ, 22, 57, 60:

Ղալալյանց Սարգիս 36:

Ղանապ 303:

Ղանչյան Գ. 61:

Ղաֆար (Ղափր), տե՛ս Այ-Մա-
թեվերի:

Ղեմելի 22:

Ռեկուսի 47, 48, 215, 217:

Սանակ Պարթև 73:

Սանակյուլստ 267:

Սանիկ Դիվանի 236:

Սանմատ 236:

Սամվել Անեցի 110, 322, 329:

Սասունյաններ 277:

Սարգիս կաթողիկոս 357:

Սարգիս վարդապետ 109, 121:

Սարգիսյան Ներսես 36, 37, 109,
131, 177:

Սեդա 246:

Սիմեոն Չմշկիկ 42:

Սմբատ Առաջին, թագավոր, 88—
91, 309, 313, 314, 315, 317:

Սմբատ Բագրատունի, սպարա-
պետ, 290—294, 297, 307:

Սմբատ, իշխան, 120:

Սմբատ Խոստովանող, տե՛ս Սըժ-
բատ Բագրատունի սպարապետ

Սմբատ Երկրագ (Տիեզերագա-
թագավոր, 148, 150, 151, 155,
187—190, 192, 193, 250, 276,
309, 365:

Սոփիա տիկին 364:

Վանհամ ամիրա 192:

Վանհամ Պանկավունի 164, 233,
244, 246, 323, 325, 327, 331,
336, 338, 341, 362—373:

Վաչագան քաղավոր 127:

Վաչե 109, 110:

Վասակ Պանկավունի 164, 166,
244, 336, 365, 368:

Վասակ, Սյունաց թագավոր, 181:

Վասիկ կայսր 116, 321, 324:

Վարդան 110, 200:

Վարդան Բարձրաբերդցի 159:

Վեստ-Սարգիս 321—325, 327—
331, 333, 370:

Վորսնցով, իշխան, 39, 40:

Վրայր Ա. 65, 66:

Տեր-Բարսեղ 121:

Տեր-Խաչատուր 22, 23, 25:

Տեր-Հովհան 22, 23, 25:

Տեր-Մինասյան Միքայիլ 146:

Տեր-Պետրոսյան Գեղամ 85, 363:

Տեֆոն 29, 31, 52:

Տրդատ, Հարապարպետ, 149, 151,
152, 154, 157, 160, 187, 242,
276, 345, 354, 356:

Սիլվերենի 27:

Փալանքար Ալեքսանդր 204:

Փարիմադին 236:

Փիշմիշե, գեներալ, 47:

Փյուրջյան Հ. 51, 52, 54, 85, 686,
154, 231, 269:

Ֆիրդուսի 230:

ՏԵՂԱՆՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

Իրենի 275:

Հլաչայի ամրություններ 45:

Հլաչա, սար, 30, 44, 45, 46, 48,
49, 67, 96, 99, 106, 147, 201,
265, 271, 272, 315, 325, 332:

Հլաչա, լեռներ, 82, 94, 95,
208, 211, 215, 229, 275, 258,
371:

Հլաչայի ջուր 208, 211:

Հլավերդի 79:

Հլեֆանդրապոլ 12, 13, 42, 44

46, 49, 51, 55, 64, 73, 81—
87, 91, 92, 146, 153, 353, 358,
362, 373:

Հլեֆանդրապոլի գետ, տե՛ս Ար-
փաշայ:

Ալլամ, գյուղ, 46:

Ալվիար, բարձունք, 353:

Ախալցխա 52, 80:

Ախուրյան, գետ, 12, 13, 21, 23,
29, 36, 38, 39, 44, 45, 46,

47, 49, 55, 69, 71, 82, 93,
94, 96, 103, 108, 111, 113,
123—126, 131, 132, 151, 172,
173, 176, 177, 179—182, 186,
155, 257, 258, 261, 266, 275,
333, 353:

Ախուրյան, քաղաք, 92:

Ախուրյանի նովիա 357:

Ախուրյանի ձոր 102, 132, 173,
174, 183, 201, 247, 248, 253,
255, 259—262, 268, 269, 271:

Ականց ջուր 112:

Ակրապոլիս 275:

Աղբամար 356:

Աղյուղ, գյուղ, 92:

Աղջկա բերդ, տե՛ս Իրգ-գալ:

Աղվանի 313:

Ամասիա, գյուղ, 177:

Այգեձոր 200:

Այրարատ 53:

Անանիայի տաճար 267:

Անգլիա 24:

Անդրկովկաս 64:

Անի 6—33, 36—67, 71, 84, 100,
86, 88, 92, 93, 98, 100, 101,
105, 106, 109, 110, 111, 115—
118, 129, 130, 133, 138, 140—
143, 145, 146, 147, 150—153,
158—161, 163—166, 168—174,
177, 178, 179, 182, 183, 184,
186—190, 192—203, 206, 208—
215, 217—220, 223—226, 228,
231, 232, 234—243, 247, 248,
250—253, 255, 256, 257, 260—
265, 268—276, 283, 305, 310,
315, 316, 317, 328—337, 339—
344, 346—351, 354, 357, 358,
362, 365, 370—373:

Անի, բերդ, 267, 371:

Անի, կայսրան, 374:

Աշոց, գավառ, 302:

Աշտարակ, գյուղ, 210:

Ապարան 64:

Ապուղամբենց ս. Գրիգոր եկեղեցի
241—244, 246, 247, 274, 283,
367:

Ասիա 19, 21, 27, 310, 312, 318:

Ավագ Գուր 66, 142, 193—197,
240, 326, 348, 349:

Ատրպատական 89, 303, 313:

Արաքիս 280:

Արագած, լեռ, 82—85, 94, 98, 99, 374:
 Արարատյան դաշտ 83, 87, 371, 374:
 Արարատյան երկիր 170:
 Արարատյան նահանգ 203, 292, 306:
 Արախ, գետ, 92:
 Արզնեա, գյուղ, 151, 187, 257, 353—358:
 Արվաշայ, գետ, 25, 86, 92, 216, 353, 373:
 Արվաշայի ձոր 365, 371:
 Արևմտյան Ասիա 284:
 Արևմտյան Շիրակ 50:
 Արիկա 279, 310:
 Բաբելոն 27:
 Բաբերդ, գյուղ, 177:
 Բագավան, գյուղ, 210:
 Բագարան 317:
 Բագնայր, ավան, 118, 272, 274:
 Բագրեվանդ 301:
 Բագրևոց, արհեստանոց, 251:
 Բաղդադ 89, 270, 283—286, 289, 292, 293, 301, 302, 303, 305, 309, 310, 314, 318, 369:
 Բայրախտար, գյուղ, 96:
 Բաշ-Շորագյալ, գյուղ, 87, 88, 90, 91:
 Բարձր Հայք 292:
 Բզնե, տե՛ս Բագնայր:
 Բեխենց վանք 182, 183, 261, 274:
 Բյուզանդիա 60, 119, 158, 270, 277—280, 300, 304, 312, 313, 318, 319, 333, 336, 342, 369, 371:
 Բոսֆորի նեղուց 333:
 Բշնի, ավան, 365:
 Բշնի, բերդ, 164, 335, 336, 363, 371:
 Բուն փողոց 251:

Գաննի, գյուղ, 203:
 «Գեղան-գյալմագ» 212:
 Գեղարդի վանք 203:
 Գրգ-գալի (Գրգր-գալի) 266, 269, 271, 327:
 Գլինոր (Գելինոր) 173, 174, 184, 186, 187, 188, 201:
 Գորիս, ավան, 203:
 Գտակարոց, արհեստանոց, 251:
 Գուգարք 292:
 Դարբնոց, փողոց, 251:
 Դեբեդ, գետ, 75, 76, 77, 79:
 Դիգոր, գյուղ, 46, 49:
 Դիգակ, գավառ, 286:
 Դուրպատ 37:
 Դվին 90, 188, 189, 302, 309, 330, 337, 371, 372:
 Եգիպտոս 278:
 Եղեխա 18:
 Եղիշե առաքյալի վանք (Ղարա-բաղում) 127:
 Եվրոպա 21, 23, 24, 26, 27, 158, 311, 312:
 Երազգավորս 88:
 Երուսաղեմ 18:
 Եսեան 12, 32, 64, 87, 172, 179, 188, 193, 374:
 Զանգեզուր, գավառ, 82, 203:
 Զանգեզուրի սարահարթ 103:
 Զանգու, գետ, 374:
 Զվարթնոց, եկեղեցի, 163, 230, 246, 374:
 Էջմիածին 22, 55, 64, 65, 163, 164, 230, 365, 374:
 Էրզրում 49, 96:
 Թաղլար, գյուղ, 286:
 Թեմկա, գետ, 176:

Փիֆլիս 13, 36, 40, 41, 49, 73, 74, 84, 286, 373, 374:
 Փոխար, գյուղ, 177:
 Քզանոր 198, 200, 201, 202, 203:
 Քզդիր 46:
 Լեհաստան 21, 25, 338, 350, 353:
 Լոնդոն 65, 176:
 Լոռի 75, 170, 171, 318, 338:
 Լոռու ձոր 77:
 Խամբուլենց եկեղեցի 252, 253:
 Խաչեն 119, 120:
 Խլար, քաղաք, 170:
 Խծկոնք, գյուղ, 118, 170:
 Խծկոնքի վանք 168, 322, 323:
 Խնձորեսկ, գյուղ, 203:
 Մաղկոցանոր 29, 61, 163, 205, 208, 210, 211, 213, 215, 220, 222, 224, 225, 229, 241, 248, 262, 263—266, 271, 274, 332:
 Մոսկովակ, փողոց, 251:
 Պարոդիկ եկեղեցի, տե՛ս Մայր եկեղեցի:
 Պարոդիկ եկեղեցի (Արզնեա) 355:
 Պատիտլիում 275:
 Պատլից ձով 82:
 Պատտնոց, արհեստանոց, 251:
 Պարաղալ, բարձունք, 353:
 Պարախանի բուր (գետակ) 87:
 Պարս-չայ, գետ, տե՛ս Ախուր-յան գետ:
 Պարս 12, 24, 25, 32, 44, 49, 50, 51, 55, 64, 80, 94, 96, 105, 193, 315, 316, 317, 318, 337, 356, 358, 374:
 Պարոց (Կարսի) դուռ 191:
 Պաֆա (Քեղդուսիա) 21:

Կրկրլ-բախա, բարձունք, 94, 96, 353:
 Կողբ, գյուղ, 115:
 Կոշկակարոց, արհեստանոց, 251:
 Կովկաս 37, 41:
 Կովկասյան լեռնաշղթա 286:
 Կ. Պոլիս 36, 40, 45, 309, 310, 319, 320, 329, 331, 334, 335, 339—342, 372:
 Կտեր, փողոց, 251:
 Կուր, գետ, 69, 82:
 Հալեպ 18:
 Հաղրատ 152:
 Հայաստան 21, 25, 37, 48, 41, 47, 53, 55, 57, 64, 65, 119, 161, 167, 169, 248, 276—286, 290, 291, 294, 295, 296, 298, 299, 300, 302—308, 310, 311, 312, 318, 319, 321, 336, 342, 354, 368, 369, 371:
 Հառինա, գյուղ, 171:
 Հառինայի վանք 170:
 Հատեցոց զուկակ (փողոց) 251:
 Հեղկաստան 158, 202, 273:
 Հոռումոս 106, 109—113, 118, 133, 172, 201, 274, 321:
 Հոռումոսի գետ 110:
 Հոռումոսի բերանղզի 104:
 Հոռումոսի ձոր 124, 125, 129:
 Հոռումոսի վանք (Ղոշավանք) 36, 37, 39, 47, 49, 50, 93, 97, 101, 102, 103, 104, 105, 109, 111—117, 119—124, 131, 168, 254, 272:
 Հովվի եկեղեցի 273, 274, 349, 351:
 Հոռմ 187, 275:
 Հունաստան 30, 342:
 Հունգարիա 21, 25:
 Ղանլիշա, գյուղ, 358, 359, 360:

Հարաբար 103, 127, 128, 185:
Հարաբիրիսա, գյուղ, 79, 80, 84:
Հեղաճ, գյուղ, 45:
Լըզըլ-ֆիլիսա, գյուղ, 45:
Լոզիլիս, գյուղ, 271:
Հաշվաճ, տե՛ս Հոսոմոսի վանք:
Լեիմ 21, 25:
Լեիմի բերակզի 25:

Հայր եկեղեցի (Կաթողիկե) 18,
23, 38, 48, 51, 55, 56, 66,
130, 143, 148, 149, 151—155,
158, 159, 160, 165, 166, 168,
186, 187, 238, 242, 243, 250,
273, 274, 276, 327, 345, 378:

Հանազկերտ 302:

Մանուշի մզկիթ 249:

Հասիս, սար, 29, 84, 99, 374:

Հավրակ, գետակ, 99:

Հավրակ, գյուղ, 50, 94, 95, 96,
98:

Հավրիկապոլիս, բաղաթ, 95, 98:

Հարամաշենի եկեղեցի 327, 361—
369, 371, 372:

Հերոս Մաշտոց 374:

Հիշագետի 18, 321, 336:

Հիշին Ասիա 284, 342:

Հիշնաբերդ 29, 38, 49, 61, 62,
142, 143, 144, 150, 174, 179,
183, 196, 213, 214, 220, 223,
225, 238, 247, 248, 261—266,
268—271, 274, 275, 276, 283,
215, 326, 327, 333, 341:

Հոլապիս 338, 353:

Հոսկվա 61, 63:

Հոսեն, գյուղ, 210:

Մցխիթ 168:

Մուշ 285:

Տաննի, քարանձավ, 353:

Նալրանդնոց, արհեստանոց 182:

Նախիջևան 80, 283:

Նիզ, գավառ, 164:

Նոր-Բայազետ 64:

Նիրակ, երկիր, 44, 53, 54, 56,
82, 83, 84, 87, 91, 95, 98,
103, 104, 105, 107, 111, 113,
114, 115, 117, 118, 126, 133,
139, 148, 156, 158, 164, 168,
169, 170, 182, 200, 210, 234,
251, 296, 302, 306, 308, 309,
310, 314, 316—322, 324, 326,
339, 341, 353, 354, 356, 358,
360, 362, 372:

Նիրակավան 88, 95, 313, 317:

Նիրակի դաշտ 12, 27, 30, 39,
40, 44, 67, 77, 82, 83, 89,
87, 94, 101, 102, 103, 189,
184, 188, 200, 201, 262, 277,
350:

Նուշի, գավառ, 286:

Չորան-ֆիլիս, գյուղ, 249:

Չորան-ֆիլիսի տաճար 57, 60:

Նեփլու, գյուղ, 180, 182:

Հանականոց 230:

Հարոնաց պալատ 227:

Հարսիստան 111, 277, 279,
340, 342, 369:

Հարտավ, բաղաթ, 286, 288,
302, 303:

Հաներբուրդ 37, 40, 91, 93:

Հոմախյ 62, 251:

Հալա, գյուղ, 48:

Հալա-սու, գետակ, 23:

Հաջուռի բունել 81:

Հաջուռի լիանաշոր 81:

Հաջուռի գավառ, 137:

Փուռառան 12, 45, 62:

Ս. Առաքելոց, եկեղեցի, 231—
235, 237, 238, 243, 250, 254,
372:

Ս. Առաքելոց զուկակ (փողոց)
251:

Ս. Աստվածածին, եկեղեցի (Բազ-
նայր), 272:

Ս. Գրիգոր, եկեղեցի, 97, 129,
131, 132, 245:

Ս. Լուսավորիչ, եկեղեցի, 55, 56,
166—169, 171, 172, 174, 182,
184, 199, 212, 232, 243, 347,
348, 349:

Ս. Մինաս, եկեղեցի, 97:

Ս. Սարգիս, եկեղեցի (Խոճկոնք),
170:

Ս. Ստեփանոս, մատուռ, 246:

Ս. Փրկիչ, եկեղեցի, 23, 160—
165, 177, 186, 220, 244, 246,
365:

Ս. Քրիստափոր, մատուռ, 246:

Մամուսա 333:

Մանանին 152:

Մանանին, կայարան, 78:

Մանանինի վանք 78, 364:

Մոռան, փողոց, 251:

Մոսուն 285, 372:

Մարդարապատ 87:

Մարիդամիչ, գյուղ, 92:

Մերաստիա 319, 340:

Մերկիկի սար 368:

Միսիան 82:

Միսվան 53:

Միրիա 278, 279:

Մկրտայան պարիսպներ 274, 341:

Մյուսինի 53, 82, 318, 322:

Մուսերիբյա Անի 212, 213, 214,
218, 219:

Մուստոնի բերդ 328:

Վալախիա 25:

Վանամաշեն 371, 372, 373:

Վաղարշապատ 22, 161, 162,
246:

Վան 222, 359:

Վանանդ, գավառ, 318 341:

Վասիլ փնտուկ (քարվանսար) 251:

Վասպուրական 90, 213, 214,
318, 319, 321, 333, 358:

Վարանդա, գավառ, 286:

Վարդանակերտ 282, 283:

Վենետիկ 25, 36, 37, 54:

Վերի փողոց 251:

Վերին Ղանդիլա 360:

Վոլգա, գետ, 350:

Վրաստան 38, 170, 256, 257,
321, 341, 342, 363:

Տայոց նոսրանդ 292:

Տարոն 285:

Տիգրանի դուռ 183:

Տիկոր 118:

Տալ, գյուղ, 286:

Տուրուբեբան 292:

Ուշ-բափա, բլուրներ, 40, 40, 41,
95, 99, 271, 325, 349, 356:

Ուրարտու 359:

Փարիզ 39, 66:

Փարսի, գյուղ, 210:

Փոֆր Ասիա 37:

Քաղկեդոն 279:

Քրեշի վանք, տե՛ս Քրեշի բերդ:

Քրիչ, բերդ, 286, 289, 290:

Քրիչ, սար, 292:

Քրդիստան 303:

Յուզկան, գյուղ, 219, 274:

Յոմանյան պալատը 12:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակչության կողմից	11
Առաջարանի տեղ	16
I — Թե ինչպես այս աշխատությունը	16
II — Ի՞նչ իրավունքով	22
III — Վկաները	69
IV — Պաշտամունքի դար	16
Կուր—Ախուրյան	875
Անհետացածների քաղաքը	889
Անձնանունների ցանկ	
Տեղանունների ցանկ	

Պատասխանատու խմբագիր՝
պրոֆ. Ս. Պ. ՊԱՂՈՍՅԱՆ
Հրատարակչության խմբագիր՝
Արմ. Շ. ՀԱԿՈԲՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝
Հ. Ա. ՀԱՎԱՍՏՖԱՆ
Վերատպող սրբագրիչ՝
Ա. Գ. ՄԱԴՈՅԱՆ

ՎՅ 11536

Պատվեր 1308

Տիրաժ 30000

Հանձնված է արտադրության 19/IV 1964 թ.:
Ստորագրված է տպագրության 27 IV 1964 թ.:
Թուղթ՝ $84 \times 108^{1/32}$: Տպագր. 24 = 19,7 պալմ. մամուլ:
Հաշվ.-հրատ. 17,5 մամուլ:
Դինը՝ 1 ք. 43 կ.:

ՀՍՍՌ Մինիստրների խորհրդի մամ. յի պետական կոմիտեի
պլանիչարարություններից զեկավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Թումանյան № 51:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

